ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

(XVI դ. կեսեր – XX դ. սկիզբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Ա 111996

# ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

## (XVI դ. կեսեր – XX դ. սկիզբ)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 177

**Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր ***Հովհաննիսյան Հ.Ժ.***

**Հակոբյան Արարատ**
Հ 177 Պետականության վերականգնման գաղափարը Հայոց պատմության հոլովույթում (XVI դ. կեսեր – XX դ. սկիզբ) / Ա. Հակոբյան: Խմբ.՝ Հ.Ժ. Հովհաննիսյան.– Եր.: Գիտություն, 2024.– 422 էջ:

Մենագրությունը նվիրված է Հայոց հին և միջնադարյան պետականությունների կորստից հետո հայ ժողովրդի համար քաղաքական գերագույն արժեք հանդիսացող ազատության և անկախ պետականության վերականգնման գաղափարի շուրջ հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների, հասարակական-քաղաքական մտքի դեգերումներին, փայփայած հույսերին, կազմած ծրագրերին՝ սկսած ուշ միջնադարից մինչև XX դ. սկիզբը, որը, ի վերջո, XX դարի շեմին նյութականացվեց այդ գաղափարը, և 1918 թ. վերականգնվեց հայոց անկախ պետականությունը: Աշխատանքում հարկ եղած չափով անդրադարձ է կատարվել նաև հարցի պատմագրությանը:

Գիրքը հասցեագրվում է պատմաբաններին, քաղաքագետներին, հասարակագետներին, հայ հասարակական-քաղաքական մտքի պատմությամբ հետաքրքրվողներին և ընդհանրապես ընթերցող լայն շրջաններին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8080-1537-1

© Գիտություն, 2024
© Հակոբյան Ա., 2024

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Իմ ողջ գիտակցական կյանքում ոչ մի խոսք ինձ այնքան չի տպավորել ու ոգեշնչել, որքան Մ. Նալբանդյանի «Ազատություն» բերթվածը:*

***Ա. Հակոբյան***

Հին և միջնադարյան Հայաստանի պետականությունների հարուստ ժառանգությունը գաղափարաքաղաքական ու հոգևոր-բարոյական մեծ հիմք և ուժեղ կռվան են հանդիսացել հայ հասարակաքաղաքական մտքի հոգևոր ու աշխարհիկ գործիչների համար՝ հետագա ժամանակաշրջանում ծրագրեր մշակելու, ուղիներ փնտրելու ազատագրելու Հայաստանն ու հայ ժողովրդին օտար նվաճողների ու բռնակալ տերությունների գերիշխանությունից և տանելու քաղաքակիրթ աշխարհին բնորոշ ազատության և անկախության ուղիով: Քաղաքական իմաստով, այս կամ այն երկրի ու ժողովրդի պատմություն ասելով կարելի է հասկանալ իբրև նրա ազատության, անկախության և ազգային պետականության համար պայքարի պատմություն: Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի իբրև պետության գոյության ու զարգացման գրավականը **անկախ պետականությունն** է: Այս իմաստով անբեկանելի է ՀՅԴ ճանաչված տեսաբան ու գործիչ Վահան Նավասարդյանի դատողությունն այն մասին, որ «Անկախութիւնը ազգերի անկապտելի իրավունքն է, նրանց անվերաքննելի ու նուիրական սեփականութիւնը: Անկախութիւնն ազգ-սուբեկտի ազատութեան միակ ձևն է, անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու միակ միջոցը»[1]: «Քաղաքական անկախութիւնից դուրս,- գրում է մեկ այլ տեղ,- գծուած բոլոր ուղիները շեղում են ազգութեան պահպանման նուիրական սկզբունքից»[2]: Հասկանալի է, որ Վ. Նավասարդյանի այս խոսքերը ուղղակի հասցեագրվում էին իր անկախությունը կորցրած հայ ժողովրդին, և դրանով նա պատգամում էր, որ ինչ էլ որ լինի, պետք է պայքարել ազգային նվիրական այդ մեծագույն համամարդկային քաղաքակրթական արժեքի վերականգման,

---

[1] **Նավասարդեան Վ.**, *Հայաստանի անկախութիւնը*, Ժընեւ, 1924, էջ 44–45:
[2] Նույն տեղում, էջ 30:

պահպանման ու առաջընթացի ապահովման համար: Տեղին է նաև հիշել հայ մեծանուն մտավորական Նիկ. Աղբալյանի (Հանգույցի) դիտարկումն այն մասին, որ «Ամեն ազգ պէտք է իր **քաղաքական հայրենիքն** (ընդգծումն մերն է՝ Ա.Հ.) ունենա»[3]: Իսկ հայերի հող-հայրենիքը՝ Հայք-Հայաստանն է: Դարեր առաջ հայ ազատամարտի նվիրյալ ու գաղափարախոս Հովսեփ Էմինն իր ինքնակենսագրական հուշերում մտորում էր, որ անգամ «գետնաքարշ մրջյուններն էլ թագավորություն ունեն, իսկ մենք չունենք»[4]: Նա իր ինքնակենսագրականը եզրափակում էր հետևյալ խոսքերով, որ ի վերջո, «**ազատությունն է կյանքի բոլոր բարիքների աղբյուրը**»[5]:

Խոսելով պետություն կամ պետականություն քաղաքական կառույցի գաղափարի մասին փիլիսոփայական կտրվածքով՝ հարկ է նշել, որ դրա օրինաչափ ծագման պատճառի և անհրաժեշտության մասին առաջիններից մեկը անդրադարձել է հույն մեծ փիլիսոփա Պլատոն Աթենացին (427–347 մ.թ.ա.) երկխոսության ձևով գրված, տասը գրքից կազմված «Պետություն» աշխատությունում: Նրա կարծիքով՝ «Պետությունը ծագում է, երբ մեզնից յուրաքանչյուր ոք՝ ինքը չի կորողանում բավարարել իր առօրյա բազմաթիվ պահանջմունքները, ուստի մարդիկ միավորվում են, որպեսզի համատեղ ապրեն ու միմյանց փոխադարձ օգնություն ցուցաբերեն: Եվ այդպիսի համատեղ բնակավայրը ստանում է պետություն անվանումը»[6]: Բայց այդ, նույն աշխատության հետագա գիրք-գլուխներում հեղինակը խոսում է իր երևակայած իդեալական պետության կառավարման տեսակների մասին՝ բռնապետական, օլիգարխիկ, դեմոկրատական, որոնցից լավագույնը, ըստ նրա ճշմարիտ դիտարկման՝ **դեմոկրատական կառավարումն** էր, ուր մարդը ազատ է, և պետական պաշտոնները բաժանվում են վիճակահանությամբ և այլն[7]: Ինչ վերաբերում է այս կամ այն ազատ և անկախ պետա-

---

[3] **Հանգոյց Ն. (Նիկոլ Աղբալյան)**, *Մտածումներ Հ.Յ. Դաշնակցութեան մասին*, Փարիզ, 1930, էջ 89:

[4] **Էմին Հ.**, *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները*, Եր., 2018, էջ 131:

[5] Նույն տեղում, էջ 483:

[6] Տե՛ս **Платон**, *Государства*, кн. 2, СПб., 2005, с. 206.

[7] Տե՛ս նույն տեղում, գ. 8, էջ 400–401:

կանության տարածքային մեծությանը, ինչը մեր պատմության ընթացքում իբրև խնդիր մշտապես ուղեկից է եղել, ապա Պլատոնի պատկերմամբ՝ մնայուն և հավերժող պետականության համար կարևորը ոչ այնքան տարածքային մեծությունն է, որքան նրա բանական չափերի մեջ՝ բոլոր առումներով **միասնական** լինելը[8]:

Իհարկե, պլատոնյան որոշ մտքեր արդի չափումներով այնքան էլ քննություն չեն բռնում, քանզի պետության ծագումը բացատրել համատեղ ապրելու մարդկանց զուտ առօրյա (ուտիլիտար) պահանջմունքների բավարարման առումով պարզունակ բացատրություն է: Սակայն պետության իրավաքաղաքական կառուցվածքի, իշխանության թևերի բաժանման, օրենքի գերակայության, երկրի անվտանգության ու ինքնապաշտպանության ապահովման և այլ հիմնադրույթներն ու սկզբունքները հետագայում պիտի զարգացներ նրա աշակերտ Արիստոտելը (384–322), իսկ արդեն նոր դարաշրջանում՝ Թ. Հոբսը (1588–1679), Շ. Մոնտեսքյոն (1689–1755), Դ. Հյումը (1711–1776), Ռ. Օուենը (1771–1858) և ուրիշներ, ովքեր պիտի ավելի իմաստավորվեին, կոնկրետացնեին ու խորացնեին մարդկային ստեղծագործության այդ կառույցը:

Վերը բերված մտքերին ու դատողություններին հակառակ՝ խորհրդային ավելի քան յոթ տասնամյակների քաղաքական և պատմագիտական գրականության (ժառանգության) մեջ հայտնի է գերիշխող մարքս-լենինյան կոչված դասակարգային, հասարակական-տնտեսական ֆորմացիոն տեսությունում արմատացած **պետության՝** իբրև դասակարգային բռնության գործիքի, այսպես կոչված, կոմունիզմի ժամանակ «մահանալու» մասին կեղծ տեսադրույթը: Այսպես, Վ. Լենինը 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման նախօրյակին գրած «Պետություն և հեղափոխություն» հայտնի աշխատության մեջ վերահաստատում է Ֆ. Էնգելսի առաջ քաշած թեզը (միտքը), թե՝ իբրև պատմական կատեգորիա ու դասակարգային բռնության գործիք, կոմունիստական հասարակության բարձր ստադիայում «Պետությունը չի «վերացվում», նա անհրաժեշտաբար դառնում է ավելորդ, **մահանում է** (ընդգծված է – Ա.Հ.), իսկ Ֆ. Էնգելսի պատկերավոր խոսքերով՝ այն կուղարկվի հնությունների

---

[8] Տե՛ս **Платон**, *նշվ. աշխ.*, գ. 4, էջ 263:

թանգարան՝ ճախարակի և բրոնզե կացնի կողքին»[9]: Մարքսիզմի հիմնադիրների պատկերացմամբ՝ «Քանի դեռ կա պետություն, չկա ազատություն»[10]: Բացի այդ, համաձայն մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի՝ ոչ միայն պետությունն է մահանում, այլև դասակարգային հասարակությունից անցում է կատարվում միատարր, անդասակարգ հասարակության, այսինքն՝ վերանում են դասակարգերը և այլն: Չխորանալով այդ գաղափարի սնանկ, իրական կյանքից կտրված, հիմնազուրկ ու երազանքային (ուտոպիական) լինելու մեջ և հավելյալ պարզաբանումների չդիմելու համար՝ բավարարվենք մեր ժամանակների հայազգի ճանաչված իրավագետ, ակադեմիկոս Վ. Ներսեսյանցի այն դիտարկմամբ, որ պետությունը՝ իբրև ազգերի, մարդկային հանրության ինքնակազմակերպման, կառավարման ու զարգացման ավելի բարձր մակարդակ՝ «Ընդհակառակը, այս աշխարհում մարդկանց ազատությունն ի հայտ է գալիս ու զարգանում է հենց **պետական-իրավական** ձևերում (ընդգծումը մերն է – Ա.Հ.)[11]:

Արդ, Հայոց պետականության վերականգնման տեսլականը (գաղափարը) շարունակ ոտեկից է եղել հայ մտավոր քաղաքական շրջանակներին: Դրա անհրաժեշտության մասին է գրվել ու խոսվել տակավին Բագրատունյաց կենտրոնական թագավորության ցավալի անկումից շատ չանցած: Միջնադարի հայ խոշորագույն իրավագետ Մխիթար Գոշն իր «Հայոց դատաստանագիրքը» կոթողական աշխատության մեջ, իրավական, քաղաքացիական, կրոնադավանական և այլ իրավակառուցակարգային հարցախմբերից զատ, անդրադարձել ու հիմնավորել է նաև ազգային ինքնագիտակցության և **ազգային պետականության** վերականգնման կոնցեպտը (հղացքը): Սակայն, հավատարիմ իր դարաշրջանի քաղաքական մտածողության ոգուն, նա ուժեղ ինքնիշխան պետականությունը կապում էր կառավարման միապետական

---

[9] **Մարքս Կ., Էնգելս Ֆ.**, *Երկեր*, երկրորդ հրատ., հ. 20, էջ 292, **Էնգելս Ֆ.**, *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը*, Եր., 1965, էջ 243, **Լենին Վ.Ի.**, *Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ)*, հ. 33, Եր., 1980, էջ 21, 114, 121 և այլն:

[10] **Լենին Վ.Ի.**, *նշվ. աշխ.*, հ. 33, էջ 122:

[11] **Ներսեսյանց Վ.Ս.**, *Իրավունքի և պետության տեսություն*, Եր., 2001, էջ 71:

(**թագավորական**) ձևի հետ[12]: Մխիթար Գոշի նման կենտրոնացված միապետական կառավարման ձևն է պաշտպանել մեկ ուրիշ՝ Կիլիկյան Հայաստանի խոշոր իրավագետ (կանոնադիր) ու դիվանագետ Սմբատ Սպարապետը (Գունդստաբլը)[13]: Միջնադարի մեր պատմիչներից Կիրակոս Գանձակեցին ցավով է արձանագրում «Արշակունի և Բագրատունի թագավորությունների անկումը»[14] և մոնղոլական աղետալի արշավանքների ահասարսուռ մթնոլորտում ընդգծում հայրենիքի ազատության և պետականության վերականգնման կարևորությունը: Նույն կերպ, պերճախոս չափածո տխուր քառյակով է արձագանքում XVI դարի բանաստեղծ Կարապետ վրդ. Բաղիշեցին:

«Գերի եմք ողորմելի,
Եւ ամէն ազգաց եմք կոխան,
Ո՛չ ունիմք մեք թաքաւոր,
Ո՛չ հըզօր զինուոր զօրական»[15]:

Կարելի է հասկանալ և ընդունել այն իրողությունը, որ ամբողջ միջնադարում հայ մարդկանց քաղաքական մտքի, հոգու, կենցաղի, սովորույթների, բարքերի և այլնի վրա իշխել է եկեղեցին և հայ պատմիչներից, որոնք ևս մեծամասամբ հոգևորականներ էին, քիչ կարելի է հանդիպել Հայոց անկախ պետականության վերականգնման համար պայքարի մասին մտքերի ու դատողությունների: Այսպես, օրինակ, նույն Կ. Գանձակեցի վարդապետը, հայ ժողովրդի քաղաքական ազատագրության հարցում, հղումներ անելով Կիլիկիայի Հայոց Կոստանդին Կանոնադրի սահմանադրությունից, հավատարիմ իր ժամանակաշրջանի ոգուն, գրում է, որ «մեր հույսը դրեցինք Աստծու օգնության վրա»[16]: Նույն կերպ հատկանշական է, որ աստվածավախ ու աստվածապաշտ Ա. Լաստիվերցի մատենագիրը (պատմիչը) Հայոց աշխարհին պատած

---

[12] Տե՛ս **Մանուչարյան Հ.**, *Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության*, Եր., 2002, էջ 90:

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 95:

[14] **Կիրակոս Գանձակեցի**, *Հայոց պատմություն*, Եր., 1982, էջ 25:

[15] «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1937, թիվ 6–8, էջ 337:

[16] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 217:

արհավիրքները բացատրում էր նաև «տիրոջ (Աստծո՝ Ա.Հ.) բարկությամբ» և այլն[17]:

XIX դարակեսի հայ հասարակական-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչ Մ. Նալբանդյանը «Մեռելահարցուկ» հոդվածում, քննադատելով մեր պատմական անցյալը, հատկապես միջնադարյան, նշում է, որ «Հայոց կցկտուր քաղաքական կյանքը վարվելով յուր քաղաքականությունը լոկ, **ֆիզիկապես** մեքենկանության վերա հիմնված լինելով, այդտեղ չէ երևում **քիմիական** միավորություն», այնուհետև շարունակում, որ հայ ժողովուրդը «չդիմացավ հին կամ միջին դարերի քաղաքական փոթորիկներին և թագավորը փոխեց յուր **գայիսոնը** դեպի մի թափառական թշվառի **գավազան** (ընդգծումները մերն է – Ա.Հ.)»[18]: Կարծում ենք, որ պատմականությունը նկատի չառնելով, հեղափոխական-դեմոկրատ հրապարակախոսի արտահայտած ոչ բոլոր մտքերին կարելի է համակարծիք լինել և, ի մասնավորի, այն մտքին, թե «Մեր ժողովուրդը պատմական ժողովուրդ չէ»[19]: **Աշխատության բուն շարադրանքում ցույց կտրվի, որ Ռուբինյան հարստության «շիջումից»[20] (մարումից) հետո էլ՝ ազատության ու պետականության գաղափարը չի մարել: Այն ընթացել է նաև հետագա դարերի ընթացքում, քաղաքական փոթորիկների միջով՝ ծրագրերի, շարժումների, պայքարի, մեծագույն զոհողությունների ճանապարհով, մինչև, ի վերջո, XX դարասկզբին անկախ պետականության հանգրվանին հասնելը:**

Հայ պատմագիտության ականավոր դեմքերից ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանն իր հայտնի «Դրվագներում», խոսելով միջնադարյան Հայաստանում հայ ազատագրական գաղափարաբանության կայծերի առկայության մասին, գտնում էր, որ «մոնղոլների ժամանակ հայ թագավորության տարտամ գաղափարը իսպառ մարած չէր»[21]: Ավելին, նրա կարծիքով՝ հայ նախարարական տները մրցակցում էին իրար հետ, թե «ֆեոդալական տոհմերից որի՞ն պիտի վիճակվի տեր կանգնել

---

[17] **Լաստիվերցի Ա.,** *Պատմություն,* Եր., 1971, էջ 104:

[18] **Նալբանդյան Մ.,** *Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ),* հ. 1, Եր., 1945, էջ 281:

[19] Նույն տեղում, էջ 281:

[20] Նույն տեղում, հ. 2, Եր., 1947, էջ 185:

[21] **Հովհաննիսյան Ա.,** *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության,* գ. 1, Եր., 1957, էջ 166:

Արշակունյաց կամ Բագրատունյաց քաղաքական ժառանգությանը»[22]: Եվ այդ մրցակից տներից նա առանձնացնում է Զաքարյաններին և Սյունիներին:

Հարկ է նշել, որ արտաքին ու ներքին մի շարք աննպաստ գործոններով պայմանավորված, հին և միջնադարյան թագավորությունների անկումներից հետո էլ հայ իրականության մեջ՝ աշխարհական և հոգևոր շրջանակներում, ոչ միայն բնավ չմարեցին Հայոց անկախ պետականության վերականգնման գաղափարական-քաղաքական ակունքները, այլև ժամանակ առ ժամանակ Հայաստանի տարբեր հատվածներում, անցյալի ավանդույթի ուժով, հիմնվեցին ու գործեցին հայկական պետական կազմավորումների առանձին բեկորներ, որոնց շարքին պետք է դասել **Շատախի, Սասունի, Խութի, Աղթամարի, Խաչենի, Փոքր Հայքի, Զեյթունի, Կապանի, Խամսայի** և բազում այլ ինքնավար ու կիսանկախ իշխանապետությունները: Վերը թվարկածների կողքին, հարկ է նշել, որ 1441 թ. Մայր Աթոռը Սիսից դարձյալ ի Վաղարշապատ՝ Էջմիածին փոխադրվելով (նորընտիր կաթողիկոս Կիրակոս Վիրապեցի), դրա նպատակը հեռանկարի առումով այն էր, որ բուն հայրենիքում պահպանվի «**Հոգևոր Հայաստանը**», մինչև որ կգան լավ ժամանակները, Հայոց երկրի ազատության և անկախության տեսլականները կյանքի կկոչվեն ու կնյութականանան: Այլ խոսքով՝ «Հոգևոր Հայաստանը» կոչված պիտի լիներ նպաստելու ազգի քաղաքական հաստունությանն ու միասնությանը, որն էլ, ի վերջո, իր հետ կբերեր հայրենի երկրի անկախ պետականության վերականգնմանը:

Հայ մեծանուն պատմավիպասան Ռաֆֆին, խոսելով հայկական թագավորությունների կորստի մասին, միաժամանակ հիշեցնում է, որ դրանից հետո էլ «պահպանված նախկին փառքի մոխիրի մեջ» դարերով չեն մարել հայոց պետականության «կայծերը»: Եվ պետականության նման դրսևորումներից էր համարվում «Խամսայի մելիքությունները», որին և նվիրված է նրա համանուն աշխատությունը[23]: Հայկական պետականությունների շարունակական լինելու վերաբերյալ փաս-

---

[22] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 1, էջ 167:
[23] **Ռաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 10, Եր., 1959, էջ 165–369:

տարկված ու հիմնավոր մեկնաբանություն է տալիս ակադեմիկոս Ա. Մելքոնյանը այն իմաստով, որ եթե ժամանակի ընթացքում, արտաքին ու ներքին գործոններով պայմանավորված, սկսած հայ Արշակունիներից անկում են ապրել համահայկական թագավորությունները, սակայն անկախության և ինքնիշխանության որոշակի կորստի պայմաններում շարունակել է գործել **պետականության ինստիտուտը՝** ստանալով նոր դրսևորումներ ու հատկանիշներ[24]: Այս նույն համատեքստում, ականավոր պատմաբան Ն. Ադոնցը շատ բարձր է գնահատում հայ նախարարական տների խաղացած դերը Հայաստանի քաղաքական կյանքում, որոնք դարերի ընթացքում պայքարել են Հայաստանի ինքնուրույնության և քաղաքական անկախության համար: «Ոչ մի ժամանակ,- գրում է Ն. Ադոնցը,- այնքան ճիգ և արյուն չէ թափված օտար լուծը թեթևացնելու և կամ իսպառ թոթափելու համար, որքան նախարարական շրջանում»[25]: Եվ նույն կերպ, դարձյալ սկսած վաղ միջնադարից, ինքնիշխան պետականության ինստիտուտի ընդգրկում են ունեցել մարզպանությունը, սատրապական (նախարարական) կառավարումը, «Հայոց տան», «Արմինիա»–«Էրմենիստան», Խաչենի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տարոնի, Սասունի, Տայքի, Համշենի, Զաքարյանների, Վահրամյանների, Վաչուտյանների, Աղթամարի, Դավիթ Բեկի, Խամսայի և այլ իշխանությունները, իշխանապետությունները և սահմանափակ իրավասության ինքնավար թագավորությունները[26]:

Եվ այս իմաստով, Հայոց պետականությունների իրավահաջորդության հարցում իրավամբ տեղին է Ա. Մելքոնյանի քննադատական դիտողությունը՝ ուղղված հայ այն խումբ պատմաբանների հասցեին, ովքեր պաշտպանում են այն վարկածը, թե 1045 թ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո մայր հայրենիքում պետականությունը ընդհատվեց մինչև 1918 թ.[27]: Պատմական անվիճարկելի իրողություն է, որ երկարուձիգ դարերի ընթացում համահայկական թագավորությունների միջակայքում կամ դրանից հետո, անշուշտ, գործել են հայոց ինք-

---

[24] Տե՛ս **Մելքոնյան Ա.,** *Պատմագիտական հետազոտություններ,* էջ 144:
[25] **Ադոնց Ն.,** *Երկեր,* հ. Ա, Եր., 2006, էջ 223:
[26] Տե՛ս **Մելքոնյան Ա.,** *Պատմագիտական...,* էջ 144–152, 175–176:
[27] Տե՛ս նույն տեղում, էջ 173:

նաբավ ու ինքնավար իշխանություններ, իշխանապետություններ՝ կառավարչական տարբեր օժտվածությամբ ու դրսևորումներով: Բայց, մյուս կողմից էլ պետք է ընդունել, որ դրանք, ունենալով հանդերձ հարաբերական ներքին ինքնավարություն, քաղաքական առումով **անկախ** չեն եղել: Մեր սույն աշխատանքը ևս գալիս է լրացնելու այդ գաղափարը, թե սկսած ուշ միջնադարից մինչև 1918 թ. Հայաստանի ազատության և անկախ պետականության հասնելու պայքարի ճանապարհին հայ հասարակական-քաղաքական մտքում, կազմված ծրագրերում անկախ պետականության հասնելու ինչպիսի դրսևորումներ են եղել:

Մայր հայրենիքից դուրս, Կիլիկիայի Հայկական վերջին թագավորության անկումից հետո, արդեն ուշ միջնադարից սկսած, Հայաստանն ու հայ ժողովուրդը հայտնվում են տարածաշրջանում երկու մրցակից տերությունների՝ սեֆյան (շահական) Պարսկաստանի և օսմանյան Թուրքիայի արանքում (միջակայքում), դառնում ոչ միայն **կռվախնձոր**, այլև պատերազմների հիմնական **թատերաբեմ** դրանց միջև: Շուրջ դարուկես տևած թուրք-պարսկական պատերազմների արդյունքում դժնդակ պայմաններում հայտնված Հայաստանը ավելի քան երկու անգամ (1555 թ. և 1639 թ.) բաժանվում է դրանց միջև, դրան հետևում է տարածքների բռնազավթում, բռնագաղթ, անձի և ինչքի անապահովություն, սոցիալ-տնտեսական ու կրոնական հալածանքների ու անլուր հարստահարությունների (կեղեքումների) մի երկար շղթա և այլն: Այդ արյունալի պատերազմների հետևանքները հայության համար այնքան ողբալի են եղել, որ XVI դարի ժամանակագիր գրիչներից մեկը գրում է. «...ո՛չ կարեմք լեզուաւ պատմել, և ո՛չ զաղետն ընդ գրով արկանել»[28]: Բայց մյուս կողմից, պատմական անցյալի իրականությունն ու իրողությունները օբյեկտիվ ու անկողմնակալ ներկայացնելու համար, չպետք է մոռանանք նաև անցյալից մեզ փոխանցված նաև կշտամբալի մտքեր: Այսպես, Սյունաց աշխարհի մեծագույն պատմիչ Ստ. Օրբելյանն իր նա-

---

[28] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր, թիվ 6273, էջ 510, նաև՝ **Սրվանձտյան Գ.**, *Թորոս աղբար*, հ. 2, Կ. Պոլիս, 1888, էջ 268–269:

մակներից մեկում գրում էր, որ հայ ժողովուրդը տառապում է «ոչ միայն յարտաքին նեղչացն, այլեւ ի ներքուստ»[29]:

Տակավին ուշ միջնադարում Հայաստանի ու հայ ժողովրդի վիճակի մասին նման արձանագրումները վկայում են այն մասին, որ ստեղծված կացությունից հայ քաղաքական միտքը բնականաբար պետք է որ ոտիներ որոներ հայրենիքի ազատագրման ու երբեմնի սեփական ազգային պետականության վերականգնման համար: «Այն օրից,- գրում է մեր ժամանակների հայ ազգային մտքի գաղափարաբան Գ. Նժդեհը,- երբ Մերձավոր Արևելքի կրկեսի վրա երևաց մոնղոլ թուրքը, մեր պատմության մեջ անպակաս դարձան պարբերական կոտորածը, բռնի մահմեդականացումն ու արտագաղթը: Եվ որովհետև տիրապետող ազգը սեփական մշակույթ չուներ, և նշված ազգերին ռայա էր համարում, նա տիրեց ոչ միայն նվաճվածի վեհապետական իրավունքներին, այլ և ժողովրդի կյանքին և ինչքին: Ասիայից մեր հայրենիքը խուժած բարբարոսը կձգտեր ո՛չ միայն դիմափոխել և դիմազրկել քաղաքակրթական արժեքներ ստեղծելու կարող ամեն ժողովուրդ, նա կմիտեր ո՛չ միայն ազգերի հոգին աղճատել և արմատախլել ամեն մշակույթ, նրա մահացու հարվածն ուղղված էր ո՛չ միայն իր նվաճած ցեղերի գոյության այս կամ այն ցեղի դեմ, այլ և նրանց ֆիզիկական գոյության արմատին իսկ: Նման միջավայրում և նման վտանգի հանդեպ մեր վերածնունդը անխոսափելիորեն պիտի ստանար բռնի հեղափոխական բնույթ: Եվ սկսվեց հայոց ազատամարտը»[30]:

Արտաքին ու ներքին աննպաստ հանգամանքներով պայմանավորված՝ Հայոց անկախ պետականության կորստից հետո հայ հանրային, հոգևոր և աշխարհիկ գործիչների, ժամանակի ընթացքում աստիճանաբար խմորվող հայ ազգային գաղափարաբանության առաջնային հիմնահարցերից է եղել օտարի լծից սեփական Հայրենիքը ազատագրելը, իբրև բարձրագույն հոգևոր արժեք՝ ազգային անկախ պետականության վերականգնելը: Երջանկահիշատակ ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը հայ ազգային գաղափարախոսության հիմնասյուներից էր

---

[29] Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 848, էջ 81ա:
[30] **Նժդեհ Գ.**, *Երկեր*, հ. 1, Եր., 2002, էջ 138–139:

համարում կորսված Հայրենիքի ազատագրումը, նրա անկախության, անվտանգության և բնականոն զարգացման ապահովումը, արդեն մեր ժամանակներում դրան հավելելով (լծորդելով) նաև ապագայում Հայ Դատի ու պահանջատիրության խնդրի ամբողջական լուծումը[31]:

Խոսելով Հայաստանի ազատագրման ու անկախացման գաղափարաքաղաքական հետնախորքերի (հիմքերի) ու ակունքների մասին՝ հարկ է նկատի առնել, որ այդ ձգտումը հավասարապես բնորոշ է եղել թե՛ արևելահայությանը և թե՛ արևմտահայությանը: Այդ նշանակում է, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը ավելի կամ պակաս չափով չի հանդուրժել թե՛ պարսից, և թե՛ առավել ևս թուրքական գերիշխանությունն ու բռնապետական լուծը:

Վերջին մեկ-երկու դարում պատմագիտական հսկայական գրականություն է ստեղծվել արդեն նոր և նորագույն դարաշրջանում հայ հասարակական-քաղաքական մտքի, ազգային-ազատագրական շարժման ու պայքարի, դրանց զուգահեռ նաև անկախության վերականգնման գաղափարաքաղաքական ակունքների հետազոտման ու վերհանման վերաբերյալ[32]: Ուստի, մենք մեր առջև ծառացած վերջին մեկ դա-

---

[31] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, *Հայոց ազգային գաղափարախոսություն*, Եր., 1999, էջ 11–12:

[32] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, Եր., 1973, հ. 5, Եր., 1986, **Լեո**, *Խոջայական կապիտալ*, Ցհ., 1934, **Գյոզալեան Գ.**, *Հայ բարեաքական մտքի զարգացումը և ՀՅԴ-ը*, Փարիզ, 1927, **Ներսիսյան Մ.Գ.**, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.*, Եր., 1955, **Պարսամյան Վ.Ա.**, *Ա.Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները*, Եր., 1947, **Նույնի՝** *Հայ ազատագրական շարժումների պատմությունից*, Եր., 1958, **Հովհաննիսյան Ա.**, *Դրսեգներ հայ ազատագրական մտքի պատմության*, գ. 1, **Նույնի**, *Դրսեգներ հայ ազատագրական մտքի պատմության*, գ. 2, Եր., 1959, **Նույնի՝** *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, Էջմիածին, 1921, **Անասյան Հ.**, *XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում*, Եր., 1961, **Պողոսյան Հ.Մ.**, *Զեյթունի պատմությունը (1409–1921)*, Եր., 1969, **Ղազարյան Հ.**, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ.*, Եր., 1967, **Քարամյան Կ.Ն.**, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարի օրինաչափության հարցի շուրջ*, Եր., 1969, **Զուլալյան Մ.**, *Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դդ.*, Եր., 1980, **Աբրահամյան Ա.**, *Բարեկամ Օրի*, Եր., 1978, **Դիլոյան Վ.**, *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները*, Եր., 1989, **Иоаннисян А.Р.**, *Иосиф Эмин*, Ер., 1989, **Он же**, *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, Ер., 1990, **Нерсисян М.Г.**, *Из истории русско-армянских отношений*, кн. I, Ер., 1956, **Համբարյան Ա.Ս.**, *Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների*

ռում Հայաստանի երեք հանրապետությունների պատմության պատմահամեմատական զուգահեռների վերլուծությանը վերաբերող տարողունակ թեման բարձրացնելուց առաջ, բնականաբար, իբրև մուտք ու ներածական, հարկ ենք համարում ընդհանուր գծերով անդրադառնալ, թե 1918 թ. մայիսի 28-ին պատմական շրջադարձային նշանակություն ունեցող Հայաստանի անդրանիկ հանրապետության անկախության հռչակումից դարեր առաջ հայ հասարակական-քաղաքական մտքում ու հանրային շրջանակներում ինչպիսի հիմքեր ու նախադրյալներ էին ստեղծվել (ամբարվել) օտարների կողմից դարերով բռնազավթված Հայաստանի ու հարստահարված հայ ժողովրդի ազատագրության ու անկախության համար, և հայ քաղաքական ու պատմագիտական միտքն ինչպես է արձագանքել դրան: Բնականաբար, այս ամենը փորձ կարվի ներկայացնել խորհրդային և ժամանակակից պատմագիտական ձեռքբերումների և իրողությունների լույսի տակ:

Կրկին անդրադառնալով հիմնահարցի պատմագիտական արժևորմանը՝ հարկ է արձանագրել, որ հատկապես վերջին ավելի քան մեկ դարում հայ և, ի մասնավորի, խորհրդահայ պատմագրությունը, զուտ գաղափարաքաղաքական պարտադրանքով խնդիր է ունեցել ոչ թե ուսումնասիրել ու վեր հանել XVI–XVIII դարերի հայ ազատագրական շարժման ու պայքարի բուն վերջնանպատակը բոլոր ձևերը զուգորդելով՝ ազատագրվելու հարևան արևելյան թուրք-պարսկական բռնակալ տերությունների տիրապետությունից և, վերջին հաշվով, հասնելու հայրենիքի ազատագրման ու պետականության վերականգման հարցե-

---

*մասին (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)*, Եր., 1990, **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գիրք 1, Եր., 2003, գ. 2, Եր., 2003, գ. 3, Եր., 2009 և գ. 4, Եր., 2010, **Գալոյան Գ.Ա.**, *Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, Եր., 2004, **Մաղալյան Ա.**, *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ.*, Եր., 2007, **Հովհաննիսյան Պ.**, *Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ)*, Եր., 2010, **Մելքոնյան Ա.**, *Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր*, Եր., 2011, **Նույնի՝** *Հայոց պատմության դասերն ու պատգամները*, Եր., 2013, **Նույնի՝** *Պատմագիտական հետազոտություններ*, Եր., 2021, **Մովսիսյան Ա.**, *Հայաստանի պետականությունը*, Եր., 2011, **Այվազյան Ա.**, *Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման բաղադրիչներում*, Եր., 2003, **Բայբուրդյան Վ.**, *Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում*, Եր., 2023 և ուրիշներ:

ին, այլ պարզապես քաղաքական, գաղափարական ու քարոզչական պարտավորվածությամբ՝ առաջնահերթ խնդիրներից է համարել ցույց տալ, թե ինչպես հայ ազգային-ազատագրական միտքն ու շարժումը, անցնելով պատմության կեռմաններով, ի վերջո, շրջադարձ կատարեց և քաղաքականապես կողմնորոշվեց դեպի **Ռուսաստանը**:

Խորհրդահայ պատմագրության գաղափարական բացերից մեկն այն է, որ առաջնորդվելով մարքսիզմ-լենինիզմի պարտադրվող գաղափարախոսությամբ՝ համազգային կարևորություն ունեցող Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային-ազատագրության և անկախության վերականգնման հարցերը դիտարկվել են միակողմանիորեն զուտ դասակարգային, կուսակցականության դիրքերից՝ տվյալ ազգ-հանրույթի մեջ մտցնելով ընդգծված սոցիալ-դասակարգային շերտավորում ու բաժանում: Ստացվել է այնպես, որ **ազգային-ազատագրական** շարժումներն ու պայքարը ստորադասվել, երկրորդվել են **սոցիալ-դասակարգային** պայքարին՝ դրանով իսկ հասկացնել տալով, թե հասարակության մեջ դասակարգային-հեղափոխական պայքարի հաղթանակով՝ իբրև առաջնային խնդիր, ինքնըստինքյան կլուծվի նաև ճնշված ազգերի ու ժողովուրդների ազգային հարցը: Կամ էլ, ինչը դարձյալ նույն բանն է, հայ ազգային-ազատագրական շարժումներին ու պայքարին փորձ է արվել տալ դասակարգային բովանդակություն և դրանով, ըստ էության, ազգային-քաղաքական և սոցիալ-դասակարգային պայքարները հակադրել միմյանց, ինչը նույնպես սխալ է:

Բնականաբար, խորհրդային պատմագրության 70 տարիներին նման հայեցակարգով են առաջնորդվել նաև խորհրդահայ պատմաբանները, քանզի խորհրդային-կոմունիստական մենատիրական գաղափարախոսության պայմաններում այլ կերպ չէր էլ կարող լինել: Մինչդեռ, պատմական իրողությունն ու իրականությունն այն է, որ հայ ժողովրդի սոցիալական բոլոր շերտերն ու խմբերը՝ լինի գեղջուկ թե շինական, արհեստավոր թե խոջա (առևտրական), հոգևորական թե նախարար ու մելիք, բնականաբար, շահագրգռված են եղել պետականակորույս Հայրենիքի ազատագրմամբ՝ դրան հասնելու համար ապավինելով սեփական ուժերին, նաև արտաքին ուժերի օգնությամբ կամ էլ փորձելով երկուսն իրար զուգակցելու միջոցով և այլ գործիքակազմերով:

Արդեն XIX դարի առաջին կեսին, 1813 թ. Գյուլիստանի և ապա 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրերով, Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանի, իսկ հետագայում սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական տեղաշարժերի, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում միջազգային դիվանագիտության մեջ Հայկական հարցի ասպարեզ նետվելն ու արծարծումները, այնուհետև դասակարգային ու հեղափոխական շարժումների ու պայքարի, Առաջին աշխարհամարտում հայ ժողովրդին պատուհասած աղետներից հետո, անգամ շատ հաճախ շրջանցելով Առաջին Հանրապետության իրական պատմության փաստն ու արժեքը կամ այն որակելով բուրժուական, հակաժողովրդական և այլն, ի վերջո, լենինյան կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության «օգնության» շնորհիվ, 1920 թ. Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, իսկ 1922 թ. ՀՍԽՀ մտավ խորհրդային բազմազգ ԽՍՀՄ եղբայրական համարված ժողովուրդների կազմը, դրանով էլ սկսվեց խորհրդահայ ժողովրդի «վերածնունդն ու պայծառ ապագան»: Եվ սրանք են եղել խորհրդային ու խորհրդահայ պատմագրության գլխավոր կոնցեպտը (հայեցակարգը): Եվ դրա սկզբնավորող ամենավառ ներկայացուցիչներն են ակադեմիկոսներ Ա.Գ. Հովհաննիսյանը, Ա.Ռ. Հովհաննիսյանը, Մ.Գ. Ներսիսյանը, Ծ. Աղայանը, Գ. Գալոյանը, պրոֆեսորներ՝ Վ. Պարսամյանը, Զ. Գրիգորյանը, Արշ. Հակոբյանը, Թ. Հակոբյանը, Շ. Հարությունյանը, Ն. Սարուխանյանը և շատ ուրիշներ[33]:

---

[33] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, Եր., 1959, **Нерсисян М.Г.**, *Из истории русско-армянских отношений*, кн. 1–2, Ер., 1956–1961, **Григорян З.Т.**, *Присоединение Восточной Армении к России в начале XIX века*, М., 1959, **Գրիգորյան Զ.Տ.**, *Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը*, Եր., 1960, **Նույնի՝** *Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական բովանդակությունը*, Եր., 1978, **Պարսամյան Վ.Ա.**, *Հայ ժողովրդի պատմություն (1801–1917 թթ.)*, հ. 3, Եր., 1967, **Ռշտունի Վ.**, *Հայ հասարակական հոսանքների պատմությունից*, Եր., 1956, **Հարությունյան Շ.**, *Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920–1963 թթ.*, Եր., 1967, **Նույնի՝** *Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964–1988 թթ.*, Եր., 1990, **Հակոբյան Արշ.**, *Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին (1951–1955)*, Եր., 1962, **Գալոյան Գ.Ա.**, *Պատմության բառուղիներում*, Եր., 1982, **Ոսկանյան Վ.Ն.**, *Հայ-ռուսական հարաբերությունները XII դարում* («Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, Եր., 1948, թիվ 1),

* * *

Ներկայացվող պատմական ակնարկից ակնկալվող արդյունքն այն պիտի լինի, որ ցույց տրվի գաղափարաքաղաքական և հոգևոր ակունքների այն ներքին կապը՝ սկսած ուշ միջնադարից (XVI դարի կեսեր) ու նոր դարաշրջանում, որ կար հայ հասարակական-քաղաքական և հոգևոր շրջանակների և արդեն XX դարասկզբին (1918 թ.) իր անկախությունը ձեռք բերած (նվաճած) Հայաստանի Առաջին Հանրապետության միջև: Աշխատանքում ցույց կտրվի, որ հայ հանրությունն ու ազգային կառույցները գաղտնի, զգուշավոր (բուն հայրենիքում) թե բացահայտ (գաղթաշխարհում) աշխատություններ, պլան-ծրագրեր մշակելով, դեպի Արևմուտք և Հյուսիս քաղաքական առաքելություններ կատարելով, իսկ հարկ եղած դեպքում՝ ապստամբական-ազատագրական զինական պայքարի դիմելով, ինչպես XVIII դարի սկզբներին Արցախ-Սյունիքի և այլն, վերջին հաշվով հետամուտ են եղել հայրենի երկրի ազատագրության ու անկախության տեսլականի իրագործմանը:

Սույն աշխատանքում մեր առջև խնդիր է դրված՝ պատմավավերագրական և հուշագրական հարուստ նյութերի համադրման ու վերլուծության խորապատկերի վրա վեր հանել ու ցույց տալ առնվազն 4–5 դարերի հոլովույթում այն դժվարին ոտին, ճանապարհը, թե հայ հասարակական-քաղաքական միտքը, ազատագրական շարժումը և դրա վերջնանպատակը հանդիսացող դարերով ընդհատված անկախության վերականգնման տեսլականը դարավոր դժնդակ դեգերումների, գաղափարաքաղաքական ինչ դժվարին, մաքառումնաշատ, փորձություններով լեցուն ճանապարհ անցավ, մինչև որ, ի վերջո, XX դարասկզբին, արտաքին ու ներքին նպաստավոր հանգամանքների բերումով և մեծ ճիգուջանքերի, փորձությունների ու աղետների միջով անցնելով, հասավ **1918 թ. «Մայիսի 28»-ի պատմական խորհրդին ու անկախության** հանգրվանին: Այս առնչությամբ միանգամայն տեղին ու դիպուկ է «Հայոց պատմության» ակադեմիական բազմահատորյակի առաջաբանում տրված գնահատականն այն մասին, որ 1918 թ. Մայիսյան հերո-

---

**Սարուխանյան Ն.**, *Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ*, Եր., 1971 և ուրիշներ:



Հ 11996

սամարտերը հայ ժողովրդի համար հիրավի **հայրենական պատերազմ էր** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.), որում ոչ միայն ջախջախվեց և հետ շպրտվեց հայոց դարավոր թշնամին, այլև այդ կռիվներում վերածնվեց հայկական պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը, ինչն էլ ազդարարեց Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանը»[34]: Հայաստանի անկախության պատմափիլիսոփայական ու ազգային-հոգևոր անանց նշանակության մասին է փաստում նաև ականավոր գրականագետ Ս. Սարինյանը՝ «Մայիսի 28»-ը համարելով ոչ միայն հայ **գաղափարաբանության հաղթանակը**, այլև հայոց պատմության **շրջադարձը** դեպի իր **դարավոր իդեալը**[35]: Ասվածը մեզ հասկացնել է տալիս, որ պետք է ամուր կանգնած լինել Հայոց անկախ պետականության պաշտպանության, ամրակայման ու զարգացման դիրքերում և մշտապես գիտակցել, որ մեր նորագույն կյանքի ու պատմության դարաշրջանը սկսվում է 1918 թ. «Մայիսի 28»-ից:

Այսպիսով, մինչ այդ հարցերին անդրադառնալը, մենք մեր առջև խնդիր ենք դնում ընդհանուր գծերով ներկայացնել, թե նախորդ հայոց, ըստ էության, պետականազուրկ 5–6 դարերում հայ հանրության հոգևորական ու աշխարհիկ շրջանակների աշխարհայացքում, հայ հասարակական-քաղաքական մտքում ու գաղափարաբանությունում, ազգային ավանդական կուսակցությունների ծրագրերում ու գործելակերպում ինչպիսի փորձեր ու ջանքեր են թափվել վերականգնելու Հայաստանի անկախ պետականությունը: Եվ սույն աշխատությունը գալիս է ընթերցող հանրությանը համոզելու, որ 1918 թ. «Մայիսի 28»-ը ինչ-որ պատահական դիպված չէր, ինչպես հաճախ շրջանառվել է նախորդ պատմագիտական գրականության մեջ, այլ անկախ պետականության վերականգնման գաղափարը դարեր առաջ հայ հասարակական-քաղաքական մտքում խմորված, քայլ առ քայլ կուտակված, պատմականորեն ձևավորված ու XX դարասկզբին արդեն հասունացած օբյեկտիվ և օրինաչափ երևույթ էր, որը պիտի հասներ իր հաղթական հանգրվանին:

---

[34] Տե՛ս *«Հայոց պատմություն»*, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, հ. 3, գ. 1, Եր., 2010, էջ 9:

[35] Տե՛ս **Սարինյան Ս.**, *Հայ գաղափարաբանություն*, Եր., 1998, էջ 92:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ (XVI–XVIII ԴԱՐԵՐ)

(պատմական ակնարկ)

## *1. Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցը*

Հայոց բազմադարյա պատմության առանցքային հիմնահարցերից է Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման (օրիենտացիայի) հիմնահարցը, որը մշտապես առկա (օրակարգում) է եղել թե՛ հին ու միջնադարյան պետականությունների (թագավորությունների) գոյության և թե՛ հատկապես դրանց կորստի պայմաններում, երբ սեփական ուժերին ու ռեսուրսներին ապավինելուց զատ, ավելի հաճախ հրամայական էր դառնում դիմելու այս կամ այն հզոր երկրի կամ ուժի օգնությանը: Սկսած հին դարերից՝ Աքեմենյանների, Հին Հռոմի, պարթև-արշակունիների ու արաբների ժամանակներից հայ հասարակական-քաղաքական շրջանակներին ու հայ ժողովրդին մեծապես մտահոգել ու լայն քննարկման նյութ է հանդիսացել Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման (արևելման) հարցը:

Առանց չափազանցության, ներկայումս ևս, կարծես, օրախնդիր է դարձել այս խնդիրը: Պատմականորեն հայ ազգ-ժողովուրդը, թվաքանակով լինելով ոչ մեծաթիվ, այդ մասին հիշելով դեռ մեկևկես հազարամյակ առաջ քերթողահայր Մովսես Խորենացու խոսքերը՝ փոքր ածու, թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ լինելու մասին,[1] միաժամանակ, հանձին Մեծ Հայքի, տարածքով ընդարձակ, սակայն պատմաքաղաքական իրադարձություններն ու հանգամանքները այն-

[1] Տե՛ս **Խորենացի Մ.**, *Հայոց պատմություն*, Եր., 1961, էջ 82:

պես են դասավորվել, անգամ հին և միջնադարյան Հայոց թագավորությունների առկայության պայմաններում, նրա օրակարգում դրված է եղել քաղաքական կողմնորոշումների հարցը՝ աշխարհագրական ու տարածաշրջանային գրեթե բոլոր ոտղություններով, սկզբնապես հիմնականում **Արևմուտք**, իսկ արդեն նոր դարաշրջանում ավելի հաճախակի դեպի **Հյուսիս**՝ նկատի ունենալով Ռուսաստանը: Հասկանալի է, որ Հայաստանի տարածականորեն երկատված վիճակը, նրանում օտար ցեղերով շերտընդմեջ բնակեցումը, դրան հակառակ՝ հայության՝ հայրենիքից հաճախ հարկադրական արտագաղթը, սեփական ինքնապաշտպանական ռեսուրսների պակասը, նաև ներքին բնույթի հակամարտ խնդիրների առկայությունը և այլն, մեծապես դժվարացնում էին ազգային-ազատագրական պայքարի գործը, ուստի և, բնականաբար, մեջտեղ էր գալիս հուսալի դաշնակցի փնտրտուքի հարցը:

Դեռ միջնադարում շատ առումներով քաղաքական կողմնորոշման զոհ կարելի է համարել Բագրատունյաց կենտրոնական թագավորության անկումը: XI դարում Հայոց պետականության վերացման գլխավոր սպառնալիքը դարձավ Բյուզանդական կայսրությունը: Հայտնի է, որ Հայոց թագավորությունում ներքին հակամարտությունը ընթացավ սպարապետ Վ. Պահլավունու գլխավորած սեփական ուժերին ապավինելու կողմնակիցների, իսկ մյուսը՝ ընչաքաղց Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսի և նենգավոր Վեստ Սարգիս իշխանի գլխավորած՝ առանց կռվի, կամավոր, այս անգամ, Արևելյան Հռոմեական կայսրությանը (Բյուզանդիային) միավորվելու կողմնորոշումը: Հայտնի է, որ վերջիններս խաբեությամբ երիտասարդ Գագիկ 2-րդ արքային համոզեցին և ուղարկեցին Բյուզանդիա, որտեղից նրան «ծուղակն ընկած մի թռչունի պես»[2] արգելվեց հայրենիք վերադառնալ, իսկ իրենք աշխարհահռչակ մայրաքաղաք Անիի բանալիները, պարտադրված կտակի համաձայն, հանձնեցին բյուզանդական նենգավոր կայսր Կոնստանդին Մոնոմախին (1042–1054 թթ.): Այդ ամենի հետևանքով բյուզանդական զորքերը, մի քանի անգամ շրջափակման փորձերից ու գրոհներից հե-

---

[2] **Լաստիվերցի Ա.**, *Պատմություն*, էջ 36:

տո, գրավեցին մայրաքաղաք Անին, և 1045 թ. վերջ տրվեց Շիրակ-Անիի կենտրոնական թագավորությանը[3]:

Դարձյալ քաղաքական կողմնորոշման առումով՝ հերթական քաղաքական զոհը կարելի է համարել Կիլիկիայի հայկական թագավորությունը: Այստեղ էլ, նրա պատմության վերջալույսին, կրոնադավանական երանգով առաջ եկավ պետությունը պառակտող քաղաքական կողմնորոշման խնդիրը՝ պետականությունը պահպանելու համար ապավինել սեփական ուժերին, թե կաթոլիկություն ընդունելու գնով (պայմանով) կողմնորոշվել դեպի Հռոմը՝ պապական կաթոլիկների հետ միանալով **ունիա** (միություն) կազմել: Այստեղից էլ՝ հայտնի է XIV դարի սկզբներից ծավալվող, պատմությանը հայտնի, այսպես կոչված՝ **ունիթորական** և **հակաունիթորական** շարժումը (հոսանքները): Դավանական հենքի վրա՝ այդ պառակտիչ շարժումը ոչ մի լավ բանի չէր կարող հանգեցնել: Ի վերջո, 1375 թ. հունվարին Եգիպտոսի սուլթանի և Հալեպի ամիրայի զորքերը շրջապատում են Սիս մայրաքաղաքը և, տևական շրջապատումից ու համառ մարտերից հետո, ապրիլի 16-ին գրավում են այն: Կիլիկիայի հայոց վերջին թագավոր Լևոն VI-ի գահազրկմամբ վերջ է տրվում միջնադարյան Հայաստանի վերջին թագավորությանը՝ Արևմուտքից այդպես էլ ոչ մի իրական օգնություն չստանալով: Կիլիկիայի տարածքը միացվում է Եգիպտոսի սուլթանությանը, իսկ 1487 թ՝ նվաճվում օսմանյան Թուրքիայի կողմից[4]:

Արդեն ուշ միջնադարից, Հայոց անկախ պետականությունների անկումից ու վերացումից հետո, Հայաստանի ազատության և անկախության վերականգնման ճանապարհին կրկին առաջին պլան է մղվում և օրակարգային հարց դառնում **Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցը**: Ավելի ստույգ, սկսած XVI դարից, պետականակորոյս Հայաստանն ու հայ ժողովուրդը, ի սկզբանե ի վիճակի չլինելով սեփական ուժերով ազատագրվել ու վերականգնել իր անկախությունը, նրա ազատատենչ աշխարհական ու հոգևորական գործիչները սկսում են ուղիներ փնտրել՝ դիմելով հեռու և մոտիկ պե-

---

[3] Տե՛ս **Մանանդյան Հ.**, *Երկեր*, հ. Գ, Եր., 1977, էջ 25–26, նաև՝ *Հայոց պատմություն*, հ. 2, գ. 2, Եր., 2014, էջ 160:

[4] **Հակոբյան Ա.**, *Հայոց պատմություն*, Եր., 2018, էջ 137:

տությունների, երկրների և ուժերի՝ ազատագրվելու ակնկալիքով: Սկզբնական շրջանում նրանց հայացքը, ինչպես արդեն ասվեց, հիմնականում ուղղված է եղել դեպի **Արևմտյան Եվրոպա**, ընդհուպ՝ Հռոմի պապ:

Հայոց պատմության անխոնջ մշակ Հ. Անասյանի կարծիքով՝ Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման առումով, ինչպես նախորդ դարերում, այնպես և XVII դարում ունեցել է արևմտյան կողմնորոշում[5]: Նրա դիտարկմամբ՝ «XVII դարի արևմտահայ շարժման ղեկավարները դրսի օգնությունը Արևմուտքից էին սպասում և հաջողության հույսեր կապում խաչակրական շարժումների հետ»[6]:

Մենք գիտենք, որ խորհրդահայ պատմագրության մեջ և ոչ միայն նրա, արդեն միջնադարից պետականազրկված Հայաստանի ու հայ ժողովրդի՝ Եվրոպայի օգնությամբ ազատագրության գաղափարը համարվել է լոկ որպես մի պատրանք[7]: Դրան հակակշիռ, դեպքերի և պատմաքաղաքական իրադարձությունների հետագա զարգացումներով պայմանավորված, XVIII դարի սկզբներից, աշխարհաքաղաքական դիրքի և արտաքին քաղաքական հեռանկարի առումներով, Հայաստանի ազատագրման հույսը տրամաբանորեն ավելի ու ավելի մեծ չափերով սկսեց կապվել արդեն զորեղացող Ռուսաստանի օգնության հետ, ինչը պատմական օբյեկտիվ ընթացքով հանգեցրեց այդ գաղափարի ամրակայմանը:

## *2. Պատմական լեգենդ-գուշակությունները Հայաստանի ազատագրության հարցում*

Հայոց հին և միջնադարյան պատմության դարավոր հոլովույթը ցույց է տալիս, որ հայերի Արևմտյան (լատինական) կողմնորոշումը հայ հասարակական-քաղաքական կյանքում ունեցել է **պատմական խոր արմատներ**: Այն, ինչպես ասվեց, ձևավորվել էր Կիլիկիայի հայկական պետության ժամանակներից, երբ «հայերն XI–XIII դարերում անմիջա-

---

[5] Տե՛ս **Անասյան Հ.**, *հշվ. աշխ.*, էջ 5–6:
[6] Նույն տեղում, էջ 50:
[7] Տե՛ս **Զուլալյան Մ.**, *հշվ. աշխ.*, էջ 339 և ուրիշներ:

կան ու երկարատև շփման մեջ էին գտնվել խաչակիր բանակների ու լատինադավան ժողովուրդների հետ»[8]: Կնշանակի՝ հայերի, ի մասնավորի արևմտահայության ու կիլիկիահայության, արևմտաեվրոպական քաղաքական կողմնորոշումը ավելի առարկայական է դառնում տակավին Կիլիկյան Հայաստանի և Խաչակրաց առաջին արշավանքների ժամանակներից: Վերջիններիս գլխավոր կարգախոսը դառնում է իբրև Քրիստոսի գերեզմանը և քրիստոնեական սրբավայրերը մահմեդական անհավատներից ազատագրելը:

XI դարի կեսերին Բագրատունյաց հայոց կենտրոնական թագավորության անկումը, տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական բարդ հանգամանքները՝ Արևելքից սելջուկների աշխարհավեր արշավանքները, նվաճումներն ու հաստատվելը մահմեդականացած Մերձավոր ու Միջին Արևելքում, ի հակազդեցություն դրա՝ այդ նույն դարի վերջից (1096 թ.) սկսած Խաչակրաց բազում արշավանքները, ներքին անհամերաշխությունն ու երկպառակությունները հայ հանրային մտքում ու գրականության մեջ խթանեցին միջնադարին բնորոշ տեսիլների, գուշակությունների, մարգարեությունների ու վարդապետությունների «փրկարար» մի երկար շարան, որոնք չեն ունեցել փաստահիրավական որևէ հիմք և, մեր կարծիքով, դրանք կարելի է համարել հայ ժողովրդի **ազգային հոգեբանության** դրսևորում: «Անշուշտ, ամէն ժողովուրդ էլ,- գրում է հնչակյան գործիչ Ստեփան Սապահ Գյուլյանը,- իր ձգտումները, իղձերը, երազները միշտ Առասպելներով և Հերոսների բերանով է արտահայտել, մանաւանդ հին օրերի մէջ»[9]: Այդ նույն առնչությամբ՝ «Մենք,- կարդում ենք մեր ժամանակների «Հրապարակ» թերթի առաջնորդողում,- լեգենդներ՝ միֆեր հյուսող ժողովուրդ ենք: Սկզբում հյուսում ենք այդ առասպելները, հետո մեզ թվում է, թե դրանք իրական են, եւ դառնում ենք դրանց գերին»[10]:

Եվ պատահական չէ, որ հենց այդ դարաշրջանում էլ երևան եկավ մի գրական ստեղծագործություն՝ «**Դաշանց թուղթ**» անվանումով լե-

---

[8] **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 50:
[9] **Սապահ-Գիւլեան**, *Ինքնապիտ Հայաստան*, Գահիրէ, 1915, էջ 10:
[10] «Հրապարակ», 22 դեկտեմբերի 2023 թ., N 225, էջ 1:

գենդ[11]: Դրանում խոսվում էր հայ-հռոմեական հին բարեկամության մասին, որ իբրև «սիրոյ և միաբանութեան» այդ դաշինքը (պայմանագիր) կնքվել է 4-րդ դարի սկզբներին (316 թ.), մի կողմից՝ Հռոմի կայսր Կոստանդինոս 1-ին Մեծի ու Սբ. Սեղբեստրոս պապի (հայրապետի), իսկ մյուս կողմից՝ Հայոց Արշակունի Տրդատ 3-րդ Մեծ թագավորի ու Սբ. Գրիգոր Լուսավորիչ պատրիարքի միջև: Ագաթանգեղոս պատմիչի պատկերմամբ՝ Կոստանդինոս 1-ին Մեծ կայսրը Հայոց Տրդատ արքայի հետ, իբրև սիրելի եղբայր, դաշինք կնքեց՝ «Դաշինս կռէր ընդ նմա»[12]: Այդ նույն դաշինքի մասին է ակնարկում նաև Փավստոս Բուզանդ պատմիչը[13]: Ըստ «Դաշանց թղթի»՝ Հռոմի Սբ. Կոստանդինոս Ի-ին Մեծ կայսրը իբր խոսել է հայոց գլխին ապագայում գալիք փորձությունների մասին և «մարգարեական» պատգամ է տվել, թե ապագայի իր սերունդների ձեռքով է լինելու հայոց թագավորության վերականգնումը. «Զի տառապանօք տառապի ազգն Հայոց մինչև ցելս հոգւոց իւրեանց, որոց փրկութիւն ի տեառնէ եղիցի և օգնութիւն յազգատոհմէ իմմէ»[14]: Մեծավաստակ հայագետ Հ. Անասյանը դա որակում է կիլիկյան շրջանում հայ լատինասեր (ունիթորական) հոսանքի կողմից հորինված գրական կեղծիք: Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը «Դաշանց թուղթը» համարում է «հերյուրանք»[15]: Իսկ XIX դարի հայ մեծանուն հրապարակախոս Գր. Արծրունին դաշանց թղթերով ու տեսիլք-պատումներով առաջնորդվող կղերական գործիչներին համարում էր «կտակարանական ազգ» և այլն[16]: Բայց նման գնահատականները չպետք է համարել իբրև պատմական դատավճիռ, այլ, կարծում ենք, անցյալի երևույթնե-

---

[11] Վավերագիր այդ նյութն առաջին անգամ տպագրվել է 1683 թ. Վենետիկում հայերեն, կա դրա նաև իտալերեն թարգմանությունը, ինչպես նաև տասնյակների հասնող ընդօրինակություններ ու արտագրություններ: Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Բարթիկյան Հր.**, *«Դաշանց Թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը* («Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2004, թիվ 2, էջ 65–116):

[12] **Ագաթանգեղոս**, *Հայոց պատմություն*, Եր., 1983, էջ 487–488:

[13] **Փավստոս Բուզանդ**, *Հայոց պատմություն*, Եր., 1987, էջ 87, նաև՝ *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա*, հ. 2, Եր., 2011, էջ 71:

[14] **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 55:

[15] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 1, էջ 74:

[16] **Գևորգյան Լ.**, *«Մուրճ» ամսագիրը*, Եր., 1982, էջ 19:

ը վեր հանելիս ու գնահատելիս դրանք պետք է դիտել ու արժևորել իր ժամանակի ու տարածության մեջ:

Այդ նույն իմաստով գոյություն ունի դարձյալ IV դարին վերագրվող մեկ ուրիշ՝ Հայոց հայրապետ Ներսես Ա Մեծ Պարթևի (353–373) «**Տեսիլք**»-ն այն մասին, իբրև թե Ներսես Մեծը մահվան մահճում կանխագուշակել էր հայկական պետականության կործանումը, որ հայերը կկորցնեն իրենց ազատությունը և կենթարկվեն Արևելքից եկած մի դաժան ու անողորմ ազգի լուծին: Բայց վերջը Արևմուտքից պիտի գան քաջարի հռոմեացիք կամ ֆրանկները,[17] որոնց օգնությամբ երկար տարիներ անց պիտի ազատագրվի հայ ազգը ու վերականգնվի հայկական անկախությունը[18]: Մեկ այլ մեկնաբանությամբ՝ Սբ. Ներսես Մեծի գուշակային կանխատեսմամբ՝ հայերի անմիաբանության պատճառով տեղի կունենա Հայաստանի քաղաքական քայքայում և իրար կփոխհաջորդեն օտար տիրապետությունները, ներառյալ սելջուկ-թուրքերի և մոնղոլ-թաթարների ներխուժումները, մինչև որ, ի վերջո, կազատագրվի Եվրոպայի (քրիստոնյա մի հզոր թագավորի) կողմից ու կվերականգնվի Հայոց թագավորությունը[19]: Ինքնին հասկանալի է, որ 4-րդ դարում ապրած Ներսես I կաթողիկոսը չէր կարող նման բան գրել՝ ակնարկելով սելջուկների և մոնղոլների մասին: Իսկ եթե Ներսես Մեծը գուշակային բնույթի ինչ-որ բան գրել է, ապա ռազմաքաղաքական հանգամանքների բերումով դրանք ստեղծագործվել, «ծաղկեցվել» ու հավելվել են միջնադարում: Հայ պատմագրության երախտավոր **Լեոն** (**Առաքել Բաբախանյան** (1860–1932 թթ.) Ներսես Մեծի «Տեսիլք»-ը համարում է մի շինծու մարգարեություն՝ հորինված հոգևորականության ձեռքով, թե Արևմուտքը գալու է զենքով Հայաստանը ազատելու և Հայոց թագավորությունը վերականգնելու[20]: Մեկ այլ տեղ Լեոն՝ Ներ-

---

[17] Հ. Անասյանի պարզաբանմամբ՝ «**ֆրանկ**» անվան տակ պետք է հասկանալ լատին, տևտոն (գերման), մաջար (հունգար) և սլավոն (լեհ) լեզուներով խոսող բոլոր ժողովուրդներին (տե՛ս **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 214):

[18] Տե՛ս **Լէօ**, *Հայոց հարցի վաւերագրեր*, Թիֆլիս, 1915, էջ 3, **Հովհաննիսյան Ա.**, *Դիվագներ...*, գ. 1, էջ 58–80, նաև՝ **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 52:

[19] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, Եր., 2016, էջ 43:

[20] Տե՛ս **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 95:

սես Մեծ Պարթևին վերագրված սույն մարգարեությունը համարում է հայ կղերական դիվանագիտության ստեղծագործություն, իբրև թե՝ Քրիստոնյա Եվրոպայից է գալու Հայաստանի ազատությունը[21]: Լեոյի դիտարկմամբ՝ իր հերթին, այդ կեղծ տեսիլքներն ու մարգարեությունները (գուշակությունները) Արևմտյան Եվրոպայում, Հռոմի պապի հետ միասին, ոչ միայն չէին մերժվում կամ հերքվում, այլ ընդհակառակը, պահպանում ու խրախուսում էին իրենց օգուտների համար[22]:

Ի հավելումն վերը բերվածի՝ գոյություն ունի նաև Հովհաննես Կոզեռն վարդապետի (XI դար) «**Կոզեռն**» կոչված[23], դարձյալ Ներսես I Պարթևին վերագրվող, տեսիլք-պատումի ևս մի վերախմբագրված տարբերակ, որում կրկին խոսվում է եվրոպական երկրների՝ ֆրանկների, հռոմեացիների, տևտոնների և այլ «խաչակիրների» կողմից ակնկալվող՝ Հայաստանի ազատագրման հեքիաթի նմանվող մարգարեության մասին և այլն:

Բայց լեգենդ-գուշակության ու երբեմն հեքիաթի նմանվող այդ տեսիլք-ծրագրերը մեզ հետաքրքրում են հայրենիքի ազատագրման քաղաքական մտքի ու գաղափարաբանության առումով, որ թեկուզ անգամ երբեմն առասպելի նմանվող, բայց և այնպես, **հայ եկեղեցական և աշխարհական այրերի միտքը միջնադարյան մղձավանջի թանձրույթում շարունակ մտորել ու գործել է, փորձ է արվել այս կամ այն կերպ ուղիներ գտնել՝ Հայոց հողը ազատագրելու և պետականությունը վերականգնելու համար**: Դժվար չէ նկատել, որ գրական-քարոզչական բնույթի, ըստ ամենայնի, հնարված նման ստեղծագործություններն ու խոսույթները նպատակ են հետապնդել հայերի մեջ արմատավորել Արևմտյան (լատինասեր) քաղաքական կողմնորոշում, որ իբր հայերի փրկությունը Եվրոպայից է գալու: Սրանք հայության քաղաքական մտայնություններն արտահայտող երկեր են, ինչը նշանակում էր, որ հայ ժողովուրդը իր ազատագրության ճանապարհին պիտի որ հայացքն ուղղեր դեպի **Արևմուտք**:

---

[21] Տե՛ս **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 11, 95 և 114:
[22] Տե՛ս նույն տեղում, էջ 96:
[23] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Գրվագներ...*, գ. 1, էջ 45 և 197:

Եվ պատահական չէր, որ հայոց ազատագրության գործին հետամուտ հիմնականում հոգևորական և մասամբ աշխարհական հետագա գործիչների՝ Ստեփանոս Սալմաստացու, Միքայել Սեբաստացու, Աբգար Թոխատեցու, Մահտեսի Մուրադ Բաղիշեցու, Հովհաննես Թութունջիի, Հակոբ Ջուղայեցու, Իսրայել Օրիի, Հովսեփ Էմինի և մյուսների ընտրած ուղին պիտի տաներ Արևմուտք: Դեպի Արևմուտք հայությանը կողմնորոշող նման քաղաքական ուղղվածության հեքիաթանման ստեղծագործություններից զատ, հարկ է նշել, որ այդ կողմնորոշմանը տեղերում քարոզչական ու գործնական իրենց նպաստն էին բերում Վատիկանի (Հռոմի պապի) և Արևմուտքի պետությունների **միսիոներները**: Պապական միսիոներների կողմից Հայոց աշխարհում կաթոլիկության եռանդուն քարոզչության հետ միասին տարվում էր նաև քաղաքական ագիտացիա, իբրև թե՝ պապական եկեղեցու օգնությամբ հայերին ազատագրելու մասին[24]: Ակներև է, որ պապական միսիոներները և խաչակիր «եղբայրները» հայերի **կաթոլիկ դավանափոխությունը** համարում էին **Հայաստանի ազատագրման հարցի լուծման նախապայման**:

Այդպիսով, պետականակորույս հայ ժողովրդի նախաձեռնող շրջանակները ուշ միջնադարում Հայաստանի ու հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում հանդես են բերել երկու հիմնական մոտեցում. սկզբում՝ Հայաստանի ազատագրման հույսը կապվել է Արևմուտքի՝ Հռոմի պապ (Վատիկան), Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլ երկրների հետ, իսկ հետագայում, դեպքերի և հանգամանքների բերումով, նույնիսկ պատահականության գործոնով պայմանավորված, արդեն XVIII դարի սկզբներից որոշակի քաղաքական դիմադարձ է կատարվում աշխարհագրորեն Հայաստանին ավելի մոտ և փոխադարձ շահերով կարծես ավելի համընկնող դեպի Մոսկովյան պետությունը (Ռուսաստանը): Եվ այս գաղափարը հետագայում հայ հանրության հասարակական-քաղաքական շրջանակներում գնալով դառնում է առավել տիրապետող (գերիշխող) հոսանք ու քաղաքական գործելակերպ: Ճանաչված պատմաբան, պրոֆ. Վ. Դիլոյանի բնորոշմամբ՝ հայ ազգային-ազատագրական շարժման հիմնական արտաքին-

[24] Տե՛ս **Զուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 339:

քաղաքական հենակետը դառնում է Ռուսաստանը, և այդ շարժումը սկսում է կրել «դեպի Ռուսաստան քաղաքական կողմնորոշման բնույթ»[25]: Ընդհանուր առմամբ, հետևություն կարելի է անել այն իմաստով, որ «Դաշանց թղթերի» և «տեսիլք-գուշակությունների» գլխավոր գաղափարն այն էր, որ, այնուամենայնիվ, Հայաստանի ու հայ ժողովրդի փրկությունը պիտի գար **դրսից**, ինչը կարելի է համարել հեռուն չտանող և, ի վերջո, հուսախաբության հանգեցնող ուղի:

## *3. Հայ հանրության մտահոգևոր ընկալումները հայրենիքի ազատագրման հարցում*

Հայաստանի ազատագրության հարցում հայ հասարակական-քաղաքական շրջանակների քաղաքական կողմնորոշումների հարցը դիտարկելիս հարկ է փաստել, որ հայ հասարակական-քաղաքական միտքը, ըստ քաղաքական իրադրության ու հանգամանքների, բնականաբար, հանդես է բերել տարբեր դիրքորոշումներ, ներքին հակամարտություններ ու անգամ բախումներ: Այդ իմաստով, Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության հարցում կարելի է տարբերակել հետևյալ երեք հիմնական ուղիներ կամ, ժամանակակից իմաստով, հասարակական մտքի **հոսանքներ**:

**1-ին.** կարելի է ասել, որ մեզանում մշտապես առկա է եղել **պահպանողական** կոչված հոսանքը, որը տիրապետող է եղել հայ հոգևորականության հատվածում, հիմնականում Հայոց հայրապետների գլխավորությամբ, որոնք, տեսադաշտում ունենալով առաջին հերթին երկրի ու ժողովրդի **անվտանգության** խնդիրը, միաժամանակ, մոռացության չմատնելով օտարի կողմից սոցիալական ու ազգային-կրոնական հարստահարություն-հալածանքները, այդտեղերձ, ավելի նպատակահարմար էին գտնում առժամանակ **հարմարվել** գոյություն ունեցող վիճակին, հանդես բերել քաղաքական խոհեմություն և զգուշավորություն, **համակերպվել**, սպասել մինչև որ **աստվածային զորությամբ** կգա հա-

---

[25] **Դիլոյան Վ.**, *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին կիսամյակին և հայոտուական հարաբերությունները*, էջ 3:

տուցման ժամը, և Հայաստանն ու հայ ժողովուրդը, ի վերջո, կազատագրվի և ձեռք կբերի իր ինքնիշխան պետականությունը: Այս դիրքորոշման հիմնական ջատագովները, ինչպես ասվեց, եղել է հայ կղերական (հոգևոր-եկեղեցական) թևի առավել պահպանողական համարվող հատվածը, օրինակ, Հայոց կաթողիկոսներից Նահապետ Եդեսացին (1691–1705 թթ.), Ալեքսանդր Ջոտլայեցին (1707–1715 թթ.), Կարապետ Բ Ուլնեցին (1726–1729 թթ.), Սիմեոն Երևանցին (1763–1780 թթ.) և ուրիշներ, ինչպես նաև քաղաքական ու կրթական առումով առավել հետամնաց ու ճակատագրապաշտ հայ առավել մութ զանգվածը: Կարելի է հասկանալ, որ կրոնական գունավորման այն ժամանակների միջավայրում ու պայմաններում այդ հոսանքը հայ հանրության մեջ բավականին տիրապետող է եղել: Բայց, այդ ամենով հանդերձ, անժխտելի է, որ Հայ եկեղեցին թեև ոչ բացահայտ, այնուամենայնիվ ներգրավված է եղել հայոց ազգային-ազատագրական շարժումների մեջ:

**2-րդ**. պատմականորեն ստացվել է այնպես, որ Հայաստանի և հայ ժողովրդի էթնիկ ինքնության պահպանման համար, սեփական ուժերին ու սակավ ռեսուրսներին ապավինելուց զատ, կամա թե ակամա առաջին պլան է մղվել Հայաստանի **քաղաքական կողմնորոշման** խնդիրը: Հայ հասարակական-քաղաքական շրջանակների մի մեծ հատված, այդ թվում հայ առևտրական (խոջայական) դասի ներկայացուցիչները գտնում (մտորում) էին, որ Հայաստանի անկախության հասնելու, երկրի տարածքային ու ժողովրդի անվտանգության խնդիրները հնարավոր է լուծել հիմնականում (գլխավորապես) **արտաքին** ուժերի օգնության ու օժանդակության միջոցով:

Այս մտայնության հետևորդները առաջին հերթին հայության (հասարակական-քաղաքական) այն շրջանակներն էին, որոնք լավ պատկերացում ունենալով իրենց հայրենի երկրի ու ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, ազատագրական-դիմադրական պայքարի սահմանափակ կարողականության մասին, սկսած ուշ միջնադարից հիմնականում գործել են պարսկա-թուրքական ճնշում-բռնություններից հեռու՝ **գաղթաշխարհում**, մասնավորապես Հնդկաստանում և Ռուսաստանում՝ ազատագրության, իսկ վերջին հաշվով հայրենիքի անգամ ժողովրդավարական արժեհամակարգով անկախ պետականության վե-

ռականգնման ծրագրեր են մշակել, իբրև անհավատների կողմից ճնշված ժողովուրդ, փորձել են մեծապես շեշտը դնել **արտաքին** գործոնի, այսպես կոչված, **երրորդ ուժի** վրա, ուշ միջնադարյան պատմաշրջանում՝ քրիստոնյա Արևմուտքի պետությունների, իսկ հետո՝ սկսած XVIII դարից, նաև Ռուսաստանի արտաքին **զինական օգնությամբ** ազատագրել հայրենիքը՝ պատրաստ լինելով ազատության և պետականության ինչ-որ կարգավիճակ ձեռք բերելու պարագայում անգամ մնալ նրանց հովանավորության ներքո:

**3-րդ.** այս հոսանք-գործելակերպին դավանողներին կարելի է դասել նրանց, որոնք գտնում էին, որ հայրենիքի ազատագրման համար առաջին հերթին ու վերջին հաշվով պետք է **ապավինել սեփական ուժերին ու կարողականությանը**: Այս կապակցությամբ տեղին է մեջբերել մեր ժամանակների գաղափարախոս Գ. Նժդեհի քաղաքական բանաձևի նմանվող անկոտրում միտքը, որ «Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յույսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զենքի վրայ»[26]: Իսկ այդ նպատակին հասնելու ճանապարհին, ի լրումն վերը ասվածի, ականավոր պատմաբան Ն. Ադոնցը իրավացիորեն ակնարկում էր, որ զենքի դիմելու համար շատ կարևոր է ազգի կռվի համար հոգեբանորեն պատրաստ լինելը՝ «հոգեկան մղումը, որ տանում է դեպի զենք»[27]: Բայց պետք է արձանագրել, որ պատմականորեն այս հոսանքին ապավինող հայ հանրության տեսակարար կշիռը, ցավոք, փոքր է եղել:

Այս հոսանքի ջատագովներից ոմանք, մեր ժամանակների հասկացությամբ, այն ձևակերպեցին որպես **երրորդ ուժի** բացառման օրենք[28]: Նկատել տանք, որ այս հոսանքի ներկայացուցիչները չէին

---

[26] **Նժդեհ Գ.**, *Հատընտիր*, Եր., 2006, էջ 39:

[27] **Ադոնց Ն.**, *Երկեր*, հ. Ա, էջ 13:

[28] Տե՛ս Հայաստանի երրորդ հանրապետության անկախացման փուլում այս հայեցակետի (կոնցեպտի) ջերմ պաշտպաններից էր գրականագետ և լեզվաբան **Ռ. Իշխանյանը**: Նա իր հայտնի հրապարակումներից մեկում զարգացնում էր այն միտքը, որ վերջին երեք դարում հայերի քաղաքական պատմությունը գրեթե միշտ հենված է եղել **երրորդ ուժին** ապավինելու գաղափարի վրա: Դրա տակ նկատի էր առնվում՝ Արևմուտքը և Ռուսաստանը: Հեղինակը կտրուկ է դնում հարցը, որ մեր առջև ծառացած ազգային ու պետական հարցերը միայն մենք պետք է լուծենք՝ կիրառելով երրորդ ուժի բացառման օրենքը (տե՛ս grapaharan.org/երրորդ-ուժի-բացառման-օրեն-

հավատում արտաքին՝ թե՛ Արևմուտքի և թե՛ Ռուսաստանի օգնությանը: Մեր ժամանակներից ավելի քան մեկ դար առաջ, Հայաստանի առաջին հանրապետության օրինակով, նրա հիմնադիր անդամներից, խոշոր քաղաքական ու պետական գործիչ Ռ. Տեր-Մինասյանը ընդգծում էր ազատության ու պետականության կայացման գործում առաջին հերթին սեփական ուժերին ու կարողություններին ապավինելը, ինքնակազմակերպվելը՝ համարում էր իբրև ամենահուսալի և իրատես միջոց և ուղի[29]: Բայց Ռուբենի և Առաջին հանրապետության կերտողների մտքով երբեք չէր անցնի հրաժարվել արտաքին, Հայաստանի հանդեպ բարյացակամ տրամադրված, շահերի համընկնմամբ՝ զորեղ ուժերից օգնություն ու աջակցություն ստանալու հնարավորությունից: Մենք գիտենք, որ հենց Առաջին հանրապետության արտաքին ու ներքին քաղաքականության բազում հարցերի լուծումը անհրաժեշտաբար կառուցվում էր արտաքին ուժերից՝ Արևմուտք (Անգլիա, ԱՄՆ), Ռուսաստան (Դենիկին, Կոլչակ, Վրանգել) զինական ու նյութական օգնություն ստանալու վրա, քանզի, ինչպես արդեն ասվեց, չկար դրան հակառակ՝ սեփական բավարար մարդկային ու նյութական ռեսուրս (կարողականություն) և կամ այլընտրանք:

Կրկին դառնալով Հայոց պատմական անցյալին՝ պետք է նկատի ունենալ, որ դարեր շարունակ հայ ժողովուրդը, հայտնվելով օտար բռնատիրությունների ներքո, թե՛ գաղափարական, թե՛ կազմակերպական և այլ առումներով չէր կարող հասնել ազատության ու անկախության բաղձալի նպատակին: Հարկ է հաշվի առնել ևս մի այլ հանգամանք, այն է, որ անցյալում մեզանում իշխել է սեփական ուժերի նկատմամբ, մի տեսակ, **անվստահության բարդույթ**: Մի կողմից՝ երկփեղկված Հայաստանի ու ժողովրդի սեփական համեստ հնարավորությունները, մյուս կողմից՝ միջնադարյան աստվածապաշտ ու աստվածավախ

---

քը, նաև՝ «Մաշտոց», Եր., 1989): Բայց, մեր կարծիքով, իրականում գործնական քաղաքականության ու դիվանագիտության մեջ, հանգամանքների բերումով պետք է փորձել օգտվել նաև արտաքին, մի երրորդ ուժի գործոնից, մանավանդ, եթե չունենք բավարար ռեսուրսներ ու հնարավորություններ դրանք լուծելու:

[29] Տե՛ս **Ռուբէն**, *Հայ յեղափոխականի մը յիշատակներ*, հ. Է, մասն 2, Լոս Անճելլես, 1952, էջ 216:

հայության սոցիալ-հոգեբանորեն համբերելու ու հանդուրժելու գործոնը. այս հոսանք-դիրքորոշումը առանձնապես մեծ, իշխող տեսակարար կշիռ չի ունեցել, այն դրսևորվել է հատվածականորեն, երբեմն՝ իրարից մեկուսի: Այդ նպատակին հասնելու ճանապարհին փորձել են օգտվել նաև արտաքին օգնությունից, ինչպիսին, օրինակ, դրսևորվեց XVIII դարի 20-ական թվականներին, հանձին՝ Արցախում և Սյունիքում ծավալվող ազատագրական շարժման ու պայքարի, այն էլ, իբրև խթան ու շարժառիթ՝ հիմնականում կապված Արցախ աշխարհին Ռուսական զորքերի օգնության հասնելու ակնկալության (սպասումի) հետ, իսկ Սյունիք-Կապանում՝ Պարսկաստանում ընթացող քաղաքական անկայունության, գահակալական կռիվների, աֆղանների հակաշահական ապստամբական արշավանքների և այլնի հետ, իրադարձություններ, որոնք դեպքերի զարգացումով (հասկանալի պատճառներով) երկու դեպքում էլ դատապարտված էին անհաջողության ու պարտության:

* * *

Այս բոլորով հանդերձ՝ Հայոց պատմության բազմադարյա հարուստ փորձն ու ուսանելի դառը դասերը, այնուամենայնիվ, հանգեցնում են այն աներկբա եզրահանգման, որ հաճախ քաղաքական խաբուսիկ կողմնորոշումների, հովանավոր փնտրելու միակ հուսալի հակակշիռ· թեզը առաջին հերթին պիտի լինի նժդեհական՝ սեփական ուժերին հավատալն ու ապավինելը:

Նկատի առնելով, որ Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման ու անկախ պետականության վերականգնման խնդրում մշտապես առաջնային պլան է մղվել հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցը, ուստի դրա հետ կապված պատմականորեն քաղաքական բովանդակության իմաստ է ստացել **Հայերի** կամ **Հայկական հարց** հասկացությունը, որը կազմում է Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը: Ըստ Լեոյի՝ «Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը հայ ազգը»[30]: Նա այդ հարցը դիտել է որպես հայ ժողովրդի գոյապահպանության, նրա լինել-չլինելու խնդիր:

---

[30] **Լեո,** *Հայկական հարցի վավերագրեր,* Եր., 2014, էջ 24:

Տեսակետ կա, որ Հայկական հարցը ծագել է Հայաստանի առաջին (387 թ.) բաժանումով[31]: Հայկական հարցին սոցիալ-դասակարգային բովանդակություն տալով՝ 1920-ական թթ. բոլշևիկ Բ. Բորյանը, Լենոյի նման զարգացնում է այն միտքը, որ սկսած ուշ միջնադարից Հայկական հարցի և հայկական պետականության վերականգնման գործում նշանակալի է եղել հայ առևտրական (խոջայական) կապիտալի և մելիքական (ֆեոդալական) տների խաղացած դերակատարությունը և այլն[32]:

Հարկ է նկատել, որ «Հայկական հարց» քաղաքական հասկացության խնդրում հայ պատմագրության մեջ կարելի է տարբերակել երկու մոտեցում: Քաղաքական այն հասկացությունը, որը ուշ միջնադարում և նոր դարաշրջանի սկզբնափուլում որակվել է որպես «Հայերի կամ Հայկական հարց»[33],գիտական ու ժամանակագրական պարբերացման առումով չի կարելի խառնել ու շփոթել արդեն մեր, նոր դարաշրջանում՝ 1878 թ. Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով, միջազգային դիվանագիտության մեջ ասպարեզ նետված և XIX դարավերջից քաղաքական-դիվանագիտական քննարկումների նյութ դարձած բուն **Հայկական հարցի** հետ, մի հիմնահարց, որը վերաբերում էր նեղ առումով զուտ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ (ռեֆորմներ) անցկացնելու Թուրքիայի պարտավորության ստանձմանը, իսկ ավելի լայն իմաստով՝ Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության վերջնական ճակատագրի հանգուցալուծման խնդրին:

Ընդհանրապես, միջազգային հարաբերությունների համատեքստում հայտնի է նաև ավելի վաղ ու ավելի տարողունակ «**Արևելյան հարց**» հասկացությունը, որը ծագել է XVIII դարի երկրորդ կեսին, ավելի ստույգ Եկատերինա II կայսրուհու ժամանակներում[34]: Այն իր մեջ նե-

---

[31] Տե՛ս **Գալոյան Գ.Ա.**, *Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, էջ 26:

[32] Տե՛ս **Борьян Б.А.**, *Армения международная дипломатия и СССР*, М.-Л., 1928, ч. I, с. 209.

[33] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Բարայեղ Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 75, 81, 83, 85 և այլն:

[34] «Արևելյան հարց»-ում գլխավորը, ըստ էության, Օսմանյան կայսրության լինել-չլինելու՝ մեծ տերությունների նրանում ներթափանցելու և մասնատելու հարցն

բառում էր ռազմաքաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային և այլ հարցեր (բաղադրիչներ), իսկ խնդրին առնչվող պետությունների ու երկրների կազմը ժամանակի ընթացքում փոփոխվել է: Արդեն XIX դարի կեսերին՝ Ղրիմի պատերազմի շրջանից դրա մեջ ներառվեց նաև հայերի խնդիրը, որը ստացավ «Հայկական հարց» անվանումը[35]:

«Հայերի կամ Հայկական հարց» հասկացությունը առաջիններից մեկը կիրառել է պատմաբան, գրականագետ, հասարակական գործիչ **Կարապետ Եզյանը (Եզով)** (1835–1905 թթ.): Նրա կարծիքով, «Հայերի հարցը» առաջին անգամ հրապարակ է եկել Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի ժամանակներից, և նա Ի. Օրիի գործունեությունը Եվրոպայում և Ռուսաստանում դիտում է որպես «Հայկական հարց»[36]: Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը քննադատում է Եզյանի այդ տեսակետը, իբրև հարցին անտեղյակ մարդ[37]: Վաստակաշատ պատմաբան Լեոն ևս Ի. Օրիի գործունեության հետ կապված գործ է ածում **Հայկական** կամ **Հայոց հարց** հասկացությունը[38]: Իսկ պատմաբան-հրապարակագիր Ե. Գեղամյանցը մինչև XIX դարի 30-ական թվականները Հայկական հարցը բաժանել է չորս շրջափուլերի՝ դրանք հիմնականում կապելով մինչ այդ տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետ[39] և այլն:

Բայց, եթե «Հայկական հարցը» մենք դիտարկում ենք ուշ միջնադարյան ընկալումներով և արդեն նոր դարաշրջանում 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերից սկսած, նրա միջազգայնացման մասին, ժամանակակից չափումներով՝ Արևմտահայ նահանգնե-

---

էր: Նրա բաղադրիչներից էր՝ կայսրությունում ապրող ոչ մահմեդական հպատակների ազատագրական պայքարի ու հետագա ճակատագրի հարցը: Դրա պատմության սկիզբը համարվում է 1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը, իսկ ավարտը՝ 1923 թ. Լոզանի միջազգային դաշնագիրը:

[35] Տե՛ս **Шеремет В.И.**, *Босфор. Россия и Турция в эпоху Первой мировой войны. По материалам русской военной разведки*, М., 1995, с. 71.

[36] Տե՛ս **Эзов Г.А.**, *Сношения Петра Великого с армянским народом*, С. Петербург (СПб.), 1898, с. LXXV:

[37] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, էջ V:

[38] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 424, նաև՝ 446:

[39] Տե՛ս **Գեղամեանց Եղիշե քահ.**, *Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի շրջանը*, Բազու, 1915, էջ 120 և 239:

ռում բարեփոխումներ անցկացնելու վերաբերյալ Թուրքիայի կողմից պարտավորությունների ստանձման, արևմտահայության անվտանգության և դրան առնչակից հարցերին, ապա ամեն ինչ կընկնի իր տեղը: «Հայկական հարց»-ի ընդհանուր իմաստն ու բովանդակությունը համարվում է Արևմտյան Հայաստանի (Թուրքահայաստանի) ու արևմտահայության ճակատագրի, վերջին հաշվով, ազատագրության հարցը: Ցավոք, խորհրդային շրջանում մարքս-լենինյան պարտադրված գաղափարական մեթոդաբանության պայմաններում «Հայկական հարց»-ին ևս տրվել է սոցիալ-դասակարգային երանգ, որ «արևմտահայ գյուղացիության պայքարը ուղղված է եղել սուլթանական ռազմաֆեոդալական դեսպոտիզմի ազգային և ֆեոդալական դաժան ճնշման ու հարստահարման դեմ» և այլն[40]: Այդ նշանակում է, որ զանց է առնվել համազգային-քաղաքական նշանակության գերխնդիրը և առաջին պլան են մղվել խորհրդային պատմագրությանը բնորոշ գաղափարայնացած, սոցիալ-դասակարգային բնույթի հարցերը և այլն:

---

[40] **Պարսամյան Վ.Ա.**, *Հայկական հարցի զարգացման ուղիները մինչև Բերլինի կոնգրեսը* («Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1946, թիվ 11–12, էջ 71:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ (XVI–XVII դարեր)

## *1. Հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների քաղաքական առաքելությունները*

Հայոց միջնադարյան պետականությունների վերացումից հետո հայ պատմիչ ու պատմագիր հեղինակները ավելի ու ավելի հաճախակի ցավով արձանագրում են հայկական պետականությունների կորստի ու առկա անիշխանական վիճակի մասին: Այսպես, XVIII դարի հայ ճանաչված պատմագիր Մ. Չամչյանն իր եռահատոր «Հայոց պատմության» 3-րդ հատորի 6-րդ գրքի շարադրանքը սկսում է Լենկ-Թեմուրի արշավանքների մռայլ ժամանակներից (1380 թ.) հասցնելով մինչև 1784 թվականը, որտեղ գրեթե Պատմահոր ոճով ներկայացնում է Հայոց հին և միջնադարյան պետականությունների անկումից հետո Հայոց աշխարհի ու հայ ժողովրդի գլխին կախված սպառնալիքների տխուր պատկերը: Գիրքն սկսում է հետևյալ մտահոգիչ մտքերով՝ «Յայս վեցերորդ գիր առաջիկայ մեզ խոսիլ՝ ոչ ևս զճոխութենէ թագաւորութենէ ազգիս մերոյ, և ոչ զլիութենէ փարթամութենէ քաղաքաց յերկրին հայոց. զի բարձաւ ՛ի մէնջ այն ա՛մ. և ոչ դարձեալ զտարաձայնութենէ իշխանաց մերոց, և ոչ զնուաճումէ զօրաց նոցին. զի և նոքին տեղի ետուն: ... Այժմ փոխանակ թագաւորութիւնէ տիրեաց ստրկութիւն. փոխանակ իշխանութիւնէ ժամանեաց անշքութիւն. փոխանակ յաղթութիւնէ յաճախեաց հարուած. փոխանակ անդորր խաղաղութեան, որում մարթ էր ակն ունիլ, արմատացաւ անանդորր խռովութիւն, և տարրացաւ անզօդելի անմիաբանութիւն»[1]: Եվ նման տխուր ոճով ու ոգով արձանագրում-

[1] **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թ.)*, հ. Գ, Եր., 1984, էջ 417:

ների ենք հանդիպում միջնադարյան գրեթե բոլոր հայ պատմիչ-պատմագիրների երկերում:

Հայ հոգևոր և աշխարհիկ գործիչները հայրենիքի ազատագրման և անկախ պետականության վերականգնման նպատակի իրագործման ճանապարհին, իբրև պատմական հենք, հիմքում ունենալով հայոց արքայատոհմերի հարուստ ընտրանին, փորձ են արել հրապարակ բերել անցյալի կորսված հայ արքայատոհմերի ու իշխանական տների շառավիղների պատմահրավական պահանջատիրության և ժառանգորդության վերականգնման գործառույթը (գաղափարը): XV դարում այդպիսի կշռելի մի դրվագ կարելի է համարել Վասպուրականի Արծրունյաց արքայատոհմի գաղափարի նյութականացման փորձը:

Այդ ակնկալությամբ հավանական իրավահաջորդ թեկնածու են դիտարկվել, հայոց ոչ շատ հեռավոր անցյալից, հատկապես Արծրունիներից, Սենեքերիմ Արծրունու արքայական տոհմի շառավիղները: Այս կապակցությամբ նկատել տանք, որ այդ դարի կեսերին Վասպուրականի և Փոքր Հայքի հայության մեջ պահպանվելիս են եղել Արծրունյաց երբեմնի թագավորության ավանդույթները: Այսպես, Աղթամարի հայոց **Զաքարիա Գ** (1434–1464) կաթողիկոսը, օգտվելով կարա-կոյունլուների տիրակալ, Թավրիզի թուրքմեն սուլթան **Ջահանշահի** (1437–1467) խաղաղասեր, բարյացակամ ու հայանպաստ քաղաքականությունից, փորձել է վերականգնել Վասպուրականի երբեմնի հայոց թագավորությունը[2]: Զաքարիա Գ Աղթամարցին Ջահանշահի հովանավորությամբ հավակնել է տիրանալ ոչ միայն Մայր Աթոռի գայիսոնին, այլև «վերականգնել վաղուց ի վեր հանգած Վասպուրականի հայկական թագավորությունը»[3]: Սակայն Զաքարիա կաթողիկոսին չի հաջողվում իրագործել իր փայփայած գաղափարը: Դա ինչ- որ չափով հաջողվում է նրա հաջորդ **Ստեփանոս Դ** (1465–1485) կաթողիկոսին: Վերջինս 1465թ. սկզբներին, Ջահանշահի հովանավորությամբ, Աղթամարի Ս. Խաչ Մայր եկեղեցում բազում եպիսկոպոսների, վարդապետների, քա-

---

[2] Ուշագրավ է, որ, իր հերթին, Սուլթան Ջահանշահի կինը՝ Բեգում-խաթունը, 1462 թ. օգոստոսի 6-ի հրովարտակով հաստատել է տվել Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին իր աթոռին (տե՛ս **Մաղալյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 73):

[3] **Հովհաննիսյան Ա.**, *Դիպագներ...*, գ. 1, էջ 449:

հանաների, ճանաչված աշխարհականների մասնակցությամբ գումարել է տալիս ժողով և մեծ հանդիսավորությամբ, Սբ. Լուսավորչի «Աջով» Վասպուրականի հայոց թագավոր է օծվում (հռչակվում) հանգուցյալ Զաքարիա Գ կաթողիկոսի եղբորորդի **Սմբատ Արծրունի Սեֆեդինյանը**[4]: Այդ մասին 1465 թվագրմամբ մի հիշատակարանում վկայություն կա X դարի Գագիկ Արծրունի թագավորի սերնդից Սմբատ անունով թագավորի մասին, որը համարվել է Աղթամարի կաթողիկոսների արյունակիցը և հայտնի բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու պապը[5]: 1467 թ. Մոկսի վանքերից մեկի գրիչը նույնպես հիշատակում է Վասպուրականի հայոց Սմբատ թագավորի մասին[6]:

Դժբախտաբար, Սմբատի թագավորելը շատ կարճ է տևում: 1467 թ. նոյեմբերին Մուշի ճակատամարտում Ջահանշահը պարտվում և սպանվում է իր ախոյան ակ-կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանից (1453–1478 թթ.): Ջահանշահի մահից հետո պատմաքաղաքական աննպաստ զարգացումները տանում են նրան, որ նույն տարում էլ վերանում է Վասպուրականի հայոց թագավորությունը: «1468 թվին,- գրում է բազմավաստակ պատմաբան Հ. Մանանդյանը,- Ուզուն Հասանը նվաճեց Ղարա-Ղոյունլուների պետությունը, և Հայաստանը՝ թե Արևմտյան և թե Արևելյան, գտնվում էր այնուհետև նրա իշխանության տակ»[7]: Այդ նշանակում է, որ ըստ ամենայնի, այդ նույն տարում էլ վերացել է Սմբատ Սեֆեդինյանի թագավորությունը: Տեսակետ կա, որ Աղթամարի ու ափամերձ մի քանի բնակավայրերի վրա իր իշխանությունը հաստատած Սմբատի թագավորությունը գոյություն է ունեցել մինչև 1471 թ.[8]: Կարելի է ասել, որ փաստորեն Սմբատ Արծրունի Սեֆեդինյանը համարվում է Հայոց վերջին թագավորը, որը մոր կողմից Արծրունի էր, իսկ հոր կողմից Սեֆեդինյան: Վերջինս նույնպես Արծրունյաց տոհմի իշխաննե-

---

[4] Տե՛ս **Զուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 337–338, նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 1, էջ 449:

[5] Տե՛ս **Ակինյան Ն.**, *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, Վիեննա, 1920, էջ 111–114:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 113:

[7] **Մանանդյան Հ.**, *Երկեր*, հ. Գ, էջ 397:

[8] Տե՛ս «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԹ, Պէյրութ, 1999, էջ 107–122:

ից էր[9]: Ի դեպ, միջանկյալ նշենք, որ թուրքմենների տիրապետության շրջանում՝ 1430–1440-ական թթ. Այրարատ-Սյունիքի միացյալ թագավորության վերականգնման փորձ է կատարել նաև Սյունիքի Օրբելյան իշխանական տոհմի վերջին ներկայացուցիչ, «հայոց ամիրզադա» (իշխանազուն) Ռուստամ Օրբելյանը, ինչը, սակայն, չի հաջողվել[10]:

Հայ ժողովրդի հանդեպ անհամեմատ բարյացակամ քաղաքականություն վարած թուրքմեն **Ջահանշահի** գործունեության հետ կապված դարձյալ կարելի է խոսք բացել նաև Հայոց թագավորության (պետականության) վերականգնման մեկ այլ երկընտրանքի մասին: Բանն այն է, որ ավելի վաղ՝ **1441** թ., Ջահանշահի օրոք կաթողիկոսական Մայր Աթոռը, Սբ. Գր. Լուսավորչի «Աջով» Սիսից դարձյալ Էջմիածին՝ Հայոց հոգևոր կենտրոն փոխադրելով, կարելի է մտորել ու խոսել նաև Հայոց թագավորությունը Այրարատյան աշխարհում վերականգնելու տեսլականի մասին[11], վասնզի անցյալի փորձով մենք արդեն գիտենք, որ Մայր Աթոռը սովորաբար հաստատվելիս ու գործելիս է եղել թագավորանիստ մայրաքաղաքում կամ նրա հարևանությամբ՝ հոգևոր մայրաքաղաքում: Այդպես է եղել և՛ Արշակունիների, և՛ Բագրատունիների, և՛ Կիլիկիայի հայկական թագավորությունների ժամանակներում: Ավելին, XVIII դարի հայ հոգևոր ազգային-եկեղեցական գործիչ ու բանաստեղծ, հայոց կաթողիկոս **Ղազար Ջահկեցին** (1737–1739 թթ.) և (1749–1750 թթ.), իր «Երգարանում» փառաբանելով Ս. Էջմիածինը, այն համարում էր նաև հայոց պետականության մարմնացում: Նա իր ներբողներից մեկում Ս. Էջմիածինը դիտում էր ոչ միայն Հայոց հոգևոր, այլ նաև Հայոց **պետականության** փոխարինող (կրող) հաստատություն:

«Էջմիածին յարկ **պետութեան**

Եւ գայիսոն զօրեղութեան:

---

[9] Տե՛ս **Թովմասեան Պ.**, *Աղթամարի թագաւորը՝ Սմբատ Զորտանի-Սեֆեդինեան*, Եր., 2022, էջ 67:

[10] Տե՛ս **Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս.**, *Սյունիքի պատմություն*, Եր., 2001, էջ 107–108:

[11] Ընդ որում, պատմիչ Թովմա Մեծոփեցու նկարագրությամբ՝ Սբ Էջմիածնում կաթողիկոս ձեռնադրվեց Կիրակոս վրդ. Ռշտունեցին, իսկ Երևանի կուսակալ Եադուբ բեկը անձամբ իր գոյքով առաջնորդել է հայ հոգևորականներին ընտրության վայրը՝ Էջմիածին, «փողով և թմբուկով» (**Մանասեանց Հ.**, *Երկեր*, հ. Գ, էջ 394):

Ամուր պատուար հաստատութեան,
Ուղղափառացս յոյս փրկութեան»[12]:

Հայ ազատագրական մտքի պատմության խորագիտակ հետազոտող, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը եկեղեցականների ձեռքով գրված ուշ միջնադարյան հիշատակարանների ուսումնասիրությամբ, ի մասնավորի Վասպուրական թագավորության առիթով, հանգել է այն հետևության, որ Աղթամարի կաթողիկոսները համարվել են «յարմատոյ և ի ցեղէն մեծ թագաւորին Գագկայ (խոսքը 908 թ. Արծրունյաց թագավորությունը հիմնադրած Գագիկ Արծրունու մասին է՝ Ա.Հ.)»[13]: Կնշանակի՝ այն պարագայում, երբ հայոց աշխարհիկ իշխանությունը վերացել էր, սակայն հիշատակագիրների մատուցմամբ Աղթամարի կաթողիկոսական աթոռը միաժամանակ համարվել է **թագավորական աթոռ**: Եվ այս գաղափարը, որպես պատմաիրավական և հոգևոր հիմք, շրջանառվել և փորձ է արվել գործադրել հայ ազատագրական շարժման ու պայքարի ճանապարհին: «Վասպուրականի հայոց թագավորության միջոցով հայ պետականության վերականգնման փաստը,- գրում է ճանաչված պատմաբան Մ. Զուլալյանը,- ինքնին մեծ հետաքրքրություն է առաջացնում հետազոտողների մոտ ու վկայում հայ ժողովրդի ազատության ձգտելու անսասան կամքը»[14]: Դարձյալ նույն առնչությամբ Ա. Հովհաննիսյանի ստացած տպավորությամբ՝ «հայ թագավորական իշխանության գաղափարը **նույնանում** (ընդգծումը հեղինակինն է՝ Ա.Հ.) էր կաթողիկոսական իշխանության հետ»[15]: Այնպես որ՝ Աղթամարի Զաքարիա կաթողիկոսի և նրա հաջորդների կաթողիկոսական հոգևոր իշխանությունն իր մեջ ներառում էր նաև Վասպուրականի աշխարհիկ իշխանությունը: Այլ խոսքով, նշված դարաշրջանում քիչ չեն եղել դեպքերը, երբ եկեղեցական իշխանության գավազանին միացվել է նաև քաղաքական իշխանությանը ցուպը:

Ընդհանրապես, հարկ է նկատել, որ **հոգևոր** և **աշխարհիկ** իշխանությունների զուգակցումը հասկանալի և ընկալելի է համարվել Արևել-

---

[12] **Ղազար Ջահկեցի,** *Գիրք նորաբոյս որ կոչի Երգարան,* Կ. Պոլիս, 1737, էջ 114:
[13] **Հովհաննիսյան Ա.,** *Դրվագներ...,* գ. 1, էջ 448–453:
[14] **Զուլալյան Մ.,** *նշվ. աշխ.,* էջ 338:
[15] **Հովհաննիսյան Ա.,** *Դրվագներ...,* գ. 1, էջ 452:

քի, և ոչ միայն, երկրներում այն իմաստով, որ ասենք, օրինակ, թե՛ Պարսկաստանում, թե՛ Թուրքիայում ու տարածաշրջանի այլ երկրներում շահը կամ սուլթանը համարվել են և՛ աշխարհիկ, և՛ միաժամանակ հոգևոր առաջնորդ միապետներ: Այս իմաստով, տեղին է նկատել պատմաբան Վրեժ Վարդանյանը, որ մահմեդական տիրակալության պայմաններում հայ հոգևոր-եկեղեցական համակարգում կրոնական և աշխարհիկ իշխանության իրավունքները հաճախ հանդես են եկել միահյուսված, ինչը որ չէր հակասում Ղուրանի ոգուն ու շարիաթի օրենքներին[16]: Եվ այդ հանգամանքը, իր հերթին, հնարավորություն է տվել հայ եկեղեցուն, նրա հոգևոր առաջնորդին մահմեդական տիրակալության շրջանակներում դառնալ հայ ժողովրդի, մի տեսակ, հոգևոր և աշխարհիկ տերուիշխան, նաև հայ աշխարհիկ հողատերերի (ավատատերերի) կալվածքները վերածելով եկեղեցապատկան ընդարձակ կալվածքների: Ընդ որում, մահմեդական տիրապետության շրջանում Էջմիածնի Սբ. Աթոռը, Հայոց հայրապետն ու միաբանները ազատված են եղել հարկատվությունից: Շահական և սուլթանական հրովարտակներով (ֆերմաններով) նրանց տրվել են կալվածագրեր, զանազան գյուղերից մուլք (հողահարկ) հավաքելու իրավունք և այլն: Եվ այդ արտոնությունը կոչվել է՝ մաղաֆություն[17]: Սա իրավաքաղաքական այն հիմքն էր, որով այն ժամանակներում հայոց եկեղեցին տնտեսապես ամրապնդվում ու զորեղանում էր:

* * *

Հայոց հին և միջնադարյան համահայկական թագավորությունների անկումից և տևականորեն օտար նվաճողների գերիշխանության տակ ընկնելուց հետո հայ հասարակական-քաղաքական ու հոգևոր շրջանակները սկսում են ուղիներ որոնել Հայք-Հայաստան հայրենիքն ու հայ ժողովրդին ազատագրելու ուղղությամբ: Հայրենիքն ազատագրելու համար, ինչպես արդեն ասվել է, սեփական ուժերն ու ինքնապաշտպանական ռեսուրսները բավարար չլինելով, սկսած ուշ միջնա-

---

[16] Տե՛ս **Վարդանյան Վ.**, *Հասպուրականի Արծրունյաց թագավորությունը*, Եր., 1969, էջ 254:

[17] Տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Եր., 2003, էջ ԺԷ, 149 և 182:

դարից, հատկապես օսմանյան թուրքերի կողմից **1453 թ. Կ. Պոլսի** գրավումից, իսկ հետագայում՝ XVI–XVII դարերում, շուրջ դարուկես տևած թուրք-պարսկական արյունալի պատերազմի պայմաններում, ժամանակի ու հանգամանքների հրամայականով, հայ քաղաքական միտքը ավելի առարկայորեն սկսում է հայացքն ուղղել դեպի քրիստոնյա (կաթոլիկ) ու ավելի քաղաքակիրթ Արևմուտք՝ Հայաստանն ու հայ ժողովրդին ազատագրելու և, վերջին հաշվով, սեփական ինքնիշխանությունն ու անկախությունը վերականգնելու ակնկալիքով: Հայոց պետականությունների կորստից հետո հայ հոգևոր-եկեղեցական և աշխարհիկ գաղափարաքաղաքական շրջանակներում միշտ էլ վառ ու կենդանի է պահվել Հայաստանի ազատագրման ու նրա քաղաքական անկախության վերականգնման տեսլականը: Հասկանալի է, որ միջնադարում, հայոց ազատագրում ասելով, հասկացվել կամ նշանակել է՝ հայկական երբեմնի թագավորության վերականգնում:

Կասկածից վեր է, որ արևմտահայ հոգևորական և աշխարհիկ քաղաքական անհատ գործիչների խորքային (առաջնային) նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր: Եվ այդ ճանապարհին, Թուրքիայի դեմ պայքարում, երբեմն ազատագրական լեգենդի նմանվող նրանց առաջարկներով ձգտում են ունեցել իրենց պատկերացրած այդ պատերազմին տալ, մի տեսակ, կարծես, հերթական խաչակրաց արշավանքի կերպարանք, ինչն, իրոք, պարունակում էր քաղաքական ռոմանտիզմի տարրեր և հեռու էր իրատեսությունից: Պատմական ճշմարտությունն այն է, որ արևմտաեվրոպական որևէ երկրի, տվյալ դեպքում, օրինակ, հզոր համարվող Ֆրանսիային, հետաքրքրում էր ոչ այնքան հայ ժողովրդի ճակատագիրը, որքան խաղարկելով հայկական քարտը՝ Թուրքիայից ընդամենը առևտրատնտեսական բնույթի նոր կապիտուլյացիաներ կորզել: Ի հավելումն ասվածի, XVI դարում Արևմտյան Եվրոպայի պետությունների միջև, նաև միջպետական ու միջարքայատոհմերի մրցակցային պայքարով պայմանավորված, միասնություն չի եղել Թուրքիայի դեմ պայքարի և անգամ թուրքական վտանգը Եվրոպայից հեռացնելու խնդրում: «1535 թ. կնքված պայմանագրով,- գրում է ակադեմիկոս Մ. Զուլալյանը,- Ֆրանսիան Օսմանյան կայսրության դաշնակիցն էր Հաբսբուրգների դեմ մղված համատեղ պայքարում:

Ավստրիայի ու Գերմանիայի քաղաքներն ու գյուղերը սուլթանական բանակների կողմից հրի ու սրի էին ենթարկվում: Կաթոլիկ աշխարհի միջնաբերդն ամբողջությամբ կլանված էր լութերականության դեմ մղվող պայքարով»[18]:

Ահա, այսպիսի անբարենպաստ պայմաններում, սկսած XVI դարի կեսերից, հայերը սկսում են դիմել Արևմտյան Եվրոպայի պետություններին և դրանց հոգևոր Հռոմի պապական կենտրոնին՝ Հայաստանի ազատագրման հարցի շուրջ բանակցություններ վարելու: Եվ այդ գործընթացի սկիզբը կարելի է համարել XVI դարի կեսերը, և դրա գաղափարակիր այրերը եղել են հայ եկեղեցական-հոգևոր հայրերը: Եվ առաջիններից մեկը համարվում է Ամենայն Հայոց կաթողիկոս **Ստեփանոս Ե Սալմաստացին**: Նա 1547 թ. գումարում է մի գաղտնի ժողով՝ հոգևորականների և աշխարհականների մասնակցությամբ: Էջմիածնի խորհրդաժողովը որոշում է Արևմտյան Եվրոպա գործուղել մի պատվիրակություն նրա իսկ՝ կաթողիկոս Ստ. Սալմաստացու գլխավորությամբ: Վաստակաշատ պատմաբան Լեոն գտնում է, որ Ստ. Սալմաստացու գլխավորած դիվանագիտական առաքելությունը հնարավոր է եղել հայ առևտրական (**խոջայական**) կապիտալի ու, մասնավորապես, նրա արևելյան ճյուղի շնորհիվ, որը մտիկ ծանոթություն ու կապեր էր հաստատել Վենետիկում[19]: Պրոֆ. Վ. Բայբուրդյանը ևս գտնում է, որ խորհրդաժողովի գումարման հարցում նշանակալի է եղել հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների դերակատարությունը, և չի կարելի այն վերագրել միայն հայկական կղերին[20]:

Օգնություն խնդրելու քաղաքական ակնկալությամբ՝ 1547 թ. կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը մեկնում է Կ. Պոլիս, այնուհետև լինում է Վենետիկում (Վենետիկյան Հանրապետություն), ապա անցնում Հռոմ: Պարզվում է, որ Սալմաստացի կաթողիկոսի առաքելության նպատակը եղել է ոչ այնքան լատին եկեղեցու հետ ունեցած կրոնադավանական բնույթի տարաձայնությունները հարթելու, երկու

---

[18] **Զուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 339:

[19] **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 116:

[20] Տե՛ս **Բայբուրդեան Վ.**, *Համաշխարհային առեւտուր եւ իրանահայութիւնը XVII դարում*, Թեհրան, 1996, էջ 28:

եկեղեցիները միավորելու նպատակ, ինչպես որ նկատում է հայ եկեղեցու խորագիտակ պատմաբան **Մ. Չամչյանը** (1738–1823 թթ.)[21], որքան քաղաքական բնույթի, Հայաստանի վիճակի բարվոքման միտումներ ու ծրագրեր, այլ խոսքով՝ հայ ժողովրդի ազատագրության խնդիր: «Շատ ծրագիրներ ուներ նա իր մտքում,- կարդում ենք ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի մենագրությունում բերված մի քաղվածքից,- որոնք զուրկ չէին լուրջ իմաստից, բայց հանգամանքները խանգարում էին դրանց իրականացմանը»[22]: Դրանք, անշուշտ, առաջին հերթին թուրքական բռնալուծը թոթափելու և հայրենիքը ազատագրելու տեսլականներն էին:

1547–1549 թթ. Վենետիկում և Հռոմում դեգերող Սալմաստացի կաթողիկոսը 27 եպիսկոպոսների անունից պատրաստակամություն է հայտնել ընդունելու հռոմեական (կաթոլիկ) եկեղեցու հավատքը[23]: Դարձյալ ազատագրական մղումներով տարված՝ նա 1550 թ. այցելել է գերմանական Հաբսբուրգյան կայսր Կարլ V-ին[24]: Բայց ժամանակի ու հանգամանքների մեջ հասկանալ կարելի է Ստ. Սալմաստացի կաթողիկոսի քաղաքական մտադրությունների նյութականացման անիրատեսությունը: Հաբսբուրգյան կայսրին այցելելուց հետո Հայոց հայրապետը անցնում է Լեհաստան ու Ռուսաստան (Մոսկվա) և հաջորդ տարում՝ 1551-ին, վերադառնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղ և շարունակում է գահակալությունը ևս մի քանի տարի[25]:

Սալմաստացի կաթողիկոսի մահից հետո Արևմուտքի հետ վարվող բանակցությունները դադար չառան: Ազատագրական տեսիլներով տարված, Լեոյի խոսքերով ասած՝ «հայ կղերական դիվանագիտության 2-րդ քայլը տեղի է ունենում 15 տարի անց՝ 1562 թ.»[26]: Այդ միջոցառման կազմակերպման ճանաչված ու գնահատելի դեմքը եղավ նախորդ կաթողիկոսի ազատաբաղձ գաղափարների շարունակող և նրա գահաթո-

---

[21] Տե՛ս **Չամչեան Մ.**, *Պատմութիւն հայոց*, հ. 3, Վենետիկ, 1786, էջ 518:
[22] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 30:
[23] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Բերդայեղ Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 85:
[24] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 30:
[25] Տե՛ս **Չամչեան Մ.**, *Պատմութիւն հայոց*, հ. 3, էջ 518:
[26] **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 117:

ոի հաջորդ **Միքայել Ա Սեբաստացի** կաթողիկոսը, որն իր հոգևոր բնույթի առաքելությանը ևս փորձել է տալ նաև քաղաքական իմաստ:

Միք. Սեբաստացի կաթողիկոսը, վրդովված Արարատի երկրի հանդեպ օտարի տարատեսակ հարստահարություններից, Ս. Էջմիածնից մեկնում է իր ծննդավայր Սեբաստիա: Նա իր հայրենի քաղաքում, մի խումբ արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, վարդապետների ու քահանաների մասնակցությամբ, 1562 թ. գումարել է տալիս գաղտնի խորհրդաժողով՝ Սեբաստիայի ժողովը: Դրանում, Հայաստանի վիճակը բարվոքելու մտադրությամբ, լայն լիազորություններով, Հռոմի Պիոս Դ պապին հասցեագրված երկու զորավոր գրություններով՝ վերստին հաստատելու ու նորոգելու սբ. Տրդատի և սբ. Գ. Լուսավորչի ժամանակներից հայ և հռոմեական (լատին) եկեղեցիների միջև արդեն մեզ հայտնի բարեկամության սբ. Գ. Լուսավորչի «Դաշանց թուղթը», ինչպես նաև՝ «**պարզելու հայերի ազատագրման հնարավոր հեռանկարները**»,[27] այս անգամ կաթողիկոսի փոխարեն որոշ ձգձգումներից հետո Արևմուտք է գործուղվում մի պատվիրակություն (դեսպանություն) ազնվական ծագում ունեցող, նշանավոր տպագրիչ, պատմագիր Մ. Չամչյանի բնորոշմամբ՝ «ուշիմ և հավատարիմ» **Աբգար** դպիր **Թոխատեցու (Եվդոկացի)** գլխավորությամբ[28]: Պարզվում է, որ մինչ այդ, դեռ տարիներ առաջ Աբգարը կաթոլիկ վարդապետություն սովորելու համար Հռոմ գնալու (ուխտագնացության) մտադրություն է ունեցել, սակայն նրա որդու մահվան պատճառով ուշանում է նրա մեկնումը, որը զուգադիպությամբ համընկնում է Միք. կաթողիկոսի խնդրանքին՝ իր անունից Հռոմ մեկնելու և դրանով կատարելու և՛ կաթողիկոսի հանձնարարությունը, և՛ իր անձնական ուխտը[29]:

Հռոմ մեկնող պատվիրակության կազմում եղել են նաև նրա Սուլթան (Սուլթանշահ) անունով որդին, ինչպես և Ալեքսանդր անունով մի քահանա: Տեղեկություն կա, որ պատվիրակության հետ դրվել է մյուռոն, ոսկե խաչ, օրհնված մատանի և Թեոդորոս վկայի նշխարները՝

---

[27] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 41:

[28] **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թ.)*, հ. 3, գ. 6, Եր., 1984, էջ 519:

[29] «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1912, թիվ 7 (հուլիս), էջ 387:

«իբրև ընծա նուիրելու առ նորին Սրբութեան»[30]: Բանագնաց Ա. Թոխատեցին համարվել է ոչ պատահական անձ, այլ վաղեմի «Կիլիկիո Ռուբինյան թագավորաց ցեղեն մի շառավիղ»[31]: Այս իմաստով, կարելի է դարձյալ նկատել, որ հայ ազատագրական միտքը փորձել է իրավական ակունքներ փնտրել հայոց արքայատոհմերի մեջ, որպեսզի դրանցում ժառանգորդության ու հոգևոր կապի հիմքեր գտնի և իբրև իրավահաջորդ՝ Հայոց գահին համապատասխան բաղձալի հավակնորդ թեկնածու առաջադրի:

Ինչևէ, Աբգար Թոխատեցու գլխավորած պատվիրակությունը Կիպրոսից նավով մեկնում է Հռոմ: Հայոց կաթողիկոսը, սբ. Քահանայապետ Պիոս Դ-ին ուղղված երկու թղթով (նամակով), մեկը՝ «հպատակության վերաբերյալ ընծայագրով», իսկ մյուսը, մոտավորապես հետևյալ հակիրճ բովանդակությամբ դիմում էր՝ ուղղված պապին, խնդրելով «զի հաստատեսչիք և նորոգեսչիք զկոնդակն զայն, զոր երբեմն ամենաերջանիկն և բարեյիշատակն Սեղբեստրոս պապ և սուրբն Կոնսատանտինոս կայսեր ետ արքային մերում՝ Տրդատայ և Սրբոյն Գրիգորի առաջնոյ պատրիարգի և կաթուղիկոսի մերոյ. և աղաչեմք՝ հաստատել զնոյն, և առ մեզ յուղարկել, նորոգելով զվաղեմին զայն բարեկամութիւն ի մէջ մեր. որպես զի եղիցի մի հօտ և մի հովիւ. որով և ընդ հուպիցէ մեզ ակն ունիլ **ազատութիւն ի գերութենէ** աստի ձերովդ սատարութեամբ»[32]: Բանասեր Գ. Գալամքերյանը, «Հանդես ամսօրեա»-ում զետեղելով կաթողիկոսի կողմից Աբգարին հանձնած միէջանոց նամակը, այն սկսվում է հետևյալ արտահայտությամբ՝ «**Մենք Հայքս, որ գերութեան մէջ ենք** ...»[33]: Որոշ ձգձգումներից հետո Աբգար դպիրը արժանանում է Պիոս Դ պապի սիրալիր ընդունելությանը, ծանոթանում է Միքայել կաթողիկոսի գրություններին և գոհունակությամբ ընդունում ընծաները: Տեղեկություն կա նաև, որ Պիոս Դ-ն Հռոմում գտնվող հայերին շնորհել է մի եկեղեցի՝ իբրև հյուրանոց, մի ժամատուն (մատուռ)՝

---

[30] «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1906, թիվ 11 (նոյեմբեր), էջ 321:
[31] «Բազմավէպ», Վենետիկ, 1865, էջ 217:
[32] **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թ.)*, հ. 3, գ. 6, էջ 520:
[33] «Հանդէս ամսօրեա», Վիեննա, 1912, թիվ 7 (հուլիս), էջ 388:

իրենց գույքով, ինչպես նաև տեխնիկական հնարավորություն Աբգար դպիրին՝ հայկական տառեր պատրաստելու համար[34]:

Մ. Սեբաստացի կաթողիկոսը, տևական ժամանակ Աբգար դպիրից տեղեկություն չստանալով, Սեբաստիայից վերադառնում է Մայր աթոռ Սբ. Էջմիածին և հաջորդ տարի՝ 1563 թ.ապրիլին, Էջմիածնից Հռոմ նամակատարի միջոցով Պիոս 4-րդ պապին է հղել դարձյալ եպիսկոպոսների հավանությանը արժանացած, նույնաբովանդակ մեկ այլ նամակ, որի տեքստը եղել է գաղտնագիր, և ընթեռնել կարող էր միայն Աբգար դպիրը: Ամենայն Հայոց կաթողիկոսի նամակներից և դպիր Աբգար Թոխատեցու վարած բանակցությունների առարկայական հետևություններից մեկն այն կարելի է համարել, որ հայ հոգևոր բարձր շրջանները հանուն հայոց երկրի ու ժողովրդի ազատագրության պատրաստ են եղել գնալու անգամ դավանական զիջման՝ **միանալ կաթոլիկ եկեղեցուն**:

Ավելի ուշ՝ 1565 թ., Աբգար դպիրը Հռոմում երեք քննիչ պաշտոնյաների առաջ տրված բացատրության ժամանակ հայտնել է, որ կաթողիկոսն իր և բովանդակ հայ ազգի անունից իրեն հատուկ հանձնարարական էր տվել՝ «մատուցանեմ հպատակութիւն նորին Սրբութեան (Հռոմի պապին – Ա.Հ.)»[35]: Բայց, մեր կարծիքով, հազիվ թե կարելի է հավատ տածել արվող նման առաջարկի անկեղծությանը: Նույն կերպ էլ անիրատեսական ու անիրագործելի կարելի է համարել՝ հանուն դավանական զոհաբերության, Հռոմի պապի կամ Արևմուտքի երկրների օգնությամբ հասնելու Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրությանը:

Դառնալով **Աբգար Թոխատեցու** գործունեության քննությանն ու պատմագիտական գնահատականին, հարկ է նշել, որ 1564 թ. Հռոմում Պիոս 4-րդ պապի հետ իր վարած բանակցությունների ժամանակ հայ եկեղեցու դավանական հարցերի շուրջ հարցմանը առաքելության ղեկավար Աբգար դպիրը, իբր չունենալով որևէ լիազորություն, շեղում է կատարել հայադավան եկեղեցու դիրքերից դեպի կաթոլիկություն: Եվ դա նա կատարել է իբրև **անձնական նախաձեռնությամբ**: Այս կա-

---

[34] «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1906, թիվ 11 (նոյեմբեր), էջ 322:
[35] Նույն տեղում, 1912, թիվ 7 (հուլիս), էջ 387:

պակցությամբ դժվար է համամիտ լինել ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի այն դիտարկմանը, թե Աբգար Թոխատեցին «դավանական որոշ շեղումներ է կատարել հայադավան եկեղեցու դիրքերից»[36]: Այնինչ, հիշատակածս նյութերից դժվար չէ նկատել, որ այդ «նախաձեռնությունը» գալիս էր Ամենայն Հայոց կաթողիկոսից և նրա շրջապատի բարձր հոգևորականության կողմից, ինչը երևում է Հռոմի պապին ուղղված Մ. Սեբաստացու նամակ-գրություններից: Սակայն մյուս կողմից էլ՝ այլ բան է հայ եկեղեցու կաթոլիկ եկեղեցուն միավորվելու վերաբերյալ արտահայտած անկեղծության հարցը, որն, անշուշտ, վիճարկելի է, քանզի հազիվ թե Հայոց առաքելական (լուսավորչական) եկեղեցին, առանց քաղաքական որոշակի ձեռքբերումների, կգնար նման զոհողության:

Կարելի է հասկանալ, որ և՛ կաթողիկոսի, և՛ Ա. Թոխատեցու և այլոց կողմից «դավանափոխ» լինելու պայմանն ունեցել է քաղաքական ենթատեքստ, այն է՝ եթե Հռոմը ստանձնելու լինի հայերին ազատագրելու պարտավորությունը, նրանք պատրաստ կլինեն, ըստ ամենայնի, ենթարկվել պապին: Սա նշանակում է, որ Աբգար Թոխատեցին, և ոչ միայն նա, իր առաքելությամբ պատրաստ է եղել հայ եկեղեցու անկախությունը զոհաբերել Հայրենիքի ազատությանը և անկախությանը: Հարկ ենք համարում ընթերցողին նկատել տալ, որ առհասարակ XVI–XVII դարերում դեպի Եվրոպա և Հռոմի պապ հայկական պատվիրակությունների նպատակը արտաքուստ համարվել է հռոմեական եկեղեցու հետ հայ **եկեղեցու վերամիավորումը**, սակայն խորքային առումով այն ունեցել է **քաղաքական ենթատեքստ**, այն է՝ հորդորել Պապին կամ նրա հոգևոր թևարկության ներքո գտնվող եվրոպական երկրների արքաներին՝ միջամտելու հայկական խնդրին և ձեռնամուխ լինելու «հայ քրիստոնյաների ազատագրման բարեպաշտ գործին»:

Դառնալով բուն դեպքերի հետագա զարգացման ընթացքին, նկատենք, որ հետախուզության, թե մատնության ճանապարհով այս ամենից հոտ առած թուրք իշխանությունները Պոլիս վերադառնալիս Ա. Թոխատեցուն կալանքի են ենթարկում: Բայց նախապես մշակված խորամանկ քայլով հայոց կողմին հաջողվում է նրան ազատել բանտար-

---

[36] **Հովհաննիսյան Ա.**, *Դիվագներ...*, գ. 2, էջ 42:

կությունից այն հիմնավորմամբ, որ ինքը Հռոմ և Վենետիկ էր մեկնել այնտեղից գրքի տպագրության համար արտոնագիր ստանալու նպատակով: Եվ իրոք, այդ արտոնության հիման վրա 1567 թ. Կ. Պոլսում հիմնվեց հայ տպարան և սկսեցին լույս ընծայվել հայերեն տպագիր գրքեր, որոնց սկիզբը արդեն դրվել էր Վենետիկում: Դեռ 1565 թ. Աբգարին հաջողվում է Վենետիկում լույս ընծայել ութաձալ «Սաղմոս»[37]: Հետագայում հրատարակվեցին՝ «Պարզատումար», «Տօնացոյց», «Տաղարան» և այլ գրքեր[38]:

Այս ամենը ցույց է տալիս, թե որքան ծանր ու վտանգավոր է եղել այն մութ ժամանակներում ազատության մասին անգամ մտածելը, էլ չենք խոսում գործելու մասին: Արդեն հանրաճանաչ գրահրատարակիչ Աբգար Թոխատեցին մահացել է 1572 թ.՝ անավարտ թողնելով քաղաքական ու հրատարակչական շատ գործեր: Պետք է նկատել, որ հայ ազատագրական բաղձանքներում սկսում է առաջնային կարևորություն ստանալ նաև **կրթա-լուսավորական գործը**, այդ իսկ պատճառով էլ սկսվում է ավելի մեծ ուշադրություն դարձվել տպագրական-հրատարակչական գործին: Դրանում, կրոնական բնույթի գրքերից զատ, ավելի ու ավելի մեծ տեղ է սկսում հատկացվել աշխարհիկ, քաղաքական-ազատագրական բնույթի երկերին[39]:

Հավելենք, որ հետագայում Աբգար դպիր Թոխատեցու գործը փորձել է շարունակել նրա որդի Սուլթանշահը, որը Հռոմում հոգևոր հայրերի կողմից ստանում է Մարկ Անտոն պատվանունը: Նա գործել է մինչև 17-րդ դարի առաջին երկու տասնամյակները և իր հոր պես հոգևոր և քաղաքական բնույթի հայանվեր ձեռնարկներ է կատարել: Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի գնահատմամբ՝ «Ինչպես Աբգարի, այնպես և նրա որդու քաղաքական ջանքերը չունեցան գործնական արդյունք: Այնուամենայնիվ, հայր և որդի թոխատեցիների ջանքերը նշանակալից և հատկանշական են հայ «ազատագրական մտքի պատմության համար»[40]: Ի հավելումն վերը նշվածի՝ պատմագետ գիտնականը

---

[37] «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1906, թիվ 11 (նոյեմբեր), էջ 325:
[38] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 2, գ. 2, էջ 639:
[39] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 4, Եր., 1972, էջ 121:
[40] **Հովհաննիսյան Ա.**, *Դիվագներ...*, գ. 2, էջ 50:

միաժամանակ ընդգծում է. «**Աբգարի առաքելությունը ոգեշնչված էր ոչ միայն իրանական, այլև թուրքական լուծը թոթափելու գաղափարով** (ընդգծումը հեղինակինն է՝ Ա.Հ.)[41]:

Հայաստանի ազատագրության մտայնությամբ տարված՝ հաջորդ հոգևոր գործիչը Սսի (Կիլիկիայի) կաթողիկոս **Խաչատուր Գաղաթացին** էր (1657–1674): Նա 1662 թ. իր գրություն-նամակով չէր վարանել Հռոմի պապի գերիշխանությունը «ճանաչելու»[42]: Հայ եկեղեցու պատմության հետազոտողներից մեկի հավաստմամբ՝ Սսի աթոռին բազմած մի շարք կաթողիկոսներ ընդհանրապես հակված են եղել ընդունելու կաթոլիկություն[43]: Եվ այս հանգամանքը, անշուշտ, դեր է խաղացել, որ հայոց բարձրագույն կաթողիկոսական աթոռը դեռ 1441 թ. փոխադրվեց Արարատյան երկրի սիրտը համարվող Մայր աթոռ Ս. Էջմիածին:

Փաստենք նաև, որ լատինասեր հայացքներ (դիրքորոշում) է ունեցել նաև Երուսաղեմի Հայոց պատրիարք և ապա Սսի կաթողիկոս **Եղիազար Այնթափցին** (1664–1681), որը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի 1680 թ. մահից հետո, որոշ ձգձգումներով, 1682 թ. ստանձնում և օծվում է արդեն Ամենայն հայոց կաթողիկոս: Ճանաչված հայագետ ու աղբյուրագետ Հ. Անասյանի կարծիքով՝ նրա կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի ստանձնումը, իր լատինասեր հայացքներով հանդերձ, «խոշոր նվաճում էր արևմտահայ ազատագրական դատի համար»[44]: Եվ նա դա դիտարկում է որպես քայլ Սիսի և Էջմիածնի հոգևոր միածույլ իշխանությունը հայ ազատագրական ոխտին ծառայեցնելու գործում:

Այս ամենով հանդերձ, ճանաչված պատմաբան Մ. Զուլալյանը համարձակություն է վերցնում իր վրա զարգացնելու այն միտքը, թե «հայ եկեղեցու գործիչների **մեծագույն մասը**, որոնք հավակնում էին գլխավորել հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հանդես էին գալիս կաթոլիկ պրոպագանդի դեմ ու **մերժում էին Եվրոպայից օգնություն**

---

[41] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 51:

[42] **Չամչեան Մ.**, *Պատմութիւն հայոց*, հ. 3, էջ 698:

[43] Տե՛ս **Պալճեան Ա.**, *Պատմութիւն կաթուղիկէ վարդապետութեան ի Հայս*, Վիեննա, 1878, էջ 49:

[44] **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 272:

**ստանալու գաղափարը»**[45]: Այս առնչությամբ, եթե կարելի է համամիտ լինել վերը ասվածի այն մասին, որ հայ եկեղեցին անհաշտ ու հետևողականորեն պայքարել է հայությանը հոգևոր առումով ուծացնող կաթոլիկ այլ քարոզչությունների դեմ, սակայն, մեր կարծիքով, դժվար է համամիտ լինել, թե նա դեմ է եղել Եվրոպայից օգնություն ստանալու գաղափարին: Նման միտք խորհրդային պատմագրության մեջ զարգացվել է, հավանաբար, ցույց տալու և ընդգծելու, թե իբրև, ի սկզբանե, հայերի կողմնորոշումը (հակումը) ուղղված է եղել դեպի Ռուսաստան և նրա օգնությամբ ազատագրվելը:

XVII դարի երկրորդ կեսին, հոգևոր-եկեղեցական գործիչներից զատ, հիշարժան է հայ **խոջաների**, մասնավորապես Լուսինյանների՝ Սպահանի (Նոր Ջուղայի) դերակատարությունը: «Խոջայական կապիտալ»-ի հեղինակ, վաստակաշատ պատմաբան Լեոն պարսկերեն «**խոջա**» (թարգմանաբար՝ «տեր», «իշխան», կամ պարզապես «հարուստ») անվան տակ հասկացնում էր XVI–XIX դարերի առևտրավաշխառուական «հայ խոշոր բուրժուազիային»[46]: Արևելքի շուկաները Արևմուտքի հետ կապող միջազգային տարանցիկ առևտրի կարևորագույն հանգույցներից էր Արաքսի ափի ապառաժոտ բարձունքի լանջին տեղակայված Ջուղա գյուղաքաղաքը (ներկայիս Ջուլֆան), իսկ պարսից շահ Աբբաս 1-ին Մեծի (1587–1629 թթ.) կազմակերպած բռնագաղթից հետո նման կենտրոնատեղի է դառնում պարսից մայրաքաղաք, Սպահանի մոտ հիմնված հայկական Նոր Ջուղա քաղաքը: Հանրահայտ է XVII դարասկզբին Շահ Աբբաս 1-ի «այրված ու ամայացած հողերի» մարտավարությամբ իրականացրած մի քանի հարյուր հազար (300.000) արևմտահայերի և արևելահայերի տեղահանումն ու բնակեցումը Պարսկաստանում, այդ թվում նորահիմն Նոր Ջուղայում[47]: Կ. Եզյանի հայտնած տվյալներով, Սեֆյան Պարսկաստանի բարեփոխիչ Շահ Աբաս 1-ը Իրան էր գաղթեցրել մինչև 60 հազար ընտանիք, բայց նրան-

---

[45] **Զուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 343:

[46] **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 56, նաև՝ **Բայբուրդյան Վ.**, *նշվ. աշխ.*, էջ 21:

[47] Տե՛ս **Դավրիժեցի Ա.**, *Պատմութիւն*, *Վաղարշապատ*, 1896, էջ 52–53, նաև՝ **Հակոբյան Ա.**, *Հայոց պատմություն*, էջ 147:

ցից ոչ բոլորն են տեղ հասել[48]: Վաստակաշատ պատմագիր Միք. Չամչյանի նկարագրությամբ՝ Շահ Աբբասը Հին Ջուղայից և հարակից շրջաններից տարհանել և Սպահանի մոտ՝ Նոր Ջուղա կոչված վայրում, բնակեցնել է տվել «երկոտասան հազար տունք»[49]: Շահ Աբբասն անգամ մտածել էր «Էջմիածնի սրբությունները տեղափոխել իր կայսրության մայրաքաղաք, որպեսզի դրանով այդտեղ բնակություն հաստատած հայ գաղթականներն ավելի սերտ կապի մեջ լինեն իրենց նոր հայրենիքի հետ»[50]:

Հարկ է նշել, որ շուրջ դարուկես տևած և հիմնականում Հայաստանի տարածքում ընթացող թուրք-պարսկական արյունալի պատերազմների հետևանքով ոչ միայն ամայացան հայրենի տարածքները, այլև հայ ազգաբնակչության մի մասը ենթարկվեց սովի, համաճարակի ու կողոպուտ-սպանությունների, իսկ մնացյալ մասը՝ ստեղծված անելանելի պայմաններում հարկադրված դիմեց տարագնացության իր հայրենի հողերից, կամ էլ՝ պարզապես հարկադրական բռնագաղթի, ինչպիսին Շահ Աբբասի իրականացրածն էր: Բացի պատմագիտական և նույնիսկ գեղարվեստական գրականության մեջ ավելի հաճախակի հիշատակվող Շահ Աբբաս I-ի իրականացրած հայության հարկադրական բռնագաղթերի, տեղին է արձանագրել, որ դրանից առաջ և հետո էլ շարունակաբար տեղի են ունեցել հայության զանգվածային գերեվարություններ ու բռնագաղթեցումներ: Այսպես, մի հիշատակարանի տվյալներով Հայր Ալիշանը փոխանցում է, որ 1599–1600 թթ. սաստիկ երաշտի շրջանում 200 հազար զորքով հարձակման ելած օսմանցի թուրքերը Երևանի (Արեւանայ) գավառից «գերեցին ու տարին 60 հազար այր և կին» [51]: Հետո շարունակում է, որ այդ նույն ժամանակ Կովկասյան լեռներով Այսրկովկաս է ներթափանցել Ղրիմի խանը ու գերի տարել 160 հազար «այր ու կին, ծեր ու տղայք» և «հաւու պէս» վաճառել Եգիպտոս (Մսըր) երկրում: Իսկ վերջում ամփոփում է՝ «Եւ ցրուեցաւ

---

[48] **Эзов Г.**, *նշվ. աշխ.*, էջ V.

[49] **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 6, էջ 553:

[50] **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 161:

[51] Տե՛ս **Ղ. վրդ. Ալիշան**, *Հայապատում (պատմիչք եւ պատմութիւնք Հայոց)*, Վենետիկ, 1901, էջ 599:

ազգս Հայոց եւ նուազաց ամենայն բարի»[52]: Եվ սրանք հայության իր հայրենիքից հայազրկման ոչ ամբողջական փաստական տվյալներ են, որոնք վկայում են այն մասին, թե ինչպես Հայոց պետականությունների անկումից հետո, արտաքին ու ներքին աննպաստ հանգամանքներով պայմանավորված, տեղի ունեցավ բնիկ հայ ազգաբնակչության իր հայրենիքում ժողովրդավարական պատկերի կտրուկ անկում:

Այնինչ, այդ գործընթացին հակառակ ու դրա փոխարեն, Հայաստանի ինչպես արևելահայ, նույնպես և արևմտահայ հատվածներում տարերայնորեն, թե քաղաքական որոշակի հաշվարկներով ժամանակի ընթացքում բնակություն հաստատեցին թուրք, թաթար, թուրքմեն, քուրդ, կարափափախ և այլ քոչվոր մուսուլմանական տարրեր ու այդպիսով ժամանակի ընթացում տեղի ունեցավ հայոց բնիկ երկրամասերի տարաբնակեցում ու յուրացում օտար ու, նույնիսկ, թշնամական տարրերով և դրանով Հայաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխություն՝ ի վնաս հայ ազգաբնակչության: Սրանք պատմական անառարկելի փաստեր են, որոնք գալիս են ցուցանելու, հակազդելու և հերքելու ներկայիս թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից շահարկվող կեղծ-քարոզչական բնույթի անհող պնդումները, թե, օրինակ, Արարատյան աշխարհում (երկրամասում) իբրև թե հայեր չեն եղել և, որ XIX դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների արդյունքով միայն իբր հայերը հայտնվեցին Արևելյան Հայաստանում: Մեր ժամանակներում, հայ-ադրբեջանական լարված միջպետական հարաբերությունների պայմաններում, թուրք-ադրբեջանական տանդեմը, հետապնդելով նվաճողական (ծավալապաշտական) հեռագնա նպատակներ, բացի ռազմականից, իրենց պանթյուրքական ծրագրերի իրականացման ճանապարհին աղավաղելով ու կեղծելով կամ պարզապես շրջանցելով պատմական անցյալի փաստերն ու իրողությունները, կեղծ քարոզչական ամենատարբեր միջոցներով դիմում են ամեն տեսակ կեղծիքների: Այդպիսի փորձերից է, օրինակ, նրանց կողմից ներկայումս լայն տարածում ստացած մտացածին այն կեղծիքը, երբ Արևելյան Հայաստանը փորձում են ներկայացնել իբրև «**Արևմտ-**

---

[52] **Ղ. վրդ. Ալիշան,** *Հայապատում (պատմիչք եւ պատմութիւնք Հայոց),* էջ 599:

**յան Ադրբեջան»**, իսկ Երևանը, ոչ ավել, ոչ պակաս, ադրբեջանական քաղաք: Եվ այդ ամենն այն դեպքում, երբ թյուրք-թաթարական (օղուզական) տարրը Միջին Ասիայից այս տարածաշրջանում է հայտնվել միջնադարում՝ (XI-XIII դդ.), իսկ մինչև 1918 թ. «Ադրբեջան» կոչվող պետություն և «ադրբեջանցի» անվանումով էթնիկ միավոր պատմաժողովրդագրական գրականության մեջ առհասարակ գոյություն չի ունեցել և այլն[53]: Այս ամենը ցույց է տալիս պատմական անցյալի և ներկայի միջև, քաղաքական շահերով պայմանավորված, կապի մասին, ինչը վկայում է պատմության արդիական լինելու հանգամանքը:

* * *

Վերստին անդրադառնալով հայ առևտրական կապիտալի գործունեությանը՝ փաստենք, որ հայ խոջայական կապիտալի գործուն առևտրական ուղիներից էին արևելքում՝ Հնդկաստանը, արևմուտքում՝ Զմյուռնիան, Վենետիկը, հյուսիսում՝ Ռուսաստանը և այլն: Հարկ է փաստել, որ ժամանակի ընթացքում այդ կապիտալի ներկայացուցիչները դառնում են կազմակերպված հասարակական ուժ: Հենց Նոր Ջուղայի «Հայկական առևտրական ընկերությունը»՝ Լեոյի ակնարկած խոջայական կապիտալը, ռուսական ցարերի հետ առևտրատնտեսական արտոնյալ պայմանագրեր է կնքել, ինչպիսին հայտնի է ընկերության ներկայացուցիչներ **Գրիգոր Լուսիկենցի (Լուսիկով)** և Ստ. Ռոմադանեցու՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարի հետ **1667 թ.** մայիսի 31-ին կնքված պայմանագիրը: Լեոյի դիտարկումով՝ այն, առևտրա-տնտեսական բնույթ ունենալուց զատ, ունեցել է նաև քաղաքական ենթատեքստ, այն է՝ հայ ժողովրդի ազատագրում[54]: Հայտնի է, որ մինչ այդ՝ 1666 թ., հայտնի հայ նկարիչ Բոգդան Սուլթանովի հետ Մոսկվա էր ժամանել Նոր Ջուղայի «Հայկական առևտրական ընկերության» ղեկավար Գր. Լուսիկենցը, որը բանակցելով դեսպանատան պրիկազի հետ՝ իրանական ապրանքների տարանցիկ առևտրի իրավունքի ձեռք բերման համար և դրա

---

[53] Այդ մասին տե՛ս **Հակոբեան Ա.**, *Ադրբեջանի Հանրապետության անվանակոչման հարցի շուրջ* («Դրոշակ», Եր., 2022, թիվ 7 (1665), հուլիս, էջ 28–32):

[54] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 482 և 485, նաև՝ **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 92:

արդյունքում էլ՝ 1667 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարի հետ կնքվել հատուկ պայմանագիր, որով հայ վաճառականներին արտոնվում էր բավականին ցածր՝ 5 տոկոս մաքսատուրքով իրանական ապրանքների՝ հում մետաքսի, կերպասի և այլն, արտահանումը Ռուսաստան և ապա նրա վրայով՝ տարանցումը արևմտաեվրոպական երկրներ: Բայց, պետք է նշել, որ այդ շրջանում, Ստ. Ռազինի հայտնի գյուղացիական ապստամբության հետ կապված, եղել են որոշ խափանումներ[55]: Բացի այդ, ռուս ականավոր պատմաբան Ս. Սոլովյովը նշում է, որ իրանանպաստ կամ, կարելի է ասել, հայանպաստ այդ պայմանագրի դեմ բողոք են բարձրացրել ռուս մեծավաճառ առևտրականները՝ պատճառաբանելով, որ դրանով իրենք զրկվում են մեծավաճառ ապրանքների (տրանզիտի) շահույթից: Դրանից հետո ռուս արքունիքը որոշ սահմանափակումներ է դնում իրանական (ջուղայեցիների) ապրանքների տարանցիկ ազատ (տրանզիտ) առևտրի վրա[56]:

Գր. Լուսիկենցը երկրորդ անգամ 1671 թ. Մոսկվա է մեկնում դարձյալ Սպահանի (Նոր Ջուղայի) «Հայկական առևտրական ընկերության» հանձնարարությամբ: Այս անգամ, բանակցություններ վարելուց և առևտրական պայմանագիրը թարմացնելուց զատ, իբրև «քրիստոնյա հավատքի մարդ», նա դեսպանական պրիկազին հայտնել է, թե ինքն ունի բանավոր՝ **«ծածուկ արզ»** (գաղտնի ասելիք), որպեսզի իր խոսքը հայտնի չդառնա շահին և առիթ չտա, որ իրեն պատժեն: Պրոֆ. Վ. Բայբուրդյանը ևս կարծում է, որ «այդ գաղտնի ասելիքի տակ, ըստ ամենայնի, պետք է հասկանալ Հայաստանի ազատագրությանը վերաբերող խոսակցություն (բանավարություն)»[57]: Սակայն այս առնչությամբ Ա. Հովհաննիսյանը բավարար հիմնավոր չի համարում հայ-ռուսական հարաբերությունների պատմության ճանաչված մասնագետ Վ. Ոսկանյանի, կնշանակի նաև պրոֆ. Վ. Բայբուրդյանի այն պնդումը, թե Լուսի-

---

[55] **Հովհաննիսյան Ա.**, *Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1958, թիվ 1, էջ 79–80), նաև՝ **Բարխուդարյան Վլ.**, *Մոսկվայի և Պետերբուրգի հայ գաղութների պատմություն (XVIII դարի կես – XX դարի սկիզբ)*, Եր., 2010, էջ 30 և 39, նաև՝ **Բայբուրդյան Վ.**, *նշվ. աշխ.*, էջ 189–190:

[56] Տե՛ս **Соловьев С.М.**, *История России с древнейших времен*, 2-ое изд., т. 12, с. 273.

[57] **Բայբուրդյան Վ.**, *նշվ. աշխ.*, էջ 207:

կենցի գաղտնի բանավոր ասելիքը՝ «ծածուկ արզը», իբր վերաբերել է հայ ժողովրդի քաղաքական ազատագրության խնդրին[58]: Բայց կասկածից վեր է, որ հայ խոջայական կապիտալը, բացի զուտ առևտրական գործերից, հաճախակի, իհարկե ոչ բարձրաձայնելով, հետապնդել է նաև Հայաստանի ազատագրման քաղաքական նպատակներ:

Ինչևէ, արդեն Պետրոս 1-ին ցարի օրոք Պարսկաստանի հետ առևտուրն այնքան էր խորացել, իսկ այդ առևտրում մեծ տեսակարար կշիռ են ունեցել հայ խոջաները, որ 1711 թ. նա հատուկ նոր ուկազով (հրամանագրով) կարգադրություն է իջեցնում՝ Պարսկաստանի հետ ջոտլայեցիներին տրված Վոլգա-Կասպյան տարանցիկ առևտուրը վերանորոգել, բազմապատկել և որքան հնարավոր է խրախոսել ու հեշտացնել հայ առևտրականների ժամանումը[59]:

Այսպիսով, բերված փաստական տվյալներից դժվար չէ նկատել, որ ուշ միջնադարի ու նոր դարաշրջանի հայ ազատագրական մտքի ու շարժման պատմության մեջ նշանակալի է եղել հայ առևտրական (խոջայական) կապիտալի ներկայացուցիչների խաղացած դերը: Եվ կասկածից վեր է, որ հայ ժողովրդի պատմության մեջ խոջայական կապիտալի դերը չի սահմանափակվել լոկ առևտրով կամ, նույնիսկ, կրթամշակութային բարերարական գործունեությամբ, այլ նա հետապնդել է հեռագնա **քաղաքական նպատակներ՝ հայրենիքի ազատագրում**:

Մեկ այլ դրվագում, հայ ազատագրական շարժման ու պայքարի մտայնություններով են տարված եղել արևմտահայ մեծահարուստ խոջայության ներկայացուցիչներ, այդ թվում, օրինակ, 1660-ական թվականներին Փարիզում հայտնված խոջա **Մահտեսի Մուրադ (Շահմուրադ) Բաղիշեցին**: Նա մեկնել է Փարիզ և փորձել է համոզել Ֆրանսիայի Լյուդովիկոս 14-րդ թագավորին՝ գործուն պատերազմի դուրս գալ Թուրքիայի դեմ, թեև ընդհատումներով ընթանում էր թուրք-վենետիկյան (**Կանդիայի**) պատերազմը (1645–1669 թթ.), որին փորձ է արվել տալ Թուրքիայի դեմ ուղղված համաքրիստոնեական խաչակրաց մի

---

[58] **Հովհաննիսյան Ա.**, *Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1958, թիվ 1, էջ 102–103):

[59] Տե՛ս **Соловьев С.М.**, *История России с древнейших времен*, кн. 8, М., 1962, с. 353:

նոր արշավանքի տեսք: Մահտեսի Մուրադը վստահեցրել է, որ պատերազմի պարագայում հայերը, հույների հետ միասին, պատրաստ են ապստամբություն սկսել Օսմանյան Կայսրության մեջ, որ նրանց կմիանան նաև թուրքահպատակ մյուս քրիստոնյաները, իսկ ռուսներն (մոսկվացիները) ու լեհերը զինված միջամտությամբ կօժանդակեն այդ ձեռնարկին[60]: 1672 թ. Մահտեսի Շահմուրադը հայկական խնդրով կրկին դիմել է «Արև-Արքա» Լյուդովիկոս XIV-ին[61]: Դրանից մեկ տասնամյակ անց՝ 1683 թ. նման խնդրով մի փորձ էլ արել է Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք, կաթողիկոսի պատվիրակ, ծնունդով վանեցի, հայ ազատագրական շարժման գործուն դերակատարներից մեկը՝ **Հովհաննես վարդապետ Թութունջին**[62]: Ինքնին հասկանալի է, որ այդ ամենը դարձյալ պիտի ավարտվեր անարդյունք: Բայց բոլոր դեպքերում, իր դեգերումներով հանդերձ, գնահատելին հայրենիքի ազատագրության գաղափարի շրջանառումն է, որը հետագայում պիտի նոր զարգացումներ ստանար:

Մեր առջև ծառացած հիմնահարցի պարզաբանման առումով՝ հարկ է նշել, որ հայ խոջայական կապիտալը, տարածվելով ու արմատներ ձգելով Հնդկաստանում, Եվրոպայում, Ռուսաստանում և այլուր, դրա հետագա զարգացումները, ֆինանսատնտեսական վիթխարի կարողությունների ամբարումներից զատ, սկսում է, կամա թե ակամա, ազգային արմատներ ու նկարագիր ունեցող հայ մեծահարուստ հատվածի մոտ հետզհետե առաջ բերել քաղաքական նվիրական ներքին պահանջմունք, այն է՝ կապիտալը հայրենիքին ծառայեցնելու, ստրկացված հայրենիքի ազատագրման գաղափարը: Այս նախաձեռնությունն, անշուշտ, պետք է համարել ուսանելի փորձ ու դաս արդեն մեր ժամանակներում համազգային ու համապետական խնդիրների լուծման ծիրում:

Այսպիսով, հասկանալ կարելի է, որ կաթողիկոսներ Ս. Սալմաստացու, Միք. Սեբաստացու, դպիր Աբգար Թոխատեցու, Մահտեսի Մուրադի, նաև քահանա Հակոբ Համդեցու դեպի Եվրոպա քաղաքա-

---

[60] **Հովհաննիսյան Ա.**, *Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից*, էջ 179, նաև՝ **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 123 և 160:

[61] Տե՛ս նույն տեղում, էջ 159 և 165:

[62] Տե՛ս **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 178:

կան առաքելության փորձերը կարելի է համարել ուշ կամ զարգացած միջնադարում հայ ազատագրական մտքի ու շարժման նոր-նոր ի հայտ եկող առաջին դրսևորումները, որով փորձ էր արվում երկրի ու ժողովրդի փրկության ու ազատագրության համար ապավինել քրիստոնյա Արևմուտքին: Բայց այդ գաղափարը դեռևս չէր դարձել այնպիսի մի համազգային մտայնություն, որը պիտի ոտի հարթեր Հայաստանի ու հայ ժողովրդի վերջնական ազատագրության ու անկախ պետականության համար:

Հայաստանի ազատագրության գործում, հայ ազատագրական վաղեմի լեգենդի վրա կառուցված, Արևմուտքից օգնության ակնկալման տեսլականի կողքին արդեն XVII դարում, հայ ազգային ինքնագիտակցությունն արթնացնող առանձին գործիչներ, հուսալի դաշնակիցներ փնտրելուց զատ, սկսում են կարևորություն տալ ավելի հեռահար ազգային գաղափարախոսության մի նոր դրսևորման՝ մայրենի լեզվով **տպագրության**, ազգի **կրթական-լուսավորական** շարժման ծավալմանը, որը միջոց պիտի դառնար հաղորդակից լինելու ոչ միայն եվրոպական քաղաքակրթությանը, այլև իբրև դրա հետագա զարգացում, ժողովրդի ինքնագիտակցության վերածնության միջոցով վերջին հաշվով հասնելու հայրենիքի ազատագրման գաղափարի նյութականացմանը: Եվ այս գործում հսկայական է **Մխիթար վրդ. Սեբաստացու** (1676–1749 թթ.) կողմից 1701 թ. Կ. Պոլսում հիմնված Մխիթարյան միաբանությունը, 1717 թ. Վենետիկի Ծերակույտի հրովարտակով քաղաքին մերձակա Սբ. Ղազար կղզին շնորհվեց Մխիթարյան Միաբանությանը: Անուրանալի է Մխիթարյան Միաբանության խաղացած դերը: Լեոյի պատկերմամբ՝ «դա մի հիմնարկություն էր, որ լույս և գիտություն էր մատակարարում հայերին»[63]: Իսկ XIX դարի կեսերի նշանավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցի բնորոշմամբ՝ հայ գրականության պատմության **մի իսկական գիտական Ակադեմիա**[64]: Եվ դա բնավ չէր խանգարում, որ դավանական առումով նրա անդամները կաթոլիկներ էին: Դավանական խտրականությունը մի կողմ թողած, ազգային միա-

---

[63] **Լեո,** *Երկերի ժողովածու,* հ. 5, էջ 360:
[64] Տե՛ս **Լեո,** *Ստ. Նազարյանց, Երկերի ժողովածու,* հ. 4, Եր., 1987, էջ 49:

բանության, կրթության և լուսավորության, հատկապես հայագիտության հետագա զարգացման էին միտված Մխիթարյան միաբանության Վենետիկի, ապա Վիեննայի, Կ. Պոլսի, Զմյուռնիայի (Իզմիրի) և այլ ուսումնակրթական ու հրատարակչական օջախները: Հենց Մխիթար վրդ. Սեբաստացին է խոստովանել, որ չնայած ինքը «Հռոմի սուրբ եկեղեցու ուղղափառ հավատի դավանություն ունի», սակայն «սիրում է իր ազգը և աշխատում է նրա օգուտի համար»[65]: Այնպես որ այնքան էլ տեղին չէ, ինչպես անցյալում, նույնպես նաև մեր ժամանակներում հայ հանրության շրջանում դավանական այդ բաժանմանը մեծ կարևորություն տալը, որն, անշուշտ, վնաս է բերում համազգային բնույթի ու նշանակության խնդիրների լուծման գործին:

## *2. Հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների հարցը (հակաթոռության երևույթը)*

Հայաստանի ու հայ ժողովրդի պետականությունների ու ազատագրական շարժման ու պայքարի ճանապարհին պետք է արձանագրել դարեր շարունակ հայ հոգևոր և աշխարհիկ իշխանական հատվածների միջև ընթացող ներքին մրցակցային, երբեմն անհաշտ ու անհանդուրժող պայքարը, որն, անշուշտ, չէր կարող իր բացասական անդրադարձը չունենալ հայ ազատագրական մտքի ու պայքարի վրա: Այդ դիմակայությունները երբեմն ջլատում էին ներքին միասնությունը, ուժերի համախմբումը արտաքին սպառնալիքներին դիմակայելու, պետականության ու ժողովրդի անվտանգությունը ապահովելու և հայրենիքի ազատագրության սուրբ գործին նվիրվելուն ու ծառայելուն:

Պետության և եկեղեցու փոխհարաբերության հարցում պետք է ասել, որ ժամանակ առ ժամանակ պետականության չգոյության պայմաններում Հայ առաքելական եկեղեցին՝ Հայոց հայրապետի գլխավորությամբ, հարկ եղած դեպքում ստանձնել է նաև պետական-քաղաքա-

---

[65] **Լեո,** *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 361:

կան իշխանության իրավասություններ (գործառույթներ): Հիմնականում կարելի է համամիտ լինել արևելագետ, երջանկահիշատակ Պ. Չոբանյանի այն դրույթին, որ համազգային բնույթի խնդիրների լուծման գործում եկեղեցին ու պետությունը հանդես են եկել միասնաբար[66]: Բայց և միաժամանակ մեր պատմական անցյալից կարելի է բերել նաև ասվածին առարկող փաստեր, երբ հայ լուսավորչական եկեղեցու, իր հերթին նաև հայ իշխանական (նախարարական) տների, իրենց փառամոլ առաջնորդների միջև ընթացել են ներքին հակամարտություններ, պառակտիչ, ընչաքաղց, անգամ դավաճանական որակվող քայլեր ու դրանով նպաստել ու արագացրել Հայոց պետականության անկմանը: Ինչպիսին, օրինակ, այլևայլ հանգամանքներից զատ, կարելի է մատնանշել **Պետրոս Գետադարձ** կաթողիկոսին և նրա հետ գործակցած թագաժառանգի խնամակալ Վեստ Սարգիս Սյունեցի իշխանի դրսևորած, ըստ էության, հակապետական վարքագիծը՝ Անիի Բագրատունյաց համահայկական թագավորության անկման փաստը (1045 թ.): Նկատել տանք, որ այս առնչությամբ Հայոց և հայ եկեղեցու պատմության խորագիտակ պատմաբան Միքայել Չամչյանցի մեկնաբանությամբ՝ Անիի անկման ու Բագրատունյաց թագավորության վերացման գործում պառակտիչ գործողություններով գլխավոր դերակատար դուրս է բերված Սարգիս Սյունեցի իշխանը, ով «խորհէր ի մտի թագաւորել ի վերայ հայոց», ով «բազում քսութեամբ ծածուկ բորբոքում էր թշնամանք Գագիկ թագավորի և Պետրոս կաթողիկոսի միջեւ», որը «և եղև սկիզբն կործանման և բարձման թագաւորութեան Բագրատունեաց» և, որ իբրև, Սարգիս իշխանն ու նրա կողմնակիցները կաթողիկոսից ծածուկ հունաց կայսրին են ուղարկել Անիի բանալիները և հետն էլ «յղեալ առ նա թուղթ՝ ասեն. քո է այսուհետև Անի քաղաք և ա՜մ արևելք»[67]: Սակայն դժվար չէ նկատել, որ վաստակաշատ պատմաբանն ու բանասերը փորձել է մի տեսակ պաշտպանության տակ առնել Ամենայն Հայոց Պետրոս Գետա-

---

[66] **Չոբանյան Պ.**, *Եկեղեցին և պետությունը ազգային հակատագրում* (տե՛ս «Հայոց եկեղեցի և պետություն. Միջազգային գիտաժողով» 2–5 մարտի 2000 թ. (ժողովածու), Եր., 2000, էջ 137–145:

[67] **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թ.)*, հ. Բ, գ. 4, Եր., 1984, էջ 919, 930 և 933:

դարձ կաթողիկոսին, մինչդեռ ակնհայտ է, որ Անին Բյուզանդիային կտակման, Գագիկ 2-ին Կ. Պոլիս ուղարկելու և ապա գահից հրաժարեցնելու, բյուզանդական զորավարներին ուղղված նամակ-գրությունները և այլն կազմվել են, համենայն դեպս, կաթողիկոսի գիտությամբ, համաձայնությամբ ու կաթողիկոսական կնիքների վավերացմամբ:

Ավելին, հարկ է արձանագրել, որ իր հերթին, պատշաճ համերաշխություն չի եղել անգամ հայ հոգևոր-եկեղեցական կառույցների միջև: Այսպես, ձեռագիր հիշատակարանները, վավերագիր նյութերը, պատմագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ ցանկալի համերաշխություն չի եղել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի (վերահաստատված՝ 1441 թ.), Աղվանից (Գանձասարի)՝ 552 թ.[68], Աղթամարի (հիմնված՝ 1113 թ.) և Սիսի կաթողիկոսությունների, ինչպես և Երուսաղեմի (հաստատված՝ 1311 թ.) ու Կ. Պոլսի (հաստատված՝ 1461 թ.) պատրիարքությունների միջև: Հայոց հոգևոր և աշխարհիկ բնույթի գրականության մեջ, ձեռագրերում և հիշատակարաններում առկա են ներքին հակամարտությունների բազում փաստեր: Այսպես, Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին իր նշանավոր «Ջամբռ» երկասիրության մեջ նշում է, որ XII դարում, մահմեդական իշխանությունների ուժեղացման շրջանում, երբ հայրապետական աթոռը Սբ. Էջմիածնից տեղափոխվեց Հռոմկլա, այդ նույն ժամանակ Աղթամարի կղզու առաջնորդ, ոմն Դավիթ վարդապետը ապստամբեց Գրիգոր կաթողիկոսի դեմ և ինքնագլուխ իրեն կաթողիկոս կարգեց նույն կղզում: Որից հետո առաջացավ երկու կաթողիկոսություն՝ Հռոմկլայում և Աղթամարում: Նրանց միջև ոչ միաբանություն կար և ոչ էլ նախապատվություն: Եվ դրանից հետո ոչ միայն կաթողիկոսությունը, այլև գրեթե ողջ հայոց ազգը տրոհվեց երկու մասի[69]:

---

[68] Գրող, պատմաբան Բ. Ուլուբաբյանի պարզաբանմամբ՝ Մեծ Հայքի մասնատումից և քաղաքական անկախության կորստից հետո, 552 թ. Հայոց Արևելից կողմում հիմնվեց Աղվանքի կաթողիկոսությունը, որի իրավաժառանգորդը դարձավ Գանձասարի կաթողիկոսությունը և այն մշտապես հանդիսացել է Հայոց ընդհանուր եկեղեցու մի թևը (տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, *Խոյեմի իշխանությունը X–XVI դդ.*, Եր., 1975, էջ 378–379):

[69] Տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 76–77:

XVI դարի երկրորդ կեսից սկսած մինչև XVII դարի 20-ական թվականները Մայր աթոռի վրա կարծես զուգահեռաբար միաժամանակ հիշատակվում են կաթողիկոսական երեք-չորս անուններ, հակաթոռներ, միմյանց հանդեպ բանադրանքներ և այլն[70]: Առաքել Դավրիժեցին գրում է, որ Էջմիածնի կաթողիկոսական աթոռը միաժամանակ զբաղեցնում էին մի քանի կաթողիկոսներ. «Զի ոչ թէ մի էր, այլ երեք և չորք կաթոտղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան և ագահութեան»[71]: Նույնպիսի վիճակ է տիրել նաև Աղթամարի կաթողիկոսական աթոռում[72]: Տվյալներ կան, որ անգամ հայոց հոգևոր գերակայության հավակնելու համար մրցակցային պայքար է ընթացել հայոց կաթողիկոսությունների միջև: Այսպես՝ 1558 թ. Բաղեշում (Բիթլիսում) գրված և ներկայումս Մատենադարանում պահվող մի հիշատակարանում Աղթամարի կաթողիկոս Տեր Խաչատուրը նշված է որպես «Ամենայն Հայոց» կաթողիկոս[73]: Մեկ այլ դրվագով, ավելի վաղ՝ XIII դարում, Օրբելյան և Պռոշյան իշխանական տոհմերի միջև ընթացող ներքին հակամարտության հետևանքով, Սյունյաց հոգևոր աթոռը տրոհվել (երկփեղկվել) էր երկու մասի՝ Տաթևի և Նորավանքի: Ի վերջո, այդ միավորումը հաջողվում է իրականացնել Գլաձորի համալսարանի սան, Կիլիկիայում եպիսկոպոս ձեռնադրված, Սյունյաց մետրոպոլիտ Ստ. Օրբելյանին[74]: Նույնը կարելի է ասել XVII դարի երկրորդ կեսին մրցակցային հակամարտությունը այս անգամ հայ հոգևոր երկու խոշոր դեմքերի՝ **Հակոբ Ջուղայեցու** և **Եղիազար Այնթափցու** (1682–1691) միջև էր: Պարզվում է. լատինական Արևմուտքի աջակցությամբ Եղիազար Այնթափցին, «անջատողական», հակաթոռ պայքար տանելով 1664/65 թվականներից, արևմտահայերի համար անգամ անջատ, ապօրինի կաթողիկոսություն է հաստատել տվել[75]:

---

[70] Տե՛ս **Սիմեոն Երևանցի,** *Ջամբռ,* Վաղարշապատ, 1875, էջ 20 և 93:

[71] **Դավրիժեցի Ա.,** *Գիրք պատմութեան,* Եր., 1990, էջ 242:

[72] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** *Դրվագներ...,* գ. 2, էջ 51–52:

[73] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրերի ֆոնդ, հմր. 1082, էջ 75ա:

[74] Տե՛ս **Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս.,** *նշվ. աշխ.,* էջ 124 և 145–146:

[75] Տե՛ս **Անասյան Հ.,** *նշվ. աշխ.,* էջ 8, 68–69, 73 և 79, նաև՝ *Հայոց պատմություն,* հ. 3, գ. 1, էջ 17:

Այս կապակցությամբ գրականագետ Էմ. Պիվազյանն իր գրախոսականներից մեկում տեսակետ է հայտնում, որ Կ. Պոլսի պատրիարք Ե. Այնթափցու և Հ. Ջուղայեցու միջև կաթողիկոսական աթոռի շուրջ պայքարը «ունեցել է փառասիրական նպատակներ ու անձնական շարժառիթներ: Բավական էր, որ Այնթափցին 1682 թ. դառնար Էջմիածնի կաթողիկոս, որ մեջտեղից վերանար հակաթոռ կաթողիկոսության խնդիրը»[76]:

1601 թ. Կիլիկիայի (Սիսի) Ազարիա Ջուղայեցի կաթողիկոսի մահից հետո աթոռակռիվ է ընթացել նրա աշակերտ Հովհաննես վրդ. Այնթափցու և Պետրոս վրդ. Կարկառեցու միջև: Ժողովրդի և հոգևորականության անմիաբան գործողությունների հետևանքով փաստորեն ձեռնադրվել են երկու կաթողիկոսներ, որոնցից մեկը նստել է Սիսում, իսկ մյուսը՝ Բերիայում (Հալեպում): Ի վերջո, խնդրին միջամտել է Կ. Պոլսի Հայոց Գրիգոր Կեսարացի պատրիարքը ու փորձել է հաշտեցնել նրանց և այլն[77]: Պատմավավերագիր արձանագրումներ կան, որ XVI-XVII դարերում Սսի կաթողիկոսությունը բազմիցս փորձեր է արել Կ. Պոլսի պատրիարքությունը ենթարկել իր ազդեցությանը[78]:

XVIII դարի սկզբներին աթոռակռիվ է ընթացել Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունների միջև: Հատկապես թուրք իսլամ բարձր շրջանակները (մասնավորապես շեյխ ուլ-իսլամ Ֆեյզուլլահը) մտադրություն են ունեցել հնամենի Երուսաղեմի հայոց պատրիարքությունը միացնել Կ. Պոլսինին, բայց ի վերջո չեն հաջողել[79]: Կրկին արձանագրենք, որ այդ նույն XVIII դարի առաջին կեսում ներքին հակամարտ տարաձայնություններ են արձանագրվել Կ. Պոլսի հայ համայնքի հայադավանների, բողոքականների և հայ կաթոլիկների միջև և այլն[80]:

---

[76] **Պիվազյան Էմ.**, *Մարտիրոս Ղրիմեցու գրքի մասին*, էջ 4 (տե՛ս *Առանձնատիպ*, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1959, թիվ 1):

[77] Տե՛ս **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 6, էջ 536:

[78] Տե՛ս *Սոում (Հարութիւն Շահրիկեան), Ազգայի Սահմանադրութիւնք*, Կ. Պոլիս, 1914, էջ 16:

[79] **Խառատյան Ա.**, *Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունների փոխհարաբերությունները (XVIII դարի սկիզբ – 20-ական թթ.)* (տե՛ս «Լրաբեր» հասա. գիտ., Եր., 2022, թիվ 2 (665), էջ 12–31):

[80] Տե՛ս **Չամչեան Մ.**, *Պատմութիւն հայոց*, հ. 3, էջ 807–808, նաև՝ **Ղուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 22:

Համանման պառակտիչ երևույթները հայադավանների և հայ կաթոլիկների միջև շարունակվել են նաև նույն դարի երկրորդ կեսում, որոնք երբեմն հրահրվում էին նաև արտաքին ուժերի կողմից[81]: Հարկ է նկատել, որ հայ կաթոլիկ և հայ առաքելական եկեղեցիների մրցակցային հակամարտությունում թուրքական իշխանությունները սատար են կանգնել հայ առաքելական եկեղեցուն, քանզի քաղաքական ենթատեքստով կաթոլիկներին համարում էին եվրոպական տերությունների գործակալներ[82]: Այս համատեքստում ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ հայության միասնականության հանդեպ պառակտիչ դեր են խաղացել Հռոմի պապի կողմից կազմակերպված կերպով դեպի Արևելք ներթափանցող եվրոպական տերությունների կաթոլիկ քարոզիչները (**միսիոներները, ճիզվիթները**), որոնք կաթոլիկական հավատը տարածելու ճանապարհին ներհամայնքային պայքար էին բորբոքում հայ կաթոլիկների և Առաքելական եկեղեցու հետևորդների միջև: Այդ հանգամանքը ազգային-հոգևոր առումով՝ տարանջատում էր առաջ բերում հայ ժողովրդի ազգային միասնականության գաղափարին ու գործին:

Հարկ է արձանագրել, որ XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի առաջին տասնամյակներին, հայ եկեղեցու նվիրապետական կառույցում եղել են նաև անձնական, եսասիրական թե հոգևոր-քաղաքական և այլ դրդապատճառներով լարված հարաբերություններ, օրինակ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքության միջև և այլն[83]:

Սրանք փաստեր են, որոնք վկայում են հոգևոր բազմաբևեռության ու բազմիշխանության և հայ ազատագրական ձեռնարկներում երբեմն հանդիպող անմիաբանության և դրա թողած բացասական հետևանքների մասին: Բայց դրա կողքին հայ հոգևոր շրջանակներում հնչել են կոչեր նաև ազգը դավանական առումով միաբնակ և երկաբնակ թևերի տարանջատող դավանանքի համահարթեցման ուղղությամբ: «Չի՞նչ է այս աղմուկն,- կարդում ենք պատմաբան Ա. Այվազյանի կողմից

---

[81] Տե՛ս **Զուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 131–132 և այլն:

[82] Տե՛ս **Գալոյան Գ.Ա.**, *Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, էջ 71:

[83] Տե՛ս **Այվազյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 42:

սկզբնաղբյուրներից մեկից բերված քաղվածքից,- որ ոմանք ասէք՝ մի բնութիւն, եւ ոմանք՝ երկու, արարէք խաղաղութիւն ի միջի ձերում՝ վասն սիրոյն Աստուծոյ»[84]:

Հարկ է նշել, որ հայ հոգևոր առաջնորդների ընտրությունների հարցում, արտաքին ուժերից իրենց հանրային-քաղաքական շահագրգռությամբ, ավելի հաճախակի միջամտել են Իրանը, Թուրքիան կամ Ռուսաստանը: Այսպես, 1726 թ. Կարապետ Բ Ուլնեցուն Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու ընթացքի վրա ուղղակի ազդել է Բ. Դուռը, մանավանդ, որ ընտրությունը ընթանալիս է եղել Կ. Պոլսում[85]: Նորընտիր կաթողիկոսն իր ողջ կյանքում մշտապես պաշտոնավարել էր Օսմանյան կայսրությունում, նախկինում որևէ կապեր չի ունեցել պարսկական կամ ռուսական իշխանությունների հետ և համարվել է թուրքական իշխանությունների համար վստահելի անձ: Նկատել տանք, որ հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը, ամենամռայլ գույներով պատկերելով պարսկա-թուրքական հարկային, ազգային, կրոնական կեղեքիչ ու հալածական քաղաքականությունը հայոց հանդեպ, բայց և մյուս կողմից, իբրև այդ ժամանակներում ապրած ականատես, իր «Ուղեգրություններ»-ում գրում էր. «չնայած այդ բոլորին, պարսկական շահերը և թյուրքական սուլթանները միշտ մեծ հարգանք ունեին էջմիածնի վանքի և կաթողիկոսների նկատմամբ»[86]: Տվյալներ կան, որ XVIII դարի վերջերին հայ եկեղեցու ու եկեղեցականների վեճերին հաճախ միջամտել է անգամ վրաց Հերակլ II թագավորը[87]:

Ինչ վերաբերում է արդեն նոր ժամանակներում դեպի Անդրկովկաս ներթափանցող Ռուսաստանին, ապա բնականաբար ուժեղանում է նրա դերակատարությունը նաև հոգևոր-քաղաքական հարցերում: Հայտնի է նաև XIX դարասկզբին՝ 1800–1807 թթ., հայ ժողովրդի պատմությանը հայտնի «**Դավիթ-Դանիելյան**» շուրջ մեկ տասնամյակ տևած գավազանակռիվը Ամենայն Հայոց կաթողիկոսական գահի համար:

---

[84] **Այվազյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 71–72:

[85] Նույն տեղում, էջ 164:

[86] **Աբովյան Խ.**, *Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ)*, հ. 7, Եր., 1956, էջ 173:

[87] Տե՛ս *Դիվան Հայոց պատմության*, Ղուկաս Կարնեցի, հ. Ա (1780–1785), աշխ., **Վ. Գրիգորյանի**, Եր., 1984, էջ 66:

Հայտնի է, որ 1799 թ. դեկտեմբերի 28-ին վախճանվում է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը: Ընտրությունների ճանապարհով նոր կաթողիկոս է ընտրվում Կ. Պոլսի հայոց պատրիարք, Բարձր Դռան հովանավորյալ Դանիել արք. Սուրմառեցին[88]: Սակայն այլ մտադրություն ուներ ռուսական կառավարությունը՝ ձգտելով Հայոց հոգևոր գահին տեսնել իր ցանկալի թեկնածուին: Այդ պայքարում ակներև է, որ մեջտեղ է գալիս հասարակական-քաղաքական կողմնորոշումների խնդիրը՝ ռուսական, թուրքական, նաև պարսկական մրցակցային քաղաքական պայքարի հարցը, երբ դրանցից յուրաքանչյուրը ձգտում էր Հայոց կաթողիկոսական աթոռին տեսնել իր թեկնածուին:

Ռուսական կառավարությունը ցանկալի էր համարում հայոց հոգևոր գահին տեսնել ռուսահայոց թեմի առաջնորդ, ռուսական կողմնորոշման ընդգծված գործիչ Հովսեփ արք. Արղությանին: Ռուսական իշխանություններին հաջողվում է 1800 թ. դեկտեմբերին Հ. արք. Արղությանին կարգել Ամենայն Հայոց կաթողիկոս: Այս կապակցությամբ Լեոն նշում է՝ «Յովսէփը ռուսաց կայսրի կողմից նշանակուեց ամենայն հայոց կաթողիկոս և այժմ Ռուսաստանից գնում էր Էջմիածին»[89]: Գոյություն ունեցող կարգի համաձայն՝ Էջմիածնի նորընտիր կաթողիկոսը պիտի վավերացվեր պարսից և օսմանյան կառավարությունների ֆերմաներով, ուստի խոհեմ չէր ռուս քաղաքականության համակիր (ռուսասեր) Հովսեփ արք. Արղությանին ընտրել կաթողիկոս[90]: Էջմիածնի միաբանության շրջանում վախ կար, որ դրա պատճառով կարող է հայ ժողովուրդը թուրք-պարսկական վրիժառության զոհ դառնա:

Բայց դեպքերը զարգանում են այնպես, որ Հովսեփ Արղությանը Ռուսաստանից՝ Պետերբուրգից-Աստրախան, այնտեղից էլ Մայր Աթոռ Ս. Էջմիածին հասնելու ճանապարհին 1801 թ. մարտի 9-ին Թիֆլիսում հիվանդանում և արագ վախճանվում է: Ի դեպ, Հովսեփ Արղությանի մահից երեք օր անց՝ մարտի 12-ին, Պետերբուրգում «մահանում» է

---

[88] Տե՛ս **Լեո,** *Երկերի ժողովածու,* հ. 4, Եր., 1987, էջ 112:

[89] **Լէօ,** *Վրաստանի միացումը Ռուսաստանին (հարիւրամեակի առթիվ),* «Մուրճ», Թիֆլիս, 1901, թիվ 2 (փետրուար), էջ 234:

[90] Տե՛ս **Գէորգ-Մեսրոպ,** *Պատմութիւն Հայ եկեղեցւոյ,* հ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 457–458:

Պավել կայսրը: Այս անգամ արդեն կաթողիկոսական բարձր Աթոռի համար փոխնեփոխ, հակաթոռության նմանվող մրցակցային պայքար է ընթանում սկզբում պարսից, իսկ հետո ռուսական կողմի նոր թեկնածու Դավիթ Էնագեթցու և Բարձր Դռան հովանավորյալը հանդիսացող, Կ. Պոլսի պատրիարք Դանիել Սուրմառեցու միջև: Վերջինս անգամ առժամանակ բանադրվել և իբրև աքսորյալ Երևանի խանի հրամանով գտնվում էր Երևանի բերդում: Հայագետ Կարապետ Կոստանյանը Հայոց կաթողիկոսական գահի ժառանգության համար մղվող պայքարը համարում էր միջկուսակցական դիմակայություն: Այստեղ Դավիթ-Դանիելյան շուրջ մեկ տասնամյակ ընթացող պայքարը միջկուսակցական ասելով, ըստ էության, հասկացվում էր պայքար Կ. Պոլսի և Պետերբուրգի միջև[91]: Ստեղծվեց մի իրավիճակ, երբ փաստացի կաթողիկոս ընտրված ռուսաց թեկնածու Դավիթ Ե Էնագեթցուն զուգահեռ, իբրև հակաթոռ, 1802 թ. Բագրևանդում Մայր Աթոռի կաթողիկոս էր օծվել Դանիել Սուրմառեցին[92]:

Ռազմա-քաղաքական հանգամանքների հրամայականով, (ինչպես գիտենք ընթանում էին ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներ), ի վերջո, ռուսական կառավարությունը կտրուկ փոխում է իր դիրքորոշումը և հաջողեցնում է սբ. Էջմիածնի Մայր աթոռին կարգել իր նոր թեկնածու Դանիել Ա Սուրմառեցուն[93]: Ի դեպ, վերջինիս հաղթանակի գործում իր նպաստն է բերել Դանիելի համախոհ, հետագայում մեծ անուն հանած հոգևոր գործիչ Ներսես վարդապետ Աշտարակեցին: Վերջինս իր թափած ջանքերի դիմաց շատ արագ ձեռնադրվում է եպիսկոպոս[94]: Սակայն 1808 թ. հոկտեմբերին վախճանվում է Դանիել

---

[91] Տե՛ս **Կոստանեանց Կ.**, *Տ. Նէրսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոս Ամենայն Հայոց*, Աղէքսանդրապոլ, 1909, էջ ԺԸ–ԺԱ:

[92] Տե՛ս *Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.*, հ. 1, կազմեց **Վ. Հակոբյան**, Եր., 1951, էջ 349:

[93] Տե՛ս **Գեղամեանց Ե. քահ.**, *նշվ. աշխ.*, էջ 112, նաև՝ **Սարուխանյան Ն.**, *Արևելյան Հայաստանի միացման պրոբլեմը միջնադարյան հայ պատմագրության մեջ*, էջ 46–47: Բանն այն է, որ Դավիթն այս անգամ, հանդես բերելով պարսկական կողմնորոշում փորձում էր կապեր հաստատել Երևանի Մահմադ խանի (սարդարի) հետ:

[94] Տե՛ս **Երիցեանց Աղ.**, *Նիւթեր Նէրսէս Ե-ի կենսագրության համար*, Թիֆլիզ, 1877, էջ 63–64, նաև՝ **Խառատյան Ա.**, *Զմյուռնիայի և Էգեյան առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI–XIX դ. 1-ի կես)*, Եր., 2022, էջ 360:

կաթողիկոսը, որին հետևում է Ալեքսանդր I-ի հրամանագիրը, և ռուսական կողմնորոշման հետևորդ, ռուսահայ թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը հաստատվում է Ամենայն Հայոց կաթողիկոս՝ **Եփրեմ Ա Զորագեղցի** (1809–1830) անունով[95]:

Եվ նման կերպ, դարերի ընթացքում արձանագրվել են բազում հակաթոռային պայքարի դրսևորումներ, որոնք երբեմն, իբրև առիթ, հրահրվել են գերիշխող ու շահագրգիռ պետությունների կողմից ու հետապնդել քաղաքական նպատակներ՝ կաթողիկոսական աթոռը դիտելով որպես քաղաքական ներազդման (ճնշման) լծակ: Այս առնչությամբ Ա. Ալպոյաճյանը գրում է. «Օտար տիրապետներ ուղղակի կամ անուղղակի միջամտութիւններ ի գործ դրած են Հայ Եկեղեցւոյ վարչութեան մէջ և հայ ժողովուրդը պարտատրված է համակերպիլ երբեմն այդ օտարոտի կարգադրութիւններուն»[96]: Դավիթ-Դանիելյան աթոռակռիվը ցույց է տալիս՝ պետականազուրկ Հայաստանում որքան մեծ է եղել կաթողիկոսի դերն ու կշիռը երկրին հավակնող տերությունների համար իրենց ազդեցությունը ապահովելու գործում: Ահավասիկ, սրանք խնդիրներ էին, որոնք բացասաբար էին անդրադառնում հայ ժողովրդի հոգևոր ու քաղաքական միասնության վրա և, վերջին հաշվով, վնասում հայրենիքի ազատագրության ու պետականության վերականգնման գործին:

### *3. Հայ ազատագրական շարժման նոր փուլը: 1677 թ. Էջմիածնի գաղտնի ժողովը: Հակոբ Դ Ջուղայեցի: Իսրայել Օրու գործունեության սկզբնավորումը*

Արդ, անցնելով առաջադրված թեմայի բուն նյութի շարադրանքին, արձանագրենք հետևյալը, որ եթե արևմտահայ և արևելահայ իրականությունները համեմատում ենք հասարակական-քաղաքական մտքի

---

[95] Տե՛ս **Դիլոյան Վ.**, *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամակին և հայ-ռուսական հարաբերությունները*, էջ 228, նաև՝ *«Հայ ժողովրդի պատմություն»*, h. V, Եր., 1974, էջ 117:

[96] **Ալպոյաճեան Ա.**, *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը*, Գահիրէ, 1945, էջ 2:

տեսակետից, ապա կարելի է նկատել, որ Արևմուտքին մոտ արևմտահայ միջավայրում, հատկապես Կ. Պոլսում ու Վենետիկում, շատ արգասավոր էր գրահրատարակչական գործը, գրական շարժումը, իսկ արևելահայ կամ պարսկահայ իրականության մեջ ավելի տեսանելի էր քաղաքական ազատական միտքն ու շարժումը: Եվ հասարակական-քաղաքական այդ միջավայրում XVII դարավերջին ու XVIII դարասկզբին հայ իրականության մեջ սկսվում է ազատագրական ոգորումների մի շրջան, որի սկզբնավորողն ու ամենավառ ներկայացուցիչը դարձավ այդ շարժման ռահվիրաներից **Իսրայել Օրին** (1659–1711 թթ.)[97]:

Նախ, իբրև հիմնահարցի հետազոտման կարևոր սկզբնաղբյուր, նշենք, որ Ի. Օրու արկածներով հարուստ կյանքի ու բեղմնավոր քաղաքական գործունեության լուսաբանման և առհասարակ Ռուսաց ցար Պետրոս 1-ի ժամանակաշրջանում նոր ձևավորվող հայ-ռուսական հարաբերությունների ու հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցի հետազոտման համար անփոխարինելի հարուստ աղբյուրագիտական բարձր արժեք ունի ընդարձակ առաջաբանից և ավելի քան 300 փաստաթղթերից (վավերագրերից) կազմված բանասեր, պատմաբան Կարապետ Եզյանի մեծարժեք ժողովածուն[98]: Մասնավորապես, նա Մոսկվայի և Ս. Պետերբուրգի արտաքին գործերի մինիստրության արխիվներից, Ավստրիայի պալատական ու պետական արխիվից, Բավարական (Պֆայլցի) թագավորական արխիվից և այլ հիմնարկություններից հավաքել և ի մի է բերել, հիմնականում Ռուսաց ցար Պետրոս I-ի ժամանակաշրջանին և Իսրայել Օրու կյանքի ու քաղաքական գործունեությանը վերաբերող վավերագրերը և ժողովածուի ձևով հրատարակել է Ռուսաստանի կայսերական գիտ. ակադեմիայի տպարանում՝ ընդհանուր 675 էջ ծավալով: Ընդգծենք, որ պրոֆեսոր Կ. Եզյանի կազմած ժողովածուն աղբյուրագիտական և պատմագիտական մեծ արժեք ունի: Փաստաթղթերի ժողովածուն բաղկացած է երկու բաժնից՝ 1-ինն իրենից ներկայացնում է մի ծավալուն ներածական, որը սկսվում է հայ-ռուսական հարաբերությունների պատմական ակնար-

---

[97] Տե՛ս **Լեո,** *Երկերի ժողովածու,* հ. 5, էջ 421–422:

[98] Տե՛ս **Эзов Г.А.,** *Сношения Петра Великого с армянским народом.* СПб., 1898.

կով, նաև բերված վավերագրերի՝ համապատասխան մեկնաբանություններով ու վերլուծականներով: Այն էջադրված է հռոմեական թվերով՝ I-ից մինչև CXLV (163), իսկ հիմնական՝ 2-րդ, բուն վավերագրերի բաժնում ներառված են Պետրոս Մեծի և նրա հաջորդած տարիների (մինչև 1736 թ.) թվով 305 վավերագրեր՝ գրություն, նամակ, անցագիր, հրովարտակ, զեկուցագիր և այլն, հինգ լեզվով՝ գերմաներեն, լատիներեն, ռուսերեն, ֆրանսերեն, նաև դասական հայերենով հաճախ կրկնօրինակված թարգմանություններով՝ ընդամենը 512 էջ, իսկ ամբողջ ժողովածուն՝ 675 էջ ընդհանուր ծավալով: Փաստաթղթերը դասավորված են գիտական ժողովածուներին բնորոշ ժամանակագրական հաջորդականությամբ, նաև առանձին դեպքերում տողատակի գիտական ծանոթագրություններով ու լրացուցիչ պարզաբանումներով և այլն:

Բայց մյուս կողմից, այդ արժանիքների հետ միասին, Կ. Եզյանի կազմած ժողովածուի վավերագրերի մի մասը, իբրև հավատի սկզբնաղբյուր հետազոտելիս, ոչ ամենևին կազմողի մեղքով, արժանահավատության տեսակետից կասկած են հարուցում, որի մասին ավելի հանգամանալի խոսք կլինի հետագայում: Նախ իրազեկենք, որ սկսած 1677 թ. Անգեղակոթի ժողովից Ի. Օրու կյանքի ու գործունեության հիմնական դրվագները շարադրվել են հետին թվով, հետագայում՝ արդեն կատարված դեպքերի և իրադարձությունների լայն համայնապատկերի վրա: Բանն այն է, որ հիմնականում Կ. Եզովի կազմած փաստաթղթերի ժողովածուի շարադրանքի միջոցով կարողանում ենք առերեսվել ու վեր հանել նրա կյանքի ու գործունեության, երբեմն հակասական ու վիճարկելի քիչ թե շատ ամբողջական պատմությունը: Այստեղից էլ հաճախ առաջանում են կասկածներ՝ արդյոք դրանք իսկապե՞ս տեղի ունեցել են, թե՞ ոչ: Կասկած չկա, որ ժողովածուում առկա գրություն-նամակների, անցագրերի և այլնի մի մասը առաքելության գլխավոր դերակատարներ Ի. Օրու, նրա քարտուղար Մինաս վարդապետի կողմից, անշուշտ, իրենց բռնած գործն առաջ տանելու համար, երբեմն անհրաժեշտաբար կեղծվել է, մանավանդ որ նրանք որպես իրավական հիմք փորձել են օգտվել Անգեղակոթի ժողովում հայ մելիքների կողմից իրենց (պատվիրակությանը) տրված գրություն-նամակի հետ միասին,

այսպես կոչված, չգրված «**ճերմակ թղթի**» (քարթ բլանշի) իրավունքից, ինչը հաճախ կասկածելի է և ոչ արժանահավատ:

Դառնալով բուն նյութին, հարկ է փաստել, որ XVII դարի երկրորդ կեսի Հայաստանի ազատագրության խնդրում դերակատար ամենախոշոր քաղաքական ու հոգևոր դեմքը, անշուշտ, հանդիսանում է «անհաղթ փիլիսոփա» և «մաքրամիտ վարդապետ»[99], Ամենայն Հայոց **Հակոբ Դ Ջուղայեցի** (1655–1680 թթ.) կաթողիկոսը[100], որն իր նախորդների նման թուրք-իրանական մրցակցային շահադիտությունների թնջուկից Հայաստանը դուրս բերելու հնարավոր երրորդ ուղին (փորձը) դարձյալ համարեց **Արևմուտքը**, սակայն ոչ միայն Հռոմի պապին, այլ նաև եվրոպական պետություններին: Նա կապեր հաստատեց Լեհաստանի մեծ թագավոր Յան Սոբեսկու, Վենետիկի Հանրապետության, ֆրանսիական արքունիքի հետ: Հայ հոգևոր բարձրագույն դեմքը Հայաստանի ազատագրության հույսը փորձում է կապել եվրոպական աշխարհիկ իշխանությունների օգնության հետ, և դրանով հայ ազատագրական միտքն ու շարժումը կարծես նոր երանգավորում էր ստանում:

Հակոբ Ջուղայեցու քաղաքական գաղափարների ու գործունեության վերաբերյալ հայտնի է, որ նա մտադրություն է ունեցել անձամբ մեկնել Եվրոպա՝ Հռոմի պապից և քրիստոնյա մյուս պետություններից օգնություն խնդրելու Հայաստանի ազատագրության համար: Հայաստանի սոցիալ-քաղաքական անելանելի վիճակն է թելադրել հրավիրելու հերթական 1677 թ. **Էջմիածնի** գաղտնի ժողովը: Այդ նպատակով 1677 թ. Մայր աթոռում հրավիրվում է գաղտնի խորհրդաժողով՝ 6 բարձրաստիճան հոգևորականի (արքեպիսկոպոս) և 6 աշխարհականի՝ Սյունիքի և Արցախի հայ մելիքների[101] մասնակցությամբ: Հայաս-

---

[99] Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մասին գրում էր, որ նա լիովին ճերմակ էր, ինչպես լուսինը և իմաստուն ծերունի՝ պատվարժան կեցվածքով (Տե՛ս *Путешествие Шардена по Закавказью в 1672–1673 гг.*, Тифлис, 1902, с. 278.

[100] **Հովհաննիսյան Ա.**, *Դիվազներ...*, գ. 2, էջ 164:

[101] Լեոյի պարզաբանմամբ՝ «**մելիք**»-ը կամ «**մալիք**»-ը սեմական (արաբական) ծագում ունեցող բառ է, ինչը նշանակում է իշխող, տիրակալ, «**թագավոր**» (տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 16, նաև՝ **Մաղալյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 32): Այդպիսին էր, օրինակ, մեզ հոգեհարազատ հայկական ժողովրդական «Սասունցի Դավիթ» էպոսում Մսրա Մելիքը: Տվյալ դեպքում բռնակալ Մսրա Մելիքը ներկայանում է իբրև

տանի ազատագրության հարցը կրկին բարձրացնելու համար որոշվում է պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ Հռոմի պապի մոտ՝ «հայերի համար ազատություն հայցելու»: Իրականությանը չի համապատասխանում պրոֆ. Ա. Աբրահամյանի պնդումը, թե Էջմիածնի ժողովում որոշում են «Հակոբ Ջոտլայեցու ղեկավարությամբ պատգամավորություն ուղարկել **Ռուսաստան** և Արևմտյան Եվրոպա»[102]: Պատմական իրողությունն այն է, որ պատվիրակության Ռուսաստան մեկնելու մասին որևէ խոսք չի եղել: Ավանդույթի ուժով, խոսք կարող էր լինել պատվիրակության՝ միայն դեպի Եվրոպա գործուղելու վերաբերյալ:

Այդուհանդերձ, կազմվում է պատվիրակություն, որն անձամբ գլխավորում է կաթողիկոսը՝ 3 եկեղեցականների և 3 աշխարհական մելիքների մասնակցությամբ[103]: Դեպի Եվրոպա մեկնող երեք աշխարհիկ պատվիրակներից երկուսը Կապանի մելիքներից էին, որոնցից մեկն էլ Իսրայել Օրու հայր Մելիք Իսրայելն էր: Պատմավավերագիր գրականության մեջ, մասնավորապես Կ. Եզովի մեկնաբանությամբ, թեև Մելիք Իսրայելը՝ իբրև **Հայոց Պռոշյան** իշխանական տոհմից ընտրված աշխարհիկ պատվիրակներից մեկն էր, բայց նա, «երկյուղ կրելով պարսկական իշխանությունների հետապնդումներից, իր փոխարեն ուղարկում է երիտասարդ (20-ամյա՝ Ա.Հ.) որդուն՝ Օրիին»[104]: Պրոֆ. Լեոյի մեկնաբանությամբ՝ երիտասարդ Օրին պատգամավորությանը մասնակցում էր իր հոր փոխարեն, որ «ծերության պատճառով մնաց տանը»[105]: Ինչ վերաբերում է Մելիք Իսրայելի ծագումնաբանությանը, ապա վաստակաշատ պատմաբանը որևէ վերապահություն կամ կասկած չի հայտնում Իսրայելի՝ Պռոշի հռչակավոր իշխանական

---

Բաղդադի խալիֆա: Այլ խոսքով, «մելիք»-ը վկայում է, ըստ էության, թագավորական կարգավիճակ ունենալու մասին: Մելիքությունը եղել է ժառանգական: Հոր մահից հետո իշխանությունը փոխանցվում էր ավագ որդուն, որը, սակայն, հատուկ հրովարտակով (ֆերմանով) պետք է հաստատվեր շահի կողմից: Հայ մելիքները իրենց ենթակա երկրամասերում ունեին կառավարչական, դատավարական, զորք պահելու, հարկեր հավաքելու և այլ իրավունքներ:

[102] **Աբրահամյան Ա.**, *Իսրայել Օրի*, էջ 25:

[103] **Տե՛ս Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. N 5, с. 11.

[104] Նույն տեղում, էջ XX:

[105] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 331:

տոհմից սերելու մասին[106]: Նա Օրուն համարում էր «հայ ազնվականության բեկորներից մեկը»[107]: Մեծ հայագետ Ղ. Ալիշանի տեղեկացմամբ ևս՝ Իսրայել Օրին պատկանել է «ի զարմէ Պռոշեանց»[108]: Բայց պատմավավերագիր սկզբնաղբյուրներում և նյութերում չկան բավարար կռվաններ՝ հիմնավորելու Օրիի նախնիների արմատներով, իրոք, միջնադարյան Պռոշյան տոհմից սերված լինելու հանգամանքը:

Հակիրճ, դեպքերը զարգանում են հետևյալ կերպ: Հայ բազմահարուստ գրականությունից հայտնի է, որ Հակոբ Ջուղայեցու գլխավորած պատվիրակությունը նախ Վրաստանով (հանդիպելով վրաց թագավոր Գեորգի 11-ի և նրա եղբայր Արչիլի հետ), այնուհետև Արևմտյան Հայաստանով 1678 թ. ժամանում է Կ. Պոլիս: Միք. Չամչյանը նշում է, որ կաթողիկոսը Կ. Պոլիս է հասել 1679 թ. դեկտեմբերին[109]: Նա նամակ-ներբող է գրում՝ ուղղված Լեհաստանի (Ռեչ Պոսպոլիտայի) հայերի հանդեպ բարյացակամորեն տրամադրված ու Հայաստանի անկախության խնդրով հետաքրքրված «արդար և փրկիչ» թագավոր **Յան Սոբեսկուն** (1674–1696 թթ.)[110]: 82-ամյա կաթողիկոսը Կ. Պոլսում երկար և անորոշ մնալով 1680 թ. օգոստոսի 1-ին այնտեղ էլ վախճանվում է: Հայ եկեղեցու ու կաթողիկոսների պատմությամբ հարուստ հատորյակում պատմաբան Մ. Չամչյանը նկարագրում է, որ վախճանված կաթողիկոսը մեծարանքով թաղվել է Հայոց Բեյօղլու գերեզմանատանը[111]:

Պատվիրակության անդամները Հ. Ջուղայեցու մահից հետո, թերևս հեռանկար չտեսնելով իրենց հետագա անելիքներում, ցրվում են: Եվ միայն մելիքներից մեկի՝ Իսրայելի 21-ամյա որդի **Իսրայել Օրին**

---

[106] **Լեո,** *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 29–30:

[107] Նույն տեղում, հ. 5, էջ 263:

[108] **Ալիշան Ղ.,** *Միասկան*, Վենետիկ, 1893, էջ 212:

[109] Տե՛ս **Չամչյանց Մ.,** *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 6, էջ 718: Ի դեպ, Մ. Չամչյանը ոչ մի ակնարկ չի անում Էջմիածնի 1677 թ. գաղտնի ժողովի բաղաքական մտադրության մասին և, առհասարակ, նրա հատորյակում որևէ հիշատակություն, անգամ անուղղակի ակնարկ չկա Ի. Օրու առաքելության, կյանքի ու գործունեության մասին:

[110] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** *Դրվագներ...*, գ. 2, էջ 222: Հայտնի է, որ Յան Սոբեսկու ռազմական տաղանդի շնորհիվ, 1683 թ. Եվրոպայի համար սպառնալիք հանդիսացող օսմանյան բանակը խուճուճ պարտություն կրեց Վիեննայի պատերի տակ: Ճակատամարտից հետո անպարտելի թվացող Օսմանյան Թուրքիան սկսեց **անկման նշաններ** ցույց տալ:

[111] Տե՛ս **Չամչյանց Մ.,** *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 6, էջ 718:

(**Յավրի**[112]), հավանաբար, հորից և մյուս պատվիրակներից որոշակի առաջադրանք ստացած հայ վաճառականների հետ շարունակել է ուղևորությունը դեպի Եվրոպա[113]:

Այդպիսով, սկսվում է 17-րդ դարի հայ ազատագրական շարժման ու պայքարի տարածման գործում առավել հնչեղ ու վառ ներկայացուցիչ Իսրայել Օրու արկածալի կյանքով ու հայ պատմագիտական գրականության մեջ հակասական գնահատականներով հարուստ կյանքի ու գործունեության պատմությունը: Հուշապատման ձևով հետին թվով շարադրված նրա կենսագրականում ներկայացված են հետևյալ տվյալները: Նա 1680 թ. Կ. Պոլսից մի խումբ հայ վաճառականների հետ անցնում է Իտալիա: Իր իսկ պատմածով՝ Վենետիկում երեք ամիս մնալուց հետո մեկնում է ու հաստատվում է Ֆրանսիայում: Նա Փարիզ հասնելով ու ֆրանսերեն լեզվին տիրապետելով՝ ստանում է զինվորական կրթություն ու որոշ քաղաքական գիտելիքներ: Այնուհետև վեց տարի ծառայում է Ֆրանսիայի թագավորական բանակում, որպես վարձկան սպա (հեծելազորի կապիտան): Միաժամանակ, քաղաքական որոշակի մտադրությամբ, նա փորձել է ֆրանսիական արքունիքի ու ազդեցիկ պալատականների հետ ծանոթություն ու կապեր հաստատել: Դրա համար Լյուդիվիկոս 14-րդի պալատի՝ Վերսալի մոտերքում, բացել էր պերճանքի խանութ՝ ակնկալելով արժանանալ նորին մեծության թագավորի մոտ ընդունելության[114]: Սակայն կարելի է ենթադրել, որ Ֆրանսիայի՝ Թուրքիայի հետ ունեցած առևտրատնտեսական (կապիտուլյացիաների) նպաստավոր կապերով ու հարաբերություններով պայմանավորված, Օրուն չի հաջողվում Վերսալի պալատում անգամ որևէ բանավոր խոստման արժանանալ: Նա դիմումներ է հղել Ֆրանսիայի թագավոր Լյուդո-

---

[112] Օրի անունը լատիներեն և ֆրանսերեն գրություններում կարդացվել է՝ Յավրի (Jauri): «Մուրճ» ամսագրի մեկնաբանությամբ, Օրի անվանումը առաջացել է Իսրայելի «որդի» բառից՝ «դ» տառի գեղչումով, և դարձել է «Իսրայել Օրի»՝ իբրև նրա անուն ու ազգանուն, որովհետև Եվրոպայում ընդունված է եղել կրել ազգանուն, ուստի «Օրին» դարձել է նրա համար ազգանուն: (տե՛ս «**Մուրճ**», Թիֆլիս, 1898, թիվ 9 (սեպտեմբեր), էջ 1271):

[113] **Չամչեան Մ.**, *Պատմութիւն հայոց*, հ. 3, էջ 718, նաև՝ **Ալիշան Ղ.**, *Միսակեան*, էջ 351:

[114] **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 173:

վիկոս 14-ին, սակայն դրանք մնացել են անարձագանք: Հետագայում, ֆրանս-անգլիական մի պատերազմի ժամանակ, որպես կամավոր զինվոր, նա 1695 թ. Նամյուր քաղաքում շրջապատման մեջ է ընկնում և գերվում անգլիացիների կողմից: Սակայն անգլիական թագավորը, պարզելով նրա ով լինելը, ազատում է գերությունից:

Իր գաղափարների իրականացման ճանապարհին Ֆրանսիայից հույսը կտրելով, նա անցնում է Գերմանիա և ծառայության անցնում Հռենոսյան Պֆալցի (Բավարիայի) երկրամասի կենտրոն Դյուսելդորֆ քաղաքում կուրֆյուրստ (փոխարքա կամ կայսրընտիր մեծ իշխան) **Հովհան Վիլհելմի** մոտ և չորս տարի ծառայում որպես բանակի մատակարար: Իր ապրուստն ապահովելու համար նա միաժամանակ նվիրվել է առևտրական գործին՝ գնել ու վաճառել է տարատեսակ պերճանքի իրեր՝ հարուստների ճաշակով: Ըստ Լեոյի վավերագրերի, Դյուսելդորֆում հաստատված Օրին սկզբնական շրջանում զբաղվելիս է եղել ցորենի և օղու առևտրով[115]:

Կուրֆյուրստին ներկայանալու և իր քաղաքական մտադրություններն արտահայտելու համար նա չի ունեցել որևէ հանձնարարականանցաթուղթ, սակայն մտերմանալով շրջապատի հետ և առիթ ստեղծելով՝ հանդիպում է Հովհան Վիլհելմի հետ: Վերջինս հետաքրքրվում է Օրիի ազատաբաղձ գաղափարներով և անգամ պատրաստակամություն է հայտնում հնարավորության պարագայում օգնություն ցուցաբերել՝ ազատագրելու Հայաստանը պարսկական լծից: Այդ գաղափարներին բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել նաև Հովհան Վիլհելմի բարեկամ և զինակից, նրա կնոջ քրոջ ամուսին, Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ինը: Ի. Օրիի ազատագրական գաղափարները, բացի զուտ մարդասիրական կամ մեկ այլ (օրինակ՝ փառասիրական) ձգտումներից մղված, որոշակի հետաքրքրություն են առաջացրել գերմանական արքունական շրջանակներում նաև այն պատճառով, որ նրանք մասնակից էին հակաթուրքական պայքարին (պատերազմին):

1698 թ. Օրին սկսում է ավելի գործնական բանակցել կուրֆյուրստի հետ հայերի, նաև վրացիների ազատագրության հարցով: Նույն

---

[115] Տե՛ս Լեո, *Խոջայական կապիտալ*, էջ 184:

թվականի մայիսին Հովհան Վիլհելմը նամակ է հղում «Հայաստանի իշխաններին և տերերին», բայց և հանդիպումներից մեկի ժամանակ նա Օրուն հասկացնել է տվել, որ **«հայերը չպետք է տարուեն Եւրոպայից օգնութիւն ստանալու յուսով և պէտք է իրենք տեսնեն իրանց գլխի ճարը»**[116]:

Ռազմաքաղաքական իրադարձությունների առումով սա այն ժամանակաշրջանն էր, որ դեռ չէին սկսվել Թուրքիայի հետ Ավստրիայի հաշտության բանակցությունները: 1698 թ. օգոստոսին Օրին ժամանում է Վիեննա՝ հանդիպելու Ավստրիայի (Սրբազան Հռոմեական կայսրության) կայսր Լեոպոլդ 1-ին, բայց հայտնի է, որ կայսրը, ակնարկելով Թուրքիայի հետ առաջիկայում 1699 թ. Կառլովիցի ավանում կնքվելիք հաշտությունը, դիվանագիտորեն մերժում է Հայաստանին զինական օգնության մասին Օրու առաջարկը: Վավերագիր նյութերը վկայում են, որ եվրոպացի իշխանավորները հասկանալիորեն առանձնապես հակված չեն եղել և իրատեսական չեն համարել, թե հնարավոր կլինի ռազմական օգնություն ցուցաբերել հայերին:

Նախապես տեղեկացնենք, որ Օրիի հակասական ու հաճախ էլ հարցականներով լեցուն կյանքին ու գործունեությանը հանգամանալի քննական վերլուծական մեկնաբանություններով անդրադարձել է ականավոր պատմաբան, խորհրդային կուսակցական ու պետական գործիչ, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանն իր բարձրարժեք «Դրվագներ» մենագրության 2-րդ գրքում[117]: Ուստի նպատակահարմար չգտնելով ավելի հանգամանորեն անդրադառնալ Օրիի կյանքի ու գործունեության մանրամասներին, այնուամենայնիվ, դրանց անդրադարձ կլինի այնքանով, որքանով խոսքը կվերաբերի կոնկրետ Հայաստանի ազատագրության ու անկախության համար նրա թափած ճիգուջանքին:

Բայցևայնպես, Հովհան Վիլհելմը, հավանաբար, քրիստոնեական և մարդասիրական մղումներից դրդված, պատրաստակամություն է հայտնում զինապես օգնել հայերին, բայց այն պարագայում, եթե լինի հայ հոգևոր և աշխարհիկ բարձր շրջանակների պաշտոնական գրա-

---

[116] **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, էջ 55:
[117] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 227–415:

վոր դիմումները (համաձայնությունը): Եվ Ի. Օրին, ձեռքին ունենալով համապատասխան նամակ-հանձնարարականներով, այդ թվում, 1698 թ. մայիսի 3-ի ամսաթվով Դյոռաելդորֆում Հ. Վիլհելմի գրած նամակով, ավելի քան 20-ամյա ընդմիջումից հետո, դիվանագիտական առաքելությամբ, Կ. Պոլսով վերադառնում է հայրենիք: Իր այդ նամակում կուրֆյուրստը հուսադրում էր հայ մելիքներին ազատագրվել պարսկական տիրապետությունից, միաժամանակ գովաբանում էր Օրուն և խորհուրդ տալիս լիովին վստահել նրան[118]:

1699 թ. սկզբներին (մարտին) Ի. Օրին Կ. Պոլսով ֆրանսիացու անվան տակ ժամանում է Էրզրում, այնուհետև, ապրիլի 4-ին՝ Ս. Էջմիածին, որտեղ նրան ոչ միայն սառը, այլ ընդհանրապես չի ընդունում Ամենայն Հայոց կաթողիկոս **Նահապետ Ա. Եդեսացին** (1691–1705 թթ.): Այս կապակցությամբ Կ. Եզյանը իր ժողովածուի ընդարձակ ներածականում նշում է, որ ապրիլի 4-ին, Էջմիածին գալով, Մայր Աթոռում տիրող անորոշության պայմաններում, Օրին իր ժամանման գաղտնիքը չի բացում և մեկնում է Ղարաբաղ (Գանձասար)՝ հանդիպելու տեղի կաթողիկոսին: Օրիին լսելու համար Աղվանքի (Գանձասարի) կաթողիկոսի նախաձեռնությամբ հրավիրվում է 5 արքեպիսկոպոսների մասնակցությամբ գաղտնի ժողով, որտեղ Օրին զեկուցում է իր գալու նպատակների մասին: Սակայն այստեղ, կաթոլիկ եկեղեցու հետ դավանաբանական և այլ բնույթի արգելանքները նկատի առնելով, նրա մտադրությունները (գաղափարները) հավանության չեն արժանանում Աղվանից (Գանձասարի) նորընտիր Սիմեոն կաթողիկոսի կողմից[119]:

## *4. Անգեղակոթի ժողովը և «ճերմակ թղթերի» հարցը*

Գանձասարի հոգևորական շրջանակների կողմից բավարար աջակցություն չստանալով՝ Ի. Օրին անցնում է Սիսիանի գավառի Անգեղակոթ գյուղաքաղաք՝ տեղի տանուտեր մելիք Սաֆրազի (Շաֆռազ) կալվածք և որտեղ էլ նրա աջակցությամբ, **1699 թ. ապրիլի 29-ին** Սյու-

---

[118] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, էջ XXI:
[119] Տե՛ս նույն տեղում:

նիքի և Ղարաբաղի զանազան կողմերից հավաքված 10 մելիքների մասնակցությամբ, գումարվել է խորհրդաժողով[120]: Մեծ հայագետ Ղ. Ալիշանի բնորոշմամբ, նպատակը՝ «ի խորհուրդ հնարից ազատութեան յայլազգեաց բռնութենէ, և **վերականգնելոյ զտէրութիւն Հայոց**»[121]: Ընդ որում, այն հրավիրվել էր Նահապետ Ա կաթողիկոսից գաղտնի: Դժվար է հավատալ պրոֆ. Պ. Հովհաննիսյանի հայտնած տեղեկությանը, թե շուրջ 20 օր բուռն քննարկումներ են եղել[122]: Այն, մեր կարծիքով, պարսկական իշխանություններից գաղտնի այդ ժողովը հնարավոր է տևած լինի մի քանի օր: Այնուամենայնիվ, ժողովում ընթերցվում ու քննարկվում է Պֆալցի կուրֆյուրստի նամակ-ուղերձը, ինչպես և Օրիի լրացուցիչ պարզաբանումները, նաև մելիքների տեղեկությունները ներկա վիճակի մասին, որից հետո դրական տրամադրվածությամբ որոշվում է պատասխանել Հովհան Վիլհելմին: Քննարկումներում ծագած վիճահարույց խնդիրներից մեկն այն էր, որ Եվրոպայից օգնություն ստանալու և Հայաստանի ազատագրության ճանապարհին, իբրև նախապայման, դրվելու էր կաթոլիկ **դավանափոխության** հարցը: Սակայն հայրենիքի ազատության անբեկանելի գաղափարով տարված մելիքները, առանձնապես կարևորություն չտալով կաթոլիկ Հռոմին հպատակ դառնալու գաղափարին, միաձայն ընդունում են դավանափոխության առաջարկը[123]: Կ. Եղյանի կազմած վավերագրերի ժողովածուում առկա է ժողովում ապրիլի 29-ի ամսաթվով, մելիքների կողմից կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին ուղարկած նամակի պատասխանը՝ հայերեն բնօրինակով, կա նաև դրա ֆրանսերեն օրինակը, ինչը վկայում է փաստաթղթի օրինական լինելու մասին[124]:

---

[120] Սյունիքի մելիքություններից առանձնապես հայտնի էին՝ Անգեղակոթի, Տաթևի, Բեխի և Քաշաթաղի կամ Խնածախի: Վերջինիս տեր Մելիք-Հայկազյանները ծագում էին Վայոց ձորի **Պռոշյան** իշխանական տնից (տե՛ս **Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս.**, *նշվ. աշխ.*, էջ 175–176):

[121] **Ալիշան Ղ.**, *Միսական*, էջ 212:

[122] Տե՛ս **Հովհաննիսյան Պ.**, *Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ)*, Եր., 2010, էջ 27:

[123] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 334:

[124] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 5, էջ 9–16, նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 239:

Նամակում նշված են բարձրատոհմիկ իշխան Իսրայել Օրիի Հայոց Պռոշյան տոհմի ժառանգ (շառավիղ) լինելու[125], նրա 19 տարվա հայրենիքից բացակայության, այդ ընթացքում հայկական հողերը անհավատների լծից ազատելու համար ջանքեր թափելու, նրան լիովին վստահելու և այլնի մասին: Նամակում մելիքները գրում են, որ իրենք ունեն ապրուստի բավականաչափ միջոցներ, դրամ, գույք և զենք կրելու ունակ մարդիկ և կուրֆյուրստի օգնությամբ ստրկությունից ազատագրվելու և դրա դիմաց, Աստծո կամոք, որպես հատուցում նրան խոստանում են ապագա **հայկական թագավորության թագը**: Հովհան Վիլհելմին հասցեագրված նամակ-խնդրագրում՝ «մելիքները երդվում և հավատացնում էին, թե իրենք և իրենց ժողովուրդը ոչինչ չեն խնայի՝ ո՛չ կյանք, ո՛չ գույք, և, առհասարակ, պատրաստ են ամեն տեսակ զոհողության՝ հանուն իրենց երկրի ազատության»[126]: Վերջում մելիքներն իրենց անունից լիազորում են իշխան Իսրայել Օրուն իրենց անունից հանդես գալու և բոլոր տեսակի գործերը վարելու համար, ինչը հաստատում են փաստաթղթի վերջում դրված հայ իշխան-մելիքների 10-ը ստորագրություններով, այդ թվում՝ Օրիի մանկության ընկեր Մելիք

---

[125] Շատ պատմագիր հեղինակներ գտնում են, որ Մելիք Իսրայելի տոհմը սերվել է Խաչենի **Պռոշյան** կամ **Խաղբակյան** իշխանական տոհմից: Այս կապակցությամբ Լեոն գրում է, որ Օրու՝ վաճառական լինելը չի խանգարում, որ նրա նախահայրը հռչակավոր Պռոշ իշխանական տոհմից սերեր, ինչին սակայն շատերը կասկած են հայտնում: (տե՛ս **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 176–177): Պատմական ակնարկի առումով նշենք, որ Խաչենցի Պռոշի հայրը եղել է Վասակը: Վերջինիս որդու ծննդյան ավազանի անունը եղել է Հասան, որին սակայն Պռոշ են անվանել: Հայ մատենագիրների տեղեկությամբ Պռոշ իշխանը եղել է Հուլաղու խանի հայտնի զորավարներից, ով հատկապես աչքի էր ընկել ու մեծ անուն հանել 1258 թ. Բաղդադի գրավման ժամանակ (տե՛ս **Գանձակեցի Կ.**, *Հայոց պատմություն*, Եր., 1982, էջ 150, 194, 274–275, նաև՝ **Ալիշան Ղ.**, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 529: Ակադեմիկոս Հ. Մանանդյանն իր քննական պատմության մեջ Մատենադարանի ավետարանների հիշատակարաններից տեղեկություններ է բերում **Պռոշյան տոհմի** մասին: Մասնավորաբար, XV դարի վերջերին թուրքմեն ակ-կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանի ժամանակ Վայոց ձորում շարունակել են իշխել Պռոշյան տոհմի ներկայացուցիչները՝ «մեծազգի և երևելի իշխանաց իշխող և բարեհաւատ պարոն Ջուման, թոռն մեծի Պռաւշայ, ասզկպարապետին հայոց» (տե՛ս **Մանանդյան Հ.**, *Երկեր*, հ. Գ, էջ 411):

[126] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 336:

Սաֆրազի, ամրագրում (զմռսում) համապատասխան կնիքներով[127], ինչպես նաև նշում ժողովի վայրը և ամսաթիվը՝ «Անգեղակոթ, 1699, 29 ապրիլի»[128]:

Այս փաստաթղթի առնչությամբ հայ պատմագրության մեջ շրջանառվել է Ի. Օրուն մելիքների կողմից լրացուցիչ տրված չգրված, մաքուր, սակայն ստորագրված ու կնքված, այսպես կոչված, «սպիտակ կամ ճերմակ թղթերի» հարցը: Մեր ժամանակներում լույս տեսած «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակում այդ փաստաթղթի առնչությամբ կարդում ենք. «Բացի դրանից, Իսրայել Օրուն, ժամանակի ավանդույթին համապատասխան, տրամադրվում են նաև ստորև ստորագրված ու կնիքված «**սպիտակ թղթեր**», «**carte blanche**»՝ ըստ անհրաժեշտության դրանք լրացնելու»[129]: Մինչ օրս հստակ չէ, սակայն, թե մելիքները Օրուն **քանի** «սպիտակ» թուղթ են տվել: Այդ նույն «ճերմակ թղթերի» առկայության մասին է նշում խնդրին քաջատեղյակ և այն առաջիններից մեկը հետազոտած ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը[130]:

Անգեղակոթի ժողովում Օրուն տրված «ճերմակ թղթերի» առնչությամբ Լեոն նույնպես տարակուսանք է հայտնել: Նրա «Երկերի ժողովածու»-ի 3-րդ հատորում նշված է, որ Անգեղակոթի ժողովը Օրուն է հանձնել մելիքների ստորագրությամբ ընդամենը **մեկ** «ճերմակ թուղթ» «carte blanche», որպեսզի Հայաստանի ապագա թագավորը (ըստ ամենայնի, Հովհան Վիլհելմը՝ Ա.Հ.) այն օգտագործեր, ինչպես ինքը հարկավոր կհամարեր[131]: Մեկ այլ՝ «Խոջայական կապիտալ» աշխատության մեջ, Լեոն նշում է Օրուն լրացուցիչ տրված՝ Անգեղակոթի ժողովի անդամների կնիքներով և ստորագրություններով ամրագրված **երկու** մաքուր, չգրված «ճերմակ թղթերի»՝ «carte blanche»-ների մասին: Ընդ

---

[127] Պրոֆ. Ա. Աբրահամյանը հավանական է համարում, որ ժողովին մասնակից այդ տասը մելիքները կարող են լինել խառը՝ դարուսբաղցիներ, վայոցձորցիներ ու դափանցիներ (տե՛ս **Աբրահամյան Ա.**, *Իսրայել Օրի*, էջ 52):

[128] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ XXII և N 3, էջ 8–9, նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 239:

[129] *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 19:

[130] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 323–324:

[131] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 42:

որում, ըստ Լեոյի մեկնաբանության, իր հետ տարած այդ թղթերից **մեկը Օրին հանձնելու էր Հովհան Վիլհելմին**, իր նոր՝ Մեծ Հայաստանի թագավորության պետքերին ծառայեցնելու համար, իսկ **մյուսը պահելու էր իր մոտ,** «որպես ապացույց, որ նա ճանաչված է իբրև գլուխ և հրամանատար Մեծ Հայաստանի գլխավորների և ատենակալների»[132]: **Սրանից հետևում է, որ Օրին չի ունեցել Անգեղակոթի ժողովականների կողմից կնիքներով ու ստորագրություններով ամրագրված լրացուցիչ «ճերմակ թղթեր», որ լրացներ ու ներկայացներ, օրինակ, Ռուսաց ցարին, էլ չենք ասում, որ մելիքները նրան չէին լիազորել՝ Հայաստանի ազատագրության հարցով բանակցելու ցարի հետ:** Մնում էր, որ հանգամանքների թելադրանքով նման «նախաձեռնությունը» նա ինքը վերցներ իր ձեռքը և մի «ճերմակ թուղթ» լրացնել տար իր գրագիր Մինաս վարդապետին ու ներկայացներ Պետրոս 1-ին ցարին:

Այսպիսով, պրոֆ. Լեոյի խոսքերից հետևում է, որ Անգեղակոթում Օրուն չեն տվել այնքան «ճերմակ թղթեր», որ նա հարկ եղած դեպքում, ինչպես հաճախ նշվում է եղած գրականության մեջ, լրացներ իր հայեցողությամբ և ներկայացներ, օրինակ, ռուսաց ցարին: Իսկ այն, ինչ վավերագրերի տեսքով վկայաբերվում է Կ. Եզյանի կազմած ժողվածուում, ապա, ըստ ամենայնի դա արել են Ի. Օրին և Անգեղակոթի ժողովից հետո իր հետ Եվրոպա մեկնած Արցախի Սբ. Հակոբի վանքի վանահայր Մինաս վարդապետ Տիգրանյանը: Կարելի է ասել, որ Անգեղակոթի ժողովի անունից Պետրոս ցարին ներկայացրած գրությունը Օրին և Մինաս վարդապետը ընդամենը **կեղծել են**՝ հանուն գործի հաջողության: Այս կապակցությամբ դարձյալ Լեոն գրում է՝ «...գիտեր կեղծել (խոսքը Օրու մասին է՝ Ա.Հ.) ոչ միայն կնիքներ, այլև ամբողջ գրություններ: Ահա այդ «տաղանդի» տուրքերով ե, վոր մենք ունենք, ըստ յերևույթին, իհարկե, մի ամբողջ դիպլոմատիական դիվան Անգեղակոթ գյուղում»[133]:

Այս նույն խնդրի վերաբերյալ նախախորհրդային հրապարակումներից, օրինակ, «Մուրճ» ամսագրի խմբագիր Ա. Արասխանյանցի տե-

---

[132] **Լեո,** *Խոջայական կապիտալ,* էջ 197: Մենք չենք բացառում, որ Լեոյի երկու տարբեր աշխատություններում բերված տվյալների անհամապատասխանությունը նաև խմբագրական անփութության հետևանք լինի:

[133] Նույն տեղում, էջ 198:

ղեկացմամբ, Անգեղակոթում վճռվում է Օրուն հանձնել **երեք** աղերսի թուղթ՝ մեկը ուղղված Հռոմի պապին, մյուսը՝ Պֆալցի իշխանին, իսկ երրորդը «Ռոահոյ ցար Պետրոս Ալեքսեևիչին»[134]:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը նույնպես գտնում է, որ մելիքները Օրուն են հանձնել ստորագրված և իրենց կնիքներով հաստատված «սպիտակ թղթեր»՝ դրանք ըստ նպատակահարմարության օգտագործելու համար, սակայն չի նշվում դրանց թիվը: Այդ թղթերից հետագայում պատրաստվել են **չորս** կարևոր դիմումներ՝ ուղղված Ավստրիայի Լեոպոլդ 1-ին կայսրին, Պֆալցի կուրֆյուրստին, Հռոմի Ինոկենտիոս XII պապին և Պետրոս I-ին ցարին՝ զինական օգնության խնդրանքով[135]: Ի տարբերություն պրոֆ. Աշոտ Աբրահամյանի՝ պրոֆ. Պետրոս Հովհաննիսյանը գտնում է, որ դիմումները իբրև հենց Անգեղակոթի ժողովից են հղվել, ինչն այնքան էլ համոզիչ չէ: Բացի այդ, Լեոյի նման Պ. Հովհաննիսյանը նշում է, որ ժողովում մելիքները Օրուն են հանձնել ստորագրված ու կնքված, սակայն չգրված **մեկ** թուղթ՝ լիազորելով նրան իրենց անունից ըստ անհարաժեշտության օտագործել այն[136]:

Եվ Օրին, վերցնելով այդ թղթերը և ընկերակցելով իր անձնական քարտուղար ու նաև իբրև հայ հոգևորական շրջանակների պաշտոնական ներկայացուցիչ Ղարաբաղի Սբ. Հակոբի վանքի վանահայր (խոստովանահայր) **Մինաս վարդապետ Տիգրանյանի** (1658–1740 թթ.) հետ՝ 1699 թ. գարնանը մեծ լիազորություններով ուղևորվել է դեպի Եվրոպա: Կարելի է ենթադրել, որ այդ չգրված, սակայն ստորագրված և կնքված «սպիտակ» կամ «ճերմակ» ձևաթղթերը լրացվել են հետագայում, ըստ ամենայնի՝ Ի. Օրու և Մինաս վարդապետի կողմից, հիմնականում Վիեննայում:

Վերը ասվածից կարելի է հետևեցնել, որ Անգեղակոթի ժողովում, ի պատասխան Հովհան Վիլհելմի պաշտոնական գրության, պատրաստվել է ընդամենը **մեկ գրավոր պատասխան նամակ-գրություն**: Միաժամանակ, նկատի առնելով Հայաստանի տարածքային հեռավորությունը Եվրոպայից, որպեսզի հարկ եղած դեպքում Հայաստան գա-

---

[134] «Մուրճ», Թիֆ., 1898, թիվ 9, (սեպտեմբեր), էջ 1267:
[135] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, *Իսրայել Օրի*, էջ 52–53:
[136] Տե՛ս **Հովհաննիսյան Պ.**, *նշվ. աշխ.*, էջ 28:

լու և հետ գնալու անհրաժեշտություն չծագեր, հասկանալիորեն, Օրուն են տրվել նաև, այսպես կոչված, «ճերմակ թղթեր», որպեսզի անհրաժեշտության դեպքում օգտագործեր դրանք իբրև պաշտոնական դիմում-գրություններ: Բայց մնում է վիճահարույց, թե իրականում Օրուն և Մինաս վարդապետին քանի «ճերմակ թուղթ» է տրվել: Դժվար է դրան հստակ պատասխան տալ: Բանն այն է, որ, ինչպես քիչ հետո կտեսնենք, Օրին և Մինաս Վարդապետը, ստեղծված իրավիճակի ու հանգամանքների թելադրանքով, օգտվելով «քարթ բլանշի» իրավունքից, երբեմն իրենք են կեղծել «սպիտակ թղթերը»՝ դրանք ամրագրելով հետին թվով և կեղծելով մելիքների ստորագրությունները: Հանդիպում են, նույնիսկ, մեկ մարդու ձեռագրով ստորագրություններ, նաև դրված սարքովի կեղծ կնիքների դրոշմներ:

Միջանկյալ հավելենք, որ, ըստ ամենայնի, քաղաքական դրդապատճառով՝ պաշտոնանկության երկյուղով, Օրու հրավիրած Անգեղակոթի գաղտնի խորհրդաժողովին որպես պատվիրակ կամ ներկայացուցիչ չեն մասնակցել ո՛չ Տաթևի վանքից և ո՛չ էլ Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունից: Իսկ Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսի և Ի. Օրու սառը հարաբերությունների հարցում Լեոն առաջ է քաշում մի վարկած, ըստ որի՝ Օրին 6 «իշխանների» հետ իբրև թե մտադիր է եղել դիմել Գանձասարի կաթողիկոսին՝ հասնելու նրան, որ Էջմիածնի կաթողիկոսությունը փոխարինվի Աղվանիցով: Նման հարկադրական քայլի դիմելու պատճառ է համարվել այն, որ Էջմիածինը դեմ է եղել դավանափոխությանը, մինչդեռ Հայաստանի ազատագրման գլխավոր նախապայմանը կաթոլիկության ընդունումն էր[137]: Ստացվում է, որ հանուն Հայաստանի ազատագրության՝ մտադրություն է եղել ոչ միայն դավանափոխության, այլև դրան հասնելու ճանապարհին կատարել անգամ կաթողիկոսական բարձրագույն աթոռի (Մայր Աթոռի) մրցակցային (գավազանակռվային) փոփոխություն: Հարկ է նշել, որ Աղվանից

[137] **Լեո,** *Խոջայական կապիտալ,* էջ 196:

(Գանձասարի) կաթողիկոսությունն իր հոգևոր (արքեպիսկոպոսական) կարգավիճակով երկրորդն էր Ամենայն Հայոց կաթողիկոսից հետո[138]:

Մելիքները նամակ են պատրաստել նաև Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ին կայսրի անունով: Խնդրին քաջատեղյակ հետազոտող Ա. Հովհաննիսյանը հնարավոր է համարում, որ մելիքները նամակ գրած լինեն նաև Տոսկանայի Մեծ դուքս Կոզմաս 3-րդ Մեդիչիին: Անգեղակոթի ժողովը, հայ ժողովրդի անունից, փաստորեն առանց հայ հոգևոր դասի մասնակցության, պատրաստել էր նաև մի աղերսագիր ուղղված Հռոմի պապին՝ հայրենիքի ազատագրման դիմաց պատրաստ լինելով «մտնելու Սբ. Պետրոսի հոտի մեջ»[139]:

Կ. Եղյանի ժողովածուում կա մելիքների անունով Օրուն տրված նույն 1699 թ. ապրիլի 29-ի ամսաթվով մեկ այլ գրություն՝ ուղղված Ռուսաստանի ցար Պյոտր Ալեքսևիչին (Պետրոս 1-ին), գրեթե նույն բովանդակությամբ, ինչպիսին որ ուղղված է եղել Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին[140]: Լեոն ևս նշում է, որ Անգեղակոթի ժողովում աղերսագիր է պատրաստվել նաև Պետրոս Մեծի անունով, որով Օրին լիազորություն ստացավ բանակցություններ սկսել նաև ռուսաց արքունիքի հետ[141]: Սակայն Կ. Եղյանի բերած թիվ 6 վկայագրից պարզվում է, որ ռուսական ցար Պյոտր 1-ին ուղղված գրությունը տրվել է այն հաշվով, որ Հայաստանի ազատագրության նպատակով արշավանք իրականացնելիս՝ պֆալցյան-եվրոպական զորքերը կարողանան Հայաստան հասնել ոչ այլ կերպ, քան Ռուսաստանով: Ավստրիայի Հաբսբուրգյան կայսր Լեոպոլդ I-ի հետ հանդիպման ժամանակ, երբ Օրին ցանկություն էր հայտնել, որ նա նպաստի Հայաստանի՝ պարսկական լծից ազատագրմանը, կայսրը հասկացնել էր տվել, որ առանց մոսկովյան ցարի հետ գործակցության՝ հնարավոր չի լինի արշավանքը հաջող ավարտին հասցնել[142]: Դրա համար էլ դիմել են ցարին՝ թույլտվություն ստանալու

---

[138] Տե՛ս **Մկրտումյան Լ.**, *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII–XIX դդ.*, Եր., 2006, էջ 12:

[139] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 335:

[140] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, թիվ 6, էջ 17–20:

[141] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 340:

[142] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ XXIV:

նրա երկրով նախատեսվելիք արշավանքը իրականացնելու համար[143]: Կ. Եզյանի կազմած ժողովածուում կան այդ գրությունների լատիներեն թարգմանությունները, նաև՝ դասական հայերեն բնագրերը[144]:

Այս առնչությամբ, կարծում ենք, որ ճիշտ է նկատել ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը, որ հանագմանքների թելադրանքով, ցարին ներկայանալուց առաջ **Օրին է կազմել տվել** այդ գրությունը՝ հայ մելիքների անունից նույն **ապրիլի 29-ի** ամսաթվով «**ճերմակ թղթի**» իրավունքով Պետրոս ցարին ներկայանալու համար: Բայց «Մոսկովի թագավոր ինքնակալ ռուսին» են դիմում ոչ միայն նրա տարածքով եվրոպական զորք փոխադրելու, այլև Աստվածային զորությամբ աղաչում-պաղատում են, որ հենց նրա զորքերի օգնությամբ Հայաստանը ազատագրվի անհավատների լծից: Նամակով դիմում են աշխարհի երեք կողմերի ինքնակալ թագավորին, որ իրենց աղաչանքը լսի և գթալով ազատություն բերի «այս տառապեալ գերի քրիստոնէիցս»[145]:

Օրու ջանքերով կազմված այդ նույն գրությունում դարձյալ կարդում ենք. «Կու խնդրեմք և կաղերսեմք առ քո աստուածասիրութեանդ որ կարող ես ա՛յ (նշանակում է՝ աստծո) ողորմութեամբն ազատել զմեր խեղճ ազգն ի պէս պէս պատահմանացն անօրինաց»[146]: Մելիքների անունից Պյոտր Ալեքսեևիչին ուղղված նամակով ցանկություն էին հայտնում՝ հնուց ի վեր իշխանաց զարմին պատկանող Ի. Օրու հետ դաշինք կնքվի[147]: Նամակի վերջում դրված են այն նույն 10-ը մելիքների, այդ թվում Մելքոնի որդի Սաֆրազի անունները: «Թիվն ՌՃԽԸ, ի գյուղաքաղաք Ընկեղակութ. Ի Ապրիլի ի՛թ (այսինքն, հայկական ամսաթվով՝ 29՝ Ա.Հ.)»[148]: Սա իբրև թե մելիքների կողմից Օրուն տրված նամակի ռուսերեն տարբերակն է, որը հայերենից թարգմանվել և ներկայացվել է ցարին[149]:

---

[143] Տե՛ս Նույն տեղում, էջ XXIII, նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 241:

[144] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 7 և 8:

[145] Նույն տեղում, վավ. թիվ 6, էջ 17:

[146] Նույն տեղում, էջ 18:

[147] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

[148] Նույն տեղում, էջ 20:

[149] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 8, էջ 24–27:

Այստեղ ծագում է մեկ այլ դժվար բացատրելի անորոշություն: Բանն այն է, որ Անգեղակոթի 1699 թ. ապրիլի 29-ի՝ Հովհան Վիլհելմին և մյուսներին ուղղված նամակ-գրություններից դժվար չէ նկատել, որ հայ մելիքները ամենևին էլ **մտադիր չեն եղել դիմելու հունադավանուղղափառ ռուսին՝ իրենց ազատագրելու խնդրանքով**, ավելին, ինչպես արդեն ասվել է, նախընտրել են մնալ անհավատների ստրուկը, քան դիմեն, խնդրեն **հունադավան հերձվածին՝** Հայաստանն ու հայերին ազատագրելու: Տակավին երիտասարդ պատմաբան Ա. Հովհաննիսյանը 1913 թ. Մյունխենում հաջողությամբ պաշտպանած ավարտաճառում, հղում անելով Կ. Եզյանի կազմած փաստաթղթերի ժողովածուին, նշում է, որ հայերը ձեռնպահ են մնացել Ռուսաստանի օգնությունից հենց «յունական հերձուածի» պատճառով[150]: Այլ խոսքով, զուտ դավանական ենթատեքստով՝ կաթոլիկ, թե հունադավան, հայ մելիքները բնավ մտադրություն չեն ունեցել, որ ռուսական զորքերը ևս մասնակցություն ունենան կազմակերպվելիք այդ զորարշավին: Նշանակում է, այն ժամանակների հայ հանրույթը, համենայն դեպս վերնախավը, դավանական առումով, համեմատության մեջ **կաթոլիկ եկեղեցին** գերադասել է **հունադավան ռուսական ուղղափառ** համարվող հերձվածից, թերևս, հիշելով Անիի անկման գործում Բյուզանդիայի խարդավանքները[151]: Բայց մյուս կողմից էլ՝ Անգեղակոթի ժողովով այդ նույն մելիքները «ճերմակ թղթեր» տալով լիազորել էին Ի. Օրուն հարկ եղած դեպքում

---

[150] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, էջ 54: Տե՛ս նաև **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 323:

[151] Այս կապակցությամբ հարկ ենք համարում տեղեկացնել, որ 5-րդ դարի Քաղկեդոնի տիեզերական ժողովի ժամանակներից միաբնակ և երկաբնակ կրոնադավանաբանական բանավեճերի համատեքստում, արդեն 11-րդ դարի կեսերին Բագրատունյաց Անիի մայրաքաղաքի գրավման շրջանից անզուսպ ընչաքաղցությամբ տարված հույն երկաբնակ եկեղեցական (կղերական) իշխանությունները, բացի հայ հոգևոր վիճակներն ու վանահայրությունները տիրելուց, կրոնական-հավատքային հալածանքներ էին տանում հայ ուղղահավատ միաբնակների դեմ, իսկ փորը ավելի ուշ Ռոմանոս Դ Դիոգենես կայսը (1067–1071)՝ «իր արշավանքը սկսելուց առաջ երդվել էր, որ վերադառնալուց հետո կոչնչացնե հայկական հավատը» (տե՛ս **Մանանդյան Հ.**, *Երկեր*, հ. Գ, էջ 27): Ահա սա կրոնադավանաբանական այն անհանդուրժելի շերտանստվածքն էր, որ գալիս էր միջնադարից և քաղաքական երանգ էր ստանում արդեն Ի. Օրու ժամանակներում:

հայրենիքի ազատագրության խնդրով դիմել ում որ հարկն է՝ կարևորություն չտալով կրոնական-դավանական գործոնին:

### *5. Իսրայել Օրու «Պֆալցյան ծրագիրը»*

Տեղեկություններ կան, որ Ի. Օրին հայրենիք գալով 10–20 օրով, գործին չվնասելու համար, գաղտնի է մնացել քրոջից ու եղբորից (անունը Վարդան էր): Գաղտնիքը չբացահայտելու համար, իբրև անծանոթ հյուր, նա ընդամենը մի գիշեր է անցկացրել հայրենի տանը՝ իր ծննդավայր Վայոց ձորի **Մարտիրոս** գյուղում, այնուհետև շտապել է դեպի Եվրոպա՝ Կ. Պոլիս, Իտալիա և Բավարիա՝ կուրֆյուրստի մոտ: 1699 թ. երկրորդ կեսին նա Մինաս վարդապետ Տիգրանյանի հետ Կ. Պոլսով և Իտալիայով հասել է Գերմանիա՝ Դյուսելդորֆ՝ ներկայանալու համար կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին, սակայն հայտնի է, որ վերջինիս վատառողջության (հիվանդության) պատճառով Օրին ընդունելության չի արժանացել և միայն ամիսներ անց՝ 6-ամսյա ընդմիջումից հետո է մելիքների անունից կուրֆյուրստին հանձնել **սեպտեմբերի 22-ի** ամսաթվով նամակ-գրությունը ու ներկայացրել Հայաստանի ազատագրության **36**-կետանոց մի ընդարձակ ծրագիր, որը հայտնի է **«Պֆալցյան ծրագիր»** անվանումով: Դրանում խոսվում էր ապագա արշավանքի հնարավոր միջոցների, ուժերի և ուղիների, պարսկական լծից Հայաստանի ազատագրման և Հովհան Վիլհելմի գլխավորությամբ հայ կաթոլիկ թագավորության հիմնելու մասին: Օրու ծրագրային այն կետը (անկախ դրա իրատեսական լինելու աստիճանից), որ «Մեծ Հայաստանը» անհավատ-անօրենների լծից ազատագրելով՝ Պֆայլցի կուրֆյուրստ **Հովհան Վիլհելմը** կդառնա Հայաստանի թագավոր, ինքնին նշանակում է, որ խոսքը վերաբերում էր ոչ միայն Հայաստանի ազատագրությանը, այլև, իբրև դրա տրամաբանական շարունակություն, **անկախությանը**: Ընդ որում, ապագա արշավանքը պիտի կրեր խաչակրած արշավանքի բնույթ՝ Քրիստոսի խաչելության և սբ. Գրիգոր Լուսավորչի պատկերնե-

ռով[152]: Ըստ Կ. Եզյանի կազմած ժողովածուի վավերագրերի՝ 36 կետերից բաղկացած, ընդամենը 16 լայնադիր էջանոց ծրագրի ֆրանսերեն լեզվով գրված տեքստը անձամբ նա չի գրել, այլ թելադրել կամ գրել է տվել ուրիշի միջոցով[153]: Ինչպես Ա. Հովհաննիսյանը, նույնպես և Լեոն ու մյուս հետազոտողները փաստում են, որ Օրին անձամբ ինքը չէր գրում, այլ թելադրում էր կամ գրել էր տալիս ուրիշին[154]:

Համաձայն կազմված ծրագրի՝ Արևելյան Հայաստանը ազատագրելու նպատակով, եվրոպական երեք երկրների (Պֆայլցի, Ավստրիայի և Տոսկանայի) մասնակցությամբ, 1700 թ. գարնանը՝ մայիսի վերջերին պիտի սկսվեր դեպի Անդրկովկաս ծրագրվելիք զորարշավը, ըստ էության, **Հռենոսի ափերից մինչև Թավրիզ**: Այդ հեծյալ և հետևակ զորամասերը անցնելու էին Բոհեմիայի, Լեհաստանի և Ռուսաստանի տարածքներով, որոնք Վոլգա գետով պիտի փոխադրվեին Աստրախան, որտեղից էլ նավերով Կասպից ծովով, Շիրվանի ծովեզրով առաջ շարժվելով՝ պիտի գրավեին Շամախին և ճանապարհ հարթեին Արևելյան Հայաստան մուտք գործելու համար: Օրու ծրագրով՝ Արևելյան Հայաստանի գրավման համար կպահանջվեր 20–25 օր:

Տեղին է ակադեմիկոս Գ. Գալոյանի դիտարկումն այն մասին, որ հայ ազատագրական շարժման գործիչների միտքը սահմանափակված չի եղել միայն Արևելյան Հայաստանի ազատագրմամբ, այլ նկատի է առնվել ամբողջ Հայաստանը: Եվ պատահական չէ, որ հետագայում Ի. Օրին Պետրոս Մեծին է ներկայացրել ամբողջ Հայաստանի քարտեզը[155]: Վաստակաշատ պատմաբան Լեոն ևս, հենվելով Օրու ռուսաց ցարին ուղղված խնդրագրերից մեկի վրա, նշում է, որ ստանալով գնդապետի զինվորական աստիճան՝ Օրին Պետրոսին ներկայացրեց **Հայաստանի քարտեզը**[156]: Փաստենք, որ հայ պատմագրության մեջ Պետրոս 1-ին ներկայացված քարտեզը առաջին անգամ ի հայտ է բերել հայ-ռուսական հարաբերությունների քաջագիտակ մասնագետ Վ. Ոս-

---

[152] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 9, էջ 28–44:
[153] Տե՛ս նույն տեղում:
[154] **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 200:
[155] Տե՛ս **Գալոյան Գ.Ա.**, *Պատմության քառուղիներում*, էջ 80:
[156] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 431:

կանյանը՝ Մոսկվայի Հին ակտերի արխիվում (ԱԳԱԴԱ), մի փաստաթուղթ, որը պատմական, քաղաքական և գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում[157]:

Ի դեպ, 1703 թ. նոյեմբերի 15-ին Պետրոս 1-ին ցարին ուղղված Օրիի նամակի և դրան կցված Անդրկովկասի քարտեզը մի կողմից ցույց են տալիս Ի. Օրու նպատակը՝ քարտեզում պատկերված Հայաստանի ազատագրումը, իսկ մյուս կողմից՝ Պետրոս ցարի՝ տարածաշրջանի թարմ քարտեզ ունենալու ցանկությունը, որը պիտի ծառայեր օրեցօր հզորացող Ռուսաստանի ծրագրերին: Իհարկե, Օրու ծրագրով առաջնահերթը Արևելյան Հայաստանի ազատագրումն էր, քանզի պատմականորեն կարելի է հասկանալ, որ հին և միջին դարերում Հայաստանի պետականությունները իրենց երբեմնի մայրաքաղաքներով՝ Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին, Անի և այլն, հիմնականում գտնվել են արևելահայ հատվածում: Բացի այդ՝ Արևելյան Հայաստանում էր հիմնվել ու գործում հայ հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը և այլն: Այս ամենով հանդերձ՝ հայ ազատագրական շարժման գործիչների հեռագնա պլաններում է եղել վերջ դնել նաև Հայաստանի ու հայ ժողովրդի դարերով **մասնատված** վիճակին, իհարկե, արտաքին զինական ուժի օգնությամբ:

Վերադառնալով Օրու կազմած «Պֆայլցյան ծրագրին», նշենք, որ դրանում անկախ պետականության վերականգնման գործում նշանակալի տեղ էր տրվում տեղում **հայկական ապստամբական զինուժի** մասնակցությանը, ինչը դրվատանքի արժանի գաղափար էր: Սակայն ծրագրի կազմողը, հավանաբար եվրոպացիների կողմից զինարշավի կազմակերպիչներին շահագրգռելու ու խրախուսելու նպատակով, նշել էր մի պատկառելի թիվ՝ 192 հազար մարդ[158]: Լեոյի ներկայացրած տվյալներով՝ «եվրոպական երեք երկրների 5–6-հազարանոց զորքին պիտի ընդառաջ գային հայերը՝ պատերազմի դաշտ դուրս բերելով, ոչ ավել ոչ պակաս, ավելի քան 200 հազար մարդ»[159]: Իհարկե, սա չափա-

---

[157] **Ոսկանյան Վ.**, *Իսրայել Օրու կողմից Պետրոս 1-ին ներկայացված նորահայտ բարոյագր* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1961, թիվ 3–4, էջ 297–306:

[158] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 9, էջ 35–36:

[159] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 338:

զանցություն է՝ Լեոյի իսկ գնահատականով. «ֆանտաստիկական չափազանցություն»[160], որովհետև, եթե հաշվի առնենք թեկուզ միայն այն հանգամանքը, թե XVII դարասկզբին միայն Շահ Աբբաս 1-ինը արևելահայերի ինչպիսի զանգվածային տեղահանություններ էր կազմակերպել ու տասնյակ հազարավոր հայության գաղթականության վերածել, դա ինքնին ցույց է տալիս, որ հնարավոր չէր արևելահայերից 200 հազարի հասնող, այն էլ՝ մարտունակ զինուժ ձևավորել:

Չնայած այս ամենին, կարելի է վստահաբար ասել, որ եթե անգամ կուրֆյուրստ Հովհան Վիլհելմը, կայսր Լեոպոլդ 1-ինը և Տոսկանայի Մեծ դուքսը զուտ քրիստոնեական-մարդասիրական նկատառումներից ելնելով, ցանկանային միացյալ արշավանք կազմակերպել դեպի Հայաստան, ապա դա այն ժամանակների պայմաններում միանգամայն անիրականալի կլիներ: Մյուս կողմից էլ, եթե նկատի ունենանք, որ դեռ նոր էր ավարտվել Թուրքիայի դեմ եվրոպացիների արյունալի պատերազմը, և նոր էր կնքվել 1699 թ. հունվարի 26-ի Կառլովիցի հաշտությունը, ապա ռազմաքաղաքական առումով բնավ որևէ շահագրգռություն չկար դեպի արևելք մի նոր ռազմարշավ կազմակերպելու հարցում: Բացի այդ, Ավստրիայի Հաբսբուրգյան Լեոպոլդ 1-ին կայսրը պատրաստվում էր Կառլովիցի հաշտությունից հետո պատերազմ վարել Ֆրանսիայի Բուրբոնյան Լյուդովիկոս 14-րդի դեմ՝ պատմությանը հայտնի Իսպանիայի գահաժառանգության համար (1702–1714) պատերազմին, որոնցից յուրաքանչյուրը հավակնում էր իր թեկնածուին՝ որդուն կամ թոռանը, դնել երկրի (Իսպանիայի) գահին և այլն:

Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի գնահատմամբ՝ Օրիի «Պֆալցյան ծրագիրը» վերին աստիճանի ուշագրավ վավերագիր է **հայ ազատագրական պատմության համար** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[161]: Նույն պատմաբանի արժևորմամբ՝ «Պֆալցյան ծրագրում», որպես առաջին փաստաթուղթ, «ակնբախ է **հայ ազգային-քաղաքական գիտակցության** սկզբնավորումը (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[162]: Մեր կարծիքով, իր անիրատեսությամբ, թույլ տրված կեղծիքներով ու չափազանցություն-

---

[160] **Լեո,** *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 339:
[161] **Հովհաննիսյան Ա.,** *Դիվագներ...*, գ. 2, էջ 384:
[162] Նույն տեղում, էջ 386:

ներով, ուռճացված թվական տվյալներով հանդերձ՝ Պֆալցյան կամ Դյուսելդորֆյան կոչված ծրագիրը **փաստորեն առաջին գրավոր փաստաթուղթն է**, որում, նոր գաղափարի առումով, հայ աշխարհիկ գործչի կողմից ուրվագծվում էր՝ Հայաստանի ազատագրման նպատակով արտաքին (եվրոպական) ուժերով զորարշավ կազմակերպելու մասին՝ Հռենոսի ափերից մինչև Թավրիզ: Բայց մյուս կողմից, դժվար է պատկերացնել, որ ծրագրվելիք այդ զորարշավի՝ զորք-զինուժի տեխնիկական ու քաղաքական անիրատեսությամբ հանդերձ՝ 17–18-րդ դարերի Հայ առաքելական եկեղեցու հավատավորը կարող կլիներ, արդյո՞ք, ընկալել և ընդունել թեկուզ ազատագրված հայ-կաթոլիկական միասնական հավատք ունեցող թագավորություն, որի արքան պիտի լիներ կաթոլիկ հավատք կրող Հովհան Վիլհելմը:

## *6. Հարցի պատմագիտական գնահատականը*

Հանրագումարի բերելով Ի. Օրու եվրոպական առաքելությունը, հարկ է արձանագրել, որ չնայած հայ պատմագրության մեջ Օրու եվրոպական գործունեությանը տրված ոչ միանշանակ գնահատականներին, նա եղել է հայ ազատագրական գաղափարին նվիրյալ, ինքնատիպ անհատականություն: Կարելի է ասել, որ **Ի. Օրին առաջին քայլն արեց՝ Հայաստանի ազատագրության հարցը** (ինչն այն ժամանակներում անվանում էին նաև «Հայերի կամ Հայկական հարց») **ձերբազատելու կրոնական երանգավորումներից և դրան տալ գործնական աշխարհիկ-քաղաքական գաղափարի ու պայքարի բնույթ**: Հաջորդ քայլը պիտի աներ նրա գործի հետագա արժանավոր շարունակող՝ **Հովսեփ Էմինը**:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը Ի. Օրուն համարում է՝ «փաստորեն հայ առաջին դիվանագետը»[163]: Բայց ասվածը ամենևին էլ դեռ չէր նշանակում, թե հայ ազատագրական շարժումն ու պայքարը դուրս էր եկել հայ հոգևոր շրջանակներից և ձեռք բերել զուտ աշխարհիկ-քաղաքական

---

[163] **Աբրահամյան Ա.**, *Իսրայել Օրի*, էջ 3:

բնույթ: Այս հարցի առնչությամբ տեղին է պրոֆ. Լեոյի քննադատական դիտարկում-դիտողությունն այն մասին, որ հայ ժողովրդի պատմության դժբախտություններից է այն, որ պատմության ողջ ընթացքում, սկսած մեծահռչակ Ներսես Մեծից ու Սահակ Պարթևից, դիվանագետի դերակատարությունը գերազանցապես ստանձնել է հոգևորականությունը, ինչը փաստորեն շարունակվել է ընդհուպ մինչև 20-րդ դարի սկզբները[164]: Ի. Օրին, հետագայում Հ. Էմինը ընդամենը հայ ազատագրական պայքարի մեկ-երկու առանձին դրվագ են ներկայացնում: Հետագա շրջանում այդ շարժման մեջ ավելի կամ պակաս չափով իրենց քաղաքական դերակատարությունն ունեցան հայ հոգևոր մյուս ճանաչված դեմքերը՝ Հովսեփ արք. Արղությանը, Ներսես Աշտարակեցին, Մկրտիչ Խրիմյանը, Ներսես Վարժապետյանը, Մաթեոս Իզմիրլյանը, Մաղաքիա Օրմանյանը, Գևորգ Ե Սուրենյանցը և այլք: Այս ամենի պատճառներից մեկն այն հանգամանքն էր, որ Հայոց պետականության կորստի և Հայաստանի բաժանվածության պայմաններում, նրա պայքարի քաղաքական կրողի դերում հանդես են եկել եկեղեցին ու նրա հոգևոր առաջնորդները, և ինքնաբերաբար շարունակվել է այդ ավանդույթը: Այս կապակցությամբ ճանաչված գրականագետ Ս. Սարինյանը նկատել է, որ Հայաստանի երկու հատվածների բաժանվածությունն «իր կնիքն էր դնում ազգային հոգեբանության վրա», թեև հայ եկեղեցին այն պահում էր որպես «մի միացյալ ժողովուրդ և մի ընդհանուր Հայաստան»[165]:

Այդպիսով, կարելի է ընդհանրացնել, որ պատմագիտական գրականության մեջ միանշանակ չէ Օրիի կյանքին ու գործունեության տրված գնահատականը: Ի. Օրու պֆայլցյան գործունեության շրջանը «**արկածախնդրական**» է բնութագրել XIX դարավերջին (1894 թ.) Օրու կյանքին ու գործունեությանը վերաբերող վավերագրերն առաջինը ուսումնասիրած, Մյունխենի համալսարանի պրոֆեսոր **Կարլ ֆոն Հայգելը**[166]: Նույնպիսին է նաև մեծանուն հայագետ, հայր Ղ. Ալիշանի՝ Ի.

---

[164] Տե՛ս **Լեո,** *Անցյալից (Հուշեր, յոդվեր, դատումներ),* Թիֆլիս, 1925, էջ 261:

[165] **Սարինյան Ս.,** *նշվ. աշխ.,* էջ 19:

[166] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը,* էջ 484:

Օրուն տված գնահատականը՝ «**բաղդախնդիր**»[167]: Իսկ հայ պատմագրության երախտավոր Լեոն ակնարկում է, որ Մ. Չամչյանն անգամ չի հիշատակում Օրու անունը[168]: Դրան հակառակ, նա բարձր է գնահատում Օրու «Պֆալցյան ծրագիրը»՝ այն համարելով «Հայոց պատմության համար եզակի և անչափ կարևոր վավերագիր»[169], «հայ **քաղաքական մտքի** խոշոր հուշարձան»[170]: Օրու ծրագիրը նույն կերպ բարձր է գնահատել ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը, իբրև հայ ազատագրական առաջին ծրագիր, որում «ակնբախ է հայ ազգային-քաղաքական գիտակցության սկզբնավորումը»[171]: Իսկ ճանաչված պատմաբան, աղբյուրագետ Պ. Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ «Պֆալցյան ծրագիրը կազմված էր դիվանագիտական բարձր հմտությամբ ու խորաթափանցությամբ», «հայ ազատագրական շարժման պատմության մեջ սա չուներ իր նախադեպը»[172]: Այլ խոսքով, **Օրու կազմած «Պֆալցյան ծրագիրը», չնայած իր բացերին ու անիրատեսական լինելուն, առաջին մշակված վավերագիր փաստաթուղթն է, որ հայ ազգային-ազատագրական շարժմանն ու պայքարին տալիս է ծրագրված առարկայական բովանդակություն**:

Այդոմանդերձ, նման ոչ միանշանակ գնահատականներով հանդերձ, կարելի է հավելել, որ Օրիի կյանքն ու գործունեությունը գնահատելի է նաև այն առումով, որ նա առաջիններից էր, որ հայ ազատագրական շարժմանը, կղերական շրջանակներից դուրս բերելով՝ տվեց **աշխարհիկ- քաղաքական** բնույթ: Հայ ազատագրական մտքի (գաղափարի) առումով ընկալելի ու գնահատելի է, որ փորձ արվեց արտաքին՝ եվրոպական արշավանքը զուգակցելու տեղացիների՝ հայերի ու վրացիների ապստամբության ու զինված պայքարի հետ: Գնահատելի է, որ Օրիի առաջ քաշած ազատագրական գաղափար-նպատակադրումները, կազմած ծրագիրը, չնայած այն ժամանակների պայմաններում իրագործելու անիրատեսությանը, այնուամենայնիվ, դրանք վերջին

---

[167] **Ալիշան Ղ.**, *Միսական*, էջ 212:
[168] **Տե՛ս Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 340:
[169] Նույն տեղում, հ. 3, էջ 48:
[170] Նույն տեղում, էջ 65:
[171] **Հովհաննիսյան Ա.**, *Դիվագիտ...*, գ. 2, էջ 385:
[172] **Հովհաննիսյան Պ.**, *նշվ. աշխ.*, էջ 29:

հաշվով կոչված էին բյուրեղացնելու Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման և պետականության վերականգնման տեսլականը:

Այսպիսով, սկսած ուշ միջնադարից Մերձավոր Արևելքի երկու բռնատիրությունների՝ սասանյան Պարսկաստանի և օսմանյան Թուրքիայի գերիշխանության տակ հայտնված Հայաստանն ու հայ ժողովուրդը, նրա հոգևորական և աշխարհիկ գործիչները, բնականաբար, փորձել են ուղիներ գտնել ազատագրելու հայրենիքը օտարների տիրապետությունից և վերականգնելու հայոց անկախ պետականությունը: Այդ նպատակին հասնելու ճանապարհին հայ հանրային ընկալումներում առկա է եղել մի քանի հոսանք, որոնցից տիրապետող է եղել արտաքին քրիստոնյա երկրի օգնությանը դիմելու նպատակադրումը (գաղափարը):

Այդ տեսլականը դարերից եկած ավանդույթի, անգամ լեգենդ-տեսիլքների ձևով, սկզբում ուղղվեց դեպի **Արևմուտք**՝ արևմտյան քրիստոնյա երկրների, նաև Հռոմի պապի օգնությամբ ու աջակցությամբ, անգամ դավանափոխ լինելու պայմանով կարողանալ ազատագրել հայրենիքը անհավատների լծից:

XVII դարավերջին այդ նպատակի իրականացման առաջնեկը դարձավ հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրին, որը համառ հետևողականությամբ ջանքեր թափեց իրական հողի վրա դնել, ծրագրային ձևակերպում տալ ու փորձել արտաքին ուժերի օգնությամբ ազատագրել Հայաստանը և վերականգնել հայոց պետականությունը: Սակայն պատմական այդ ժամանակաշրջանը, հանգամանքները, օտար երկրների ազգային-պետական շահերը, Հայաստանի տարածքային կտրվածությունը և այլն ցույց տվեցին, որ տակավին անիրական է այդ ծրագրի կենսագործումը:

Իր անիրատեսությամբ, նաև թույլ տրված կեղծիքներով ու ուռճացված թվական տվյալներով հանդերձ, «Պֆալցյան ծրագիրը» հայ ազատագրական մտքի պատմության մեջ **փաստորեն առաջին գրավոր փաստաթուղթն է**, որտեղ, նոր գաղափարի իմաստով, հայ աշխարհիկ գործչի կողմից ուրվագծվում է Հայաստանի ազատագրման նպատակով արտաքին ուժերով զորարշավ կազմակերպելու մասին՝ Հռենոսի ափերից մինչև Թավրիզ: Միաժամանակ, Օրին իր «Պֆալցյան ծրագ-

րով» հայ ազատագրական շարժումը և դիվանագիտական բանակցությունները դուրս բերեց հոգևորականների կրոնադավանաբանական մակարդակից և դրեց աշխարհիկ գործնական ռազմաքաղաքական պայքարի հիմքերի վրա: Հայ ազատագրական մտքի (գաղափարի) տեսակետից ընկալելի ու գնահատելի է այն, որ նա առաջ քաշեց արտաքին՝ եվրոպական արշավանքը զուգակցել տեղացիների՝ հայերի ու վրացիների ապստամբության ու զինված պայքարի հետ: Պատմության փորձի ու դասերի առումով ուսանելի է այն, որ այն, ինչը հնարավոր չեղավ իրականացնել այն ժամանակների պայմաններում, այնուամենայնիվ, առաջ քաշված գաղափարներն ու ծրագրային նպատակադրումները կոչված էին հետագայում ծառայելու Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման և պետականության վերականգնման տեսլականին:

Եվ վերջապես, Ի. Օրու կյանքի ու գործունեության երկրորդ հատվածը պիտի նշանավորվեր ժամանակի ու հանգամանքների հրամայականով դեպի դարձյալ քրիստոնյա, աշխարհագրորեն Հայաստանին ավելի մոտ ու ռազմաքաղաքականապես ավելի իրատեսական զորեղացող մի երկիր՝ **Ռուսաստան** առաքելությամբ, դրանով էլ պիտի սկսվեր նրա գործունեության երկրորդ շրջանը, ինչն էլ պիտի սկզբնավորեր հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշումը:

# ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

# ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԺՈՂՈՎՐԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Ժամանակագրականորեն 1700 թվականին ավարտվում է Ի. Օրու գործունեության, այսպես կոչված, **եվրոպական** փուլը, իսկ 1701 թվականից՝ սկսվում **ռուսաստանյանը**, որը տևել է ընդամենը տասը տարի, դարձյալ հարուստ բովանդակությամբ, կազմված ծրագրով ու գործողումներով: Նա պիտի դառնար հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման սկզբնավորողը: Նրա քաղաքական գործունեության բարձրակետը եղավ հանդիպումը Պետրոս Մեծի հետ: Սակայն Ի. Օրու բեղուն գործունեությունը ընդհատվեց անսպասելի մահով: Նա փորձեց Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության հարցը կապել դեպի Կովկասյան տարածաշրջան Ռուսաստանի ներթափանցման հեռագնա ռազմաքաղաքական շահերին: Հայաստանի ազատագրման հարցում դեպի Ռուսաստանը կողմնորոշվելու Օրու թափած քաղաքական-դիվանագիտական ջանքերը անհրաժեշտաբար պիտի արձագանքներ ու շարունակություն գտնեին հետագայում: Դրանք պիտի ստանային գործնական նոր բովանդակություն, ինչպիսին որ դարձավ Պետրոս Մեծի Կասպիական կոչված արշավանքը և դրան ուղեկից 1720-ական թվականների Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարը:

## *1. Ի. Օրու դեպի Ռուսաստան ուղևորման հարցի շուրջ (պատմագրություն)*

Հայ պատմագրության մեջ Ի. Օրու քաղաքական գործունեությանը տրված ոչ միանշանակ գնահատականով հանդերձ, անշուշտ, անուրանալի է նրա խաղացած դերը XVII դարավերջի և XVIII դարասկզբի հայ ազատագրական շարժման պատմության մեջ, նրա կազմած ծրագրե-

ը, առաջ քաշած գաղափարները և, ընդհանրապես, նրա քաղաքական-ճանապարհորդական դեգերումները (ոդիսականը): «Զուր չէր գուցե,- նկատում է «Դրվագների» հեղինակ Ա. Հովհաննիսյանը,- Օրին համեմատում է իրեն Կոլոմբոսի հետ»[1]: Իր հերթին, վաստակաշատ պատմաբան Լեոն, առանց վարանելու, Ի. Օրուն դասում է խոջայական կապիտալի (վաճառականության) ներկայացուցիչների շարքին[2]: Դրա հետ մեկտեղ նա ընդգծում է բանակցություններ վարելու Օրու դիվանագիտական ունակությունները[3]:

Հանգամանքների թելադրանքով, եվրոպական երեք երկրների տիրակալների՝ Պֆալցի Հովհան Վիլհելմ կուրֆյուրստի, Ավստրիայի Լեոպոլդ 1-ին կայսրի և Տոսկանայի (Ֆլորենցիայի) Մեծ դուքս Կոզմաս 3-րդի հետ եռակողմ (անմիջական) զինակցության չկայացումը, կամա թե ակամա, հարկադրում է Ի. Օրուն, հանուն հայրենիքի ազատագրության, **մի կողմ թողնելով դավանական գործոնը**, դիմել եվրոպական մեկ այլ երկրի օգնության: Այս անգամ նա իր առաքելությունն ուղղում է դեպի **Ռուսաստան**: Դա Ի. Օրուն և նրա քարտուղար Մինաս վարդապետին հասկացրել էին Հովհան Վիլհելմն ու Լեոպոլդ 1-ինը: Այսպես՝ վերջինս, չմերժելով հայերին ազատագրելու Օրիի խնդրանքը, նրան խորհուրդ է տվել դիմելու Ռուսաստանի օգնությանը, քանզի «առանց ռուսաց թագավորի համաձայնության և աջակցության չէ կարելի զորք ուղարկել Կասպից ծովի ափերը»[4]: Լեոյի կարծիքով, Ռուսաստանի օգնությանը դիմելու միտքը (խորհուրդը) Օրուն տվել էր Լեոպոլդ 1-ին կայսրը: Նկատենք, որ **Ռուսաստանին դիմելու ազդակը** Ի. Օրին ստացել է եվրոպական բարձր շրջաններից և այնպես չէ, որ Ռուսաստան գալը եղել է նրա անձնական նախաձեռնությունը, մի հանգամանք, որ զանց է առնվել խորհրդային պատմագրության մեջ: Արդեն հետխորհրդային շրջանում առաջիններից մեկը պրոֆ. Վ. Դիլոյանը վերանայեց խորհրդային պատմագրության մեջ տեղ գտած իրականությունից հեռու, մտացածին ու փաստազուրկ այն պնդումը, թե «Ի. Օրին,

---

[1] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 284:
[2] Տե՛ս **Լեո**, *Խոջայական կապիտալ*, էջ 173:
[3] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 331:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 423:

իբր, **հիասթափվեց Արևմուտքից** և սեփական նախաձեռնությամբ **դիմեց Ռուսաց** կայսրության օգնության»[5]:

Այս հարցի առնչությամբ, Արևմուտք-Ռուսաստան երկընտրանքի հարցում, համամիտ չենք պրոֆ. Ա. Աբրահամյանի այն գնահատականին, թե Հայաստանի ազատագրության հարցում Արևմտյան Եվրոպայի երկրները հանդես են բերել **երկդիմի** քաղաքականություն, իսկ Ռուսաստանը, տվյալ դեպքում, Պետրոս 1-ինը՝ **ոչ: Իրողությունն ու իրականությունն այն է, որ երկու դեպքում էլ, բնականաբար, նրանք առաջնորդվել են իրենց սեփական ազգային-պետական շահերով և Հայաստանին ու հայ ժողովրդին ցուցաբերվող օգնությունը մեծապես կախված էր նրանից, թե որքանով էին այդ շահերը, նույնիսկ անձնական փառասիրական նպատակները համահունչ հայ ժողովրդի ազատագրության և պետականության վերականգնման բաղձանքներին:**

Այնուամենայնիվ, դեպի Ռուսաստան Ի Օրու առաքելության առնչությամբ, ինքնաբերաբար ծագում է ռուսական ցարին դիմելու և Հայաստանի ազատագրության հարցով ռուսական բարձր իշխանությունների հետ բանակցելու պատճառների հարցը: Այս կապակցությամբ Լեոն իր ձեռքի տակ եղած վավերագիր նյութերով փաստում է, որ ո՛չ 1699 թ. Անգեղակոթի ժողովի, ո՛չ էլ որևէ այլ գրություն-հանձնարարականով Օրին լիազորություն չի ունեցել **հունադավան ռուսներին** դիմելու: Ինչպես արդեն ասվել է. «ավելի գերադաս են համարել մնալ գերության մեջ, քան ազատվել հունադավանների ձեռքով»[6]: **Սա գալիս է հաստատելու մեր այն պնդումը, որ Ռուսաստան գալու և ռուսական իշխանությունների հետ բանակցելու համար Ի. Օրին չի ունեցել Անգեղակոթի ժողովի կողմից իրեն գրավոր ու բանավոր տրված ոչ մի լիազորություն:** Այս նույն առնչությամբ, XX սկզբներին նույն միտքն է զարգացրել տակավին երիտասարդ հետազոտող, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը՝ հայ մելիքները չեն ցանկացել, որ Ռուսաստանը (ցարը) ազատագրի հայերին, «քանզի վտանգ կար, որ դրանով իրենց

---

[5] **Դիլոյան Վ.,** *Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ* («Պայքար», Եր., 1995, թիվ 6–7, էջ 14):

[6] **Լեո,** *Խոջայական կապիտալ*, էջ 215:

կպարտադրվեր նաև հունական հերձվածը: **Հայերը գերադասել են մնալ անհավատների ստրուկներ, քան լինել ուղղափառ ռուսների իշխանության տակ** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[7]: Մյունխենում պաշտպանած իր ատենախոսության մեկ այլ հատվածում, վավերագիր նյութերից մեջբերումներ անելով, Ա. Հովհաննիսյանը դարձյալ պնդում է, որ հայերը խոսափել են Ռուսաստանի օգնությունից հենց «**հունական հերձված**»-ի պատճառով[8]: **Սա նշանակում է, որ Օրին Հայաստանին օգնելու հարցով հայ մելիքների կողմից հանձնարարություն չի ունեցել դիմելու Ռուսաց ցարին**: Ուստի, այստեղ բանագնաց Օրուն, ըստ ամենայնի, օգնության է հասել մելիքների՝ իրեն տրված «ճերմակ թուղթը»:

Նախ, մելիքների կողմից դեպի Ռուսաստան համապատասխան լիազորություն չունենալով հանդերձ, հանգամանքները կամ հենց եվրոպացիների հուշումները նրան հարկադրել ու հասկացրել են դիմել նման չթույլատրված քայլի ու մեկնել Ռուսաստան: Բայց, ինչպես արդեն ասվեց, նման առաքելության համար նա պետք է ունենար Անգեղակոթում հավաքված Ղարաբաղ-Սյունիքի մելիքների անունից հանձնարարական-գրություն՝ իբրև իրավական հիմք: Բայց նման փաստաթուղթ չունենալով, Ի. Օրին և Մինաս վարդապետը, ըստ ամենայնի, դիմել են ինքնակամ քայլի և հայերենով «ճերմակ թղթի» իրավունքով պատրաստել են մելիքների անունից ցարին ուղղված նամակ-գրություն (խնդրագիր)՝ այն թվագրելով հետին թվով՝ **1699 թ. ապրիլի 29**, որպեսզի ժամանակագրորեն համապատասխաներ Անգեղակոթի ժողովի հրավիրման ժամկետին:

Այս կապակցությամբ դժվար է համաձայնվել ակադեմիկոս Գ. Գալոյանի արտահայտած այն մտքին, թե Պետրոս Մեծին ուղղված ապրիլի 29-ի խնդրագիրը հայ մելիքներն են **պատրաստել** և **տվել** Ի. Օրուն՝ այն տեղ հասցնելու[9]: Մենք կարող ենք հիմնավոր հավաստել, որ Ռուսաստան մեկնելիս նամակ-խնդրագիրը հայ մելիքների անունից ինքնակամ պատրաստել են Ի. Օրին և Մինաս վարդապետը՝ «ճերմակ թղթի» իրավունքով: Բայց կրկին հիշեցնենք, որ հայ մելիքների կողմից

---

[7] **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և ազատագրական գաղափարը*, էջ 249:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 323:
[9] Տե՛ս **Գալոյան Գ.Ա.**, *Պատմության քառուղիներում*, էջ 80:

«ճերմակ թղթից» օգտվելու իրավունք (լիազորություն) Օրուն տրվել էր **միայն Արևմուտքի երկրներին դիմելու համար: Ահա, թե որն է խնդիրը: Անգեղակոթի ժողովին մասնակից հայ մելիքների պլաններում չի եղել նրան լիազորություն տալ դիմելու Մոսկվայի ցարին:**

Այդ ամենով հանդերձ, հայ մելիքների անունից Ռուսաց ցարին ուղղված նամակում անորոշ էր մնում, թե ում պիտի պատկաներ ապագա ազատագրվելիք Հայաստանի թագը, մինչդեռ կուրֆյուրստին ներկայացված ծրագրով՝ Հայաստանի ազատագրումից հետո Հովհան Վիլհելմը պիտի դառնար նրա թագավորը: Այս կապակցությամբ Լեոն, հաճախ իրեն բնորոշ ոչ ստանդարտ դատողություններին համապատասխան, կռահել է տալիս, որ հավանաբար Օրին ինքն է հավակնել լինելու հայոց թագավոր, մանավանդ որ քանիցս ակնարկվել էր իր՝ Պոռշյան տոհմի ժառանգորդը լինելու մասին: Բայց, միաժամանակ, Լեոյի մեկնաբանությամբ, Հայաստանի թագավորությունը պիտի գտնվեր Ռուսաստանի հովանու (թևարկության) ներքո և այլն[10]:

## *2. Ի. Օրիի պատվիրակության ժամանումը Ռուսաստան, բանակցությունները և «Մոսկովյան ծրագիրը»*

Դեպի Ռուսաստան առաքելության բուն գործընթացը հետևյալն էր: 1700 թ. սեպտեմբերի 14-ի ամսաթվով Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմը Օրուն տալիս է գրություն-անցաթուղթ՝ որպես իր բանագնաց (դեսպան, նվիրակ), Ռուսաց ցար Պյոտր Ալեքսեևիչին (Պետրոս 1-ին) ներկայանալու համար[11]: Դրանում նշված է, որ Ռուսական պետական պրիկազների դեպարտամենտում (դեսպանական ատյանում) պահվում է 1701 թ. հուլիսին Օրու՝ Ռուսաստան ժամանման մասին անցագրի ռուսերեն քաղվածքը[12]:

Մինչ այդ, 1701 թ. ապրիլին Օրին և Մինաս վարդապետը ժամանել էին Լեհաստան (Վարշավա), որտեղ ստացել էին թույլտվություն Մոսկ-

---

[10] Տե՛ս **Լեո,** *Խոջայական կապիտալ,* էջ 216:
[11] Տե՛ս **Эзов Г.А.,** *նշվ. աշխ.,* վավ. թիվ 12, էջ 56–57:
[12] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 13, էջ 57:

վա ուղևորվելու համար: Հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին Օրին, իբրև բավարական կուրֆյուրստի բանագնաց, Մինաս վարդապետի, մի երիտասարդ լեհահայ թարգմանիչ Նազար Օրեխովիչի և ևս մի քանի ուղեկիցների հետ Սմոլենսկով անցնում է Ռուսաստան: 1701 թ. հուլիսի 7-ին հայ պատվիրակները՝ ընդամենը 5 հոգի, հայտնվում են Մոսկվայում և ներկայանում են Պետական պրիկազների դեպարտամենտ (ատյան)՝ 3 անցագիր-գրություններով. այն է՝ 1700 թ. սեպտեմբերի 14-ի կուրֆյուրստի, ինչպես նաև 1700 թ. դեկտեմբերի 8-ի՝ Լեոպոլդ 1-ին կայսեր և 1701 թ. ապրիլի 23-ի Լեհաստանի Ավգուստ 2-րդ թագավորի[13]: Օրու գլխավորած պատվիրակությանը տեղավորվում են Մոսկվայի քաղաքային ռատուշայի (ինքնավարության) ամառանոցում[14]:

Նկատի ունենալով Ռուսաստանի ռազմաքաղաքական լարված իրավիճակը՝ կապված Հյուսիսային պատերազմի (1700–1721 թթ.) հետ, սկզբում Օրին ռուսական ցարի մոտ անձամբ ընդունելության չի արժանանում, սակայն դրա փոխարեն նրան ընդունել և հետը բանակցել է Ռուսաստանի կանցլեր (վարչապետ), բոյար **Ֆեոդոր Գոլովինը**[15]:

Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ Ռուսաստան գալու սկզբնական շրջանում Օրին ևս առանձնապես ոգեշնչված չի եղել անվերապահ ռուսական օգնության, ուստի և կողմնորոշման ջատագովը լինելուն, մանավանդ, որ նա մելիքների կողմից լիազորված չի եղել բանակցելու ռուսական ղեկավար շրջանակների հետ: Այս առնչությամբ Ա. Հովհաննիսյանը նկատում է. «Միայն Կանցլեր Գոլովինի բացորոշ ձևակերպած հարցաթուղթն ստանալուց յետո և նրա անմիջական թելադրանքի հետևողութեամբ է, որ Օրին ստիպված եղաւ դուրս գալ իր լիազօրութեան սահմաններից և Պետրոս Մեծին յատկացնել այն դերը, որ Պֆալցի կուրֆիւրստին էր վարապահւած»[16]: Օրին ակնկալել է, որ ցարը պետք է հայ մելիքներին խոստանար զանազան արտոնություններ ու հատկապես հավատքի ազատություն: Նա հանձարարել էր գրությունների հիմնական պատրաստող Մինաս վարդապետին՝ ցարի անու-

---

[13] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ XXV:
[14] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 30, էջ 70:
[15] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և ազատագրական գաղափարը*, էջ 317:
[16] **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, էջ 54:

նից այնպիսի խոստումնալից գրություններ պատրաստել, որ հայ մելիքները հուսադրվեն, ինչը և իր նպաստը կբերեր հայերի ռուսական կողմնորոշման ամրապնդման հարցում[17]:

Ի. Օրին ռուսական բարձր իշխանություններին է հանձնում կուրֆյուրստի կողմից ցարին ուղղված երաշխավորագիր-նամակը՝ խիստ գաղտնիության պայմաններում ուսումնասիրելու Հայաստանի ազատագրության հարցը և փորձելու իրագործել այդ գաղափարը: Հովհան Վիլհելմը նամակում մասնավորապես հայտնում էր, որ եթե ցարը արդարացի ու հնարավոր կհամարի ռազմարշավը Ռուսաստանի տարածքով, ապա այդքանով ինքը պատրաստ կլինի դրա իրականացմանը: Նույնպիսի ցանկություն է հայտնել նաև Ավստրիայի կայսրը: Սակայն այստեղ էլ որոշակի կասկած է առաջացնում այդ գրությունների օրինական լինելը:

Նախ, Ռոաաստանի պետական դեպարտամենտի արխիվում պահվում է 1700 թ. հոկտեմբերի 13-ի ամսաթվով Հովհան Վիլհելմի անունից մի գրություն՝ ուղղված **Պետրոս 1-ին** (Պյոտր Ալեքսեևիչ Ռոմանով) (1672–1725 թթ.) ցարին: Դրանում ասվում էր, որ հայկական երկրից Պֆալց է եկել հայ Իսրայել Օրին՝ ծագումով Պոոշյան տոհմից, որը 19 տարի Եվրոպայում էր և, իբրև միջնորդ, Հովհան Վիլհելմը առաջարկում էր ցարին, որ ընդունի և լսի բանագնաց Օրուն[18]: Կարծում ենք, որ այս անցաթուղթը ևս կուրֆյուրստի և մյուսների անունից Օրին և Մինաս վարդապետը իրենք են «սարքել» կամ կեղծել տվել: Նույնպիսի մի անցաթուղթ էլ կազմվել է 1700 թ. դեկտեմբերի 8-ի ամսաթվով Ավստրիայի Լեոպոլդ I կայսեր անունից, որը դարձյալ հայտնվել է Ռուսաստանի պետական դեպարտամենտի դեսպանական ատյանում: Ի դեպ, 1701 թ. փետրվարի 9-ի ամսաթվով նույն Ավստրիայի կայսրը իբրև թե մի նամակ էլ կազմել է՝ այս անգամ արդեն ուղղված հայ մելիքներին, գրված լատիներենով: Բայցի այդ, նույն 1701 թ. փետրվարի 9-ի ամսաթվով (նաև փետրվարի 6-ի) կա Սրբազան Հռոմեական կայսրության (Ավստրիայի) կայսր Լեոպոլդ I-ի անունից գրված ևս մի լրացուցիչ շնորհաթուղթ՝ դարձյալ ուղղված Պետրոս Ալեքսևիչ ցարին:

---

[17] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, վավ. թիվ 54:
[18] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 17, էջ 61–63:

Դրանում ևս Հովհան Վիլհելմի նամակի գրեթե նույն ոգով ու ոճով խոսվում է «Հայաստանցի Պոռշյան տոհմի ժառանգորդ Ի. Օրուն անվտանգ ընդունելու և լսելու մասին»[19]:

Կ. Եզյանի կազմած ժողովածուի փաստաթղթերի բովանդակության շարադրանքի ոճի համադրական վերլուծությունից ակնհայտ երևում է այս անցագրերի կեղծված լինելը: Ի դեպ, ծանոթանալով այդ նամակ-գրություններին, կանցլեր Ֆ. Գոլովինը և պետական բարձրաստիճան մյուս դեմքերն իրենք դա ակներև նկատել են, սակայն որոշակի նկատառումներով, ելնելով Ռուսաստանի հետաքրքրություններից, արգելք չեն հարուցել, հայ պատվիրակներին հետ չեն ուղարկել, այլ ընթացք են տվել նրանց ժամանմանը, տեղավորել են և ցանկացել են նրանց միջոցով լրացուցիչ տեղեկություններ հավաքել Կովկասյան, պարսկա-թուրքական տարածաշրջանի ռազմաքաղաքական անցուդարձերի մասին, քանզի Հյուսիսային պատերազմից զատ, Պետրոս ցարին, որպես օրակարգային երկրորդ առաջնահերթություն, հետաքրքրում էին դեպի Կովկաս ու Կասպիական տարածաշրջան ներթափանցելու և այնտեղ հաստատվելու ծրագրերը: Լեոյի նկարագրմամբ՝ Կովկասն ու Կասպից ծովը նվաճելու Պետրոս Մեծից սկիզբ առած այդ մեծ շարժումը եվրոպական դիվանագիտության մեջ ստացել էր «**Պետրոս Մեծի կտակ**» անունը և, կարծես, մի մղձավանջ էր դարձել քաղաքական աշխարհում[20]:

Այդուհանդերձ, հուլիսի 11-ին Ռուսաստանի պետական դեպարտամենտում Օրին գաղտնի զրույց է ունեցել բարոն Ֆ. Գոլովինի հետ: Հուլիսին, փաստորեն, ընթացել են բանակցություններ ռուսական կառավարության և Օրու միջև: Վերջինիս ռուսերենին չտիրապետելու պատճառով բանակցությունների ժամանակ դժվարություններ են ծագել[21]: Այդ իսկ պատճառով Օրուն առաջարկվել է, որ իր տեսակետ-մոտեցումները ներկայացնի գրավոր:

---

[19] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 19, էջ 64–67:

[20] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 4, էջ 24–25:

[21] Կ. Եզովի կարծիքով, Օրին տիրապետել է արևելյան լեզուներից՝ հայերենի, պարսկերենի, թուրքերենի, իսկ եվրոպական՝ ֆրանսերեն և կարելի է ենթադրել լատիներեն, գերմաներեն և իտալերեն (տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ LXXX:

Իր հերթին, կանցլեր Ֆ. Գոլովինը Օրիին տվել է **5 կետանոց** հարցերի շարք՝ թե ի՞նչ ուժերով, ի՞նչ երթուղիներով պետք է ընթանա զորարշավը, գերմանական զորքը ո՞ւմ ենթակայության տակ պիտի ծառայության անցնի, սննդի ու հանդերձավորման ի՞նչ միջոցներով զորքը պիտի ապահովվի, որտե՞ղ պիտի նրանք ձմեռեն և այլն[22]: Դրա հիման վրա էլ Օրին կազմում և **հուլիսի 25-ին** ցարական արքունիք է ներկայացնում **18 կետանոց** մի հուշագիր-ծրագիր, որը պատմության մեջ հայտնի է Հայաստանի ազատագրման «**Մոսկովյան ծրագիր**» անվանումով[23]: Այս նոր ծրագրով Հայաստանի ազատագրման գործում գլխավոր դերակատարությունը, որը նախկին՝ «Պֆալցյան ծրագրով» վերապահվում էր Հովհան Վիլհելմին, այժմ արդեն վերապահվելու էր Պյոտր Ալեքսեևիչ ցարին:

Ըստ «Մոսկովյան ծրագրի»՝ դեպի Անդրկովկաս կազմակերպվելիք արշավանքը իբրև թե պիտի սկսվեր 1701 թ. հոկտեմբերի սկզբին (այդ ամսից ոչ ուշ), ցարը պիտի հատկացներ 25-հազարանոց (հեծյալ և հետևակ) կոզակային զորք երկու ուղղությամբ՝ ծովով՝ Կասպից ծովով, ու ցամաքով՝ Ճորա պահակով (Դերբենդով) դեպի Շամախի քաղաքը, վերջինս իբրև թե կգրավվեր երկու ժամում և այլն:

Կ. Եզյանի կազմած ժողովածուի մեկ այլ վավերագրի համաձայն՝ Օրին հուլիսի 14-ին ֆրանսերենով բարոն Ֆ. Գոլովինին տրված պատասխանում նշում էր ապագա արշավանքի համար նորին ցարական մեծության 10–15 հազար, մեկ այլ տեղ՝ 20–25 հազար (կոզակային) զորքի մասին, իսկ կատարման համար որպես ժամկետ նշվում էր 15 օր՝ մինչև Շամախի հասնելը: Ըստ այդ տարբերակի, Շամախի քաղաքը կարող էր լինել զորքի դեպի Հայաստան մուտք գործելու բանալին, իսկ զորարշավից հետո նրանք կարող էին ձմեռել Հայաստանում: Դեպի տարածաշրջան ու Հայաստան արշավող զորքերին քաջալերելու նպատակով Օրին դարձյալ ներկայացնում էր ուռճեցված թվեր: Այսպես, բարոն Ֆ. Գոլովինին ուղղված մեկ այլ՝ հուլիսի 22-ի, գրությունում նշվում էր, որ «անհավատների հողեր» ոտք դնելուն պես տեղերում մի 10 օրվա

---

[22] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 32 և 33, էջ 71–76:
[23] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 43, էջ 85–91:

ընթացքում 100 հազարից ավելի հայեր ոտքի կկանգնեն, ինչպես նաև օգնության կհասնի 30 հազարանոց վրաց զորք և այլն[24]:

Այս ամենի կողքին հասկանալի միտումով շատ նվազ էր ներկայացվում պարսկական զինուժն Անդրկովկասում, ինչը իբր կդյուրացներ տարածաշրջանի նվաճումը ռուսների կողմից: Տարված չափազանց լավատեսությամբ՝ ծրագրի հեղինակ Օրին մեկ այլ առիթով անգամ ակնարկել է, թե Անդրկովկասի նվաճման համար կպահանջվի ընդամենը 5 հազար մարդ[25]: Վերը բերվածը վկայում է Օրիի ներկայացրած տվյալների՝ զուտ քարոզչական նպատակ հետապնդելու և դրանց աղաղակող միակողմանիության մասին: Հարց է ծագում, եթե 5-հազարանոց ռուսական զորախումբը բավական կարող էր լինել Անդրկովկասը ազատագրելու համար, մի՞թե վրաց թագավորն ու հայ մելիքները չէի՞ն կարող ոտքի հանել նշվածից բազմապատիկ անգամ ավելի հայ-վրացական զինյալ ուժեր, ինչպիսիք դուրս բերվեց հետագայում՝ արդեն 1720-ական թթ. Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի ժամանակ, և լուծել ազատագրության խնդիրը:

**Այսպիսով, վերը շարադրվածից դժվար չէ նկատել, որ Օրու կազմած Հայաստանի ազատագրության, այսպես կոչված, «Մոսկովյան ծրագիրը» զինուժի թվակազմի, կառուցվածքի, երթուղու և ծրագրվելիք գործողությունների վերաբերյալ վստահություն ներշնչող տվյալներ չի ներկայացրել և այս առումով, անշուշտ, զիջել է «Պֆալցյան ծրագրին»:**

Ընդհանուր առմամբ հակասական թվերով հարուստ «Մոսկովյան ծրագրով» ստացվում էր, որ ռազմարշավի իրագործման հարցում շրջադարձ էր եղել: Դավանահավատալիքային հարցերը մի կողմ թողնելով՝ ռազմարշավում գլխավոր դերակատարությունը կայսրընտիր Հովհան Վիլհելմի փոխարեն այժմ վերապահվում էր Պետրոս ցարին, այսինքն, արշավանքը պետք է իրականացներ ռուսական զորքը: Բայց, ի տարբերություն «Պֆալցյան ծարագրի», Մոսկովյանում չի նշվում, թե

---

[24] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, էջ XXVII–XXX և 76–82 и 86–87, Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 428, նաև՝ Армяно-русские отношения (АРО), т. 2, ч. 1, Ер., 1967, док. 85, с. 215:

[25] Տե՛ս Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 77:

ով պիտի դառնար ապագա Հայոց թագավոր: Այս առնչությամբ, դժվար է համաձայնվել պրոֆ. Վ. Դիլոյանի այն դիտարկմանը, թե «ապագա ազատագրված Հայաստանի թագը Ի. Օրին առաջարկում էր ռուսաց ցար Պետրոս Մեծին»[26]: Բայց «Ծրագրում» կամ մեկ այլ տեղ նման խոսք չկա:

Հակիրճ լինելու համար փաստենք, որ, ի վերջո, նույն տարվա աշնանը՝ հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում, նախատեսված էր Մինաս Վարդապետի ուղեկցությամբ Օրու հանդիպումը ցարի հետ: Նոյեմբերի 7-ին կամ 8-ին[27] (իրականում՝ հոկտեմբերի 7-ին[28]) նա արժանացել է ցարի ընդունելությանը (ունկնդրությանը) կանցլեր, բարոն Ֆ. Գոլովինի տանը: Ի. Օրին ներկայացել է իբրև Պֆալցի կուրֆյուրստի բանագնաց (դեսպան), իհարկե, ընծաներով (դրանց ցանկը վավերագրում տրված է)[29]: Հոկտեմբերի 28-ի վավերագրում (թիվ 49) նշված է, թե ընդունելության ժամանակ Օրին ինչ լեզվով պիտի խոսի ցարի հետ: Որոշվել է հանդիպումն անցկացնել ֆրանսերենի թարգմանչի միջոցով[30]:

Նոյեմբերի 18-ի ամսաթվով հրապարակվել է ցարական հրամանագիրը այդ հանդիպման մասին[31]: Պետրոս ցարը ոչ միայն ծանոթացել է Օրիի զեկուցագրին (ծրագրին), այլև անձամբ ունկնդրել է նրան[32]: Նշվում է, որ ռուսաց ցարը հավանություն է տվել Օրու ծրագրին, սակայն կապված Հյուսիսային պատերազմի (1700–1721 թթ.) ռազմաքաղաքական դժվարությունների հետ, նա հուսադրել է հայ պատվիրակությանը, որ Շվեդիայի դեմ պատերազմի հաջող ավարտից հետո կկազմակերպի հետագայում պատմությանը հայտնի Կասպիական կամ Պարսկական կոչված արշավանքը: Կասպիական արշավանք

---

[26] «Պայքար», Եր., 1995, թիվ 6–7, էջ 15:

[27] Կ. Եզյանի ժողովածուում նշված է նոյեմբերի 8-ը (տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 52, էջ 99–100):

[28] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, *Իսրայել Օրի*, էջ 79, **Հովհաննիսյան Պ.**, *նշվ. աշխ.*, էջ 37, նաև՝ *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 23:

[29] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 51, էջ 99 և վավ. թիվ 52, էջ 99–100:

[30] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 49, էջ 98:

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 100:

[32] Տե՛ս նույն տեղում, ներածություն, LXXIII և թիվ 190.

կազմակերպելու և պարսկահայությանը ազատագրելու առնչությամբ Կ. Եզյանի կազմած վավերագրերի ժողովածուում նշվում է, որ Պետրոս ցարը, ընդառաջ գնալով Օրու ցանկությանը, միայն բանավոր, «**բերանացի**» (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.) է ասել (**խոստացել**), թե աստծո զորությամբ շվեդների դեմ պատերազմի բարեհաջող ավարտից հետո կձեռնարկի Պարսկահայաստանի ազատագրման գործը[33]: Օրու բանակցությունների դրական հետևանքներից մեկն այն եղավ, որ ռուսական քաղաքական շրջանակները սկսեցին ավելի հաճախակի բանագնաց պատվիրակներ գործուղել Պարսկաստան ու Կովկասյան տարածաշրջան՝ ավելի մոտիկից շփվելու և նախապատրաստելու ապագա ռազմարշավը: Նման պատվիրակներից մեկն էլ հայազգի էլչի (դեսպան) Միրոն Վասիլևն էր, որը 1702 թ. ամռանը Աստրախանով և Կասպից ծովով հասավ Հայաստան՝ իր հետ բերելով հուսադրող նամակներ և հանդիպումներ ունեցավ մելիքների և հոգևոր հայրերի հետ:

### *3. Հայաստանյան շրջանակների՝ Եսայի կաթողիկոսի և հայ մելիքների ռուսական կողմնորոշման հարցի շուրջ*

Ի. Օրու նպատակադրումների հաջողությունը, բացի արտաքին ազդակներից, ոչ պակաս չափով կախված պիտի լիներ նրանից, թե բուն Հայաստանում հայոց կաթողիկոսներն ու մելիքական շրջանակները ինչպես կարծագանքեն դրան, քանզի, ինչպես արդեն գիտենք, Ամենայն հայոց կաթողիկոս **Նահապետ Եդեսացին** (1691–1705) առանձնապես ոգևորված չէր Օրու գաղափարներով, իսկ Արցախ-Սյունիքի մելիքներն էլ նրան համապատասխան փաստաթղթերով ուղևորել էին միայն դեպի Արևմտյան Եվրոպա:

Նշենք, որ հենց դարասկզբից Հայաստանի ազատագրության գործին սկսում է առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերել Ղարաբաղը, հատկապես Գանձասարի կամ Աղվանից նորընտիր կաթողիկոս **Եսայի Հասան-Ջալալյանը** (1702–1728)՝ փոխարինելով վախճանված

---

[33] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 59, էջ 110, նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, *Հայոց օրինաստացիության ծագման խնդիրը*, էջ 37–38:

Աղվանից Սիմեոն կաթողիկոսին[34]: 1702 թ. նորընտիր Եսայի կաթողիկոսը, տարված Պարսկահայաստանի ազատագրման գաղափարներով, սկսում է ջանքեր թափել ու փորձել կապեր հաստատել Ի. Օրու հետ: Լեոն Եսայի կաթողիկոսին բնութագրում է որպես XVIII դարասկզբի հայ ազատագրական շարժման «խոշոր երախտավորներից մեկը»[35]: Նամակագրական կապերը և վավերագիր նյութերը վկայում են, որ Ի. Օրին իր գաղափարներով ու գործելակերպով զգալի դեր է խաղացել Եսայի կաթողիկոսի և, առհասարակ, արցախահայ վերնախավի՝ դեպի Ռուսաստանը քաղաքականապես կողմնորոշելու հարցում: Եվ պատահական չէր, որ հենց դարասկզբին՝ (1709/10 թթ.) Եսայի կաթողիկոսը մեծ ցանկություն հանդես բերեց մեկնելու Մոսկվա և հայ ժողովրդի ազատագրության հարցով անձամբ տեսակցել Պետրոս ցարին[36]:

Կ. Եգյանի կազմած ժողովածուում կա **1703 թ. մայիսի 27-ի** ամսաթվով Ղարաբաղի մելիքների անունից մի շնորհակալական նամակ-ուղերձ ուղղված ռուսաց Պետրոս ցարին՝ Օրիի միջոցով իրենց հուսադրելու մասին: Փաստաթղթում նշվում է, որ իրենք՝ մելիքները, Մինաս վարդապետի միջոցով լուր են ստացել, որ **բարի ցարը** «իրենց ցավին դարման կանի»[37]: Նշվում է, որ նրանք տվել են. «մեզի հաւատարիմ Մինաս վարդապետին և պարոն Իսրայելին ճերմակ թուղթ, որ ինչ կու պատասխանեն առ քո ինքնակալութեանդ հետ ամենից ինչ կողմանէ մեր գրովն առ մեզ խապուկ է»[38]: Սույն փաստաթղթի, իբրև Սյունիքի, իսկ լայն իմաստով՝ Ղարաբաղի մելիքների կողմից (իբրև բնօրինակ) գրված լինելը դարձյալ խնդրահարույց է: Կ. Եգյանն իր ժողովածուի ներածական մասում նշում է, որ մայիսի 27-ի ամսաթվով այդ նամակը Եսայի կաթողիկոսի գրածն է՝ ուղղված **բարի ինքնակալ ցարին**, որում կաթողիկոսը «աղոթում էր, որ ցարը շուտ գա և ազատի իրենց»[39]: Բայց բավարար հիմքեր կան պնդելու, որ հայերենով շարադրված 4 էջանոց (էջ 154–157)

---

[34] Եսայու կաթողիկոսական իրավունքները հաստատվել էին Սուլթան Հուսեին շահի 1701 թ. աշնանային հրովարտակով (տե՛ս **Մաղալյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 134):

[35] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 88:

[36] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ, թիվ. 167 և 202:

[37] Նույն տեղում, վավ. թիվ. 98, էջ 154:

[38] Նույն տեղում, վավ. թիվ. 98, էջ 154–155:

[39] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ XXXVII, նաև՝ էջ 176:

այդ աղերսագիր-նամակը, ըստ ամենայնի, Մինաս վարդապետի գրածն է, որը հավանաբար օգտվել է «ճերմակ թղթի» իրավունքից: Սա, հավանաբար, Օրիի գիտությամբ, Մինաս վարդապետի արած հերթական կեղծիքներից է: Թեև այս նամակ-ուղերձում էլ դարձյալ շեշտվում է պրն Իսրայել Օրու՝ Պռոշյան իշխանական տոհմից սերված լինելը, սակայն մի քանի անգամ (ավելի քան երեք անգամ) նշվում է Մինաս վարդապետի և հետո միայն Իսրայել Օրու անունը: Վերջում դրված է ոչ թե Եսայի կաթողիկոսի, այլ **8 մելիքների** անունները, Մելիք Սաֆրազի անունը չկա[40], մյուսները՝ հիմնականում կրկնված են 1699 թ. ապրիլի 29-ի Անգեղակոթի ժողովին մասնակից մելիքների անունները: Բացի Մելիք Սաֆրազի անունից փաստաթղթում չկա ևս երկու մելիքի անուն, սակայն ավելացվել է մեկի ուրիշի՝ Նարին բեկի որդի Շահնազարի անունը[41]:

Մյուս կողմից, մենք տեսնում ենք, որ 1699 թ. **ապրիլի 29-ի** մելիքների կողմից Հովհան Վիլիելմին ուղղված՝ փաստաթուղթ թիվ 3 նամակ-լիազորագրի (փաստաթուղթ թիվ 3) և 1703 թ. **մայիսի 27-ի** այս անգամ արդեն Պետրոս ցարին ուղղված նամակ-աղերսագրի (փաստաթուղթ թիվ 98) բովանդակությունների համեմատությունից դժվար չէ նկատել, որ քաղաքական կողմնորոշման առումով մելիքների շրջանում կարծես «շրջադարձ» է կատարվել: Դա կասկած է առաջացնում և հիմք տալիս դարձյալ պնդելու, որ մայիսի 27-ի նամակը ոչ թե մելիքներն են գրել, այլ, առանց նրանց գիտության, Մինաս Վարդապետն ու Իսրայել Օրին են իրենց նախաձեռնությամբ պատրաստել և ներկայացրել ցարին, կանցլեր Ֆ. Գոլովինին և ռուս բարձր մյուս իշխանավորներին: Կնշանակի՝ Օրին և Մինաս վարդապետը որոշակի կազմակերպական-քարոզչական աշխատանք են տարել, որպեսզի հատկապես արցախահայ շրջանակներին կողմնորոշեն դեպի Ռուսաստան՝ դրանով սպասումների մթնոլորտ ստեղծելով ապագա արշավանքի համար:

---

[40] Լեոյի կարծիքով՝ Մելիք Սաֆրազը հավանաբար եղել է մահացած (տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 434):

[41] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ 9 և 157:

## *4. Գնդ. Ի. Օրու վերադարձը Արևմտյան Եվրոպա*

Գրականությունից հայտնի է, որ Պետրոս Ի-ը Օրուն շնորհել է **գնդապետի** սպայական աստիճան: Այս մասին տեղեկություններ կան Կ. Եզյանի կազմած ժողովածուի 108-րդ (իտալերեն) և 109-րդ (ռուսերեն) փաստաթղթերում[42]: 1703 թ. նոյեմբերի 15-ին Ի. Օրին նամակով դիմել է Ֆ. Գոլովինին միջնորդելու՝ իրեն արտոնագիր տալ՝ ա/ Ավստրիա և Գերմանիա (Վիեննա և Դյուսելդորֆ) գործուղվելու և բ/ գնդապետ կարաբինակիրների գնդապետի աստիճան շնորհելու մասին: Օրու ցանկությունը ոչ թե զինվորական գունդ ղեկավարելն էր, այլ բանակցելու համար ընդամենը ցարական գնդապետի տիտղոս ստանալ[43]: «Ցարի նվաստ ծառա» Ի. Օրին դիմել է Ֆ. Գոլովինին նաև, որ իր մարդիկ մնան Ռուսաստանում, իսկ ինքը մեկնի Եվրոպա, որպեսզի այնտեղ զբաղվի հռոմեական (այսինքն, Ավստրիայի) կայսրի և Պֆալցի կուրֆյուրստի հետ ապագա արշավանքի կազմակերպման հարցերով: Բացի այդ, նա նշում է, որ ամուսնացած է, ինչը հաստատվում է Կ. Եզովի ժողովածուով, Դյուսելդորֆում ունի ընտանիք՝ **երկու որդի**, որոնց կուզենար տեղափոխել Ռուսաստան և տեղում սովորեցնել տար ռուսաց լեզուն և այլն[44]: 1703 թ. դեկտեմբերի 6-ի ցարական հրամանագրով Օրուն շնորհվում է իր խնդրած գնդապետ-կարաբինների սպայական աստիճանը[45]:

Այս ամենից բացի, հայտնի է, որ ապագա Կասպիական արշավանքի համար նախապատրաստական-հետախուզական աշխատանքներ կատարելու նպատակով ծրագրվել էր, որ Պարսկաստան ուղևորվելուց առաջ Օրին նախ պետք է մեկներ Եվրոպա մարտավարական այն նկատառումով, որպեսզի Պարսկաստան մեկնելու համար կասկածներ չառաջացներ: Նա Հռոմի պապից պարսից շահին ուղղված գրություն-նամակ պիտի վերցներ, իբրև թե նրա տերությունում հպա-

---

[42] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 108, էջ 174–175 և թիվ 109, էջ 175–176:

[43] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 108, էջ 174 և վավ. թիվ 109, էջ 176:

[44] Տե՛ս նույն տեղում, էջ LXXVI և վավ. թիվ 109, էջ 176, նաև՝ **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 431:

[45] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 109, էջ 176:

տակ քրիստոնյաների հանդեպ կրոնական ճնշումներ ու բռնություններ թույլ չտալու վերաբերյալ:

Ցարական արտոնագրով Իսրայել Օրու արտասահման մեկնելու վերաբերյալ կա 1704 թ. հունվարի 23-ի ամսաթվով ևս երկու փաստաթուղթ՝ ուղղված հռոմեական (Ավստրիայի) կայսր Լեոպոլդ I-ին և Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին: Ընդ որում, Օրին ճանապարհին՝ Վրաստանում, իր հետ վերցրել է վրաց թագաժառանգ, Իմերեթի նախկին թագավոր Արչիլ 2-րդի նամակը՝ ուղղված Ավստրիայի կայսրին և Պֆալցի կուրֆյուրստին, որտեղ Արչիլը խնդրում էր վերջիններիս միջնորդելու շվեդների առջև Նարվայի տակ նրանց մոտ գերի ընկած իր որդուն՝ գեներալ Ալեքսանդրին ազատ արձակելու վերաբերյալ[46]:

Եվ, ահա, գնդապետ Ի. Օրին արդեն 1704 թ. փետրվարի 10-ին ուղևորվում է Եվրոպա: Նա Մոսկվայում է թողնում Մինաս վարդապետին և երկու թարգմանչի: Ի. Օրին նախ պիտի այցելեր նորին մեծության հռոմեական (Ավստրիայի) կայսր Լեոպոլդին, այնուհետև՝ Հռենոսի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին[47]: Կ. Եզյանի կազմած ժողովածուում առկա է 1705 թ. ապրիլի 2-ի ամսաթվով Հովհան Վիլհելմի նամակուղերձը՝ ուղղված պարսից շահին, հորդորանքով, որ նա իր տիրույթներում ապրող քրիստոնյաների հանդեպ մեղմ վերաբերվի[48]: Հաջորդ փաստաթուղթը Օրու Ամստերդամից ուղարկած նամակն է՝ ուղղված բարոն Ֆ. Գոլովինին, ինչը հաստատում է Հովհան Վիլհելմի՝ պարսից շահին ուղղված ուղերձի իսկությունը[49]: Օրին մեկնել է նաև Հռոմ և կուրֆյուրստի խոստովանահոր միջոցով ստացել Հռոմի Կղեմես 11-րդ (ԺԱ) պապի (1680–1721)՝ 1705 թ. հուլիսի 15-ի նույնաբովանդակ հավատարմագիրը՝ ուղղված շահ Սուլթան Հուսեինին[50]: Ի դեպ, Լեոյի հաղորդմամբ, Արևմուտքում գտնվելու ժամանակ Ի. Օրին գնել էր նաև 15–20 հազար ռուբլու զենք և զինական այլ պարագաներ[51]: Այդ ամենից

---

[46] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, վավ. թիվ 126, էջ 194, 199–200:
[47] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 128, էջ 203–204:
[48] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 135, էջ 210:
[49] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 136, էջ 212:
[50] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 24:
[51] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 437:

հետո միայն նա սկսեց պատրաստություն տեսնել դեպի Պարսկաստան առաքելության:

## *5. Ի. Օրու առաքելությունը Պարսկաստան: Նրա վերադարձը և մահը*

Արդեն 1706 թ. Օրին վերադառնում է արտասահմանից և հոկտեմբերի 29-ի նամակով խնդրում է Պյոտր Ալեքսեևիչ ցարին թույլ տալ իրեն ուղևորվելու Պարսկաստան՝ ապագա արշավանքի ձեռնարկման համար նախապատրաստական-հետախուզական աշխատանքներ կատարելու: Օրու առաքելության խնդիրներից էր նաև տարածաշրջանում ռուսական զորքերի արշավանքի ուղիները ճշտելը, ուսումնասիրելը տեղի ազգաբնակչության էթնիկ կազմը և քաղաքական տրամադրությունները և այլն: 1707 թ. ապրիլին ցարի հանձնարարականով գնդապետ Ի. Օրուն տրվում է անցաթուղթ՝ մեկնելու Պարսկաստան՝ շահի մոտ, անհրաժեշտ միջոցներով ու պարագաներով[52]:

Երկարատև պատրաստությունից հետո՝ 1707 թ. հունիսին, Ի. Օրին, վերցնելով Հռոմի պապի նամակը, տարբեր ազգեր ներկայացնող 37 (որոշ տվյալներով՝ 50) հոգուց բաղկացած դեսպանախմբով (շքախմբով) Աստրախանով ուղևորվում է Պարսկաստան: Մինաս վարդապետը մնում է Մոսկվայում՝ դեսպանության առաքելության վերաբերյալ կառավարությանը հարկ եղած տեղեկություններ հաղորդելու: Ի. Օրու գլխավորած դեսպանախումբը 1708 թ. փետրվարին հասնում է Շամախի: Սակայն պարսից իշխանությունները կասկածներ ունենալով, երկար՝ շուրջ երկու տարի, դեսպանությանը սպասեցնել են տալիս: Հայ մեծ պատմավիպասան Ռաֆֆին իր «Խամսայի մելիքությունները» աշխատության մեջ գրում է, որ Շամախիի կառավարիչ, ազգությամբ հայ Մուսաբեկյան Հյուսեին խանը իմաց էր տվել շահին, որ «Օրին աշխատում է հայոց թագավորություն հիմնել, պարսիկների իշխանությունը ոչնչացնել և այլն»[53]: Այդտեղերձ, այդ ընթացքում մեծ զգուշավորությամբ, կասկածների

---

[52] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, վավ. թիվ 141, էջ 219 և վավ. թիվ 147, էջ 230–232:
[53] Ռաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. 10, էջ 182:

տեղիք չտալով, Օրին տարածաշրջանում, այդ թվում նաև հայ մելիքների հետ, նախապատրաստական որոշ աշխատանքներ է տանում, սակայն չի բացահայտում իր առաքելության բուն նպատակները:

1709 թ. հուլիսի 7-ի ամսաթվով կա մի հրովարտակ Ամենայն հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ա Ջուղայեցու (1706–1714) անունով՝ ուղղված ցար Պյոտր Ալեքսեևիչին, Ի. Օրու էջմիածին ժամանելու մասին[54]: Կաթողիկոսի հրովարտակի հայերեն բնօրինակը չկա, առկա է միայն դրա ռուսերեն օրինակի տեքստը: Լեոն գտնում է, որ Օրին է խնդրել, որ կաթողիկոսը գրի Պետրոս թագավորին ուղղված մեծարման մի թուղթ[55]: Դրանում Հիսուս Քրիստոսի և կաթողիկոսի անունից, մեծարվում է Պյոտր Ալեքսեևիչ ցարը: Հրովարտակում նշված է, որ Սբ. Էջմիածնում էր մեր սիրված որդի Ի. Օրին, որը պիտի մեկներ Պարսկաստան: Բայց կաթողիկոսը ոչ մի ակնարկ չի արել Օրու առաքելության նպատակների մասին՝ հավանաբար զգուշանալով քաղաքական անցանկալի հետևանքներից: Կաթողիկոսի նամակին 1709 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին հետևել է նաև պարսից Սուլթան Հուսեին շահի արաբատառ նամակը (հրովարտակ) հասցեագրված Պյոտր Ալեքսեևիչ ցարին: Կա նաև դրա ռուսերեն թարգմանությունը, որտեղ խոսվում է Նորին մեծության ցարի անցագրով և պայծառափայլ Հռոմի պապի գրություն-նամակով Ի. Օրու Պասկաստան ժամանելու մասին[56]:

Երկար վարանումներից ու սպասեցնել տալուց հետո, ի վերջո, 1709 թ. ամռան կեսերին պատվիրակությունը մուտք է գործում պարսից տերության բուն տարածք, հասնում մինչև մայրաքաղաք Սպահան: Չնայած եվրոպական կաթոլիկ միսիոներների Օրու հանդեպ ցուցաբերած զրպարտչական քարոզչություններին, այնուամենայնիվ, իբրև Հռոմի պապի և Պետրոս ցարի դեսպանորդ, Լեոյի բնորոշմամբ՝ «մեղկ ու թույլ»[57] Սուլթան Հուսեին շահը հավուր պատշաճի ընդունելություն է կազմակերպում Օրու պատվին, սակայն հնարավորինս շուտ էլ հետ

---

[54] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, վավ. թիվ 159, էջ 243–244:
[55] Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 439:
[56] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, վավ. թիվ 160 և 161, էջ 245–247:
[57] Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 432:

ճանապարհում իր երկրից[58]: Հայ դեսպանին հնարավորություն չի տրվում երկար մնալու մայրաքաղաքում: Արդեն 1709 թ. սեպտեմբերին Օրին Շամախիում էր:

Հավելենք, որ Օրին Պարսկաստանից Աստրախան վերադառնալիս մտադրություն է ունեցել հայ երիտասարդներից կազմել մի զորագունդ՝ հայրենիքի ազատագրության նպատակով ծրագրվելիք ապագա արշավանքի համար[59]: Սպահանից վերադարձի ճանապարհին նա այցելել է Ղարաբաղ, հանդիպումներ է ունեցել հայ հոգևոր և աշխարհիկ տերերի հետ ու փորձել հաշտեցնել Գանձասարի՝ միմյանց հակաթոռ դարձած Եսայի և Ներսես կաթողիկոսներին:

Արդեն 1710 թ. հունիսի 16-ին Օրին նամակով դիմում է Ռուսաստանի նոր կանցլեր, կոմս **Գ. Գոլովկինին**՝ Ռուսաստան վերադառնալու և զեկույց ներկայացնելու Պարսկաստան կատարած իր առաքելության և տարածաշրջանում ընթացող քաղաքական զարգացումների մասին[60]:

Վավերագիր նյութերից պարզվում է, որ վերադարձին պարսից շահը Օրուն է հանձնել Հռոմի պապին ուղղված պատասխան բարեկամական նամակը, որը, սակայն, Օրու մահից մի քանի տարի անց միայն՝ 1714 թ., Մինաս վարդապետն է փորձել տանել ու հանձնել հասցեատիրոջը: Դա երևում է կանցլեր, կոմս Գ. Գոլովկինին հասցեագրված Մինաս վարդապետի նամակից[61]:

Գանձասարի Եսայի կաթողիկոսը, տեսակցելով Օրիի հետ, անչափ ոգևորվում է հայրենիքի ազատագրման գաղափարով և որոշում է, ինչպես արդեն ասվել է, նրա հետ ճանապարհվել Ռուսաստան, որպեսզի անձամբ ցարին հայտնի հայ ժողովրդի ձգտում-ցանկությունը: 1711 թ. փետրվարի 28-ին հետևել է Օրու զեկույցը (հաղորդումը) Պետրոս ցարին՝ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ միասին Ռուսաստան գալու մասին: Միաժամանակ նշվում էր տեղում Աստրախանի իշխանությունների վատ պահվածքի, խոսվում էր նաև նավե-

---

[58] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 25:

[59] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 409:

[60] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 164, էջ 252, նաև՝ թիվ 168, էջ 257–158:

[61] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 201, էջ 310–311:

րի ու լաստանավերի անսարք ու փտած լինելու, դրա հետևանքով խորտակվելու ու ապրանքների՝ բաց ծով թափվելու մասին[62]:

1711 թ. մեկ այլ՝ մարտի 1-ի նամակով, «Ցարի խոնարհ ծառա» Օրին դարձյալ գաղտնի տեղեկություններ է հայտնում Արևելքում տիրող ռազմաքաղաքական վիճակի մասին[63]: Նույն թվականի մարտի 20-ի նամակ-խնդրանքով «Ծառա Մինաս վարդապետը դիմել է Տիրակալ ցարին»՝ թույլ տալու Օրուն իր մարդկանցով և իրերով Աստարախանից անարգել անցնել Մոսկվա. իրերի մեջ նշված են 12 փոքր թնդանոթ, 25 պարսկական ձի, որոնք գնվել էին ցարին նվիրելու համար[64]:

Կ. Եզյանի կազմած ժողովածուի 176-րդ փաստաթղթից հետևում է, որ 1711 թ. սեպտեմբերի 25 ամսաթվով կա Մինաս վարդապետի մեկ այլ զեկույց, այն մասին, որ Աստրախանում անբարեխիղճ պաշտոնյաները ճնշումներ են գործադրել Ի. Օրու նկատմամբ՝ Պարսկաստանից բերած ապրանքների, նժույգների, գորգերի և այլ իրերի համար պահանջելով շահույթահարկի (մաքսատուրքի) գանձում: Դրա համար Մինաս վարդապետը կրկին խնդրանքով դիմել է ռուսաց բարձր իշխանություններին՝ թույլ տալու Օրուն ազատ մուտք գործել Մոսկվա: Ի պատասխան դրա՝ սեպտեմբերի 29-ին տրվել է ցարական հրամանագիրը՝ Ի. Օրու համար իր մարդկանցով և իրերով Աստարախանից անարգել և առանց շահույթահարկ գանձելու ազատ մուտք ապահովել դեպի Մոսկվա[65]: Հրահանգվել է Կազանի նահանգապետ Պ. Ապրասկինին թույլատրել Ի. Օրուն անարգել Աստրախանից անցնել Մոսկվա: Բայց մինչ այդ ամենին ընթացք տալը պարզվում է, որ ավելի վաղ՝ օգոստոսին, Օրին արդեն մահացել էր:

Կազանի նահանգապետ Պ. Ապրասկինը 1711 թ. նոյեմբերի 7-ի մի գրությամբ տեղեկացնում է ինքնակալ մեծ Տեր Պյոտր Ալեքսեևիչին՝ դեռ օգոստոս ամսին Օրու մահվան և թաղման մասին: Ընդ որում, հոգեհանգիստը կատարվել է Աստրախանի հայկական եկեղեցում, իսկ թաղումը՝ եկեղեցու բակում: Նահանգապետը հայտնում էր. «Աստրախանի

---

[62] Տե՛ս Эзов Г.А., *նշվ. աշխ.*, վավ. թիվ 167, էջ 256:
[63] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 168, էջ 257–258:
[64] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 172, էջ 269–270:
[65] Տե՛ս նույն տեղում, վավ. թիվ 176, էջ 172–273, թիվ 178 էջ 274:

պարետի տեղակալ Միխաիլո Չիրկովը սեպտեմբերին ինձ նամակ է ուղարկել, որում գրում է, որ Հռոմի պապի պատվիրակ (բանագնաց) Ի. Օրին Պարսկաստանից ծովով վերադարձավ Աստրախան, մեկ ամսից ավելի ապրեց և օգոստոսին մահացավ, հուղարկավորված է Աստրախանի հայկական եկեղեցու գավթում, իրենց օրենքով»[66]: Եսայի կաթողիկոսը հուղարկավորել է Օրուն և տրտում վերադարձել հայրենիք: Որքան էլ ցավալի է, հարկ է փաստել, որ հետագայում՝ 1742 թ., Պետրոս Մեծի դստեր՝ Ելիզավետա Պետրովնա կայսրուհու հրամանով Աստրախանի հայկական եկեղեցին, որի բակում ամփոփված էր Ի. Օրու աճյունը, քանդվել է, իսկ առաջնորդարանն էլ՝ փակվել[67]: Իսկ մեր ժամանակներում պրոֆ. Ա. Աբրահամյանը, ցավով նկատել է տալիս, որ դժբախտաբար այդպես էլ հնարավոր չեղավ գտնել Ի. Օրու գերեզմանը[68]:

Ի. Օրիի առեղծվածային մահվան առնչությամբ, նրա արկածալից կյանքի ու հակասական դրվագներով լի պատմությանը խորագիտակ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը նշում է, որ 1711 թ. օգոստոսի սկզբին Օրին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ ժամանում է Աստրախան, սակայն այդ նույն ամսվա վերջին անսպասելիորեն, չպարզված հանգամանքներում հանկարծամահ է լինում, որոշ տեղեկություններով՝ թունավորումից, իսկ որոշով էլ՝ նրա մահը կապված էր առևտրատնտեսական գործունեության և այդ ոլորտում հակառակորդներ ունենալու հետ[69]: Ի. Օրիի անսպասելի մահը խափանում է նաև Եսայի կաթողիկոսի՝ ցարին հանդիպելու մտադրությունը:

Օրիի առևտրատնտեսական (վաճառականական) գործունեության առնչությամբ կարելի է մեկնաբանություն անել այն մասին, որ, օրինակ, Կ. Եզյանի կազմած հետագա փաստաթղթերում՝ սկսած թիվ 181-ից, Օրու մահից հետո այլևս գրեթե չի խոսվում նրա քաղաքական գործունեության մասին, այլ բերված փաստաթղթերում Մինաս վարդապետը, ցարական իշխանավորները և ուրիշներ նրան պատկերում են սոսկ որ-

---

[66] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 180, էջ 277–278:

[67] Տե՛ս **Մկրտումյան Լ.**, *նշվ. աշխ.*, էջ 27:

[68] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, *Իսրայել Օրի*, էջ 117:

[69] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 414–415:

պես վաճառական՝ Պարսկաստանից նժույգներ, մետաքս, գորգեր և այլ թանկարժեք ապրանքներ վաճառողի, խոսվում է նրա առևտրական գործերի, կուտակած պարտքերի և համանման այլ բաների մասին, ինչը, անշուշտ, էապես ստվերում է Օրու անմնացորդ հայ ազատագրական շարժմանն ու պայքարին, քաղաքական-ազատագրական գաղափարներին նվիրվելու ու գործելու առաքելությունը: Բայց և պետք է ընդունել այն հանգամանքը, որ իր տևական գործունեության ընթացքում զբաղվելով նաև վաճառականությամբ, նա դա ծառայեցրել է ոչ թե ինչոր անձնական հարստացման նպատակի, այլ հայրենիքի ազատագրության գործին: Բազմավաստակ պատմաբան Լեոն, ամփոփելով Ի. Օրու կյանքի ու գործունեության ոդիսականը և անսպասելի վախճանը, ցավով եզրակացնում էր, որ դրանով «**Հայաստանի ազատության գաղափարը մի սաստիկ հարված ստացավ**»[70]:

Այսպիսով՝ Ի. Օրու անսպասելի մահվամբ ընդհատվեց հայ ժողովրդի՝ օտարի լծից ազատագրմանը և հայկական պետականության վերականգնմանը միտված նրա արգասավոր գործունեությունը: Անցյալի ավանդույթի ուժով սկզբում, անգամ դավանափոխ լինելու պայմանով, Հայաստանի ազատագրության հույսը կապվեց արևմտաեվրոպական պետությունների օգնության և աջակցություն հետ: Սակայն հետագա քաղաքական գործընթացների, դեպքերի ու իրադարձությունների տրամաբանական ընթացքով դիմաշրջում կատարվեց դեպի աշխարհագրորեն Հայաստանին ավելի մոտ, ուստի, գործնական աջակցության առումով իրատեսական համարվող երկիր՝ Ռուսաստան: Դրանով էլ, փաստորեն, հայ իրականության մեջ առարկայորեն դրվեց հայ ժողովրդի ռոսական կողմնորոշման սկիզբը:

«Հայոց պատմության» հետխորհրդային ակադեմիական բազմահատորյակում, գնահատական տալով Ի. Օրիի արգասավոր գործունեությանը, նկատել չտալով նրա կողմից առանձին դեպքերում հանգամանքների բերումով թույլ տված շեղում-կեղծիքների մասին, մասնավորաբար կարդում ենք՝ «Իսրայել Օրու հայրենանվեր գործունեությունը XVII դարավերջի-XVIII դարասկզբի հայ ազգային-ազատագրական

---

[70] Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 441:

ոգորումների ամենանշանավոր դրվագներից է: Իսրայել Օրին կանխադրեց հայ ազգային-ազատագրական պայքարում ռուսական կողմնորոշման, այսինքն՝ Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքի գաղափարը, մշակեց Հայաստանի ազատագրության և հայկական պետականության վերականգնման քաղաքական ծրագիրը՝ ազգային-ազատագրական պայքարում շեշտը դնելով ներքին ապստամբական լայն շարժման վրա: Հայ ժողովրդի ներքին նախաձեռնությունը պետք է լիներ սեփական պետականության վերակերտման երաշխիքը: Իսրայել Օրու արծարծած ազատագրական գաղափարներն ոտենիշ դարձան հայ ազգային հետագա պայքարի համար և սնուցեցին ազատագրական միտքը»[71]:

Այդ տեսլականը հետագայում ավելի խորացավ և հայ հասարակական-քաղաքական մտքում ու կյանքում դարձավ տիրապետող հոսանք-մտայնություններից մեկը: Ուստի, անառարկելի է, որ Ի. Օրու գործունեությամբ պայմանավորված, հայ հանրության մեջ աստիճանաբար ձևավորվեց ռուսական քաղաքական կողմնորոշումը: Սակայն դա ամենևին էլ չէր նշանակում, թե սոցիալապես ու քաղաքական մտքի առումով բազմաշերտ և տարաշխարհիկ հայության մեջ այն եղել է միակ ու միշտ գերիշխող հոսանքը: Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման 300-ամյա պատմության փորձն ու դասերը ցույց են տալիս, որ այդ կողմնորոշումը միանշանակ չի եղել: Այն իր հետ բերել է ոգևորության պահեր, քաղաքական վայրիվերումներ, նաև հիասթափություններ:

* * *

Այսպիսով, XVII դարի վերջերի և XVIII դարասկզբի հայ ազատագրական շարժման ու պայքարի նշանավոր գործիչ Ի. Օրին իր անձնվեր, սակայն հակասական, երբեմն էլ արկածալի գործունեությամբ համարվում է հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման սկզբնավորողը: Քաղաքական կողմնորոշման՝ Արևմուտքից դեպի Ռուսաստան անցման ճանապարհին նա ռուսական քաղաքական շրջանակներին Հայաստանի ազատագրման գործում շահագրգռելու համար երբեմն անհրաժեշտաբար դիմել է փաստաթղթերի կեղծման: Նրա ծավալած

---

[71] *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 27:

Արևմուտք-Ռուսաստան քաղաքական, բանակցային, դիվանագիտական գործունեության փաստավավերագիր արձանագրումները, Հայաստանի ազատագրության երկու՝ «Պֆալցյան» և «Մոսկովյան» ծրագրերը, չնայած տվյալ ժամանակի համար իրենց անիրատեսականությանը, հարուստ նորույթ են հայ քաղաքական մտքի պատմության համար: Օրին առաջին գործիչն էր, որ հայ ազատագրական շարժումը և դիվանագիտական բանակցությունները դուրս բերեց հոգևորականների կրոնադավանաբանական բանավեճերի մակարդակից և դրեց գործնական, աշխարհիկ բովանդակության ռազմաքաղաքական հիմքերի վրա:

Ի. Օրու ազատագրական նպատակադրումների վերջնանպատակը ամբողջական Հայաստանի ազատագրումն էր պարսկա-թուրքական բռնատիրություններից և ինքնավար հայկական պետականության (թագավորության) վերականգնումը, սկզբնապես՝ արևմտաեվրոպական տերությունների, այնուհետև՝ Ռուսաստանի հովանու ներքո, ինչի մասին փաստում են նրա կազմած երկու ծրագրերը, ինչպես նաև Պետրոս ցարին ներկայացրած «Մեծ Հայաստանի» քարտեզը:

Դրվատանքի արժանի բանասեր, պատմաբան Կարապետ Եղյանի կազմած փաստավավերագիր արժեքավոր ժողովածուն և օժանդակ այլ նյութեր բերում են այն հետևության, որ **հայերի ռուսական կողմնորոշման սկիզբը համարվում է ոչ թե XVII դարի երկրորդ կեսին կամ անգամ XVIII դարասեմին, այլ 1720-ական թվականներին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Պետրոս Մեծի կողմից ձեռնարկվելիք արշավանքի ակնկալիքով բռնկվեց Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարը: Սա նշանակում է, որ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշումն ունի երեք դարի պատմություն:** Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե հայությունը միակողմանիորեն անսասան կանգնած է եղել այդ կողմնորոշման դիրքերում: Պատմագիտական անաչառությունը պահանջում է արձանագրել, որ ժամանակի ու հանգամանքների հրամայականով, հատկապես 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին, մասնավորապես, Հայկական հարցի արծարծումների ընթացքում, հայ հասարակական-քաղաքական շրջանները մեծապես ու անհրաժեշտաբար հանդես են բերել նաև այլ՝ արևմտյան կողմնորոշում, սակայն երկու դեպքում էլ չեն հասել էական դրական արդյունքի:

Միաժամանակ պետք է նկատել, որ հայ ժողովրդի արևմտաեվրոպական, իսկ հետագայում ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում հարկ չկա խոր անջրպետ անցկացնել դրանց միջև, քանզի արդեն Պետրոս Մեծի ժամանակներից Ռուսաստանն իր քաղաքական, պետաիրավական ու մշակութային արժեքային համակարգով հավակնում էր դառնալու եվրոպական երկիր: Իսկ աշխարհագրական առումով նա ավելի մոտ էր Հայաստանին, ուստի ավելի իրատեսական էր Հայաստանի ազատագրումը Ռուսաստանի կողմից: Այլ խոսքով, եթե համադրենք ու արժևորենք քաղաքական երկու երթուղիներով ընթացած Ի. Օրու առաքելությունը, ապա նման կողմնորոշումը, մեծ հաշվով, կարելի է համարել **եվրոպառուսական**, ինչը քաղաքակրթական բովանդակություն է հաղորդում նրա առաքելությանը:

Կարելի է նաև դատողություններ անել այն մասին, որ Ի. Օրու ժամանակ, գաղափարի առումով, հայ հասարակական-քաղաքական մտքում առաջին անգամ օրակարգ դրվեց Հայաստանի ազատագրության՝ արևմտաեվրոպական, թե ռուսական երկընտրանքը: Թող կոպիտ չինչի, իր հերթին ռուսական իրականության մեջ զուտ ռուս ազգային թե մարդկային քաղաքակրթական արժեքային համակարգին նախապատվություն տալու հարցում դեռ Պետրոս Մեծի ժամանակներից ռուս հասարակական-քաղաքական ու գաղափարական շրջաններում սկիզբ էր առել մրցակցային պայքար երկու՝ «Արևմտական» և «Սլավոնաֆիլ» ուղղությունների (հոսանքների) միջև: Այդ պայքարը փոխադրվեց XIX դար ու ավելի սուր բնույթ ստացավ: Հասկանալի է, որ Ռուսաստանում համամարդկային-քաղաքակրթական թե ռուս-սլավոնական էթնիկ արժեհամակարգի երկընտրանքի նախապատվության հարցում, դրան շաղախված 19-րդ դարին շատ բնորոշ՝ հասարակական, սոցիալ-դասակարգային, հոգևոր ու կրթամշակութային բազում այլ հիմախնդիրներ, ընթանում էին տարբեր հարթության վրա: Մինչդեռ Հայոց պարագայում, հայ ժողովրդի առջև ծառացած գերխնդիրը՝ Հայաստանի ու ժողովրդի **ազատագրության** խնդիրն էր՝ **արևմտաեվրոպական երկրների,** թե **Ռուսաստանի** օգնությամբ: Այս հարցը, փոքր այլ ձևակերպմամբ, իր արդիականությունը չի կորցրել նաև մեր ժամանակներում:

Փաստավավերագիր նյութերի և տարածաշրջանի պատմաքաղաքական իրադարձությունների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ Ի. Օրու դարաշրջանում Հայաստանը գործնականում արտաքին ուժերի օգնությամբ ազատագրելու իրական որևէ հեռանկար չի ունեցել՝ ո՛չ Ռուսաստանի և ո՛չ էլ, առավել ևս, Արևմուտքի կողմից: Ի հակակշիռ դրա, հարկ է արձանագրել, որ Ի. Օրու դարաշրջանում հայ ժողովրդի մոտ դեռևս չէր ձևավորվել այն անբեկանելի քաղաքական կոնցեպտը, որ ազգային ազատ, անկախ պետականություն ունենալու և այն պաշտպանելու համար առաջին հերթին պետք է ապավինել ազգային հավաքական գիտակցությանը, **սեփական ուժերին** ու կարողականությանը: Անգամ մեր օրերում, արդի լուրջ մարտահրավերների պայմաններում, դժվար է ասել, թե մեզանում որքանով է անշրջելի դարձել անկախ պետականության, հայրենիքի պաշտպանության հայ հանրության ու պետական իշխանավորների քաղաքական մտածելակերպն ու գործելակերպը:

## *6. Հարցի պատմագրությունը: Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի գնահատականը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում*

Քանի որ աշխատության սույն գլխում հիմնականում ուշադրություն ենք դարձրել Հայաստանի ու հայության համար ռուսական քաղաքական կողմնորոշման տեսակետից բեկումնային հանդիսացող XVIII դարասկզբին, ուստի կփորձենք քննության նյութ դարձնել հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը (հոլովույթը), ինչը կարող է արդիական հնչել նաև մեր ժամանակներում հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում:

Հայ պատմագրության մեջ ավելի քան երկու դար է, ինչ տարածում ունի կարծրացած մի տեսակետ, թե XVIII դարի սկզբին, հանձին Ի. Օրու, հայ քաղաքական միտքը **շրջադարձ** կատարեց և հայ ազատագրական շարժումը վերջնականորեն կողմնորոշվեց դեպի Ռուսաստանը: Նախ, ի առարկություն դրա, հարց է ծագում, եթե իրոք, հայ ազատագ-

րական միտքն ու գաղափարաբանությունը շրջադարձ է կատարել դեպի Ռուսաստան, ապա հետագա 19–20-րդ դարերում հայ գործիչները, ազգային կառույցներն ու կազմակերպությունները, իսկ ավելի ուշ՝ քաղաքական կուսակցություններն իրենց ծրագրերով, նրանց գործիչներն ու պատվիրակությունները ինչո՞ւ էին շարունակ դեգերում աշխարհի ամենատարբեր ուղղություններով՝ Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման դիմում-խնդրագրերով, 19-րդ դարի վերջին քառորդից միջազգային արենա նետված Հայկական հարցի լուծման, Հայոց ցեղասպանության դատապարտման ու հայ գաղթականության, Հայաստանի առաջին հանրապետության կայացման, Միացյալ Հայաստանի գաղափարի նյութականացման և այլ համազգային նշանակության բազում հիմնախնդիրների լուծմանը միտված սպասումներով ու ակնկալիքներով: Եթե հայ քաղաքական գործիչները և պատվիրակությունները ժամանակ առ ժամանակ հարկադրված են եղել Ռուսաստանից զատ դիմել նաև օտար շատ ուրիշ երկրների ու պետությունների աջակցությանը՝ կնշանակի հայ ժողովրդի համար **շրջադարձ ու բախտորոշ** համարվող ռուսական քաղաքական կողմնորոշումը, մեղմ ասած, այնքան էլ չի արդարացրել հայ հանրության սպասվելիք հույսերը, իսկ առանձին պահերին այն պարզապես եղել է հիասթափեցնող:

Ավելին, հետագա պատմական թռուցիկ ակնարկով ասվածին կարելի է հավելել նաև հետևյալ հարցը, թե ռուսական համոզված կողմնորոշում հանդես բերած հայ ժողովրդին, իր պայքարի ու զոհողությունների գնով, 1918 թ. մայիսին նորահռչակ անկախ պետականությանը՝ Հայաստանի առաջին հանրապետությանը, ինչպիսի՞ օգնություն ու օժանդակություն ցուցաբերեց Հոսիսի մեր մեծ հարևանը: Իրականում փաստերը վկայում են, որ կատարվել է հակառակը, խորհրդային հռչակված Ռուսաստանը ոչ միայն աջակից չեղավ Մեծ եղեռն տեսած հայ ժողովրդին և դրա դիմաց հիմնականում Արևմուտքի տերությունների ջանքերով, իբրև փոխհատուցում՝ Սևրի պայմանագրով Միացյալ Հայաստանի գաղափարի նյութականացմանը, այլ, դրան հակառակ, բոլշևիկյան Ռուսաստանը Օսմանյան Թուրքիայի (քեմալականների) հետ միասին հանդես եկավ «իմպերիալիստական» որակած ՀՀ ու 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագրի դեմ և դրան իբրև պա-

տասխան՝ ֆինանսավորեց, զինեց, համակողմանի օգնություն ցուցաբերեց թուրք ազգայնական (միլլի) անվանումը ստացած քեմալական Թուրքիային, որի հետևանքով ծանր պարտություն կրեց տակավին նորակազմ Հայաստանի Հանրապետությունը, և նրա տարածքները բզկտելով՝ բաժանեցին իրար միջև[72]: Ահա՛, դա եղավ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման ստացած դառը պտուղը: Տեղին է հիշել Վ. Նավասարդյանի հնչեցրած միտքն այն մասին, որ «Ռուսաստանը միշտ նույնն է, փոփոխվում են նրա գույները միայն և, ըստ գույների, նաև նպատակները»[73]:

Պատմական ակնարկով կրկին դառնալով հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման խնդրին՝ հարկ է հատուկ ընդգծել, որ հայ պատմագրության մեջ Հայաստանի ու հայ ժողովրդի արևմտյան կամ ռուսական կողմնորոշման հարցի ամենախորագիտակ հետազոտողը անկասկած համարվում է հայ պատմագիտության երախտավորներից ակադեմիկոս **Աշոտ Հովհաննիսյանը** (1887–1972): Բայց և պետք է նկատել, որ հատկապես Ի. Օրիի կյանքի ու գործունեության հետ կապված հայերի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում, ինչպես արդեն ակնարկվել է, նրա տևական պատմագիտական հետազոտությունների **նախախորհրդային** ու **խորհրդային** երկարամյա հինգ-վեց տասնամյակների գիտահետազոտական աշխատանքի ընթացքում, կապված, մեր կարծիքով, հավանաբար ավելի շատ գաղափարական ու քաղաքական նպատակահարմարության (կոնյունկտուրայի), միջանձնային հարաբերությունների և այլ հանգամանքների հետ, Ա. Հովհաննիսյանի աշխատություններում կարելի է տեսնել որոշակի **դիմաշրջում**: Բանն այն է, որ 1913 թ. Գերմանիայում (Մյունխենում) պաշտպանած «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափա-

---

[72] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Հակոբյան Ա.**, *Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում*, Եր., 2020, նաև՝ **Акопян А.**, *Московский и Карсский договоры в судьбе армянского народа*, Ер., 2021.

[73] **Նավասարդյան Վ.**, *Դաշնակցության քաղաքական ուղին*, Գահիրե, 1925, էջ 131:

որը» դոկտորական ավարտաճառում[74] և 1921 թ. Էջմիածնում լույս ընծայած՝ «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» գրքույկում[75] երիտասարդ պատմաբան Ա. Հովհաննիսյանը մի տեսակ վերապահությամբ է խոսում հայ մելիքների կողմից Օրուն տրված լիազորությամբ՝ Պետրոս Մեծին ուղղված, այսպես կոչված, «**ճերմակ թղթի**» իրավունքով լրացված դիմում-նամակների օրինականության և ընդհանրապես հայերի ռուսական կողմնորոշման (արևելման), էլ չենք ասում՝ դեպի Ռուսաստան հայերի **դարակազմիկ շրջադարձի** մասին:

Եվ այդ ամենի փոխարեն մենք միանգամայն այլ միտք ու գաղափար ենք տեսնում՝ 1955 թ. սոցիալիզմ կառուցող Խորհրդային Հայաստանում գործնականում նույն թեմայով պաշտպանած դոկտորական ատենախոսությունում, որը մենագրության ձևով լույս է տեսել նրա հանրահայտ ու արժեքավոր «Դրվագներ»-ի երկհատորյակում՝ 1957 և 1959 թթ.[76]: Իսկ այդ շրջանում նորահիմն «Պատմա-բանասիրական հանդեսի» առաջին իսկ համարում զետեղված հոդվածում Ա. Հովհաննիսյանը XVIII դարասկզբի Ի. Օրու քայլը որակում է՝ «Հայ ժողովրդի պատմության համար **անկյունադարձային**»[77]: Սրանցում արդեն կուսակցական ու պետական նախկին ականավոր գործիչ, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը խոսում է հայ ազատագրության լեգենդում ու քաղաքական մտքում XVIII դարի սկզբին կատարված **շրջադարձի** մասին, որի ժամանակ ռուսական պետությունը դարձավ **հայ քաղաքական մտքի հուսակայանը**[78]: Մեկ այլ տեղ Ա. Հովհաննիսյանը, փոքր այլ ձևակերպմամբ, դեպի Ռուսաստան Օրիի դիմադարձը համարում է շրջադարձ «հայ ազատագրական մտքի պատմության մեջ»: Նրա բնորոշմամբ՝ «**գոցվում էր հին մի դար և բացվում նորը**»[79]: Իբրև եզրահանգում,

---

[74] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, նաև՝ **Սարուխանյան Ն.**, *Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի մասին*, Եր., 2012, էջ 5:

[75] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, Էջմիածին, 1921:

[76] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 1, էջ 8–9 և գ. 2:

[77] **Հովհաննիսյան Ա.**, *Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից* (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), Եր., 1958, թիվ 1, էջ 65:

[78] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 1, էջ 91:

[79] Նույն տեղում, գ. 2, էջ 415:

դարձյալ ըստ Ա. Հովհաննիսյանի, «Օրին առաջինն էր, որ մոսկովյան իր ծրագրով դուրս բերեց հայ ազատագրական շարժումն ու հայ դիվանագիտական բանագնացությունները կրոնադավանաբանական հին փակուղուց» և այլն[80]: Ի. Օրիի կյանքի ու գործունեության վերաբերյալ Ա. Հովհաննիսյանի «Դրվագներում» առաջ քաշված մտքերն ու դատողությունները անվիճարկելի ուղեցույց են հանդիսացել խորհրդահայ պատմագրության համար: 1950-ական թվականների իր աշխատություններում Ա. Հովհաննիսյանը, հասկանալի պատճառներով դիմադարձ կատարելով, ընդգծում է Ի. Օրիի խաղացած դարակազմիկ դերը հայ ժողովրդի բացառապես ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում: Նրա պատկերմամբ՝ Ի. Օրիի քաղաքական դեգերումները, ի վերջո, «արևմտաեվրոպական դիվանագիտական մոլար շավիղներից տարավ դեպի Մոսկովյան պետության շիտակ ուղիները»[81]:

Վերը ասվածից ակներև է դառնում հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում պատմաբան Ա. Հովհաննիսյանի տրված գնահատականների տարբերությունը՝ 20-րդ դարասկզբներին նրա տված գնահատականը պատմագիտորեն ավելի **հավասարակշիռ, չափավոր է ու զուսպ**, իսկ արդեն խորհրդային ժամանակաշրջանում՝ «Դրվագներում» և հոդված հրապարակումներում, հասկանալի պատճառներով, ռուսական-խորհրդային քաղաքական կողմնորոշումը քաղաքական-քարոզչական նպատակներով ընդգծելու համար այն ներկայացվում է որպես պատմական **բեկում** ու **շրջադարձ**:

Այդպիսով, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի աշխատություններում, ըստ պատմական շրջափուլերի, նախախորհրդայինից մինչև խորհրդային ժամանակաշրջան, հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում տեղի է ունեցել գնահատականների վերարժևորումներ՝ օբյեկտիվ, անաչառ ու զուսպ գնահատականներից մինչև խորհրդային-կոմունիստական գաղափարաքաղաքական նպատակահարմարության (կոնյունկտուրայի) ազդեցությամբ, հասկանալիորեն թույլ է տրվել գիտական օբյեկտիվության ու անաչառության

---

[80] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 632:
[81] Նույն տեղում, գ. 1, էջ 8:

շրջանակներից դուրս, խորհրդային պատմագրությանը բնորոշ, հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման ու Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հարցերում հաճախ միակողմանիություն, չափազանցություն ու գերագնահատում:

Բայց այս ամենի կողքին, գնահատանքի է արժանի Ա. Հովհաննիսյանի գիտականորեն հիմնավոր ու համոզիչ դիտարկումն այն մասին, որ XVII–XVIII դարերում հայ ազատագրության գաղափարը ունեցել է սոցիալ-քաղաքական խոր արմատներ և պատմական ավանդույթի ուժով՝ գաղափարական նախադրյալներ: Այս կապակցությամբ, նա իրավացիորեն մերժում է խորհրդային պատմագիտության որոշ շրջանակներում տարածում ստացած, միակողմանի և իրականում գիտականությունից հեռու քարոզչական նպատակներ հետապնդող այն խոսույթը, թե իբր միջնադարում հայ ազատագրական միտքը կարող էր ունեցած լինել քաղաքական ընդամենը մեկ կողմնորոշում և հասկանալի է, թե՝ մեկ կողմնորոշում ասելով որ պետությունը նկատի ունեին՝ բնականաբար, Ռուսաստանը: Նա զարգացրեց այն միտքը, որ, ինչպես հայ ժողովրդի պատմության մեջ ընդհանրապես, նույն կերպ և հայ ազատագրական շարժումներում, բնականաբար, առկա են եղել հասարակական-քաղաքական տարբեր հոսանքներ և ուղղություններ՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնկրետ հանգամանքներով ու պայմաններով, պատմական դեպքերի զարգացումներով[82]: Հենց դրանով, օրինակ, կարելի է բացատրել XVII դարի վերջի և XVIII դարասկզբի հայ ազատագրական շարժման վառ ներկայացուցիչներից մեկի՝ Իսրայել Օրիի դիրքորոշումների փոփոխությունը, այն էլ, փատորեն, եվրոպացիների հուշոմով, քրիստոնյա **Արևմուտքից** դեպի ավելի իրատեսական՝ քրիստոնյա **Ռուսաստան**:

Այս առնչությամբ, մեր կարծիքով, այնքան էլ փաստարկված և հիմնավոր չէ ժամանակին հայցորդ Ա. Հովհաննիսյանի 1913 թ. Գերմանիայում (Մյունխենում) պաշտպանած դոկտորական ավարտաճառի վերաբերյալ «Հովհաննիսյան ինստիտուտ»-ի թարգմանիչ-հրատարակիչ հե-

---

[82] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 485:

ղինակային խմբի կողմից 2016 թ. հրատարակված գրքի նախաբանում տրված այն մեկնաբանությունը, թե իբր 1913 թ. ավարտաճառի պաշտպանության ժամանակ Ա. Հովհաննիսյանի ձեռքին եղել են հնացած տվյալներ և ամենից առաջ «մելիքների անունից Օրիի գրած նամակների հարցում» և, որ արդեն «Դրվագներ»-ի երկհատորյակում նոր հայտնաբերված փաստական տվյալներով՝ նա այդ հարցը լուծել է: Այնինչ, Ա. Հովհաննիսյանի ավարտաճառի (ատենախոսության) գերմաներենից հայերեն թարգմանած և հրատարակության պատրաստած այդ նույն հեղինակային խումբը վերահաստատում է, որ «Դրվագներ»-ի երկհատորյակն ամբողջությամբ կառուցված է 1913 թ. ավարտաճառի շարադրանքի ու բովանդակության հիման վրա[83]: Մեր համոզմամբ, ևս երկու տեքստերի համեմատությունից պարզվում է, որ երկու դեպքում էլ՝ թե՛ 1913 թ. դոկտորական ավարտաճառում և թե՛ խորհրդային ժամանակաշրջանում 1955 թ. դոկտորական դիսերտացիան (գիտական թեզը) բովանդակող «Դրվագներում» հայ-ռուսական օրիենտացիայի հարցի շուրջ հայցորդ Ա. Հովհաննիսյանի օգտագործած հիմնական սկզբնաղբյուրը հանդիսացել է Կ. Եզյանի քանիցս հիշատակված փաստաթղթերի ու վավերագիր նյութերի հարուստ ու արժեքավոր ժողովածուն:

Ավելի կոնկրետ, Ա. Հովհաննիսյանն իր վաղ՝ նախախորհրդային աշխատություններում հայերի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում՝ նկատել էր տալիս, որ մինչև XVII դարի վերջերը հայ քաղաքական մտքում «ռուս օրիենտացիան բանուկ ճանապարհներ չունէր տակաւին»[84]: Ավելին, Ա. Հովհաննիսյանը հայերի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում առաջ քաշեց այն համոզումը, որ նույնիսկ «մինչև 1720-ական թվականները ռուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնութիւնը չի սնել, այլև ուղեցոյց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մէկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին»[85]: «Եվ իրօք,- դարձյալ հավելում է Ա. Հովհաննիսյանը,- վաւերական ճանաչւած աղբյուրներից և ոչ մէկը ԺԸ (XVIII՝ Ա.Հ.) դարի սկզբներում չի վկայում ռուսական օրիենտացիա-

[83] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Իսպայեղ օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 20:
[84] **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիր*, էջ V:
[85] Նույն տեղում, էջ VI:

յի ժողովրդականութեան մասին: Ռուսասիրական հակումներ արտայայտողներից հայերի մէջ այդ շրջանում աչքի էր ընկնում մի մարդ միայն՝ Գանձասարի կաթողիկոս Եսային»[86]:

Այդպիսով, ժամանակային առումով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկիզբը, ըստ Ա. Հովհաննիսյանի, համարվում է ոչ թե XVIII դարասկիզբը, այլ 1720-ական թվականները, երբ պատմությանը հայտնի Պետրոս Մեծի կազմակերպած Կասպիական արշավանքի պայմաններում հայության մի հատվածը՝ Արցախ-Սյունիքը, կողմնորոշվելով դեպի Ռուսաստան, պայքարի ելավ՝ ակնկալելով ռուսական զորքերի օգնությամբ ազատագրել հայրենիքը պարսկաթուրքական բռնապետություններից:

Հարկ է նշել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ժամկետների հարցում Ա. Հովհաննիսյանի արտահայտած մտքերը ժամանակին ոչ միանշանակ է ընդունվել խորհրդային պատմագիտության առանձին հեղինակների կողմից: Այսպես, հայ-ռուսական հարաբերությունների քաջագիտակ մասնագետ Վազգեն Ոսկանյանը հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի ձևավորումը ստույգ ժամանակային առումով թվագրում է XVII **դարի երկրորդ կեսը**[87]: Ավելին, կան պնդումներ այն մասին, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումն ունի պատմական ավելի խոր արմատներ՝ հասցվելով ընդհուպ մինչև Կիևյան Ռուսիայի ժամանակները (IX–X դարեր)[88]: Դժվար է համաձայնվել նման տեսակետին, քանզի պատմական անցյալում հայազգի առանձին անհատների տարբեր առիթներով՝ առևտրա-տնտեսական, զինական, մշակութային և այլն ունեցած կապերը ռուս շրջանակների հետ չի կարելի **շփոթել** հայ ժողովրդի դեպի Ռուսաստանը ունեցած **քաղաքական կողմնորոշման** սկզբնավորման երևույթի հետ: Ակներև է, որ մի բան է խոսել հայ և ռուս ժողովուրդների միջև առևտրատնտեսական,

---

[86] **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդրի*, էջ 56:

[87] **Ոսկանյան Վ.**, *Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում* (թիվ 1, էջ 76): **Նույնի՝** *Հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի հարցը մինչսովետական պատմագրության մեջ* (տե՛ս «Տեղեկագիր», Եր., 1957, թիվ 3, էջ 46):

[88] Տե՛ս *Армянское войско в XVIII веке (исследование и документы)*, подготовил к изданию **А.Н. Хачатрян**, Ер., 1968, с. 35 и 39.

մշակութային, զինական և այլ կապերի մասին, որոնք սկիզբ են առել դեռևս Կիևյան Ռուսիայի ժամանակներից և բոլորովին այլ բան՝ արձանագրում անել հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման ձևավորման կուրսի մասին: Այս առնչությամբ փոքր-ինչ այլ մեկնաբանություն է անում պրոֆ. Զ. Գրիգորյանը: Նա հայերի ռուսական կողմնորոշման կազմավորման հարցում գտնում է, որ այն եղել է պատմական երկարատև գործընթաց, սկսվելով Կիևյան պետության ժամանակներից՝ «իր քաղաքական ձևավորմանն է հասել XVII դարի երկրորդ կեսին»[89]: Ինչ վերաբերում է Ի. Օրու խաղացած դերակատարությանն այդ հարցում, ապա պատմաբանի պարզաբանմամբ՝ «իր քաղաքական ծրագրով և պրակտիկ գործունեությամբ խորացրեց, ավելի հստակ ու կազմակերպված բնույթ տվեց և առաջ մղեց հայերի ռուսական օրիենտացիան»[90]:

Քննադատաբար մոտենալով վերը ասվածներին՝ կարելի է ասել, որ տակավին 18-րդ դարի 1-ին երկու տասնամյակներին, էլ չենք խոսում ավելի վաղ ժամանակների մասին, դեռևս չի կարող հստակ խոսք լինել հայ բարձր դասի՝ աշխարհական և հոգևոր շրջաններում ռուսական քաղաքական կողմնորոշման ձևավորման մասին: Փաստավավերագիր նյութերի համադրական-քննական վերլուծությունների հիման վրա Ա. Հովհաննիսյանը, մեր կարծիքով ևս, իրավացիորեն եկել է այն հետևության, որ «Ռուսական օրիենտացիան խմորուեց 1720-ական թուականների շուրջը, երբ նեղուած պարսից դէմ ապստամբած ցեղերից, հայ կղերի և մելիքութեան մի խոշոր հատուած հարկադրուած եղաւ փարիզ ռուսների օգնութեանը և նրանցից փրկութիւն յոսալ»[91]: Եվ այդ գործում, իբրև առաջին նախակարապետներ, անշուշտ, իրենց անուրանալի դերակատարությունն են ունեցել Ի. Օրին և մասամբ Մինաս վարդապետը:

Այսպիսով, հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի ձևավորման հարցում մենք հակված ենք ավելի հիմնավոր ու համոզիչ համարել Ա. Հովհաննիսյանի նախկինում (1913 և 1921 թթ.) արտահայտած տեսակետը, քանզի հետագայում արդեն խորհրդային կոմունիստական վար-

---

[89] **Գրիգորյան Զ.Տ.**, *Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը*, էջ 68 և 91:

[90] Նույն տեղում, էջ 91:

[91] **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, էջ 63:

չակարգի պայմաններում գործել է Ռուսաստանի **փրկարար** դերի և հայ-ռուսական դարավոր եղբայրության մասին գաղափարաքաղաքական նպատակահարմարության (կոնյուկտուրային) քարոզչամեքենան, որից հասկանալիորեն չէր կարող խույս տալ ո՛չ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը և ո՛չ էլ մեկ այլ ոտիշ պատմաբան-հետազոտող:

Արդի իրողությունների, հայ-ռուսական հարաբերությունների լույսի տակ Օրիի և Մինաս վարդապետի հայ-ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում արդեն «Դրվագներում» տրված գնահատականը, անշուշտ, չափազանցություն է: Այն չափազանցություն է ոչ միայն թույլ տրված առանձին կեղծիքներ անելու առումով, այլև նրանով, որ ասենք, ինչպես կարելի է մեկ-երկու գործչի, անգամ ձեռքներին որևէ օրինական ու հիմնավոր փաստաթուղթ չունենալով հանդերձ, վարած բանակցությունների արդյունքով գնահատել, թե՝ **տեղի ունեցավ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման շրջադարձ** և որ, **իբր, դրանով նոր դարագլուխ բացվեց հայ ժողովրդի պատմական ճակատագրում**: Նման դատողությունները պատմական իրողություններից հեռու են, և չի կարելի ընդունել որպես անվերապահ ճշմարտություն: Այս կապակցությամբ, տեղին ու դիպուկ է ակադեմիկոս Ա. Մելքոնյանի պատմագիտական դիտարկումն այն մասին, որ մեզանում «դեռևս հաղթահարված չէ այն կարծրատիպը, որ մեկ կամ մի քանի քաղաքական գործչի (ասենք՝ Ի. Օրու, Եսայի կաթողիկոսի՝ Ա.Հ.) գործելակերպով չի կարող ձևավորվել ամբողջ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը»[92]: Այս ամենով հանդերձ, իհարկե, չի կարելի ժխտել նաև Ռուսաստանի քաղաքական շահերով թելադրված հետաքրքրությունը մեր տարածաշրջանում, ինչը օբյեկտիվորեն կարող էր իր նպաստը բերել հայերի ու Հայաստանի ազատագրական ձգտումներին: Արդի աշխարհաքաղաքական մարտահրավերների և իրողությունների լույսի տակ, կարծես, կրկին պատմագիտական վերագնահատման ու վերարժևորման կարիք ունեն պատմական բնույթի շատ իրադարձություններ, այդ թվում՝ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման ձևավորման հիմնահարցը:

---

[92] **Մելքոնյան Ա.**, *Պատմագիտական հետազոտություններ*, էջ 46:

«Դրվագների» հեղինակը ցույց է տալիս, որ Ի. Օրին իր առջև դրված խնդիրը՝ Ռուսաստանի օգնությամբ հաջողեցնելու համար մինչև իսկ դիմել է պատմական իրողությունների և անգամ փաստաթղթերի կեղծման: Ընդ որում, Օրիի անունով կազմված նամակների և գրությունների ձեռագրային հետազոտության արդյունքում Ա. Հովհաննիսյանը հանգել է այն հետևության, որ դրանք կազմված են անվարժ, և հիմքեր կան պնդելու, որ Օրին եղել է ընդամենը թելադրող[93]: Այսպես, 1701 թ. Պետրոս Մեծին ուղղված լատինագիր մի վավերագիր՝ վավ. թիվ 35, թարգմանված ռուսերեն՝ թիվ 36 գրության մեջ տեղեկացվում է, որ Հայաստանի անկախության կորստից հետո, իրեն նախորդած երկուսուկես դարերի ընթացքում, Ադամի որդիները հույսով սպասել են «Մեսիայի գալստին», որ «Մոսկովյան օգոստափառ տնից պիտի գա մեծ մի իշխան և իր ձեռքը վերցնի Հայաստանի թագավորությունը»[94]: Այս կապակցությամբ տեղին է Ա. Հովհաննիսյանի՝ 1913 թ. դոկտորական ավարտաճառում արտահայտած հետևյալ խոսույթը (միտքը), որ «առնվազն մինչև այժմ մենք չունենք որևէ տեղեկություն այն մասին, որ հայերը մինչև Իսրայել Օրիի ժամանակներն ինչ-ինչ քաղաքական ակնկալություններ են կապել Ռուսաստանի հետ»[95]: Ա. Հովհաննիսյանը, գիտական սկզբունքայնություն հանդես բերելով, իր այդ նույն միտքը, ըստ էության, կրկնում է շուրջ 4–5 տասնամյակ անց՝ իր արժեքավոր «Դրվագներում» հետևյալ նույնաբովանդակ դատողությամբ՝ որ իրեն հայտնի չէ և, առհասարակ, գոյություն չունի նման պատմական փաստ, թե մինչև XVIII դարի սկիզբը հայերը իրենց հույսը դրած լինեն բացառապես Մոսկովյան պետության վրա[96]:

Ստույգ ասած, Օրիի այդ գրության մեջ, իսկապես, տեղ են գտել պատմական իրողությանը չհամապատասխանող կեղծիքներ և հասկանալի է, թե ինչու: Նման, օրինակ, որ Ռուսաց ցարից օգնության մասին մտքեր արտահայտելիս՝ Օրին ընդամենը կարող էր հենված լիներ, ինչպես արդեն քանիցս ակնարկվել է, հնից եկած և միջնադարյան Հա-

---

[93] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիր*, էջ 31–32:
[94] **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 36, էջ 75:
[95] **Հովհաննիսյան Ա.**, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 41:
[96] **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 1, էջ 14:

յաստանում հավելված, խմբագրված ու տարածում գտած հեքիաթի նմանվող գուշակությունների, լեգենդների ու տեսիլքների վրա: Եվ այդ-պիսիներից մեկն էլ վերևում հիշատակված 4-րդ դարի հայ եկեղեցու հայրերից Ներսես Պարթևի «Տեսիլքն» էր:

Հարկ է ընդգծել, որ ինչպես Ի. Օրին, նույնպես և Մինաս վարդապետը Հայաստանի ազատագրության ճանապարհին քրիստոնեական եկեղեցին ու հավատքը (դավանանքը)՝ պապական, լուսավորչական թե ուղղափառ, փորձել են ծառայեցնել իրենց քաղաքական նպատակներին: Դրա համար էլ նրանք, հարկ եղած դեպքում, կարող էին ներկայանալ թե՛ կաթոլիկ և թե՛ լուսավորչական, իսկ Մինաս վարդապետն իր գործունեության վերջին փուլում՝ նաև իբրև ուղղափառ հոգևորական: Ա. Հովհաննիսյանը, Մինաս վարդապետի հավատքի առնչությամբ, գրում է, որ երբ նա երես դարձրեց Արևմուտքից ու ուղղ դրեց Ռուսաստան՝ «վերջ ի վերջո մեռավ որպէս պրավոսլաւ (ուղղափառ՝ Ա.Հ.) հոգևորական»[97]:

Խոսելով հայերի ու Հայաստանի ռուսական կողմնորոշման հարցի մասին՝ կարելի է տեղեկացնել, որ դրան ժամանակին անդրադարձել են այդ շրջանի պատմության հարցերով զբաղվող խորհրդային և ոչ խորհրդային մեծաթիվ հայագետներ և ուրիշ այլ հետազոտողներ: Այսպես, վաստակաշատ հայագետ Հակոբ Անասյանը նույնպես գտնում է, որ XVII դարն այն շրջանն էր, երբ դեռ նոր էր «հող պատրաստվում հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման համար և միայն XVIII դարի սկզբներին է, որ Ռուսաստանը դարձավ հայերի ազատագրական հույսերի հիմնական խարիսխը»[98]: Խորհրդային մեկ ուրիշ հայագետ Մանվել Զուլալյանը ևս գտնում է, որ երկար դեգերումներից հետո «հայ ազատագրական միտքը հանգեց միակ ճիշտ եզրակացության՝ գտնելով, որ հայ ժողովրդի ազգային ազատագրումը հնարավոր է միայն մեծ ու հզոր Ռուսաստանի ռազմական աջակցությամբ»[99]: Հայ-ռուսական հարաբերությունների ճանաչված մասնագետ, պրոֆ. Վ. Դիլոյանը ևս գտնում է, որ «սկսած 18-րդ դարի վաղորդայնից հայ ազա-

---

[97] **Հովհաննիսյան Ա.**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիր*, էջ 36:
[98] **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 6:
[99] **Զուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 5:

տագարական միտքը շրջադարձ էր կատարել դեպի Ռուսաստան»[100]: Իսկ արդեն հետխորհրդային շրջանում Վ. Դիլոյանը, խոսելով հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցի մասին, ընդգծում էր. «Կողմնորոշում չի նշանակում կուրորեն որևէ հզորի գիրկը նետվել»[101]: Տվյալ դեպքում նա նկատի ուներ Ռուսաստանը: Հասկանալ կարելի է, որ խորհրդային պատմագրության հեղինակները գաղափարաքաղաքական առումով պարտավորված էին ցույց տալ, ընդգծել հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման դերն ու անանց նշանակությունը, քանզի այլ մեկնաբանության և գնահատականի պարագայում հետևելու էին գաղափարաքաղաքական մեղադրանքներ՝ խորհրդային կոմունիստական ժամանակաշրջանին բնորոշ անցանկալի հետևանքներով: Ինչ վերաբերում է վաստակաշատ պատմաբան Լեոյի կարծիքին՝ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման հարցում Օրու խաղացած դերակատարությանը, ապա նրա տված գնահատականը միանշանակ և ժամանակային առումով անփոփոխ է: Նա չի գերագնահատել Օրու գործունեության ու ռուսական կողմնորոշման հարցում նրա ունեցած դերակատարությունը:

Ադի հայ պատմագրության մեջ, Ի. Օրիի գործունեության և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հետ կապված, կշռադատված գնահատականն այն է, որ 18-րդ դարասկիզբը, անշուշտ, համարվում է հայ ազատագրական շարժման նոր փուլի սկիզբը, «երբ ազգային գործիչ Իսրայել Օրին փորձում էր հայկական պետականության վերականգնման գաղափարը կապել Ռուսական կայսրության օժանդակության հետ»[102]:

Այդուհանդերձ, արդի միջպետական հարաբերությունների ու հասարակական-քաղաքական իրողությունների համատեքստում, ներկայումս էլ շարունակում է պատմագիտական քննության նյութ դառնալ Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցը: Կարծում ենք, որ, ի վեր-

---

[100] **Դիլոյան Վ.**, *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները*, էջ 13:

[101] **Դիլոյան Վ.**, *Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ* («Դայքար», Եր., 1995, թիվ 6–7, էջ 18):

[102] *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 4:

ջո, հարկ է ազատվել պատմականորեն ձևավորված նախկին մի շարք կուսակցական ու գաղափարաքաղաքական բարդույթներից ու կարծրատիպերից և առաջնորդվել գիտական անաչառության ու անկողմնակալության սկզբունքներով: Շատ դրվատելի է, որ արդի իրողությունների, մասնավորապես Արցախյան վերջին ձախողված պատերազմի հետ կապված, հայ հասարակական-քաղաքական շրջանակների զգալի մասը ու հատկապես նոր սերունդը աստիճանաբար կարողանում է հաղթահարել հնից ժառանգված և վերջին դարերին մեզ հաճախ պարտադրված միակողմանի մոտեցումից ու գնահատականներից: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե Հայաստանը պիտի հրաժարվի Ռուսաստանի հետ պատմականորեն ձևավորված ավանդական կապերից, մեր ժամանակներում դաշնակցային-զինակցային (ռազմավարական) հարաբերություններից, ինչը որ մեր հանրապետության ու ժողովրդի անվտանգության առումով, իբրև կարևոր կռվան, շարունակական պիտի լինի երկու երկրների միջպետական հարաբերություններում:

Մյուս կողմից, պետք է հաշվի առնել այն աներկբա համոզումը, որ առհասարակ այս կամ այն երկրի ու ժողովրդի առջև ծառացած քաղաքական կողմնորոշումների հարցում միակ հակակշիռն ու երաշխիքը առաջին հերթին կարող է լինել միայն սեփական ուժերին հավատալն ու ապավինելը: Օտարի հետ մեծ հույսեր կապելը հղի է անհաջողություններով ու աղետներով, ինչը նաև առաջ է բերում թերարժեքության բարդույթ սեփական ուժերի հանդեպ, այն գցում է ազգային-պետական զինուժի մարտունակությունը, ինչին կարող է հետևել դասալքությունը, բարոյահոգեբանական առումով զորքի ու հանրության մեջ անկումային ու պարտվողականության տրամադրությունները և այլն: Հայոց հազարամյակների պատմությունից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ: Դրա վառ օրինակներից են 1920 թ. թուրք-հայկական և դրանից ոտիղ մեկ դար անց՝ 2020 թ. Արցախյան 44-օրյա ձախողված պատերազմների փորձն ու դասերը[103]:

---

[103] *Դասական այդ զուգահեռների մասին* տե՛ս «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2022, թիվ 2 (265 ), էջ 47–61:

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ XVIII ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹԹ: ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ: ՀՆԴԿԱՀԱՅ ԵՎ ՌՈՒՍԱՀԱՅ ԾՐԱԳՐԵՐԸ

## *1. Ազատագրական պայքարը Արցախում: Եսայի Հասան-Ջալալյան*

*«Յամէն գեղ մին բերթ այ»:*
**Իվան Կարապետ**

XVIII դարի առաջին քառորդին հայ ազատագրական շարժման ու պայքարի ամենախոշոր կենտրոնները դարձան Ղարաբաղը (Արցախ) և Սյունիքը (Կապան): Անշուշտ, XVIII դարասկզբին քաղաքական կողմնորոշման՝ **Արևմուտքից** դեպի **Ռուսաստան** անցման առաջին խոշոր քայլը կատարած՝ հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ **Իսրայել Օրու** դեպի Այսրկովկաս ու Իրան առաքելությունն իր նպաստը պիտի բերեր Արցախի **սղնախների** աշխուժացման, Արցախ-Սյունիքի ազատագրական շարժման ու պայքարի ակտիվացման գործում: Դարասկզբին Արցախում ազատագրական շարժման ղեկավարը դարձավ Գանձասարի (Աղվանքի) կաթողիկոս **Եսայի Հասան-Ջալալյանը** (1701–1728): Վերջինիս կարելի է համարել հայերի ռուսական քաղաքական կողմնորոշման հիմնադիր հայրերից (առաջնային դեմքերից) մեկը, եթե ոչ՝ առաջինը: Հայոց դեսպան Ի. Օրու՝ Աստրախանում 1711 թ. անսպասելի մահից հետո, ինչպես արդեն ասվել է, Եսայի կաթողիկոսը վերադարձավ հայրենիք: Մինչ այդ նա Ի. Օրու հետ Ռուսաստան էր մեկնել՝ փորձելով բանակցել ռուսական կառավարության և Պետրոս Մեծի հետ: XVIII դարի սկզբներին բռնկված հայ ազատագրական շարժումների մթնոլորտում Եսայի կաթողիկոսը և Արցախի մելիքները Հա-

յաստանի ազատագրության հույսը սկսեցին մեծապես կապել Ռուսաստանի ու անձամբ նրա զորեղ կայսր Պետրոս Մեծի հետ: Այդ կապակցությամբ, խորհրդահայ պատմաբան Զ. Արզումանյանը ընդգծում է, որ Եսային մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց հայ ազատագրական պայքարին ու նրա ռուսական կողմնորոշմանը[1]:

Հայտնի է, որ 1710-ական թվականներից տարածաշրջանում քաղաքական իրադրությունը սրվում է. Պարսից Սեֆյան արքունիքի դեմ բորբոքվում են քրդերի, լեզգիների ու հատկապես աֆղանների ապստամբական ելույթները: Հասկանալի է, որ նման պայմաններում հայ հասարակական-քաղաքական որոշ շրջանակներ սկսում են բնականաբար հայացքներն ավելի ու ավելի ուղղել դեպի հյուսիս՝ քրիստոնյա Ռուսաստան, այնտեղից ակնկալելով օգնություն: Այդ գործում որոշակի խթան հանդիսացավ նաև այն հանգամանքը, որ հետախուզական նպատակով Պետրոս ցարը 1715 թ. Իրան գործուղեց ռուսական մի նոր դեսպանություն՝ փոխգնդապետ **Արտեմի Վոլինսկու** (1689–1740 թթ.) գլխավորությամբ: Նկատել տանք, որ փաստահենք նյութերի հիման վրա Կ. Եզյանը ակնարկում է, որ Կովկաս ներթափանցող ցարին հետաքրքրողը հայերի քրիստոնյա լինելը չէր, այլ նրանց վերապահված տնտեսական և քաղաքական դերը[2]: Այսպես, Ա. Վոլինսկուն տրված հրահանգում խոսվում էր նաև հայերի մասին տեղեկություններ (թվաքանակի, տեղաբաշխվածության, նշանավոր անձանց մասին և այլն) հավաքել, նրանց հանդեպ սիրալիր լինել, վարվել քաղցրությամբ, ձեռք բերել նրանց համակրանքը և բարեկամություն հաստատել[3]: Այլ խոսքով, ռուսական կառավարությանը, իր ռազմավարական հեռագնա շահերի տեսակետից, հետաքրքրում էր հայերի հարցը: Ռուսաց դեսպան Ա. Վոլինսկին ժամանեց և հաստատվեց Շամախիում: 1717 թ. նա մեկնեց Սպահան և ռուս-պարսկական առևտրական գործունեություն ծա-

---

[1] **Արզումանյան Զ.**, *Եսայի Հասան Ջալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ* («Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1979, թիվ 5, էջ 56):

[2] Տե՛ս **Эзов Г.А.**, *Сношения Петра Великого с армянским народом*, Введение, СПб., 1898, с. LXXIII.

[3] Տե՛ս **Соловьев С.М.**, *История России с древнейших времен*, 2-ое изд., т. 18, М., 1968, с. 32, նաև՝ **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 108:

վալելու անվան տակ գործնականում սկսեց նախապատրաստել Պետրոս Մեծի Կասպիական արշավանքը:

XVIII դարի առաջին երկու տասնամյակներին Եսայի կաթողիկոսը նամակներով ու աղերսագրերով փորձում էր Ռուսաց ցարին ամեն կերպ խրախուսել արշավելու տարածաշրջան՝ պատրաստակամություն հայտնելով տեղում սեփական զինուժերով ընդառաջ գնալու և դիմավորելու ռուսական զորքին: Մասնավորապես, ուշագրավ է կաթողիկոսի 1716 թ. օգոստոսի 10-ի հայերեն նամակը՝ ուղղված Պետրոս Ալեքսեևիչ ցարին: Ի. Օրու քարտուղար Մինաս վարդապետ Տիգրանյանի միջոցով քաջազոր Պետրոս ցարին ուղարկված աղերսագիր-նամակում մասնավորապես կարդում ենք հետևյալը. «մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կարողութեանս, և մեր նահանգիս մելիքովք մեծամեծովք և փոքումբք և ցորժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաջապարել այսր կամօքն ա՛յ (Աստծո՝ Ա.Հ.) յայնժամ զնշան գործոյն խնդրեմք ցուցանել մեզ»[4]: Այլ խոսքով, Եսայի կաթողիկոսը հասկացնում էր, որ ցարի կողմից ազդանշան լինելուն պես իրենք ոտքի կկանգնեն: Կաթողիկոսի նամակը ռուսերեն թարգմանությամբ Պետական դեսպանական պրիկազ է հասել ու գրանցվել 1717 թ. մարտի 14-ի ամսաթվով[5]: Գանձասարի Հայոց կաթողիկոս Եսային 1718 թ. սեպտեմբերի 24-ին Ռոաաստանում փաստորեն հայոց լիազոր Մինաս (արքեպիսկոպոս) վարդապետին ուղղված նամակում, ի մասնավորի ընդգծում էր. «...մենք ... բոլորս, անկվող (անկյալ) հայ քրիստոնյա ժողովուրդը՝ ինչպես մեծավորները, նույնպես և փոքրավորները **ազատություն** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.) են ցանկանում»[6]: Ռոաական հովանավորությանը անհամբեր սպասող Գանձասարի կաթողիկոսը նմանաբովանդակ մի նամակ էլ գրել է 1718 թ. սեպտեմբերի 25-ին[7]: Ավելի ուշ՝ 1724 թ. փետրվարի 5-ին, Եսայի կաթողիկոսն ու այս անգամ նաև Ղարաբաղի մելիքները կրկին նամակ են հղում Ռոաաց կայսրին, սպասումով, որ նա գա

---

[4] **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 205, էջ 316:
[5] Նույն տեղում, վավ. թիվ 205, էջ 317:
[6] Նույն տեղում, վավ. թիվ 210, էջ 326:
[7] Նույն տեղում, վավ. թիվ 211, էջ 327–328:

օգնության, և որ իրենք կռվում են մուսուլմանների դեմ և զենքի պակաս ունեն և այլն[8]:

Պատմագիտական գնահատականի առումով Եսայի Հասան-Ջալալյանի ռազմական կողմնորոշման (արևելման) խնդրում ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը, ընդգծելով այդ միտքը, եզրակացնում էր. «Ակներև է, որ **Ռուսաստանի զինական միջամտությունը և քաղաքական հովանավորությունը Եսային այս տարիներին դիտում էր որպես միջոց հայ ժողովրդի քաղաքական ազատությունը վերականգնելու համար** (ընդգծված է՝ Ա.Հ.)»[9]: Դարձյալ Ա. Հովհաննիսյանի դիտարկմամբ՝ Եսայի կաթողիկոսը արտահայտել է նաև Ղարաբաղի մելիքների ու ազգաբնակչության քաղաքական տրամադրությունը Ռուսաստանի նկատմամբ[10]:

Այդ նույն ժամանակ հայ քաղաքական-ազատագրական պայքարի գործուն թատերաբեմ է դառնում նաև **Սյունիք-Կապանը**: Պատմահամեմատական զուգահեռ անցկացնելով Արցախի և Սյունիքի ազատագրական շարժման ու պայքարի միջև՝ կարելի է տարանջատել երկու դիրքորոշում (արևելում): Եթե Եսայի կաթողիկոսը և մյուս մելիքները ժողովրդի մեծամասնության հետ ավելի հակված էին դեպի Ռուսաստանը՝ նրա **հովանավորության տակ** անցնելու, անգամ նրան **միացվելու ակնկալիքով**, ապա Սյունիք-Կապանի ազատագրական պայքարում հարկ է ընդգծել առաջինից տարբերվող մի շատ էական առանձնահատկություն. այն է՝ Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական շարժման ու պայքարի գերակա նպատակը, ինչպես նկատել է Ա. Հովհաննիսյանը, ոչ թե «հայկական գավառները Ռուսաստանին միացնել» էր, այլ **ազատությունը և անկախությունը**[11]: Այլ խոսքով, դավիթբեկյան ազատագրական պայքարը գործնականում շատ ավելի արմատական, նշանակալի ու հեռահար էր, քան Ի. Օրու, նրա քարտուղար Մինաս վարդապետի կամ Գանձասարի Եսայի կաթողիկոսի ծրագրերը, հղած դիմումները, վարած բանակցությունները:

---

[8] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 236, էջ 367: Նամակի ստորև նշված են Ավան և Միրզա յուզբաշիների (հարյուրապետների) և Մելիք Թամրազի անունները:

[9] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 611:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 527:

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 536:

Եվ այդ իմաստով, պատմական թռիչք կատարելով, պատահական չպետք է համարել դրանից երկու դար անց Դավիթ Բեկի գլխավորած պայքարից հոգևոր սնունդ ստացած և, փաստորեն, նրա գաղափարների ու գործի շարունակող **Մեծն Գարեգին Նժդեհի** ու նրա զինվորների 1920 թ. օգոստոսի 25-ի Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում տված դավիթբեկյան ուխտերի երդումը՝ «Կռվել մինչև վերջին շունչը», «Հանուն հայրենիքի՝ Դավիթբեկաբար»[12]: Ի միջի այլոց, նա իր քաջարի վաշտերի անունը մկրտել էր Դավիթբեկյան անունով, որոնք ունեին իրենց առանձին դրոշը՝ պատշաճ մակագրությամբ, կրում էին միատեսակ հագուստ, կարմիր կտորից գոտի և այլն[13]: Գ. Նժդեհի գլխավորած գնդի նշանաբանն էր՝ «Հանուն հայրենիքի՝ Դավիթբեկաբար»[14]: «Դավիթբեկյան Ուխտեր»-ի օրինակով էր, որ Գ. Նժդեհը հետագայում հիմնադրեց «Ցեղակրոն Ուխտեր»-ը և այլն:

## *2. Պետրոս Մեծի Կասպիական (Պարսկական) արշավանքը 1722–1723 թթ. և արցախահայության ակնկալիքները*

1721 թ. օգոստոսի 30-ին Նիստշտադտում կնքված հաշտության պայմանագրով ավարտվում է Հյուսիսային հաղթական պատերազմը, ինչն էլ արձակում է Պետրոս Մեծի ձեռքերը՝ կազմակերպելու խոստացված Կասպիական արշավանքը: Նույն տարվա դեկտեմբերին Պետրոս կայսրը (նա Համառուսաստանյան կայսեր տիտղոսին էր արժանացել 1721 թ. հոկտեմբերի 22-ին)[15] պատասխանում է իր դեսպան Ա. Վոլինսկուն, որ «Ձեր նամակը ստացել եմ, որում գրում եք Դաութ բեկի (խոսքը լեզգիների առաջնորդ Հաջի Դաութ բեկի մասին է՝ Ա.Հ.) գործերի մասին և որ 1722 թ. գարնանը մեր զորքերը կմեկնեն Աստրախան»[16]: 1722 թ. մայիսին կազմակերպվեց ռուսական զորքերի Կասպիական կամ

---

[12] «Արնոտ գիրք», Գորիս, 1921, էջ 33–34:

[13] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, *Զանգեզուրի գոյամարտը 1917–1920 թթ.*, Եր., 2017, էջ 479:

[14] **Նժդեհ Գ.**, *Երկեր*, հ. 2, Եր., 2002, էջ 38–39:

[15] Տե՛ս *Хрестоматия по истории России*, авт.-сост. **Орлов А., Георгиев В.** и др., М., 2009 с. 170.

[16] **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ LIII (53):

Պարսկական կոչված արշավանքը: Արդեն հունիս ամսին ռուսական 55-հազարանոց (հեծյալ և հետևակ) զորքը ցամաքով և ծովով հաստատվեցին (կենտրոնացվեցին) Հյուսիսային Կովկասի ափամերձ տարածքներում, իսկ Կասպից ծովի ջրերում խարիսխ ձգեցին մոտ 274 նավեր[17]: Ըստ էության, կարծես կյանքի էր կոչվում Մոսկովյան այն ծրագիրը, որ դարասկզբին մշակել էր Ի. Օրին: Օգոստոս ամսին ռուսական զորքերը մտան Դերբենդ: Հայտնի են այդ արշավանքի նախօրեին ու ընթացքում վրաց Վախթանգ VI թագավորի գլխավորած 30-հազարանոց և Եսայի կաթողիկոսի առաջնորդած հայկական (Արցախի) «ընտիր եւ սպառազէն» 12-հազարանոց միացյալ զորքերի, նախնական համաձայնությանը հակառակ, անորոշ սպասումները Գանձակի մոտ՝ Չոլակ կոչված վայրում ռուսական զորքին միանալու ակնկալիքով: Ի դեպ, հուզիչ ու ոգևորիչ է եղել հայ-վրացական զինուժերի իրար հանդիպումը: Եսայի կաթողիկոսը նշում է, որ հանդիպման ժամանակ Վախթանգ արքան, դիմելով զորքերին, ասում է՝ «զի ահա հասեալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից»[18]:

Մինչ այս նշանակալի իրադարձությունը՝ 1721 թ. օգոստոսին, հատկապես արցախահայության համար մշտական սպառնալիք ներկայացնող ապստամբ լեզգիները՝ նրանց առաջնորդ Դաուդ բեկի գլխավորությամբ գրավել էին Հարավային Կովկասի առևտրական կենտրոն հանդիսացող Շամախի քաղաքը՝ ինչն ուղեկցվել էր կոտորածներով, ավարառություն-ավերածություններով: Քաղաքական անկայունության մեջ հայտնված պարսկական զինուժն ի վիճակի չէր կասեցնելու լեռնական ավազակախմբերի արշավանքները: Ընդ որում, Օսմանյան Թուրքիան հովանավորում էր իրեն դավանակից սուննի լեզգիների ասպատակիչ գործողությունները: Այդ ավարառություններից տուժում էին ոչ միայն քրիստոնյաները, այլև տեղի շիաները:

Լեռնական լեզգիների ավարառու ոտնձգություններին հակահարված տալու համար մինչ այդ հանգամանքների թելադրանքով ղարաբաղյան մելիքություններում՝ լեռների վրա հիմնվել էին ռազմապաշտ-

---

[17] Տե՛ս *Армянское войско в XVIII веке (исследование и документы)*, с. 74.

[18] **Հասան Ջալալեանց Եսայի**, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*, Յերուսաղէմ, 1868, էջ 49:

պանական ամրություններ, որոնք հայտնի են **սղնախներ**[19] անվանումով, մասնավորապես՝ Մեծ սղնախը՝ Մռավի լեռներում՝ Թարթառ գետի վրա, և Փոքր սղնախը՝ Վարանդայի գավառում՝ Շուշիի մոտ: Եսայի կաթողիկոսի գլխավորած Մեծ և Փոքր սղնախների միացյալ զորքը հասնում էր 12 հազարի: Տվյալներ կան, որ Արցախի սղնախներում կռվողների ընդհանուր թիվը հասնում էր 20 հազարի, սակայն նրանց մի մասը բավարար զենք ու զինամթերք չի ունեցել[20]: Արցախի մելիքությունների պատմության խորագիտակ մասնագետ Ա. Մաղալյանի ներկայացրած տվյալները ևս գալիս են հաստատելու, որ 1720-ական թթ. մելիքները ի վիճակի են եղել դուրս բերելու ավելի քան 20 հազար զինվոր[21]: Բացի այդ երկու ամրացված բանակատեղիներից՝ հայկական զինված ուժեր կային Սյունիքում, որը կոչվել է Փոքր Կապան: Եթե հավատանք Եսայի կաթողիկոսի հաղորդած տեղեկությանը, ապա Ղարաբաղի բոլոր սղնախների մարտիկների ընդհանուր թիվը կազմել է 40 հազար[22]: Ավելին, Մինաս վարդապետի՝ 1723 թ. օգոստոսի 26-ին ռուսական հրամանատարությանն ուղղված մի զեկուցագրում հայկական զինուժի թիվը նշված է 50 հազար[23]: Այս թվերն, իհարկե, չափազանցված են: Հասկանալի է, որ նման ուռճացված թվեր էին ներկայացնում, որպեսզի մեծացնեին ռուսական կողմի հետաքրքրությունն ու վստահությունը հայկական զինուժի և կռիվներին նրա պատրաստ լինելու նկատմամբ:

Մերձկասպյան երկրամասերը գրավելուց զատ՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական պլանների մեջ էր մտնում հայ-վրացական ազատագրական պայքարը հովանավորելը, և դրա համար առաջարկվեց, որպեսզի նրանց զինական ուժերը համախմբվեն և ընդառաջ գան ռուսական բանակին: Միաժամանակ, Պետրոս I-ը խորհուրդ էր տալիս

---

[19] Սղնախ նշանակում էր ամրացված տեղ կամ ամրոց:

[20] Տե՛ս **Арутюнян П.**, *Освободительное движение армянского народа в первой четверти 18 века*. М., 1954, с. 161.

[21] Տե՛ս **Մաղալյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 212:

[22] Տե՛ս *Армяно-русские отношения в первой трети XVIII века*, сборник документов, под ред. **А. Иоаннисяна**, т. 2, ч. 2, Ер., 1967 (այսուհետ կրճատ՝ АРО), док. 165, с. 15.

[23] Տե՛ս **Эзов Г.**, *նշվ. աշխ.*, էջ 359:

վրաց թագավոր Վախթանգ VI-ին հարձակվելու լեզգիների վրա: 1722 թ. սեպտեմբերի 22-ին Մինաս վարդապետը[24] տեղեկություններ է հայտնում Պարսկաստանում տեղի ունեցող անցքերի մասին[25]: Իսկ սպասողական վիճակում գտնվող Եսայի կաթողիկոսը օգոստոսի 18-ին Թիֆլիսից հայտնում է, որ վրաց գահակալ Վախթանգն իր 30-հազարանոց զորքով շարժվել է Գանձակ՝ լեզգիների դեմն առնելու[26]:

Ինչ վերաբերում է Ս. Էջմիածնի դիրքորոշմանը, ապա Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցին (1715–1725 թթ.) ժողովրդի անվտանգության նկատառումով, թեև զգուշավորություն էր հանդես բերում, բայց ներքուստ աջակից էր հայոց զինական պայքարին: Նա կապեր է պահպանել Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի գործիչների հետ: Մինչ այդ, Եսայի կաթողիկոսը երկու անգամ՝ 1719 թ. և 1720 թ. այց էր կատարել Ս. Էջմիածին: Եվ այս ամենը հետագայում՝ 1723 թ. գարնանը, հայտնի է դառնում պարսկական և օսմանյան հետախուզությանը[27]:

Ընդհանուր առմամբ, այդպիսին էր իրավիճակը, երբ Ռուսաստանի ռազմաքաղաքական բարձր ղեկավարությունը, պատճառաբանելով աննպաստ մի քանի հանգամանքներ՝ տեղի կլիմային ռուսական զորքի սովոր չլինելը, համաճարակի տարածման ու հատկապես նավաբեկությունների հետևանքով ծագած բանակի մատակարարման խափանումները և այլն, Պետրոս I-ը, տեղում թողնելով կայազորը, Դերբենդից

---

[24] 1716 թ. Եսայի կաթողիկոսը Մինաս վարդապետին արքեպիսկոպոսի կարգավիճակով ձեռնադրել էր Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ (տե՛ս **Մկրտումյան Լ.**, *նշվ. աշխ.*, էջ 24): Այս առնչությամբ՝ այրոֆ. Վ. Դիլոյանը ևս նշում է, որ 1718 թ. Եսայի կաթողիկոսը հիմնում է Ռուսահայ թեմ և Օրու զինակից Մինաս վարդապետին կարգում դրա առաջնորդ (տե՛ս **Դիլոյան Վ.**, *Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից*, Եր., 1966, էջ 139):

[25] Հայտնի է, որ Միր-Վեյսի որդի Միր-Մահմուդ խան Ղանդահարցու գլխավորած աֆղանների արշավանքի արդյունքում 1722 թ. հոկտեմբերին գրավվեց Սպահան մայրաքաղաքը, շահ Սուլթան Հուսեյնը գահընկեց արվեց, իսկ հետագայում մահապատժի ենթարկվեց (գլխատվեց): Պարսից շահ հռչակվեցին աֆղանների տիրակալ՝ Միր-Մահմուդը, իսկ հետո Աշրաֆը: 1722 թ. Սպահանի աֆղանական օղակումը մի կերպ ճեղքած, գահնկեց արված Սուլթան Հուսեյնի որդի, Սեֆյան տոհմի ժառանգորդ **Թահմասպ** 2-րդը (1722–1732) երկրի հյուսիսում Ղազվինում իրեն շահ էր հռչակել:

[26] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 213, էջ 332:

[27] Տե՛ս **Այվազյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 31 և 33:

վերադառնում է Աստրախան, իսկ տարեվերջին՝ Մոսկվա՝ խոստանալով վերադառնալ հաջորդ տարի: Կայսրի Աստրախան վերադառնալու լուրը ստանալուց հետո հայ զինուժը (նաև վրացականը) հոկտեմբերի կեսերին տխուր տրամադրությամբ վերադառնում և ամրանում է սղնախներում՝ փորձելով պարտիզանական-ապստամբական կռիվներով դիմակայել նոր-նոր Այսրկովկաս ու Ղարաբաղ ներխուժած թուրքական զորքերին:

Պետք է նկատել, որ թուրքերը, մասամբ նաև պարսիկները, վրեժխնդիր էին լինում հայերից՝ ռուսական ցարին հավատարմություն հայտնելու և տարածաշրջան հրավիրելու համար: Իսկ թուրքերի վրեժխնդրությունը դեռ այն ժամանակներից արտահայտվում էր հայության մեծ ու փոքր կոտորածներով: Իհարկե, միամտություն կլինի մտածել ու կարծել, թե Ռուսաստանը Այսրկովկաս էր մուտք գործում զուտ հայերի կամ վրացիների հրավերով: Թուրք-ադրբեջանական հին ու նոր քարոզչամեքենան լավ պետք է գիտակցի ու հասկանա, որ Ռուսաստանի մուտքը Անդրկովկասյան տարածաշրջան պայմանավորված է եղել ոչ թե հայերի նամակ-դիմումներով, այլ իր ծավալապաշտական շահերով (ռազմավարությամբ):

Իրականում պարզվում է, որ Կասպիական արշավանքի ընդհատման գլխավոր պատճառը ոչ թե վերը նշված նյութական ու բնակլիմայական աննպաստ պայմաններն էին, այլ Պետրոսի Մեծի՝ Այսրկովկաս մուտքին Թուրքիայի կտրուկ հակադարձումը և նրա հետ ռազմական ընդհարման վտանգը: Բանն այն է, որ Հյուսիսային երկարատև (1700–1721 թթ.) ու հյուծիչ պատերազմից հետո Պետրոս Մեծի համար շատ դժվար կլիներ մի նոր պատերազմ ձեռնակել այս անգամ ոչ պակաս վտանգավոր Օսմանյան Թուրքիայի դեմ:

Մինչդեռ Ղարաբաղի հոգևոր և աշխարհիկ առաջնորդներն ակնկալում էին Ռուսաստանի մուտքը իրենց տարածաշրջան: Վավերագրերից հայտնի է Եսայի Կաթողիկոսի և Ղարաբաղի մելիքների 1722 թ. նոյեմբերի 1-ի ուղերձը Պետրոս I-ին՝ իրենց զինական օգնություն ցույց տալու խնդրանքով: Նամակը ստորագրել են Եսայի կաթողիկոսը և 9

մելիքներ: Վերջիններիս մի մասի գրագետ չլինելու պատճառով կնիքների կողքին դրված են նույն ձեռագրով ստորագրություններ[28]:

Այնուամենայնիվ, 1722 թ. դեկտեմբեր – 1723 թ. հուլիսին Պետրոս Մեծը, վերսկսելով ռազմական գործողությունները կասպիական ափամերձ շրջաններում, գրավում է Ռեշտն ու Բաքուն: Ստեղծված իրավիճակում Պարսկաստանի հյուսիսային շրջաններում (Խորասանում) իրեն շահ հռչակած թագաժառանգ Թահմասպ 2-րդը Պետերբուրգ է ուղարկում իր դեսպան Իսմայիլ բեկին, որն էլ **1723 թ. սեպտեմբերի 12-ին** Պետերբուրգում ռուսների հետ կնքում է հաշտության պայմանագիր (դաշնագիր), որով մերձկասպյան արևմտյան ափամերձ Դերբենդի, Բաքվի, Շիրվանի, Գիլանի, Մազանդարանի և Աստրաբադի շրջանները անցնում էին Ռուսաստանի տիրապետության տակ: Դրա դիմաց Համառուսական կայսերական մեծությունը պարտավորվում է իր զորքով պաշտպանել պարսկական շահական պետությունը թշնամի և ապստամբ ուժերի ոտնձգություններից[29]:

Ռուսաստանի դեպի Այսրկովկաս ներթափանցումը անհանգստացրեց Թուրքիային: Վերջինս, պայմանավորված իր ծավալապաշտական նկրտումներով, փորձեց հանդես գալ Այսրկովկասի նոր հովանավորի ու տիրոջ դերում և, երկար բանակցություններից հետո՝ **1724 թ. հունիսի 12-ին, Կ. Պոլսում** կնքվեց ռուս-թուրքական (ռուսական կողմից՝ Իվան Նեպլյուևը) գաղտնի պայմանագիր, որով Ռուսաստանը և Թուրքիան Կովկասը բաժանեցին միմյանց միջև՝ ռուս-թուրք-պարսկական սահմանագիծը դարձնելով Արաքս և Քուռ գետերի միախառնման տեղանքը: Ըստ վավերագրերի, Ռուսաստանի համար Անդրկովկասում նվաճողական կայուն բնական սահման է հանդիսացել **Կուր-Արաքս-Ախուրյան** ջրբաժան գիծը[30]: Կ. Պոլսի պայմանագրով, մերձ-

---

[28] Տե՛ս *ԱՐՕ в первой трети XVIII века (сборник документов)*, т. 2, ч. 2, с. 47–49, նաև՝ **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, փաստաթուղթ թիվ 232:

[29] Տե՛ս *Договоры России с Востоком (политические и торговые)*, собрал и издал **Т. Юзефович**, СПб., 1869, с. 168–189, «Պատմութիւն Մեծին Պետրոսի կայսեր Ամենայն Ռուսաց», աշխատասիրութեամբ **Ռափայէլ Պատկանեանի**, Ս.Պ.-բուրգ, 1863, էջ 123, նաև՝ **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 143–144:

[30] Տե՛ս *Акты, собранные Кавказской археографической комиссией* (АКАК), т. 6, ч. 2, Тифлис, 1877, с. 123–124.

կասպյան առափնյա շրջանները՝ Դերբենդից մինչև Մազանդարան, անցան Ռուսաստանին, իսկ Արևելյան Հայաստանը, Վրաստանը և Իրանի որոշ շրջաններ (փաստորեն ամբողջ Անդրկովկասը)՝ փոխադարձաբար Թուրքիայի հսկողության (ազդեցության) տակ[31]: Կ. Պոլսի պայմանագրով Թուրքիան ճանաչում էր ռուս-պարսկական 1723 թ. պայմանագրով սահմանված տարածքների անցումը Ռուսաստանին, իսկ վերջինս էլ պարտավորվում էր Կասպից ծովի առափնյա շրջաններից դեպի Անդրկովկասի խորքերը առաջ չշարժվել: Ընդ որում, Ռուսաստանը և Թուրքիան պայմանավորվում են, որ եթե շահը չհամաձայնի զիջել այդ մարզերը, ապա Ռուսաստանը և Թուրքիան պետք է համատեղ հանդես գային Պարսկաստանի դեմ[32]: Մինչդեռ, որքան էլ ցավալի է, ազատագրական պայքարի ելած և Ռուսաստանի օգնությանը սպասող Արցախը (նաև Սյունիքը) բնավ անտեղյակ էր վերը նշված ռուս-թուրքական հիասթափեցնող այդ գործարքից: Այստեղից էլ հասկանալի է, թե ինչ դժվարին օրեր էին սպասվելու արևելահայ ապստամբ այդ երկրամասերին:

Ռազմաքաղաքական առումով, ռուս-թուրքական պայմանագրի հետևանքներից մեկը եղավ այն, որ թուրքերը ձեռքերի ազատություն ստացան՝ արշավելու դեպի Արարատյան դաշտ, գրավելու Երևանը: Դեռ մինչ այդ՝ 1723 թ. Թուրքիան իր զորքերը մտցրել էր Անդրկովկաս և, մեծ զոհերի գնով, գրավել Թիֆլիսը: Վրաց Վախթանգ թագավորը, պարտվելով թուրքերին, թողնում է հայրենիքը և 1724 թ. ապաստանում Ռուսաստանում: Թիֆլիսի գրավմանը պիտի հաջորդեր Երևանը: Այդ շրջանի պատմությանը հայտնի են **Եղվարդի** և **Կարբիի** հայ բնակչության ինքնապաշտպանական հաջող մարտերը: Դրանից զատ, առանձնապես դրվատելի է շուրջ երեք ամիս տևած **Երևանի** հերոսական պաշտպանությունը: Թուրքական 30-հազարանոց բանակին՝ Քյոփրուլու Աբդուլլահ փաշայի գլխավորությամբ, չհաջողվեց անմիջապես գրավել քաղաքը: Քաղաքի բնակիչները, որոնց մեջ հիշատակվում են հատկապես Կոնդ թաղամասի հայ բոշաները, համառ դիմադրություն ցույց

---

[31] Տե՛ս **Соловьев С.**, *История России с древнейших времен*, т. 18, с. 73.
[32] Տե՛ս **Эзов Г.А.**, *հշվ. աշխ.*, էջ LX (60), նաև՝ **Զուլալյան Մ.**, *հշվ. աշխ.*, էջ 96:

տվեցին: Հայր Ղ. Ալիշանը վկայաբերում է, որ 1724 թ. Երևանի պաշտպանության ընթացքում հայերից «ավելի քան 9 հազար այր միաբան ընդ Պարսից ամսօրեայ աւուրքք մարտուցեալ զդէմ կալան Օսմանեաց» սաստիկ՝ կյանքի ու մահվան կռիվներ մղեցին[33]: Ի վերջո, մեծ զոհերի գնով, թշնամուն հաջողվում է Զորագյուղով մտնել քաղաք և գրավել այն: Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի պատմության հերոսական էջերից է: Թուրքերի ռազմերթերից մեկն էլ՝ 1724 թ. սեպտեմբերին, Երևանը գրավելով, Արաքս գետի հոսանքով (Նախիջևանով) շարժվել դեպի Սյունիք ու Արցախ՝ հայերի ապստամբությունը խեղդելու համար:

Իսկ վերը նշված ռուս-թուրքական պայմանագից անտեղյակ հայ ապստամբ շրջանները՝ Աղվանից (Գանձասարի)՝ Եսայի և Ներսես Ջրաբերդցի կաթողիկոսները (նրանք, փաստորեն, եղել են հակաթոռ, բայց ազատագրական պայքարի հարցում գործակցել են[34]) ու Ղարաբաղի մելիքները 1724 թ. հոկտեմբերի 18-ի ամսաթվով նամակ-խնդրագիր են հղել ռուսաց կայսրին՝ նշելով թուրքական ներխուժման սպառնալիքի մասին և խնդրելով խոստացված օգնության հասնելու մասին: Նամակում խնդրում և աղաչում էին դեպի Անդրկովկաս փութանակի օգնության հասնել՝ թուրքական հարձակման դեմն առնելու: Նամակագիրները նշում էին, որ մինչ այդ իրենք 3–4 անգամ օգնության խնդրանքով դիմել են Նորին մեծությանը, բայց պատասխան չեն ստացել, ուստի, ստեղծված, անել իրավիճակում նորից են դիմում, քանզի չգիտեն՝ ինչ պետք է անել: Հաղորդվում էր, որ թուրքերը գրավել էին Թավրիզը, Նախիջևանը, Երևանը, Թիֆլիսը, Բորչալուն, Ղազախը և արդեն մտել են Գյանջա (Գանձակ) և գալիս են իրենց դեմ: Այնուհետև նշվում էր, թե՝ «Ձեր բանագնաց Իվան Կարապետը մեզ մոտ է և ուզում

---

[33] Տե՛ս **Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան,** *Այրարատ (բնաշխարհ Հայաստանեաց),* Վենետիկ.-Ս. Ղազար, 1890, էջ 305:

[34] Տե՛ս **Լեո,** *Հայոց պատմություն,* հ. 3, գ. 2, Եր., 1973, էջ 132, նաև՝ **Մկրտումյան Լ.,** *նշվ. աշխ.,* էջ 99–100: Այսպես՝ Աղվանից հակաթոռ Ներսես կաթողիկոսը 1724 թ. (գարնան) բնօրինակ նամակով դիմել է Մելիք Թամրազին՝ խնդրելով տեղեկացնել, թե ինքն, արդյոք, ունի՞ տեղեկություններ ռուսական զորքերի գալու մասին՝ «ռուսացս գալն չենք գիտում», սպասում ենք «մինչեւ թէ աստուած այց անէ» (*АРО в первой трети 18 века* (сб. док.), т. 2. ч. 2, с. 111.

է մեր անունից գալ Զեզ մոտ, սակայն ճանապարհները փակ են, և մենք խոնարհաբար խնդրում ենք՝ գթացեք և մեզ օգնության ձեռք մեկնեք»: Կայսրին ուղղված նամակի վերջում դարձյալ կարդում ենք. «խնդրեմք զմեզ քո խնամոց ներքոյ պահես և քո ողորմութիւն շոտով մեզ հասուցանես»[35]: Երեքէջանոց խնդրագիր-նամակի ներքևում դրված են 7 յուզբաշիների (հարյուրապետերի), այդ թվում՝ Ավանի, Թարխանի, ինչպես նաև Պետրոս Մեծ կայսրի բանագնաց (նվիրակ) Իվան Կարապետի անունները՝ համապատասխան կնիքներով: Իր հերթին, ռուսական կողմին շահագրգռելու և արշավանքի կազմակերպումն արագացման նպատակով, Իվան Կարապետը 1724 թ. գարնանը զեկուցագիր էր ուղարկել գրաֆ (կոմս) Պյոտր Տոլստոյին՝ տեղեկացնելով, որ Ղարաբաղի լեռնաշխարհը (Հայաստանը) հարուստ է օգտակար հանածոներով՝ կապարով, պղնձով, երկաթով, արծաթով, սիլիտրայով և այլն[36]:

Ի պատասխան Հայոց կաթողիկոսների և մելիքների նամակին՝ 1724 նոյեմբերի 11-ի հրովարտակով ռուսաց կանցլեր (վարչապետ) կոմս **Գավրիլ Գոլովկինը** (1660–1734 թթ.) կայսերական մեծության անունից հանձնարարում է բանագնաց պրն Իվան Կարապետին, որ հասկացնի հայ մեծամեծերին, որ իրենք չեն կարող զորք ուղարկել օգնության, քանի որ օսմանյան Բարձր Դռան հետ տրակտատ (պայմանագիր) ունեն կնքած (նկատի ուներ՝ Կ. Պոլսի 1724 թ. հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագիրը՝ Ա.Հ.), ուստի, կայսերական մեծության անունից առաջարկում էր հայ ժողովրդին **արտագաղթել** ու բնակություն հաստատել ռուսական զորքերի կողմից գրաված մերձկասպյան շրջաններում՝ Գիլան, Բաքու, Դերբենդ, Սուրբ Խաչ ամրոցը և այլն[37]: Բայց արված առաջարկը հավանաբար չի բավարարել արցախահայ պայքարի համառ առաջնորդներին և 1725 թ. մարտի 10-ի ամսաթվով՝ Եսայի կաթողիկոսի և Ղարաբաղի մելիքների ու յուզբաշիների կողմից օգնության խնդրանքով դարձյալ նամակ է ուղարկվում

---

[35] **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 248, էջ 381–383, **նույնը** նաև՝ *АРО в первой трети XVIII века* (сб. док.), т. 2. ч. 2. с. 200–202:

[36] Նույն տեղում, էջ 112, նաև՝ **Աբրահամյան Ա.Գ.**, *Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից*, Եր., 1953, էջ 37–38:

[37] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 265, էջ 403–405:

Պետրոս Մեծին[38]: Պարզվում է, որ նամակագիրներն անգամ տեղյակ չէին, որ Պետրոս Մեծն արդեն մահացել էր: Նա մահացել էր 1725 թ. հունվարի 28-ին (փետրվարի 8-ին) 52 տարեկան հասակում՝ գահակալելով 43 տարի[39]: Կաթողիկոսի խնդրագիր-նամակը բավական չհամարելով՝ նմանաբովանդակ մի խնդրագիր-նամակ էլ 1725 թ. հոկտեմբերի 28-ին Ռուսաց կայսրի անունով ուղարկել էին Նովխիի հայերը[40]:

Հիշատակելի է, որ արցախյան ազատագրական պայքարի օջախը մարելու նպատակով՝ 1725 թ. գարնանը (մարտ) թուրքերը մի խոշոր հարձակում ձեռնարկեցին հայոց (ղարաբաղյան) սղնախների վրա, որը, սակայն, անփառունակ վախճան ունեցավ: Սղնախների հրամանատարությունը, խորամանկ քայլի դիմելով, կեղծ հպատակություն ցույց տալով, ջարդում են Վարանդայի գյուղերում գիշերելու համար հարյուրյակներով տեղակայված թուրքական 4.700 հոգուց կազմված զորախումբը. սպանվում են նաև Շահին և Ալի փաշաները, իսկ Սալահ փաշան՝ գերեվարվում: Տվյալներ կան, որ փախչելով ազատվել են ընդամենը 100–200 ասկյար[41]: Արցախցիները մի հաղթանակ էլ արձա-

---

[38] Տե՛ս **Эзов Г.А.**, *հիշ. աշխ.*, վավ. թիվ 274, էջ 418–419:

[39] Ռուսաց կայսր Պետրոս Մեծի կյանքի ու գործունեության հետ կապված հայ պատմագրության մեջ մի ուշագրավ դրվագ կա: Բանն այն է, որ XIX դարի կեսերին հայրենասեր բանաստեղծ Ռ. Պատկանյանը, ստանձնելով պատմագրի դերակատարություն, միգուցե նմանակելով ռուս մեծ գրող Ալ. Պուշկինին կամ պատմագիր Նիկ. Կարամզինին, առանձին պատմագիտական աշխատություն է գրել՝ նվիրված Պետրոս Մեծի պատմությանը (տե՛ս «Պատմութիւն Մեծին Պետրոսի կայսեր Ամենայն Ռուսաց», աշխատասիրութեամբ **Ռ. Պատկանեանի**, Ս. Պ.-բուրգ, 1863): Սկզբնաղբյուրներով ու բովանդակությամբ աղքատիկ այդ աշխատությանը ծանոթանալիս՝ դժվար չէ նկատել, որ հեղինակը տեղյակ չի եղել ու որևէ ակնարկ չի անում Ի. Օրու և Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի մասին: Կնշանակի, 1860-ական թթ. հայ հասարակական շրջանները բնավ տեղյակ չեն եղել դարավերջին Կ. Եգյանի հավաքած ու հրատարակած հարուստ ժողովածուում տեղ գտած որևէ վավերագրի: Ուստի, Ռ. Պատկանյանի այդ աշխատությունը առանձնապես գիտական մեծ արժեք չունի: Տեղեկացնենք, որ մի քառորդ դար անց Ռ. Պատկանյանը արդեն հանդես է գալիս իբրև հայ ազատագրական պայքարի գաղափարախոս և հեղինակում է Արմենական կուսակցության համար «Վարդապետարան Հայաստանի ազատութեան» ծրագրային փաստաթուղթը:

[40] Տե՛ս **Эзов Г.А.**, *հիշ. աշխ.*, վավ. թիվ 280, էջ 427–428:

[41] Տե՛ս *АРО в XVIII веке*, т. 2, ч. 2, док. 309, с. 233–234, док. 310, с. 235–236, նաև՝ **Աբրահամյան Ա.**, *Իսրայել Օրի*, էջ 116–117:

նագրել են 1726 թ. հունիսի սկզբներին (10-ին) Խաչենում[42]: Դա երևում է Եսայի կաթողիկոսի և մելիքների հունիսի 15-ի ամսաթվով վրաց Վախթանգ 6-րդին ուղղված նամակից: Արցախահայությունը փոփոխակի հաջողություններով շարունակեց պայքարը՝ դարձյալ սպասելով ռուսական զորքի ժամանմանը: Դրա համար շարունակ նամակներ էին գրվում ու բանագնացներ ուղարկվում, որոնք, սակայն, ցավոք, ձեռնունայն հետ էին դառնում: Այդպիսի մի հուսահատ նամակ էլ 1726 թ. նոյեմբերի 14-ի ամսաթվով ռուսական արքունիքին են հասցեագրել «Քրիստոսի ծառաներ»՝ Ավան (Հովհաննես) և Օհան հարյուրապետերը, որոնք նամակն ավարտում են հետևյալ խոսքերով. «որ իմանամք, թագաւորն էս երկիրս չէ կալոյ, մե համար քօմակ ողարկէք, որ մեք գամք թագաւորին ղուլղուղ (ծառայություն՝ Ա.Հ.) անեմք, որ մեր վերչն այս է»[43]:

Ի վերջո, ռուսական օգնությունից հույսը կտրած Արցախի ազատագրական շարժումն ու պայքարը սկսում է մարել այն բանից հետո, երբ վշտի, վիրավորանքի ու հուսահատության մեջ հայտնված, արցախյան ազատամարտի ամենավառ ներկայացուցիչ, դրա ոգեշնչող ու կազմակերպիչ, կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը 1728 թ. ինքնասպանությամբ կնքում է իր մահկանացուն: Կաթողիկոսի մահից հետո, Ռուսաստանից օգնություն ստանալու հույսով, 1729 թ. աշնանը ռուսական տերություն են մեկնում Ավան (Հովհաննես) և Թարխան հարյուրապետները, ընդ որում, Թարխանը մեկնում է Մոսկվա[44]: Բայց երկուսն էլ, արդյունքի չհասնելով, այլևս չեն վերադառնում:

Այսպիսով, 1720-ական թթ. ապստամբ արցախահայությունը ոտքի էր կանգնել, ազատագրական պայքարի դիմել, տարիներ շարունակ բանագնացների միջոցով փորձել կապ հաստատել մերձկասպյան շրջանների ռուսական զորքերի և Պետրոս Մեծի արքունիքի հետ՝ խնդրել-աղերսելով զինական օգնություն: Հասկանալի է, որ Թուրքիայի հետ կնքած Կ. Պոլսի պայմանագիրը իրավական առումով թույլ չէր տա-

---

[42] Տե՛ս *АРО в XVIII веке*, т. 2, ч. 2, Ер., 1967, с. 285.

[43] **Աբրահամյան Ա.Գ.**, *Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից*, էջ 257:

[44] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 299, էջ 444–446:

լիս նման ռազմարշավ իրականացնել: Նման պայմաններում ռուսական կողմը, իբրև հարցի լուծման մի տարբերակ, առաջարկում էր, որ հայերը արտագաղթեն ու բնակություն հաստատեն Պարսկաստանից նոր նվաճած մերձկասպյան երկրամասերում: Օրինակ, կա Պետրոս Մեծի՝ 1724 թ. նոյեմբերի 10-ով թվագրվող հրամանագիրը՝ հայերին հող հատկացնել Սբ. Խաչ ամրոցի մոտ[45]: Կա նաև նոյեմբերի 11-ի Նորին մեծության կայսեր հրամանը, որպեսզի էչի Իվան Կարապետը համոզի հայերին վերաբնակվելու նորանվաճ մերձկասպյան մարզերում և այլն[46]:

Այդ նույն վիճակը պահպանվեց նաև 1725 թ.՝ Պետրոս Մեծի մահից հետո: Փաստահավաք Կ. Եզյանը, իր ժողովածուի ընդարձակ ներածականում խոսելով Պետրոս Մեծի արևելյան քաղաքականության և, ի մասնավորի, հայերի հետ հարաբերությունների մասին, իրավացիորեն առանձնացնում է նրա հետապնդած երեք նպատակները. 1/ հայերի միջոցով զարգացնել առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, 2/ հայերով բնակեցնել Պարսկաստանից խլված մարզերը և 3/ ազատագրել հայերին մուսուլմանական լծից[47]: Իսկ եթե հավատանք Պետրոս Մեծի արտահայտած խոսքերին, ապա այն ժամանակների մտածելակերպով՝ քրիստոնյաների ազատագրումը մուսուլմանական լծից պիտի լիներ «Աստծո օրհնության գործը»[48]:

Այսպիսով, երեք դարերի հեռավորությունից գնահատական տալով 1720-ական թթ. Ղարաբաղում ծավալված ազատագրական շարժմանն ու պայքարին՝ հարկ է արձանագրել, որ այն ոտքի հանեց արցախահայությանը՝ իր առաջնորդների գլխավորությամբ, առաջին հերթին ոգևորված Պետրոս Մեծի ծրագրած Կասպիական ռազմարշավից: Սակայն քաղաքական հանգամանքների ու սեփական շահերի թելադրանքով, զինական աջակցություն չգտնելով ռուսական բարձր իշխանությունների կողմից ու կրելով զուտ տեղային բնույթ, այն մարեց: Արցախյան ազատագրական պայքարը չստացավ համահայկական ծավալ: Բացի մեկ-երկու դրվագից՝ այն անգամ ընդհանուր գործակցության ու

---

[45] Տե՛ս *АРО в XVIII веке*, т. 2, ч. 2, Ер., 1967, с. 212.
[46] Տե՛ս նույն տեղում, с. 215–218, նաև՝ **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, վավ. թիվ 265:
[47] Տե՛ս **Эзов Г.А.**, *նշվ. աշխ.*, էջ LXXI (60):
[48] **Соловьев С.М.**, *История России с древнейших времен*, кн. VI, М., 1868, с. 79.

միասնականության եզրեր չգտավ այդ նույն ժամանակ ընթացող Սյունիքի (Կապանի) ազատագրական պայքարի հետ:

### *3. Ազատագրական պայքարը Սյունիք-Կապանում: Դավիթ Բեկ - Մխիթար Սպարապետ (1722–1730 թթ.)*

Արցախից զատ հայ քաղաքական-ազատագրական պայքարի գործուն թատերաբեմ է դառնում նաև **Սյունիք-Կապանը**: Ի տարբերություն ռուսական ընդգծված կողմնորոշում ունեցող և ազատագրության հիմնական հույսը նրա օգնության հետ կապող արցախահայության՝ շատ ավելի ազդեցիկ ու կշռելի դարձան այդ նույն տասնամյակին՝ 1720-ական թվականներին, **Դավիթ Բեկի** (1669–1728 թթ.) գլխավորած Սյունիքի ազատագրական կռիվները: Պատմական իրողությունն այն է, որ Սյունիք-Կապանի ազատագրական պայքարի համար արտաքին ազդակ հանդիսացավ այդ շրջանում Պարսկաստանում ստեղծված ներքին անկայուն քաղաքական վիճակը ու, մասնավորապես, ռազմատենչ աֆղան ցեղերի 1721 թ. արշավանքը դեպի մայրաքաղաք Սպահան և թուլակամ շահ Սուլթան Հուսեինի գերի ընկնելը: Հարկ է նաև նշել, որ ինչպես Արցախում, այնպես էլ Սյունիքում սկսված շարժումը նախ ուղղված էր լեզգի ասպատակիչ ու կողոպտիչ հրոսակախմբերի դեմ: Եվ պատահական չէր, որ ավելի վաղ ժամանակներից լեզգի լեռնականներին ավելի մոտ գտնվող Արցախում, ինչպես արդեն ասվել է, ստեղծվել էին պաշտպանական ամրություններ, որոնք հայտնի էին սղնախներ անվանումով:

1722 թ. ռուսական հետաքրքրությունների ուժեղացումը տարածաշրջանում, օսմանյան իշխանությունների հրահրմամբ լեռնական լեզգիները ուժեղացնում են իրենց ավարառուական ասպատակությունները անդրկովկասյան քաղաքների ու բնակավայրերի վրա: Այդ վտանգը, Արցախից զատ, սպառնում էր նաև Սյունիքին: Եվ այստեղ, ինքնապաշտպանական պայքարը կազմակերպելու և ղեկավարելու համար, Պարսից շահի հրամանով փաստորեն Այսրկովկասի կառավարիչ նշանակված Վրաց թագավոր Վախթանգ VI-ը և նրա որդի թագաժառանգ

Շահնավազը Սյունիքի (Կապանի) հայության խնդրանքով (պատվ. ղեկ. Ստ. Շահումյանց) իր զորականներից հայազգի Դավիթ Բեկին՝ թիկնապահ զորախմբով և 20 քաջակորով հարյուրապետերով, 1722 թ. աշնանը հրավիրում է իր հայրենի Կապան՝ սկզբում իր նստավայրը (բանակատեղին) դարձնելով Շինուհայր ամրոցը, իսկ հետո՝ Տաթևը[49]: Կարելի է կիսել պրոֆ. Լեոյի տեսակետը, որ Դավիթ Բեկի գլխավորած շարժումը ծնվել էր ներսում՝ Կապանում, և ոչ այնքան արտաքին ազդակներով պայմանավորված[50]:

Դավիթ Բեկին հաջողվում է դժվարին մարտեր մղելով տեղի թյուրք-թաթարական ցեղախմբերի դեմ, նաև հաղթահարել ներքին դավաճանական փորձերը, ստեղծել երկաթյա կարգապահություն ունեցող զորեղ մի զինուժ: Ստույգ տվյալներ կան, որ Դավիթ Բեկի գլխավորած զինուժի մարտիկների թիվը կազմել է 6628 հոգի[51]: Նկատի առնելով, որ սույն վավերագրում զինուժի վերաբերյալ բերված թվական տվյալը կլորացված և ուռճացված չէ, ուստի. կարելի է հիմնավոր պնդել, որ Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի գլխավորած զինուժը գերազանցել է 6 հազարը:

Բերվածից զատ ուշագրավ փաստ է, որ Հայաստանի ազատագրության ու անկախ պետականության վերականգնման ակնկալիքով՝ Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական կռիվներին իրենց մասնակցությունն են բերել Ղրիմում հաստատված երբեմնի վեհաշուք Անիի գաղթաբնակ շառավիղների հեծյալ երիտասարդների 285 հոգուց կազմված զինախումբը[52]: Վավերագիր տեղեկություններ կան, որ Դավիթ Բեկի ապստամբությանը մասնակցություն են ցուցաբերել նաև վաղարշապատցի և աշտարակցի մի խումբ երիտասարդներ[53]: Բացի այդ, տվյալներ կան, որ 1723–1724 թթ. հայ զինական ուժերի չորս խոշոր հատվածներ՝ Արցախը, Սյունիքը, Երևանն ու Նախիջևանը անգամ

---

[49] *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 44:

[50] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 203:

[51] Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր, թիվ 3297, էջ 68–69:

[52] Տե՛ս **Պարսամյան Վ.Ա.**, *Պատմագիտական աշխատություններ*, Եր., 1985, էջ 257–258:

[53] Տե՛ս նույն տեղում, էջ 259:

նպատակ են ունեցել ստեղծելու **միասնական** ազատագրական ճակատ՝ Ավան Յուզբաշու գլխավորությամբ[54]:

Այս համատեքստում ուշագրավ է արձանագրել, որ արևելահայության շրջանում բռնկված ազատագրական զինված պայքարը արձագանք է գտել նույնիսկ Արևմտյան Հայաստանում: Օրինակ, փաստական տվյալներ կան, որ դավիթբեկյան ազատամարտին միանալու ցանկություն են հայտնել արևմտահայ առանձին շրջաններ, մասնավորապես, Վան-Վասպուրականի հայությունը: Այդ նպատակով, 1722 թ. օգոստոս-սեպտեմբերին Վասպուրականի գավառների հոգևոր ու աշխարհիկ մեծամեծերի և Սյունիքից ժամանած արևելահայ ազատագրական շարժման պատվիրակ Տեր-Ներսես վարդապետի մասնակցությամբ Լիմ անապատի սբ. մենաստանում գումարվել է գաղտնի ժողով: Խորհրդահայ պատմագրության մեջ այդ ժողովի մասին առաջիններից մեկը արձագանքել է տակավին երիտասարդ պատմաբան Մ. Ներսիսյանը՝ հրատարակելով Լիմ անապատի միաբան Մխիթար աբեղայի կազմած «Հիշատակարանը»[55]:

Լիմ կղզու ժողովի վերաբերյալ գրիչ Մխիթար աբեղայի թողած «Հիշատակարանում» պատմվում է, որ հավաքի ժամանակ Սյունիքից ժամանած Տեր-Ներսես վարդապետը ժողովականներին լալագին ներկայացնում է Հայոց ազգի դառնակսկիծ վիճակը, իսկ այնուհետև ցնցագին հայտնում՝ «թէ այր մի երկրէն Սիւնաց Դաւիթ բէկ անուանեալ, զօրաշարժութիւն արարել իցէ վասն հալածելոյ նեղիչք եւ կշտամբիչք մեր, **միտս ունելով ազատագրելոյ արյունածուփ զաշխարհն Հայաստան** (ընդգծ. բնագրին է – Ա.Հ.)»[56]: Այնուհետև ժողովում որոշում է կայացվում մասնակից լինել Արցախ-Սյունիքում բռնկված զինված ապստամբությանը: Վճռի կայացումից հետո ժողովականները նավով ուղևորվում են «ծովապատ եւ զանառիկ կղզին յԱղթամար», ուր

---

[54] Տե՛ս **Այվազյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 35: Բայց Կ. Պոլսի 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրով օսմանյան զորքերի դեպի Այսրկովկաս ներխուժմամբ կասեցվեց այդ գործընթացը:

[55] **Ներսիսյան Մ.**, *Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հայկական գաղթոնկերում* (տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1941, թիվ 5–6, էջ 73–75:

[56] Նույն տեղում, էջ 74:

Տեր-Հովհաննես Հայոց Ձորեցի կաթողիկոսը օրհնությամբ հավանություն է տալիս «զմեծախորհուրդ ձեռնարկիս իւրանց»[57]: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ հավանաբար Բարձր Դռան, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի միջամտությամբ կամ այլ հանգամանքների պատճառով այդ որոշումը գործնական ընթացք չի ստացել: Ինչևէ, անկախ վերջնարդյունքից, այստեղ առանձնապես գնահատելին ազգային միասնականության գաղափարն է, երբ հայրենիքի ազատագրության ճանապարհին փորձ է արվել ստեղծել կապ ու համագործակցություն արևելահայության, արևմտահայության և ի սփյուռս աշխարհի: Այդ նշանակում է, որ Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարը նոր ժամանակներում, իբրև առաջնեկ, կարծես ունեցել է համազգային բնույթ ստանալու միտում, մանավանդ որ անգամ, հանձին Կապանի ինքնիշխանության, պետականության ստեղծման հաջողված փորձ է արվել:

Բուն Սյունիքում իրադարձությունների զարգացումը հետևյալ ընթացքն ունեցավ: Դավիթ Բեկն իր մերձավոր զինակից Մխիթար Բեկին նշանակեց բանակի հրամանատար (սպարապետ): Այս և հետագա գործառույթները անգամ ճանաչում են ստանում պարսից Թահմասպ 2-րդ շահի կողմից: Բանն այն է, որ Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարն առաջին հերթին ուղղված էր դեպի տարածաշրջան ներխուժած առավել վտանգավոր թուրքական զորքերի դեմ: Ինչպես վկայում են աղբյուրները, Դավիթ Բեկի ձևավորած բանակն աչքի է ընկել երկաթյա կարգապահությամբ, ինչը, բնականաբար, համարվում է ցանկացած բանակի ռազմական հաջողության առաջնային կողմերից մեկը: Շատ ուսանելի է, որ նրան հաջողվում է հնարավորինս հաղթահարել նաև ներքին դավաճանական փորձերը: Տվյալներ կան, որ մարտական կարգապահությունը խախտելու համար Դավիթ Բեկը գլխատման միջոցով մահապատժի է ենթարկել Պապ զորապետին, հանգամանքների բերումով կալանքի տակ է առել Մելիք Փարսադանին և Տեր-Ավետիսին, բախում է ունեցել Չավնդուրի զինուժի հրա-

---

[57] **Ներսիսյան Մ.,** *Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հայկական գաղութներում* (տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1941, թիվ 5–6, էջ 74:

մանատար Թորոսի, անգամ ծեծի է ենթարկել (գլխատոմը փոխարինելով ծեծի) իր մերձավոր Մխիթար Սպարապետին, էլ չենք խոսում հայտնի դավաճանների և ուրացողների՝ Տաթևի Մելիք Բաղրին, Երիցվանքի Մելիք Ֆոանգյուին, Ագուլիսի Մելիք Մուսիին պատժելու մասին[58]:

Հայտնի է, որ ռազմաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում ավելի է բարդանում, երբ թուրքական կանոնավոր զորքերը 1725/26թթ. հարձակում են ձեռնարկում նաև Սյունիք-Կապանի վրա: Արևելյան Հայաստան ներխուժած թուրքական բանակը Երևանի գրավումից հետո՝ 1726 թ. հարձակվեց Կապանի հայկական իշխանության վրա: Դավիթ Բեկն ստիպված ամրացավ իր նոր կառուցած Հալիձորի բերդավանում: 1727 թ. մարտին թշնամին պաշարեց Հալիձորը: Եվ, ահա, Դավիթ Բեկը, Մխիթար Սպարապետը, Տեր-Ավետիսը և 300 զորական քաջորդիներ, դուրս գալով Հալիձորի ամրոցից, անակնկալ հակահարձակումով ջարդում ու փախուստի են մատնում մեծաքանակ թուրքական զորքին՝ տանելով փառավոր հաղթանակ: Տվյալներ կան, որ օսմանցիները տվել են 13 հազար զոհ, ինչը, մեր կարծիքով, չափազանցություն է, մարտի դաշտում թշնամուց խլվել է 148 դրոշ և այլն[59]:

Պատմական զուգահեռ անցկացնելու առումով՝ այդ նույն ժամանակ Արցախի ազատագրական կռիվների օրինակը ցույց է տալիս, որ անհեռանակարային (անիմաստ) էր դրսից, ի մասնավորի՝ Ռուսաստանից օգնություն ակնկալելը, մի անհուսալի իրավիճակ, որը առաջ պիտի բերեր նրա զինուժի շարքերում հուսալքություն: Դրան հակառակ՝ Դավիթ Բեկը, ապավինելով սեփական ուժերին, ցուցաբերելով աննկուն կամք ու վճռականություն, մի քանի նոր հաղթանակներով կարողանում է թշնամուն դուրս վտարել Կապանից և Մեղրիից, ինչն արժանանում է շահ Թահմասպ 2-րդի հավանությանը: Պարսից տիրակալը 1727 թ.

---

[58] Տե՛ս **Սեբաստացի Դ.**, *Դավիթ Բեկ կամ պատմություն դատիանցոց*, Եր., 1992, էջ 39 և 49, **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 6, էջ 795, **Հովհաննիսյան Ա.**, *Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը* (Բանբեր Երևանի համալսարանի (ԲԵՀ), Եր., 1970, թիվ 1, էջ 104), **Աբրահամյան Ա.**, *Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ* («Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1972, թիվ 4, էջ 164), **Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս.**, *նշվ. աշխ.*, էջ 186–187:

[59] Տե՛ս **Սեբաստացի Դ.**, *նշվ. աշխ.*, էջ 61, **Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս.**, *նշվ. աշխ.*, էջ 188:

Դավիթ Բեկին ճանաչում է **Սյունիքի կուսակալ**: Նա ստանում է վասալական (ինքնավար) իշխանի նշաններ, առանձին դրոշ (խաչվառ), նժույգ և պատվական զգեստներ: Դավիթ Բեկին տրվում է նաև սեփական դրամ հատելու իրավունք: Բոլոր տեղական թուրք իշխանավորներն իրենց զորամասերի հետ հնազանդություն են հայտնում Դավիթ Բեկին[60]: Բացի քաջակորով զորավարի կարողություններից, Դավիթ Բեկը հանդես է բերել նաև դիվանագետի ու պետական հեռատես գործչի ունակություններ: Հատկանշականն այն է, որ իր գլխավորած ազատագրական պայքարի 6 տարիների ընթացքում նա կարողացավ հայ ժողովրդի ազգային շահերը ներդաշնակել պարսից պետական շահերի հետ և պաշտոնապես ճանաչում ստանալ Իրանի շահի կողմից:

Մեր կարծիքով, սա պատմականորեն առաջ եկած ուսանելի մի փորձ է և ընդօրինակելի երևույթ նաև մեր ժամանակների համար, որը կարելի է կառուցել միջպետական փոխադարձ շահերի հաշվառումով՝ երկրորդական պլան մղելով կրոնադավանաբանական, ինչպես նաև արհեստական այլ կարծրատիպեր (անջրպետներ): Դավիթ Բեկի որդեգրած քաղաքականության շնորհիվ կրոնական գործոնը դառնում է երկրորդական, և նրա որդեգրած պայքարն ընդունում է քաղաքական բնույթ: Դավիթ Բեկն ու իրեն հավատարիմ ռազմաքաղաքական շրջապատը ավելի քան երեք դար առաջ արդեն իսկ կուտակված պատմական ու իրական փորձով քաջ գիտակցեցին, որ Իրան կամ Թուրքիա երկընտրանքի հարցում հասկանալիորեն որի՞ հետ պետք է գործակցել և պայքարի սուր սլաքը ո՞ւմ դեմ պիտի ուղղել: Հարկ է նաև ընդգծել, որ Սյունիքի դավիթբեկյան կռիվների ժամանակ արձանագրվել են նաև օսմանյան զորքերի դեմ հայ-պարսկական զինուժերի միասնական գործողությունների օրինակներ: Ինչ վերաբերում է Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարում հանդես բերված գործակցությանը, ապա հայտնի է այդպիսի ընդամենը մեկ-երկու դրվագ: Օրինակ, հայտնի է 1724 թ.

---

[60] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 203:

Կապանի թեժ կռիվների ժամանակ Ղարաբաղի սղնախներից Դավիթ Բեկին օգնության են հասնել Ավան Յուզբաշու 2000 մարտիկները[61]:

Ի վերջո, 1728 թ. Դավիթ Բեկի մահը տխուր շրջադարձ եղավ ու կանխորոշեց Սյունիքի ազատագրական պայքարի վախճանը: Հայտնի է, որ նրա մահից հետո Սյունիքի ազատագրական պայքարի ղեկը ստանձնեց իր հավատարիմ զինակից Մխիթար Սպարապետը: Հայ-ռուսական հարաբերությունների պատմության քաջագիտակ հետազոտող Պ. Հարությունյանը ժամանակին Ռուսաստանի արտգործ. արխիվից (АВПР) ի հայտ է բերել 1726 թ. մարտի 24-ի ամսաթվով՝ Մխիթար Բեկի (Սպարապետի) և իր յոթը զինակից յուզբաշիների՝ Եղիազարի, Ավթանդիլի, Բայանդուրի և մյուսների ստորագրություններով հայերեն մի նամակ-գրություն՝ ուղղված ռուսական կառավարությանը: Դրանում խոսվում էր իրենց պայքարի, օգնություն ստանալու և հայերի ու Հայաստանի Ռուսաստանին միանալու մասին[62]:

Մեր պատմագիտական գրականության մեջ շրջանառվում է մի վարկած, որ Դավիթ Բեկը իբրև մահացել է 1726 թ., 54 տարեկան հասակում, և այդ թվականից Կապանի ազատագրական պայքարը գլխավորել է Մխիթար Բեկը (Սպարապետը): Այդ առնչությամբ հիմնական փաստարկն այն է, որ 1926 թ. Ռուսաստան ուղարկված դիմում-նամակի տակ այլևս չկա Դավիթ Բեկի ստորագրությունը ու չի հիշատակվում նրա անունը: Պատմաբան Ս. Հախվերդյանի մեկնաբանությամբ, այդ փաստաթուղթը մի հիշատակարան է, որ թողել է Դավիթ Բեկի աներձագը՝ ռուսական բանակի փոխգնդապետ Թաղա Կուզանովը (Կուզանենց) 1746 թ.: Այն պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, ձեռագրերի ֆոնդ, հմր. 5794[63]: Սակայն դրան հակառակ՝ կան փաստավավերագիր սկզբնաղբյուրների տվյալներ ու պատմաբանների

---

[61] **Հովհաննիսյան Ա.**, *Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը* (տե՛ս Բանբեր Երևանի համալսարանի (ԲԵՀ), Եր., 1970, թիվ 1, էջ 104), նաև՝ **Աբրահամյան Ա.**, *Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ*, (թիվ 4, էջ 179), **Մաղալյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 41–42:

[62] Տե՛ս **Арутюнян П.**, *Послание Мхитар-бека русскому правительству* («Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1952, թիվ 3, էջ 83–99):

[63] Տե՛ս **Հախվերդյան Ս.**, *Գորիսի պատմություն*, Գորիս, 1996, էջ 130, նաև՝ *«Հայկական զորքը XVIII դարում»*, Եր., 1968, էջ 237–238 (ռուս.) և այլն:

բազմակողմ հիմնավորումներ այն մասին, որ Դավիթ Բեկը Սյունիքի ազատագրական պայքարը գլխավորել է վեց տարի՝ 1722–1728 թթ. և մահացել է 1728 թ. իր տանը՝ Հալիձորում, հիվանդության պատճառով: Եվ միայն նրա մահից հետո է Մխիթար Սպարապետը հաջորդել իրեն[64]:

Պատմաբան Պ. Հարությունյանի հրապարակած փաստաթղթի քաղաքական արժեքը կայանում է նրանում, որ ստացվում է՝ Սյունիքի ապստամբներն էլ թուրքական հետագա սպառնալիքի հրամայականով, օգնություն ստանալու ակնկալիքով, անհրաժեշտություն են համարել դիմել Ռուսաստանին: Բայց պետք է արձանագրել այն փաստը, որ ինչպես Արցախում, այնպես էլ Սյունիքում արտաքին որևէ օգնություն չստացվեց: Ի վերջո, 1729 թ. թշնամին գրավում է Հալիձորը: Ներքին անհամաձայնությունների ու պառակտումների հետևանքով գնալով դրությունը ծանրանում է: Եվ 1730 թ., որքան էլ որ ցավալի ու դատապարտելի է, խնձորեսկցիների կողմից Մխիթարի եղերական սպանությունը վերջ դրեց Սյունիքի ազատագրական պայքարին, որն, անշուշտ, ամենախոշոր ելույթն է XVIII դարի հայ ազատագրական շարժման ու պայքարի պատմության մեջ:

Բազմավաստակ պատմաբան Լեոն, բարձր գնահատական տալով Դավիթ Բեկի ապրած կյանքին ու ռազմաքաղաքական գործունեությանը, իրավացիորեն նշում է, որ «նա իր հետ գերեզման տարավ և իր գործը, մնալով հայոց պատմության մեջ մի փայլուն, առանձնացած երևույթ, որ **իբրև ազգային ազատագրության մարմնացում՝ չուներ իր նմանը Կիլիկիայի հայոց անկախության խորտակումից հետո** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[65]:

Այսպիսով, Արցախ-Սյունիքի ազատագրական կռիվները նախակարապետները դարձան հետագա ազատագրական շարժման ու պայքարի, որոնց վերջնանպատակը անկախ տարածական ընդգրկումից,

---

[64] Այդ մասին հանգամանորեն տե՛ս «Ուշագրավ տվյալներ Դավիթ-Բեկի մասին», **Շահումեան Ստ.**, *Պատմութիւն Դաւիթ Բէկին* (տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, հմր. 6835), **Կնյազյան Հ.**, *Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ*, Եր., 1963, **Պարսամյան Վ.Ա.**, *Պատմագիտական աշխատություններ*, էջ 353–358, **Սեբաստացի Ղ.**, *Դավիթ Բեկի պատմությունը*, Եր., «Արևիկ», 1988 և ուրիշներ:

[65] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 206:

անշուշտ, միտված էր հայոց պետականության վերականգնմանը: 1720-ական թվականների Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարն իր դրոշմը պիտի թողներ հետագա դարաշրջանի հայ ազատագրական մտքի ու գործի հասունացման վրա: Պատմական ուսանելի փորձի յուրացման տեսակետից պետք է հատուկ ընդգծել, որ Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի առաջնորդները առանձնակի կարևորել են կարգապահ և մարտունակ բանակի անհրաժեշտությունը: Ազգային բանակը, ինչպես պատմական անցյալում, նույնպես և մեր ժամանակներում կարևոր գործոն ու կռվան է հանդիսանում անկախ պետականության վերականգնման, ամրակայման ու հարատևման ճանապարհին:

## *4. «Խամսայի» մելիքությունների դաշնությունը՝ իբրև հայոց պետականության դրսևորում*

Ինչպես արդեն նշվեց, թուրքերը ներխուժել էին Անդրկովկաս՝ 1723 թ. նոյեմբերին գրավել էին Թիֆլիսը, տևական պաշարումից հետո՝ 1724 թ. սեպտեմբերի 28-ին՝ Երևանը: Պարսկաստանում ընթացող ներքին խռովությունները, աֆղանների ներխուժումները, գահակալական կռիվները և այլն հնարավորություն չէին տալիս շահին կանգնեցնելու թուրքերի առաջընթացը դեպի Թավրիզ և հակահարված տալ թշնամուն: Վերջինս գրավում է նաև Թավրիզը: 1725 թ. իր իսկ մերձավորների կողմից սպանվում է աֆղան Միր-Մահմուդ շահը, և իշխանությունն անցնում է նրա հորեղբորորդի, մի նոր արյունարբու Սուլթան Աշրաֆին (1725–1729 թթ.), իսկ **Արդաբիլում** գտնվում էր տակավին իշխանազրկված թագաժառանգ Թահմասպ 2-րդը: Եվ այդ ամենի հետևանքով, 1727 թ. հոկտեմբերին Համադանում կնքվում է թուրք-իրանական պայմանագիրը, վերջինիս համար շատ ծանր պայմաններով[66]:

Պարսկաստանի համար տարածաշրջանային աշխարհաքաղաքական լուրջ իրավիճակ ու ծանր հետևանքներ առաջ բերած գործընթացները, ի վերջո, կարողանում է շտկել շահ Թահմազպի մոտ ծառայութ-

---

[66] Տե՛ս **Զուլալյան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 99:

յան մտած Խորասանի թուրքմենական աֆշար ցեղի քըրքըրլու ցեղախմբին պատկանող, ռազմիկ Թահմազ Ղուլի (թարգմ.՝ «ստրուկ») Նադիր խանը՝ հետագա հանրահայտ **Նադիր շահ Աֆշարը** (1736–1747): Նախ՝ Նադիր Ղուլի խանը ջախջախում է աֆղաններին ու շահ Աշրաֆին: Վերջինս սպանել էր թագաժառանգ Թահմասպ 2-րդի գահազուրկ ծերունի հորը՝ Սուլթան-Հուսեյնին, իսկ ինքն էլ՝ սպանվել բելուջների կողմից: Ճկուն դիվանագետ ու դաժան զորավար Նադիր Ղուլի խանը կարգվում է շահ Թահմասպ 2-րդի զորքի գլխավոր հրամանատար: Նա 1729 թ. լիակատար պարտության է մատնում ապստամբ աֆղաններին և գործնականում դառնում Պարսից տերության միանձնյա տեր: Այնուհետև նա 1730 թ. ծանր պարտության է մատնում օսմանցի թուրքերին՝ ազատագրելով Համադանը, Քերմանշահը և Ատրպատականը՝ Թավրիզ կենտրոնով: 1732 թ. Նադիր խանը Թահմասպի մանկահասակ որդուն կարգում է թագավոր՝ Շահ Աբաս անունով, իսկ 1736 թ. մարտին՝ Նովրուզ-բայրամի օրը, Մուղանի դաշտում գումարված համաժողովում՝ «Ղուրուլթայում», Իրանի աշխարհիկ և հոգևոր առաջնորդների մասնակցությամբ, հանդիսավոր կերպով թագադրվում է Պարսից շահ: Ի դեպ, շահի թագադրման արարողությանը մասնակից է եղել Դիզակի Մելիք Եգանը: Իսկ գլխավոր արարողություններից մեկի՝ նորընտիր շահի գոտուն թուր կապելը արտոնվում է Ամենայն հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացուն (1734–1737 թթ.)[67]: Այս առնչությամբ ուշագրավն այն է, որ ինչպես գրում է Մ. Չամչյանը՝ «զԱբրահամ կաթողիկոս հայոց՝ ետ նմա օրհնել զսուր իւր, և ածել զմիջով իւրով, առ 'ի ծանուցանելոյ՝ թէ **ինքն թագավոր է և 'ի վերա Հայաստանեաց** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[68]: Այլ խոսքով, Հայոց կաթողիկոսը, նման արարողակարգ անցկացնելով, հասկացնել է տվել, որ Նադիր շահը նաև հայոց թագավորն է: Այդպիսով, Սեֆյանների հարստությանը փոխարինելու եկավ Աֆշարականը: Նադիր շահին հաջողվում է հետ վերցնել Պարսից տերությունից խլված, այդ թվում, մերձկասպյան տարածքները: 1732 թ. հունվարի 21-ի Ռեշտի ռուս-պարսկական պայմանագրով

---

[67] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 221, նաև՝ **Մաղալյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 201–202:

[68] **Չամչյանց Մ.**, *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 6, էջ 815:

Ռուսաստանը Պարսկաստանին է վերադարձնում Գիլանը, Աստապատը, իսկ 1735 թ. մարտի 10-ի Գյանջայի պայմանագրով՝ Բաքուն, Դերբենդը, մի խոսքով, մերձկասպյան բոլոր գրավյալ տարածքները[69]:

Հայտնի է, որ Նադիր շահը հետագայում դաժան նվաճումներով ու դրան ուղեկից կողոպուտներով հասնում է մինչև Հնդկաստան՝ նրա մայրաքաղաք Դելի և, ի վերջո, 1747 թ. դավադրաբար սպանվում է իր մերձավորների կողմից: Հարկ է նաև արձանագրել, որ 1720–1730-ական թվականներին դեպի Անդրկովկաս՝ Իրանի ազդեցության գոտիներ ներխուժած օսմանյան Թուրքիայի ոտնձգությունների դեմ պայքարում պարսկական, հատկապես Նադիրի զորքերի հետ համագործակցում էին հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանավորները, նաև հայ կամավորների զինախմբերն անգամ մասնակցություն են ցուցաբերել թուրքերի դեմ մղվող կռիվներին: Նշանակալի էր 1735 թ. հունիսի 14-ին **Եղվարդի** մոտ տեղի ունեցած հայտնի մեծ ճակատամարտը, որտեղ Նադիրի զորքը, հայ աշխարհազորայինների մասնակցությամբ, ջախջախիչ պարտության է մատնել օսմանյան ենիչերական բանակին: Ճակատամարտի ժամանակ սպանվում է թուրք սերասկյար (գլխավոր հրամանատար) Քյոփրյլու Աբդուլլա փաշան: Դրանից հետո պարսից զորքը արշավել է դեպի Կարս ու Էրզրում, և դա բավարար հիմք հանդիսացավ, որ թուրքերը հանձնեին Երևանը, հեռանային Անդրկովկասից ու վերականգնվեր նախկին տարածքային-սահմանային կարգավիճակը:

Իբրև հայերի ցուցաբերած հավատարմության ու մատուցած ծառայության արտահայտություն, Իրանի բարձր իշխանությունները և անձամբ Նադիրը շահը հատուկ հրովարտակով՝ առանձնաշնորհումներով ու նվերներով պատվեց Մայր աթոռ Սբ. Էջմիածինը: Բացի այդ, անշուշտ, քաղաքական որոշակի ձեռքբերում էր նաև այն, որ հենց Նադիր շահի նախաձեռնությամբ 1736 թ. արցախյան ինքնավար վարչական հինգ (Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի) միավորների՝ մելիքությունների միախմբումից հիմնվեց պատմությանը հայտնի «**Խամսայի**» (արաբերեն՝ հինգ) մելիքությունների դաշնությունը, որի կառավարման իրավունքը խանի և բեկլարբեկի (իշխանաց իշ-

---

[69] Տե՛ս *Договоры России с Востоком...*, с. 185–201 и 202–207.

խանի) կարգավիճակով տրվեց Դիզակի՝ XVIII դարի 30-ական թթ. հայ իրականության քաղաքական խոշորագույն դեմք հանդիսացող Մելիք Եգանին[70]:

1730-ական թվականներին պարսից Նադիր խան-շահը, Հայաստանից ու Անդրկովկասից թուրքերին դուրս վտարելով, այդ ընթացքում ստանալով հայերի համակրանքն ու զորակցությունը, հայ ժողովրդի հանդեպ վարել է բարյացակամ քաղաքականություն: Նա Ամենայն հայոց կաթողիկոսությանը և հայ մելիքական տներին շնորհեց նոր կալվածքներ ու արտոնություններ: Շահի հրամանով հաստատվել ու կնիքով ամրագրվել է այն գյուղերի ցանկը՝ նրանց եկամուտներով, որոնք գործնականում հանդիսացել են Մայր աթոռի կալվածքները: Այդ գյուղերն էին՝ Էջմիածինը, Օշականը, Ֆռանկանոցը, Մաստարան, Քիրաշլուն, Դիպակլուն և Քեշիշքյանդը[71]: Ուշագրավ է նաև, որ Նադիրը 1000 թուման նվիրատվությամբ վերանորոգել տվեց Սբ. Էջմիածնի վանքը և տաճարին նվիրեց 15 կգ-ոց ոսկե ջահ, նաև կարգադրեց Քերմանշահից ոտարկել ընտիր գորգեր, ընդարձակել տվեց վանքի կալվածքները և այլն[72]:

Հարկ է նշել, որ Ղարաբաղը, իբրև հսկայական լեռնոտ միջնաբերդ, տարածքային առումով իր մեջ երբեմն ներառել է նաև Սյունիքը՝ Մեծ ու Փոքր Ղափանը: Դեռ XVI դարի սկզբից, այսինքն՝ Սեֆյանների ժամանակներից, դրանց տիտղոսավոր կառավարիչ-իշխանները կրում էին շահի **Ֆերմանով**[73] հաստատված «մելիք» կամ «մալիք» արդեն մեզ հայտնի թագավոր պատվանունը (տիտղոսը)[74]: Իսկ Խամսան ինքնին իրենից ներկայացնում է հինգ մելիքությունների մի դաշնային ամբողջություն:

Անշուշտ, Արցախի XVIII դարի առաջին մի քանի տասնամյակների ազատագրական պայքարի արգասիք կարելի է համարել Խամսայի մե-

---

[70] Տե՛ս *Հայոց պատմություն,* հ. 3, գ. 1, էջ 55:

[71] Տե՛ս **Սիմեոն Երևանցի,** *Ջամբռ,* էջ 152:

[72] Տե՛ս hy.wikipedia.org/wiki/Նադիր շահ:

[73] «Ֆարման» կամ «ֆերման» նշանակում է թուրքական սուլթանի կամ պարսիկ շահի հրամանագիր, հրովատակ (տե՛ս *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,* հ. 4, Եր., 1980, էջ 814):

[74] Տե՛ս **Լեո,** *Երկերի ժողովածու,* հ. 3, էջ 16:

լիքությունների ստեղծման փաստը, որն իր ժամանակի մեջ դարձավ հայկական մի յուրահատուկ **պետականության իմաստ ու բովանդակություն** պարունակող իրավական կառույց: Այս առումով դրվատանքի է արժանի հայ մեծանուն պատմավիպասան Ռաֆֆու կողմից առաջիններից մեկը լույս աշխարհ հանած, փաստավավերագիր նյութերով և պատմագեղարվեստական ոճով շարադրված «Խամսայի մելիքությունները» կոթողային աշխատությունը[75]: Խոսելով երբեմնի՝ հին և միջնադարյան հայկական թագավորությունների կորստի մասին, նա միաժամանակ հիշեցնում է, որ դրանից հետո էլ, «պահպանված նախկին փառքի մոխիրի մեջ» չմարեցին հայոց պետականության «կայծերը»[76]: Եվ պետականության նման դրսևորումներից մեկն էլ նա համարեց «Խամսայի մելիքությունները», որին և նվիրեց իր համանուն աշխատությունը:

Տեղին ու գնահատելի է Ռաֆֆու, ինչպես նաև Արցախի մելիքական տների և հայ մելիքությունների պատմության մեր ժամանակների ճանաչված հետազոտողներից Ա. Մաղալյանի տրված գնահատականը, որ մելիքական տները իսկապես կարելի է դիտել հայոց պետականության բեկորներ ու շարունակություն[77]: Պատահական չէ, որ Արցախի մելիքներն իրենց համարում էին «հայոց թագաւորաց ազնիւ զինվորաց մնացեալ ժառանգք»[78]: Պետք է նաև արձանագրել, որ եթե պարսկական տիրապետության պատմաշրջանում հայ մելիքական տները ինչոր չափով հայկական պետականության ատրիբուտներ պարունակող իշխանական կառույցներ էին, սակայն, ցավոք, հետագայում արևելահայ երկրամասերը Ռուսաստանին միացվելուց հետո ցարական իշխանությունները փաստորեն քայքայեցին ու տարրալուծեցին հայ մելիքական տները: Բացի այդ, էթնիկ առումով կատարվեցին կողմնակալ ու աններդաշնակ վարչատարածքային բաժանումներ և այլն:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ XVIII դարի 20–30-ական թթ. Արցախի և Սյունիքի (Կապանի) զինված ազատագրական պայքարի քաղաքական արտահայտություն հանդիսացան մի կարճ ժա-

---

[75] Տե՛ս **Ռաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 10, էջ 165–395:
[76] Նույն տեղում, էջ 165:
[77] Տե՛ս **Մաղալյան Ա.**, *հշվ. աշխ.*, էջ 21 և 42:
[78] Նույն տեղում, էջ 35:

մանակահատվածում՝ Դավիթ Բեկի գլխավորած **Կապանի** ինքնավար իշխանությունը, իսկ այնուհետև Արցախում՝ **Խամսայի** մելիքությունները, որոնք դարձան ինքնատիպ **հայկական (ինքնիշխան) պետականություններ**՝ շահական Պարսկաստանի հովանու ներքո: Բայց և հասկանալի էր, որ կղզիացած ու մեկուսի այդ իշխանությունները, այն ժամանակվա աշխարհաքաղաքական բարդ պայմաններում, չէին կարող հարատևել: Դրանից հետո հայ ժողովրդի ազատագրական պայքարը ազատագրման ու անկախության համար, արտաքին, ինչպես նաև ներքին աննպաստ գործոններով պայմանավորված, առժամանակ թուլացավ ու հետաձգվեց պետականության վերականգնման հեռանկարը:

Մյուս կողմից, երեք դարերի հեռվից Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարի պատմական փորձն ու դասերը հանրագումարի բերելով, կարելի է արձանագրել, որ նրա ամենանկատելի բացերից մեկն այն էր, որ այն չստացավ համահայկական չափեր և սահմանափակվեց միայն Արցախի և Սյունիքի շրջանակներում, այն էլ՝ գրեթե իրարից մեկուսի: Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի փորձը ցույց տվեց, որ այդ ողջ ընթացքում հաճախ գլուխ է բարձրացրել ներքին անմիաբանությունը, որին հետևել են ներքին հոգևոր և աշխարհիկ շրջանակների միջև հակամարտությունները, դրան ուղեկից մատնությունները, ձախողումներն ու սպանությունները:

Այդ տասնամյակների քաղաքական իրողություններից մյուսն այն էր, որ Ռուսաստանից ակնկալվող օգնությունը չստացվեց: Բայց, դրա փոխարեն, դրվատանքի արժանի ուսանելի փորձ եղան Թուրքիայի դեմ պայքարում հայ-իրանական ռազմաքաղաքական բնույթի գործակցության առանձին դրսևորումները: Բայցևայնպես, իր ամբողջության մեջ Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարը, իր պատմական փորձով և հարուստ դասերով հանդերձ, պետք է դիտել որպես դրվատանքի արժանի քայլ հայոց պետականության վերականգնման ճանապարհին:

Պատմական անցյալի ուսանելի փորձի և արդի իրողությունների համադրական վերլուծությունից՝ իբրև առաջարկ կարելի է հետևեցնել, որ ՀՀ ներկայիս արտաքին քաղաքականության կոնցեպտը մշակելիս, անշուշտ, պետք է փորձել նոր մակարդակի բարձրացնել հայ-իրանա-

կան հարաբերությունները, իբրև Հայաստանի անվտանգության և տարածքային ամբողջության երաշխավորող արտաքին ազդեցիկ գործոն:

Եվ, վերջապես, կարելի է արձանագրել. հետագա՝ XIX–XX դարերի հայ ազատագրական պայքարի համար մեծապես պարտական ենք Արցախ-Սյունիքի պայքարի այս դրվագներին, մի պայքար, որն ունեցավ իր հետագա տրամաբանական շարունակությունը և, ի վերջո, պիտի հանգեցներ 1918 թ. «**Մայիսի 28**»-ի պատմական **Մեծ խորհրդին**՝ Հայոց անկախ պետականության վերականգնմանը:

### *5. Հայ ազատագրական շարժման նոր վերելքի նախադրյալները XVIII դարի երկրորդ կեսին*

XVIII դարի երկրորդ կեսում հայ իրականության մեջ պահպանողական համարվող թևի ամենավառ ներկայացուցիչներից է համարվում Մեծն հոգևոր հայր, Ամենայն հայոց կաթողիկոս **Սիմեոն Երևանցին** (1763–1780 թթ.): Հայտնի է, որ պատմական այդ շրջափուլում առավել ազդեցիկ հնդկահայ և ռուսահայ գաղթօջախներում Հայաստանի ազատագրության ծրագրեր էին մշակվում, դրանք կենսագործելու ակնկալիքով հայ ազատագրական մտքի նվիրյալները ուղևորվում էին Եվրոպա և Ռուսաստան, բարձր ղեկավար շրջանների հետ բանակցային փորձեր էին անում և այլն: Եվ այս առնչությամբ, հարկ է նկատել, որ կաթողիկոս Սիմեոն Երևանցին դիվանագետի հեռատեսությամբ նման քայլերին սառն էր վերաբերում: Նա այնքան էլ հավատ չէր ընծայում ու չէր խրախուսում նման ձեռնարկները: Մասնավորապես, ինչպես նշում է Ս. Երևանցու հանրահայտ «**Ջամբռ**» աշխատության աշխարհաբար հաջողված թարգմանիչ պրոֆ. Վ. Համբարձումյանը, հնդկահայ մեծահարուստ Շահամիրյանների նախաձեռնությամբ հայոց ազատագրության ծրագրերի մշակումը և մեծ տերություններին պահանջներ ներկայացնելը Ամենայն հայոց հայրապետ Սիմեոն Երևանցին համարում էր անիրական կռվանների վրա հիմնված երազանք[79]:

---

[79] **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ Է:

Սովորաբար, հայ պատմագրության մեջ XVIII դարի հայ **պահպանողական** որակում ստացած հոսանքի ամենավառ ներկայացուցիչ ընդունված է համարել Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցուն: Իբրև փաստարկ, հարկ ենք համարում նշել հետևյալը, որ կաթողիկոսը գրական ու գիտական մեծ արժեք ունեցող 25 գլխից բաղկացած «Ջամբռ» աշխատության մեջ, ըստ էության, հետազոտում է հայոց եկեղեցու պատմության, տնտեսական, հողային հարաբերությունների, հարկային, կառավարչական և այլ բնույթի բազում հարցեր, սակայն զգուշավոր կաթողիկոսը չի շոշոփել քաղաքական բնույթի որևէ հարց: Այս նույն առնչությամբ, պատմագիտական գրականության մեջ ակնարկվում է նաև այն դրվագը, երբ XVIII դարի 70–80-ական թվականների հայ ազատագրական մտքի ու շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Էմինը մեծ ուղևորություններից հետո հայրենիք է ժամանում, Մայր աթոռում կաթողիկոսը նրան սառն է ընդունում և վտանգավոր ու անիրագործելի է համարում նրա ծրագրերը՝ խոհեմաբար խորհուրդ տալով, որ նա հեռանա[80]: Բայց և այդ նույն տրամաբանությամբ կարելի է հիշեցնել. դրանից շատ ավելի վաղ՝ 1699 թ. գարնանը (ապրիլին), նմանատիպ ազատաբաղձ գաղափարներով, հայ մելիքներին ուղղված Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի հանձնարարական նամակագրությունով էջմիածին ժամանած Օրուն նույն մտավախությամբ **Նահապետ Եդեսացի** (1691–1705) կաթողիկոսը ևս չի ցանկացել տեսակցել նրան՝ դարձյալ քաղաքական նկատառումով երկյուղ կրելով շահի կողմից հետապնդվելուց և գահընկեց լինելուց: Եվ նման զգուշավոր վարքագիծ են ցուցաբերել XVII–XVIII դարերի Ամենայն հայոց կաթողիկոսների գերակշիռ մասը: Այնպես որ, հայ ազատագրական գաղափարաբանության մեջ չի կարելի պահպանողական հոսանքի սկզբնավորողի ու առաջամարտիկի դերը վերագրել միայն Սիմեոն կաթողիկոսին: Հայոց հոգևոր հայրերի քաղաքական առումով ցուցաբերած զգուշավորությունը հասկանալիորեն ուներ իր հիմնավորումը. դա ամենից առաջ պատասխանատվությունն էր օտարի տիրապետության տակ հայտնված իր հավատավոր ժողովրդին հնարավորինս քաղաքական վայրի-

---

[80] Տե՛ս **Հակոբյան Ա.**, *Հայոց պատմություն*, էջ 168:

վերումներից զերծ պահելը, նրա անդորրությունն ու անվտանգության ապահովելը և այլն:

Մյուս կողմից՝ հայտնի է նաև այն իրողությունը, որ Ս. Երևանցի կաթողիկոսը 1766 թ. օգոստոսի 1-ին, բարեկամական կապեր հաստատելու ակնկալիքով, նամակ-խնդրագիր էր ուղղել ռուսաց Եկատերինա 2-րդ կայսրուհուն: Դրան ի պատասխան, կայսրուհին դրական երանգներով պատասխան հրովարտակ էր հղել, սակայն միայն դրանից մի երկու տարի անց՝ 1768 թ հուլիսի 30-ին՝ «մագաղաթի վրա ոսկեզարդ ռուսերենով՝ հայերեն թարգմանության հետ միասին»[81]: Այդ մասին որոշ անդրադարձ կա Կաթողիկոսի «Ջամբռ» աշխատության մեջ: Բազմավաստակ պատմաբան պրոֆ. **Լեոյի** գնահատմամբ՝ XVIII դարի երկրորդ կեսին հայ-ռուսական հարաբերությունների ամրագրման գործում զգալի է եղել կաթողիկոս Սիմեոն Երևանցու խաղացած դերը[82]: Եվ այդ հարաբերությունների կայացման գործընթացը մեզանում ընթացել է ավելի վաղ, քան նույնիսկ **1783 թ. հուլիսի 24-ին** Հյուսիսային Կովկասի **Գեորգիևսկի** ամրոցում կկնքվեր ռուս-վրացական համաձայնագիրը, որն ուներ **դաշինքի** և Ռուսաստանի կողմից Վրաստանը հովանավորելու բնույթ: Այդ պայմանագրով, դեպի Այսրկովկաս ռուսների ներթափանցման ճանապարհին, վրացական Քարթլիի ու Կախեթի թագավորությունները ներառնվելու էին Ռուսական կայսրության ազդեցության ոլորտում:

Այդ դիմադարձը Այսրկովկասում միայն հայերով չէր պայմանավորված: Այս հարցում առաջին պլանում է այս կամ այն ժողովրդի ու պետականության ազգային անվտանգության և ռազմավարական շահերի պաշտպանության խնդիրը: Այդ տեսակետից դժվար չէ նկատել, որ Հայաստանին ու հայ ժողովրդին անմիջական հարևան Վրաստանն ու վրաց ժողովուրդը թե միջնադարում և թե նոր դարաշրջանում, այսպես թե այնպես, կարողացել են պահպանել իրենց պետականությունը, անգամ, երբեմն նրանց թագավորները պետականությունը պահպանելու համար հարկադրված են եղել կրոնափոխ լինել: Սակայն նոր դա-

---

[81] Տե՛ս *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа*, часть I, М., 1833, с. 155–156, նաև՝ **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 70:

[82] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 279–282 և այլն:

բաշրջանում մի կողմից՝ թուրքական ահագնացող սպառնալիքը, մյուս կողմից՝ զորեղացող Ռուսաստանի՝ դեպի Կովկաս ներթափանցումը, բնականաբար, վրաց իշխանավորները ևս իրենց ազգային ու պետական շահերի հրամայականով սկսում են դիմել հյուսիսի մեծ հարևանի օգնությանը: Այսպես, արձանագրում կա այն մասին, որ 1765–1766 թթ. Վրաստանում բռնկված ապստամբության ժամանակ վրացիները թուրք-իրանական տանդեմին դիմակայելու նպատակով քանիցս դիմել են Ռուսաստանի օգնությանը: Իսկ 1768 թ. Իմերեթի Սոլոմոն թագավորը հատուկ պատվիրակություն է ուղարկել Ս. Պետերբուրգ՝ Եկատերինա 2-րդ կայսրուհու մոտ, խնդրելով՝ «ազատեք մեզ այլադավան օսմանցիներից և տարածեք Ձեր ամենազոր ձեռքը մեր երկրի ու ժողովրդի վրա»[83]:

Ավելին, այս համատեքստում տեղին է հայագիտության կարկառուն ներկայացուցիչ պրոֆ. Ն. Ադոնցի քննական այն դիտարկումը, երբ փորձ է արվել տարածաշրջանում ռուսասիրության «դափնին» վերագրել հայերին, իբրև թե նրանք են առաջինը ուղի բացել դեպի ռուսներն ու ռուսական քաղաքական կողմնորոշումը: Այնինչ, Ն. Ադոնցը փաստերով ցույց է տալիս, որ, օրինակ, Կախեթի թագավորները տակավին XVI դարում «սկսել են **կոխոտել** ռուսական դռները, իսկական ջատագովներ հանդիսանալով հյուսիսի միջամտությանը»[84]:

Հայտնի է նաև, որ ամեն անգամ, դարերի ընթացքում ռուս-թուրքական հաճախացող պատերազմների առիթով, հայ նախաձեռնող որոշ շրջանակներ շատ ավելի ուշ՝ XVIII դարի երկրորդ կեսին, փորձել են օգտվել նպաստավոր ռազմաքաղաքական հանգամանքից և ռուսական զենքի օգնությամբ ազատագրել իրենց հայրենիքը: Այսպես, 1768–1774 թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմի առիթով, հայտնի է հայերի կողմից 1768 թ. ռուսական արտ գործ. կոլեգիային ներկայացված մի ծրագիր, որով «նախատեսվում էր հայկական մարզերի ազատագրում և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պե-

---

[83] **Галоян Г.А.**, *Россия и народы Закавказья*, М., 1976, с. 91.
[84] **Ադոնց Ն.**, *Երկեր*, հ. Ա, Եր., 1996, էջ 190:

տականության ստեղծումը» և այլն[85]: Այնպես որ, հայերի ռուսական կողմնորոշումը մեր տարածաշրջանում չի կարելի միակողմանիորեն համարել, մի տեսակ, հայերի մենաշնորհը, ինչը նախկինում շատ է թմբկահարվել հայ և վրաց պատմագրության մեջ:

## *6. Հայ ազատագրական միտքը: Հնդկահայ գաղթօջախը: Հովսեփ Էմին (1726–1809 թթ.)*

XVIII դարի երկրորդ կեսին հայ հասարակական-քաղաքական մտքի ու գաղափարաբանության կենտրոններ դարձան հայկական գաղթօջախները, մասնավորապես **Հնդկահայ** և **Ռուսահայ**: Դրանց երևելի դեմքերը, գտնվելով հայրենիքից հեռու և քաղաքական ճնշում և հետապնդումներից ապահով, սկսեցին մշակել Հայրենիքի ազատագրման և անկախ պետականության վերականգնման ռազմավարական ու մարտավարական բնույթի ծրագրային հիմնադրույթներ և անգամ փորձ անել դիմելու նաև գործնական քայլերի (գործողությունների): Ինչպես արդեն ասվել է, հայ ազատագրական մտքի ու դրա գործնական նյութականացման գործում նշանակալի է եղել հայ աշխարհասփյուռ խոջայական կապիտալի ու դրա ներկայացուցիչների խաղացած դերը: Եվ, ահա, XVII դարում, տվյալ դեպքում Հնդկաստանում ու հնդկօվկիանոսյան տարածաշրջանում, հայ վաճառականները, չդիմանալով 1602 թ. հիմնված բրիտանական «Արևելա-Հնդկական առևտրական ընկերության» մրցակցությանը, աստիճանաբար քայքայվում ու դուրս են մղվում հնդկական ու ծովային առևտրի շուկաներից[86]: Սա էլ, ըստ ամենի, դառնում է նյութական խթանիչ այն ազդակը, որը մղում էր առևտրական կապիտալի ներկայացուցիչների՝ ազգային շուկա ստեղծելու հեռանկարով փորձելու ազատագրել սեփական հայրենիքը:

Եվ այս իմաստով, XVIII դարի երկրորդ կեսի հայ քաղաքական մտքի և գործի իրավամբ ամենակարկառուն ներկայացուցիչը դարձավ **Հովսեփ Էմինի Էմինյանը** (1726–1809 թթ.): Դժվար չէ տեսնել, որ մի

---

[85] **Иоаннисян А.Р.**, *Иосиф Эмин*, с. 266.
[86] Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, *նշվ. աշխ.*, էջ 253, 259, 269–270:

կեսդարյա ընդմիջումից հետո Իսրայել Օրիի արգասալի կյանքի ու գործունեության իբրև շարունակություն, գրեթե նույն առաքելությամբ, բայց գաղափարապես ավելի հասուն, կազմակերպված ու բովանդակալից կյանքով և գործունեությամբ հանդես է գալիս ծնունդով համադանցի Հովսեփ Էմինը, որը ևս Ի. Օրու պես և ոչ ամենևին փառասիրական մղումներով, այլ իբրև հին հայ արքաների տոհմից սերված մի շառավիղ, քաղաքական ժառանգորդության իրավունքով փորձել է իր նպաստը բերել հայրենիքի ազատագրման և պետականության վերականգնման գործին: Բանն այն է, որ երկու գործիչների պարագայում էլ՝ և՛ Ի. Օրին, և՛ Հ. Էմինը ներկայանում են իբրև միջնադարյան Պռոշյան իշխանական տոհմից սերված ժառանգներ, իսկ Պռոշյան իշխանական տոհմն էլ իր հերթին ներկայացված է «որպես Արշակունի թագավորների սերվածք»[87]:

Մեր կարծիքով, եթե անգամ բավարար կովաններ, վավերական հիմքեր չկան հաստատելու այս գործիչների հայ թագավորական տոհմից սերված «գահաժառանգ» լինելու փաստը, ապա կարելի է քաղաքական, բարոյական առումներով մեկնություն ու դատողություն անել այն մասին, որ հայ ազատագրական պայքարի անուրանալի այդ երկու նշանավոր գործիչները միգուցե նպատակ են ունեցել նման «փաստարկներով» հասկացնել տալ, որ իրենց առաքելության վերջնանպատակը հանդիսացել է երբեմնի հայոց անկախության վերականգնումը և ոչ թե փառասիրական ինչ-որ այլ նկրտումներ: Այս կապակցությամբ մենք չենք կիսում պրոֆ. Վ. Դիլոյանի այն մեկնաբանությունը, թե «Հովսեփ Էմինը պճնում էր իրեն իշխանական և նույնիսկ թագավորական ծագման փքուն զգեստներով, բայց դա արվում էր միայն օտար բռնակալության և ֆեոդալիզմի օրորոցում նիրհող գյուղացիական մաս-

[87] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. թիվ 197, վավ. թիվ 363, թ. 116բ և 117 բ: Պռոշյան իշխանական տոհմի մասին լրացուցիչ տեղեկացնենք, որ մեծատոհմիկ Վասակ իշխանի որդի քաջ հայրենասեր Պռոշ իշխանը, իբրև անկախ իշխան (կուսակալ) XIII դարի 30–80-ական թվականներին ծավալել է լայն գործունեություն, մարտնչել է հայրենիքի ազատության համար մղված պատերազմներում և այդ հիման վրա Խաղբակյան տոհմը սկսել է կոչվել **Պռոշյան** (տե՛ս **Հովսեփյան Գ.**, *Խաղբակեան կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ*, մաս 1, էջ 145, նաև՝ **Օրբելյան Ստ.**, *Սյունիքի պատմություն*, Եր., 1986, էջ 320, 363 և 498:

սաների մեջ դեպի իրեն հավատ և վստահություն ստեղծելու համար»[88]: Չենք կարծում, որ հայ ազատագրական պայքարի այս նշանավոր գործիչը ներկայանում, «պճնվում» էր իբրև հայ իշխանական տոհմից սերված ժառանգորդ ոչ թե հայ զանգվածների մոտ հավատ ու վստահություն ձեռք բերելու, այլ նա նման քայլի էր դիմում, ինչպես և Ի. Օրին, պարզապես օտար տերությունների ղեկավարներին ցույց տալու, որ ինքը ինչ-որ պատահական մարդ չէ, այլ, որպես հայ հին ազնվական տան շառավիղ՝ պատասխանատվություն ունի ազատագրելու իր հայրենիքը օտարների լծից:

Տվյալ պարագայում Հ. Էմինն իր ողջ գիտակցական կյանքում պայքարեց Հայաստանի ազատագրության համար: Նա իր քաղաքական ծրագրերում, ազգային-ազատագրության հասնելու ճանապարհին առաջ քաշեց եվրոպական տիպի զինված, մարզված ու հանդերձավորված ազգային մարտունակ բանակ ստեղծելու գաղափարը, ինչը հայ ազգային-քաղաքական մտքում նորույթ էր: Հենց այդ նպատակով նա Անգլիայում մտավ Վուլվիչի ռազմական ակադեմիա՝ զինվորական գործին տիրապետելու համար: Ազգային բանակ ստեղծելու, հայրենիքը ազատագրելու, պետականությունը վերականգնելու համար նա գտնում էր, որ առաջին քայլերը պետք է սկսել ազգը **կրթելու** և **լուսավորելու** աշխատանքներից: Սրանք այն ազդակներն էին, որոնք հետո պիտի շարունակվեր արդեն XIX դարում՝ սկսած հայ մեծանուն հայրենասեր, լուսավորիչ Խաչատուր Աբովյանից: Հ. Էմինի՝ դարձյալ Ի. Օրու նման տեղ-տեղ արկածների նմանվող կյանքի ու գործունեության դրվագները, ազատագրական գաղափարներն ու ծրագրերը իրենց մարմնավորումն են ստացել նրա հուշագրային արժեքավոր աշխատությունում[89]:

Հայրենիքի քաղաքական ազատագրության գործին նվիրվելու և ծառայելու նպատակով նա Հնդկաստանից՝ Բենգալիայի Կալկաթա քաղաքից, իր վաճառական հորից գաղտնի, 1751 թ. մեկնում է Անգլիա: Նրա ծանր և հոգեմաշ ծովային ճանապարհորդությունը տևել է 7 ամիս՝

---

[88] **Դիլոյան Վ.**, *Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես)*, էջ 130:

[89] Գիրքն ունեցել է անգլերեն ու հայերեն մի քանի հրատարակություն, վերջինը՝ տե՛ս **Էմին Հովսեփ**, *նշվ. աշխ.*, Եր., 2018,

մինչև որ հասել է Լոնդոն: Նա իր արկածի նմանվող ինքնակենսագրական հուշերում գրում է, որ դեպի Եվրոպա առաքելության նպատակը, հոր կամքին հակառակ, եղել է եվրոպական ռազմարվեստին տիրապետելը և որպես սպա՝ իր հայրենիքի ազատագրության գործին ծառայելը[90]: Հայտնի է, որ նա Լոնդոնում թափառաշրջիկ աղքատության պայմաններում, սակայն իր ազնիվ ու անկաշառ վարքագծով ծանոթություններ է ձեռք բերում անգլիական ազնվականության շրջանում, մասնավորապես, բարեկամանում է բրիտանացի հետագա հայտնի գրող, լրագրող **Էդմոնդ Բյորքի** հետ: Վերջինիս ու անգլիական ազնվականական մյուս բարձր շրջանների հովանավորությամբ զինվորական բարձր կրթություն է ստանում Վուլվիչի թագավորական ռազմական ակադեմիայում[91]: Հայաստանի ազատագրության գաղափարը նրան մղել է մինչ իսկ անձամբ տեսակցել Անգլիայի վարչապետ **Ուիլյամ Պիտտիին**:

Հարց կարող է ծագել, թե արդյոք կայի՞ն նախադրյալներ սեփական ուժերով հայրենիքը ազատագրելու գործում: Այս հարցին, կարծում ենք, պատասխան է տվել հենց Հ. Էմինը 1759–1761 թթ. Թուրքիա և Հայաստան այցելելիս: Նրա ստացած տպավորությամբ՝ քաղաքական խոր հետամնացության մեջ թաղված հայ հանրույթը պատրաստ չի եղել նման առաքելության և չի ունեցել հայրենիքի ազատագրման ներքին պահանջմունք: Այս կապակցությամբ ուշագրավ է այն դիպվածը, երբ Հ. Էմինը անցնելիս է եղել Էրզրումի նահանգի գյուղերով, տեղի հայ գեղջուկները, նկատելով **գորշ ձի հեծած** մի անձի (խոսքն հենց իր մասին է՝ Ա.Հ.), կարծել են, որ նա, ըստ երևույթին, թուրք կամ մեկ այլ ազգի կլինի և զարմացել են, որ ձիավորը իսկապես հայ է և համարձակություն է ունեցել ազատ ձի հեծնել[92]: Նկատենք, որ դեռ արաբական տիրապետության ժամանակներից քրիստոնյաներին արգելված էր ձի հեծնել: Նրանք առավելագույնը կարող էին օգտվել միայն ավանակից

---

[90] Տե՛ս **Էմին Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 79:
[91] Տե՛ս նույն տեղում, էջ 85:
[92] Տե՛ս նույն տեղում, էջ 160:

կամ ջորուց[93]: Այս փոքր իսկ դիպվածը ինքնին շատ բանի մասին է վկայում: Արևմտահայ բնակչության շրջանում հայրենիքի ազատության համար պայքարելու Հ. Էմինի թափած քարոզչական ջանքերը, ըստ էության, արձագանք չեն գտնում[94]:

Եթե Հ. Էմինը մեծապես կարևորում էր սեփական ազգային բանակ ունենալը, կնշանակի նա առաջնային է համարել սեփական ուժերին ապավինելը: Սեփական ուժերին ապավինելու մի արտահայտություն կարելի է համարել այն, որ անգլիական բարձր ազնվականության երաշխավորությամբ Պետերբուրգի բարձր իշխանավորների, այդ թվում կանցլեր Մ. Վորոնցովի հետ հանդիպումներից հետո՝ 1762 թ. գարնանը, Կովկաս ժամանած Հ. Էմինը Աստրախանի, Ղզլարի և այլ շրջանների հայերից, ովքեր նրան ընդունել են իբրև «Հայաստանի իշխան»՝ զինվորագրել է ավելի քան 800 հայ երիտասարդ[95]: Բայց այդ ճանապարհին նրա մշտական տեսադաշտում է եղել նաև արտաքին ուժերից օգնություն ակնկալելը, տվյալ դեպքում՝ Ռուսաստանից, Վրաստանից: Սակայն դա ամենևին էլ չէր նշանակում, թե Հ. Էմինն ունեցել է ռուսական, առավել ևս վրացական քաղաքական կողմնորոշում: Հ. Էմինը նամակագրական սերտ կապերի մեջ է եղել վրաց Հերակլ 2-րդ թագավորի, ինչպես նաև արևմտահայ ազատագրական շարժման ջատագով, Մշո սբ. Կարապետ վանքի վանահայր Հովնանի հետ:

Հայաստանն ու Վրաստանը, իբրև պատմականորեն մեկ ճակատագրի ժողովուրդ, նկատի առնելով Զաքարյանների դարաշրջանի հայ-վրացական համագործակցության ավանդական փորձը, Էմինի կազմած քաղաքական ծրագրում առաջնային տեղ է գրավել դարձյալ հայ-վրացական միասնական պետության ստեղծումը՝ Քարթլիի և Կախեթի թագավոր Հերակլ 2-րդի գլխավորությամբ: Իբրև պատմականորեն մի ճակատագրի երկու ժողովուրդ՝ Էմինը տվյալ պարագայում Վրաստանը չի դիտել որպես արտաքին ուժ, այլ որպես հայ-վրացական

---

[93] Տե՛ս **Гиргас В.**, *Права христиан на Востоке по мусульманском законам*, СПб., 1865, с. 71.

[94] Տե՛ս **Иоаннисян А.Р.**, *Иосиф Эмин*, с. 51–52.

[95] Տե՛ս **Էմին Հ.**, *կրկ. աշխ.*, էջ 203, 220, 231 և 280:

դաշինքի վրա հիմնված դաշնային պետություն[96]: Պրոֆ. Վ. Դիլոյանը հիմնավոր ու համոզիչ տեսակետ է հայտնում, որ Հովսեփ Էմին քաղաքական գործիչը չի ունեցել ինչ-որ հատուկ ընդգծված արտաքին կողմնորոշում և հայրենիքի ազատագրության գործը ձգտում էր կենսագործել հայ ժողովրդի ուժերով, վրացիների հետ միասին, մանավանդ որ Քարթլի-Կախեթի թագավորության ավելի քան 1/3-ը հայեր էին, և հայկական զորական ուժերը պատկառելի տոկոս էին կազմում վրացական բանակում, իսկ հայ ավագանին՝ վրացական արքունիքում: Վ. Դիլոյանը իրավացիորեն անհիմն է համարում խորհրդային պատմագրության մեջ տեղ գտած բոլոր այն պնդումները, երբ փորձ է արվել Հ. Էմինին ներկայացնել իբրև ռուսական կողմնորոշման ներկայացուցիչ[97]: Սակայն Հ. Էմինի քաղաքական բնույթի բոլոր մտահղացումներն ու ազատագրական ծրագրերը Ի. Օրու նման մնում են անկատար: Այս խնդրում, ինչպես արդեն գիտենք, Էմինի գաղափարների դեմ է հանդես գալիս Սիմեոն Երևանցի կաթողիկոսը: Վերջինս, ինչպես արդեն ասվել է, ժամանակավրեպ ու վտանգավոր համարելով Հ. Էմինի ազատագրական ծրագրերը, նամակով դիմել է վրաց Հերակլ II-ին, որ «այդ անխոհեմ «իշխանին» ոտարկի այնտեղ, որտեղից եկել է» և այլն[98]: Եվ Էմինը հեռանում է Հերակլ թագավորի կարգադրությամբ, իսկ 1770 թ. հունվարին ընդմիշտ վերադառնում Հնդկաստան:

## *7. Շ. Շահամիրյանը և նրա «Որոգայթ փառացը»*

Հ. Էմինի Հնդկաստան վերադառնալով՝ նրա քաղաքական ծրագիրը չմեռավ: Նա իր երկրորդ հայրենիքում կապեր է հաստատում հայ ազատագրական մտքի գաղափարաբաններ Շ. Շահամիրյանի, նրա որդի՝ Հակոբ Շահամիրյանի և Մ. Բաղրամյանի ու նրանց հիմնած Մադրասի խմբի հետ և դրանով, Լեոյի խոսքերով ասած՝ «Հայաստանի

---

[96] Տե՛ս **Թելունց Մ.**, *Հայ ազգային ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը*, Եր., 1995, էջ 24:

[97] **Դիլոյան Վ.**, *Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ* («Պայքար», Եր., 1995, թիվ 6–7, էջ 15):

[98] **Էմին Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 240:

ազատագրության գաղափարը ստացավ **գրական կերպարանք**»[99]: Իսկ այդ կերպի արտահայտությունը նրանց լույս ընծայած իրավական, քաղաքական, հրապարակախոսական բնույթի հայտնի շատ առաջադեմ աշխատություններն էին:

Հիրավի, XVIII դարի վերջին քառորդում Հայաստանի ազատագրության գործի նվիրյալներից էր Նոր Ջոտլայում ծնված, դարձյալ Հնդկաստանում ապրած և գործած մեծահարուստ վաճառական (ակնավաճառ), հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, իրավագետ **Շահամիր Շահամիրյանը** (1723–1798 թթ.): Նա առանձնանում է XVIII դարում հայ իրավունքի (իրավաքաղաքական) եզրույթների մշակման և դրանք գործադրելու ուղղությամբ: Դրա ապացույցը նրա կերտած, 1787 թ. առաջին անգամ Մադրասում հրատարակած[100] «**Որոգայթ փառաց**»-ը հայ իրականության մեջ առաջին սահմանադրության արժեք ունեցող, ամերիկյան սահմանադրությանը հասակակից,[101] կոթողային 521 հոդվածներից կազմված իրավաքաղաքական հուշարձանն է՝ ապագա հանրապետական-պառլամենտական կառավարման կառուցվածքով հայոց պետականության գաղափարին վերաբերող մի ամբողջական համահավաք օրենքների ժողովածու, որի շատ գաղափարներ, սկզբունքներ ու դրույթներ օգտագործվել են ՀՀ ներկայիս սահմանադրության և իրավաօրենսդրական այլ փաստաթղթերի մեջ:

Հարկ է նշել, որ սահմանադրությունները, իբրև պետական և հասարակական կյանքը կանոնակարգող բարձրագույն իրավաբանական, նաև քաղաքական փաստաթուղթ, ծնունդ առան հենց XVIII դարում, որոնց նպատակը Արևմուտքի երկրների համար բացարձակ միապետական երկրների միապետերի անսահմանափակ իրավունքների սահմանափակումը և կանոնակարգումն էր, օրենքի գերակայության ամրագրումը, ինչպես նաև ժողովրդավարական արժեքային համակարգե-

---

[99] **Լէօ,** *Հայոց հարցի փաստաթղթեր.* էջ 11:

[100] Գրքի տիտղոսաթերթին նշված է 1773 թ., որը ճիշտ չէ: Կարծիք կա, որ Շ. Շահամիրյանը «Որոգայթ փառաց»-ը գրել է որդու՝ Հակոբ Շահամիրյանի հետ:

[101] Հայտնի է, որ ԱՄՆ-ի Սահմանադրությունը ընդունվել է **1787 թ. սեպտեմբերի 17-ին** Սահմանադիր կոնվենտի կողմից և որոշ ուղղումներով (բիլլերով) գործում է մինչ օրս: ԱՄՆ Սահմանադրության հիմքում ընկած է նրա հիմնադիր հայրերից Թոմաս Ջեֆֆերսոնի 1776 թ. հեղինակած «Անկախության մասին» հռչակագիրը:

րի արմատավորումը, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանումը և այլն: Սակայն, եթե Արևմուտքի երկրների սահմանադրությունները հիմնականում նպատակ են հետապնդել սահմանափակել բացարձակ միապետական իշխանությունը, սահմանել կանոնակարգված պետահիրավական նորմեր, ժառանգական իշխանության փոխարեն ընտրովի իշխանության մարմիններ, մարդու և քաղաքացու իրավունքներ և այլն, ապա մենք տեսնում ենք՝ Շ. Շահամիրյանի և նրա գաղափարակից ընկերների մշակած սահմանադրությունն ուներ **ազգային-ազատագրության հետնախորք** ու դրսևորում, այսինքն՝ նպատակ էր հետապնդվում ապագա ազատագրվելիք Հայաստանի համար, Արևմուտքի օրինակով ստեղծել պետահիրավական եվրոպական, բարձր արժեքային համակարգով ժողովրդավարական-պառլամենտական տիպի պետականություն: Այլ խոսքով ստացվում է, որ տակավին XVIII դարում հնդկահայ գաղթօջախի գաղափարական, հասարակական-քաղաքական միտքը, անգամ հայոց պետականության բացակայության պայմաններում, աշխարհագրորեն ապրելով Ասիայում, պրպտել է, նայել է առաջ՝ դեպի Արևմուտք, Եվրոպա: Իհարկե, չպետք է անտեսել այն ժամանակվա Հնդկաստանի՝ Մեծ Բրիտանիայի գաղութը լինելու հանգամանքը: Եվ պատահական չէ, որ անգամ մարքսիզմի հիմնադիրներ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, ընդգծելով Անգլիայի գաղութային քաղաքականությունը, միաժամանակ չեն մոռացել նշել նաև նրա քաղաքակրթիչ դերը Հնդկաստանում[102]: Բնականաբար, գաղափարական առումով այդ հանգամանքը դրական ներգործություն պիտի ունենար նաև Հնդկաստանի հայ գաղթօջախի մտավորականների գաղափարաքաղաքական պրպտումների վրա:

Շ. Շահամիրյանի և նրա գաղափարակից գործընկերների առաջ քաշած հայրենիքի ազատագրման և ապագա պետականության վերականգնման գաղափարական, կազմակերպական և իրավաքաղաքական կոնցեպտը բովանդակում էին հետևյալ երեք հիմնադրույթները. ա/ ազգային-ազատագրական շարժման կուռ ու ամբողջական տեսություն, բ/ ազգային պետականության վերակերտման գաղափարաբա-

---

[102] Տե՛ս Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. 9, 2-ое изд., М., 1957, с. 131–137.

նություն և գ/ ապագա պետության կառավարման ձևի և կառուցվածքի հիմնական սկզբունքները[103]: Ուշագրավ է՝ «Որոգայթ փառաց»-ի հենց առաջին գլխում Հայաստան երկրի աշխարհագրական տարածք ասելով հասկացվում էր Կասպից, Միջերկրական և Սև ծովերի միջակայքում ընկած ընդարձակ ցամաքը՝ կոնկրետ սահմանների տեղանշումներով, ավելի քան 500 հազ. քառ. կմ տարածքով[104]: Իսկ հնդկահայ մյուս նշանավոր գործիչ, հրապարակախոս Մ. Բաղրամյանը, օգտվելով «Աշխարհացոյց»-ից, Մխիթարյանների կազմած «Բառագրքից» և այլն, ավելի հանգամանորեն նկարագրում է Հայոց աշխարհը՝ Մեծ ու Փոքր Հայքերի նահանգները, գավառները, քաղաքները, ընդ որում՝ նշում է 20 նահանգ, 258 գավառ, 103 քաղաք՝ իրենց սահմաններով ու սահմանակից երկրներով[105]: Տեղեկացնենք, որ Շ. Շահամիրյանի պատվերով 1779 թ. Վենետիկում լույս էր ընծայվել նորատիպ «Աշխարհացոյց»-ը, որը հայտնի է «Աշխարհացոյց Հայաստանեաց» անվանումով[106]:

Աշխարհաքաղաքական մի բարդ տարածաշրջանում գտնվող հայկական պետականության գլխավոր նեցուկը պիտի լիներ զորքը, որի թիվը, ըստ Շահամիրյանի, պիտի կազմեր հետևակ ու հեծյալ 90 հազար: Ըստ «Որոգայթ փառաց»-ի, զորքի գերագույն գլխավոր հրամանատարը համարվում էր հանրապետության նախագահը: Բանակի պահման վրա պիտի ծախսվեր պետական եկամուտների (բյուջեի) մեծագույն մասը[107]:

Ուշագրավ է, որ հայոց սույն սահմանադրության մեջ խոսվում է պետականությունների պատմության մեջ մշտապես ուղեկից հանդիսացող անօրենության ու կաշառակերության երևույթների և դրա դեմ պայքարի ձևերի ու միջոցների մասին: Ընդ որում, ընդգծվում էր արդա-

---

[103] **Մանուչարյան Հ.**, *Հայոց պետության կառավարման և կառուցվածքի ձևերի՝ հնդկահայ լուսավորիչների հայեցակարգը* (տե՛ս Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2011, թիվ 134.6, էջ 51):

[104] Տե՛ս *«Որոգայթ փառաց»*, Եր., 2002, էջ 74–75:

[105] Տե՛ս *«Նոր տեղագրություն որ կոչվում է Հողոցագրություն»*, թարգմ. և ծանոթագր. **Պ. Խաչատրյանի**, Եր., 1991, էջ 105–128:

[106] Տե՛ս *Դիվան Հայոց պատմության*, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, (1780–1785), էջ 527:

[107] Տե՛ս *«Որոգայթ փառաց»*, էջ 167:

ության վերականգնման հիմնարար սկզբունքը, որը պիտի դառնար **անօրենության որոգայթ**:

Շ. Շահամիրյանն իր ժամանակից առաջ նայող հանճարեղ սահմանադրության մեջ ուրվագծում էր ապագա ազատագրված և անկախ Հայաստանի պետական կառուցվածքը՝ հիմնված արևմտաեվրոպական (անգլիական) ազատական, ժողովրդավարական, սահմանադրական-պառլամենտական արժեքային համակարգի (սկզբունքների) վրա: Նրանում խոսվում էր պետական իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի (մարմինների) մասին՝ օրենսդիր մարմնի՝ ժողովրդի ընտրությամբ ձևավորված «**Հայոց տան**» գերակայությամբ: Շ. Շահամիրյանը փաստորեն առաջինն է խոսել հայոց ազգային-պետական խորհրդանիշը հանդիսացող **Եռագույնի**՝ կարմիր, կապույտ, դեղինի մասին[108]: Դրանք այն պետականակերտ գույներն էին, որոնք պիտի հետագայում իրենց բանաստեղծական մարմնավորումը գտնեին ազատության մեծ երգիչ Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգում»:

Աշխատության հեղինակը, պատմական էքսկուրս կատարելով հայոց անցյալին և մատնանշելով հայոց թագավորությունների անկման մի խումբ պատճառներ, իր կարծիքով առաջինն ու գլխավորը համարել է բացարձակ միապետությունը կամ բռնապետական կառավարման ձևը, հաստատուն օրենքների բացակայությունը: Այդ իսկ պատճառով նա հայերի փրկությունը տեսավ Սահմանադրության, օրենքի գերակայության մեջ՝ «**օրէնք մեր եղիցին տէր և թագաւոր մեր**»[109]: Լեոյի գնահատմամբ ևս՝ Շ. Շահամիրյանը Հայաստանի փրկությունը և երջանկությունը տեսնում էր Հայաստանում հաստատուն **օրենքի** գերակայության և ռամկավար սկզբունքներով **հանրապետական** կարգերի հաստատման մեջ[110]: Ըստ «Որոգայթ փառաց»-ի, «Հայոց տունը» լինելու էր միապալատ՝ կազմված մոտ **517 փոխանորդներից** կամ պատ-

---

[108] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 541–542:

[109] *«Որոգայթ փառաց»*, Մադրաս, 1773, էջ 89, նաև՝ **Հակոբյան Ա.**, *Հայոց պատմություն*, էջ 163:

[110] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 533:

գամավորներից[111]: «Հայոց տունը» ոչ միայն երկրի բարձրագույն օրենսդիր մարմինն էր, այլև բովանդակ իշխանության աղբյուրը (կրողը): ԱՄՆ-ի սահմանադրության օրինակով, նաև հայ ազգային որոշ առանձնահատկությունների հաշվառմամբ՝ հանրապետական, խորհրդարանական, ժողովրդավարական կառավարման համակարգով, գրեթե ոչնչով չզիջելով արևմտաեվրոպական շատ և շատ երկրների ու պետությունների՝ իր «Հայոց տուն» խորհրդարանով, ժողովրդավարական ընտրական համակարգով, օրենքների գերակայության առաջնայնությամբ, կառավարման ներկայացուցչական մարմիններով: Նրանից էին բխելու և՛ վարչական, և՛ դատական, և՛ զինվորական իշխանությունները:

Հին Հայաստանից փոխանցված մի տեսակ պատմական իրավահաջորդության արտահայտություն կարելի է համարել **Աշխարհաժողովները**, որոնք գումարվում էին ժամանակ առ ժամանակ՝ երկրի ու ժողովրդի ճակատագրում բախտորոշ նշանակության հարցերը վճռելու կապակցությամբ: Եվ «Հայոց տունը» կոչված էր իրականացնելու նաև նման գործառույթ: Հարկ է նկատել, որ «Որոգայթ փառացի»-ի հոդվածները շարադրելիս հեղինակը մեծապես օգտվել է ոչ միայն XVIII դարի համաշխարհային իրավական մտքի նվաճումներից, այլև հայ Առաքելական Սուրբ եկեղեցու ժողովրդավարական սկզբունքներով մշակված իրավաօրենսդրական բնույթի **կանոնագրքերից**: Հայոց պատմությանը իրազեկ յուրանչյուրին դժվար չէ նկատել Շ. Շահամիրյանի և նրա գործընկերների առաջ քաշած գաղափարները, ժամանակաշրջանի համար ինքնատիպ սահմանադրական արժեք ունեցող «Որոգայթ փառաց»-ի բազում հիմնադրույթներ ժառանգորդաբար հետագայում պիտի փոխանցվեին ու որդեգրում ստանային արդեն XIX դարի 50–60-ական թվականների արևմտահայ իրականության մեջ՝ հանձին սահմանադրական շարժման ու հայոց Ազգային սահմանադրության:

Ավելին, ինչպես ասվեց, «Որոգայթ փառաց»-ի որոշ դրույթներ հաշվի են առնվել ՀՀ ներկայիս գործող Սահմանադրությունում և պե-

---

[111] Պատգամավորները ընտրվում էին 3 տարով: Բայց պաշտոնությունն իր հերթին ընտրվում էր պատգամավորներից, որն, իհարկե, իշխանության թևերի տարանջատման իմաստով, ճիշտ չէ:

տաիրավական բնույթի մյուս օրենսդրական, դատաիրավական ակտերում ու ժողովածուներում:

Ի հավելումն վերը ասվածի, կարելի է նաև փաստել, որ Շ. Շահամիրյանը XVIII դարի երկրորդ կեսում ճանաչված դարձավ ոչ միայն համազգային ու չափազանցություն չլինի ասել, նաև համաշխարհային նշանակության՝ իր թողած գրական ժառանգությամբ, այլև Հայոց ազգին ու հայրենիքին նպաստ բերող իր **գործնական** քայլերով՝ 1771 թ. Մադրասում տպարան ու հայրենասիրական խմբակ ստեղծելով, նաև Հայաստանի ազատագրության գործնական **ծրագրեր** կազմելով[112]: Դա դեռ բավական չհամարելով՝ նա անգամ նամակագրական կապերով բանակցություններ է վարել Վրաց Հերակլ II արքայի հետ՝ Հայաստանը ազատագրելու ուղիների ու միջոցների շուրջ[113]: «Որագայթ փառաց»-ի հեղինակը գտնում էր, որ Հայաստանի ազատությունը պիտի կատարվի վրաց Հերակլ թագավորի ձեռքով, և նա էլ պիտի լիներ Հայաստանի Հանրապետության ընտրված, ցմահ անփոխարինելի նախագահը: Հայտնի է, որ իր հերթին Հերակլը հատուկ հրովարտակով, իբրև կալվածք, Շահամիրյանին է նվիրաբերել Լոռին, ինչպես նաև նրան շնորհել է իշխանական կոչում[114]: Շ. Շահամիրյանը, բացի Հերակլ արքայից, որի հետ մեծ հույսեր էր կապում, իբրև հայ Բագրատունիներից սերված մի շառավիղ[115], նամակագրական ու թղթակցային կապերի մեջ էր Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների, Ղարաբաղի հայ մելիքների հետ, որոնցում սակայն չկար համերաշխություն, ռուսաց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղության-Երկայնաբազուկի, Մովսես Սարաֆյանի և մյուսների հետ: Հայաստանի ազատագրման հարցում Շ. Շահամիրյանը և նրա գաղափարակիր գործընկեր Մովսես Բաղրամյանը, քաղաքական դիրքորոշման առումով, հավասարապես հույսը կապում

---

[112] Տե՛ս **Մանուչարյան Հ.,** *նշվ. աշխ.*, էջ 140:

[113] Տե՛ս **Լեո,** *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 550–551:

[114] Տե՛ս *Դիվան Հայոց պատմության*, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, 1780–1785, էջ 552:

[115] XVIII դարի երկրորդ կեսին Հերակլ 2-րդը ազդեցիկ դիրքի էր հասել, մանավանդ այն բանից հետո, երբ 1762 թ. կարողացավ միավորել վրաց անջատ երկու մասերը՝ Քարթլին և Կախեթը, իսկ մի քանի խանություններ էլ ենթարկեց իրեն: Հերակլ արքան մտերմիկ հարաբերություններ է ունեցել Էջմիածնի Սիմեոն կաթողիկոսի հետ:

էին մի կողմից՝ Ռուսաստանի ու Վրաստանի, իսկ ոչ պակաս չափով գտնում էին, որ այդ նպատակին հասնելու համար պետք է «ազգային-ազատագրական պայքարի հանել ողջ ժողովրդին»[116]:

Հիշեցնենք, որ Հերակլից զատ, Շ. Շահամիրյանը կազմել է նաև հայ-ռուսական 20 կետանոց ծրագիր-դաշնագրի տարբերակ, որի հիմքում դարձյալ դրված էին «Որոգայթ փառաց»-ի գաղափարները, որը սակայն քաղաքական-գործնական առումով իրագործվելու որևէ հեռանկար չուներ և մնում է իբրև պատմական մի փաստաթուղթ:

Հայաստանի ազատագրության համար իբրև գաղափարական ուսանելի և ընդօրինակելի ակունք՝ Շ. Շահամիրյանը ևս Հ. Էմինի պես կարևորում էր **կրթության** և **լուսավորության** դերն ու նշանակությունը Հայաստանի ազատագրության և առաջընթացի գործում և այլն[117]: Իրականությունն այն է, որ Շ. Շահամիրյանը երբևէ ոտք չի դրել Հայաստան:

XVIII դարավերջի հայ հասարակական-քաղաքական կյանքում, հրապարակախոսության սկզբնավորման տեսակետից, համաշխարհային զարգացած ազգերից հետ չմնալու մի արտահայտություն եղավ, դարձյալ հեռավոր Հնդկաստանում 1794 թ. առաջին անգամ «**Ազդարար**» ամսաթերթի լույսընծայումը՝ **Հարություն քահանա Շմավոնյանի** նախաձեռնությամբ: Դրանով լրագիրը դարձավ այն խոսափողներից մեկը, որով բազում առօրյական այլ հարցերի հետ միասին, պիտի հնչեցվեին հայրենիքի ազատագրության գաղափարները: Ազգային միասնության և հայրենիքի ազատագրության վերաբերող նյութերը չեն պակասել «Ազդարարի» էջերում: Խմբագիր Հ. Շմավոնյանը ևս Հայաստանի ազատագրության հեռանկարը կապում էր Ռուսաստանի հետ:

## *8. Մովսես Բաղրամյանը և նրա «Նոր տետրակը»*

Հեռավոր Հնդկաստանում Հ. Էմինի և Շ. Շահամիրյանի հետ գաղափարաքաղաքական մեկ ընդհանրություն կազմող, ազատամիտ գա-

---

[116] **Մանուչարյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 141:
[117] Տե՛ս նույն տեղում, էջ 145:

ղափարներ կրող երրորդ նշանավոր ներկայացուցիչ **Մովսես Բաղրամյանը** ևս հանդես էր գալիս որպես հայ երիտասարդությանը **կրթելու** և **լուսավորելու**, հայրենասիրական ոգով դաստիարակելու անխոնջ ջատագով, քանզի նրա բնորոշմամբ՝ տգետ, անտարբեր մարդը ունակ չէ ազգի ազատությունը արարել: Ի հավելումն ասվածի՝ 1772 թ. Մադրասում, նույն տպարանում լույս տեսած նրա «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» քաղաքական-հրապարակախոսական երկում առաջ էր քաշվում Հայրենիքի ազատագրության ճանապարհին **ազգային միասնության գաղափարը**, հայ երիտասարդներին քաղաքականապես արթնացնելու, հայրենասիրական ոգով դաստիարակելու, ազգային ինքնաճանաչության հասնելու կոչ-գաղափարները[118]: Աշխատության 7-րդ գլխում հեղինակը նախ հրապարակախոսական ոճով հարց է բարձրացնում, թե ինչու կործանվեց հայոց թագավորությունը և ապա հերթով թվարկում դրա պատճառները. 1-ին՝ մեր իշխանների կենտրոնախույս ձգտումները, երկպառակությունները, 2-րդ՝ «մեր մտքի կուրության», 3-րդ՝ «ոչ թե մեր քաջության պակասի», այլ, փոխանակ թշնամու վրա հարձակվելու, տգիտաբար ատելով ու թշնամանալով հարձակվում էին միմյանց վրա ու իրար կոտորում և այլն ու այդպես շարունակ, իսկ վերջում ժամանակի ոգուն համահունչ ու քրիստոնյա հավատացյալին բնորոշ՝ «**Տիրոջ պատիժը մեր երկրին**»[119]: «Նոր տետրակ»-ի հեղինակը իրավացիորեն հայորդիների միաբանության՝ «մի սիրտ, մի հոգի, մի կամք դառնալու» և միասնական պայքարի մեջ էր տեսնում հայկական պետականության վերականգնման ուղին և այլն[120]:

Ազգային ինքնության և դաստիարակության առումներով, ըստ «Նոր տետրակի»՝ «**Ոչինչ այնպես չէ նպաստում մի ազգի ինքնաճանաչությանը, ինչպես համեմատությունը անցյալի և ներկայի մեջ**»[121]: Դրա համար էլ Մ. Բաղրամյանը «Սբ. Գրքից» հետո հայոց ամենամեծ հեղինակը համարում էր պատմահայր Մովսես Խորենացուն՝ իր «Հայոց պատմությամբ»: Աշխատության մեջ նշվում էր, որ հայ ժողովրդի

---

[118] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 523:
[119] Տե՛ս *«Նոր տետրակ որ կոչվում է Հորդորակ»*, էջ 129–136:
[120] Տե՛ս նույն տեղում, էջ 103–104:
[121] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 527:

մինչ այդ ունեցած դժբախտությունների, տվյալ պարագայում՝ պարսկաթուրքական լծի տակ հայտնվելու հիմնական մեղավորին համարում էր հենց իրեն՝ հայ մարդուն ու հատկապես նրա քաղաքական առաջնորդներին[122]: Մ. Բաղրամյանի պատկերմամբ՝ հայրենիքը ազատագրելու, ազգի մի մեծ հատվածին ազատ, անկախ և երջանիկ կյանք պարգևելու համար այդ նույն ազգի մյուս մասը պետք է իր կյանքը տա[123]: Այստեղից էլ հետևում էր, որ Հայաստանի ազատագրության քաղաքական ոտինների հարցում հույսը ոչ թե օտար երկրներն են, այլ իր ազգային շահերով ապրող հայ ժողովուրդն ու հատկապես նրա երիտասարդությունը, ովքեր, զենքին տիրապետելով, կարող են հասնել ազատության, և որ միայն կռվով, պայքարով կվերակենդանանա ազատ Հայաստանը[124]: Սրանք, անշուշտ, ոաանելի գաղափարներ էին, որոնք պիտի իրենց զարգացումը ստանային հետագայում՝ XIX դարում:

Այս կապակցությամբ, ի տարբերություն նախորդ գործիչներ Ի. Օրու և Հ. Էմինի, ովքեր Հայաստանի ազատագրության հույսը մեծապես կապում էին օտար և արտաքին՝ Եվրոպա, Ռուսաստան, Վրաստան և այլնի օգնության հետ, Մ. Բաղրամյանը Հայաստանի ազատագրության բանալին տեսնում էր սեփական ազգի, նրա ուժերին ապավինելու մեջ: Այս իմաստով Մ. Բաղրամյանին կարելի է առանձնացնել որպես առավել սթափ ու իրատես մտածող և օտար ուժերի հանդեպ առանձնապես պատրանք չտածող գործչի: Նրա արտահայտած գաղափարը ընթերցողին ավելի առարկայական դարձնելու համար բերենք ոտիող 250 տարի առաջ գրված հետևյալ քաղվածքը. «մոտ 400 տարի է, որի ընթացքում թեպետ մեր նախնիներն ու առաջնորդները մերթընդմերթ դիմեցին քրիստոնյա հզոր դրացիներից շատերին՝ մեր տառապանքներին հարեհաս լինելու համար, սակայն մինչ օրս ոչ ոք մեզ սատար չեղավ ու ձեռք չմեկնեց, օգնության չհասավ ու չնպաստեց, իսկ ոմանք, փոխանակ մխիթարելու, վիրավորեցին մեզ»[125]:

---

[122] Տե՛ս **Մանուչարյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 147:
[123] Տե՛ս *«Նոր Տետրակ որ կոչի Յորդորակ»*, Մադրաս, 1772, էջ 36:
[124] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 526:
[125] *«Նոր Տետրակ որ կոչի Յորդորակ»*, էջ 164:

Իր ժամանակի համար մեծ քաղաքագետ Մ. Բաղրամյանի արտահայտած սեփական ուժերին ապավինելուն ուղղված դիրքորոշումը ուսանելի ու դաստիարակիչ է անգամ մեր ժամանակների համար: Այսպես, անգամ մեր օրերում Հայաստանի ու Արցախի առջև ծառացած բազում խնդիրներ հայաստանյան հին ու նոր իշխանությունները փորձում են լուծել մեզ հայտնի բարեկամ ու դաշնակից համարվող պետությունների օգնությամբ: Իսկ թե ինչպիսին են դրանցից ստացված արդյունքները, ապա դրա դառը պտուղները ճաշակեցինք վերջին տարիներին՝ կապված Արցախյան հիմնահարցի հետ: Ասվածից կարելի է հետևեցնել, որ Հայաստանի ազատագրության ու անվտանգության ապահովման ուղիների խնդրում անցել է ավելի քան վեցուկես դար, սակայն մեր քաղաքական մտածողության մեջ դեռևս չի ամրակայվել Մ. Բաղրամյանի պատգամած և Գ. Նժդեհի վերահաստատած՝ սեփական ուժերին ապավինելու անվտանգ ու ապահով կյանքի միակ հուսալի երաշխիքը: «Ինքն իրեն հարգող ժողովուրդը,- խորհում է մեր դարաշրջանի իմաստասեր և հայրենի հողի համար կռիվերում թրծված Մեծն Նժդեհը,- իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զենքի վրա: Իր ուժերից զատ՝ ամեն ինչի ապավինող ժողովուրդն արժանի չէ **անկախ հայրենիք** ունենալու, ազատ ապրելու»[126]: Հիրավի, իրական քաղաքականության գլխավոր սկզբունքը պիտի լինի Պատմահոր արտահայտած թևավոր խոսքը, որ յուրաքանչյուր երկրի պահանջների սահմանը պիտի լինի իր ուժերի չափը, ինչպես նաև այդ խոսույթից անբաժան՝ ազգին դեպի զենք տանող ներքին «հոգևոր մղումը»:

## *9. Հայ ազատագրական շարժումը XVIII դարի վերջին քառորդին: Հովհ. Լազարյան: Հովսեփ արք. Արղության*

XVIII դարի երկրորդ կեսին, Եկատերինա II կայսրուհու տիրակալության շրջանում, Ռուսաստանը մեծ շահագրգռություն հանդես բերեց ու գործնական քայլերի դիմեց Անդրկովկասին տիրելու ուղղությամբ:

---

[126] **Նժդեհ Գ.**, *Երկեր*, հ. 1, էջ 33:

Հայ առանձին շրջանակներ, կողմնորոշվելով դեպի Ռուսաստան, ակնկալում էին Հայաստանի, եթե ոչ լիակատար ազատագրումն ու անկախացումը, ապա գոնե անցումը նրա հովանու ներքո: Իսկ այդ ձգտումների իրականացման ճանապարհին գաղափարաքաղաքական հիմք էին ծառայում այդ նույն դարի հայ գործիչների՝ Ի. Օրու, Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի և մյուսների քաղաքական դեգերումներն ու կազմած ազատագրական ծրագրերը:

Այդ ծրագրերում կարևոր տեղ էր հատկացվում հայ-վրացական դաշնակցային գործակցության և անգամ միացյալ պետականակերտման գաղափարին: Այդ գաղափարների նյութականացման ուղղությամբ 1770–80-ական թթ ակտիվ դերակատարություն ստանձնեցին ռուսահայ աշխարհիկ և հոգևոր գործիչներ, ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպաններ՝ մեծահարուստ ազնվական, կոմս **Հովհաննես Լազարյանը** (1735–1807 թթ.) և ռուսահայոց թեմի առաջնորդ **Հովսեփ արք. Արղության-Երկայնաբազուկը** (1743–1801 թթ.): Այդ ճանապարհին, ինչպես արդեն ասվեց, առաջին լուրջ ազդանշանը հանդիսացավ 1783 թ. հուլիսի 24-ի ռուս-վրացական Գեորգիևսկի պայմանագիրը, որով Վրաստանը պաշտոնապես անցավ Ռուսաստանի հովանավորության (պրոտեկտորատի) ներքո: Այդ պայմանագրի կնքումը մեծ խանդավառություն առաջ բերեց հայ ազատագրական մտքի ու շարժման ղեկավար շրջաններում: Այդ առիթով, օրինակ, Շ. Շահամիրյանը Քարթլի-Կախեթի թագավոր Հերակլ II-ին հարուստ ընծաների հետ միասին ուղարկեց վրաց-հայկական պետական զինանշանի (գերբի) սեփական նախագիծը, որը պիտի խորհրդանշեր հայ-վրացական միացյալ պետականության գաղափարը[127]:

Այսրկովկասում, Կասպից ծովում և նրա առափնյա շրջաններում վերջնականորեն հաստատվելու, դրանք քաղաքականապես յուրացնելու նպատակով XVIII դարի երկրորդ կեսին Եկատերինա II կայսրուհու ռազմաքաղաքական ղեկավար շրջանները, այդ թվում նաև նրա համ-

---

[127] Տե՛ս **Գալոյան Գ.Ա.**, *Պատմության քառուղիներում*, էջ 88:

հարզ, խոշոր պետական ու ռազմական գործիչ **Գր. Պոտյոմկինը**[128], հռչակավոր զորավար **Ալ. Սուվորովը** և ուրիշներ, մեզ առավել հետաքրքրող Կովկասն ու կասպիական տարածաշրջանը նվաճելու ճանապարհին, ծրագրեր մշակեցին և դրանք իրագործելու համար անցան ավելի վճռական գործողությունների: Այդ ճանապարհին անհրաժեշտաբար ցանկալի կլիներ տարածաշրջանի բազմաէթնիկ ժողովուրդների, բնականաբար, Ռուսաստանի հանդեպ առավել բարյացակամորեն տրամադրված, ռուսների գալուն սպասող, տվյալ պարագայում հայերի բարոյական և գործնական աջակցությունը: Հայության համակրանքը դեպի Ռուսաստանը ավելի խթանելու համար կառավարական շրջանակներում խոսակցություններ բացվեցին հայկական պետականության վերականգնման շուրջ: Լեոյի պատկերմամբ՝ Հայաստանին խոստացվում էր անկախություն, որպեսզի նա Անդրկովկասում պատվար դառնար Թուրքիայի դեմ[129]:

Նման բարեհաճ քաղաքական ու քարոզչական մթնոլորտում 1779 թ. վերջին և 1780 թ. սկզբին ռուս-հայկական երկկողմանի բանակցություններ ընթացան: Հայերի կողմից այն վարում էին ռուսահայ ճանաչված գործիչներ՝ հայ մեծահարուստ, կոմս Հովի. Լազարյանը և ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղությանը: 1780 թ. հունվարին Հովի. Լազարյանը մի զեկուցագիր էր ներկայացրել ռուս մեծ զորավար Ալ. Սուվորովին այն բովանդակությամբ, որ հայ մելիքներն ու ժողովուրդը պատրաստ են աջակցելու դեպի Հարավային Կովկաս ու կասպիական ափամերձ երկրամասերը արշավելու պատրաստվող ռուսական զորքին՝ ազատագրելու հայկական մարզերը պարսկաթուրքական բռնատիրությունից և հիմնելու հայկական պետություն՝ Ռուսաստանի

---

[128] Իշխան **Գրիգորի Ա. Պոտյոմկինը** (1739–1791 թթ.) հանդիսանում էր հարավային Ռուսաստանի (Նովոռոսիյսկի, Ազովի և Աստրախանի) գեն.-նահանգապետը՝ փոխարքան: Տվյալներ կան, որ կայսրուհին հատուկ կապի մեջ է եղել Գր. Պոտյոմկինի հետ և, որոշ վարկածներով, նրանք նույնիսկ գաղտնի ամուսնացած են եղել (տե՛ս *История России IX–XXI века. От Рюрика до Путина*, коллектив авторов, Москва-Ростов- на-Дону, 2005, с. 273. Լեոն Գր. Պոտյոմկինին ներկայացնում է իբրև՝ «հայ ազգի հովանաւորը և Յովսէփ Արղութեանի բարեկամը» (տե՛ս **Լէօ**, *Յովսէփ կայսրուհւոյ Արղութեան*, Թիֆլիս, 1902, էջ 44):

[129] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 333:

հովանու ներքո[130]: Նրանք Հայաստանի ազատագրման և անկախացման գաղափարի իստակեցման համար նախագծեր ու ծրագրեր կազմեցին, պատրաստեցին Հայաստանի քարտեզը, հավաքեցին լրացուցիչ տեղեկություններ (նյութեր) հայերի, Անդրկովկասի մյուս էթնիկ տարրերի, ժողովրդագրական, տնտեսական, հաղորդակցության ուղիների և այլնի վերաբերյալ:

Խնդրին քաջագիտակ հետազոտող Լեոն վկայաբերում է, որ 1780 թ. հունվարին Հովի. Լազարյանի բնակարանում խորհրդակցություններ են ընթացել: Զորավար Ալ. Սավորովը Արղությանի և Լազարյանի հետ համատեղ հանդիպման ընթացքում հայերի, Հայաստանի ու տարածաշրջանի վերաբերյալ հարցուփորձ անելուց հետո ասել է, որ իբրև **«հայերը կը ստանան անկախ իշխանութիւն»**[131]: Այնուհետև Սավորովը հանձնարարել է Լազարյանին, որ նա նամակ գրի Ջուղա՝ Էմին աղային (խոսքը մեծահամբավ Հովսեփ Էմինի մասին է), որ վերջինս ժամանի Ռուսաստան՝ զբաղվելու այդ գործով և այլն[132]:

Հ. Արղությանը զորավար Ա. Սավորովի և կայսրուհու համարզ իշխան Գր. Պոտյոմկինի հետ այդ նույն 1780 թ. հունվարին ունեցած անձնական հանդիպում-զրույցների վերաբերյալ թողել է օրագիր: Մեկ այլ դրվագով՝ Հ. Արղությանը հայազգի բարերար Հովի. Աղա Եղիազարյանի հետ 1780 թ. հունվարի 3-ին կրկին հանդիպել է իշխան Գր. Պոտյոմկինին: Նրանք Պոտյոմկինին են ցույց տվել Հայաստանի քարտեզը՝ հայկական շրջանների, հայտնի քաղաքների, նաև տեղեկություններ հաղորդել ժողովրդի կացության մասին և խնդրել, որպեսզի իշխան Գր. Պոտյոմկինը միջնորդի կայսրուհուն և Ռուսաստանի օգնությամբ վերականգնվի հայկական պետականությունը՝ Հայաստանը՝ «նորոգելոյ զկործանեալ թագաւորութիւնս Հայոց»[133]: Այնուհետև իշխան Գ. Պոտյոմկինը պատասխանել է, որ դրան հասնելու համար անհրաժեշտ

---

[130] Տե՛ս Иоаннисян А.Р., *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, с. 20–21.

[131] Լէօ, *Յովսէփ կաթողիկոս Արղութեան*, էջ 107:

[132] Տե՛ս նույն տեղում, էջ 108:

[133] *Դիւան Հայոց պատմութեան*, գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780–1785), հրատ. «Գիւտ Աւագ քահանայ Աղանեանց», Թիֆլիս, 1899, էջ 731:

է, որ Հայոց կաթողիկոսը ու տեղի մի քանի հայ իշխանավորներ (մելիքներ) հայերի ազատագրության մասին խնդիրք ներկայացնեն ռուսաց բարձր իշխանություններին, որից հետո իրենք կփորձեն օգնության հասնել և այլն[134]: Մի հանդիպում-խորհրդակցությունն էլ տեղի է ունեցել հունվարի 13-ին, և խնդիրն ամբողջովին նվիրված է եղել Ղարաբաղին ու նրա մելիքներին[135]: Նման հուսադրող խոստումները, բնականաբար, ոգևորություն էին առաջ բերում ռուսահայ հոգևոր ու աշխարհիկ շրջանակներում, և դրա հիման վրա էլ կազմվում էին ծրագրեր Հայաստանի ազատագրության ու պետականության վերականգնման համար:

Հայտնի է, որ 1783 թ. Հովսեփ արք. Արղությանը ներկայացրել է հայկական պետականությունը վերականգնելու մի ծավալուն ու հիմնավոր նախագիծ-ծրագիր, որը պայմանականորեն ստացել է «**Հյուսիսային**» ծրագիր անվանումը: Այդ ծրագրով առաջարկվում էր հիմնել հայկական պետություն Ռուսաստանի հովանու ներքո: Այդ գաղափարն ավելի առարկայացնելու և յուրաքանչյուր կողմի անելիքները հստակեցնելու համար Հ. Արղությանն ու Հ. Լազարյանը նախորդը (1779 թ.) ի մի բերելով, ավելի հանգամանորեն կազմում են հայերի և ռուսների միջև, մի տեսակ, **հայ-ռուսական Դաշնադրության (դաշնագրի) երկու նախագիծ** (փաստաթուղթ), որից մեկն իր հասանելիք պահանջ-պարտավորություններով պիտի ստորագրվեր երկու կողմից: Նախագիծ-դաշնագիրը բաղկացած էր 19 (ԺԹ) հոդվածներից և կոչվել է «**Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց Ռուսաց և Հայոց**»[136]: Հայտնի է, որ Հովսեփ արք. Արղությանը 1783 թ. ռուսական իշխանություններին է ներկայացնում 18 կետանոց դաշնագրի նախագիծ, որի հիմքում ընկած էր 1779 թ. նախագիծը և պայմանականորեն այն ստացել է «**Հյուսիսային**» ծրագիր անվանումը:

Իբրև Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք Դաշնադրություն այն բաղկացած էր երկու կտորից՝ մեկը պիտի ստորագրվեր հայերի կողմից, մյուսը՝ Ռուսաց կառավարության: Նրանում սահմանվում

---

[134] Տե՛ս **Нерсисян М.**, *Из истории русско-армянских отношений*, кн. 1, с. 49.

[135] **Լէօ**, *Յովսէփ կաթողիկոս Արղութեան*, էջ 108:

[136] Տե՛ս **Լէօ**, *Հայոց հարցի վավերագրերը*, էջ 21–31, նաև **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 334–338:

էին ապագա անկախ Հայաստանի պետականության անցյալից ժառանգած **ավատատիրական** հիմունքներով կառուցվածքի, Հայաստանի մայրաքաղաքը Վաղարշապատը (Էջմիածինը) կամ Անին դարձնելու, անվտանգության ապահովման նպատակով Հայաստանում ռուսական մի փոքր զորաբաժին տեղակայելու, հայկական եռագույն ժապավենի (ազգային դրոշի), զինանշանի՝ Արարատ լեռը Նոյան տապանով, Արշակունյաց կնիքների օրինակով՝ միգլխանի արծիվով, ինչպես նաև գառ ու Ռուբինյանների երկու առյուծները, սահմանվելու էր Սբ. Գրիգոր Լուսավորչի շքանշան, դրամ հատելու իրավունքով, իսկ Եկատերինա II կայսրուհու ընտրությամբ՝ հայ կամ ռուս, ավելի հավանական՝ ռուս պետական գործիչ, գեն.-ֆելդմարշալ Գր. Պոտյոմկինին էլ հայոց ազգի թագավոր (խնամակալ) կարգելու, սակայն թագավորը պիտի լիներ հայադավան ու ավանդական սկզբունքով պիտի օծվեր Էջմիածնում: Երկու երկրների միջև կնքվելու էր առևտրական դաշինք ու սահմանվելու էր մաքսային օրենք: Հայաստանը կառավարվելու էր հայոց օրենքներով: Խոսվում էր քրեական հանցավորության դեմ պայքարի մասին: Ուշագրավ է նաև, որ ըստ ծրագիր-դաշնագրի՝ Խամսայի մելիքների զինուժը պիտի դառնար ապագա անկախ Հայաստանի բանակի կորիզը:

Ըստ դաշնագրի, իր հերթին Ռուսաստանը ճանաչում էր հայոց երկիրը իբրև թագավորություն, որի դեսպանը, իբրև Հայոց թագավորի բերան, պիտի նստեր Պետերբուրգում: Հայոց ազգի պահպանության և արտաքին (պարսից և օսմանցիների) վտանգից պաշտպանելու համար պիտի լիներ Ռուսաց սահմանափակ զորաբաժինը (2 հազար հեծյալ, 2 հազար հետևակ և 2 հազար թնդանոթաձիգ) 20 տարվա ընթացքում մաս-մաս դուրս էր բերվելու Հայաստանից: Ի նշան հնազանդության՝ Հայաստանը տարին մեկ անգամ իբրև ընծա Ռուսաց կայսրին էր մատուցելու 20 մսխալ մաքուր ոսկի, 3 ձի և 6 խոյ և այլն: Ծրագիրը տպագրվել է 1779 թ. 200 օրինակով[137]: Հակիրճ այդպիսին է Դաշնագ-

---

[137] Տե՛ս *Դիւան Հայոց պատմութեան*, գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780–1880), հրատ. Գիւտ Աւագ քահանա Աղանեանց, Թիֆլիս, 1899, էջ 731–738, **Լէօ**, *Յովսէփ կաթողիկոս Արղութեան*, էջ 144–147, **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 334–338, նաև՝ **Иоаннисян А.Р.**, *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, с. 45–47:

րի բովանդակությունը: Ըստ ամենայնի, տեղին է Լեոյի դիտողությունն ուղղված հետագա այն պատմագիր հեղինակներին, ովքեր հայ-ռուսական դաշնագրի նախագիծը թվագրում են 1790 թ., ոմանք էլ՝ 1789 թ.: Հարավոր է, որ դրանք լինեն վերախմբագրված տարբերակներ[138]:

Ինչ վերաբերում է հայ-ռուսական դաշնագրի հետագա ճակատագրին, ապա դիմենք Հովսեփ Արղությանին: 1786 թ. նա, այդ դաշնագրի հարցում պատասխանելով Շ. Շահամիրյանի հետաքրքրությանը, գրում է, որ ռուս կառավարությունը մերժում է որևէ դաշնագիր կնքելու առաջարկը՝ «թէ թագատրք ընդ թագաւորաց կարեն դնել զդաշինս, ազգի ձերում ո՞վ է թագաւորն որ համարձակեսցի զդաշինս խնդրել և այսպէս մնաց բանն անկատար»[139]:

Այս նույն հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում 1780-ական թվականներին Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության հարցում որոշակի մտահոգություն ու հետաքրքրություն է հանդես բերել Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոս **Ղուկաս Կարնեցին** (1780–1799 թթ.): Դա երևում է Ռուսաստանի բարձր իշխանավորներին ուղղված բազմաթիվ կոնդակներից ու նամակներից, այդ թվում, իշխան Գր. Պոտյոմկինին: Տվյալ դեպքում, Հայաստանի ազատագրության ծրագրի կապակցությամբ, առավել ընդգծուն է նրա 1784 թ. հունվարի 16-ի թվակիր նամակը՝ «Թուղթ օրհնութեան եւ յորդորանաց առ երկրորդն տէրութեանն Ռուսաց՝ Գրիգոր քնեազ Ալէքսանդրիչ Պոտէմկինն յորում եւ այլ դիտմունք» վերտառությամբ: Այս ընդարձակ նամակից բերենք մի քանի առավել բնորոշ քաղվածք. «Արդ...պարտական համարեմք զմեզ **շնորհակալ** լինելոյ զազնուութենէ քումէ, քանզի ահա որչափ ժամանակ է, որ հաստատեալ ես ի քեզ զճշմարիտ և զանկեղծ սէր և զգութ առ քրիստոսաէջ սուրբ Աթոռս և առ տառապակիր ազգըս մեր, և օգտասիրաբար հոգաս վասն մեր, և այնքան ջանս եդեր, մինչև ահա զարդիւնս մաքուր սիրոյդ և մեծի հոգունակութեանդ վեր երևացուցեր, զորս սիրելի և հոգևոր որդին մեր՝ Յովսէփ արքեպիսկոպոսն երկարօրէն և պարագայիւք ծանուցանէ մեզ ի յամենայն թուղթս

---

[138] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 333:
[139] Նույն տեղում:

իւր լիալիր շնորհակալութեամբք և բազում գովաբանութեամբ»[140]: Բանն այն է, որ դեռ որևէ արդյունքի չհասած՝ հայ բարձրագույն հոգևոր հայրը «օրհնառաք ողջույնի ու շնորհակալութեան» խոսքեր էր ուղղում Ռուսաց կայսրուհուն և բարձր իշխանավորներին:

Հայոց հայրապետը մեկ այլ պարբերությունում զգուշավոր լավատեսությամբ հույս էր հայտնում, որ «մեծ կայսերուհին ձերովդ ջերմեռանդ գթաշարժական միջնորդութեամբ կամի այց և ազատութիւն առնել երկրիս և տառապեալ ազդիս մերում, թե որքա՞ն է ջերմեռանդ բաղձանք մեր և յօժարութիւն առ այդ, ոչ լինի երկարել»[141]:

Նամակի վերջում, քանի որ կաթողիկոսն իր իսկ խոսքերով՝ «չունիմք զհամարձակութիւն գրել ինչ առ բարձրագոյն մեծութիւն տիեզերական մեծի կայսերուհւոյն», ուստի նամակով խնդրում էր իշխան Գր. Պոտյոմկինին՝ «...կացուսցես նմա զյոլովագոյն տենչմունս և զյօժարութիւն մեր առ առաջադրեալ իրականութեանն իւր, որ ի փրկութիւն մեզ և մերազնէից»[142]: Եթե Ամենայն Հայոց կաթողիկոսի սույն նամակը համեմատում ենք Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի ժամանակին Ռուսաց ցարին ուղղված «ամենախոնարհ թղթերի» հետ կարելի է տեսնել բովանդակային գրեթե ոչ մի տարբերություն: Սակայն XVIII դարավերջին կարծես արդեն ավելի առարկայական ու օրակարգային էր դառնում Հայաստանի ազատագրության խնդիրը:

Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող այս հարցը կարծես այնքան էր հասունացել, որ անգամ նախատեսված էր 1784 թ. ամռանը իրականացնել ռուսական զորքերի արշավանքը դեպի Հայաստան: Ռուսական զորքերը Ղզլարից և Մոզդոկից պիտի արշավեին դեպի Անդրկովկաս: Եվ հատկապես վճռված էր ոչնչացնել հայ մելիքների անհամերաշխության հետևանքով Շուշիում նստած Իբրահիմ խանին և տարածաշրջանում կազմել հայկական պետություն, որը կախում պիտի ունենար միայն Ռուսաստանից[143]:

---

[140] *Դիվան Հայոց պատմության*, գ. 1, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, 1780–1785, էջ 394:
[141] Նույն տեղում, էջ 395:
[142] Նույն տեղում, էջ 399:
[143] **Լէօ**, *Հայոց հպատի վաւերագրեր*, էջ 31:

Բայց ինչպես նշում է Լեոն՝ 1791 թ. վախճանվեց իշխան Գր. Պոտյոմկինը և, որ «Հովսեփ Արղությանը ողբաց նրա մահը», ու թվում է, թե դա շրջեց ամեն ինչ[144]: Սակայն իրականությունը բոլորովին այլ էր: Այս առիթով, ինչպես տեղին նկատել է տալիս ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանը, «այդ ծրագրերն ուշադրության չարժանացան»[145]: Հայ ժողովրդի համար հերթական հուսախաբության ցուցիչ պիտի համարել այն, որ այդ ծրագիր-նախագծերից և ոչ մեկը չի հիշատակվում ու հրատարակված չէ ռուսական ոչ մի ժողովածուում, ինչը նկատել ու ցավով արձանագրում է հայ պատմագրության երախտավոր Լեոն[146]: Բայց արշավանքը չկայացավ և Հայաստանի ազատագրության հարցը դարձյալ մնաց անորոշ:

Այդ ամենին հետևեց հայ ժողովրդի համար մի նոր հերթական հիասթափություն: Նման հիասթափություն պիտի սպասվեր նաև հետագա դարերում: Այդպիսով, հերթական անգամ Հովի. Լազարյանի և Հովսեփ արք. Արղությանի կազմած ծրագրային նախագիծը, առանց որևէ ընթացք տալու, մնաց անկատար (չիրագործված): Բայցևայնպես, պատմագիտական քննության ու գնահատականի տեսակետից այդ փաստաթղթերը նշանակալի քայլ են հայ քաղաքական մտքի պատմության մեջ: Հայազգի այս գործիչները, անկախ ձեռք բերած արդյունքից, վիթխարի ջանքեր են թափել հայրենիքի ազատագրման և պետականության վերականգնման ուղղությամբ:

Պատմական զուգահեռների առումով կարելի է պատմահամեմատական զուգահեռ անցկացնել շուրջ մեկ դար առաջ Ի. Օրու կազմած երկու ծրագրերի և Պետերբուրգում հայ գործիչների կազմած սույն ծրագրի միջև: Դրանցում ակներև է դառնում այդ ծրագրերի նմանությունը, պարզապես երբեմն փոփոխված են դրանց իրագործման դերակատարները, օգնության հասնող զինուժը, ապագա թագավորը և այլն, ինչը ցույց է տալիս ներքին տրամաբանական և իրավահաջորդային կապը միմյանց միջև: Այս նույն համատեքստում հիշատակման արժանի է նաև ռուսահայ խոջայական կապիտալի խոշոր ներկայացուցիչ,

---

[144] **Լէօ,** *Յովսէփ կաթողիկոս Արղութեան,* էջ 148:
[145] **Բարխուդարյան Վլ.,** *նշվ. աշխ.,* էջ 124:
[146] **Լէօ,** *Յովսէփ կաթողիկոս Արղութեան,* էջ 143:

աստրախանաբնակ գործիչ Մովսես Սարաֆյանի ավելի վաղ՝ 1769 թ., դարձյալ ռուսական զենքի օգնությամբ և Ռոսաստանի հովանու ներքո Հայաստանի ազատագրման վերաբերյալ ուշագրավ նախագիծը[147]:

* * *

Հայաստանի ազատագրության ձգտումներով տարված, իր հերթին, հեռավոր Հնդկաստանից **Շ. Շահամիրյանը** ևս փորձել է դիմել ծրագրերի մշակման ու գործնական քայլերի: Նա ռուսական պալատական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող Հովսեփ արք. Արղության-Երկայնաբազուկին է ուղարկում իր մշակած ապագա ինքնիշխան Հայաստանի կառավարչաձևի նախագիծը՝ ռուսական կառավարությանը ներկայացնելու համար: Սակայն ցարիզմը բնավ էլ մտադրություն չուներ կյանքի կոչել «Որոգայթ փառացի» գաղափարը ապագա անկախ Հայաստանի հանրապետական կառուցվածքի վերաբերյալ, և սա այն դեպքում, երբ բուն Ռոսաստանում իշխում էր ավատական-միապետական համակարգ:

Շ. Շահամիրյանը հայկական հարցի լուծման մեկ այլ ծրագիր-տարբերակ էր առաջարկել: Համաձայն որի՝ Հայաստանը տրվի վրաց Հերակլ II թագավորին, իբրև **Բագրատունյաց** ազգատոհմի ժառանգորդ: Այդ կապակցությամբ նա նամակով դիմել է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին: Շահամիրյանի փաստարկն այն էր, որ արևելահայ որոշ տարածքներ արդեն գտնվում են Հերակլի տիրապետության ներքո: Բացի այդ, որն ավելի ծանրակշիռ է, ռուս-վրացական հայտնի պայմանագրով Վրաստանը անցել էր Ռոսաստանի հովանավորության տակ, հետևաբար, այդ ծրագիրն իրագործելու ժամանակ այն իբրև աջակցություն կստանա վերջինիս կողմից:

Այդ հիման վրա Շահամիրյանը փորձել է անմիջական բանակցություններ վարել Հերակլ արքայի հետ: Ըստ ծրագրի՝ Հերակլը, իբրև հայ Բագրատունիների հետնորդ, հայ ազգի հովանավորությունը ստանձնելով՝ կոչով պիտի դիմեր հայրենիքից արտագաղթածներին հետ վերադառնալ, հաստատվել ու ծաղկեցնել երկիրը: Միացյալ թա-

---

[147] Տե՛ս **Բարխուդարյան Վլ.**, *նշվ. աշխ.*, էջ 123:

գավորության կառավարման համար Հերակլը պիտի առաջնորդվեր «Որոգայթ փառաց» գրքով, այսինքն, հանրապետական կառավարման սկզբունքներով, ինչը պիտի համարել անիրատեսական: Շահամիրյանի պատկերացմամբ՝ ժամանակի ընթացքում հերթը կհասնի նաև Թուրքահայաստանի ու նրա հայության ազատագրությանը, երբ վերջիններս, իբր, կհասկանան, թե ինչ գեղեցիկ բան է հանրապետական համակարգը[148]:

Եթե համեմատություն ենք անցկացնում Հ. Արղությանի և Շ. Շահամիրյանի կազմած ծրագրերի միջև, ապա Հայաստանը Ռուսաստանից վասալական կախումով պետականության վերաբերյալ Արղությանի կազմած հայ-ռուսական պայմանագրի նախագիծը, անշուշտ, ավելի իրատեսական էր, քան հնդկահայը: Առաջ անցնելով, նշենք, որ ակադեմիկոս Ա.Ռ. Հովհաննիսյանը իրավացիորեն որոշակի կապ էր տեսնում պետերբուրգյան նախագծի և հետագայում՝ մի քանի տասնամյակ անց, ռուսական իշխանությունների կողմից ժամանակավորապես հիմնված հայտնի «Հայկական մարզի» միջև[149]:

Իրականում Ռուսաստանի ռազմավարական պլաններն ու շահերը միանգամայն այլ էին: Այն ժամանակների հայ գործիչները փորձում էին Հայաստանի ազատագրության ծրագրերը հարմարեցնել Ռուսաստանի հեռագնա նվաճողական պլաններին: Վիճակը տարածաշրջանում առավել բարդ ու անորոշ դարձավ, երբ 1795 թ. պարսից Աղա Մամեդ խանը ավերիչ արշավանք կազմակերպեց: 1796 թ. Եկատերինա 2-րդ կայսրուհու մահը և միջազգային հարաբերությունների սրումը առժամապես հետաձգեց Ռուսաստանի հեռագնա պլանները և նրան հաջողվեց այն, որ վրաց վերջին թագավոր **Գեորգի 12-ի** խորհրդավոր (կասկածելի հանգամանքներում) մահից հետո Ռուսաց կայսրուհու որդի-իրավահաջորդ Պավել I-ի՝ 1801 թ. հունվարի 18 (30)-ի բարձրագույն հրամանագրով (մանիֆեստով) Վրաստանը մշտնջենապես միացված

---

[148] Տե՛ս Լէօ, *Հայոց հարցի վաւերագրերը*, էջ 32–33:

[149] Տե՛ս **Иоаннисян А.Р.**, *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, с. 161:

համարվեց Ռուսաստանին,[150] և դրանով վերջ տրվեց վրաց Բագրատունիների ավելի քան մեկհազարամյա թագավորությանը: Վերհիշենք, որ ավելի քան մեկ հազարամյակի հեռվից՝ 1774–1775 թթ. արաբական խալիֆայության դեմ բռնկված հայերի խոշորագույն ապստամբության շրջանում Աշոտ Բագրատունի (**Կույրի**) որդի Վասակ Բագրատունին թողել էր խռովահույզ Հայաստանը, անցել Կղարջք և հիմք դրել Բագրատունյաց վրաց ճյուղին[151]:

Հազիվ թե կարելի է համոզմունք հայտնել, որ քրիստոնյաներին մուսուլմանների լծից ազատագրելու կարգախոսով Անդրկովկաս ներթափանցած Ռուսաստանը թույլ կտար կամ կհանդուրժեր, որ այդ ճանապարհին վերականգնվի հայկական պետականությունը, և կամ հիմնվեր հայ-վրացական միացյալ քրիստոնեական պետություն՝ թեկուզև իր հովանու տակ: Պրոֆեսոր Վ. Դիլոյանի կարծիքով, Անդրկովկասում նման բուֆերային պետական միավորի ստեղծումը կնպաստեր

---

[150] Տե՛ս *Присоединение Восточной Армении к России (1801–1813)*, ред. **Агаян Ц.П.**, (сб. док.), т. I, Ер., 1972, с. 44. 1801 թ. մարտին պալատական հեղաշրջմամբ դավադրությամբ սպանված Պավել I-ին հաջորդած, նրա որդի Ալեքսանդր I-ը 1801 թ. սեպտեմբերի 12 (24)-ի մանիֆեստով վերահաստատեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: Ուշագրավ է Ալեքսանդր I-ի ստորագրած Մանիֆեստում տեղ գտած տարածաշրջանի պատմաշխարհագրական մի շարք անվանումների հիշատակության, այդ թվում՝ Կասպից ծովի, Կուր-Արաքսյան ռազմավարական հանգույցի, Քարթլի-Կախեթի, Վրաստանի, Պարսկաստանի, ինչպես նաև երկու անգամ Հայաստանի, ընդ որում, մի դեպքում «**Մեծ Հայաստան**» անվան հիշատակության մասին (տե՛ս *Внешная политика России XIX и начала XX в.*, М., 1960, Серия 1. т. 1. с. 93–94): Այդ համատեքստում, բնականաբար, հարց է ծագում՝ կա՞ր, արդյոք, «Ադրբեջան» անվանումով գոնե վարչատարածքային միավոր: Բայց թող զարմանալի չթվա՝ չկա որևէ հիշեցում ու հիշատակում Ադրբեջան երկրի մասին, քանզի XIX դարասկզբին չի եղել նման անվանումով երկրամաս, էլ չենք խոսում պետականության մասին: Այն ժամանակ խոսք կարող էր լինել ընդամենը պարսկական Ատրպատական երկրամասի մասին, որի անվանումը անդրկովկասյան թյուրք-թաթարները հետագայում յուրացրին ու տարածեցին ներկայիս Ադրբեջանի Հանրապետության վրա: Եվ այս ամենը այն պարագայում, երբ ընդամենը մեկդարյա պատմություն ունեցող Ադրբեջանի ներկայիս ծավալապաշտ առաջնորդները, դրանց քարոզչամեքենան, կեղծելով և խեղաթյուրելով պատմությունն ու իրականությունը, հավակնում են տիրանալ նույնիսկ բուն Հայաստանի Հանրապետության տարածքներին, ընդհուպ մինչև Երևան, ինչպես արդեն ակնարկվել է՝ դրանք ներկայացնելով իբրև, ոչ ավել, ոչ պակաս, «Արևմտյան Ադրբեջան»: **Հակոբեան Ա.**, *Ադրբեջանի Հանրապետության անվանակոչման հարցի շուրջ* (տե՛ս «Դրօշակ», ՀՅԴ պաշտոնաթերթ, Եր., 2022, թիվ 7 (1665), հուլիս, էջ 28–32):

[151] Տե՛ս **Ադոնց Ն.**, *Երկեր*, հ. 6, էջ 478:

տարածաշրջանում կայուն պատնեշ ստեղծել մի կողմից՝ Ռուսաստանի, մյուս կողմից՝ Պարսկաստանի և Թուրքիայի միջև[152]: Բայց իրականում հետագա՝ XIX դարի և XX դարի սկզբների ռուսական կառավարության վարած քաղաքականությունը, զարգացող ռազմաքաղաքական հետագա դեպքերն ու իրադարձությունները եկան հաստատելու հակառակը:

Այսպիսով, XVIII դարի վերջին քառորդում հայ գաղթօջախների ազգային-ազատագրության գաղափարներով տարված երկու առավել ակտիվ գաղթավայրերում՝ հնդկահայ և ռուսահայ միջավայրում մշակվեցին Հայաստանի ազատագրության երկու ծրագրեր, որոնք բովանդակային առումով կարելի է բաժանել երկու հոսանքի՝ ազատական (լիբերալ) և պահպանողական թևերի: Եթե Հնդկահայ ծրագիրը սոցիալ-տնտեսական բովանդակությամբ ընդհանուր առմամբ ուներ ազատական-առաջադիմական գաղափարներ, որովհետև այն կրում էր անգլիական լուսավոր, քաղաքակիրթ ազատական-ժողովրդավարական, ինչպես նաև Ամերիկայի անկախական շարժման ու պայքարի գաղափարների ազդեցության դրոշմը, մինչդեռ հանձին Ռուսական ծրագրի՝ այնտեղ չկար նման հասարակական-քաղաքական միջավայր, որտեղ իշխում էր արևելյան տիպի ավատային-ճորտատիրական միապետական կայսերական բռնավարչակարգ: Ռուսահայ ազգային գործիչներ Հովհաննես Լազարյանը, Հովսեփ արք. Արղությանը, Մովսես Սարաֆյանը և մյուսները իրենց մշակած Հայաստանի ազատագրության ծրագրերում պիտի սահմանափակվեին այն ժամանակվա ռուսական պետահիրավական ու քաղաքական հարաբերություններն արտահայտող չափավոր, պահպանողական բնույթի գաղափարներով, հակառակ դեպքում, վերևից դրան կհետևեին կտրուկ արգելակիչ գործողություններ: Բայց տվյալ պարագայում Հայաստանի ու հայության համար առաջնայինը (գերակա) մնում էր **քաղաքական ազատագրությունը** թեկուզ և Ռուսաստանի հովանու ներքո:

---

[152] **Դիլոյան Վ.,** *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները,* էջ 141:

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ (XIX դարի սկիզբ–նույն դարի կեսեր)

## *1. Նոր դարաշրջանում Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման հիմքերն ու նախադրյալները: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հարցի պատմագիտական գնահատականը*

Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման ու անկախ պետականության վերականգնման համար պայքարի սոցիալ-տնտեսական ու գաղափարաքաղաքական ազդակ են հանդիսացել Հայաստան հայրենիքի դարավոր պետականազուրկ ու բաժանված լինելու հանգամանքը, օտար իշխանությունների կողմից հայ ժողովրդի ճնշված ու հարստահարված, ռայա, զիմմի, գյավուր (իրավազուրկ հպատակ), խաֆիր, մարաբա և այլն որակվելը: Իբրև վավերագիր վկայություն, արևելյան տիպի երկու բռնատիրությունների՝ Պարսկաստանի և Թուրքիայի կողմից պատերազմական ռազմաբեմի վերածված և իրար միջև քանիցս բաժանված Հայաստանի երկու հատվածների հայության անլուր հալածանքների ու աննկարագրելի դժնդակ կացության մասին հավաստում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հազարավոր ձեռագիր մատյանները (հիշատակարաններ, ժամանակագրություններ, գրիչներ), վավերագիր ժողովածուները, հայ և օտար պատմագիր ու ճանապարհորդ հեղինակների նկարագրությունները:

Սահմանափակվենք, բերելով ընդամենը մի քանի փաստ-վկայություն, ցույց տալու համար, թե ինչպիսին է եղել հպատակ հայության դրությունը: Նախորդ դարերում պարսկաթուրքական տիրապետության օրոք սոցիալական ու հարկային հարստահարությունները, ազգային ու կրոնական խտրականությունը հասնելիս է եղել զավեշտի նմանվող այն

աստիճանի, զորօրինակ, Երիվանի խանն անգամ պահանջում էր, որ «յատուս անձրևի քրիստոնիայք մի ելցեն արտաքս»[1]: Հնդկահայ գաղափարախոս Մ. Բաղրամյանը թվական տվյալներ է բերում այն մասին, որ լայն ընդգրկումով հայ ազգից ու Հայոց աշխարհից ամենամյա գանձված ամբողջական հարկը կազմել է 4 մլն 179 հազար պարսկական թոման և 139 հազար 320 օսմանյան քիսե (1 քիսեն հավասար է պարսկական 30 թոմանի հաշվով)[2]: Արևելագետ Հ. Փափազյանի հաշվումներով, մինչև 18-րդ դարի վերջը Արևելյան Հայաստանում բնակչությունից գանձվում էին մինչև 30 տեսակի հարկեր ու տուրքեր[3]: Իսկ մյուս հեղինակների հղումով, սոցիալ-տնտեսական հարստահարության տեսակետից, հաշվումները ցույց են տվել, որ պարսկական տիրապետության վերջին շրջանում Երևանի և Նախիջևանի խանություններում հարկատեսակների ու տուրքերի պաշտոնական և անպաշտոն (ապօրինի) ընդհանուր թիվը հասնելիս է եղել մինչև իսկ 40-ի և այլն[4]:

Հարկ է նշել, որ օտար տիրապետության սաստկացումը և հայ մելիքական տների թուլացումն ու ասպարեզից հեռացումն իրենց բացասական ազդեցությունը պիտի թողնեին ազատագրական շարժման ու պայքարի ընթացքի վրա: Արևելագետ Հ. Փափազյանի ներկայացմամբ՝ XVI–XVII դարերում լիակատար անկում ապրեց հայ աշխարհիկ ֆեոդալական (ավատական) հողատիրությունը Հայաստանում, որոնք փաստորեն հայ մելիքական տներն էին, և նրանք՝ որպես քաղաքական ուժ, հեռացան պատմության թատերաբեմից[5]: Նրանց քայքայումը և ասպարեզից հեռացումը, բնականաբար, պետք է թուլացներ նաև հայ քաղաքական ազատագրական պայքարի նյութական ու կազմակերպական հիմքերը: Տակավին պահպանվող տնտեսական ու հոգևոր առումներով

---

[1] **Զաքարեայ Սարգաւագի** *Պատմագրութիւն*, մաս II, Վաղարշապատ, 1870, էջ 90:

[2] Տե՛ս *«Նոր տեղագրակ որ կոչվում է Հոդոդրակ»*, էջ 162:

[3] Տե՛ս **Папазян А.**, *Аграрные отношения в Восточной Армении в 16–17 веках*, Ер., 1972, с. 226–234.

[4] Տե՛ս **Սարուխանյան Ն.**, *Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ*, էջ 29, *Հայ ժողովրդի պատմություն, կազմ.* **Մ.Գ. Ներսիսյան**, Եր., 1885, էջ 238:

[5] Տե՛ս **Папазян А.**, *նշվ. աշխ.*, *էջ* 46–47:

քիչ թե շատ կարողունակ ուժը և հողային սեփականատերը շարունակում էր մնալ Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը: Պրոֆ. Ս. Պողոսյանի հաշվումներով՝ XVIII դարի 70-ական թթ վերջերին Սբ. Էջմիածինը ունեցել է 23 մուլքադարական (կալվածատիրական) գյուղ[6]: Հասկանալի է, որ նման պայմաններում հայ ազատագրական ձգտումների շեշտը մեծապես պիտի դրվեր **արտաքին գործոնի** վրա, մանավանդ, որ XVIII դարասկզբից Ռուսաստանը ավելի վճռական քայլեր ձեռնարկեց Այսրկովկասի ու Արևելյան Հայաստանի նվաճման ուղղությամբ:

* * *

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման գործընթացը սկսվել է 1801 թ. Արևելյան Վրաստանի (Քարթլի-Կախեթի) Ռուսաստանին միացումով: Այս կապակցությամբ տեղին է նկատել ակադեմիկոս Ա. Մելքոնյանի արձանագրումը, որ Հյուսիսային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռի-Փամբակը, Շամշադինը, Ղազախը մինչ այդ գտնվում էին Վրաստանի թագավորության կազմում, ինչ նշանակում էր, որ հայկական հողերի Ռուսաստանին միացման գործընթացը սկսվել է 1801 թվականից[7]: Այնուհետև, ռուս-պարսկական հետագա երկու պատերազմների արդյունքով՝ 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով, Շորագյալի սուլթանությունը (Արևելյան Շիրակ), Ղարաբաղն ու Սյունիքը՝ Ղարաբաղի խանություն անունով, միացվեցին, իսկ ապա՝ հատկապես 1828 թ. փետրվարի 10 (22)-ի Թուրքմենչայի պայմանագրով՝ Երևանի ու Նախիջևանի խանությունները, ու դրանով գործնականում ամբողջ Արևելյան Հայաստանը միակցվեց Ռուսաստանին, որի առաջադիմական նշանակությունը պատմագիտական գնահատականի առումով **անվիճարկելի** է: Այն նշանակալի էր արևելահայության համար ոչ միայն սոցիալ-տնտեսական, հարկային ծանր բեռի, ազգային ու կրոնական խտրականության որոշակի մեղմացման, վարչաիրավական

---

[6] **Պողոսյան Ս.**, *Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում XVII–XVIII դարերում և Էջմիածինը որպես խոշոր կալվածատեր* (տե՛ս «Երևանի պետական համալսարան, գիտ. աշխատություններ, հ. 13, Եր., 1940, էջ 157:

[7] Տե՛ս **Մելքոնյան Ա.**, *Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր*, էջ 257, **նույնի՝** *Պատմագիտական հետազոտություններ*, էջ 174: Այդ մասին նաև՝ **Պարսամյան Վ.**, *Հայ ժողովրդի պատմություն (1801–1917 թթ.)*, հ. 3, էջ 44:

հարաբերությունների որոշակի կանոնակարգման, այլ առավելապես հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության, անձի ու գույքի ապահովության տեսակետից: Եվ, բացի այդ, քաղաքական հեռանկարի տեսակետից գնահատելին այն էր, որ արևելահայ հատվածը դարձավ հայ ժողովրդի համախմբման համար հիմք, ֆիզիկական, ժողովրդագրական, հոգևոր-քաղաքական այն միջուկն ու խարիսը, որ հետագայում՝ շուրջ մեկդարյա սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական ու հասարակական-քաղաքական զարգացումները պիտի հանգեցնեին նրան, որ դարավոր ընդմիջումից հետո, թեկուզև պատմական Հայաստանի՝ արևելահայ մի կտոր հողահատվածում (1/10-րդ մասում), պիտի տեղի տեղի ունենար Հայաստանի անկախության հռչակման և պետականության վերականգնումը:

Խորհրդահայ պատմագրության մեջ, ավելի հաճախ քաղաքական-քարոզչական նպատակով, հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը հատուկ ընդգծելու համար բանը հասցրել են նրան, որ հայոց նոր շրջանի պատմության պարբերացումը փորձ է արվել սկսել XIX դարի սկզբներից,[8] այսինքն՝ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից, ինչը հասկանալիորեն կրել է զուտ գաղափարաքաղաքական ինչերանգ, և ո՛չ հայաստանյան, և ո՛չ էլ համաշխարհային պատմության չափումներով չի կարելի համարել գիտականորեն հիմնավոր: Բանն այն է, որ նման պարբերացման ընդունման պարագայում այդ շրջափուլից դուրս է մնում բուն Արևմտյան Հայաստանը: Ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների գործոնին, ապա դժվար չէ նկատել, որ XIX դարի սկզբներին իր սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման մակարդակով Ռուսաստանն առանձնապես չէր տարբերվում ո՛չ Թուրքիայից և ո՛չ էլ Պարսկաստանից: Դրանք, ըստ էության, համարվում էին ասիական տիպի ռազմավատատիրական, ամբողջատիրական կայսրություններ և այլն: Ավելին, դեռ տասնամյակներ պիտի անցնեին, որպեսզի նոր խոսք բացվեր Ռու-

---

[8] **Աբրահամյան Ա.**, *Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջ* («Տեղեկագիր», Եր., 1947, թիվ 2, էջ 44):

սաստանում 1861 թ. փետրվարի 19-ի Ալեքսանդր II կայսեր հրամանագրով ճորտատիրական իրավունքի վերացման մասին և այլն:

* * *

Պատմագիտական գնահատականի տեսակետից հատկապես խորհրդահայ պատմագրության մեջ, և ոչ միայն նրանում, ժամանակաշրջանի հրամայականով ամենաբարձր, նույնիսկ չափազանցությունների հասնող արժևորումներ ու գնահատականներ են տրվել Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման իրադարձությանը: Միացման արժևորման ու գնահատականի առումով 1840–1960-ականների պատմաշրջանում առաջիններից մեկը անդրադարձավ պրոֆ. Զ. Գրիգորյանը՝ այն համարելով նախահեղափոխական (1917 թ.) Հայաստանի ամենախոշոր պատմական իրադարձություններից մեկը[9], իսկ մեկ այլ տեղ՝ գնահատելով **շրջադարձ**[10]:

Անվանի պատմաբան Վ. Պարսամյանն Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին համարում է «**նոր էրա** հայ ժողովրդի պատմության մեջ»[11], նրա մեկ այլ բնորոշմամբ՝ այդ միացման շնորհիվ «Արևելյան Հայաստանը փաստորեն **վերածնվեց** (ընդգծումը մերն է – Ա.Հ.)»[12]: Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գնահատմամբ՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին «**լուսավոր էջ** բացեց հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ»[13]: Իսկ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը ավելի հեռագնա բովանդակություն էր տեսնում այդ միացման մեջ: Նրա բնութագրությամբ՝ «Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին օբյեկտիվորեն դիտված **նախապայմաններ** (ընդգծված է՝ Ա.Հ.)

---

[9] Տե՛ս **Գրիգորյան Զ.Տ.**, *Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը*, էջ 3:

[10] Տե՛ս **Գրիգորյան Զ.Տ.**, *Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը*, էջ 54:

[11] **Պարսամյան Վ.Ա.**, *Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բերլինի կոնգրեսը*, թիվ 11–12, էջ 49:

[12] **Парсамян В.А.**, *Присоединение Восточной Армении к России и его историческое значение*, Ер., 1978, с. 3.

[13] *Հայ ժողովրդի պատմություն*, էջ 258:

էր ստեղծում արևելահայ ժողովրդի ազգային-քաղաքական ազատագրման համար»[14]:

Խորհրդային դարաշրջանի վերջին տասնամյակների պատմագիր հեղինակներից Ն. Սարուխանյանը ևս խորհրդահայ պատմագրությանը բնորոշ՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին համարում է **«անկյունադարձային»** ու **«բախտորոշ»** իրադարձություն: Նրա կարծիքով, մինչհեղափոխական (նկատի ունի՝ 1917 թ. – Ա.Հ.) Հայաստանի վերջին հարյուրամյակների պատմության ընթացքում ոչ մի իրադարձություն այնքան մեծ նշանակություն չի ունեցել հայ ժողովրդի կյանքում, որքան 1828 թ. փետրվարի 10-ին Պարսկաստանի փոքրիկ ու աննշան գյուղում՝ Թուրքմենչայում կնքված դաշնագրությունը»[15]:

Բերված մտքերն ու դատողությունները, իհարկե, գիտական գնահատականի տեսակետից, չափազանցություն են: Հասկանալի է, որ իր ժամանակի ոգուն համահունչ, դա արվում էր ոչ այնքան զուտ օբյեկտիվ պատմագիտական, որքան գաղափարական, քաղաքական-քարոզչական նպատակներով, որպեսզի փառաբանվեր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին՝ հատուկ ընդգծելու հայ և ռուս «մեծ» ժողովուրդների դարավոր անխախտ եղբայրական կապերն ու բարեկամությունը: Իսկ 1920 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից և 1922 թ. ԽՍՀՄ բազմազգ եղբայրական ժողովուրդների կազմում ընդգրկվելուց հետո սկսվում է վերածնված խորհրդահայ ժողովրդի «պայծառ ապագան»: Ահա, սա է եղել խորհրդահայ պատմագրության գլխավոր հայեցակարգը (կոնցեպտը): Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ, որ խորհրդային-կոմունիստական իշխող գաղափարաքաղաքական կոնյունկտուրայի (նպատակահարմարության) պայմաններում նրանք չէին կարող ազատորեն արտահայտել սեփական տեսակետները: Խորհրդահայ պատմագրության և հայ հանրության գիտակցության մեջ արմատավորվել է մի կարծրատիպ, թե Ռուսաստանն է հանդիսանում հայերի գոյությունն ու անվտանգությունն ապահովող միակ զորեղ ուժը, որ անհնարին է հայերի անկախ ապրելը: Դժ-

---

[14] **Հովհաննիսյան Ա.Գ.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 635:

[15] Տե՛ս **Սարուխանյան Ն.**, *Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ*, էջ 5:

բախտաբար, այդ մտայնությունը տարածում ունի նաև մեր օրերում՝ Երրորդ Հանրապետության պայմաններում, հայ հանրության առանձին շերտերի մոտ:

Այդ ամենով հանդերձ, հարկ է արժանին մատուցել խորհրդահայ պատմագրության այն հեղինակներին, ովքեր վիթխարի աշխատանք են կատարել հայ-ռուսական հարաբերությունների ու Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հիմնահարցի համապարփակ ուսումնասիրության ուղղությամբ, որոնց արդյունքում բազմահարուստ փաստաթղթերի ժողովածուների և մենագրությունների ձևով գիտական շրջանառության մեջ են դրել հսկայական արխիվային ու այլ փաստավավերագիր նյութեր:

Եթե միացմանը խորհրդային հեղինակների տրված գնահատականները համեմատում են **նախախորհրդային** հեղինակների հետ, ապա վերջիններս հանդես են բերել անհամեմատ ավելի անաչառություն ու հավասարակշռվածություն՝ չժխտելով, իհարկե, դրա առաջադիմական նշանակությունը: Այսպես, օրինակ, շատ ավելի զուսպ է XIX դ. նշանավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցի գնահատականը. «Հայերը ճշմարտապէս և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարգական ստրկութիւնից, եւ բացել է նոցա առաջ և մի նոր քաղաքական կեանքի ասպարէզ»[16]: Ի տարբերություն Ստ. Նազարյանցի՝ իր հայացքներով ավելի արմատական, ցարական վարչակարգի դեմ պայքարի ելած հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի առաջնորդ Մ. Նալբանդյանը, նկատի առնելով Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, գրում էր. «Մեծ Ռուսիան խաբանոք (խաբեությամբ – Ա.Հ.) ճանկել է Վրաստանը և Հայաստանի մի մասը և ճնշում է նորանց յուր ծանրության տակ»[17]: Իսկ Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հանդեպ մշտապես մեծ համակրանք տածած Մեծն Հ. Թումանյանի բնորոշմամբ, 1827

---

[16] «Հիւսիսափայլ», 1859, թիվ 1 (հունվար), էջ 12, նաև՝ **Նազարեանց Ստ.**, Երկեր, հ. Ա, Թիֆլիս, 1913, էջ 95–96:

[17] **Նալբանդյան Մ.**, *ԵԼԺ*, հ. 4, Եր., 1983, էջ 88:

թ. հոկտեմբերի 1-ին Երևանի առումով՝ «էդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի **նոր շրջան**»[18] և այլն:

Բայց այդ ամենով հանդերձ, հայ պատմագրության մեջ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հարցում գոյություն ունի նաև **կոշտ** գնահատական: Այդ տեսակետից առավել հակասական է ժամանակին ռուս պատմաբան Մ. Պոկրովսկու, այսպես կոչված, վուլգար սոցիոլոգիզմի տեսության դպրոցին տուրք տալու մեջ մեղադրվող, վաստակաշատ պատմաբան Լեոյի տված գնահատականը: Նա 1920-ական թվականներին, ժամանակաշրջանի խորհրդային գաղափարաքաղաքական մտածելակերպին տուրք տալով, ցարական տիրապետությունը հայերի համար որակել է իբրև «չարիք»[19]: Ի լրումն ասվածի, Լեոն Երևանի գրավման 100-ամյակին նվիրված լրագրական հոդվածում պարսկական տիրապետությունը գերադասել է ռուսականից: Այսպես, նա գրում է. «հայ գյուղացիությունը համայնական ինքնավարություն եր վայելում և ազատ եր, մինչդեռ յեկողը ճորտատիրական Ռուսաստանն եր, և նրա ներկայացուցիչները, զանազան Յերմոլովներ, Վորոնցովներ աշխատում էին պարսկական խանությունների մեջ ել հաստատել ռուսական ճորտատիրական կարգերը»[20]: Բայց նա նաև, դարձյալ պայմանավորված ըստ պատմաշրջանի քաղաքական նպատակահարմարության, ռուսական տիրապետությունը բնորոշել է «չարիքներից փոքրագույն»[21]: Նույն կերպ, պատմաբան Վ. Պարսամյանը ևս ժամանակի ոգուն համապատասխան, ընդգծելով ցարիզմի գաղութային քաղաքականությունը, պարսկական և թուրքական բռնապետությունների համեմատ, հայ ժողովրդի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը նույնպես որակել է «չարիքներից փոքրագույն»[22]: Բայց հետագայում՝ 1940-ական թթ. կեսերից, վերանայեց այդ մոտեցումը և մյուս պատմա-

---

[18] Տե՛ս **Թումանյան Հ.**, *Երկերի ժողովածու*, հ. 6, Եր., 1959, էջ 256:

[19] **Լեո**, *Հայոց պատմություն, նորագույն շրջան*, մաս 1, Եր., 1926, էջ 162:

[20] «Խորհրդային Հայաստան», Եր., 1927, 13 հոկտեմբերի, № 234:

[21] **Мелконян А.**, *Историко-политическое значение присоединения Восточной Армении к России (1801–1828 гг.)* (տե՛ս https://www.twirpx.com/file/398390/ (03.04.23).

[22] **Պարսամյան Վ.**, *Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում*, Եր., 1940, էջ 103:

բանների՝ Զ. Գրիգորյանի, Մ. Ներսիսյանի, Ա. Հովհաննիսյանի և մյուսների պես սկսեց բարձր գնահատել միացման նշանակությունը:

Եթե ընդունենք, որ ազատության, զարգացման ու քաղաքակրթության ձգտող յուրաքանչյուր ազգի համար քաղաքական բարիքը սեփական ինքնիշխան անկախ պետություն ունենալն է, ապա ծայրահեղությունների մեջ չընկնելով կարելի է արձանագրել, որ պատմագիտական գնահատականի առումով, մեր ժամանակների ոգուն համահունչ, ավելի ընդունելի ու հիմնավոր են պրոֆ. Լեոյի, Պարսամյանի, Ս. Մարկոսյանի և մյուսների ժամանակին արած այն ձևակերպումը, ըստ որի Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին կարելի է համարել «չարյաց փոքրագույնը»:

Այնպես որ միանշանակ չէ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացմանը տրված գնահատականը: Այսպիսով, ըստ պատմափոփերի, գաղափարաքաղաքական նպատակահարմարության ազդեցությամբ, պատմական այդ իրադարձությանը տրվել են ամենատարբեր գնահատականներ՝ «**չարիքի**» տեսությունից, «**չարիքներից փոքրագույնից**» ընդհուպ մինչև իսկ՝ «**բարիք**»[23]:

Իհարկե, ակնորոշ է, որ XVIII դարի սկզբներից մինչև XIX դարի առաջին երեք տասնամյակները հայ ազատագրական միտքը, հայոց պետականության վերականգնման ծրագրերը և դրան հասնելուն միտված հայ ազգային-ազատագրական շարժումները հիմնականում կրում էին դեպի Ռուսաստանն ուղղված քաղաքական կողմնորոշման բնույթ: Սակայն, այս կապակցությամբ, հարկ է անել մի վերապահում՝ **սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե նախընթաց հայ ազատագրական գաղափարաբանության ու պայքարի նպատակը եղել է ընդամենը Հայաստանը Ռուսաստանին միացնելը**: Պատմական իրականությունն ու իրողությունն այն է, որ հայերը մեծ ձգտում են ունեցել պարզապես Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել թուրք-պարսկական լծից: **Ավելին, հայ ազատագրական շարժման գործիչների**

---

[23] Տե՛ս **Հարությունյան Շ.**, *Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964–1988*, էջ 10:

**նպատակն էր Ռուսաստանի օգնությամբ վերականգնել հայկական պետականությունը:**

Այս համատեքստում դժվար է համակարծիք լինել ակադեմիկոս Գ. Գալոյանի և խորհրդահայ մյուս պատմաբանների այն տեսակետին, թե չնայած ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությանը՝ «այնուամենայնիվ պատմական զարգացման և ոչ մի փուլում հայ ժողովուրդի և ոչ մի խավ ու հասարակական հոսանք հարց չդրեց հայերի՝ Ռուսաստանից **անջատվելու** մասին»[24]: Նույն կերպ, դժվար է նույնակարծիք լինել նաև մեր հարգարժան մյուս ակադեմիկոս Հր. Սիմոնյանի արտահայտած այն մտքին, թե Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո «հայ քաղաքական միտքը առաջ չքաշեց Ռուսաստանից անջատվելու պահանջ»[25] և այլն: Ինչպես արդեն ընդգծվել է սույն աշխատության առաջաբանում, յուրաքանչյուր արժանապատիվ ազգ-ժողովրդի գերագույն նպատակը պետք է համարվի նրա ազատության ու անկախության ձգտելն ու հասնելը, ինչը որ բոլոր ժամանակներում եղել ու մնում է հայ ժողովրդի կենսունակության գլխավոր առհավատչյան: XIX դարասկզբներից հայ ազգամետ աշխարհիկ և հոգևոր գործիչների հասարակական-քաղաքական մտայնության մեջ առաջնային պլանում է կանգնում ոչ թե միայն զուտ **ազգապահպանության** խնդիրը, այլ նաև հայ-հայրենիքի հետագա զարգացման ու բարգավաճման հեռանկարը, իսկ այդ նպատակների իրագործմանը հասնելու ամենահուսալի երաշխիքն ու ապավենը կարող էր լինել սեփական ազգային անկախ պետականության վերականգնումն ու ինստիտուցիոնալ կայացումը:

Հարկ է ընդգծել, որ ավելի վաղ՝ ամբողջ XVIII դարում, Հայաստանի ազատաբաղձությամբ տարված հայ նշանավոր քաղաքական ու ռազմական գործիչների՝ Ի. Օրու, Դավիթ Բեկի, Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի, Հ. Լազարյանի, Հ. արք. Արղությանի և մյուսների առաջ քաշած գաղափարների ու ծրագրերի առանցքը եղել է Հայաստանի ազատագրումը, իհարկե, հիմնականում Ռուսաստանի

---

[24] **Գալոյան Գ.Ա.**, *Պատմության քառուղիներում*, էջ 94–95:
[25] **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 1, էջ 6:

օգնությամբ: Նրանք գտնում էին, որ այդ օգնությունը պիտի **միջոց** դառնար և ոգեշնչեր հայերին ոտքի կանգնելու և միասնական ուժերով վերջին հաշվով հասնելու **հայոց ինքնիշխան պետականության վերականգնմանը**:

Այս առնչությամբ, պատմագիտական գնահատականի տեսակետից, հարկ է հատուկ ընդգծել ճանաչված պատմաբան Վ. Դիլոյանի կողմից, իր ժամանակների պայմաններում ինչեցրած բավականին համարձակ ու ճշմարիտ այն դիտարկումը, որ XVIII դարում և XIX դարի սկզբի հայ ժողովրդի ազատագրական շարժումը նպատակ չի հետապնդել՝ **սոսկ միանալ Ռուսաստանին**[26]: Հիրավի, XVIII դ. վավերագրերը, Հայաստանի ազատագրության ծրագրերը, հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների քայլերը և գործողությունները գալիս են վկայելու, որ այդ շարժման ու պայքարի բաղձանքն է եղել այս կամ այն կերպ Անդրկովկասում **հայկական պետականության վերականգնումը** կամ հայ-վրացական միացյալ քրիստոնեական թագավորության ստեղծումը **Ռուսաստանի հովանու տակ**: Երբ հայ հանրային ու հասարակաքաղաքական ստվար շրջանակները ցանկություն ու ձգտում են հանդես բերել՝ Հայաստանը միացվի Ռուսաստանին, դա ամենևին էլ չի նշանակել, թե նրանք հեռագնա նպատակ չեն ունեցել հասնելու բաղձալի հայոց անկախ պետականության վերականգնմանը: Դժվար չէ հասկանալ, որ նրանք Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացումը դիտել են որպես **միջանկյալ օղակ** այդ դժվարին ու բաղձալի նպատակին հասնելու ճանապարհին:

Մյուս կողմից, դժվար է պատրանք ունենալ, թե Ռուսաստանը, անկախ նրա պետական դրոշների գույնից ու զինանշանից, երբևէ մտադրություն է ունեցել մեր տարածաշրջանում իր նվաճումների ճանապարհին վերականգնելու հայոց պետականությունը: Նման պարագայում ամեն ինչ կարելի է քննել ու գնահատել դրա վերջնարդյունքով: Իրականության մեջ դժվար չէ տեսնել՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացումից հետո գրեթե մեկ դար տևած հետագա գործընթացնե-

---

[26] Տե՛ս **Դիլոյան Վ.**, *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները*, էջ 5:

ը ցույց տվեցին, որ ցարական, իսկ հետագայում **գույնն ու դրոշը** փոխած Խորհրդային Ռուսաստանը, իսկ վերջին տասնամյակներին Ռուսաստանի Դաշնությունը բնավ էլ մտադրություն չեն ունեցել վերականգնել ու պաշտպանել հայկական պետականությունը կամ էլ, իբրև դաշնակից, ուղղակի աջակից լինել **նրա անվտանգությանը**, իսկ եթե ռուսական բարձր իշխանությունների կողմից, սկսած Պետրոս Մեծի ժամանակներից, հայանպաստ կոչեր ու մտքեր են արտահայտվել, ապա դրանք կրել են ընդամենը մարտավարական, քարոզչական խոսույթների բնույթ՝ հեշտացնելու Հայաստանի ու Անդրկովկասի միակցումը Ռուսաստանին: Վերջինս, անկախ գունավորումներից, իր արտաքին ծավալապաշտական քաղաքականությամբ միշտ էլ ցանկացել է Հայաստանը և ոչ միայն դարձնել հսկա կայսրության օրգանական մաս, մի ծրագիր, որն ունի արդիական ինչեղություն նաև մեր ժամանակներում: Նկատի առնելով Ռուսաստանի ծավալապաշտական հավակնությունները (նկրտումները)՝ տեղին է կրկին հիշեցնել ՀՅԴ ականավոր գաղափարախոս Վահան Նավասարդյանի մեկ դար առաջ ինչեցրած խոսքը Հայաստանը միշտ նույնն է, փոփոխվում են նրա գույները միայն և, ըստ գույների, նաև նպատակները»[27]:

Այնպես որ, ժամանակակից դիտակետից, արևելահայ երկրամասերի Ռուսաստանին միացումը պետք է արժևորել հենց այդ իմաստով, թեև պետք է հասկանալ, որ «խաչապաշտ» ռուսական կայսրերը Այսրկովկասում և այլ տարազգ (էթնիկ) երկրամասերում իր նվաճումները կատարելիս ամենևին իրենց հաշվարկների մեջ չէր մտնում, թե դրանք մի օր կարող են պայքարի դրոշ բարձրացնել, անջատվել կայսրությունից ու անկախանալ: Բայց համաշխարհային պատմության փորձը ցույց է տալիս, որ որպես կանոն, պատմականորեն այդպես է եղել մետրոպոլիայի (մայր տերության) և նվաճված երկրների ու ժողովուրդների հետագա ճակատագիրը: Միաժամանակ պետք է ընդգծել պատմական այն իրողությունը, որ հայ ժողովուրդը, իր հավաքական մեծամասնությամբ վտանգելով իր ֆիզիկականը, քաղաքականապես կողմ-

---

[27] **Նավասարդեան Վ.**, *Դաշնակցութեան քաղաքական ուղին «10-րդ Ընդհանուր ժողովի առիթով»*, Գահիրե, 1925, էջ 131:

նորոշված լինելով դեպի ռուս ժողովուրդն ու Ռուսաստանը, գրեթե բոլոր ռուս-պարսկական և, հատկապես, ռուս-թուրքական պատերազմների ժամանակ մեծ ոգևորությամբ ու չափերով անկեղծ մասնակցություն ու համակողմանի աջակցություն է ցուցաբերել ռուսական զենքի հաղթանակի գործում: Բայց դրա դիմաց, ցավոք, քաղաքական պատշաճ վարձատրություն չի ստացել: Արդեն XX դարասկզբին, սեփական պայքարի ու մեծ զոհողությունների գնով, Հայաստանի անկախության ձեռքբերումը կարելի է համարել մի տեսակ անուղղակի վարձատրություն հայ ժողովրդին՝ այդ մեծ մասնակցության դիմաց:

## *2. Հայ ազգային շրջանակների ազատաբաղձ ձգտումները և ռուսական կառավարության քաղաքական պլանները*

Բաց և պետք է փաստել, որ մինչ Արևելյան Հայաստանի վերջնական նվաճումը և ռուսական տիրապետության հաստատումը Անդրկովկասում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում ավելի առարկայական հույսեր արթնացան և ազատագրության ծրագրեր մշակվեցին առաջնահերթ արևելահայ տարածքներում վերականգնելու հայկական պետականությունը՝ միգուցե ինքնավարության ձևով: Այդ իմաստով, հենց ռուս-պարսկական երկրորդ պատերազմի շրջանում հիմնականում ռուսական զենքի միջոցով Հայաստանի ազատագրման և անկախության վերականգնման հույսով էին խանդավառված մի խումբ հայ աշխարհիկ ու հոգևոր գործիչներ: Հայ ազգային գործիչ, պատմաբան Գ. Լազյանն այդ մասին գրում է. «Հայ ազգային գործիչները կը յուսային ոչ միայն ազատագրուիլ պարսկական եւ թրքական լուծէն, այլեւ վերաստեղծել Հայաստանի անցեալ փառքը, դառնալու համար ազատ ու անկախ պետութիւն»[28]:

Այդ շրջանում ռուսաց մայրաքաղաքում գործող ճանաչված մի խումբ հայ հայրենասեր գործիչներ՝ **Խաչ. Լազարյանը**, **Կոնստ. Արղության-Երկայնաբազուկը**, **Ավ. Խոտաբաշյանը** և ուրիշներ, ռուս-

[28] **Լազեան Գ.**, *Հայաստան եւ Հայ Դատը*, Եր., 1991, էջ 1:

պարսկական երկրորդ պատերազմի փուլում, հետևելով XVIII դարի երկրորդ կեսի իրենց նախորդների՝ Հ. Արղությանի Հ. Լազարյանի, Շ. Շահամիրյանի հայրենանվեր օրինակին, իսկ մյուս կողմից՝ հայերին խրախուսելու նպատակով և հենց Նիկոլայ I-ի գիտությամբ Ս. Պետերբուրգում մշակեցին և 1827 թ. վերջերին՝ դեկտեմբերին, կառավարությանը ներկայացրին հայ ազգային շրջանների ազատաբաղձ տրամադրություններն արտահայտող քաղաքական բազմահոդված նմանատիպ մի **նախագիծ**, որով առաջարկվում էր Անդրկովկասի հայկական տարածքներից, ռուսական կայսրության հովանու ներքո, «**Հայկական ինքնավար թագավորություն**» ստեղծելու վերաբերյալ: Դրանով պետական այդ միավորը օժտվելու էր ներքին ինքնավարության իրավունքով, հայկական օրենքներով ու զինուժով, զինանշանով, դրոշով և այլն, իսկ ռուսաց կայսրը պաշտոնապես ընդունելու էր նաև հայոց թագավորի տիտղոսը: Տարածքային առումով «Հայկական թագավորությունը» պետք է ընդգրկեր ռուսական տիրակալության ներքո գտնվող բոլոր հայկական պատմական տարածքները[29]: Այդ նույն գաղափարի ջատագովներից վիրահայոց թեմի առաջնորդ, մեծ հայրենասեր Ներսես արք. Աշտարակեցին հույս էր տածում ռուսական զենքի միջոցով վերականգնելու արևելահայ, իր ձևակերպմամբ, այսպես կոչված, «Հայկական դքսությունը»[30]: Այս առնչությամբ տեղին է ակադեմիկոս Գ. Գալոյանի դիտողությունը՝ «Միայն զարմանալ կարելի է, որ Վրաստանի օրինակից դաս չէին քաղել հայ ազատագրական շարժման գործիչները և շարունակում էին հավատալ, որ Ռուսաստանի օգնությամբ վերականգնվելու էր Հայոց թագավորությունը»[31]:

Սակայն, ինչպես հայտնի է, նախորդների նման այդ նախագիծը նույնպես մնաց անկատար: Դրա փոխարեն 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի բարձրագույն հրամանով Թուրքմենչայի պայմանագրով Ռու-

---

[29] Տե՛ս **Պարսամյան Վ.Ա.**, *Հայ ժողովրդի պատմություն (1801–1917 թթ.)*, հ. 3, էջ 101, **Գիլոյան Վ.**, *Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեությունից*, էջ 181, *Հայոց պատմություն*, հ. 3 գ. 1, էջ 262:

[30] **Тунян В.Г.**, *Католикос всех армян Нерсес V Аштаракеци «Защитник отечества»*, Эчмиадзин, 2012, с. 169–172.

[31] **Գալոյան Գ.Ա.**, *Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, էջ 179:

սաստանի կայսրությանը միացված արևելահայ Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների և Օրդուբադի օկրուգի տարածքներից ստեղծվում (կազմվում) է ընդամենը «**Հայկական մարզ**» (Армянская область) անվանումով վարչատարածքային մի միավոր՝ այն մտցնելով կայսեր տիտղոսի մեջ[32], որից, սակայն, մեկ տասնամյակ անց (1840 թ.) «Հայկական» կոչված վարչական անվանումն էլ պիտի դուրս մղվեր և, ի վերջո, 1849 թ. վերածվեր հսկայածավալ կայսրությանը բնորոշ սովորական մի նահանգի: Ճիշտ էր նկատում պրոֆ. Վ. Պարսամյանը, որ «Ցարական կառավարությունը Հայկական մարզի ստեղծման հետ բնավ չէր կապում ո՛չ «**անկախ**», ո՛չ «**ավտոնոմ**» **Հայաստան** և ո՛չ Ռուսաստանի հարավում «**բուֆերային**» **մի պետություն** ստեղծելու նպատակ (ընդգծումները հեղինակինն են՝ Ա.Հ.): Նա բոլորովին էլ մտադիր չէր իր վիթխարի կայսրության մեջ մի ինչ որ նոր պետություն ստեղծել, այն էլ օտարազգի»[33]: Դա հակասում էր Ռուսաստանի կառավարության մեծապետական ու ծավալապաշտական շահերին: Նույն կերպ, միանգամայն տեղին է նաև պրոֆ. Վ. Դիլոյանի դիտողությունն այն մասին, որ «Միամտություն էր, իհարկե, մտածել, որ սեփական ժողովրդին երկաթյա կապանի մեջ պահող նիկոլևյան ռեժիմը կընդառաջեր հայ ժողովրդի և նրա իղձերն արտահայտող գործիչների ազատագրական բաղձանքներին, ազատություն կշնորհեր մի երկրում, որը բանտ էր ժողովուրդների համար»[34]: Կնշանակի, Ռուսաստանի հետ կապված հայերի փայփայած քաղաքական հույսերը պատրանքային էին և այդպես էլ չարդարացան:

Այս կապակցությամբ փոքր-ինչ դիտարկում անելով՝ «Հայկական մարզի» և, ընդհանրապես, Արևելյան Հայաստանի էթնիկ կազմի ու

---

[32] Հիշարժան է հայ հասարակական քաղաքական գործիչների ակտիվությունը, ովքեր փայփայում էին հայկական թագավորության վերականգնման հույսեր: Նրանք անգամ հայկական զինանշանի մի նախագիծ պատրաստեցին հայկական թագով, Մասիսով, Արարատյան դաշտով ու սբ. Էջմիածնով և այլն, որը իբրև Հայկական մարզի զինանշան, 1833 թ. հաստատվեց Նիկոլայ I-ին կայսրի կողմից: Սակայն այդ ոգևորությունը կարճ տևեց:

[33] **Պարսամյան Վ.Ա.**, *Ա.Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները*, էջ 138:

[34] **Դիլոյան Վ.**, *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները*, էջ 321:

պատկանելության հետ կապված, մեր ժամանակներում հարևան Ադրբեջանի պետական ու տեղեկատվական միջոցներով լայն տարածում է ստացել կեղծ ու ստահոդ քարոզչական այն վարկածը, թե իբր XIX դարասկզբներին Ռուսական կայսրությանը միացված, հայոց պատմական բնօրրան հանդիսացող Արևելահայ տարածքների՝ Երևանի և Նախիջևանի պարսկական խանությունների հիմքի վրա 1828 թ. մարտի 21-ին ստեղծված «Հայկական մարզը» ոչ ավելի, ոչ պակաս համարվում է «Արևմտյան Ադրբեջան»[35]: Այնինչ, պատմական իրողությունն ու իրականությունն այն է, որ մինչև 1918 թ. չէր կարող խոսք լինել անդրկովկասյան Ադրբեջան վարչական, էլ չենք խոսում պետական կամ ադրբեջանցի կոչվող ազգային միավորի մասին: Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման ժամանակներում Արևելակովկասյան տարածաշրջանում (դիստանցիաներում) ապրող մուսուլմանական էթնիկ տարրերը, ինչպես արդեն ասվել է, հայտնի էին որպես կովկասյան թյուրք կամ թաթար անունով, և տակավին դրանք չէին ձևավորվել (կազմավորվել) որպես ազգային ինքնագիտակցության հասած ինքնաբավ ազգային միավոր: Այստեղ կարող է հանդիպակաց հարց ծագել. երբ Նիկոլայ կայսրը պաշտոնապես հրամանագրում էր «Հայկական մարզի» անվանակոչման մասին, ապա ադրբեջանցի համարվող մտավորական շրջանները, եթե կային այդպիսիք, ինչո՞ւ հանդես չեկան քաղաքական որևէ հայտարարությամբ՝ դժգոհելու և մեղադրելու ցարին՝ ադրբեջանական համարվող հողերը «Հայկական մարզ» անվանակոչելու խնդրով: Բայց իրողությունն այն է, որ այն ժամանակներում (երկու դար առաջ) դեռևս չէր կարող խոսք լինել նման «ադրբեջանցի ազգ» հասկացության մասին, քանզի չկար դեռևս ձևավորված նման ազգ:

Արևմտյան Հայաստանի հետ կապված հարկ է փաստել, որ իր հերթին, 1828-1829 թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմի առնչությամբ, արևմտահայ աշխարհիկ ու հոգևոր գործիչները նմանապես ակնկալություն են ունեցել ռուսական զորքի ու զենքի օգնությամբ ազատագրել նաև Արևմտյան Հայաստանը: Ալ. Երիցյանը գրում է, որ

---

[35] Տե՛ս **Гусейнов Р.**, *Конфликты на Кавказе: история, современность и перспективы урегулирования.* – 2013, 8 июля.-www.rizvanhuseynov.com/201blogpost 24.html; http://yerevan500.com/?m=seh&id=14

Կ. Պոլսի մեջ լուրեր էին պտտվում, թե իբրև «Ռուսիան մտադիր է՝ Հայոց թագավորություն հռչակելու մտքով՝ խլել նաև Տաճկական Հայաստանը»[36]: Բայց դրանք ևս կարելի է համարել ընդամենը հիմնազուրկ պատրանքային լուրեր: Այդ ամենով հանդերձ, պատմականորեն տեղին է ակադեմիկոս Ա. Մելքոնյանի դիտարկումը, որ հայկական պետականության վերականգնման հարցում, ռուսական կառավարության հանդես բերած անտարբերությամբ հանդերձ, հայ գործիչներն ու հանրությունը շարունակել են «գործուն աջակցություն ցույց տալ Անդրկովկասը նվաճելու Ռուսաստանի ձգտումներին»[37]: Բարեբախտաբար, թե դժբախտաբար այդ մտածելակերպը մեզանում տակավին պահպանվում է նաև մեր ժամանակներում: Եվ դա կարելի է համարել մեզանում արմատացած ավելի քան երեքդարյա ռուսական պատմաքաղաքական կողմնորոշման ավանդույթի դրսևորում (արտացոլանք):

* * *

Անառարկելի է, որ XIX դարի առաջին կեսի ամենաազդեցիկ ու ամենանշանավոր հայ հոգևոր գործիչներից էր հայ եկեղեցու Թիֆլիսի (վիրահայոց) թեմի (1814–1830 թթ.), այնուհետև Նոր Նախիջևան-Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ (1830–1843 թթ.), իսկ հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս **Ներսես Ե Աշտարակեցին** (1843–1857 թթ.), որը ևս շատ էր տարված հայրենիքի ազատագրության (ինքնիշխանության) գաղափարներով, իհարկե, դարձյալ հույսը կապելով հյուսիսի մեծ հարևանի օգնության հետ: Լեոյի դիտարկմամբ՝ Աշտարակեցին քաղաքական իմաստով և ավելի մեծ եռանդով շարունակեց Հովսեփ արք. Արղությանի գործը[38]: Գործելով Կովկասի հասարակական-քաղաքական կյանքի խոշոր կենտրոն Թիֆլիսում՝ Ն. Աշտարակեցին մեծ հեղինակություն էր վայելում, հանդես էր բերում անձնական ընդունակություններ, եռանդ ու կազմակերպչական մեծ կարողություն-

---

[36] **Երիցեանց Աղ.,** *Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800–1830 թթ.),* Թիֆլիզ, 1894, էջ 358:

[37] **Мелконян А.,** *Историко-политическое значение присоединения Восточной Армении к России (1801–1828 гг.)* (տե՛ս https://www.twirpx.com/file/398390/ (03.04.23).

[38] **Լէօ,** *Ստեփանոս Նազարեանց,* Թիֆլիս, 1902, էջ 11:

ներ և, ի տարբերություն ծերացած ու թուլակամ Եփրեմ կաթողիկոսի, անմիջական կապերի ու շփումների մեջ էր Կովկասի ռուսական զինվորական ու քաղաքացիական բարձր իշխանությունների, այդ թվում 1827 թ. մարտից Նիկոլայ I-ի հրամանով Կովկասի կառավարչապետի և Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարի պաշտոնում Ա. Երմոլովին փոխարինած գեն.-ադյուտանտ Ի. Պասկևիչի հետ[39]: Բայց վերջինիս հետ Ն. Աշտարակեցու հարաբերությունները այնքան էլ հարթ ու հաշտ չեն ընթացել:

Հայաստանի Ռուսաստանին միացման ժամանակներից ի վեր պատմությունից ու գրականությունից յուրաքանչյուր քաղաքացու հայտնի են հայ աշխարհիկ և հոգևոր մեծերի՝ Խ. Աբովյանի, Ն. Աշտարակեցու, Կարապետ արք. Էրզրումցու (Բագրատունի), Հ. վրդ. Ալամդարյանի, Մ. Թաղիադյանի, Մ. Նալբանդյանի և մյուսների տված բարձր գնահատականներն այդ միացմանը, ովքեր, սակայն, հետագայում մեծապես հուսախաբ եղան: Ինչպես արդեն ասվեց, Ռուսաստանի օգնությամբ «հայրենյաց ազատության» ջերմ պաշտպան Ներսես արք. Աշտարակեցու (նաև՝ մյուսների ինքնավարության մասին) հույսերը ոչ միայն չարդարացավ, այլև նա իր անցանկալի հայացքների համար հալածանքի ենթարկվեց ռուսական բարձր իշխանությունների կողմից և, իբրև քաղաքականապես անվստահելի անձ, ռուսաց Նիկոլայ I-ին կայսեր 1830 ապրիլի 23-ի հրովարտակով ազատվեց Թիֆլիսի հայ հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնից և, փաստորեն, իբրև աքսոր՝ նշանակվեց «Նոր Նախիջևան-Բեսարաբիայի» հայոց թեմի առաջնորդ (1830–1843 թթ.)[40]: Կասկած չկա, որ Ներսես արք. Աշտարակեցուն անդրկովկասյան գործերից հեռացնելը, «աքսորելը» ուներ ավելի շատ քաղաքական շարժառիթ: Եվ դժվար է համամիտ լինել գրականության մեջ տեղ-տեղ շրջանառվող այն կարծիքին, երբ այդ հեռացումը բացատրվում է զուտ Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչի ու «Երևանի ժամանակավոր

---

[39] Տե՛ս *«Հայ ժողովրդի պատմություն»*, հ. V, Եր., 1974, էջ 146:

[40] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 117, էջ 1–3:

վարչության» անդամ Ն. Աշտարակեցու միջև անձնական լարված հարաբերություններով[41]:

Այս առնչությամբ ուշադրության է արժանի պատմաբան Հ. Հովհաննիսյանի դիտարկումը Ն. արք. Աշտարակեցու «աքսորի» հարցում: Նա, հենվելով մի շարք փաստահենք տվյալների վրա, չանտեսելով հանդերձ Ի. Պասկևիչ – Ն. Աշտարակեցի հարաբերությունների լարվածության (տանդեմի) փաստը, կարծիք է հայտնում, որ ցարական իշխանությունները, նկատի առնելով 1828–1829 թթ. ռուս-թուրքական մոտեցող պատերազմը, իսկ մինչ այդ Ն. Աշտարակեցու հավատարիմ ու նվիրված ծառայությունը Ռուսաստանին (ի դեպ, այդ ծառայությունների համար 1828 թ. հունվարի 25-ին Նիկոլայ I-ն կայսեր ռեսկրիպտով (շնորհագիր), նա պարգևատրվել էր Սբ. Ալեքսանդր Նևսկու ադամանդակուռ բարձրագույն շքանշանով[42], ցարի գիտությամբ նրան «գործուղում են» Բեսարաբիա (Քիշինև) որպես տեղի հայոց թեմի առաջնորդ՝ իբրև խնդիր դնելով Բալկանյան տարածաշրջանում ապրող հայությանը կողմնորոշելու դեպի Ռուսաստան: Ուստի, ըստ Հ. Հովհաննիսյանի՝ **«ռուսական արքունիքի ձեռնարկած քայլը պետք է դիտել ոչ թե աքսոր, ինչն ընդունված տեսակետ է մեզանում, այլ ռուսական կառավարության հեռահար նպատակ** (ընդգծումը մերն է – Ա.Հ.)»[43]: Կնշանակի, Ն. Աշտարակեցու «աքսորի» (օստրակիզմի) գործում նրա և Ի. Պասկևիչի անձնական ոչ բարյացակամ հարաբերությունները առաջնային դեր չեն խաղացել: Աշտարակեցի-Պասկևիչ հարաբերությունների հարցում հնագետ-պատմաբան Ալ. Երիցյանը նկատել է տալիս, որ նրանց միջև լարված հարաբերությունները թույլ չտվեցին Ներսեսին լիովին վերադարձնել նախկինում բռնազավթված հայ եկեղեցական բոլոր կալվածքները[44]:

---

[41] Տե՛ս **Երիցեանց Աղ.**, *Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800–1830 թթ.)*, էջ 349, նաև՝ **Երիցեանց Աղ.**, *նշվ. աշխ.*, մասն Բ (1831–1842 թթ.), Թիֆլիզ, 1895, էջ 246:

[42] *Присоединение Восточной Армении к России*, т. 2, док. № 242, с. 443.

[43] **Հովհաննիսյան Հ.**, *Նկատեմ Աշտարակեցի-Իվան Պասկևիչ հակամարտության հարցի շուրջ* (տե՛ս «ՎԷՄ», Եր., 2022, թիվ 4 (80) հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 258–259):

[44] Տե՛ս **Երիցեանց Աղ.**, *Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Բ, (1831–1842 թթ.)*, էջ 246:

Արդեն 1843 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս օծված Ներսես V Աշտարակեցու կյանքի ու գործի հետ կապված կա ևս մի պատմական ուշագրավ դրվագ: Բանն այն է, որ պատմահուշագիր գրականության մեջ տեղեկություն կա, որ Ներսեսը մինչև իր կյանքի վերջին րոպեն, իբր, իր ձախ ծոցագրպանում, Ի. Պասկևիչի հետ կապված, պահելիս է եղել մի գաղտնի թուղթ, որի բովանդակության մասին ոչ ոք չգիտեր[45]: Այնուհետև, նրա մահից հետո, այդ թուղթն ընկել է մի դավաճան հոգևորական Սարգիս եպիս. Հասան-Ջալալյանի ձեռքը, և որ վերջինս էլ, հետքերը թաքցնելու համար, այդ նամակ-գրությունը, իբր թե, վաճառել է ռուսներին[46]: Այս կապակցությամբ, Ալ. Երիցյանը գրում է. «Քանի մի անգամ տպագրութեան մէջ յիշուած է եւ այժմ էլ կենդանի ականատես պատմողներ կան, որ Ներսէսը մինչև իւր կենաց վերջին րոպէն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում գիշեր եւ ցորեկ. թէ ի՞նչ բովանդակութիւն ունէր այդ թուղթը ոչ ոք չգիտէ, որովհետև նա ոչ ոքի չէր ցոյց տալիս»[47]: Այնուհետև պատմվում է, որ Ներսեսը Բեսարաբիայից վերադառնալիս ու կաթողիկոսական Աթոռը ստանձնելուց հետո իր մտերիմների հետ խոսքուզրույցի ժամանակ՝ Պասկևիչի և անցած-գնացած անցքերի մասին ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում՝ «Պասկևիչը ահա այստեղ է կաշկանդուած»[48]: Ի դեպ, Պասկևիչին վերաբերող «խոստումնաշատ» թղթի մասին ակնարկում է նաև արևմտահայ պատմագիր Ավետիս Պերպերյանը[49]:

Չի բացառվում, որ ռուս-պարսկական երկրորդ պատերազմից առաջ կամ ընթացքում ռուսական զորքերի հրամանատար ֆելդմարշալ Ի. Պասկևիչը Ռոաաստանի հովանու ներքո Հայաստանին ինքնավարություն տալու մասին Ն. Աշտարակեցուն ինչ-որ խոստումներ է տվել՝

---

[45] Տե՛ս **Երիցեանց Ալ.**, *Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, (1800–1830 թթ.)*, էջ 356:

[46] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 4, էջ 419: Այդ մասին նաև համացանցի՝ https://yhm.am, archives. (18. 03. 2023):

[47] **Երիցեանց Ալ.**, *նշվ. աշխ.*, մասն Ա (1800–1830 թթ.), էջ 356:

[48] Նույն տեղում:

[49] Տե՛ս **Պէրպէրեան Ա.**, *Պատմութիւն Հայոց* (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչեւ Յամն 1860), Կ. Պոլիս, 1871, էջ 181:

պատերազմի հաղթական ավարտի պարագայում «բարձրագույն հաճությամբ» Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանին ինքնավարություն տալու մասին, որն էլ իբրև գրավոր թղթի ձևով պահվել է հայրենասեր կաթողիկոսի ծոցագրպանում: Բայց, քանի որ Ռուսաստանի պետական քաղաքականությամբ խոսք չէր կարող լինել նորանվաճ Արևելահայաստանին որևէ ձևով ինքնավարություն տալու մասին, ուստի և ծագում է Ն. Աշտարակեցու «աքսորի» մի երրորդ տարբերակ. այն է՝ կառավարության մակարդակով նրան յուրօրինակ աքսորի ձևով հեռացնելով Անդրկովկասից դեպի հեռավոր Բեսարաբիա, որպեսզի դրանով նրան հեռու պահեն հայոց պետականության վերականգնման համար ունեցած ձգտումներից՝ «իբրեւ թէ վտանգաւոր անձ տէրութեան համար»[50]:

Վերոշարադրյալը մի տեսակ հիշեցնում են 4-րդ դարում Հռոմի Կոստանդինոս I Մեծ կայսրի և Հայոց Արշակունի Տրդատ 3-րդ Մեծ թագավորի միջև կայացված «**Դաշանց թղթի**» և նույն դարակեսերին Հայոց կաթողիկոս Ներսես Ա Մեծ Պարթևի երազ «Տեսիլք»-ի, միջնադարում ստեղծված գուշակությանը նմանվող պատմությունները[51], որ Հայոց պետականության կործանումից հետո միջնադարյան մտածելակերպին բնորոշ, Աստծո զորությամբ այն, իբր, կազատագրի քրիստոնյա մի երկիր: Ինքնին հասկանալի է, որ Ն. Աշտարակեցու ժամանակներում Հայաստանի ազատագրողը լինելու էր Ռուսաստանը: Իսկ մետաֆոր հիշեցնող Ներսես V-ի ձախ ծոցագրպանի «թուղթը» մոտավորապես հիշեցնում է Ներսես Ա-ի «Տեսիլք»-ը: Եվ չպետք է զարմանալ, թե Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման ճանապարհին հայ քաղաքական միտքը դարեր շարունակ առարկայական շարժման ու պայքարի հետ միասին նաև հեքիաթ-ավանդապատումի նմանվող, ահա, այսպիսի հնարքների է դիմել:

Այսպիսով, հայացք նետելով XVIII դարի և XIX դարասկզբի երեք տասնամյակների Հայաստանի ազատագրության ծրագրերին ու պլան-

---

[50] **Երիցեանց Աղ.**, *նշվ. աշխ.*, մասն Ա (1800–1830 թթ.), էջ 357:

[51] **Տե՛ս Ագաթանգեղոս**, *Հայոց պատմութիւն*, էջ 487–488, **Փավստոս Բուզանդ**, *Հայոց պատմութիւն*, էջ 87, **Հովհաննիսյան Ա.**, *Դիվագներ...*, գ. 1, էջ 58–80, **Անասյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 52 և ուրիշներ:

ներին, հարկ է տարբերակել հետևյալը, որ եթե 18-րդ դարի հայ ազատագրական ծրագրերում՝ Ի. Օրու, Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի և ուրիշների, առաջ էր քաշվում Հայաստանի **անկախ պետականության** վերականգնման գաղափարը, ապա 19-րդ դարի սկզբներից, երբ արդեն Ռուսաստանը գործնական քայլերի դիմեց Անդրկովկասը Արևելահայաստանի հետ միասին նվաճելու ուղղությամբ, հայ ազգային գործիչները իջեցրին Ռուսաստանին ներկայացվող իրենց ծրագրային պահանջների **նշաձողը** և սկսեցին խոսել Ռուսաստանի կազմում Հայաստանին ընդամենը **ինքնավարություն** տալու ձգտման մասին, որն էլ դժվար չէ տեսնել՝ փաստորեն ևս դառնում էր անիրագործելի: Այդուհանդերձ, պատմագիտական գնահատականի տեսակետից, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար օբյեկտիվորեն ունեցավ առաջադիմական նշանակություն երկրի ու ժողովրդի կյանքի ու գործունեության բազում ոլորտների առաջընթացի տեսակետից: Բայց հայ ժողովուրդը մոտ մեկ դար դեռևս պիտի ապրեր, մինչև որ մեծագույն ճիգուջանքերով և վիթխարի մարդկային կորուստներով, ի վերջո, հասներ ազգային քաղաքական ազատագրության՝ **հայոց պետականության վերականգնման**:

* * *

Կարելի է հասկանալ, որ այն ժամանակվա պայմաններում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը և XIX դարի առաջին երեսնամյակին Արևելյան Հայաստանի նվաճումը ռուսական զորքերի կողմից հայ հանրության շահերից բխող, պարզ թվաբանական բանաձևի նմանվող, պատմա-քաղաքական անհրաժեշտություն էր: Այստեղ օբյեկտիվ գործընթացն այն էր, որ մի կողմից Ռուսաստանի ռազմավարական ծավալապաշտական շահերը թելադրում էին ներթափանցել նվազագույնը Անդրկովկաս, իսկ մյուս կողմից՝ հայ ժողովրդի ակնկալիքն էլ նրա օգնությամբ միգուցե ազատագրվել: Այս իմաստով, թերևս, միակ հիմնավոր եզրահանգումը հետևյալն է. XIX դարասկզբին դեպի Անդրկովկաս ու Հայաստան Ռուսաստանի նվաճողական ձգտումները (նկրտումները) օբյեկտիվորեն համընկնում էին թուրք-պարսկական դժնդակ բռնակալական տիրապետությունից Հայաստանի ու հայ ժողովրդի ազա-

տագրման բաղձանքներին: Սակայն այն ժամանակ տակավին պարզ չէր, թե արևելահայության ռուսական հովանու տակ անցնելը քաղաքական առումով ի՞նչ կարող էր տալ, ինչի՞ կարող էր հանգեցնել: Համենայն դեպս, մինչ այդ եղած պատմական փորձը ցույց էր տվել, որ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միակցումը կամ պարզապես Այսրկովկասի ու Արևելյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից, դրանից առաջ Ռուսական կայսրության կողմից նվաճված և նրա կայսրության մեջ մտած որևէ ազգային (էթնիկ)-տարածքային միավորի ինքնիշխանություն, առավել ևս՝ անկախություն չէր շնորհվել: Ռուսաց անցյալի պատմությունից միայն գիտենք, որ նման առանձնաշնորհումներից ամենաբարձրը եղել էր այն, որ քաղաքականապես ու կուլտուրապես առավել զարգացած Ֆինլանդիային ու Լեհաստանին ցարիզմի ժամանակաշրջանում տրվել էր ընդամենը որոշակի սահմանադրական ինքնավարություն՝ առաջինին Ռուսական կայսրի տիտղոսի մեջ մտնող Մեծ իշխանության կարգավիճակով, իսկ երկրորդինը՝ թագավորության, որոնք, իրենց հերթին, շատ կողմերով ձևական էին, դրա համար էլ այդ երկրներում հաճախակի գլուխ էին բարձրացնում ապստամբություններ:

Հասկանալի է, որ Անդրկովկաս ներթափանցած Ռուսաստանը, որքանով էլ որ անկեղծորեն ստանում էր հայ ժողովրդի համակրանքն ու բազմակողմանի աջակցությունը, բայց դրանք ամենևին էլ չէին կարող բավարար հիմք հանդիսանալ Հայաստանի ակնկալվելիք ազատագրության ու անկախության համար: Հետագայում, երբ Արևելյան Հայաստանը միակցվեց Ռուսական կայսրությանը, նվաճված այդ երկրամասը մեկ տասնամյակ վարչականորեն ստացավ, ինչպես ասվեց, «Հայկական մարզ» անվանումը և ընդամենը այդքան: Բայց մյուս կողմից, անուրանալի է և գնահատանքի է արժանի այն, որ այդ միացման հետևանքով, ցարիզմի մեծապետական-գաղութային քաղաքականությամբ հանդերձ, հայ ժողովրդի համար ստեղծվեց անհամեմատ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, ազգային-մշակութային ու հոգևոր ապահովություն ու հետագա առաջընթացի հնարավորություններ:

Բայց քաղաքական գնահատականի առումով, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման այն ժամանակների հայ աշխարհիկ ու

հոգևոր գործիչների ակնկալիքները չարդարացան: Դա այս կամ այն չափով շարունակվեց նաև հետագայում: Ռուսական ցարիզմի քաղաքականությունը շատ չափումներով **հիասթափեցնող** էր: Դա արձանագրված է ժամանակի փաստավավերագիր արխիվային նյութերում, փաստաթղթերի հարուստ ժողովածուներում, հուշագիր և գրական հեղինակների երկերում: Հասկանալիորեն ռուսական կառավարությունը հայ ժողովրդին չտվեց իր ակնկալած ինչ-որ կարգավիճակով անգամ ինքնավարություն: Ավելին, Հայաստանին ոչ միայն ինքնավարություն չտրվեց, այլև հետագայում՝ **1836 թ. մարտի 11-ին,** Նիկոլայ 1-ի ստորագրած «Հայոց եկեղեցու մասին» օտարոտի Կանոնադրությամբ՝ «**Պոլոժենիե**»-ով (**Կանոնադրությամբ**), ըստ էության, սահմանափակեց պետականությունից զուրկ հայ ժողովրդի քաղաքական հարցերում մինչ այդ տնօրինողի դերում հանդես եկող եկեղեցու իրավունքները՝ արգելելով Ամենայն Հայոց կաթողիկոսին զբաղվել քաղաքական հարցերով և այլն[52]: Կաթողիկոսը պիտի զբաղվեր միայն հոգևոր-կրոնական գործերով: «Կանոնադրությամբ» նորաստեղծ Բարձրագույն հոգևոր ատյանի՝ Սինոդի միջոցով վերահսկվում էր Հայոց հայրապետի և մյուս բարձրաստիճան հոգևորականների գործունեությունը: Արևմտա-

---

[52] 10 գլխից և 141 հոդվածներից կազմված «Պոլոժենիե»-ով էապես կրճատվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասությունները: Նրան արգելվում էր նախկինի նման զբաղվելու **ինքնուրույն** քաղաքականություն վարելու հնարավորությունից: Արտասահմանյան երկրների, այդ թվում դրսաշխարհի հայ համայնքի հետ կապված նրա յուրաքանչյուր քայլ պետք է համաձայնեցվեր ու թույլատրվեր ռուսական բարձրագույն իշխանությունների կողմից: Բացի այդ, նոր կանոնադրությամբ կաթողիկոսը ընտրվելու էր փաստորեն Ռուսական կայսրության հայ հոգևոր շրջանակների մասնակիցների՝ Էջմիածնի **Սինոդի** 8 անդամի, նույն միաբանության 7 ավագ անդամների և կայսրությունում առկա հայ 6 հոգևոր վիճակների (թեմերի) առաջնորդների կողմից՝ ռուսաց կայսեր վերջնական հաստատմամբ: Թեև դրսաշխարհի հայ հոգևոր կառույցներից յուրաքանչյուր թեմ կարող էր մեկ պատգամավորով մասնակցել ընտրություններին, սակայն զանազան հանգամանքների բերումով միշտ չէ, որ նրանք մասնակից էին լինում: Նման պարագայում հաճախ ստացվում էր, որ ազգընտիր Ծայրագույն Հովվապետը կարծես կորցնում էր «Ամենայն Հայոց»-ի հոգևոր ընդգրկման շրջանակն ու նշանակությունը: Հիշյալ կանոնադրությամբ, Ռուսական կայսրությունում Հայոց եկեղեցին փաստորեն **պետականացվեց** և ցարական կառավարությունը հաճախ միջամտում էր հայ եկեղեցու ներքին գործերին, կատարում նրա կալվածքների ու գույքի ապօրինի բռնագրավումներ, փակում հայ կրթօջախներ և այլն:

հայ պատմաբան Ա. Ալպոյաճյանի դիտարկմամբ՝ «**Պոլոժէնիէն** կը պարունակէ տրամադրութիւններ, որոնք հիմնովին հակառակ են հայ եկեղեցւոյ աւանդութիւններուն եւ դարերէ ի վեր նուիրագործուած սովորութիւններուն, եւ ասոր համար առհասարակ բոլոր ազգին կողմէ դիտուած է իբր օտարոտի կարգադրութիւն մը և միշտ դժգոհության եւ գանգատի տեղի տուած է»[53]: Ընդգծելի է, որ 1836 թ. «Կանոնադրությունը» առավել մեծ դժգոհություն էր առաջացրել արևմտահայ հոգևորականության մոտ, և նրանք անգամ առժամանակ հրաժարվել էին ճանաչել Հովհաննես VIII Կարբեցի կաթողիկոսի լիազորություններն ու պահանջները[54]: Այդ ամենով հանդերձ, ցարիզմը ցանկանում էր հայ եկեղեցու հեղինակությունը օգտագործել իր գերիշխանությունը հայ ժողովրդի շրջանում ամրապնդելու համար:

Հարկ է հիշեցնել, որ մինչ «Պոլոժենիե»-ի ընդունելը, ավելի վաղ՝ 1815 թ., Ռուսական կառավարության հրամանով լուծարվել էր Գանձասարի (Աղվանից) կաթողիկոսությունը և նրա փոխարեն հաստատվել մետրոպոլիտություն: Այդպիսով, փաստացի, 1828 թ. վերջին արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյանի մահով վերջ է տրվում Գանձասարի կաթողիկոսությանը, թեև այդ գործում նկատելի է եղել Ամենայն Հայոց Եփրեմ Ա Ձորագեղցի կաթողիկոսի և Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցու ոչ նպաստաբեր միջնորդական դերակատարությունը[55]:

Ցարիզմի մեծապետական գաղութային քաղաքականության արտահայտություն կարելի է համարել նաև այն, որ մինչև արևելահայ տարածքների Ռուսաստանի կողմից նվաճումը ինքնավարության որոշ տարրեր պարունակող Արցախի և Սյունիքի մելիքական տները արդեն XIX դարի սկզբներին կազմաքանդվեցին, իսկ այդ ազնվական տների ներկայացուցիչներից շատերն անցան պետական (զինվորական թե

---

[53] **Ալպոյաճեան Ա.**, *Հայ Եկեղեցիին Սահմանադրության հարցը*, էջ 3:

[54] Տե՛ս **Тунян В.**, *Пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии*, Ер., 2013, с. 239.

[55] Տե՛ս **Երիցեանց Ադ.**, *Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում*, մասն Ա, էջ 251–252, **Մաղալյան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 73, 142 և 146, նաև՝ *«Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան»*, Եր., 2002, էջ 568–569:

քաղաքացիական) ծառայության ռուսական իշխանություններին, և նրանցից տաղանդավոր զորավարների մի փաղանգ առաջացավ:

Հենց ցարական Ռուսաստանի ժամանակներում կազմված փաստավավերագիր նյութերը հավաստում են, որ ցարական իշխանությունները նորանվաճ տարածաշրջանում հետապնդում էին ոչ թե ինչ-որ մարդասիրական, ճնշված ազգերին ու քրիստոնյա ժողովուրդների ազատագրություն, այլ պարզապես նվաճված երկրամասերում մեծապետական-գաղութարարական նպատակներ: Այդպիսի փաստական մի օրինակ է Ռուսաստանի ֆինանսների նախարար կոմս Ն. Կանկրինի 1827 թ. ապրիլի 27-ին Բարձրագույն իշխանությանը ներկայացրած նախագիծը Անդրկովկասի վերաբերյալ: Դրանում, ի մասնավորի, կարդում ենք. «Не без основания, За-Кавказская провинции могут быть названы нашею **колониею**, которая должна приносить Государству весьма важныя выгоды»[56].

Ցարական Ռուսաստանի տարածաշրջանում գաղութարար քաղաքականության մի արտահայտություն ևս կարելի է համարել գեն.-ադյուտանտ, կոմս Ի. Պասկևիչ Էրիվանսկու 1829 թ. հունվարի 5-ի գրաֆ Նեսելրոդեին ներկայացրած գրություն-նախագիծը՝ Արաքսի ռուսական գրավյալ ափի երկարությամբ 20 հազար մալոռուս կազակ ընտանիք բնակեցնելու վերաբերյալ, որը սակայն, ինչ-ինչ պատճառներով չի իրագործվում և այլն[57]: Վերը բերված բազում փաստերից դժվար չէ հետևեցնել, որ ռուսական բարձր իշխանությունների մտքով երբևէ չի անցել նորանվաճ արևելահայ տարածքներին (երկրամասերին) քաղաքական, թեկուզ ինքնավարության աստիճանի ինչ-որ կարգավիճակ տալու մասին: XIX դարում տարածաշրջանում Ռուսաստանի քաղաքականության հիմնական նպատակն էր Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի ռազմապես նվաճումից հետո ձեռնամուխ լինել դրանց տնտեսական իրացմանը ու կայսրության մեջ ինտեգրմանը:

---

[56] *Обозрение российских владений За Кавказом, произведенное и изданное по Высочайшему соизволению.* Часть 1, Санкт-Петербург, 1836, с. 12.

[57] Տե՛ս АКАК, т. 7, Тифлис, 1876, с. 774–775.

## *3. Խ. Աբովյանը՝ իբև Հայրենիքի ու հայ ժողովրդի ազատագրության գաղափարաբան*

XIX դարի առաջին երեք տասնամյակներին Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ հասարակական-քաղաքական ու գրական շրջաններում հույսեր արթնացրեց ու աշխուժություն առաջ բերեց ժողովրդի իրական ազատագրության և դարեր առաջ կորսված հայոց պետականության վերականգնման ուղղությամբ: Անկախ հայ ժողովրդի հանդեպ ցարիզմի վարած սոցիալ-տնտեսական ու ազգային-հալածական քաղաքականության վայրիվերումների՝ նույն դարի 30-ական թվականներից մինչև 1880-ական թվականների կեսերը, այսինքն, մինչև հայ ազգային քաղաքական կուսակցությունների քաղաքական հրապարակ գալը հայ հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական ու հրապարակախոսական միտքը հայ հանրությանը մտահոգող բազում հարցերի ու խնդիրների կողքին չթուլացող գաղափարա-քաղաքական քննության նյութ է դարձրել քաղաքական իմաստով ավելի խորքային՝ Հայաստանի հետագա ճակատագրի՝ հայ ժողովրդի ու **հայ-հայրենիքի ազատագրության** և, վերջին հաշվով, **պետականության վերականգնման** հիմնահարցերը:

Պատմագիտական հետահայաց ասպեկտով հարկ է արձանագրել, որ խորհրդային-կոմունիստական 70 տարիների պատմաշրջանում ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների, այդ թվում նաև Հայաստանի ու հայ ժողովրդի անցյալի պատմության քաղաքական բնույթի մի շարք հիմնախնդիրների, այդ թվում՝ հասարակական-քաղաքական մտքի, պետականության գաղափարի, ազգային միավորների անկախության վերականգնման պատմությանը վերաբերող հարցերի գիտական ուսումնասիրությունը, եթե չասենք արգելված էր, ապա գոնե անցանկալի էր նման հարցերի մասին հրապարակավ խոսելը, գրելը, հրապարակումներ անելը, քանզի, ինչպես ամրագրված էր կուսակցական փաստաթղթերում ու պաշտոնական պատմագրության մեջ, որ իբր 1922 թ. ԽՍՀՄ կազմավորումով խորհրդային երկրում մեկընդմիշտ լուծված է ազգային հարցն ընդհանրապես, ուստի կարիք չկա, այսպես ասած, «քչփորել» պատմական անցյալը, ազգամիջյան հարաբերությունները: Իսկ իրա-

կանում, թե ինչպես էր լուծվել այդ հարցը, դրա մասին են վկայում վերջին ավելի քան երեք տասնամյակներում նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում ծավալվող ամենատարբեր ազգամիջյան վեճերը, բախումները, ընդհուպ մինչև լայնամասշտաբ պատերազմական գործողությունները:

* * *

XIX դարի առաջին կեսի հայ հասարակական-քաղաքական միտքն ու ազատագրական ձգտումները, հիրավի, անհնարին է պատկերացնել առանց հայ նոր գրականության հիմնադիր, «Վերք Հայաստանի» անմահ վեպի հեղինակ, ծնունդով քանաքեռցի **Խաչատուր Աբովյանի** (1809–1848 թթ.) կյանքի ու գործի: Առաջին հերթին նա դարձավ հայ կրթա-լուսավորչական շարժման մեծագույն դեմքը՝ իր թողած գրական բազմաժանր ու բազմաբովանդակ հոգեմտավոր վաստակով (ժառանգությամբ): Բացի այն, որ նա հայոց կենդանի աշխարհաբար լեզուն դարձրեց գրական լեզու[58], միաժամանակ առաջինը եղավ, որ հաջողված փորձ կատարեց հայոց կրթական համակարգը ուղղորդելու դեպի **եվրոպական** բարձր արժեքային անդաստան: Սա ոչ միայն զուտ գրական-կրթական արդիականացմանը ուղղված լուծելիք խնդիր էր, այլ իր խորքում ուներ ժողովրդի մտավոր, կրթալուսավորական հասունացման միջոցով ճանապարհ հարթելու դեպի ազգի սոցիալ-քաղաքական **ազատագրում** և, վերջին հաշվով, երազելիք **պետականության վերականգնում**: Այդ կապակցությամբ տեղին ու դիպուկ է նկատել ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը. «Աբովյանը հայ գրական նոր լեզվի խնդիրը կապում էր հայ ժողովրդի ազատագրական բաղձանքների իրագործման հեռանկարների, նրա ազգային-քաղաքական ինքնորոշման համար տարվելիք պայքարի հետ»[59]: Իսկ պատմաբան Գ. Խուդինյանի բնորոշմամբ, սկսյալ Աբովյանից՝ XIX լուսավորյալ դարում «ազգը կրթե-

---

[58] Ավելի լայն ու խորքային իմաստով, կարելի է համաձայնվել պրոֆ. Լեոյի այն դիտարկմանը, որ «աշխարհաբար լեզվի ստեղծողը հայ ժողովուրդն է» (տե՛ս **Լէօ,** *Ստեփանոս Նազարեանց,* հ. 1, 2, Թիֆլիս, 1902, էջ 148:

[59] **Հովհաննիսյան Ա.,** *Նալբանդյանը և նրա ժամանակը,* գ. 2, Եր., 1956, էջ 394:

լու, դաստիարակելու խնդիրը դուրս էր գալիս հոգեւոր ոլորտից եւ դառնում **ամենաքաղաքական** հարցը»[60]:

Խոսելով նոր դարաշրջանում ազգի կրթության և լուսավորության առաջնայնության մասին՝ հայ մեծ լուսավորիչը չէր մոռանում հիշեցնել նաև նախանցյալ դարերում այդ ուղղությամբ հայ եկեղեցու և հոգևորականության կատարած հսկայական ազգանվեր աշխատանքը: «Ազգը,- գրում էր նա իր «Ուղեգրություններում»,- հենց նրանց էլ (նկատի ուներ եկեղեցուն և հոգևորականությանը – Ա.Հ.) պարտական է թե՛ հավատի, թե՛ գրականության ու լեզվի, թե՛ ազգության պահպանմամբ, ինչպես և կրթության որոշ աստիճանով, ինչ վիճակում էլ որ դրանց այժմ տեսնենք»[61]:

Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին, և երկրամասը տարածականորեն անմիջապես կապվելով կայսրությանը, բնականաբար, պետք է իր անդրադարձն ունենար նաև հայ հասարակական-քաղաքական մտքի և, ի մասնավորի, Խ. Աբովյանի քաղաքական մտայնությունների (աշխարհայացքի) վրա: Ռուսաստանի ազատագրական-հեղափոխությունների առաջին փուլը սկզբնավորող 1825 թ. դեկաբրիստների ձախողված ապստամբության փորձն իր հետևանքներով, ռուսական տիրապետությունը թոթափելու և անկախության հասնելու նպատակով լեհերի 1830–31 թթ. հերթական, սակայն ցարական իշխանությունների կողմից դարձյալ դաժանորեն ճնշված ապստամբությունը, 1820-ական թվականների հույների ազատագրական պայքարն ու 1832 թ. Հունաստանի անկախանալը Թուրքիայից, Դորպատի համալսարանական ուսումնառությունը, և վերջապես գերմանացի առաջադեմ պրոֆեսոր Ֆ. Պարրոտի անշահախնդիր հովանավորությունը և այլն, անշուշտ, իրենց նպաստը պիտի բերեին երիտասարդ Աբովյանի, և ոչ միայն նրա, ազգային ինքնագիտակցության աճին ու գաղափարական-քաղաքական հետագա հասունացմանը, այլև հայրենիքի ազատագրության ուղիների փնտրտուքին:

---

[60] **Խուդինյան Գ.**, *Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը*, Եր., 2000, էջ 7:
[61] **Աբովյան Խ.**, *Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ)*, հ. 7, էջ 173:

Ըստ ամենայնի, բոլոր առումներով Հայաստանը ազատագրված տեսնելու ձգտումն է մեծ հայրենասերին մղել «Վերք Հայաստանի» պատմավեպի ստեղծմանը, հայոց կորսված պետականությունների, անցյալի մոռացության մատնված փառքի վերհիշման ու վերհանման ներքին, հոգևոր պահանջն ու անհրաժեշտությունը: Խ. Աբովյանը, իբրև հայ գրական մտքի նորարար, նախկինում գործածվող ժողովուրդ կամ երբեմն բարբառային՝ **խալխ** հասկացության փոխարեն քաղաքական իմաստով հրապարակ բերեց «**Հայոց մեծ ազգի**» հասկացություն-գաղափարը, և այդ մասին նա խոսում է վեպի գլխավոր հերոս «ջիվան որդի» Աղասու բերանով[62]: Իր հերոսների բերանով ազատաբաղձ մտքերի արտահայտումը պետք է դիտել որպես գրական հնարք, պաշտոնական գաղափարախոսությանն անցանկալի մտքերի ու ձգտումների արտահայտման միջոց: Դրա հետ մեկտեղ, հայ գրական-գեղարվեստական ու պատմագիտական գրականության մեջ հանրահայտ է Աբովյանի ռուսական կողմնորոշման ամենավառ ջատագովներից մեկը լինելու փաստը, և այն հիմնականում գեղարվեստորեն մարմնավորված է նրա վեպում կամ առաջին անգամ փաստորեն մեզանում պատմավեպ հանդիսացող այդ ստեղծագործությունում:

Խ. Աբովյանը Հայաստանի քաղաքական հետագա հեռանկարի մասին «Նախաշավիղ', փաստորեն դարձյալ առաջին այբբենարան հանդիսացող դասագրքում, երեխաներին սովորեցնել էր տալիս պատգամ հիշեցնող հետևյալ մտքերը. «Այժմ մենք Ռուսաց հզոր տերության տակին ենք: Նրա շնորհը և ողորմությունը մեզ վրա շատ է: Այսուհետև պետք է ջանք անենք, որ ավելի ևս **լուսավորվենք**, մեր **լեզուն**, մեր հայրենիքը պայծառացնենք: Թե էս սրտովը կշարժինք, շուտով էլի **մեր առաջի փառքին կհասնինք** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[63]: Պետք է տեսնել, որ նա որքան էլ որ գնահատանքի էր արժանացնում Ռուսաստանի խաղացած դերը, այնուամենայնիվ, նրա պատկերմամբ՝ օտարի հազարամյա քաղաքական լուծը, ստրկությունը թոթափելու գլխավոր ուժը վերջին հաշվով տեսնում էր սեփական ժողովրդի ազգային **ինքնագի-**

---

[62] **Աբովյան Խ.**, *ԵԼԺ*, հ. 3, Եր., 1948, էջ 6:
[63] Նույն տեղում, հ. 5, Եր., 1950, էջ 88:

**տակցության** զարթնեցման, **միաբանության**, **կրթության**, **լուսավորության**, գրաբարի հաղթահարման ու աշխարհականացման, աճող սերնդի դաստիարակության, **հայրենաճանաչության**, մտավոր հասունացման և համանման գաղափարների ու հոգևոր արժեքների արմատավորման ու իրացման մեջ: Հիշեցնենք, որ Աբովյանից դեռ 2,2 հազարամյակ առաջ հույն փիլիսոփա Պլատոնը, խոսելով պետական համակարգի զարգացման մասին, ընդգծում էր «ճշմարիտ կրթության ու դաստիարակության» կարևորությունը[64]:

Այդ գաղափարները հետագա զարգացումը պիտի ստանային ու քաղաքական նոր ինքնագիտակցության ու ծրագրերի հանգեցնեին արդեն դարի երկրորդ կեսում, հանձինս հայ հասարակական-քաղաքական հոսանքների, մասնավորապես, նրա մտքերի ու գործի, կարելի է ասել, անմիջական շարունակող ու զարգացնող Մ. Նալբանդյանի, Ստ. Նազարյանցի, Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու և մյուսների երկերում ու խոսույթներում, այնուհետև, հետագայում հայ ազգային քաղաքական կուսակցությունների ծրագրերում ու գործելակերպում:

Լեզվի աշխարհականացման աբովյանական սկսած հեղաբեկիչ գործը պետք է շարունակեին այդ նույն դարի 50–60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչները (ռահվիրաները): Նման հարցը ոչ թե զուտ լեզվական խնդիր էր, այլ դրանում կար հասարակական-քաղաքական հետագա զարգացումներից հետ չմնալու, հոգևոր մշակութային հետագա առաջընթացի ապահովման պահանջ: Փիլիսոփա-վերլուծաբան Ե. Ֆրանգյանի դիտարկմամբ՝ «Վէրք Հայաստանին» մի «ողբ» չէ միայն, այլև ազատ կեանքի մի հրաւէր, ազգային ինքնագիտակցութեան զարթնում, ազգային ինքնապաշտպանութեան մի շեփոր»[65]:

Աբովյանագետ Ն. Մուրադյանը, վերլուծելով «Վերք»-ի գաղափարական-գեղարվեստական էությունը, ընդգծում է, որ այն կառուցված է «նույն բարձրության վրա գտնվող երկու հիմնասյուների վրա՝ **ազգային ինքնագիտակցության արթնացման** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.) և Ռու-

---

[64] **Платон,** *նշվ. աշխ.*, գ. 2, էջ 264:

[65] **Ֆրանգեան Ե.,** *Հայ հասարակական միտքը (Խ. Աբովեան, Մ. Նազարեան, Մ. Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Խրիմեան Հայրիկ)*, Գահիրէ, 1928, էջ 41:

սաստանի նկատմամբ ունեցած բարեկամության»[66]: Գրականագետի դիտարկմամբ, Աբովյանի հերոսները՝ Աղասին, Ներսես արքեպիսկոպոսը, Մանուկ աղան և մյուսներն «այն կարծիքն ունեին, որ մի որոշ ժամանակ ռուսական տիրապետության տակ մնալուց, ծանր վերքերը բուժելուց ու կազդուրվելուց հետո կստեղծեին կամ կունենային իրենց **պետականությունը** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[67]: Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոս Աղասու հայրենասիրական մղումները պետք է դիտել որպես ազատագրված հայրենիքի գաղափարական հիմք:

Մյուս կողմից՝ հայտնի է նաև, որ ռուսական քաղաքական կողմնորոշման վառ ներկայացուցիչ, հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանը, ընթացս ռուսական կառավարության վարած ոչ հայանպաստ քաղաքականության, նաև իր անձի հանդեպ «հաշտ աչքով» չնայելը նկատի ունենալով, հետագայում որոշակի հիասթափություն ապրեց և նրա կյանքի վերջին շրջանում, ու ոչ միայն նրա, աշխարհայացքի ու քաղաքական կողմնորոշման հարցերում որոշակի փոխակերպում (տրանսֆորմացիա) տեղի ունեցավ: Այս կապակցությամբ ճիշտ է նկատել աբովյանագետ Վլ. Ղազարյանը, որ «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար առաջընթաց խոշոր երևույթ էր: Բայց ճաշակելով նաև ցարիզմի դառնությունները՝ Աբովյանը կյանքի վերջին շրջանում հիասթափվեց ու հասկացավ, որ Ռուսաստանին միացվելուց հետո էլ հայ ժողովուրդը չհասավ ո՛չ ազգային և ո՛չ էլ սոցիալ-քաղաքական ազատության»[68]: Մեծ քանաքեռցին, հավանաբար, ակնկալիք է ունեցել, որ հայ ժողովրդին Ռուսաստանին անկեղծ նվիրվածության դիմաց ցարը նրան ողորմածաբար ազատություն և անկախություն կտա, սակայն դա հայրենասեր գեղարվեստի մարդու զգացմունքային հույզեր ու հույսեր էին, որոնք չարդարացան ո՛չ նրա կենդանության օրոք, ո՛չ էլ հետագայում: Իսկ մեծ հայրենասերի 1848

---

[66] **Մուրադյան Ն.Հ.**, *«Վերք Հայաստանի» վեպի գաղափարական էությունը* (տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1972, թիվ 2, էջ 45:

[67] Նույն տեղում, էջ 46:

[68] **Ղազարյան Վ.Ղ.**, Խաչատուր Աբովյան (Հասարակական գործունեությունը), Եր., 1979, էջ 26:

թ. ապրիլի 2-ի **խորհրդավոր անհետացումն** ու գործնականում՝ **մահը**, ավելի շուտ և ավելի շատ կապվում է «խաչապաշտ» Ռուսաստանի վարած մեծապետական ազգային-գաղութային քաղաքականության հետ: Գաբրիել Լազյանը Խ. Աբովյանի խորհրդավոր անհետացումն ու մահը համարում է «առաջին մեծ զոհը ռուսական տիրապետութեան»[69]:

Շուրջ երկու դար առաջ տեղի ունեցածը դիտարկելով արդի իրողությունների՝ ՀՀ ռազմաքաղաքական դրության, հայ-ռուսական հարաբերությունների դիտակետից, Աբովյանի՝ ռուսին ու «խաչապաշտ» Ռուսաստանին ուղղված աղոթքի նմանվող մի շարք մտքեր ու արտահայտություններ, խոսույթներ, իհարկե, քննություն չեն բռնում մեր ժամանակներում, բայց և, առաջնորդվելով պատմականության սկզբունքով, դա կարելի է հասկանալ իր ժամանակի մեջ՝ քաղաքական շրջադարձի ու նոր կողմնորոշման համատեքստում:

Հայ հանրույթն իր հավաքականության մեջ, պատմական ճակատագրի բերումով, շարունակում է կառչած մնալ ռուսական արևելմանը՝ անգամ անկախության հրաժարման գնով: Եվ սա իրողություն է ոչ միայն մեկ դար առաջ, այլ նույնիսկ մեր ժամանակներում: Այս կապակցությամբ տեղին ենք համարում մեջբերել ազգային գործիչ **Հակոբ Սառիկյանի** հիշողություններում տեղ գտած Խ. Աբովյանի «Վերք»-ի խոսքուռճին նմանվող ղազախցի (իջևանցի) գեղջուկ ոմն Բեգիանց Խաչատուրի խոսքից մի պատառիկ. «Թող մնել (մեկ ել) ռուսի գա, նրա վոտին մատաղ, թող թակի, սպանի, տուն գցի, ուշունց տա, հեր ու մեր քաշի, միայն թե էս զուլումից մեզ ազատի...»[70]: Հասարակ գեղջուկի կողմից հնչեցրած այս խոսքերը ինքնին վկայում են մտահոգիչ շատ բանի և առաջին հերթին նրա մասին, որ սեփական ոտքերի վրա կանգնելու, պաշտպանել ու ինքնապաշտպանվել կարողանալու, հայրենի ազատությունն ու անկախությունը կերտելու համար տակավին հսկայական գաղափարական ու քաղաքական քարոզչական աշխատանք ու մարդկանց ինքնագիտակցության ու մտածելակերպի փոփոխություն, սոցիալ-հոգեբանական կարծրատիպերի հաղթահարում պի-

---

[69] **Լազեան Գ.**, *նշվ. աշխ.*, էջ 16:
[70] **Սառիկյան Հ.**, *Հիշողություններ 1878–1924*, Եր., 2015, էջ 389–390:

տի կատարվի, մինչև որ, ի վերջո, հնարավոր լինի ազգովի հասնել սեփական ինքնիշխան ազգային պետականության ու անկախության գաղափարի նյութականացմանը:

Այսպիսով, հայ մեծ լուսավորիչ ու գրական մտքի նորարար Խ. Աբովյանը, 19-րդ առաջին դարակեսի պատմաշրջանում ժառանգելով, հաշվառելով ու շարունակելով հայոց անցյալի պատմական մտքի, հոգևոր և աշխարհիկ գործիչների ստեղծած հոգեմտավոր վաստակը, նրանց ազատաբաղձ ոգորումներն ու ձգտումները, նաև իր անհատական մեծ տաղանդը,նոր պայմաններում շրջադարձային դեր պիտի խաղային ոչ միայն աշխարհաբարը գրական լեզու դարձնելու, կրթալուսավորության և հոգևոր-մշակութային առաջընթացի, հայոց կրթական համակարգը դեպի եվրոպական արժեքային խողովակը ուղղորդելու, այլև իր հայրենանվեր ստեղծագործություններով, առաջին հերթին անմահ «Վերք Հայաստանի»-ով, թափած ճիգուջանքով մեծապես նպաստեին հայ հանրության մեջ ազգային **ինքնագիտակցության** արթնացման և, ի վերջո, հայ-հայրենիքի **ազատագրման** և **պետականության վերականգնման** գաղափարի ամրակայմանը: Նրա ցանած հոգեմտավոր գաղափարական սերմերը պիտի շարունակեին աճեցնել ու հասունացնել աբովյանական մտքի, խոսքի ու գործի հետագա արժանավոր ժառանգորդները՝ Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանցը, Ռ. Պատկանյանը, Րաֆֆին և մյուսները:

## *4. Հայ ազատագրական գաղափարաբանությունը XIX դարի 50–60-ական թվականներին: Մ. Նալբանդյանը և նրա ժամանակը*

XIX դարի 50–60-ական թվականներին, արտաքին ու ներքին ազդակներով պայմանավորված, հայրենիքի ազատագրության ու անկախության գաղափարները պետք է ավելի ու ավելի պարարտ հող գտնեին ու առավել առարկայական բնույթ ստանային: Այդ շրջանից թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ իրականության մեջ շարունակում են արմատավորվել եվրոպական արժեքային համակարգի տարրեր, այդ

թվում՝ ֆրանսիական Մեծ հեղափոխության (1789–1793 թթ.) հռչակած ազատության, հավասարության, ժողովրդավարության, եղբայրության սկզբունքները: Եվրոպական բազում երկրներում ծավալվում էին ազգային-ազատագրական շարժումներ, որոնք հայ ինտելեկտուալ շրջանակներին մտավոր և հոգևոր խորհելու նյութ էին տալիս՝ արծարծելու հայրենաբաղձության, ազգային ու հայրենասիրության թեմաներով խնդիրներ: Եվ այդ ճանապարհին հայ առաքելական եկեղեցու կողմից դարերով քարոզվող ու արմատացած՝ հպատակվելու և հնազանդվելու ասիականացված մտայնությանը աստիճանաբար փոխարինելու էր գալիս «**ազատության տեսլականը**»[71]:

Դարակեսերից հայ գրական, հասարակական-քաղաքական, գաղափարական շրջանակներին հաջողվում է կրոնական համայնքի մտածելակերպից ավելի ու ավելի անցում կատարել եվրոպական քաղաքական-գաղափարական ու մշակութային ազգերին բնորոշ արժեհամակարգին, ինչը գրական-գեղարվեստական, գեղագիտական և այլ ձևերով ու արտահայտչամիջոցներով մարմնավորում էին գտնում (ստանում) իրենց երկերում, ստեղծագործություններում, մամուլում, հրապարակախոսության մեջ և այլուր: Ամենից առաջ **երկատված** հայրենիքի, ճնշված ու հարստագարված ազգի ազատագրության գաղափարները պետք է դառնային հայ առաջադեմ մտքի գլխավոր նպատակն ու շարժիչ ուժը: Առաջնային պլանում է կանգնում **ազգի** ու **հայրենիքի** գաղափարների միասնացման խնդիրը, որը պիտի տաներ հող-հայրենիքի ազատագրմանը և պետականության վերականգնմանը:

Այս առումով, XIX դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման յուրօրինակ գաղափարաբանները դարձան **Հայր Ղ. Ալիշանը**, **Մ. Նալբանդյանը**, **Ստ. Նազարյանցը**, **Ռ. Պատկանյանը**, **Ս. Շահազիզյանը**, **Ռաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյանը)**, **Գր. Արծրունին**, **Մ. Խրիմյանը**, **Մ. Պեշիկթաշլյանը**, **Ծերենցը (Հովսեփ Շիշմանյանը)**, **Ա. Թոխմախյանը** և շատ ուրիշներ: Պատմագիտական քննության առումով նշենք, որ նրանց գիտական, գաղափարաքաղաքական, գրական-գեղարվեստա-

---

[71] **Խուդինյան Գ.**, *Հ.Յ. Դաշնակցության ծնունդը*, էջ 7:

կան, լրագրական-հրապարակախոսական և այլ մտահոգևոր բնույթի ժառանգության հիմքերի վրա պիտի որ նոր թափ ստանար հայրենիքի ազատության ու անկախության համար շարժման ու պայքարի տեսլականը: Ի մասնավորի, ՀՅԴ պատմագիր ու գաղափարախոս Մ. Վարանդյանի բնութագրմամբ՝ «Վարագավանքի ըմբոստ մարգարե» Մկրտիչ վարդապետ Խրիմյանի խմբագրած «Արծուի Վասպուրականի» պարբերականը «գուցե միակ հեղափոխական իրողությունն էր հայկական հորիզոններում, եզակի օրգանը հայրենիքում, որ նրա անհամար փլատակները ողբալով հանդերձ՝ կռվի, ըմբոստացման հրավեր էր կարդում նոր սերունդին»[72]: Նույն գաղափարաբան Մ. Վարանդյանը, խոսելով հայկական քաղաքական շարժման պատմության **ակունքների** մասին, արդեն XIX դարում՝ սուլթանական արհավիրքի շրջանում, դարձյալ Հայր Ալիշանին և «Արծուի Վասպուրական»-ի հեղինակներին էր համարում հայկական «ընդվզումի և ազատութեան հոյատիպ շեփորողները»[73]: Այնուհետև, վերջիններիս ստեղծագործությունների թվին նա հավելում էր Մ. Խրիմյանի աշակերտներ Գ. Սրվանձտյանի՝ «Արծուիկ Տարոնոյ», Ա. Թոխմախյանի, Ս. Տևկանցի գրվածքները, Ն. Ռուսինյանի, Մ. Նալբանդյանի, Մ. Պեշիկթաշլյանի հայրենաշունչ գեղագիտական տաղերը և այլն[74]: Իսկ հայ հասարակական-քաղաքական մտքի անվանի գործիչ, պատմաբան Դավիթ Անանունի պատկերմամբ, XIX դարի հայ հասարակական-քաղաքական մտքի ականավոր դեմքերը, ինչ հասարակական դավանանքի էլ որ պատկանելիս լինեին, խորհել են հայության հավաքման, նրա կազմակերպված գոյության անհրաժեշտության մասին՝ սկսած Խ. Աբովյանից, Ստ. Նազարյանցից, Մ. Նալբանդյանից մինչև Ռ. Պատկանյան, Գր. Արծրունի, Ռաֆֆի և մյուսները[75]:

---

[72] Տե՛ս **Վարանդեան Մ.**, *Հայկական շարժման նախապատմութիւնը*, հ. Ա, Ժընեւ, 1912, էջ 203:

[73] Նույն տեղում, էջ 278:

[74] Տե՛ս **Վարանդեան Մ.**, *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն*, Պարիզ, 1932, էջ 12:

[75] Տե՛ս **Անանուն Դ.**, *Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870–1900)*, հ. 2, Էջմիածին, 1922, էջ 171:

Հիրավի, XIX դարի կեսերից, բացի Եվրոպայից, նաև Ռուսաստանում և աշխարհի այլ հատվածներում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, հեղափոխական բնույթի լուրջ տեղաշարժերն ու փոփոխությունները պիտի իրենց արտացոլանքը գտնեին հայ հասարակական մտքի ու ազատագրական գաղափարաբանության վրա: Հայ հասարակական-քաղաքական մտքի վրա ներազդման առումով առավել ընդգծելի էին 1861 թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումը, դրան ուղեկից նույն ռուսաց կայսր Ալեքսանդր II-ի առաջադիմական բազում բարեփոխումները (ռեֆորմները): Դրան պետք է հավելել լեհերի հերթական՝ 1863թ. ազատագրական ձախողված ապստամբությունը ռուսական գերիշխանության դեմ, իբրև արտաքին գործոն, ֆրանսիական Մեծ հեղափոխությունից հետո ոգեշնչված 1848–1849 թթ. արևմտաեվրոպական մի շարք երկրներում տեղի ունեցած ազատագրական հեղաբեկումների նոր՝ երկրորդ ալիքը, այդ թվում նաև իտալական ազգային-ազատագրական գաղափարաբաններն ու շարժումները, հանձինս դրանց առաջնորդներ՝ իտալացի մեծ գործիչներ Ջ. Մացցինիի, Ջ. Գարիբալդիի, Կ. Կավուրի, Լեհաստանում՝ բանաստեղծ Ադամ Միցկևիչի և այլոց, 1861–1865 թթ. քաղաքացիական արյունալի պատերազմը ԱՄՆ-ում և այլն:

Ի մասնավորի, XIX դարի կեսերին (40–60-ական թթ.) Արևմտյան Եվրոպայում ծավալում ստացած ազատագրական-հեղափոխական գաղափարախոսության ու շարժումների ազդեցության տակ, իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Ջ. Մացցինիի կողմից հիմնված «Մանուկ կամ Երիտասարդ Իտալիա» կազմակերպության օրինակով ու նմանությամբ հայ իրականության մեջ նման դրսևորում-արձագանքներից մեկը հանդիսացավ «**Մանուկ Հայաստան**» առաջին գաղտնի քաղաքական-հեղափոխական կազմակերպության ստեղծումը, որի հիմնադիր անդամներն էին Կ. Եզյանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Ստ. Նազարյանցը, Սմբ. Շահազիսը (Շահազիսյանց), Ստ. Ոսկանյանը (Ոսկան), Պետրոս Շանշյանը և ուրիշներ: Նրանք հույսեր էին փայփայում, որ մի օր էլ Իտալիայի նմանությամբ կազատագրվի ու կմիավորվի նաև Հայաստանը: «Մանուկ

Հայաստանի» անդամներն իրենց որդեգրած գաղափարները կյանքի կոչելու նպատակով փորձել են դիմել գործնական քայլերի: Եվ դրա դրսևորումներից մեկը կարելի է համարել 1862 թ. ամռանը (հուլիս-օգոստոսի) Զեյթունի հուժկու ապստամբությունը: Եվ հայտնի է, որ այդ գործի առնչակիցներից էր նաև Մ. Նալբանդյանը[76]:

Ազգային գաղափարաբանության առումով, Նալբանդյանի կյանքի ու գործերի ամենահիմնարար կենսագրող, վերլուծող ու մեկնաբանող ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը շատ արգասավոր է համարում այդ շրջանում փաստորեն առաջին ամենաճանաչված հայ հեղափոխական-դեմոկրատ (ժողովրդավար) Նալբանդյանի կապերն ու կենդանի շփումները 1839 թ. օսմանյան Թուրքիայում սկիզբ առած «Թանզիմաթի» (բարեփոխումների) ժամանակաշրջանում (1839–1876 թթ.) եվրոպական բարձր կրթություն ստացած արևմտահայության սերուցքը հանդիսացող պոլսահայ ժողովրդավար մտավորականներ՝ Ն. Ռուսինյանի, Գր. Օտյանի, Ն. Պալյանի, Ս.Վիչենյան (Սերվիչեն) և մյուսների հետ հասարակական-քաղաքական բնույթի ազգաշահ բազում խնդիրների շուրջ: Այդ մասին խոսք կլինի աշխատության հաջորդ գլխում: Դրանք հետագայում շարժառիթ դարձան նրա շատ հայտնի երկու գործերի՝ «Երկու տող» պամֆլետի և «Երկրագործությունը որպես ոտիղ ճանապարհ» աշխատության համար[77]:

Վերստին դառնալով բուն նյութին, ընդգծենք, որ հայ հասարակական-քաղաքական մտքի ու հասարակական հոսանքների ձևավորման առումով, այդ նույն 19-րդ դարի 50–60-ական թվականները, իրավամբ, համարվում են ջրբաժան սահմանագիծ: Արևմտահայ գրող, բանասեր Թեոդիկը (Թեոդոս Լապճինճյան) 1860-ական թվականները գնահա-

---

[76] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Լեո,** *«Մանուկ Հայաստան»* («Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1990, թիվ 3 (88), էջ 7–9, 26–27: Պրոֆ. Լեոյի գործնականում այս վերջին՝ 1932 թ. աշխատությունը ձեռագիր վիճակում առաջին անգամ ծանոթագրվել ու հրատարակության է ներկայացվել պատմաբան Հրայր Ասմարյանի կողմից՝ նշված արխիվային փաստաթղթերի ժողովածուի երկու համարներում՝ 1990 թ. թիվ 3, էջ 6–67 և 1991 թ. թիվ 3, էջ 4–41:

[77] Տե՛ս **Նալբանդյան Մ.,** *ԵԼԺ,* հ. 4, էջ 9–99, նաև՝ **Հովհաննիսյան Ա.,** *Նալբանդյանը և նրա ժամանակը,* գ. 1, Եր., 1955, էջ 331:

տում էր որպես «հայ վերածնության երախայրիք»[78]: Հարկ է նկատել, որ եթե ուշ միջնադարում և նոր դարաշրջանի սկզբում հայ առաջադեմ քաղաքական միտքը հայրենիքի ու ժողովրդի ազատագրության ու պետականության վերականգնման գաղափարը (տեսլականը) հիմնականում կապում էր հայ եկեղեցու և նրա հոգևոր հայրերի գործունեության ու թափած ջանքերի հետ, ապա XIX դարի կեսերից հայ հասարակական-քաղաքական՝ թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ միտքը, ավելի առարկայորեն շերտավորվելով, հանդես եկավ հիմնականում երեք հոսանքի՝ **պահպանողական** (կոնսերվատիվ) իր երկու ենթաթևերով՝ կղերա-պահպանողական ու ազգային-պահպանողական, **ազատամիտ** (լիբերալ) ևս երկու ենթաթևերով՝ ազգային-ազատական և ազատական-ժողովրդավարական (բուրժուական որակված) և **հեղափոխական-դեմոկրատական** ուղղությունների ձևով: Դրանց ներկայացուցիչները, բնականաբար, արտահայտել են իրենց մոտեցումներն ու քաղաքական դիրքորոշումները հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտների, այդ թվում նաև Հայաստանի ազատագրության ուղիների հարցում:

Անժխտելի է, որ հայ իրականության մեջ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի հիմնադիրը համարվում է Մ. Նալբանդյանը: Պատմագիտական գրականության մեջ տեսակետ կա նաև, որ հեղափոխական հոսանքը հայ իրականության մեջ ավելի հաճախ ներկայացվում է որպես **օտարամուտ** (դրսից ներմուծված), ինչը բացառապես կապվում է Մ. Նալբանդյանի անձի (կյանքի ու գործունեության) հետ, ով գաղափարապես մեծ չափով ներազդվել էր Ռուսաստանը «**կացնի**» կոչող ռուս վտարանդի հեղափոխական-նարոդնիկ մտածողներ Միխ. Բակունինից, Ալ. Գերցենից, Նիկ. Օգարյովից և մյուսներից: Մ. Նալբանդյանը, կապված լինելով ռուս առաջադեմ հեղափոխական գաղափարաբանների հետ, սոցիալ-դասակարգային բովանդակությամբ հայ ժողովրդի ազգային ազատագրության խնդիրը նա մեծապես կապում էր Ռուսաստանի սոցիալ-քաղաքական զարգացման հետագա ուղու

---

[78] **Աղանալյան Մ.**, *Թեոդիկի «Ամենուն տարեցոյց» (1907–1929 թթ.)*, Եր., 1981, էջ 79:

հետ՝ հատուկ շեշտելով այն միտքը, թե «Ռուսիոյ ազատութիւնը, ընդհանուր մարդկութեան պատմութեան վերաբերութեամբ, մե՛ծ խորհուրդ ունի»[79]: Հիշենք նաև, որ խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ, զուտ դասակարգային ու քաղաքական բովանդակությամբ գոյություն է ունեցել, այսպես կոչված, երկու Ռուսաստանի՝ **իշխող**-հարստահարողների և **իշխվող**-աշխատավորների մասին լենինյան կոչված եզրույթը:

Ինչ վերաբերում է պահպանողական որակված հոսանքին, ապա խորհրդահայ պատմագրության մեջ, գաղափարական-քաղաքական հանգամանքներով պայմանավորված, դրա թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ շրջանակներին տրվել են ավելի հաճախ ոչ արդարացի (իրավացի) գաղափարայնացած ու քաղաքականացված մեկնաբանություն ու գնահատական: Մինչդեռ, անուրանալի է ազգային-հոգևոր շատ արժեքներ կրող ու փոխանցող պահպանողական որակված այդ հոսանքի կառույցների ու ներկայացուցիչների խաղացած նշանակալի դերը հայ հասարակական-քաղաքական մտքի, գիտակրթական-լուսավորական, հրատարակչական, բարեգործական և այլ բնագավառներում: Մասնավորապես, դրվատանքի է արժանի, ինչպես արդեն ակնարկվել է, XVIII դարի սկզբներից իր բեղուն գործունեությունը ծավալած Մխիթար վրդ. Սեբաստացու հիմնած Վենետիկի և ապա Վիեննայի **Մխիթարյանների միաբանությունը**: Հավանաբար պատահական չէ, որ Լեոն XVIII դարը համարում էր Մխիթարյանների դար[80]: Իսկ «Ս. Ղազարի կղզին՝ արդէն աստղի պէս փայլում էր հայկական սև հորիզոնի վրա»[81]:

XIX դարում ևս Մխիթարյան միաբանության հայրերը, հայագետ-պատմագիրների երկերը, նրա գրական դեմքերի ազգային-հայրենաշունչ բանաստեղծություններն իրենց անուրանալի նպաստն էին բերում հայ ազգային ինքնագիտակցության զարթոնքին ու հասունացմանը: Վենետիկի Միաբանության ճանաչված անդամ, ականավոր պատմաբան ու բանասեր **Ղուկաս վրդ. Ինճիճյանը** (1758–1833) իր աշխատութ-

---

[79] **Նալբանդյան Մ.**, *Յեղկերի լիակատար ժողովածու*, հ. 3, Յեր., 1940, էջ 61:
[80] Տե՛ս **Լեո**, *Հայոց պատմություն*, հ. 3, էջ 984:
[81] **Լէօ**, *Ստեփանոս Նազարեանց*, էջ 5:

յուններում, այդ թվում՝ «Դարապատում» և «Ազգասեր», ինչպես նաև իր խմբագրած պարբերականներում, նապալեոնյան դարաշրջանի եվրոպական նվաճված երկրների ազգային-ազատագրական շարժումների հենքի վրա (օրինակով), արծարծում էին հայությանը միտված՝ հայրենասիրական և ազգասիրական թեմաներով խնդիրներ: Հայագետ Ղ. Ինճիճյանը իտալացիների մղած ազատագրական պայքարը ֆրանսիական և ավստրիական բռնատիրությունների դեմ համարում էր ուղենիշ հայության համար՝ օսմանյան լուծը թոթափելու իմաստով: Նա խոսում էր ազգային միաբանության, համախմբվածության և հայրենասիրության մասին հարցադրումներով, բայց մյուս կողմից՝ իր պահպանողական ընկալումների դիտակետից լավատես չէր, թե հնարավոր կլինի «Մեր ազգին մէջ եղբայրասիրութիւն եւ ազգասիրութիւն խոթել»[82]: Մխիթարյան միաբանության երևելի դեմքերից էր նաև պատմաբան **Հովսեփ Գաթըրճյանը** (1820–1882 թթ.): Առանձնապես նշելի է նրա երկհատոր «Տիեզերական պատմութիւն»-ը, որում նա՝ առաջիններից մեկը, փորձեց հայոց պատմությունը ներկայացնել համաշխարհային պատմության համատեքստում՝ կատարելով հայոց պատմության պարբերացում, հիմնավորելով հայ ժողովրդի հնդեվրոպական ծագումնաբանությունը և այլն, որոնք ևս հայ հասարակական-քաղաքական մտքի հասունացմանը իրենց նպաստը պիտի բերեին: Եվ վերջապես Ս. Ղազարի միաբանության դրվատանքի արժանի դեմքերից է բանաստեղծ, բանասեր, փիլիսոփա **Արսեն Բագրատունին** (1790–1866 թթ.)՝ ի մասնավորի «Հայկ Դիւցազն» պոեմով, որում հայրենիքի ազատության համար մարտնչող Հայկը ներկայանում է իբրև պատմական դեմք և այլն:

Որ Ս. Ղազարի Մխիթարյան միաբանությունը միայն հայ կաթոլիկների հոգևոր հաստատություն չի եղել, երևում է նրանից, որ Իտալիայի նապոլեոնյան տիրապետության տարիներին, երբ Վենետիկը ևս ենթարկվեց հարստահարումների, նյութական ու մշակութի արժեքների կողոպուտի, սակայն ի զարմանս կարելի է հաճելիորեն փաստել, որ Ս. Ղազարի միաբանությունը ոչ միայն չտուժեց, այլև 1810 թ. կայսերական հրամանագրով Ս. Ղազարի Մայրավանքը ճանաչվեց ոչ թե կրոնական,

---

[82] **Ղուկաս վրդ. Ինճիճեան,** *Ազգատէր,* Վենետիկ, 1815, էջ 77:

այլ **ուսումնական հաստատություն**[83]: Սա ինքնին վկայում է Միաբանության ամենից առաջ բարձր կրթագիտական հաստատություն լինելու մասին: Այս կապակցությամբ Լեոն նկատել է տալիս, որ չնայած կաթոլիկական միտումներին, Մխիթարյանները մտավոր գերազանցություն ունեին արևելահայ (ռուսահայ) շրջանակների նկատմամբ[84]: Իսկ ականավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցը Մխիթարյանների Ակադեմիայի երևան գալը համարում էր «հայոց մտաւոր կեանքի ամենանշանաւոր դէպքը»[85]: Եվ դրա հետ մեկտեղ, չի կարելի ասել, թե Միաբանության հոգևոր, գրական, բանասեր, պատմագիր ներկայացուցիչները մտահոգ չեն եղել հայրենիքի ազատագրության խնդիրներով, ինչին տասնամյակներ շարունակ կղերապահպանողականի կարգախոսով միակողմանի և անարդարացի կերպով տուրք է տրվել մեր պատմագիտական ու գրական շրջանակներում:

* * *

Վերստին դառնալով հայ հասարակական-քաղաքական հոսանքների քննությանը՝ էապես կարևորվում են դրանց քաղաքական դիրքորոշումների (**օրիենտացիայի**) բացահայտումը (պարզաբանումը) Հայաստանի ազատագրության ուղիների հարցում: Հայ հասարակական-քաղաքական մտքում, իբրև առանձին ինքնուրույն հոսանք, ներկայանում է հեղափոխական-դեմոկրատական (ժողովրդավարական) թևը, որը, առաջ քաշելով ու պաշտպանելով ազատական ժողովրդավարական արժեքներ՝ սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու իրավական կյանքի բոլոր ոլորտներում, դրանց լուծումը տեսնում էր հեղափոխական բարեփոխումների և ընդհուպ արմատական հեղաբեկումների (հեղափոխության) միջոցով:

Ինքնին հասկանալի է, որ այդ ամենը առաջին հերթին վերաբերում էր օտարի գերիշխանության ու ճնշման տակ գտնվող հայ-հայրենիքի ու ժողովրդի ազատությանն ու անկախության հասնելու ձգտմանը: Եվ այդ իմաստով, ինչպես արդեն ասվել է, XIX դարակեսերի հայ իրականութ-

---

[83] Տե՛ս **Ղէքիեան Լ.**, *Վենետիկ եւ հայերը*, Վենետիկ, 1990, էջ 110:
[84] **Լէօ**, *Ստեփանոս Նազարեանց*, էջ 22:
[85] Նույն տեղում, էջ 133:

յան մեջ այդ գաղափարների հիմնական կրողներից մեկը դարձավ հայ հասարակական-քաղաքական ու գրական-հրապարակախոսական կյանքի ամենավառ աստղերից մեկը՝ հայի ու նրա հայրենիքի ազատության ու ազատագրության մեծագույն երգիչ (ռահվիրա) **Միքայել Նալբանդյանը** (1829–1866 թթ), հանձինս՝ նրա հայրենաբաղձ ոտանավորներով (քառյակներով) ու հրապարակախոսությամբ, ազգօգուտ ուղևորություններով, մյուս երկերով և այլ ստեղծագործություններով:

1859 թ. նա հրապարակ բերեց Աբովյանից ժառանգած՝ **ազգի** ազատությանը նվիրված ոգեշունչ ոտանավորների շարք՝ «Ապոլլոնին», «Ազատություն», «Իտալացի աղջկա երգը», «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը» և այլն: Նալբանդյանագետ, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը նկատել է տալիս, որ այդ երկերը, բացի իրենց գրական-գեղարվեստական արժեքից, նպաստում էին հայերի ազգային ինքնագիտակցության հասունացմանը»[86]: Սակայն, ըստ Ա. Հովհաննիսյանի (իհարկե, չանտեսելով պատմաբանի ապրած խորհրդային գաղափարայնացած ժամանակաշրջանը), ի տարբերություն Աբովյանի, Նալբանդյանը՝ իբրև հեղափոխական-դեմոկրատ, հաճախ **ազգ** հասկացության տակ դնելով սոցիալ-դասակարգային բովանդակություն, նկատի էր առնում առաջին հերթին ճնշված ու հարստահարված «հասարակ ժողովրդին»[87], ինչը արդի ընդունելի գաղափարաքաղաքական չափոններով վիճարկելի է: Նկատենք նաև, նախկինում մեզանում գաղափարական որոշ հավասարակշռություն ստեղծելու նպատակով, արևմտահայ իրականության մեջ Մ. Նալբանդյանի հայացքների համախոհ է դուրս բերված Հարություն Սվաճյանը՝ իր «Մեղու» պարբերականով, Կ. Պոլսի «Հայկական բարեգործական ընկերության» ղեկավարներից Ս. Թագավորյանը և էլի ուրիշներ: Այս նույն համատեքստում, խորհրդահայ մեկ ուրիշ նալբանդյանագետ Սերգեյ Դարոնյանը գտնում էր, որ Մ. Նալբանդյանի գաղափարական հետագա էվոլյուցիան հանգեցրեց նրան, որ եթե նախկինում նա հայ ժողովրդի փրկությունը տեսնում էր աբովյանական **լուսավորության** մեջ, ապա 1850-ական թվա-

---

[86] **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 1, էջ 281:
[87] Նույն տեղում, գ. 2, էջ 232:

կանների վերջերից իր ազատաբաղձ ստեղծագործություններում հեղափոխական պաթոսով պատգամում էր ժողովրդի՝ **պայքարի** ճանապարհով փրկության մասին[88]:

Այդ ամենով հանդերձ, հայ ազատագրական շարժման ու պայքարի ստեղծագործ, արարող ոգու, իսկ հետո նաև պետականության հոգևոր կերտման գործում դարձյալ մեծապես պարտական ենք ազատության մեծ երգիչ Նալբանդյանին, ի մասնավորի՝ 1861 թ. մեզ պարգևած հայրենաշունչ «Մեր Հայրենիք»-ի, նրա կողմից մեզ պատգամած Հայոց պետական **դրոշի** և **օրհներգի** խորհրդանիշների: Խորհրդային գրականագիտության ու պատմագրության մեջ հեղափոխական-դեմոկրատ որակված Նալբանդյանը, լավագույն նալբանդյանագետ դարձյալ Ա. Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ բարձրացնում էր ազգի **սոցիալական** և **քաղաքական** ազատագրման խնդիրներ: Արդի պատմագիտության պահանջների տեսակետից, հավանաբար, առաջինը պետք է նշվեր **քաղաքական** ազատագրությունը, որին, բնականաբար, կհաջորդեր՝ **սոցիալականը**:

Մ. Նալբանդյանը շարունակելով լեզվի, կրթության, լուսավորության, աշխարհաբարի մասին աբովյանական ավանդները՝ իբրև ազգակերտման միջոց ու լեզվաշինարարության հետագա զարգացում, հարց էր բարձրացնում հայոց լեզվի երկու գլխավոր՝ արևելահայերենի (**արարատյան**) ու արևմտահայերենի՝ (**Կ. Պոլսի**) բարբառների, ինչպես նաև գավառական բարբառների միաձուլումից (սինթեզից) ստեղծել մեկ **միասնական համազգային գրական լեզու**[89]: Սակայն, պետք է նկատել, որ քաղաքականապես մասնատված հայրենիքում ու աշխարհասփյուռ հայության պայմաններում նման գաղափարը դժվար իրագործելի էր: Դա միգուցե հնարավոր կարող էր լինել կյանքի կոչել միայն Հայոց միասնական պետականության, համազգային հոգեմտավոր համախմբման (կոնսոլիդացման) պայմաններում:

Ազգային-պետականության գաղափարի հետ կապված, իբրև յուրահատուկ արտահայտություն, կարելի է մատնանշել «Հիահսափայլ»

---

[88] Տե՛ս **Դարոնյան Ս.**, *Միքայել Նալբանդյան*, Եր., 1979, էջ 295:
[89] Տե՛ս **Նալբանդյան Մ.**, *Յերկերի լիակատար ժողովածու*, հ. 3, էջ 338–339:

հանդեսի 1962 թ. մայիսի համարում Մ. Նալբանդյանի զետեղված «Յայտարարութիւնը»: Դրանում, իբրև Ի. Օրու և Շ. Շահամիրյանի ազգանվեր գաղափարների շարունակող, նա հանդես եկավ մի նախաձեռնությամբ՝ կազմել տալու և հրատարակելու Հին Հայաստանի աշխարհագրական մեծադիր **քարտեզը**: Մ. Նալբանդյանը իր բարոյական պարտքն էր համարում մայրենիով հրատարակել «մեր սիրելի աշխարհի քարտը (քարտեզը – Ա.Հ.) ախորժելի կերպարանքով»[90]: Նրա ծրագրմամբ այն պիտի գծագրվեր, այնուհետև փորագրվեր պղնձե տախտակների վրա, իսկ վերջում տպագրվեր Ռուսաստանի զինվորական նախարարության շտաբի տեղագրական բաժնում: Մ. Նալբանդյանի պատկերացմամբ քարտեզը պիտի բաղկանար չորս մեծ թերթերից՝ ընդգրկելով պատմական (ամբողջ) Հայաստանի հատակագիծը՝ «սկսած Ռիոն և Կուր գետերից մինչև Միջերկրական ծովի արևելեան-հարաւային եզրը, մինչև Ալեքսադրէտի ծովախորշը»[91]: Ընդ որում, երեք տերությունների (Թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի) տիրապետության տակ հայտնված Հայաստանի բաժանարար սահմանները պիտի ունենային տարբեր գույներ, իսկ ամբողջական քարտեզի տպագրության նախնական ծախսը կազմելու էր մինչև «7.000 մանէթ արծաթ», և այդ գումարը պիտի ձեռք բերվեր համազգային հանգանակության միջոցով[92]: Թեև ցարական վարչակարգի պայմաններում, քաղաքական նկատառումներով, Մեծ Հայաստանի քարտեզը Ռուսաստանում տպագրելու իրատեսության պակաս կա, բայց այստեղ արժեքավորն ու գնահատելին հայրենասեր գործչի այս կամ այն ձևով համազգային նշանակության խնդիրներին ծառայելու ձգտումն ու թափած ջանքերն էին, թեկուզև Հայրենիքը քարտեզի տեսքով տպագրելն ու տարածելը հայ հանրության մեջ՝ բորբոքելու հայրենասիրական ոգի ու պայքարի մղումներ: Նա քարտեզը համարում էր **ազգի ինքնագիտակցությունը** բարձրացնելու միջոց: Սակայն հասկանալիորեն, ցարական իշխանությունների կողմից նրա հանդեպ հալածական հետապնդումների պայմաններում, այն վիճակված չէր կյանքի կոչվելու:

---

[90] «Հիւսիսափայլ», 1862, թիվ 5 (մայիս), էջ 237:
[91] Նույն տեղում, էջ 236:
[92] Նույն տեղում, էջ 237–238:

Այստեղ հայ հասարակական-քաղաքական մտքում, ազգային-տարածքային պահանջների առումով, կարելի է ներքին կապ (աղերս) տեսնել XVIII դարում Ի. Օրու (1703 թ.)՝ ռուսաց Պետրոս 1-ին ցարին ներկայացրած ազատագրվելիք Մեծ Հայքի ամբողջական քարտեզի, այնուհետև Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ի (1787 թ.) առաջին իսկ գլխի թիվ 1 հոդվածում նշված երեք (Կասպից, Միջերկրական և Սև) ծովերի միջակայքում գտնվող Հայաստան երկրի ընդարձակ տարածքի կոնկրետ սահմանների տեղանշումներով և «Հիւսիսափայլ»-ի «Յայտարարութեամբ» Մ. Նալբանդյանի պատկերացրած Մեծ Հայաստանի ապագա գծագրվելիք քարտեզի միջև, որոնցում փաստորեն ներառված է եղել ծովից ծով Հայաստանի գաղափարը[93]: Այստեղից էլ, իբրև կռվան, պատմաքաղաքական հիմքեր կան պնդելու, որ դարեր շարունակ հայ ազատագրական մտքի ու պետականության վերականգնման գաղափարին հետամուտ գործիչները ապագա Մեծ Հայաստանի քարտեզն ուրվագծելիս դրա հիմքում նկատի են ունեցել պատմական Մեծ ու Փոքր Հայքերն ու Կիլիկյան Հայաստանը: Եվ այդ պահանջ-գաղափարը արդեն XX դարասկզբներին, չշրջանցելով, իհարկե, դարասկզբին հայ ժողովրդին պատած համազգային մեծ ողբերգությունը՝ Մեծ եղեռնը, պատմաքաղաքական հիմք ու կռվան հանդիսացան արդեն Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակաշրջանում հանրապետության պետական և հայ ազգային շրջանակների կողմից միջազգային բարձր ատյաններում բարձրացնելու «Միացյալ և Անկախ Հայաստանի» արդարացի պահանջը: Այն, ի վերջո, միջազգային իրավական ձևակերպում ստացավ 1920 թ.. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրում, որը, ցավոք, չկենսագործվեց[94]:

Հայտնի են նաև Մ. Նալբանդյանի գաղափարաքաղաքական ու անձնական բնույթի շփումները (կապերը) ռուս ազատական ու հեղափոխական-դեմոկրատական հոսանքի ճանաչված դեմքեր, վտարան-

---

[93] Տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 431, (672 էջ): **Ոսկայնան Վ.**, *Իսրայել Օրու կողմից Պետրոս I-ի ներկայացված նորահայտ քարտեզը* (ՊԲՀ, Եր., 1961, թիվ 3–4, էջ 297–306 և *«Որոգայթ փառաց»*, էջ 74–75:

[94] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Հակոբյան Ա.**, *Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում*, Եր., 2020:

դի՝ Ալ. Գերցենի, Ն. Օգարյովի, Ն. Դոբրոլյուբովի, Սերնո-Սոլովևիչի և մյուսների հետ: Արտասահմանից վերադարձից հետո՝ 1862 թ. հոկտեմբերին, ցարական իշխանությունները՝ Սենատը, Կովկասի փոխարքան, ոստիկանական (ժանդարմական) մարմինները լրացուցիչ քսու (կեղծ) գործեր են հարուցում արդեն մեղադրյալ (բանտարկյալ) համարվող հիվանդ Նալբանդյանի դեմ առ այն, որ նա իբր տարել է անջատողական (սեպարատիստական) աշխատանքներ Ռուսաստանի հարավում ապրող հայերի մեջ՝ նպատակ ունենալով, ոչ ավել, ոչ պակաս, հասնելու **ազգային անկախության**: Նրա հանդեպ հարուցված գլխավոր մեղադրանքը, իհարկե, համարվել է «լոնդոնյան վտարանդի պրոպագանդիստների» հետ կապեր ունենալը[95]: Արդյունքում նա կալանավորվում է Ս. Պետերբուրգի հանրահայտ Պետրոպավլովյան ամրոցի բանտում, որտեղ ևս բանտարկված էին ռուսական «Զեմլյա ի վոլյա» հեղափոխական-նարոդնիկական գաղտնի կազմակերպության անդամներ Ն. Չերնիշևսկին, Ն. Սերնո-Սոլովևիչը և ուրիշներ: Այնուհետև ցարական կառավարիչ Սենատի 1864 թ. դեկտեմբերի 10-ի դատավճռով՝ «Ս. Պետերբուրգի համալսարանի կանդիտատ Միխայիլ Նալբանդովը», իբրև քաղաքականապես անբարեհույս տարր, այդ թվում՝ «Ռուսաստանի հարավում, հայերի շրջանում, հակակառավարական շարժում տարածելու համար»[96], արդեն թոքախտով ծանր հիվանդ վիճակում, ոստիկանության խիստ հսկողությամբ աքսորվում է Ռուսաստանի հեռավոր Կամիշին քաղաքը, որտեղ էլ 1866 թ. մարտի 31-ին (ն. տ. ապրիլի 12-ին) կնքում իր մահկանացուն[97]:

Ի դեպ, Նալբանդյանի ազատաբաղձության և նրա անձի նկատմամբ նախիջևանցիների հավատն այնքան մեծ է եղել, որ 1866 թ. ապրիլի կեսերին հայրենի Նոր Նախիջևանում հանրային մեծարանքով բանաստեղծ-գործչի թաղման արարողությանը հետևած Եկատերինոսլավի նահանգային ոստիկանական (ժանդարմական) վարչության աշխատակիցների կողմից կազմված պաշտոնական զեկույց-գրության մեջ ասված է, որ «հայերը խորապես ցավ էին զգացել Նալբանդյանի

---

[95] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 55 և 544:
[96] **Դարոնյան Ս.**, *Միքայել Նալբանդյան*, էջ 508:
[97] Տե՛ս նույն տեղում, էջ 515:

մահվան առիթով, որովհետև հույս էին ունեցել, թե նա **կվերականգնի հայկական թագավորությունը** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»[98]: Այստեղ հայ հասարակախավերի շրջանում անկախության ձգտման մտայնության վերաբերյալ ցարական պահնորդության Երրորդ բաժանմունքի աշխատակիցները, որքան էլ որ չափազանցության դիմած լինեն, այնուամենայնիվ, մեզ համար նշելի է այն գաղափարը, որ, իբրև առօրեականության մի դրսևորում, հայ հանրության շրջանում, ըստ ամենայնի, խոսակցություններ են ընթացել **ազգային-քաղաքական ձգտումների** վերաբերյալ:

Պատմական զուգահեռ անցկացնելու առումով հատկանշելի է, որ ինչպես, օրինակ, նախընթաց դարերում ռուս հանրության մեջ շրջանառվելիս են եղել ռուս թագաժառանգ Դմիտրիի, ցար Իվան 3-րդի՝ իբրև մահացած չլինելու մասին այն ժամանակներում տարածում գտած առասպելի նմանվող հեքիաթանման լուրերը, պատումներն ու խոսույթները, իբրև թե նրանց վերադառնալու և ռուս հարստահարված մուժիկներին ազատագրելու մասին:

Նույն կերպ էլ պարզվում է, որ հանգուցյալ Նալբանդյանի անձի շուրջ ևս այս անգամ արդեն հայ հանրության մեջ նմանատիպ լուրեր են պտտվել, թե «սև կարետով Սիբիր քշված Նալբանդյանը կենդանի է, գալու է մի օր որպես **հայ թագավոր** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.) և հողերը պիտի բաժանի հայ գյուղացիներին»[99]: Վերը բերվածը մի կողմից վկայում է Մ. Նալբանդյանի լայն ժողովրդականության մասին, իսկ մյուս կողմից նա ներկայանում է որպես հայրենիքի ազատության և պետականության վերականգնման գաղափարի մարմնավորող անհատականություն: Բերված դրվագը կարելի է դիտարկել որպես հայ հանրության մեջ անկախության տեսլականի մի տեսակ հոգևոր արտացոլանք, որը պիտի մտավոր, գաղափարական, բովանդակային, կազմակերպական, որակական հետագա զարգացում ստանար XIX վերջերին հրապարակ իջած հայ ազգային քաղաքական կուսակցությունների ծրագրերում ու գործելակերպում և, ի վերջո, նյութականացվեր (մարմնավորում գտ-

---

[98] **Հովհաննիսյան Ա.,** *Նալբանդյանը և նրա ժամանակը,* գ. 2, էջ 575:
[99] **Հովհաննիսյան Ա.,** *Դրվագներ...,* գ. 2, էջ 575:

ներ) 1918 թ. Հայաստանի արևելահայ հատվածում անկախության հռչակմամբ ու պետականության վերականգնմամբ:

## *5. Ստ. Նազարյանցը՝ իբրև Հայոց պետականության գաղափարի ջերմ պաշտպան*

XIX 50–60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ ոչ պակաս նշանակալի եղավ ակունքներով խոյեցի, Թիֆլիսի ծնունդ, գրականագետ, գիտնական ու հրապարակախոս, ազատական գաղափարների կրող, «Հյուսիսափայլ» (1858–1864) հանդեսի հիմնադիր ու խմբագիր, պրոֆեսոր **Ստեփանոս Նազարյանցը** (1812–1883 թթ.): «Նազարեանն իր ժամանակի մարգարեն է»՝ այսպես է բնութագրել Նազարյանցին հայ ականավոր գրաքննադատ Նիկ. Աղբալյանը հրապարակախոսի հրատարակվող երկերի առաջաբանում[100]: Հայ «սպեցիֆիկների տեսաբան Դ. Անանունը Ստ. Նազարյանցին համարում է «1860-ականների մեր վերածնիչներից **ամենաականավորը**»[101]: Իսկ ակադեմիկոսներ Ա. Հովհաննիսյանը և Մ. Ներսիսյանը, իհարկե, նկատի ունենալով խորհրդային ժամանակաշրջանի գաղափարայնության ոգին, Նազարյանցին բնորոշել են «ռուսահայ ազգային լիբերալ-բուրժուական հոսանքի **պարագլուխ**»[102]:

Երիտասարդ Նազարյանը, ստանալով բարձր կրթություն և շարունակելով Խ. Աբովյանի ազգային-գաղափարական ավանդները, իր առաջին իսկ հրապարակումներում ընդգծում էր աշխարհական ու աշխարհաբար՝ ամենքին հասկանալի լեզվով **կրթության** ու **լուսավորության** դերը, որպես ազգակերտման ու համախմբման (կոնսոլիդաց-

---

[100] **Նազարեանց Ստ.**, *Երկեր*, հ. Ա, էջ ԾԱ:

[101] **Անանուն Դ.**, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)*, հ. 1, Բագու, 1916, էջ 346:

[102] **Հովհաննիսյան Ա.Գ.**, *XIX դարի 50–60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները* («Պատմաբանասիրական հանդես», Եր., 1966, թիվ 1(32), էջ 34, **Ներսիսյան Մ.Գ.**, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.*, էջ 102:

ման) միջոցի[103]: Այսպես, Ստ. Նազարյանցն իր հիմնած «Հիսիսափայլ» հանդեսի 1860 թ. հունվարյան համարի նախաբանում շեշտում էր, որ «Հայոց ազգը պարտ է յառաջ խաղալ լուսաւորութեան և կրթութեան ասպարէզի մէջ ոչ որպէս նորա աբեղայքը կը ցանկանային, այլ որպէս պահանջում է մարդկութեան կոչումը»[104]: Ավելին, պրոֆ. Նազարյանցը, դատողություններ անելով ազգի կրթության և լուսավորության մասին, պահանջ էր դնում գնալ ավելի առաջ, ընթանալ գիտության լուսավոր ճանապարհով. «Մեզ Հայերիս, մեր բազմապահանջ ժամանակներում, հերիք չէ մի լոկ գրագիտութիւն. մեզ և մեր մանուկներին հարկաւոր է **գիտութիւն** (ընդգծ. մերն է – Ա.Հ.)[105]: Նա խորհուրդ էր տալիս, որ հայ ազգն ու նրա մայր դպրոցը, հենվելով եվրոպական կրթահմացական արժեքների վրա, պիտի ձգտի յուրացնել ու մասնակից լինել «Եվրոպական գիտութեանը»»[106]:

Մեծ հրապարակախոս ու քաղաքագետ Ստ. Նազարյանցը, հիմնականում ապրելով ու գործելով Ռուսաստանում, այնուամենայնիվ, իր հայացքն ուղղված էր դեպի Եվրոպա, դեպի լուսավորության բուն աղբյուրը՝ հասկացնել տալով, որ «Ռուսաստանն ինքն էլ է այնտեղ դիմում»[107]: Բայց և միաժամանակ նա «Հյուսիսափայլ»-ի իր հայ ընթերցողին հասկացնում էր, որ «**Հայերս քաղաքական մտքով ռուս ենք**»[108]: Ասվածի նազարյանական իմաստն ու բացատրությունը հավանաբար այն էր, որ Ռուսաստանի հովանու տակ ապրող ու գործող հայը, իբրև այդ տերության (կայսրի) հպատակ, պիտի հարմարվի (ժամանակակից արտահայտությամբ՝ ինտեգրվի) այդ երկրի հանրային միջավայրին, ծանոթ լինի նրա օրենքներին, պատմությանը, աշխարհագրությանը և այլն: Բայց դրա կողքին, կարելի է հասկանալ նաև, որ չէր բացառվում, որ նման կարգախոս առաջ քաշելով՝ նա դրանով փորձում էր չեզոքացնել կամ հնարավորինս մեղմել ու չափավորել ցարական պահնորդութ-

---

[103] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 1, էջ 158 և 212, նաև՝ **Լէօ**, *Սեռիանոս Նազարեանց*, էջ 122:

[104] «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1860, թիվ 1 (հունվար), էջ 4:

[105] Նույն տեղում, 1861, թիվ 3 (մարտ), էջ 253:

[106] **Նազարեանց Ստ.**, *Երկեր*, հ. Ա, էջ 333:

[107] Տե՛ս նույն տեղում, էջ 333:

[108] Նույն տեղում, էջ 334:

յան՝ Երրորդ բաժանմունքի բռնաճնշիչ գրաքննության ու հետապնդումների ծանր ազդեցությունը:

Ազատական-լուսավորական մտածելակերպի ընդգծված գաղափարակիր Ստ. Նազարյանցը ազգային կրթության, դաստիարակության ու լուսավորության հետ միասին ընդգծում էր նաև ազգի համար երրորդ կարևորագույն նպատակի՝ «հայերի քաղաքական ազատագրման», **թագավորության**, նույն է թե՝ **պետականության** վերականգնման կարևորությունը[109]: Քաղաքագետ Նազարյանցը, շարունակելով ու զարգացնելով Աբովյանի գաղափարաքաղաքական մտորումները Հայաստանի ու հայ ժողովրդի ապագայի մասին, ազգի կենսունակության և հարատևության երաշխիք էր համարում ոչ միայն հայերի հոգեղեն անոթ հանդիսացող **լեզուն** ու **կրոնը**, այլև օտարի, նաև մեր նախնիների մեղքով կորսված «**քաղաքական խորախորհուրդ անչափելի մեծակշիռ անօթը**», այսինքն՝ հայոց աշխարհիկ անկախ **պետականությունը**[110]: Փիլիսոփա Ե. Ֆրանգյանի դիտարկմամբ՝ Նազարյանցի համար «քաղաքական անօթը շատ ավելի գերադաս արժեք է, քան կրօնը և լեզուն»[111]: Այս կապակցությամբ վիճարկելի (քննադատելի) է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի այն գնահատականը, թե ազգային-քաղաքական ինքնորոշման հարցում, ի տարբերություն շատ ավելի արմատական Մ. Նալբանդյանի, Ս. Նազարյանցը հեռու էր մնում ազգային պահանջների քաղաքական որևէ ձևակերպումից, այլ հետապնդում էր միայն ազգային-մշակութային ինքնորոշման խնդիրներ[112]: Նույն կերպ, դժվար է համաձայնվել Ա. Հովհաննիսյանի այն պնդմանը, թե Նազարյանցը բացասական դիրքորոշում է ունեցել «հայերի ազգային-պետական, ազգային-քաղաքական ինքնորոշման մասին»[113]: Այսպես, Ա. Հով-

---

[109] Տե՛ս **Նազարեանց Ստ.**, *Երկեր*, հ. Ա, էջ 90, նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 97:

[110] **Նազարեան Ստ.**, *Վարդապետարան կրօնի հասարակաց հայախոստութեամբ*, Մոսկվա, 1853, էջ 7, **Նազարեանց Ստ.**, *Երկեր*, հ. Ա, էջ 90 և 99, նաև՝ **Հովհաննիսյան Ա.Գ.**, *XIX դարի 50–60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները* (տե՛ս Պատմաբանասիրական հանդես (ՊԲՀ), Եր., 1966, թիվ 1(32), էջ 35 և 40:

[111] **Ֆրանգեան Ե.**, *Հայ հասարակական միտքը*, էջ 50:

[112] **Հովհաննիսյան Ա.**, *նշվ. աշխ.*, (տե՛ս ՊԲՀ, Եր., 1966, թիվ 1, էջ 40 և 42):

[113] **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 97:

հաննիսյանը, քննադատելով ցարական ժանդարմերիայի հետապնդումները ազգային-քաղաքական մտքի գործիչների հանդեպ, Ստ. Նազարյանցի հարցում մեկնաբանում է, որ նա «ազգային-քաղաքական ակնկալություններ չուներ ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլև նույնիսկ Հայաստանի արևմտյան հատվածի ազգային-քաղաքական հեռանկարի նկատմամբ»[114]: Մինչդեռ պարզվում է, որ այդ նույն երրորդ բաժանմունքը «հոտ էր առել» Ա. Հովհաննիսյանի իսկ բնորոշմամբ՝ «հեզաբարո» Նազարյանցի մոտ «կառավարության շահերին հակառակ ազգային-քաղաքական ձգտումների մասին»[115]:

Հայտնի է նաև, որ ազատական մտայնության գաղափարակիր «Հիահսափայլ»-ին միառժամանակ աշխատակցել է Մ. Նալբանդյանը: Նա ավելի հաճախ զբաղված էր ամսագրի համար օտար հեղինակների երկերի թարգմանչական աշխատանքով, ինչպես նաև գրաքննադատական հոդվածներով՝ Կոմս Էմմանուել ծածկանունով: Սակայն, գաղափարական ու սոցիալ-քաղաքական որոշ տարընկալումների հետևանքով, հետագայում տեղի ունեցավ Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանցի միջև հարաբերությունների որոշ օտարացում: Սակայն այդ հանգամանքը ամենևին չի խանգարել, որ նրանք շարունակեն առաջ տանել համազգային բնույթի՝ աշխարհական կրթական-լուսավորական, պետականության, ազատության ու անկախության ձգտելու և հասնելու գաղափարները:

Ստ. Նազարյանցի կյանքի ու գործունեության հետ կապված առանձնահատուկ ուշադրության են արժանի նրա մտորումները և դատողությունները հայոց պետականության գաղափարի շուրջ: Պատմական ակնարկով արձանագրենք, որ Հայաստանի պետականազուրկ դարերի ընթացքում, հայ հասարակական-քաղաքական մտքում հրապարակի վրա է եղել պատմագիտական քննության արժանի հետևյալ՝ **կրոնական**, թե՞ **քաղաքական** անկախության երկընտրանքի հարցը: Փաստենք, որ նման խնդրի արծարծմանը առաջիններից մեկը անդրադարձավ Ստ. Նազարյանցը: Նա «Հիահսափայլ»-ի 1859 թ. հունվար-

---

[114] **Հովհաննիսյան Ա.**, *նշվ. աշխ.*, (տե՛ս ՊԲՀ, Եր., 1966, թիվ 1, էջ 42):
[115] Նույն տեղում:

յան համարում «**Հայերի կոչումը մարդկութեան մէջ**» վերտառությամբ ներածական-խմբագրական բնույթի հրապարակման մեջ զարգացնում է այն միտքը, որ հայերն հաճախ չեն հասկացել **քաղաքական** անկախության նշանակությունը, և այդ անկախությունը, ցավոք, զոհաբերվել է **կրոնական** անկախությանը[116]: Եվ դա, ըստ էության, համարվել է պետության և եկեղեցու հարաբերության հարցը հայ հանրության գիտակցության մեջ և նրա ընկալումներում: Վաստակաշատ պատմաբան Լեոյի կողմից Ստ. Նազարյանցի այդ հոդվածին տրված մեկնաբանություններում իրավացիորեն նշվում է, որ իրոք, դարերի ընթացքում հայերն հաճախ չեն հասկացել (գիտակցել) **քաղաքական** անկախության նշանակությունը, և այդ անկախությունը, ցավոք, զոհաբերվել է կրոնական անկախությանը[117]: Քաղաքագետ-հրապարակախոս Նազարյանցն իրավացիորեն բավարար չէր համարում եկեղեցական անկախությունը, այլ յուրաքանչյուր ազգի ինքնուրույն կեցության և զարգացման ամենամեծ նեցուկը համարում էր նրա **քաղաքական անկախությունը**:

Նախ, հեղինակը, թռուցիկ հայացք նետելով աշխարհի ու երկրների ավելի քան 6-հազարամյա պատմությանը, դրվատանքով ընդգծում է հին դարերում հայերի քաղաքական կյանքի, այսինքն՝ հասնող հայ նախարարական տների թագավորական իշխանության դեմ կենտրոնախույս ձգտումների և գործողությունների երևույթի մասին, որոնք «անխորհրդաբար աշխատել են միշտ և միշտ սահմանափակել ու նեղացնել թագաւորի իշխանութիւնը, և այդպէս թուլացնել բոլոր թագաւորութեան զօրութիւնը»[118]: Ստ. Նազարյանցը անցյալում հայոց պետականությունների կորուստը իրավացիորեն բացատրում է նաև Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ պայմաններով, երբ նա հայտնվեց՝ «մի կողմից Պարսից քրիստոնեաատեաց ազգի, իսկ մյուս կողմից՝ ֆանատիկոս դաւաճան Բիւզանդիայի միջև»[119]: Նազարյանցի կարծի-

---

[116] **Նազարեանց Ստ.**, *Հայերի կոչումը մարդկութեան մէջ* (տե՛ս «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 1–14):

[117] **Ստեփանոս Նազարյանց**, *«Հիւսիսափայլ»-ի շրջանը (1858–1865)* (տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 6, Եր., 1987, էջ 103):

[118] «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 3:

[119] Նույն տեղում, էջ 4:

քով, մեր պատմական անցյալում հայք (հայերը) բավարար ուշադրություն ու նվիրում չեն ցուցաբերել հայոց պետականության պաշտպանությանը, որի շնորհիվ մեզանում պակասել է 'պետականութեան պահպանութեան ընդհանրական գաղափարը»[120], իսկ դրա փոխարեն ավելի կարևորել է հավատքի, դավանանքի պաշտպանությանը: Իբրև դրա արտահայտություն, Նազարյանցը բացառիկ մեծարանքի արժանի երևույթ է համարում 5-րդ դարի ազատագրական պատերազմը, երբ «հայերը անվեհեր քաջութեամբ թափել են իրենց արիւնը, գնացել են նահատակութեան և մարտիրոսութեան՝ հանուն յուրյանց հավատի»[121]: Այդ մասին ակնարկելով նա ամենից առաջ նկատի է ունեցել 5-րդ դարի «Վարդանանց» և «Վահանանց» ազատագրական պատերազմները հանուն հավատի, բայց վերջին հաշվով՝ հանուն ազգի ու հայրենիքի պահպանության (ազատագրության): Բայց հետագա դարերում պետականության կորուստը հայ աշխարհիկ և հոգևոր բարձր շրջանակներին պիտի խորհելու տեղիք տար՝ ջանալ առաջին հերթին վերականգնելու պետականությունը:

Ավելին, Ստ. Նազարյանցի պատկերմամբ, հայերը նույնիսկ մեծ կարևորություն են տվել ոչ միայն **կրոնական**, այլև **դավանական** տարբերությանը: Եվ այդ հողի վրա դարերով թշնամացել են քաղկեդոնական Բյուզանդիայի, նույնն է, թե՝ հույների հետ: «Հայք իբրև քրիստոնեայք,- գրում է հոդվածագիրը,- պիտոյ է միշտ հաւատարիմ դաշնատր մնային Յունաց հետ, վեհանձնութեամբ տանելով Յունաց կրօնական նեղսրտութեանը և տեղիք չտալով մի քանի դավանաբանական տարբերութենների, որ կային Յունաց ու Հայոց մէջ»[122]: «Հայք հանուն իւրանց ազգի պահպանութեան,- կշտամբանքով շարունակում է Նազարյանցը,- պարտական էին իւրանց բնական դաշնակից ու թիկունք համարել Բիւզանտիոնը. բայց Հայոց պօլիտիկան (քաղաքագիտութիւնը) այդպէս չէ եղել»[123]:

---

[120] «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 4:

[121] Նույն տեղում, էջ 5:

[122] **Նազարեանց Ստ.**, *Հայերի կրչումը մարդկութեան մէջ* («Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 4):

[123] Նույն տեղում, էջ 4:

Նույն քաղաքագետ-հրապարակախոսի դիտարկմամբ պետականությունը՝ իբրև գերագույն արժեք, հասկացնել էր տալիս, որ «թագաւորութիւնն է, որ իբրև մարմնացած հոգի և զօրութիւն, գործ է կատարում ազգի թէ՛ նիւթական և թէ՛ իմացական բաղդաւորութեան համար. թագաւորութիւնն է, որ ամենայն բան ազգի մէջ կարգի ու սահմանի տակ է պահում»[124]: Նազարյանցը իրավացիորեն կատարյալ չէր համարում այն ազգային կյանքը, որը հիմնված է միայն կրոնի վրա: Ըստ նրա, նման տեսակի կյանքի մեջ չի կարող լինել լայն աշխարհիկ կրթություն, գրականություն, նյութական և իմացական բախտավորություն: Դրա համար էլ, ըստ նրա, հայերը առաջնային կարևորություն պիտի տային ոչ այնքան **եկեղեցական**, որքան **քաղաքական անկախությանը**, քանզի ամեն մի ազգի ինքնության կեցության և զարգացման ամենամեծ նեցուկը նրա քաղաքական անկախության մեջ է[125]:

Վերը բերված մտքերը մեզ հիմք են տալիս հետևեցնելու, որ Ստ. Նազարյանցը համարվում է Հայաստանի **անկախ պետականության գաղափարի ջերմ ջատագով ու պաշտպան**: Եվ նա, պատմական անցյալի իրադարձությունների ու դրվագների համադրմամբ, կշտամբանքի խոսքեր է ուղղում Հայոց եկեղեցուն և հոգևոր առաջնորդներին: Եվ պատահական չէ, որ հայ ազատական, մեզանում պետականության գաղափարակիր, առաջադեմ մտածող Ստ. Նազարյանց գործիչը և նրա խմբագրած «Հիւսիսափայլ» հանդեսը հաճախակի ենթարկվել են հայ եկեղեցու հայրերի ու կղերական ու պահպանողականի համարում ունեցող՝ «Ճռաքաղ», «Մասյաց աղավնի», «Համբավաբեր Ռուսիոյ», «Մեղու Հայաստանի», «Կռունկ» և այլ պարբերականների բանավիճային հարձակումներին:

XIX դարակեսերի հայ հասարակական-քաղաքական մտքի ակնավոր ներկայացուցիչ Ստ. Նազարյանցի կարծիքով՝ «Հայք միշտ ընդգծել են իրենց քրիստոնեական հաւատին հավատարիմ լինելու մասին փաստը, բայց դա,- ըստ նրա,- շատ փոքր բան է», որ «**կրօնը ազ-**

---

[124] **Նազարեանց Ստ.**, *Հայերի կոչումը մարդկութեան մէջ* («Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, թիվ 1 (հունվար), էջ 6:

[125] **Ստեփանոս Նազարյանց**, *«Հիւսիսափայլի» շրջանը (1858–1964)* (տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 6, էջ 103–104:

**գի համար է և ո՛չ թէ ազգը կրօնի համար»**, որ «պահպանելով ազգը, կը պահպանվի ու կը պաշտպանվի և կրօնը» և, որ «հավատը առանց իշխանական գաւազանի թևարկության, խաչը առանց սրի տկար է, և չէ՛ կարող ազգաշինութեան պատճառ լինել»: «Եթէ սուտ է մեր ասածը,- շարունակում է քաղաքագետ հրապարակախոսը,- թո՛ղ ցույց տան մեզ աշխարհի երեսին մի լուսաւորեալ, քաղաքացեալ (քաղաքակիրթ – Ա.Հ.), հզօր և հրամայող ազգ, որ միայն կրօնի զօրութեամբ, առանց քաղաքական կեանքի և մեծութեան, հասած լիներ որ և իցէ ազգաշինութեան, բարեկարգութեան և ազգային պարծանքի մարդկութեան ազգերի մէջ»[126]: Իբրև օրինակ նա նշում է, որ պարսիկն զորեղ է ոչ թե իր «պղտոր մահմեդականութեամբ, այլ իր քաղաքական կեանքով, թագաւորութեամբ: Նոյնն է եւ Սունիթական Տաճիկը»[127]: Նազարյանցը հասկացնել էր տալիս, որ «թագաւորութիւնն է (ասել է թե՝ պետականություն – Ա.Հ.), որ իբրև մարմնացած հոգի և զօրութիւն, գործ է կատարում ազգի թէ՛ նիւթական և թէ՛ իմացական բաղդաւորութեան համար. թագաւորութիւնն է, որ ամենայն բան ազգի մէջ կարգի ու սահմանի տակ է պահում և ցանուցիր զօրութիւքը ազգի միաւորելով և բոլորելով մի ամբողջութեան մէջ, ուղեցուցանում է դեպի մի հասարակաց նպատակ»[128]: Բայց և միաժամանակ նա արձանագրում է, որ, ցավոք, հազարամյակով «Հայոց կեանքը զուրկ է եղել դրանից»[129]: Նազարյանցի կարծիքով, արդեն 19-րդ դարակեսին չորս մլն-ի հասնող հայությունը, ընդ որում 500 հազարը ռուսական տիրապետության տակ, իսկ մնացյալ մասը Տաճկաստանում, Եվրոպայում, Ասիայի ու Աֆրիկայի այլ երկրներում՝ կորած չէ, «նա ունի աշխարհի հրապարակի մէջ կատարելու մի օր մի մեծ եւ գեղեցիկ խորհուրդ»[130], այլ խոսքով՝ նա լավատես էր, որ մի գեղեցիկ օր հայ ժողովուրդը կհասնի ազատագրության ու անկախության գաղափարի նյութականացմանը:

---

[126] «Հիւսիսապայլ», *նշվ. աշխ.*, էջ 5:
[127] Նույն տեղում:
[128] Նույն տեղում, էջ 6:
[129] Նույն տեղում:
[130] Նույն տեղում, էջ 7:

Հանրագումարի բերելով Ստ. Նազարյանցի դիտարկումները կրոնական (եկեղեցական) թե քաղաքական (պետական) անկախության հարցում, կարելի է հանգել հետևյալ եզրահանգման. իբրև ազատական ու ժողովրդավարական մտածողության գործիչ, Ստ. Նազարյանցը հանդիսանում է հայոց անկախ պետականության գաղափարի ջերմ պաշտպան և այդ ճանապարհին նա, հայոց պատմական անցյալի հոգևոր ու աշխարհիկ կյանքի նյութի համադրմամբ, քննադատական խոսք է ուղղում հայ առանձին շրջանակների կողմից կրոնական (դավանական) մոտեցմանը նախապատվություն տալուն: Բայց, կարծում ենք, որ Ստ. Նազարյանցի արտահայտած կարծիքն ու գնահատականը, դավանական առումով Բյուզանդիայի (հույների) հետ զիջող ու հաշտ լինելու հարցում, միակողմանի է ու ոչ ամբողջական: Բանն այն է, որ Բյուզանդիայի վարած քաղաքականությունն ու հանդես բերած վերաբերմունքը պայմանավորված չէր միայն ինչ-որ դավանաբանական խնդիրներով, այլ դրա հիմքում ընկած էին քաղաքական, գերիշխելու՝ մեծապետական, նվաճողական և այլ նպատակներ: Մյուս կողմից, ճշմարտությունն այն է, որ ազգի կրոնն ու դավանանքը, իբրև ազգի հոգևոր և մշակութային ինքնության դրսևորում, ինչպես մայրենի լեզուն, դպրոցը, կրթությունը, մշակույթը և այլն, հավանաբար չպետք է բաժանել (տարանջատել) ազգային պետականության ու անկախության գաղափարից: Կարծում ենք, որ դրանք, որպես ազգային-հոգևոր արժեքներ, պետք է դիտարկել մեկ նպատակի ուղղորդված միասնության մեջ: Իսկ ինչ վերաբերում է հայ եկեղեցուն, ապա նա իր հոգևոր զորեղ լծակներով, ինչպես անցյալում, նույնպես և մեր ժամանակներում **պիտի նեցուկ լինի Հայոց պետականությանը**:

Այսպիսով, Ստ. Նազարյանցը հոգեմտավոր առումով, Մ. Նալբանդյանից ոչ պակաս չափով, սնվելով Խ. Աբովյանից, համարձակորեն հնչեցնում էր աշխարհիկ կրթության ու լուսավորության խորացման, եվրոպական գիտամտավոր արժեքներ որդեգրող համախումբ ազգի ձևավորման, նրա հասունացման ու միասնականության, հայրենիքը չլքելու, ազգ-հող-հայրենիքը սիրելու և քաղաքական իմաստով այն մեկտեղելու գաղափարները: Դրանով իսկ նա որակական մի նոր

աստիճանի հասցրեց Հայաստանի ազատագրման ու պետականության վերականգնման տեսլականը:

* * *

XIX դարի 50-60-ական թվականների հայ հասարակական մտքի բեկումնային ժամանակաշրջանում, որը ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը բնորոշել է որպես Նալբանդյանի ժամանակ, ի հայտ են եկել հասարակական մտքի, գրական ու հրապարակախոսական երկերով աչքի ընկած ուրիշ ներկայացուցիչներով: Պատմական այդ շրջափուլում, համանման ազգային-հոգևոր արժեքների դավանողների շարքին պետք է դասել նաև աշտարակցի երիտասարդ գրող Մ. Շահազիզյանին (Շահազիզ), հանձին նրա «Լևոնի վիշտը» պոեմի: Զուգահեռաբար, արևմտահայ իրականության մեջ կարելի է տեսնել Կիլիկյան ապստամբական ելույթներից ոգի առած Մ. Պեշիկթաշլյանի «Եղբայր եմք մենք», Ն. Ռոահինյանի՝ «Կիլիկիա» և մյուսների ոգեշունչ հայրենասիրական բանաստեղծությունները: Արևմտահայ հոգևոր գործիչ, հետագայում Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ն. արք. Վարժապետյանը, սկզբում լինելով ուսուցիչ՝ «դպրոցների մեջ էր սպասում հայ ազգի փրկությունը»[131]:

Այդպիսով, Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանցը, Աբգ. Հովհաննիսյանը, Ս. Շահազիզյանը և մյուսները, բարոյահոգեպես սնվելով Աբովյանից, համարձակորեն հնչեցնում էին համախումբ ազգի, նրա միասնության, այն չլքելու, ազգի ու հայրենիքի մեկտեղելու գաղափարը (հրամայականը): Հայ ազգային-պահպանողական հոսանքի ականավոր գաղափարախոս Աբգար Հովհաննիսյանը իր խմբագրած «Փորձ» եռամսյա հանդեսի «Ազգային տեսության» բաժնում թուրքահայերի կացության ու հեռանկարի մասին ընդգծում էր, որ հայերի բարօրությունը Օսմանյան կայսրությունում կարող է լինել միայն բուն «աշխարհագրական Հայաստանում»[132]: Իր հայացքներով դարձյալ պահպանողական համարվող Սպ. Սպանդարյանը խոսում էր մայրենի հողի վերատիրման հրամայականի մասին՝ հավելելով, որ «Եթէ հայերը հայրենիք չու-

---

[131] Տե՛ս **Ավետյան Մ.**, *Հայ ազատագրական ազգային հիսունամյա հուշամատեան (1870–1920)*, Փարիզ, 1954, էջ 65:

[132] «Փորձ», Թիֆլիս, 1876, Ա տարի, հ. 2, (թիվ 1–2), էջ 406:

նեն, ուտեմն և ոչինչ չունեն»[133]: Լեզվի աշխարհականացման աբովյանական սկսած հեղաբեկիչ գործը պետք է շարունակեին այդ նույն դարի 50–60-ական թվականների լուսավորիչները: Նման հարցը ոչ թե զուտ լեզվական խնդիր էր, այլ նրանում կար հասարակական-քաղաքական զարգացումներից հետ չմնալու, հոգևոր մշակութային առաջընթացի ապահովման պահանջ:

Պատմության այդ շրջափուլում հայ ազգային կրթալուսավորական գաղափարների տարածման ու զարգացման անուրանալի դերակատարություն է ունեցել նաև հայ հասարակական հոսանքներից պահպանողականի համարում ունեցող «**Բազմավեպ**» հանդեսը: Նրա առաջին խմբագիր Գ. վրդ. Այվազովսկու հարցադրմամբ՝ «Ինչե՞ն է,- գրում էր նա,- որ Եվրոպայի ազգերը մէկ մէկէ աւելի քաղաքականութեամբ ծաղկեր են ու օրէ օր կծաղկին, բայց եթէ ուսմամբ ու կրթութեամբ՝ որոնց այնչափ ջանքով ետևէ են»[134]: Հարկ է ընդգծել, որ հայ կաթոլիկների պարբերականն ազգային խնդիրներում, դավանական որևէ տարանջատում չկատարելով, ժամանակ առ ժամանակ նրա էջերում տեղ էին գտնում վարպետությամբ գրված ազգային-հայրենաբաղձ բնույթի պոետիկ քառյակներ ու ներբողներ: Օրինակ, դրանցից մեկում կարդում ենք.

«Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել,
Ո՛վ դու ՝ի վաղուց մոռացած հայրենիք,
Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք»:

. . . . . .

«Հողմունք անուշիկ, եկէք մօտ ՝ի յիս,
Շունչս ու երգս առէք տարէք ՝ի Մասիս,
Տա՜ՐԷք վերջի շունչս ՝ի տուն տապանին,
Ու լրսեցուցէք զաւկաց Թորգոմին»[135]:

---

[133] «Մշակ», Թիֆլիս, 8 օգոստոսի 1877 թ., (թիվ 57):
[134] «Բազմավէպ», Վենետիկ, 1846, Դ տարի, թիվ 3, (փետրուար), էջ 34–35:
[135] Նույն տեղում, 1847, Ե տարի, թիվ 12 (հունիս), էջ 183 և 185:

Ինչպես արդեն ասվեց, գրաբարյան լեզվի հաղթահարման ու դրա աշխարհականացման ուղղությամբ Աբովյանի սկսած գործը դարամիջում շարունակեցին Նալբանդյանը, Նազարյանցը և մյուսները: Նրանք գիտակցում էին, որ նոր գրական լեզվի շինարարությունը հոգևորկրթական առումով, միջոց (լծակ) էր լեզվամտածողության հարստացման, ազգի համախմբման (կոնսոլիդացման) և հետագա միասնական ազատագրական պայքարը առաջ տանելու համար: Այդ կապակցությամբ տեղին ու դիպուկ է նկատել տալիս Ա. Հովհաննիսյանը. «Աբովյանը հայ գրական նոր լեզվի խնդիրը կապում էր հայ ժողովրդի ազատագրական բաղձանքների իրագործման հեռանկարների, նրա ազգային-քաղաքական ինքնորոշման համար տարվելիք պայքարի հետ»[136]:

Այսպիսով, XIX դարի 50–60-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական հոսանքները թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ իրականության մեջ, ավելի կամ պակաս չափով, ընդգծելով մայրենի լեզվի, կրթության, լուսավորության, հայոց եկեղեցու ազգապահպանական դերն ու նշանակությունը, դրա դրա կողքին՝ իբրև շարունակություն ու զարգացում, կարևորում էին հայրենիքի ազատագրության և դարեր առաջ կորսված հայոց պետականության վերականգնման գաղափարը:

---

[136] **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 394:

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ (1860–1863 ԹԹ.)

*«Ազգին ամէն մէկ անհատն առ*
*Ազգը պարտաւորութիւններ ունի.*
*Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն*
*մէկ անհատ պարտաւորութիւններ ունի»*[1]:

Ընթերցողի մոտ առաջին հայացքից (ակամա) կարող է օրինական հարց ծագել, թե պատմաքաղաքական և իրավական ինչ աղերս կարող է ունենալ հայ ժողովրդի ազատագրական շարժումն ու պայքարը օսմանյան կառավարության՝ Բարձր Դռան («Եըլդըզ Քյոշք») կողմից 1863 թ. մարտի 17-ին վերջնականորեն վավերացրած և պետական օրենքի ուժ ստացած արևմտահայերի «Ազգային սահմանադրություն» փաստաթղթի հետ: Պատմական նյութի ուսումնասիրությունը և երևույթի անաչառ գնահատումը ցույց են տալիս, որ հետնախորքում դրանց միջև կա քաղաքական և ներքին հոգևոր ուղղակի կապ: Ասվածին պիտի հավելել, որ արևմտահայ սահմանադրական շարժմանը շատ մեծ ուժ հաղորդեց հատկապես **Զեյթունի** 1862 թ., իր թափով մինչ այդ աննախադեպ, հայտնի ապստամբությունը: Ինքնավար կյանքի ձգտման առումով հիշելի է հին ժամանակներից Կիլիկիայի հայկական այդ ըմբոստ լեռնագավառի մշտապես կիսանկախ ու ինքնավար (ինքնաբավ) կեցության որոշակի տարրերի առկայության փաստը:

---

[1] «Ազգային Սահմանադրութիւն Հայոց», Հիմնական սկզբունք, Ա կետ, Կ. Պոլիս. «ի տպարան Յ. Միւհէնտիսեան», 1860, էջ 5, նաև՝ **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, «Հավելված», Թիֆլիս, 1912, էջ 22:

Հարկ է փաստել, որ մինչ այդ 1853–1856 թթ. Ղրիմի հայտնի պատերազմը հայ մտավոր հասուն շրջանակներում առաջ էր բերել գաղափարական շարժում թե՛ արևելահայության և թե՛ արևմտահայության մեջ: Արևմտահայ իրականության մեջ այդ շարժման առաջատարները դարձավ Լեոյի բնորոշած «սահմանադրական երիտասարդությունը»[2] Ն. Պալյանը, Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը և ուրիշներ, ովքեր հոգևոր սնունդ էին ստացել 1848–1849 թթ. եվրոպական ազգային-ժողովրդավարական հեղափոխություններից: Արևմտահայոց Ազգային սահմանադրության խորագիտակ հետազոտող Առաքել Սարուխանյանի (կեղծանունը՝ Սարուխան) կարծիքով՝ «Ազգային Սահմանադրութիւնը շատ բան պարտական է 1848-ի եվրոպական ազատագրական շարժմանը»[3]: Բնականաբար, խոսքը վերաբերում էր արևմտահայերի մտավոր կենտրոն հանդիսացող Կ. Պոլսին (Ստամբուլին), մասամբ նաև Զմյուռնիային (Իզմիրին), իսկ արևմտահայ գավառը, հասկանալիորեն, իր մտավոր պակաս կարողություններով, դրան թույլ էր արձագանքում: Լեոյի կարծիքով՝ 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում, գաղթականներով հանդերձ, կար 300 հազար հայություն[4], և հասարակական-քաղաքական կյանքն այնտեղ, ռուսահայ կենտրոնների համեմատ, ավելի **զարգացած** էր[5]: Այս առնչությամբ արևելահայ գրական-հասարակական գործիչ Գ. Պատկանյանը արևմտահայ սահմանադրական շարժման շրջանում հատկանշում էր Կ. Պոլսի բացառիկ դերը հայկական սփյուռքի կյանքում, քաղաքը համարելով «մեր ազգի ազգոպեան Աթէնքը»[6]: ՀՅԴ կուսակցության պատմագիր Մ. Վարանդյանը Կ. Պոլիսը համարում էր «թրքահայոց մտաւոր կեդրոն»[7]: Իսկ այդ նույն ժամանակ

---

[2] **Լեո,** *Երկերի ժողովածու,* հ. 6, էջ 149:

[3] **Սարուխան Ա.,** *Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910),* «Հավելված», Թիֆլիս, 1912, էջ 241:

[4] XIX սկզբներին Օսմանյան կայսրությունում ապրող մոտ 3 մլն հայերի մեծագույն մասը (մոտ 2,5 մլն) բնակվում էր Արևմտյան Հայաստանում, մնացածը՝ Կ. Պոլսում, Կիլիկիայում և կայսրության այլ մասերում (տե՛ս *Հայոց պատմություն,* հ. 3, գ. 1, էջ 230–231):

[5] **Լեո,** *Երկերի ժողովածու,* հ. 6, էջ 461:

[6] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. թիվ 136, վավ. թիվ 34, թ. 14բ:

[7] **Վարանդեան Մ.,** *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն,* Եր., 1992, էջ 16:

Ստ. Նազարյանցը խորհում էր՝ «մի վերին դպրոց, մի համալսարան հիմնարկել կամ՝ Կոստանդնուպոլսի կամ Սմիրնայի (Զմյուռնիայի – Ա.Հ.) մէջ»[8]:

Արևմտահայ սահմանադրական շարժման ու Ազգային սահմանադրության ասպարեզ գալը պայմանավորված էր առաջին հերթին, իբրև **արտաքին** ազդակ, 19-րդ դարակեսերին եվրոպական (Անգլիա, Ֆրանսիա) տերությունների ու Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրության հանդեպ ավելի ու ավելի ուժգնացող ռազմաքաղաքական և տնտեսական ներթափանցմամբ, իսկ իբրև **ներքին** ազդակ՝ այդ նույն կայսրության ռազմաքաղաքական ու տնտեսական բարդ իրավիճակը և այդ համատեքստում կայսրության ժողովուրդների հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը[9], ինչն էլ պիտի հարկադրեր Բարձր Դռանը գնալու ոչ մուսուլման ազգերի համար տեղական բնույթի կառավարչական, կրթա-լուսավորական, ազգային-մշակութային կյանքի իրավականոնադրական կարգավորումների:

Խոսելով արևմտահայ սահմանադրական շարժման ու Ազգային սահմանադրության գաղափարի նախադրյալների ու դրա նյութականացման մասին իբրև մի ամբողջ էպոխա, հարկ է տեսնել որոշակի առնչություն ու կապ ազատության մեր մեծ երգիչ Մ. Նալբանդյանի և Կ. Պոլսի արևմտահայ հասարակական շրջանակների հետ: Հայ հասարակական-քաղաքական մտքի հասունության առումով, ականավոր պատմաբան, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը 19-րդ դարի 50–60-ական թվականները իրավամբ համարում է Մ. Նալբանդյանի ժամանակաշրջանը: Եվ պատմական դեպքերը, գուցե պատահական դիպվածով ու հանգամանքների բերումով, այնպես ընթացան, որ մեր ազատության մեծ երգիչ Մ. Նալբանդյանի, կարճ, սակայն բեղուն հասարակական-քաղաքական գործունեությունը առնչվեց նաև դարի 50–60-ական

---

[8] «Հիւսիսափայլ», 1862, թիվ 12 (դեկտեմբեր), էջ 282:

[9] Ավելածին պետք է հավելել նաև հայոց ներսում առկա ներքին հոգևոր-պատմական ազդակը: Բանն այն է, որ պոլսահայ առաջադեմ մտավորական շրջանակներում շարունակվում էին կենդանի մնալ Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ի գաղափարները և նոր պայմաններում, իբրև շարունակություն, դրանք վերաիմաստավորելու ու նյութականացնելու պահանջ էր առաջացել:

թթ. Թուրքիայում ծայր առած Արևմտահայ սահմանադրական շարժման հետ: Հենց այդ շարժման բուռն շրջանում՝ 1861–62 թթ, բանաստեղծը երկու անգամ եղավ Կ. Պոլսում՝ մի հնդկահայ բարերարի՝ Նոր Նախիջևանի կրթական կենտրոնների համար կտակի գործերով դեպի Հնդկաստան (Կալկաթա) գործուղվելու ճանապարհին:

Դեպքերի բերումով, իրոք, Նալբանդյանի գործուղումը համընկավ 1860 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսում **Ազգային սահմանադրության** կյանքի կոչման (հրապարակման) հետ: Հայ ու հատկապես խորհրդահայ պատմագրության մեջ հաճախ չակերտների մեջ առնվող «Ազգային սահմանադրության» շուրջ շատերը կարող են տարակուսանք արտահայտել, թե հայերի համար այդ ի՞նչ սահմանադրություն, այն էլ՝ Թուրքիայում: Իսկ դարձյալ պրոֆ. Լեոյի գնահատմամբ էլ 1860 թ. Սահմանադրությունը բնորոշվել է որպես «Սահմանադրական պատրիարքություն» անունով, քանզի դրանով Կ. Պոլսի միահեծան հայ պատրիարքության իրավասությունները էապես սահմանափակվեցին[10]: Հնչակյան կուսակցության պատմագիր Ա. Կիտուրի գնահատմամբ, այնուամենայնիվ, Սահմանադրության շնորհիվ պատրիարքարանի հետադեմ ամիրաների և կղերականների ընչաքաղցությունների առաջն առնվեց և լսելի դարձավ ժողովրդի ձայնը[11]: Ավելին, ականավոր հրապարակախոս, հայ ազատական գաղափարների առաջամարտիկ Ստ. Նազարյանցը ևս բարձր է գնահատել ու դրվատանքով է խոսել արևմտահայերի «Ազգային սահմանադրության» հեղինակների մասին[12]: Նա, գոհունակություն հայտնելով արևմտահայերի Ազգային սահմանադրության առնչությամբ, հույս էր հայտնում, որ մեր «Հայրենակիցքը...կարող են ապրել առանց թաղելու իրանց ձեռքի վաստակքը հողի տակ, առանց տների պատերի մէջ փակելու իրանց կին ու զաւակը»[13]: Սակայն դժվար չէ նկատել, որ արևելահայ ազատականության գաղափարախո-

---

[10] Տե՛ս **Լեո,** *Անցյալից,* էջ 193:

[11] Տե՛ս *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887–1962,* (խմբ. **Կիտուր Ա.**), հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 17:

[12] Տե՛ս **Նազարյանց Ստ.,** *Երկեր,* Եր., 1987, էջ 359:

[13] «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1861, թիվ 3 (մարտ), էջ 252:

սը ևս որոշակի պատրանք է ունեցել «թանզիմաթյան» Թուրքիայի ժողովրդավարացման հարցում և այլն:

## *1. «Թանզիմաթը» և սահմանադրական շարժման գործընթացը*

Իբրև շոշափվող հարցի գաղափարական նախադրյալ չի կարելի չտեսնել, որ Արևմտյան Եվրոպային ավելի մոտ գտնվող Թուրքիայում XIX դարի 30–60-ական թվականների հասարակական-քաղաքական որոշ տեղաշարժեր նկատվեցին հանձին «**Թանզիմաթի**» (այն արաբերեն բառ է, որ նշանակում է՝ «կարգավորում» կամ «բարենորոգում»): Հայտնի է, որ արտաքուստ Թուրքիայի **արևմտականացմանն** ուղղված Օսմանյան բարենորոգչական գաղափարախոսությունը ձևավորվեց XIX դարի 30–50-ական թթ.՝ կայսրության ռազմական, տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի պայմաններում՝ **ներքին** ու **արտաքին** ազդակներով պայմանավորված[14]:

Հայտնի է, որ ժամանակագրական առումով «Թանզիմաթն» ընդգրկում է երկու փուլ՝ (1939–1856) և (1856–1876 թթ.), ու ավարտվել է օսմանյան Թուրքիայի 1876 թ. կիսակատար սահմանադրության ընդունմամբ[15]: Ավելի ստույգ, այն սկսվեց 1839 թ. **նոյեմբերի 3-ի** սուլթան Աբդուլ Մեջիդի (1839–1861 թթ.)՝ «Գյուլհանեի Հաթթը շերիֆ»[16] հրովարտակի հրապարակմամբ, որի իսկական հեղինակը սուլթանի խորհրդական Մուսթաֆա Ռեշիդ փաշան էր: «Հաթթը շերիֆ»-ի մշակմանն ակտիվ մասնակցություն են ունեցել եվրոպական կրթություն ստացած, Ռեշիդ փաշայի խորհրդական հայազգի Հակոբ Կրճիկյանը (1806–1865 թթ.), բժիշկ Հովսեփ Պեյրանը (1825–1866 թթ), պետ. ծառայող Գրիգոր

---

[14] Թուրքիայի վիճակը առավել բարդացավ, երբ 1839 թ. հունիսին սուլթան Մահմուդ II-ի զորքը Հյուսիսային Սիրիայում պարտություն կրեց իր վասալ, ինքնիշխան Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ-Ալի փաշայից: Դրան հետևեց հիվանդ սուլթանի մահը և գահն անցավ նրա որդուն՝ երիտասարդ ու եռանդուն Աբդուլ Մեջիդին:

[15] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 284:

[16] Թարգմանաբար նշանակում է՝ «Վարդատան արքունի նվիրական հրովարտակ» (տե՛ս **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 12):

Աղաթոնը (1825–1868 թթ.) և ուրիշներ: Կայսերական ապարանքի Գյուլհանեի դահլիճում գումարված «Մեծ հանդեսի» ժամանակ պետական ու զինվորական ծառայողների, հոգևորականության, այդ թվում նաև քրիստոնյա պատրիարքների, եվրոպական դեսպանների և այլոց ներկայությամբ հրապարակվեց «Թանզիմաթի» հրովարտակը կամ նվիրական գիրը:

Այդ հրովարտակում սուլթանական կառավարությունը մասնավորապես խոստանում էր կայսրության բոլոր հպատակների՝ 1. անկախ ցեղից, կրոնից ու աղանդից՝ կյանքի, պատվի, գույքի և իրավունքի ապահովության, 2. հարկերի և տուրքերի կանոնավորում, դրանց բաշխումն ու գանձումը ըստ հարկատուի կարողության և 3. վերակառուցել բանակը՝ զինվորագրությունն ու զինծառայությունը, ինչպես նաև դատական և վարչական մարմիններում իսլամ և ոչ իսլամ մարդկանց օրենքով ընդունված կարգով ընդգրկման, բոլոր ազգերին թույլատրել բանակում ծառայելու և այլն[17]: Սուլթանական կառավարությունը այդ փաստաթղթում փորձել էր եվրոպական արժեհամակարգին բնորոշ գրավիչ բառամթերք օգտագործել, որպեսզի լավ տպավորություն ստեղծեր Արևմուտքի տերությունների շրջանում, որ նրանք չմիջամտեն իր երկրի ներքին գործերին: Մյուս կողմից՝ նման փաստաթղթի հրապարակ գալը, բնականաբար, որոշակի աշխուժություն և հույսեր առաջացրեց Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ առաջադեմ մտավորականության շրջանակներում՝ ակնկալելով հայ հանրության բովանդակ կյանքի բարվոքում: Սակայն Թուրքիայի իրական կյանքից կտրված նման օրենք ունեցող հրովարտակը թշնամաբար պիտի ընդունվեր թուրք հանրության (իսլամի) կողմից, թե «Ինչպէ՞ս հավասարութիւն կըրնա ըլլալ քրիստոնեա հպատակներուն և իսլամներուն միջեւ»[18]: Արդյունքում այդ (առաջին) հրովարտակը տարիներով ձգձգվելով հնարավոր չեղավ

---

[17] Տե՛ս **Պերպէրեան Ա.**, *Պատմութիւն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչեւ Յամն 1860)*, էջ 499, **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Ա, Պէյրութ, 1961, էջ 3727, **Սիրունի Հ.Ճ.**, *Թանզիմաթ և հայեր (Բուխարեստ)* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1966, թիվ 4, (35), էջ 55 և 59, **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 4, էջ 496, **Ղազարյան Հ.**, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ.*, էջ 236:

[18] **Սիրունի Հ.Ճ.**, *Թանզիմաթ և հայեր (Բուխարեստ)*, էջ 56:

կամ ավելի ստույգ՝ անհրաժեշտ հետևողականություն չցուցաբերվեց այն կյանքի կոչելու:

Այդ ամենով հանդերձ, 1840-ական թվականներին թանզիմաթյան հանրային մթնոլորտում նկատելի (որոշ) աշխուժություն ու տեղաշարժեր նկատվեցին պոլսահայ համայնքի հասարակական, կառավարչական, ուսումնադպրոցական ու, հատկապես, պոլսահայ համայնքում պատրիարքի գերիշխան ազդեցությունը սահմանափակելու ուղղությամբ:

Հարկ է նշել, որ տակավին 1840-ական թվականներից (հատկապես 1844 թ. և 1847 թ.) հայ համայնքի հանդեպ պատրիարքի ու ամիրաների[19] միահեծան իշխանությունը ընտրությունների ճանապարհով սահմանափակելու համար որոշակի քայլեր ձեռնարկվեցին: Խնդիր դրվեց ժողովրդի ավելի մեծ զանգվածի մասնակից դարձնել պատրիարքի ընտրություններին: Առաջացած նման վիճակի վերաբերյալ Կ. Պոլսի նախկին պատրիարք, ճանաչված պատմագիր Մաղաքիա արք. Օրմանյանը հետագայում պարզաբանում էր, որ ազգային-վարչական մարմինների ղեկը ամիրաների ձեռքին էր այն պատճառով, վասնզի նրանց քսակով էին ֆինանսավորվում պատրիարքարանը, Ազգային Հիվանդանոցը, վարժարանը, նոր ձեռնարկվելիք կառույցների շինարարությունը և այլն[20]: Հարկ է նկատի առնել, որ Կ. Պոլսում կային ավելի քան 100 հազար հայ պանդուխտներ, որոնց ձայնը բնավ լսելի չէր: Ուստի, նախ փորձ արվեց ընտրական ավելի լայն սկզբունքի հիման վրա հիմնել ամիրաներից, սեղանավորներից (սարաֆ, բանկիր), արհեստապետերից (էսնաֆներից) և հոգևորականներից բաղկացած, կայսերական հրովարտակով հաստատված ներկայացուցչական մի մարմին՝ **Ազգային ժողով կամ Ընդհանուր ժողով**, որն ավելի հաճախ ընդունված է եղել պարզապես կոչել **Ազգային ընդհանուր ժողով**[21]: Ազգային կամ Ընդհանուր ժողովը պիտի ընտրեր 20 անդամից կազմված

---

[19] «Ամիրան» ծագում է պարսկական «էմիր» բառից, որ նշանակում էր՝ «հրամայող», սակայն Կ. Պոլսում հասկացվել է դրամատեր կամ բուրժուա: (տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 4, էջ 96):

[20] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Ա, էջ 3728–3729:

[21] Ա. Սարուխանը ընտրովի այդ մարմինը անվանում է «**Ազգային ժողով**» (տե՛ս **Սարուխան Ա.**, *կշվ. աշխ.*, էջ 10), իսկ Հ. Շահրիկյանը՝ **Ընդհանուր ժողով** (տե՛ս **Ատոմ**, *կշվ. աշխ.*, էջ 33:

**Գերագույն ժողով**, որը պիտի վերահսկողություն իրականացներ քաղաքական բնույթի գործերի վրա, իսկ Գերագույն ժողովն իր հերթին ընտրելու էր 14 եկեղեցականներից կազմված **Հոգևոր ժողով**: Վերջինս էլ պիտի զբաղվեր հատկապես կրոնական գործերով: 1847 թ. կառավարությունը վավերացնում է նման բովանդակություն ունեցող մի «Ազգային Կանոնադրություն»: Եվ դրանով պատրիարքարանի ունեցած կառավարչական հսկողության ղեկը գործնականում անցնում է այդ երկու ընտրովի մարմինների ձեռքը: 1847 թ. մայիսի 20-ին նորընտիր Ազգային ընդհանուր ժողովը հրավիրում է իր առաջին նիստը[22]: Ավելի ուշ՝ 1853 թ. հոկտեմբերի 21-ին, Գերագույն և Հոգևոր ժողովների հավանությամբ ու համաձայնությամբ կազմվում է «Ուսումնական խորհուրդ», որը ավելի շատ զբաղվելու էր ուսումնակրթական ծրագրերի մշակման, նոր դպրոցների շինարարության, հիվանդանոցի և այլ հարցերով: Այդ գործում իրենց ակտիվ դերակատարությունն ունեցան Կ. Պոլսի հայ ուսյալ գաղափարակիր երիտասարդներ՝ Ն. Ռոաինյանը, Նիկ. Պալյանը, Գր. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Կար. Ութուճյանը և այլք[23]: Այսպիսին էր պոլսահայ համայնքի հանրային կացությունը, մինչև որ 1853 թ. սկսվեց Արևելյան կամ Ղրիմի պատերազմը:

Այդպիսով, վերոնշյալը կարելի է համարել 1840-ական թվականների սահմանադրական շարժման գործնական այն առաջին նախաքայլերը, որոնք արդեն 50-ականի երկրորդ կեսին պիտի մարմնավորում գտնեին նոր մշակվելիք ազգային, կրոնական, մշակութային, հասարակական կյանքին վերաբերող Ազգային սահմանադրության կամ կանոնադրության մեջ:

Իրավիճակը փոխվեց ու ավելի բարդացավ, երբ սկսվեց ռուս-թուրքական Ղրիմի (1853–1856 թթ.) պատերազմը: Ռուս-թուրքական այդ հերթական պատերազմին, իրենց շահերի թելադրանքով, միջամտեցին Արևմուտքի տերություններ (Անգլիան, Ֆրանսիան և Ավստրո-Հունգարիան), որոնց ռազմական օժանդակության շնորհիվ Թուրքիան ազատվեց (փրկվեց) վերջնական պարտությունից, սակայն նրանց քաղաքա-

---

[22] Տե՛ս **Սարուխան Ա.**, *հշվ. աշխ.*, էջ 10:
[23] Տե՛ս նույն տեղում, էջ 11:

կան ու բարոյական ճնշմամբ ու հարկադրանքով Փարիզում հրավիրված հաշտության վեհաժողովի բացման նախօրյակին՝ 1856 թ. **փետրվարի 6 (18)-ին,** նույն սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակեց (ազդարարեց) երկրի բարեփոխումների մասին «**Հաթթը հյումայուն**»[24] անվանումով մի նոր (երկրորդ) հրովարտակ՝ դարձյալ լի իրեն հատուկ հակասություններով, հույսերով ու պատրանքներով: Այս հրովարտակը ևս կայսրության համար բազմաթիվ բարեփոխումներ էր խոստանում: Հատկապես ընդգծելի է, որ էական բարեփոխումներ էր խոստացվում քրիստոնյա հպատակներին: Այս հրովարտակից մի կարևոր հիմնադրույթ տեղ գտավ (ընդգրկվեց) օրեր անց՝ 1856 թ. մարտի 18 (30)-ին կնքված Փարիզի տրակտատի (պայմանագրի)՝ թիվ 9 հոդվածում[25]: «Թանզիմաթի» դարաշրջանի բարենորոգումների այդ հրովարտակ-օրենքը ևս հռչակում էր կայսրության բոլոր քաղաքացիների կյանքի, պատվի և գույքի ապահովություն, բոլորի հավասարությունը օրենքի առջև, կրոնի և կրթության ազատություն, դատարանում՝ անկախ ցեղից, կրոնից, դավանանքից ու սոցիալական դիրքից, իրավահավասարություն և այլն: Բայց հասկանալի է, որ օսմանյան ռազմա-ավատատիրական բռնավարչակարգի պայմաններում այն ևս կոչված չէր իրականություն դառնալու, վասնզի հրովարտակում գրվածը գտնվում էր խոր հակասության մեջ բուն կայսրության իրականության հետ: Այդ նույն վիճակը պահպանվեց նաև հաջորդ սուլթանի՝ Աբդուլ Մեջիդի եղբայր Աբդուլ Ազիզի (1861–1876 թթ.) օրոք:

Բայցևայնպես, «Թանզիմաթը» շոշափելի հետք թողեց Թուրքիայի տնտեսական, հասարակական, քաղաքական ու գաղափարական կյանքի վրա[26]: Վաստակաշատ պատմաբան Ա. Խառատյանի գնահատմամբ՝ երկու ռեֆորմներն էլ և՛ 1839 թ., և՛ 1856 թ., ուղղված էին Թուրքիայի եվրոպականացմանը, հպատակ ժողովուրդների քաղաքա-

---

[24] Տե՛ս Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 614: Բառակապակցությունը արաբերեն է, որը թարգմանաբար նշանակում է «Արքունի ձեռագիր» կամ «հրովարտակ»:

[25] Տե՛ս *Договоры России с Востоком...*, с. 110–111.

[26] **Խառատյան Ա.,** *Արևմտահայերի ազգային սահմանադրությունը (1860–1863 թթ.)* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1992, թիվ 2–3, էջ 51 և 57–58):

ցիական ու հասարակական որոշ իրավունքների ճանաչմանը[27]: Իրավաբան Գ. Գրիգորյանի գնահատմամբ՝ «Հաթթը հյումայունը»[28] հռչակում էր կայսրության հպատակների՝ քրիստոնյաների և մահմեդականների քաղաքական և քաղաքացիական իրավահավասարություն (հոդ. 8 և 9), պաշտոններ վարելու, ընտրելու և ընտրվելու, բոլոր մակարդակի ընտրովի մարմիններ (մեջլիսներ) հիմնելու, համայնքային վարչություններ ստեղծելու իրավահավասարության (հոդ. 14), դատարանում վկայություն տալու, օրենքի առաջ բոլորի իրավահավասարության մասին (հոդ. 21) և այլն[29]:

Եվ այս իմաստով, չի կարելի ասել, թե «Թանզիմաթը» առհասարակ դրական որևէ ազդեցություն չի թողել (ունեցել) արևմտահայ սոցիալ-տնտեսական ու հատկապես պոլսահայ քաղաքացիական կյանքի, իրավական, կրթական ու հոգևոր և ընդհանրապես հայ հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման վրա: «Թանզիմաթը,- կարդում ենք «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակությունում,- խթանեց օսմանահպատակ ոչ մահմեդական ժողովուրդների ազգային զարգացումը, ինչն անխուսափելիորեն տանում էր դեպի ազգային ինքնորոշման գաղափարը»[30]:

Պետք է նշել, որ Ղրիմի պատերազմի ավարտից հետո ավելի ուժեղացան Թուրքիայում բարենորոգչական մղումները, որոնք՝ իբրև արտաքին ազդակ, խրախուսվում ու խթանվում էին Արևմուտքի տերությունների (հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի) կողմից: Սուլթանական կառավարությունը Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու ճանապարհին պատրաստ էր հպատակ ժողովուրդներին «կերակրել» ամենաշատը տեղական ինքնավարություն տալու պատրանքներով: Թեև 1853–1856 թթ. ռուս-թուրքական (Ղրիմի) երկարատև ու արյունալի այդ պատերազմում չորս պետությունների միացյալ ուժերին պարտված կողմը Ռուսաստանն էր, բայց իր հերթին նաև Օսման-

---

[27] Տե՛ս **Խաչատյան Ա.**, *Արևմտահայերի ազգային սահմանադրությունը*, էջ 59:

[28] Բառակապակցությունը արաբերեն է, որը թարգմանաբար նշանակում է «Արքունի ձեռագիր» կամ «հրովարտակ»:

[29] **Գրիգորյան Գ.**, *Ազգային Սահմանադրություն Հայոց*, Եր., 2004, էջ 25:

[30] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 293:

յան կառավարության համար, ինչպես արդեն նշվեց, իբրև պարտավորեցնող պայման հանդիսացավ կայսրության քրիստոնյա փոքրամասնության իրավունքների պաշտպանության ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: Չնայած Մեծ տերությունների միջև առկա՝ Թուրքիայում տնտեսական շահեր հետապնդելու, քաղաքական գերիշխանության հասնելու, նեղուցներին տիրելու մրցակցային պայքարին, այդուհանդերձ, 1856 թ. մարտի 18 (30)-ին Փարիզի հաշտության 34 հոդվածներից բաղկացած պայմանագրում, ինչպես ասվեց, «Հաթթը հյումայուն»-ից վերցվել և ձևակերպվել էր թիվ 9-րդ հոդվածը, որը պարտավորեցնում էր սուլթանին՝ արդեն հռչակած հատուկ ֆերմանի՝ «Թանզիմաթի» հիման վրա «առանց դավանական (կրոնական) և էթնիկ խտրականության իր հպատակների (հատկապես կայսրության քրիստոնյա ազգաբնակչության) մշտական խնամքն ու բարօրությունը մեծահոգաբար հոգ տանելը»[31]: 1856 թ. մարտի 30-ի Փարիզի պայմանագրի հոդված 9-ում հիշատակվում էր այդ հրովարտակը, որում շեշտվում էր, որ այն պիտի հիմք ծառայի սուլթանի ու նրա կառավարության համար՝ բարեկարգելու քրիստոնյա հպատակների աշխարհիկ և հոգևոր կյանքը: Իրենց շահերին հետամուտ՝ «Թանզիմաթը» և դրանից բխող Փարիզի պայմանագրի այդ հոդվածը մի զորեղ կռվան (գործիք) էր եվրոպական պետությունների ձեռքում՝ ճնշում գործադրելու սուլթանական կառավարության վրա՝ բարվոքելու երկրի բոլոր հպատակների վիճակը՝ առանց ցեղի և կրոնի խտրականության: Դա կարելի է համարել արևմտահայ սահմանադրական շարժման և դրա արդյունքը հանդիսացող Ազգային սահմանադրության պաշտոնական իրավաքաղաքական նախադրյալներից մեկը:

## *2. «Ազգային սահմանադրության» մշակման գործընթացը*

1850-ական թթ. արևմտահայության շրջաններում **ազատամտականության** (լիբերալիզմի) հասարակական-քաղաքական մթնոլորտի

---

[31] *«Сборник договоров России с другими государствами (1856–1917)»*, под. ред. **Е.А. Адамова**, М., 1952, с. 25.

առկայությունն էլ խթան հանդիսացավ սահմանադրական շարժման աշխուժացման ու այն գործնական հիմքերի վրա դնելու համար: Բայց պոլսահայ, նույնը նաև զմյուռնահայ համայնքների տարբեր խավերում առկա էին որոշակի ներհակություններ (ըստ նրանց սոցիալ-տնտեսական պայմանների, աշխարհիկ ու հոգևոր դասային ու կառավարչական կարգավիճակի, նյութական, կրթական և այլ պայմանների)՝ **ամիրաների**, սեղանավորների, բանկիրների, վաճառականների, բարձր հոգևորականության, սոցիալապես ցածր աշխատավորական շերտերի, հիմնականում արհեստավորների (էսնաֆների), գործակատարների, ոսկերիչների, ինչպես նաև Եվրոպայում կրթություն ստացած և պետական ծառայության անցած երիտասարդ մտավորականության (հայ էֆենդիական) խավերի (դասերի) ու շերտերի միջև:

Ուստի, XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների և 1848–1849 թթ. եվրոպական հեղափոխությունների ազդեցությամբ ազատության գաղափարներով տարված, Եվրոպայում բարձր կրթություն ստացած արևմտահայ մի խումբ առաջադեմ բժիշկ, իրավաբան, ճարտարագետ և այլ երիտասարդ մտավորականներ՝ Ն. Ռոաինյան, Գր. Օտյանը Նիկ. Պալյան, Ս. Վիչենյան, Կ. Ութուճյան և ուրիշներ, «ձեռնամուխ են լինում,- կարդում ենք «Հայ ժողովրդի պատմության» բուհական դասագրքում,- ազգային կյանքի, հասարակական և կրոնական գործերի վերաբերյալ կանոնադրության մշակմանը: Ելնելով 1856 թ. մարտի 30-ի Փարիզի պայմանագրի (քանիցս հիշատակված) 9-րդ հոդվածի կատարման պահանջից՝ Բարձր Դռան գիտությամբ հանձնարարվում էր ոչ մահմեդական (հույն, հայ, հրեա) համայնքներին՝ կազմելու հանձնաժողովներ՝ իրենց համար ազգային կանոնադրություն մշակելու: 1857 թ. փետրվարին նրանք ավարտում են իրենց աշխատանքը և մշակված կանոնադրության նախագիծը ներկայացնում են Կ. Պոլսի Ընդհանուր ժողովի հաստատմանը»[32]: Այս կապակցությամբ, ճանաչված ազգային գործիչ Հ. Շահրիկյանը պատմական ակնարկի ձևով հիշեցնում է անում, որ Կ. Պոլսում պատգամավորական Ընդհանուր ժողով գումարելու

---

[32] **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.,** *Հայ ժողովրդի պատմություն (1801–1978 թթ.)*, Եր., 1979, էջ 171:

առաջին փորձն արվել է տակավին 1725 թ.՝ Կարապետ Ծծկեր Ոլնեցու Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առիթով (ի դեպ, սա Ամենայն Հայոց կաթողիկոսի Սբ. Էջմիածնից դուրս ընտրություններ անցկացնելու եզակի դեպքն է), որից հետո արդեն պատրիարքական ընտրությունների կապակցությամբ պարբերաբար գումարվել են Կ. Պոլսի Ընդհանուր ժողովներ: Ընդ որում, այդ ժողովների մասնակից կազմը ներկայացնում էին Կ. Պոլսի հայ հնագույն 6 թաղերի ավագ ու աթոռակալ քահանապետները, քարոզիչ եպիսկոպոս կամ վարդապետները, ամիրաները և արհեստավորների (էսնաֆների) գլխապետները[33]:

Սահմանադրության նախագծի մշակման ու քննարկումների կապակցությամբ պատմագիր, հոգևոր գործիչ Մ. արք. Օրմանյանը գրում է, որ 1857 թ. մարտի 22-ին՝ ուրբաթ օրը, պատրիարքարանի մեջ՝ **Հակոբոս** (**Հակոբ**) պատրիարքի (1848–1858 թթ) նախագահությամբ, բացվեց (գումարվեց) Ընդհանուր ժողովը, որին ներկա էին եկեղեցականներ, ամիրաներ, արհեստապետեր, մտավորականներ և առևտրականներ: Նրանում պիտի քննարկվեր արդեն մշակված կանոնադրության նախագիծը, որին «Սահմանադրություն» անուն էր տրված, «թէպէտ բառացի իմաստով կանոնադրութիւն կոչումէ չի տարբերիր»[34]: Ժողովականները այդ ծրագիր-նախագծին հավանություն են տալիս: Իբրև հաջորդ քայլ, այն ներկայացվեց կառավարության հաստատմանը, բայց բավական ժամանակ սպասումներից հետո մերժվեց այն առարկությամբ, թե «պետութեան մէջ պետութիւն չի կրնար ըլլալ»: Բայց Օրմանյանի կարծիքով, մերժման «իսկական պատճառը ազգին երեւելեաց մեջ ծագած գժտութեան հետևանքն էր», և որ «այն շատ **ազատամիտ** կը նկատուէր»[35]:

Այս նույն առնչությամբ, Հ. Շահրիկյանը նույնպես նշում է հետևյալը, որ 1857 թ. սահմանադրության մշակված ու խմբագրված տարբերակը ներկայացվում է Բ. Դռան, սակայն առանց վավերացնելու այն վերադարձվում է՝ առարկելով, որ «պետութեան մէջ պետութիւն չի կրնար

---

[33] Տե՛ս **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 21–22:

[34] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Բ, Պէյրութ, 1961, էջ 4016:

[35] Նույն տեղում, էջ 4016–4017:

ըլլալ»[36]: Կարելի է պնդել, որ դրանում հավանաբար տեղ են գտել թուրք պետական շրջանակների համար քաղաքական բնույթի անցանկալի մտքեր ու ձևակերպումներ: Սակայն, ըստ Մ. Օրմանյանի, նախագծին հետագա ընթացք չտրվելը, ինչպես ասվեց, բացատրվում էր ավելի շատ հայ շրջանակների ներքին տարակարծություններով:

Առկա պատմավավերագիր գրականությունը ցույց է տալիս, որ շուրջ երեք տարի՝ 1857–1860 թթ. ընթացքում ընդունվելիք փաստաթղթի շուրջ ընթացել են բուռն քննարկումներ, խորհրդակցություններ ու բանակցություններ: Նշենք, որ խմբագրական աշխատանքները ձգձգվել են նաև Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես V Աշտարակեցու վախճանվելու (1857 թ.), նրա թաղման և նոր կաթողիկոսի ընտրության հարցերով Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականության ու մտավորականության տևականորեն զբաղված լինելու պատճառով: 1858 թ. հունիսին ծերության պատճառով հրաժարական էր տվել Հակոբոս պատրիարքը, իսկ հոկտեմբերի 17-ին նոր պատրիարք էր ընտրվել **Գևորգ** (**Գեորգ**) եպիսկոպոսը (հետագայում՝ Ամենայն հայոց Գևորգ Դ (1866–1882) կաթողիկոս):

Բովանդակային ու խմբագրական զգալի փոփոխություններից հետո 1859 թ., կազմվում է սահմանադրության նախագծի վերամշակված մի նոր տարբերակ, որն այս անգամ հանդիպում է Գևորգ պատրիարքի, նաև պահպանողական ու հետադեմ այլ շրջանների դիմադրությանը և մերժվել: Ծագած խնդիրը հարթելու համար կազմվում է 5 եկեղեցական և 14 աշխարհական անձանցից կազմված մի նոր հանձնաժողով[37]: Եվ 1857 թ. ու 1859 թ. նախագծերը իրար համադրելով ու ձևակերպումներն իրար մերձեցնելով՝ հաջողվել է կազմել սահմանադրության կամ կանոնադրության վերջնական մի նախագիծ: Այս առնչությամբ Մ. Օրմանյանը նշում է, որ այս անգամ էլ Գևորգ պատրիարքը դարձյալ նախորդի պես առարկում է՝ գտնելով, որ դրանով պատրիար-

---

[36] **Ատոմ,** *նշվ. աշխ.*, էջ 38:

[37] Հանձնաժողովի կազմում ընդգրկված են եղել Կ. Յութուճյանը, Բարունակ բեյը, Մկր. Աղաթոնը, Ն. Ռուսինյանը, Ենովք Տեմիրճիպաշյանը, Գր. Օտյանը (տե՛ս *«Հայ ժողովրդի պատմություն»*, հ. V, Եր., 1974, էջ 336):

քարանի իրավունքները կրճատվելու (սահմանափակվելու) են ու ենթարկվելու են Ընդհանուր ժողովի կամքին[38]:

Բայց, ի վերջո հաջողվում է Գևորգ պատրիարքի դիմադրությունը կոտրել՝ նրան գահընկեց անելու միջոցով: Մ. Օրմանյանը նշում է, որ երբ Գևորգ պատրիարքը չկարողացավ իր տեսակետն առաջ տանել, 1860 թ. ապրիլի 21-ին հրաժարական ներկայացրեց, «հրաժարեցաւ՝ ի պաշտօնէ իւրմէ յոչ կամաց»[39]: Ստեղծված իրավիճակում նախագծի հեղինակները, ստանալով նաև հանրության աջակցությունը, հաջողում են վերախմբագրված «Կանոնադրության» նախագիծը **1860 թ. մայիսի 24-ին** Ընդհանուր ժողովի միջոցով անցկացնել և պատրիարքի նոր տեղապահ, Ադրիանապոլսի հոգևոր առաջնորդ Սարգիս եպս. Գույումճյանի կողմից վավերացնել տալ ու դրանով դնել գործողության մեջ[40]: Ի դեպ, հենց այդ ժամանակ էլ, «Կանոնադրության» հիմնադիր անդամներից Նահապետ Ռուսինյանի առաջարկությամբ ընդունված փաստաթուղթը կոչվեց **Ազգային Սահմանադրություն**[41]:

Մ. Օրմանյանը, այլ հեղինակներից հղումներ անելով, գրում է, որ մայիսի 2-ին 87 քվեով պատրիարք ընտրված Ս. եպս. Գույումճյանի նախագահությամբ, մայիսի 24-ին Մայր եկեղեցում գումարված Ընդհանուր ժողովը, նախկին պատրիարք Հակոբոսի, գլխավոր եկեղեցականների և բոլոր դասակարգերի ներկայացուցիչների բազմության մասնակցությամբ, նախ ծայրեծայր ընթերցեց Ազգային սահմանադրությունը, որից հետո եկեղեցականները վկայեցին, որ այն «Հայ եկեղեցւոյ օրինաց հակառակ բան չի պարունակեր»[42]: Ամիրաները՝ Տատեանք, Պալեանք, Երամեանք և այլք, «նոյնպես համարձակ հավանութիւն տվին», մտավորականների, առևտրականների և արհեստավորների

---

[38] **Օրմանեան արք. Մաղաքիա,** *Ազգապատում,* հ. Գ, մաս Բ, էջ 4018:

[39] **Պէրպէրեան Աւետիք,** *Պատմութիւն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչ Յամն 1860),* էջ 621, նաև **Օրմանեան արք. Մաղաքիա,** *Ազգապատում,* հ. Գ, մաս Բ էջ 4019:

[40] Մայիսի 14-ին Բարձր Դռան Մեծ եպարքոսը Սարգիս արք. Գույումճյանին հաստատում է իր պաշտոնում (տե՛ս «Մեղու», 20 մայիսի, 1860 թ., թիվ 98, էջ 106):

[41] Տե՛ս **Սարուխան Ա.,** *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910),* հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 16 **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.,** *նշվ. աշխ.,* էջ 172:

[42] **Օրմանեան արք. Մաղաքիա,** *Ազգապատում,* հ. Գ, մաս Բ, էջ 4019:

ներկայացուցիչները ևս, և Ազգային ընդհանուր ժողովը միաձայն ընդունեց ծրագիրն ու հրապարակեց (հռչակվեց) այն[43]: Այս իրադարձության կապակցությամբ ճանաչված պատմագիր Ավետիս Պերպերյանը գրում է. «Եղեւ ժողով մեծ ի պատրիարքարանն հոգեւորականաց եւ աշխարհականաց, եւ Ազգային Սահմանադրութիւնն ընդունելութեամբ ամենեցուն ստորագրվեցաւ»[44]: Վերստին հիշեցնենք, որ Սահմանադրության վերջնական տարբերակի մշակման գործում աշխարհական մտավորականներից ակտիվ դերակատարություն են ունեցել Ն. Ռուսինյանը, Կ. Ութուճեանը, Գր. Օտյանը, Մկրտիչ Աղաթոնը, Յաղուբ Յաղուբյանը և ուրիշներ: Թեև Ս. Վիչենյանը, Ն. Պալյանը այս վերջին հանձնաժողովի խմբագրակազմում չեն եղել, սակայն նախորդ նախագծերում նրանք մեծ գործ էին կատարել:

Արևմտահայ սահմանադրական շարժման այս փուլում առաջացած ոչ նպաստավոր հանգամանքներից մեկը կարելի է համարել պոլսահայ հոգևոր շրջանակներում տարածում գտած, այսպես կոչված, «Հասունյան քաղաքական շարժումը»[45]: Այդ հոգևոր գործիչը խնդիր էր դրել, հենվելով պապական իշխանության և կաթոլիկ գաղափարների վրա, ամեն կերպ ծայրահեղական դիրքերից ընդդիմանալ Կ. Պոլսի պատրիարքությանը և Էջմիածնի կաթողիկոսությանը, ուժով ու հարկադրանքով հայության մեջ արմատավորել լատինական ձևեր ու կերպեր, կաթոլիկ հոգևոր-դավանական արժեքներ: Մ. Օրմանյանը ակնարկում է, որ Ա. Հասունը նույնիսկ ծրագիր է ունեցել թուրքահայ վեց շրջաններում՝ Բուրսայում, Անկարայում, Տրապիզոնում, Խարբերդում, Կարինում և Արդվինում հիմնել հայ կաթոլիկական թեմեր[46]: Դավանական ու մրցակցային այդ վեճերը (դիմակայությունը), ինչ խոսք, խաթարում ու վնասում էին ծագած համազգային նշանակության խնդիրները,

---

[43] Տե՛ս **Օրմանեան արք. Մաղաքիա,** *Ազգապատում,* հ. Գ, մաս Բ, էջ 4019:

[44] **Պէրպէրեան Աւետիս,** *Պատմութիւն Հայոց (սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչ Յամն 1860),* էջ 621:

[45] Խոսքը Սիրիայում ծնված կաթոլիկ եկեղեցական գործիչ Հռոմում սովորած, 1840–1860-ական թթ. Օսմանյան կայսրությունում կաթոլիկ հայերի առաջնորդ, Անարզաբայի եպիսկոպոս պատրիարք **Անտոն Հասունյանի** (1809–1884 թթ.) մասին է:

[46] **Օրմանեան արք. Մաղաքիա,** *Ազգապատում,* հ. Գ, մաս Ա, էջ 3924:

այդ թվում՝ սահմանադրական բարեփոխումների հարցը միասնաբար առաջ տանելու գործին:

Սահմանադրությունը տարածքային ընդգրկման առումով ներառում էր ամբողջ կայսրության հայությանը (ընդամենը 65 հոգևոր վիճակ) և իրենից ներկայացնում էր արևմտահայության ներքին կյանքին վերաբերող ծրագրային քաղաքացիաիրավական բնույթի մի փաստաթուղթ՝ իր օրենսդիր և գործադիր մարմիններով: Ի պաշտոնե պատրիարքը ստանձնում էր հրավիրվելիք բոլոր Ազգային ընդհանուր ժողովի նախագահի պարտականությունը, նա օսմանահպատակ պիտի լիներ և այլն: Ազգային սահմանադրությունը տակավին Բարձր Դռան կողմից չհաստատված՝ անցկացվեցին երեսփոխանական (պատգամավորական) ընտրություններ, որոնք տևեցին երեք ամիս: Կ. Պոլսի մամուլը արձագանքել է մայրաքաղաքի թաղերում և գավառներում անցկացված ընտրություններին: Այսպես, «Մեղու» տասնօրյա հանդեսն ուշադիր հետևել է ընտրությունների անցկացման ընթացքին և դրական է արտահայտվել դրանց արդյունքների վերաբերյալ: Հոդվածագիրը հանդեսի առաջնորդողում պատմում է, թե ինչպես են անցկացվել Ազգային ընդհանուր ժողովի ընտրությունները հունիսի 26-ի կիրակի օրը Պոլսի թաղերից Խասգյողում և Բերայի մեջ: Թղթակիցը մամուլում զետեղել է ֆրանսիացի իր ծանոթ-բարեկամի ստացած տպավորությունը Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում անցկացված քվեարկությունից: «Հայերը կ՚ըսէ Եւրոպացւոց կարծածին պէս չ՚են եղեր, անոնց հոգին արթուն է եղեր և ամենքն ալ քաղաքակրթութեան վայելման միջոցներուն խելահաս, այն անձինքը, որ մեզի ձուկ կամ պտուղ կծախեէին, որ մեզ կածիլէին կամ մեր դրանց բաղնիքը կը շինէին եւ այլն և զորոնք մենք իբրև անսպայու անկիրէ առ ոտն կը հարկանէինք՝ հոն քուէ տուպին մոտ տեսնելու էր՝ թէ ի՚նչ վեհանձնութեամբ և ակնածութեամբ կը նէտեին իրենց քուէն ու անուննին անոր քով դրված թուղթին վրա ստորագրելնուն ետև հանգարա խղճմըտանքով ու զուարթ դէմքով և վեհ ճակատով կը հեռանային»[47]:

[47] «Մեղու», Կ. Պոլիս, 30 հունիսի 1860 թ., թիվ 102, էջ 137:

Արդյունքում, 1860 թ. **օգոստոսի 25**-ին Կ. Պոլսում՝ Մայր վարժարանի սրահի մեջ, գումարվեց ոչ լիակազմ 1-ին ազգային Ընդհանուր ժողովը, որին մասնակցել են սահմանադրությամբ նախատեսված 220-ի փոխարեն, ընդամենը 180 պատգամավոր, որից 120 ընտրված երեսփոխաններ (պատգամավորներ) էին և 60-ը՝ չընտրված (հրավիրված-անդամակիցներ), այսինքն՝ նրանք, ովքեր ի պաշտոնե (իրենց զբաղեցրած պետական, կրթական, հոգևոր, լրագրական, խմբագրի և այլ կարգավիճակով) առանց ընտրության իավունք ունեին ներկայացուցչական տեղ զբաղեցնելու Ազգային ընդհանուր ժողովում: Պատմագիր Ա. Սարուխանի ներկայացմամբ՝ այդպիսիք էին բոլոր եպիսկոպոսները, բարձրաստիճան պետական հայ պաշտոնյաները (սեղանավորները), ազգային մատենագիրները, ավագ ուսուցիչները, լրագրերի խմբագիրները և այլն[48]: Այդպիսով, 1860 թ. մայիսի 24-ի Սահմանադրությամբ, իբրև առաջին գործնական քայլ, ձևավորվեց ընդամենը **180** երեսփոխաններից (պատգամավորներից), որոնցից 120-ը ընտրված, իսկ 60-ը՝ ոչ, առաջին Ընդհանուր ժողովը (խորհրդարանը)[49]:

Սակայն «Ազգային սահմանադրության» պետական-պաշտոնական մակարդակով վավերացումը և ամբողջությամբ այն գործնական կիրառության մեջ դնելը ձգձգվեց: Դրա պատճառը մի կողմից՝ հայ հոգևոր և աշխարհիկ շրջանակների ներսում առկա ներքին տարակարծություններն էին, որոնք հաճախ ուղեկցվում էին փողոցային բողոքներով և անգամ ծեծկռտուքներով, իսկ մյուս կողմից էլ՝ ժամանակ շահելու նպատակով Բարձր Դուռն էր գիտակցաբար հետաձգում դրա հաստատումն ու գործադրումը: Տվյալներ կան, որ հակասահմանադրական պայքարի մեջ էին ներքաշվել նախկին պատրիարքներ Գևորգ և Հակոբոս եպիսկոպոսներն ընդդեմ Սարգիս պատրիարքի ու սահմանադրության: Այդ ընթացքում տեղի է ունեցել նաև աթոռակռիվ: Ընդ որում, ընդդիմության մի հատված մտադրություն է ունեցել Հակոբ եպս. Եդեսացուն դարձնել Կ. Պոլսի պատրիարք, իսկ Գեորգ եպս-ին՝ ընտրել Երուսաղեմի պատրիարք: Սակայն Բարձր Դուռը չի համաձայնում

---

[48] **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 21:
[49] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 365:

պատրիարք փոխելու առաջարկին: Այնուամենայնիվ, լարված մթնոլորտի պատճառով, 1861 թ. հոկտեմբերի 21-ին Սարգիս պատրիարքը հարկադրված հրաժարական է տվել[50]:

Ստեղծված իրավիճակում 1861 թ. աշնանը սահմանադրությունը կրկին վերաքննության ենթարկելու համար կառավարությունը կազմում է նոր հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Սերվիչենը, Ստ. Ասլանյանը, Գ. Աղաթոնը, Հ. Նորատունկյանը, իսկ նախկին անդամներից՝ Գ. Օտյանը, Ն. Ռուաինյանը և ուրիշներ: Արդյունքում, կրկին վերանայվեց, փոփոխվեց ու խմբագրվեց սահմանադրության տեքստը, և 1862 թ. ապրիլին վերախմբագրված նոր տարբերակը ներկայացվեց կառավարության հաստատմանը: Ընդ որում, պոլսահայության մեջ շարունակվում էր մամուլով բանակռիվն ու փողոցային պայքարը սահմանադրության կողմնակիցների (Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան, Կ. Փանոսյան, նաև Պոլիս ժամանած Մ. Նալբանդյան) ու հակառակորդների (Հ. Զամուռճյան-Տերոյենց, նաև դրսից՝ Մսեր և Զարմայր Մսերյաններ և այլք) միջև:

Թուրքական իշխանությունների կողմից կրկին ձգձգվում է նրա վավերացումը, և շուրջ մեկամյա քաշքշուկներից, խմբագրական ու բովանդակային (հատկապես հայերեն ու թուրքերեն տարբերակների) որոշ շտկում-վերախմբագրումներից հետո՝ **1863 թ. մարտի 17-ին,** Բարձր Դուռն ի վերջո վավերացնում է այն՝ «իբրեւ օսմանյան պետական օրէնք»: Պատրիարքարան ոտարկվեց սուլթանի հաստատած **Ազգային սահմանադրությունը** թուրքերեն՝ **«Նիզամնամէի միլլէթի էրմէնիան»** վերտառությամբ[51]: Մի քանի օր անց՝ **մարտի 20-ին**, Ազգային ընդհանուր ժողովը, պատրիարքի տեղապահ Ստեփան եպս. Մաղաքյանի նախագահությամբ, միաձայն ընդունեց փաստաթուղթը և շնորհակալական ուղերձ հղեց առ Բարձր Դուռ[52]: Իրազեկենք, որ արևմտահայերի «Ազգային Սահմանադրություն Հայոց»-ը թարգմանվել ու լույս է

---

[50] **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Բ, էջ 4046–4052:

[51] Տե՛ս **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910 թթ.)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 24–25, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 5, Եր., 1974, էջ 340, նաև՝ *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 367:

[52] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 28:

տեսել մի քանի այլ լեզուներով՝ ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն: Կարծում ենք, որ Բարձր Դռան կողմից սահմանադրության հաստատման գործում իր դերն է խաղացել նաև 1862 թ. ամռանը բռնկված Զեյթունի աննախադեպ հերոսամարտը:

Ի դեպ, այդ նույն պատմաշրջանում, իբրև ազգային-տարածքային ինքնավարության ձեռք- բերման նախադեպեր, Օսմանյան կայսրությունում սահմանադրական շարժման ու պայքարի ճանապարհով ինքնավարության հասնելու հաջողված փորձեր են կատարվել Լեռնային Լիբանանում, Կրետե կղզում, կայսրության հունական ու հրեական համայնքների շրջանում և այլն: Այսպես, օրինակ, հայտնի է, որ եվրոպական հինգ տերությունների միջամտությամբ Լեռնային Լիբանանի համար մշակվել էր «Կանոնադրություն» և **1861 թ. հունիսի 9-ին** Կ. Պոլսում կնքվել էր համապատասխան մի փաստաթուղթ, որով Լ. Լիբանանի նախկին երկու շրջանների միավորումով ստեղծվում էր մեկ միասնական ինքնավար նահանգ (մութասարիֆություն)՝ Օսմանյան կայսրության կազմում, եվրոպական պետությունների վերահսկողության ներքո[53]: Հավելենք նաև, որ այդ նպատակին հասնելու ճանապարհին, մինչ այդ կանոնադրության ընդունումը, 1860 թ. մայիս-հունիս ամիսներին, Լիբանանում տեղի էին ունեցել մահմեդական դրուզների կողմից հազարավոր քրիստոնյա մարոնիների կոտորածներ: Եվ այդ փաստաթուղթը կոչված էր կարգավորել տեղի բազմաէթնիկ ու բազմակրոն ժողովուրդների հարաբերությունները: Կանոնադրությամբ ինքնավար մարզը կառավարելու համար՝ եվրոպական պետությունների ներկայացմամբ, սուլթանը նշանակում էր գեներալ-նահանգապետ (մութասարիֆ), սակայն ոչ լիբանանցի օսմանահպատակ քրիստոնյա[54]: Եվ թող զարմանալի չթվա՝ առաջին նահանգապետ էր նշանակվել հայազգի Արթին Կ. Դաուդյանը[55]:

---

[53] Տե՛ս **Թոփուզյան Հ.Ս.**, *Միրիայի և Լիբանանի հայ գաղթօջախի պատմություն (1841–1946 թթ.)*, Եր., 1986, էջ 302:

[54] Տե՛ս **Եղոյան Ա.**, *Լիբանանը Մութասարիֆության շրջանում (1861–1915 թթ.)*, սեղմագիր, Եր., 2014, էջ 3, նաև՝ hy.wikipedia.org/wiki/Լիբանան:

[55] Տե՛ս **Հովհաննիսյան Նիկ.**, *Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է*, Եր., 2010, էջ 78:

### *3. Սահմանադրություն, թե՞ կանոնադրություն*

Անշուշտ, իրավաքաղաքական իմաստով չափազանցություն կլինի այդ փաստաթուղթը սահմանադրություն անվանելը, քանզի սովորաբար սահմանադրություն կոչվածը ժամանակակից չափանիշներով ունենում է իրավական պետությունը, էլ չենք խոսում նրա միջազգայնորեն ճանաչված լինելու մասին: Եվ այդ իմաստով արևմտահայերի Ազգային սահմանադրությունը չպետք է շփոթել իրավական այս կամ այն պետության հիմնական օրենք հանդիսացող սահմանադրության հետ: Հիմնահարցի քաջագիտակ հետազոտող Ա. Սարուխանի կարծիքով՝ «Սահմանադրութիւն» մեծադղորդ կոչման փոխարեն ավելի հարմար կլիներ այն անվանել պարզապես «Կանոնադրութիւն հայ համայնքի», որն իր բովանդակությանը համապատասխան, կոչված էր կազմակերպել հայ աշխարհիկ և կրոնական հասարակական կյանքը[56]:

Հասկանալի է, որ Օսմանյան Թուրքիան, լինելով բացարձակ միապետական, ամբողջատիրական ու բռնապետական երկիր, ինքնին, խոսք չէր կարող լինել արևմտահայության համար իրական ու իսկական սահմանադրական կարգի մասին: Բնական է, որ սուլթանական կառավարությունը չէր կարող հանդուրժել ու թույլ տալ նման կարգավիճակ: Սա պիտի համարել ընդամենը հայոց հոգևոր և աշխարհիկ ազգային ներքին հարաբերությունները կանոնակարգող, Բարձր Դռան կողմից օրենքի ուժ ստացած իրավական փաստաթուղթ: Ավելին, խոսքը վերաբերում է ոչ մուսուլման (քրիստոնյա) հպատակ էթնոսի ներքին կյանքին ինքնավարություն տալու մասին: Այս առնչությամբ կարելի է նաև դատողություն անել, որ իշխանությունների համար միգուցե ավելի դյուրին էր, հպատակ ժողովրդին նման կարգավիճակ տալով, հնազանդ պահել ու անցավագին կառավարել երկիրը:

Հայտնի է նաև, որ այս կամ այն պետությանը վերաբերող սահմանադրությունը կոչված է սահմանելու տվյալ երկրի պետական կառուցվածքը, ընտրական համակարգը, պետմարմինների գործունեության սկզբունքները, դրանց տարանջատման ու հակակշռման աստիճանը,

---

[56] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 17:

քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները և այլն: Բայց այստեղ, մեր առջև ծառացած խնդրի քննության պարագայում, խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրությունում ապրող հայ համայնքի համար սահմանված ներքին սամանադրություն-կանոնադրության ընդունման փաստաթղթին: Ինչպես նշվեց, թուրքերենում և պաշտոնական փաստաթղթերում 1863 թ. հաստատվածը անվանվում էր «**Նիզամնամէի միլլէթի էրմէնիան**», հայերեն՝ «Հայ ազգի Կանոնադրություն», մինչդեռ թուրքերենում «սահմանադրություն» բառն իր հասկացությամբ կամ բովանդակությամբ անվանվում է «**Կանունու էսասի**»-ն[57]:

Հարկ է նշել, որ XIX դարի երկրորդ կեսում, հատկապես արևմտահայության մտավորականության կենտրոն հանդիսացող մայրաքաղաք Կ. Պոլսում, շատ տարածված էին հայատառ թուրքերենով հրատարակությունները՝ լույս էին ընծայվում հարյուրավոր անուն գրքեր, մի քանի տասնյակ պարբերականներ և այլն: Նման հրատարակությունները ամենից առաջ հասցեագրվում էին հայ հասարակական-քաղաքական կյանքով հետաքրքրվող հայ շրջանակներին, որոնք չգիտերին մայրենի լեզուն և հարկ էր թուրքերենով իրազեկել այդ մարդկանց: Մասնավորապես, հայատառ թուրքերենով պարբերականներից հանրահայտ է հրապարակախոս Կարապետ Փանոսյանի խմբագրած «Մանզումէի էֆքեար» (Մտածումների շարք) թերթը, Կ. Պոլիս, 1866–1901 թթ.)[58]:

«Սահմանադրություն», թե «կանոնադրություն» համապատասխանաբար հայերեն և հայատառ թուրքերենով ներկայացնելը խնդրին գիտակ, ազգային-քաղաքական գործիչ Հարություն Շահրիկյանի կարծիքով՝ հայերեն բնագրից թուրքերեն թարգմանության մեջ «կանոնադրություն» հղումը ավելի շուտ եղել է խմբագրակազմի (ընդ որում, բոլորն էլ ազգությամբ եղել են հայ) «**մտավախության** արդիւնք, քան պետական լուրջ ընդդիմութեան»[59]: Ըստ ամենայնի դա արվել է հետագա բարդություններից խուսափելու համար: Բացի այդ, պետք է հաշվի առ-

---

[57] *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 371–372:

[58] Տե՛ս *Հայ պարբերական մամուլի պատմությունից*, գ. 1, խմբ. **Ա. Կարինյան**, Եր., 1963, էջ 240–241 և 243:

[59] **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 10:

նել, որ արևմտահայերենում «սահմանադրություն» և «կանոնադրություն» բառերը հոմանիշներ են, ինչը նշանակում էր՝ օրենք, կանոն, և դրանք չեն տարբերակվում քաղաքական կամ իրավական տեսակետից[60]: Բերվածին հավելենք, որ փաստաթղթին նման «սահմանադրություն» անվանում տալը պայմանավորված է եղել նրա մշակող, եվրոպական բարձր կրթություն ստացած, արևմտահայ ազգային-ժողովրդավարական արժեհամակարգի կրող մտավորականների՝ Ն. Պալյանի[61], Ն. Ռոաինյանի, Գ. Օտյանի և մյուսների անձնական նախաձեռնությունը: Ավելին, մինչ այդ էլ արևմտահայերի ազգային ու եկեղեցական գործերին վերաբերող կանոնադրությունները շատ հաճախ կոչվել են սահմանադրություն[62]: Հավելենք, որ Հայ եկեղեցու կառավարմանը վերաբերող կանոնադրությունը միաժամանակ կոչվել է սահմանադրություն: Այսպես, օրինակ, արևմտահայ պատմաբան ու բանասեր **Արշակ Ալպոյաճյանը** 1945 թ. հունիսին Էջմիածնի ազգային-եկեղեցիական Ընդհանուր ժողովում ընդունվելիք կանոնադրությունը անվանում էր «Հայ Եկեղեցիին Սահմանադրութիւն», որն արտացոլված է հենց նրա աշխատության խորագրում[63]: Այստեղ, իհարկե, կարևորը ոչ միայն և ոչ այնքան զուտ անվանման ձևն է, որքան այն կրող փաստաթղթի բովանդակությունը, առավել ևս կիրարկման (գործադրման) գործիքակազմն ու երաշխիքները, որոնք, սակայն, պակասում էին նրանում, եթե չասենք, ըստ էության, բացակայում էին:

Անշուշտ, փաստաթուղթն իր բովանդակությամբ կոչված էր կարգավորելու (համակարգելու) Օսմանյան կայսրությունում հայ համայնքի ու եկեղեցու ներքին՝ ազգային (էթնիկ), հասարակական, կրթամշակութային, հոգևոր-կրոնական և այլ գործերը: Իհարկե, պետք է նկատի առնել, որ այն ժամանակների միահեծան ու բռնապետական Թուրքիան տակավին չուներ սեփական համապետական սահմանադրութ-

---

[60] Տե՛ս **Ավետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, *Նոր բառագիրք Հայկազեան լեզուի*, հ. Ա, Եր., 1979, էջ 1051

[61] Ցավոք, Սահմանադրության հիմնադիր գաղափարախոսներից Նիկողոս Պալյանը վախճանվել է 1858 թ., 32 տարեկան հասակում, մինչ դրա պաշտոնապես ընդունումը:

[62] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 372:

[63] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը*, էջ Ա:

յուն, ուստի, բնականաբար, խոսք չի կարող լինել նրա գերիշխանության տակ հեծող արևմտահայության իսկական սահմանադրության մասին: Բայց և այնպես, այն արևմտահայության ներքին ազգային ու հոգևոր շրջանակների համար որոշակի ինքնուրույնության, ներքին հանրային կյանքը համակարգելու հնարավորություններ էր ընձեռում[64]:

Ազգային-քաղաքական առումով պետք է նշել, որ «սահմանադրություն» ձևակերպումը վկայում է արևմտահայ լուսավորյալ մտավորականության ու ժողովրդի ձգտման մասին՝ հասնելու ազգային-մշակութային ինքնուրույնության (**ինքնավարության**), իսկ միգուցե վերջին հաշվով հասնելու քաղաքական ավելի բարձր նշաձողի՝ **հող-հայրենիքի ազատագրության**: Ուշադրության է արժանի պրոֆ. Հ. Ղազարյանի արտահայտած տեսակետը, որ եվրոպական ազատամտական հովերով տարված հայ լուսավորյալ սահմանադրականներն իրենց կազմած նախագծի մեջ տեսնում էին «**ապագա հայկական բուրժուական հանրապետության սաղմը** (ընդծումը՝ Ա.Հ.)»[65]: Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, ինչ խոսք, նպաստեց արևմտահայ հատվածում ոչ միայն կրթալուսավորական, գրահրատարակչական և, առհասարակ, ազգային-մշակութային կյանքի աշխուժացմանը, մյուս կողմից՝ որոշակիորեն սահմանափակեց պատրիարքարանի և հոգևորականների (կղերականների) իշխող ու ճնշիչ դերակատարությունը, ինչի շնորհիվ սկսեցին ավելի զարգանալ հասարակական հարաբերությունները, աշխարհիկ քաղաքացիական սկզբունքները, և աստիճանաբար մեծանալ ժողովրդական զանգվածների դերակատարությունը: «Իր ամբողջ կանոնադրական բնույթով հանդերձ,- կարդում ենք «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակությունում,- սահմանադրությունը սնուցում էր **ազգային ինքնորոշման տրամադրություններ** (ընդ. մերն է – Ա.Հ.)[66]: Նույն կերպ, չի կարելի չհամաձայնել նաև պրոֆեսոր Վ. Պարսամյանի այն եզրահանգմանը, որ «**Ազգային սահմա-**

---

[64] Տե՛ս **Հակոբյան Ա.**, *Արևմտահայոց Ազգային սահմանադրությունը հայոց պետականության գաղափարի հոլովույթում (1860–1863 թթ.)*, Եր., 2023, էջ 31:

[65] **Ղազարյան Հ.**, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ.*, էջ 453:

[66] *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 372:

**նադրությունը մի լուսավոր էջ էր, արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի հասունության արտահայտություն, նրա առաջադիմական ուժերի պայքարի արդյունք** (ընդգոմը հեղինակինն է – Ա.Հ.)»[67]: Իսկ ակադեմիկոս Գ. Գալոյանի գնահատմամբ՝ «Ազգային սահմանադրությունը հայ ժողովրդի լայն զանգվածների մեջ արթնացրեց Հայոց ինքնուրույն պետականությունը վերստեղծելու գաղափարը»[68] և այլն:

## *4. 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների, նաև դրանց հայատառ թուրքերեն տարբերակի հետ համեմատության հարցերի շուրջ*

Ամենից առաջ աչք են զարնում սահմանադրություն, թե կանոնադրություն համարվող երկու՝ 1860թ. և 1863 թ. տարբերակների կառուցվածքի ու հոդվածների քանակական տարբերությունները, որոնք, ինչ խոսք, շատ էական են: Այսպես, 1860 թ. պատրիարքարանի հաստատած տարբերակը կազմված է **150** հոդվածից, իսկ 1863 թվականինը՝ վերախմբագրելով, կրճատելով ու խտացնելով ամփոփվել է ընդամենը **99** հոդվածում, ինչը գրեթե նույնությամբ տեղ է գտել նաև հայատառ թուրքերեն տարբերակում: Հարց է ծագում. հոդվածների քանակի նման կտրուկ, ավելի քան 1/3-ով կրճատումը չի՞ անդրադարձել, արդյոք, 1863 թ. Բարձր Դռան կողմից վավերացված սահմանադրության վերջնական տարբերակի կառուցվածքի, բովանդակության, իրավական կամ քաղաքական կողմերի վրա:

Ազգային սահմանադրության 1860 թ. մայիսի 24-ի Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընդունված և պատրիարքի կողմից Քրիստոսի դրոշմապատկերը կրող պատրիարքական կնիքով վավերացված, իսկ այնուհետև շուրջ երեք տարվա ձգձգումներից հետո՝ 1863 թ. մարտի 17-ին Բարձր Դռան կողմից վերջնականապես պաշտոնապես վավե-

---

[67] **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.**, *նշվ. աշխ.*, էջ 175:

[68] **Գալոյան Գ.Ա.**, *Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, էջ 223:

ռացված տեքստերի կառուցվածքային ու բովանդակային համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև կան շատ մեծ ընդհանրություններ, բայց և որոշակի, կարելի է ասել՝ ոչ էական տարբերություններ:

Երկու տարբերակների համեմատությունը սկսենք Ազգային սահմանադրության ներածական բնույթ կրող «Հիմնական սկզբունք»-ից: Երկու դեպքում էլ պահպանված են **վեց** հիմնադրույթային կետերը, միայն այն տարբերությամբ, որ կատարվել են հարցերի հաջորդականության ու շարադրանքի որոշ տեղաշարժեր ու վերախմբագրումներ: Այսպես, 1860-ի «Ա» ենթակետում տեղ գտած «Ազգային Վարչութեանը Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը» պահանջը 1863 թ. տարբերակում լրացվել է «Սահմանադրութեան միջոցաւ» կապակցությամբ և որոշակի խմբագրմամբ տեղափոխվել է Դ ենթակետ: Այստեղ, թերևս, նկատվող տարբերություններից մեկն այն է, որ եթե կարելի է տարբերություն համարել 1860 թ. «Տաճկաստանի Հայոց»-ի փոխարեն 1863 թ. տարբերակում «Թուրքիոյ Հայոց» է[69]:

1860 թ. տարբերակի «Հիմնական սկզբունք»-ի Ե ենթակետում խոսվում է Ազգի բարոյական, մտավոր, նյութական պարտականությունների, Հայաստանյայց եկեղեցու դավանանքն ու ավանդույթներն անխախտ պահելու և այլնի մասին: Այս նույն ձևակերպումը նույնությամբ տեղափոխվել է 1863 թ. տարբերակի Գ ենթակետ, միայն թե «**անխախտ**» բառը փոխարինվել է ավելի նուրբ ու բարեհունչ «**անարատ**» բառով[70]:

1863 թ. Ազգային սահմանադրության «Հիմնական սկզբունք» հիմնադրույթների Ե ենթակետում տեղ է գտել մի էական ձևակերպում, որ «Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ

---

[69] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, Կ. Պոլիս, 1860, էջ 5, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.), Կ. Պոլիս-Սթանպոլ, «ի տպարան Յ. Միւհէնտիսեան», նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1012:

[70] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»* Կ. Պոլիս, 1860, էջ 6, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 11, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1011:

ըլլայ[71]», մի բան, որ բացակայում է 1860 թ. տարբերակում, ընդ որում, «Երեսփոխանական» բառը ընդգծված է:

Կառուցվածքի առումով, 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունների բուն գլուխների համեմատությունը ցույց է տալիս, որ երկու դեպքում էլ դրանց քանակը նույնն է՝ ընդամենը Ե (5) գլուխ, սակայն էապես փոփոխված են վերնագրերը, հոդվածների հաջորդականությունը, իսկ առանձին դեպքերում նաև բովանդակությունը: Կառուցվածքային համեմատությունը ցույց է տալիս, որ ըստ բովանդակության ու հարցադրումների, կատարվել են տեղաշարժեր ու փոփոխություններ, հոդվածների խտացումներ և այլն, որոնց հետևանքով ավելի է բարելավվել առաջադրված հարցերի ու հոդվածների հաջորդայնությունն ու միմյանց հետ ներքին տրամաբանական կապը՝ առանց էապես խաթարելու հոդվածների բովանդակությունը, մի խոսքով, բուն տեքստի հոդվածային շարադրանքը:

Երկու տարբերակներում էլ գլխավոր ու ամենաընդարձակ գլուխն Ա-ն է, որը 1860 թ. տարբերակում վերնագրված է «Ազգային վարչություն» և ունի 83 հոդված, իսկ 1863 թ. սուլթանական կառավարության հաստատած տարբերակում վերնագրված է «Ազգային Կեդրոնական վարչութիւն» և ունի նշվածից մեկով ավելի հոդված՝ 84[72]:

Հաջորդը՝ 1860 թ. տարբերակի Բ գլուխը՝ «Ազգային տուրք» գլխագրով ու 5 հոդվածներով, 1863-ի տարբերակում տեղափոխված է Գ գլուխ՝ նույն գլխագրով ու մեկով պակաս՝ 4 հոդվածով[73]:

1860 թ. սահմանադրության 2-րդ ընդարձակ գլուխը՝ Գ-ն, որը վերաբերում է ընտրություններին, ունի 38 հոդված (89-127)[74]: Սահմանադրության երկու տարբերակների համեմատությունը ցույց է տալիս,

---

[71] *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 12, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1012:

[72] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, Կ. Պոլիս, 1860, էջ 7–26, *«Ազգային սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 13–49, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1012–1036:

[73] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 26–27, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 51, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1037:

[74] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 27–38:

որ 1863 թ. վերջնական տարբերակում չկա «Ընտրություններ» վերտառությամբ առանձին գլուխ: Այստեղ սահմանադրության խմբագիր-հեղինակները ընտրություններին վերաբերող բոլոր հարցերն իրավացիորեն խմբավորել ու տարալուծել են նախորդ գլուխներում, հիմնականում Ա գլխում՝ կապված բոլոր մակարդակի ընտրությունների կազմակերպման ու անցկացման կանոնադրական պայմանների ու պահանջների հետ՝ սկսած պատրիարքի ու Ազգային ընդհանուր ժողովի ընտրություններից, ավարտած գավառային ու թաղային խորհուրդների ընտրություններով: Այդ պատճառով էլ 1963 թ. սահմանադրության Ա գլխի հոդվածներն իրենց թվաքանակով չեն զիջում 1860 թ. սահմանադրության Ա գլխի հոդվածներին:

Այնուամենայնիվ, սահմանադրության երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների ընդհանուր հոդվածների քանակական նման մեծ խզումը (150–99) բացատրվում է հիմնականում կառուցվածքային ու խմբագրական բնույթի փոփոխություններով՝ հոդվածների կրճատում-խտացում-վերախմբագրումներով: Այսպես, 1860 թ. տարբերակում «Ազգային տնտեսական խորհուրդ» ենթագլուխն ունեցել է 13 հոդված՝ 38-ից 50-րդ ներառյալ, մինչդեռ 1863 թ. տարբերակում այն սեղմվել ու ձևակերպվել է ընդամենը մեկ՝ 46-րդ ծավալուն հոդվածում (ընդ որում, ենթագլխի վերնագրում «ազգային» բառը չկա, այլ նշված է «Տնտեսական խորհուրդ»[75]: Կամ, օրինակ, 1863 թ. տարբերակում այլևս մանրամասն չի խոսվում ազգային կալվածքների գնման ու վաճառքի, կտակների հսկման ու դրանց վավերացման, շինությունների, հիվանդանոցների ու ծերանոցների պահպանման ու վերահսկման, նյութական ու տնտեսական հարցերի մասին: Մեկ այլ պարագայում, 1860 թ. Ա. գլխի Ժ (10-րդ)՝ «Ազգային դիվանատուն» 9- հոդվածանոց ենթագլուխը 1863 թ. տարբերակում տեղափոխվել է նույն Ա գլխի Բ (2-րդ) ենթակետ՝ «Կ.

---

[75] Տե՛ս *«Ազգային Սահմանադրություն Հայոց (1860 թ.)»*, էջ 17–19, *«Ազգային Սահմանադրություն Հայոց» (1863 թ.)*, էջ 30–32, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1023–1024:

Պոլսի պատրիարք»-ից հետո՝ առանց բովանդակությունը էապես խաթարելու՝ սահմանափակվելով ընդամենը 4 հոդվածով և այլն[76]:

Հաշվի առնելով, որ նախկինում Ս. Երուսաղեմի Հայոց պատրիարքի ընտրությունների առնչությամբ հաճախակի խնդիրներ էին ծագում, հատկապես «ներսէն, թէ դուրսէն» թեկնածուի առաջադրման ու ընտրության հարցում[77], ուստի, 1863 թ. սահմանադրության մեջ մտցվել է մի առանձին՝ Գ. ենթագլուխ, որի հոդված 21-ում սահմանվում էր՝ «Ս. Երուսաղեմի պատրիարքը Կոստանդնուպոլսոյ Ազգային ժողովներուն կողմէն կ՚ընտրուի»[78]: Մինչդեռ, 1860 թ. տարբերակում այդ մասին որևէ հիշեցում չկա:

Նույն կերպ, իբրև տարբերություն, նկատել տանք նաև, որ 1860 թ. տարբերակի թիվ 8-րդ հոդվածում խոսույթ կա՝ Ազգային վարչության, Կ. Պոլսի պատրիարքի և Արարատյան Մայր Աթոռի հետ ունեցած և այսուհետ շարունակվելիք «Ազգ ու Մայր Աթոռ» միասնությամբ ավանդական կապի ու հարաբերությունների մասին[79], մի բան, որ այս անգամ արդեն բացակայում է սահմանադրության 1863 թ. վերջնական տարբերակում: Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, որ խմբագրակազմի անդամները, գուցե քաղաքական նկատառումով, դուրս են թողել այդ հոդվածը, որպեսզի հատուկ չընդգծվի Կ. Պոլսի պատրիարքության և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ կապը, ինչը պիտի դիտարկել ռուս-թուրքական ոչ հաշտ քաղաքական հարաբերությունների ու տարանջատ ազդեցության գոտիների համատեքստում:

Ի պաշտոնե Ազգային ժողովների նախագահ հանդիսացող պատրիարքի իրավունքներին ու պարտականություններին վերաբերող 1860 թ.՝ 14–19-րդ և 1863 թ. տարբերակի 8–12-րդ հոդվածների բովանդա-

---

[76] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)», էջ 22–24, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց»* (1863 թ.), էջ 20, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1017:

[77] Տե՛ս **Օրմանեան արք. Մաղաքիա**, *Ազգապատում*, հ. Գ, մաս Բ, էջ 4034–4036:

[78] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց»*, (1863 թ.), էջ 21, **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1018:

[79] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 9–10:

կային համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև էական տարբերություններ չկան[80]:

Երկու սահմանադրությունների էական տարբերություններից են Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորական տեղերի քանակական կազմի տարբերությունը, ինչպես նաև պատգամավորների սոցիալ-դասային կազմի հարաբերակցությունը: Պատգամավորական տեղերի թվային պատկերը հետևյալն է. 1860 թ. Ազգային սահմանադրության հոդված 9-ը սահմանում էր, որ «Ազգային Ընդհանուր ժողովը կը բաղկանայ **220** ազգային երեսփոխաններէ, որոնցմէ 160-ը Պոլսի թաղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ (ի դեպ, միայն Գում Գափուի մայր եկեղեցուն բաժին էր հասնում 24 պատգամավոր – Ա.Հ.), եւ 60-ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ»[81]:

Այստեղ կարելի է դատողություն անել այն մասին, որ պատգամավորներից 160-ը Պոլսի թաղերի եկեղեցիների կողմից են ընտրվելու, բայց որոշակի չէր այն, թե սոցիալ-դասային կազմի տեսակետից երեսփոխաններից քանիսն են աշխարհիկ և քանիսը՝ եկեղեցական (հոգևորականներ): Այդ նույն՝ 9-րդ հոդվածում նշվում է, որ ազգային Կեդրոնական վարչութեան անդամներից՝ Կրոնական ու Քաղաքական ժողովների և չորս Տեսուչ խորհուրդների անդամների ու Թաղական խորհուրդների ատենապետների ընդհանուր թիվը կազմելու է 100 երեսփոխան[82]:

Բայց բերվածը բավարար հիմք չի տալիս հետևեցնելու, թե այդ 100 երեսփոխաններն էլ միայն աշխարհիկ անձինք էին լինելու, քանզի նրանցից, օրինակ, Կրոնական ժողովի անդամները իրենց կազմով եկեղեցականներ (հոգևորականներ) էին: Նույն կերպ սահմանված չէ, թե սոցիալ-դասային պատկանելության տեսակետից Պոլսի թաղերի կողմից ընտրված 160 պատգամավորներից 100-ը զուտ աշխարհիկ անձինք էին լինելու, իսկ 60-ը՝ միայն կրոնավորներ: Սա նշանակում է,

---

[80] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 12–14, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, էջ 18–19, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1015–1016:

[81] *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 10:

[82] Տե՛ս *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 10:

որ 1860 թ. սահմանադրությամբ, սոցիալ-դասային կազմի տեսակետից, ընտրվելիք պատգամավորների հարցում չի եղել հստակություն: Եվ այդ իմաստով հնարավոր չէ միանշանակ պնդել, թե Կ. Պոլսի թաղերում ընտրվելիք 160 երեսփոխաններից 100-ը հանդիսացել են աշխարհիկ զբաղմունքի տեր անձինք, իսկ 60-ը՝ եկեղեցական (կրոնավոր), ինչը հաճախ տեղ է գտել մեր պատմագիտական գրականության մեջ: Այդ անորոշության մասին ակնարկվում է այդ նույն՝ 9-րդ հոդվածի տողատակում, որ «Այս յոդվածը վերաքննելի է»[83]:

Նույնը կարելի է ասել թուրքահայ առաջնորդանիստ գավառների կողմից ընտրվելիք 60 երեսփոխանների սոցիալական (աշխարհիկ թե հոգևորական) կազմի մասին: Չի բացառվում, որ գավառներում ընտրված պատգամավորների շարքում լինեին նաև հոգևորականներ, մանավանդ որ նրանք ընտրվում էին գավառային առաջնորդական վիճակներում (թեմերում), իսկ կրթական ցենզի տեսակետից նրանք խնդիր չունեին: Այստեղից կարելի է հետևեցնել, որ 1860 թ. ընտրական համակարգում պատգամավորների (աշխարհիկ և հոգևորական) թվակազմի առումով հստակություն չի եղել:

Բացի այդ, կարող է հարց ծագել, թե ինչու է պատգամավորական թվակազմի նման մեծ տարբերությունը Կ. Պոլսի համար՝ 160, իսկ գավառների համար ընդամենը 60 պատգամավորական տեղ (լիմիտ), և սա այն դեպքում, երբ գավառահայ ազգաբնակչությունը շուրջ տասնապատիկ գերազանցել է Կ. Պոլսի թաղերի հայությանը: 1860 թ. սահմանադրությամբ քաղաք-գավառ համամասնության նման մեծ խզումը կարելի է բացատրել ա/ Կ. Պոլիս մայրաքաղաքի գավառների նկատմամբ ունեցած առանձնահատուկ կարգավիճակով, բ/ գավառների բնակչության կրթական համեմատաբար ցածր մակարդակով և, իհարկե, դրան միգուցե պիտի հավելել սահմանադրության հեղինակների սուբյեկտիվ կարծիքը: Ի դեպ, մայրաքաղաք-գավառ պատգամավորների թվաքանակի այդ խզումը, գրեթե նույն համամասնությամբ, պահպանվեց սահմանադրության 1863 թ. վերջնական տարբերակում:

---

[83] *«Ազգային սահմանադրութիւն Հայոց (1860 թ.)»*, էջ 11:

Պատգամավորների թվաքանակը և սոցիալ-դասային կազմը միանգամայն այլ են 1863 թ. վավերացված սահմանադրության մեջ, որում մի շարք անորոշություններ վերացվել են: Նախ, էապես (80 տեղով) կրճատված է պատգամավորների ընդհանուր թվաքանակը (հոդված 57-րդ, ապա նույն հոդվածի և՛ հայերեն, և՛ թուրքերեն տարբերակներում հստակ ու վերջնականորեն սահմանված է, որ «Ազգային Ընդհանուր ժողովը **140** երեսփոխաններէ կը բաղկանայ, որոնցից Ա. 20-ը եկեղեցականք երեսփոխանք են, զոր Կոստանդնուպոլսոյ մէջ գտնուող եկեղեցանք կ՚ընտրեն, Բ. 40-ը գաւառներէն եւ Գ. 80-ը Կոստանդնուպոլսոյ թաղերէն ընտրուած երեսփոխանք են»[84]: Բերվածից ակներև է դառնում, որ 1860 և 1863 թթ Ազգային ընդհանուր ժողովների պատգամավորների հարաբերակցության մեջ հոգևորական երեսփոխանների թիվը նախկինի համեմատ եռակի կրճատվել է՝ 60-ից իջնելով 20-ի, իսկ աշխարհիկ պատգամավորների թիվն ավելացել է 20-ով՝ 100-ից դառնալով 120-ի: Այս ամենը ինքնին վկայում է Ազգային ժողովում վերջիններիս գերիշխող դիրք ունենալու և խորհրդարանի ավելի ու ավելի աշխարհիկ բնույթ ստանալու մասին: Խորհրդանշական կարելի է համարել այն, որ այն ժամանակների Ազգային ընդհանոր ժողովի և մեր ժամանակների ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվաքանակը, անկախ իրենց առջև ծառացած խնդիրներից ու առաքելություններից, քիչ է տարբերվում:

1860 թ և 1863 թ. սահմանադրություններում Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորների թվակազմի ու ընտրություններին վերաբերող մյուս տարբերությունն այն է, որ, ըստ 1860 թ. տարբերակի, 220 պատգամավորներից բացի, խորհրդարանի նիստերին ի պաշտոնե մասնակցելու էին պետական, եկեղեցական, ազգային, ուսումնակրթական, հրատարակչական, լրագրական, մշակութային և զինվորական վերին դասի ներկայացուցիչներ: Այդպիսով, Ընդհանուր ժողովի մաս-

---

[84] **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860–1910)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 25–26, «Յավելված», էջ 76: **Պալասանեան Ստ.**, *Պատմութիւն Հայոց (սկզբից մինչև մեր օրերը)*, Թիֆլիս, 1895, էջ 746, *«Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (1863 թ.)*, 1863, էջ 39, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1029:

նակից անդամների թիվը կարող է հասնել մինչև **400**-ի, թեև նրանք պաշտոնապես ընտրված պատգամավորներ չէին, այլ **անդամակիցներ**: Նաև սահմանվում էր, որ Ընդհանուր ժողովի նիստ հնարավոր է հրավիրել միայն ընտրված երեսփոխանների նվազագույնի՝ 111-ի ներկայության պարագայում[85]: Մինչդեռ, 1863 թ. սահմանադրության տարբերակում ոչ մի խոսք չկա Ազգային ընդհանուր ժողովի ընտրություններին և խորհրդարանի նիստերին նման թվաքանակով անդամակից ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ: Այստեղ այդ պահանջը հանված է: Մի դիտարկում ևս. այն հանգամանքը, որ 1863 թ. սահմանադրությամբ պատգամավորների թիվը կրճատվում էր 60-ով, իսկ դրանում եկեղեցականների չափաբաժինը (այսինքն, կշիռը) պակասում էր մի քանի անգամ, այստեղից էլ կարելի հետևեցնել, թե ինչու մեր կղերապահպանողական շրջանակներում սահմանադրությանը տրվել են բացասական որակումներ: Դրան հակառակ, ազգային քաղաքական իմաստավորման տեսակետից հարկ է արձանագրել, որ Ազգային ընդհանուր ժողովում և ազգային մյուս կառույցներում աշխարհիկ տարրերի նման գերակշիռ դիրքի գրավումը ինքնին խոսում էր **հայ քաղաքական մտքի աշխարհիկացման** մասին:

Ինչ վերաբերում է 1863 թ. Ազգային սահմանադրության հայերեն և հայատառ թուրքերենի տեքստերին, ապա դրանց համեմատությունից դարձյալ նկատվել են որոշ տարբերություններ: Նախ արձանագրենք, որ ընդունված և վավերացված «Ազգային սահմանադրության» հայերեն և հայատառ թուրքերեն բնագրերը համարվում են Հայոց պատրիարքարանի պաշտոնական հրատարակություններ: Դրանց ամենաէական տարբերությունն այն էր, ինչպես արդեն ասվել է, որ սահմանադրության հայերեն և հայատառ թուրքերեն թարգմանության վերնագրերը իրար չեն համապատասխանում, մի դեպքում՝ «Ազգային Սահմանադրություն Հայոց», իսկ մյուսում՝ «Նիզամնամէի միլլէթի էրմէնիան» կամ թարգմանաբար՝ «Հայ ազգի Կանոնադրություն»: Սակայն երկու տարբերակներն էլ համարվել են հավասարապես պաշտոնական ուժ ունեցող օրենք: Ավելին, Ազգային սահմանադրությունը «Հայոց

[85] Տե՛ս *«Ազգային Սահմանադրություն Հայոց (1860 թ.)»*, էջ 11:

Պատրիարքարանի Կանոնադրութիւն» անունով ընդգրկված է եղել Օսմանյան Պետական օրենքների ժողովածուի 2-րդ հատորի մեջ[86]:

Ազգային սահմանադրության հայերենի և հայատառ թուրքերենի լեզվական տարբերություններից մյուսն այն է, որ միևնույն հասկացության համար հայերեն տարբերակում գործածված են «երեսփոխան» կամ «պատգամավոր» բառերը, մինչդեռ թուրքերենում համապատասխան «մէբուս» բառի փոխարեն գործածված է «միլլէթ վեքիլի» բնորոշումը, ինչը թարգմանաբար նշանակում է «ազգի փոխանորդ», իսկ առանձին դեպքերում հանդիպում է նաև «մէջլիսի ռումի ազասը» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «ընդհանուր ժողովի անդամ»[87]:

Հ. Շահրիկյանը, համեմատելով 1863 թ. սահմանադրության հայերեն և հայատառ թուրքերենի տեքստերը, նկատել է տալիս ևս մի քանի ոչ էական տարբերություններ: Այսպես, սահմանադրության 1-ին գլխի Ա ենթակետի «Պատրիարքի ընտրութիւն եւ հրաժարում» ձևակերպման թուրքերեն տարբերակում բացակայում է «հրաժարում» բառը: Նույն գլխի Դ ենթակետում հայերեն «Ազգային Կրոնական ժողով» ձևակերպումից հայատառ թուրքերենում հանված է «ազգային» բառը, նույնը Ը ենթակետում՝ «Ազգային Ընդհանուր ժողով» գլխագրում դարձյալ պակասում է «ազգային» բառը և այլն[88]: Բերվածից կարելի է հետևեցնել, որ տեքստի հայ թարգմանիչները այն թուրքերենի վերածելու ժամանակ հավանաբար գիտակցաբար խուսափել են «**ազգային**» արտահայտության գործածումից, այլապես հայատառ թուրքերեն թարգմանության ժամանակ վրիպում կարող էր լինել ամենաշատը մեկ-երկու դեպքում: Կնշանակի, սահմանադրության հայատառ թուրքերենի թարգմանիչները խուսափել են տեքստում գործածել թուրքական իշխանությունների համար անցանկալի քաղաքական իմաստ արտահայտող բառեր, հասկացություններ ու արտահայտություններ:

Այսպիսով, Ազգային սահմանադրության երկու՝ 1860 թ. և 1863 թ. տարբերակների պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց

---

[86] **Տե՛ս Ատոմ,** *նշվ. աշխ.*, էջ 7:
[87] **Սարուխան Ա.,** *նշվ. աշխ.*, էջ 254:
[88] **Տե՛ս Ատոմ,** *նշվ. աշխ.*, էջ 48–49:

միջև սկզբունքային ու իմաստային լուրջ տարբերություններ չկային: Եթե զուտ քանակական առումով հաշվի չառնենք պատգամավորների թվակազմի 60-ով պակաս լինելը, ապա բովանդակային և իրավական առումով վերջինս ստացել էր ավելի հստակ ձևակերպում: Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ 1863 թ. վերջնական տարբերակում պատրիարքի և հոգևոր իշխանությունը առհասարակ թուրքահայ համայնքում, նաև Ազգային ժողովում նվազել էր հօգուտ աշխարհիկի:

## *5. Ազգային Ընդհանուր ժողովի կառուցվածքը, ընտրություններն ու գործունեությունը*

Բարձր Դռան կողմից վավերացված Ազգային սահմանադրության համաձայն՝ բարձրագույն օրենսդիր մարմինը **Ազգային** (երեսփոխանական) **ընդհանուր ժողովն** էր, որը հանդիսանում էր միջնորդ Բարձր Դռան (սուլթանական կառավարության) և հայ ազգի միջև:

Ազգային սահմանադրությամբ դեռ 1840-ական թվականներից հայտնի Գերագույն ժողովն անվանափոխվեց **Ազգային կենտրոնական վարչության**, որը գործադիր մարմինն էր: Դրանց կից ձևավորվեցին նաև **Կրոնական** և **Քաղաքական** ժողովներ[89]: Ազգային սահմանադրության հիմնական սկզբունքների Դ ենթակետով արձանագրվում էր, որ թուրքահայոց ներքին գործերի տնօրինությունը՝ օսմանյան տերության հատուկ արտոնությամբ և սահմանադրությամբ իրականացնելու էր «**Ազգային Կեդրոնական վարչությունը**»[90]: Այն պիտի ունենար համապատասխան գործառնական իրավասություններ,[91] այլ խոսքով, օրենքով գործադիր իշխանության իրականացնողը Կենտրոնական վարչությունն էր: Ընդ որում, Կենտրոնական վարչությունը, իբրև կառավարչական մարմին, նրա անդամները պետք է ընտրություններով անցած երեսփոխաններ (պատգամավորներ) լինեին[92]: Ազգային սահ-

---

[89] Տե՛ս **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 31–34:
[90] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, «Յավելված», էջ 24:
[91] Տե՛ս **Կոստանդյան Է.**, *Մկրտիչ Խրիմյան*, Եր., 2000, էջ 155:
[92] Տե՛ս **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 40:

մանադրությամբ ամրագրված էր, որ Կենտրոնական վարչությունը, իբրև գործադիր իշխանության մարմին, առաջնորդվելու է իրավունքի և պարտականության միասնության սկզբունքով՝ ապահովելու արդարությունն ու օրինականությունը[93]: Սահմանադրությամբ Կրոնական և Քաղաքական ժողովները ևս ունեին իրենց վարչությունները: Դրանք իրավասու էին առաջադրելու թափուր մնացած պատրիարքական աթոռի տեղապահի թեկնածությունը և ապա նաև անցկացնել տալու նրա ընտրությունը և այլն:

Գործառույթներ իրականացնելու առումով, Ազգային սահմանադրության 1-ին գլխի 1-ին հոդվածը սահմանում էր Ազգային ընդհանուր ժողովի նախագահի կարգավիճակը, որն ամենաբարձր պաշտոնն էր, և Ընդհանուր ժողովում ընտրված Կ. Պոլսի հայոց պատրիարքն ի պաշտոնե միաժամանակ դառնում էր նաև Ազգային ժողովի նախագահ[94]: Սուլթանական կառավարության կողմից հաստատված 1863 թ. վերջնական տարբերակում **պատրիարքի իշխանությունը**, եկեղեցու և հոգևորականության դերը, ինչպես ասվեց, էապես սահմանափակվում էին: Քանի որ Ազգային ընդհանուր ժողովում աշխարհիկ պատգամավորները մեծապես գերակշռելու էին, ուստի պատրիարքի ընտրության, օրակարգային ու ընթացիկ հարցերի քննարկման ու որոշումների ընդունման ժամանակ մեծանալու էր նրանց դերակատարությունը, ինչի մասին հուշում էին նաև մշակված հոդվածները:

Պատրիարքը, թեև միաժամանակ հանդիսանում էր Ազգային ժողովի նախագահը, սակայն սահմանափակված էին նրա գործադիր իրավասությունները և նրա պաշտոնը, կարելի է ասել, կրում էր ավելի շատ արարողակարգային բնույթ: Այդ սահմանափակումները արտահայտված են սահմանադրության մի շարք հոդվածներում՝ 8-11-րդ[95]: Այսպես, Ազգային ընդհանուր ժողովի նախագահին, նույնն է, թե պատրիարքին ուղղված գործերը նա պիտի հանձներ պատկան՝ Կրոնական և Քաղաքական ժողովներին: Կամ թե պատրիարքի որևէ թագդիր

---

[93] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, «Յավելված», էջ 26:

[94] Տե՛ս նույն տեղում, էջ 28, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1012:

[95] Տե՛ս **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 51:

(խնդրագիր) կամ այլ պաշտոնական գրություն վավերական և գործադրելի չէր, եթե այն չէր ստացել պատկան ժողովի գրավոր համաձայնությունը՝ «կնքեալ եւ ստորագրեալ»[96]: Պատրիարքը պարտավոր էր ընթացք տալ իրավասու ժողովների բոլոր որոշումներին: Եվ վերջապես, պատրիարքը չէր կարող լուծարել կամ չեղյալ համարել որևէ ժողով կամ խորհուրդ, կամ չեղյալ համարել դրանց որոշումները[97]: Փաստենք, որ պատրիարքին վերաբերող այդ հոդվածական պահանջները 1860 թ. և 1863 թ. տարբերակներում աննշան տարբերություններ ունեին:

Այդպիսով, վերը բերվածից կարելի է հետևություն անել, որ այստեղ առկա է եղել սովորաբար սահմանադրական երկրներին բնորոշ՝ **Ազգային ընդհանուր ժողովի** նախագահ-պատրիարքի, իբրև օրենսդիր մարմնի ղեկավարի, և **Ազգային կենտրոնական վարչության**, իբրև գործադիր մարմնի, իրավասությունների **տարանջատում**: Հավելենք, որ համաձայն սահմանադրության 11-րդ հոդվածի՝ Կենտրոնական վարչությունը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից, ուստի և հաշվետու էր նրան[98]:

Արձանագրենք, որ առաջին անգամ 1863 թ. սահմանադրությամբ անցկացված երեսփոխանական ընտրությունների ավարտից հետո Ազգային ընդհանուր ժողովի հանդիսավոր բացումն ու առաջին նիստը տեղի է ունեցել նույն տարվա սեպտեմբերի 20-ին: Նիստի ատենապետ է ընտրվել Ներսես եպիսկ. Վարժապետյանը, ձևավորվել է Ազգային ժողովի դիվանը՝ (քարտուղարությունը) իր դիվանադպիրներով, նորընտիր Ազգային կենտրոնական վարչությամբ և այլն:

Ազգային Կենտրոնական վարչությունն իրենից ներկայացնում էր գործադիր խառը մարմին՝ կազմված երկու՝ ազգային **Քաղաքական** և **Կրոնական** ժողովներից, իբրև համապատասխան գործերի տեսչա-

---

[96] **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1016:

[97] Տե՛ս **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 51:

[98] Տե՛ս նույն տեղում, էջ 52:

կան մարմիններ[99]: Ընդ որում, Քաղաքական ժողովը՝ բաղկացած 20 աշխարհականներից, վարում էր ազգային քաղաքական (աշխարհիկ) բնույթի գործերը (հոդված 36), իսկ Կրոնականը՝ կազմված 14 եկեղեցականներից, հոգում էր ազգային հոգևոր-կրոնական գործերը: Ազգային ժողովն էր ընտրում Քաղաքական և Կրոնական ժողովների անդամներին: Սահմանադրության 58-րդ հոդվածով սահմանված էր, որ «Կրօնական եւ Քաղաքական Ժողովոց անդամները Ընդհանուր Ժողովին ներկայ կը գտնուին, բայց եթէ Երեսփոխան ընտրուած չեն՝ Ընդհանուր Ժողովին մէջ քուէ չ'ունին»[100]:

Սահմանադրությամբ Կենտրոնական վարչությունը, իբրև գործադիր իշխանություն, ընթացիկ գործերը վարելու էր այդ ժողովների միջոցով (հոդված 24): Այդ երկու ժողովները միանալով կազմում էին **Խառը ժողով**: Բացի այդ, ինչպես ժամանակակից խորհրդարանների դեպքում, հիմնվելու էին դատաստանական (իրավական), տնտեսական, ֆինանսական (ելմտական), ազգային տուրքերի, ուսումնական (կրթական), վանական (վանօրէից) և թաղական խորհուրդներ, ազգային-գավառական վարչություններ՝ ազգային հիվանդանոցի (առողջապահության) հոգաբարձության, կտակաց, պանդուխտության և այլն[101], որոնք վարում էին համապատասխան տեսչական ժողովները: Գավառներում գործում էին գավառային վարչություններ: Տեղական բնույթի հարցերը լուծելու և դրանց կատարումը վերահսկելու համար Կ. Պոլսում ստեղծվելու էին թաղային խորհուրդներ: Գավառների գործերը տնօրինելու էին ազգային-գավառական վարչությունները՝ տվյալ եկեղեցական թեմի առաջնորդի նախագահությամբ:

Ինչ վերաբերում է Ազգային ընդհանուր ժողովի պատգամավորների ընտրություններին, ապա դրանք անցկացվում էին Կ. Պոլսի թաղերում և գավառներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Ընտրելու իրավունք ունեին 25 տարին, իսկ ընտրվելու՝ 30 տարին լրացած, նախկի-

---

[99] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 238, **նույնի՝** «Ցավելված», էջ 34, նաև՝ **Ատոմ,** *նշվ. աշխ.*, էջ 34:

[100] *«Ազգային Սահմանադրություն Հայոց» (1863 թ.)*, էջ 39:

[101] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 22–23, նաև՝ **Պարսամյան Վ., Հարությունյան Շ.**, *նշվ. աշխ.*, էջ 174–175:

նում չդատված անձինք: Պատգամավորներն ընտրվում էին 10 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ Ազգային ընդհանուր ժողովի կազմի 1/5-ով թարմացվելու, նորոգվելու (ռոտացիայի) պայմանով[102]: Հոդված 70-ով սահմանվում էր, որ կարևորություն չէր տրվում, թե ընտրվելիք պատգամավորները Կ. Պոլսի տվյալ թաղի բնակիչ են, թե արևմտահայ որևէ գավառի, այլ բավական է, որ նրանք «իրենց ներկայացուցած թաղին կամ գաւառին ազգային գործոցը հմուտ ըլլան, եւ ազգասիրութեամբ, ուղղութեամբ եւ արդարախոհութեամբ ընտրողաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան»[103]: Այստեղից էլ՝ Կ. Պոլսի որևէ թաղից կամ գավառից ընտրված երեսփոխաններն Ընդհանուր ժողովում ներկայացնում էին բովանդակ ազգը, ուստի և համարվում էին **ազգային երեսփոխաններ:**

Ֆինանսական առումով Ազգային ժողովն ուներ իր սեփական ելմտացույցը (բյուջեն) կամ «Ազգային Կեդրոնական Սնտուկը»: Իբրև օրինակ, նշենք, որ 1879/1880 թթ. ֆինանսական տարվա հաստատված հասույթն ու ծախքը կազմել են 540 հազար ղուրուշ (1 արծաթ մեջիթը 20 ղուրուշ հաշվով)[104]: Ելմտացույցի հարցերով զբաղվում էր Քաղաքական ժողովը: Հասույթի գլխավոր աղբյուրներն էին Ազգային տուրքը (վճարում էին աշխատանք և որոշակի շահույթ ունեցող հայ անհատները[105]), առաջնորդական վիճակների, Կ. Պոլսի և եկեղեցիների տուրքերը, Աղթամարի ճանապարհորդների (զբոսաշրջության) առուծախքի գրասենյակի, նշանադրության, պսակադրության, դատական վճռի հասույթները, դրոշմատուրքը և այլն: 93-րդ հոդվածով գավառների կողմից պատրիարքարանին տրվելիք տուրքի բաշխման և հավաքման

---

[102] Տե՛ս https://armhistory.do.am.

[103] **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1033:

[104] Տե՛ս *«Աստեղագրութիւնք Ազգային ժողովոյ»*, բացում 1879 ամին, նիստ Բ, մայիս 18-ին, 1879, Կ. Պոլիս, «Ս. Միրայէեան» տպագրատուն, 1879, էջ 42–43-ին կից հաշվետու ներդիրը:

[105] Հոդված 65-ում սահմանված էր, որ աշխարհական երեսփոխանների ընտրության կապակցությամբ՝ ընտրողը տարեկան գոնե 75 ղուրուշ ընդհանուր տուրք պիտի վճարի (տե՛ս **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1031):

եղանակը պիտի որոշեր Ազգային ընդհանուր ժողովը[106]: Սա ևս վկայում է ֆինանսական առումով պատրիարքարանի դերի ու կշռի նվազման մասին: **Փաստաթղթում չկան տվյալներ Օսմանյան կառավարության կողմից Հայոց ազգային կառույցներին ֆինանսական օգնության տրամադրման վերաբերյալ:**

Ազգային սահմանադրությամբ կամ կանոնադրությամբ սահմանված էին Ազգային ժողովի ընտրական կարգը, ժողովի նախագահության, նիստերի վարման, հարցերի քննարկման ու քվեարկությունների ընթացակարգը և այլն: Ազգային ընդհանուր ժողովը իրավասու էր ստեղծելու նախաքննիչ հանձնախումբ (հանձնաժողով)՝ լսելու և քննելու զանազան հարցեր, դրանց վերաբերյալ կազմել ու ներկայացնել զեկուցագրեր, իսկ վերջնական վճիռը կայացնելու էր Ազգային ընդհանուր ժողովը փակ գաղտնի քվեարկությամբ[107]: Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովը գումարվելու էր երկու տարին մեկ անգամ (նախկին տարբերակով՝ ամեն տարի), տվյալ տարվա ապրիլի վերջերին և տևելու էր երկու ամիս, իսկ եթե հանգամանքների հրամայականով արտահերթ նիստի հրավիրման անհրաժեշտություն ծագեր, ապա դրա համար կպահանջվեր Բարձր Դռան համաձայնությունը (հաճութիւնը)[108]:

1863 թ. Ազգային սահմանադրության հոդված 59-ի համաձայն՝ կանոնավոր նիստ հրավիրելու համար պահանջվում էր պատգամավորների ընդհանուր (140) թվի առնվազը 70+1, այսինքն, նվազագույնը 71 երեսփոխանի ներկայություն: Ինչ վերաբերում էր Ազգային սահմանադրությունը փոփոխության ենթարկելու խնդրին, ապա վերջին՝ 99-րդ հոդվածը սահմանում էր, որ նրա սկզբունքները անփոփոխելի են, իսկ խիստ անհրաժեշտություն ծագելու պարագայում այն կարող է փոփոխության ենթարկվել հաստատումից միայն 5 տարի անց[109]:

Ազգային սահմանադրության քաջագիտակ հետազոտող Առաքել Սարուխանի գնահատմամբ՝ 1860 թ. և 1863 թ. սահմանադրությունե-

---

[106] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, Հավելված 2, էջ 1037:

[107] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, «Ցավելված», էջ 36:

[108] Տե՛ս նույն տեղում, էջ 251 և **նույնի՝** «Ցավելված», էջ 78:

[109] Տե՛ս նույն տեղում, էջ 44–45 և «Ցավելված», էջ 76 և 104:

ռում ընդհանուր առմամբ պահպանված էր «**նոյն ոգին**, (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.), միայն այն տարբերութեամբ, որ նորը՝ 1863 թ-ին աւելի ամփոփ էր եւ աւելի գործնական կարգադրութիւններ էր բուանդակում»[110]: Արձանագրենք, որ տվյալներ կան Ազգային սահմանադրության մշակման աշխատանքներին նաև պոլսահայ մասոնների մասնակցության վերաբերյալ[111]: Մասնավորապես, հայ մասոնականության պատմության քաջագիտակ հետազոտող Ռուբեն Բերբերյանը (1873-1942) 1937 թ. ՀՅԴ Բոստոնի «Հայրենիք» ամսագրի թիվ 5-9 համարներում զետեղված «Հայ մասօնները եւ «Սէր» օթեակը Պոլսոյ մէջ» խորագրով հոդվածաշարում զարգացնում է այն միտքը, որ պոլսահայ մասոնական շարժումը ծնվեց որպես հակազդեցություն ավելի արմատական 1860 թ. Ազգային սահմանադրության ճանաչման հարցում սուլթանական կառավարության ստեղծած խոչընդոտներին[112]: Ի դեպ, Ռ. Բերբերյանը Կ. Պոլսի մասոնական «Սէր» օթյակի հայ անդամների շարքին է դասում արևմտահայ մտավորականության շատ ճանաչված դեմքեր Մ. Մամուրյանին, Հ. Սվաճյանին, Մկրտ. Պեշիկթաշլյանին, Կար. Ոսթուճյանին, Սր. Հեքիմյանին, Ստ. Փափազյանին, Ս. Թագվորյանին և ուրիշների[113]:

## *6. Պատմագիտական գնահատականներ*

Ընդհանուր առմամբ, իր չափավորությամբ ու թերություններով հանդերձ, Հայոց Ազգային սահմանադրությունը իրավաքաղաքական և հոգևոր-կրթական և այլ առումներով պետք է համարել էական առաջընթաց քայլ արևմտահայության կյանքում: Այն, իբրև իրավաքաղաքական փաստաթուղթ, իր նպաստն է բերել հայ ազգային **ինքնագիտակ-**

---

[110] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, «Յավելված», էջ 25:

[111] Մասոնը (mason) լատիներեն բառացի նշանակում է՝ քարտաշ, որմնադիր: Տե՛ս **Մովսիսյան Ֆ.**, *Մասոնները և Ամերիկյան հեղափոխությունը*, հ. 1, Եր., 2015, էջ 8:

[112] **Բերբերյան Ռ.**, *Հայ մասօնները և «Սէր» օթեակը Պոլսոյ մէջ* (տե՛ս «Հայրենիք», Պոսթըն, 1937, թիվ 5 (173), մարտ, էջ 75, նաև՝ էլ. կայք՝ panarmenian.net/arm/details/209379/ (22.02.23 թ.),

[113] Տե՛ս **Բերբերյան Ռ.**, *նշվ. աշխ.*, «Հայրենիք», Պոսթըն, 1937, թիվ 5 (173), մարտ, էջ 74, թիվ 7 (175), մայիս, էջ 122:

**ցության** վերելքի, **պետականության** գաղափարի արթնացման ու զարգացման գործում: Ակներև է, որ Ազգային սահմանադրության մշակած, եվրոպական կրթություն ստացած հեղինակները՝ Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Ն. Պալյանը, Սերվիչեն, Կ. Ոսթուճյանը և ուրիշներ, քաջ ծանոթ են եղել «Որոգայթ փառաց» աշխատությանը: Արևմտահայ բանասեր և ազգային գործիչ, բժիշկ Վ. Թորգոմյանը հայտնում է, որ Սերվիչենի եղբայրը Կալկաթայից Կ. Պոլիս էր բերել «Որոգայթ փառաց» գրքի մի օրինակ[114]: Արևմտահայոց Ազգային սահմանադրության առաջամարտիկներից էր նաև ազատական-ժողովրդավար հրապարակախոս Մ. Մամուրյանը: Բայց նա ավելի ուշ հիասթափվեց ու հեռացավ սահմանադրական պայքարի թատերաբեմից[115]:

Հայոց պետականության գաղափարի ժառանգորդականության դիտանկյունից կարելի է զուգահեռներ անցկացնել «**Որոգայթ փառաց**»-ի և **Ազգային սահմանադրության** միջև, եթե «Որոգայթ փառաց»-ում, թեկուզև հեռավոր Հնդկաստանում՝ կտրված իրական հայրենի հողից, խոսվում էր հայոց ինքնիշխան (սուվերեն) **ժողովրդավարական (պառլամենտական) պետության** ստեղծման մասին, ապա Ազգային սահմանադրության մեջ՝ օսմանյան պետության կազմում, միգուցե իբրև առաջին քայլ՝ ազգային **ինքնավարության** հասնելու մասին:

Արևմտաեվրոպական հեղափոխությունների ազդեցությամբ ներշնչված արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, որի առանձին մտքեր ու դրույթներ ընդօրինակված էին ֆրանսիական սահմանադրությունից, շատերը համարում են հայ եկեղեցու և ազգի համար մշակված մի կանոնադրություն, բայց հայ շրջանակների կողմից մշակված Ազգային Սահմանադրության նախնական տարբերակը, մինչ կվերանայվեր սուլթանական իշխանությունների կողմից, այնքան բովանդակալից ու արմատական է եղել, որ կղերա-պահպանողական հոսանքի ամենավառ դեմքերից Հովհ. Չամուռճյանի (Տերոյենց) կարծիքով, դրա

---

[114] Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Վ. Թորգոմյանի ֆոնդ, գ. 44, էջ 3:

[115] Ղազարյան Հ., *Մ. Մամուրյանի հասարակական-քաղաքական հայացքները 1860–1870-ական թվականներին* (տե՛ս «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1957, թիվ 3, էջ 96–97):

հեղինակները հավակնություն են ունեցել՝ «**պետություն ստեղծել** պետության մեջ»[116]: Այսինքն, արևմտահայության ճակատագրով մտահոգ մտավորականությունը փորձել է խաղաղ, սահմանադրական ճանապարհով հասնել անկախ պետականության, ինչը, կարծում ենք, օսմանյան բռնատիրության պայմաններում այնքան էլ իրատեսական չէր:

Բայցևայնպես, որքան էլ նշավակենք այդ փաստաթղթի շատ կողմերով ճևական, անորոշ և ոչ գործուն լինելը, այդուհանդերձ, դրանում թուրքահայության համար հոգևոր-մշակութային առումով սահմանվում էր **էքստերիտորիալ** ազգային ինքնորոշման իրավունք: Այն նրա **ներքին կյանքը**, ազգային, կրոնական, կրթամշակութային և այլ գործերը կանոնակարգող մի կանոնադրություն, իր ժամանակի ու պայմանների համար նոր երևույթ էր և առաջընթաց քայլ: Հ. Շահրիկյանի բնութագրմամբ, «Սահմանադրութիւնը կոչուած օրէնքը կրօնական կամ եկեղեցական առանձնաշնորհում մը չէ՛ր, այլ զուտ ներքին ինքնավարութեան բնական իրաւունք»[117]: Նա հայության համար ներքին ինքնավարական օրենքը համարում էր «դարերու ընթացքին հայ ժողովրդի նուաճած բնական իրավունքներու նուիրագործում»[118]: Իսկ Արշ. Ալպոյաճյանի դիտարկմամբ, այդ փաստաթուղթը ավելի մեծ հնարավորություն էր տալիս Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, պահպանողական շրջանակներին կառավարելու հայ համայնքները[119]: Արդարև, կարելի է ասել, որ արևմտահայերի Ազգային սահմանադրությունը շոշափելի հոգևոր հետք թողեց հայ քաղաքական մտքի, ազգային ինքնագիտակցության աճի ու ժողովրդավարական գաղափարների արմատավորման գործում:

Ինչ վերաբերում է XIX դարակեսերի հայ հասարակական մտքի ամենանշանավոր դեմքերից Մ. Նալբանդյանի տված գնահատականին, ապա, չնայած նրա քննադատական որոշ առարկություն-դիտողություններին, նույնիսկ գործածելով՝ «թլպատված» արտահայտութ-

---

[116] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 1, էջ 387, **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 7, **Ալպոյաճեան Ա.**, *Ազգային Սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը*, Կ. Պոլիս, 1910, էջ 120 և 406:

[117] **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ Բ:

[118] Նույն տեղում, էջ 11:

[119] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, *Ազգային Սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը*, էջ 120:

յուն, այնուամենայնիվ, դրական գնահատական է տվել Ազգային սահմանադրությանը, հատկապես սոցիալ-դասակարգային իմաստով, ամիրաների և Կ. Պոլսի հայոց պատրիարքի իրավունքները սահմանափակելու տեսակետից[120]:

Մյուս կողմից, եթե զուգահեռներ ենք անցկացնում արևմտահայերի 1863 թ. սահմանադրության և ավելի վաղ՝ 1836 թ. մարտի 11-ին, ռուսահայ իրականության մեջ Նիկոլայ 1-ին կայսեր ստորագրած հայ եկեղեցու արդեն հիշատակված **Կանոնադրության** (**Պոլոժենիե**) միջև, որով Մայր Աթոռը փաստորեն զրկվում էր մինչ այդ իր ունեցած շատ իրավասություններից, այդ թվում՝ քաղաքական բնույթի հարցերով զբաղվելուց, ակներև է դառնում արևմտահայ հոգևոր շրջանակների իրավունքների գերակայությունը արևելահայերի իրավունքների նկատմամբ գործառույթային և այլ հարցերում: Օրինակ, անժխտելի է, թե Հայկական հարցի արծարծումների ժամանակ ինչպիսի ակտիվություն էին հանդես բերում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, Մեծին տանն Կիլիկիո կաթողիկոսությունը և այլն. չէ՞ որ Մ. Խրիմյանն էր գլխավորում պատրիարքարանի պատվիրակությունը Բեռլինի վեհաժողովում, իհարկե, դրանում չանտեսելով նաև Բարձր Դռան դավադիր ընթացքը:

Ա. Ալպոյաճյանը, համադրելով ու համեմատելով 1836 թ. «Պոլոժենիեն» և արևմտահայերի 1860 և 1863 թթ սահմանադրությունները, նշում էր, որ թեև երկու եկեղեցական օրենքները խմբագրվել էին համապատասխան կառավարությունների կողմից, սակայն «Ազգային Սահմանադրութեան բազմաթիվ տրամադրութիւնները շատ վաղեմի ծագում մը ունին եւ օրէնքով նուիրագործում մը միայն ստացած են Ազգային Սահմանադրութեամբ»[121]: Նշելի է, որ ռուսահայ իրականությունից Ազգային սահմանադրության մասին բարձր կարծիք է հայտնել 20-րդ դարասկզբի ՍԴԲՀԿ՝ հայ «սպեցիֆիկների» կուսակցության առաջնորդներից Դ. Անանունը: Նա արևմտահայերի հոգևոր հավաք-

---

[120] Տե՛ս **Նալբանդյան Մ.**, *ԵԼԺ*, հ. 3, Եր., 1982, էջ 320–326, նաև՝ **նույնի**, *ԵԼԺ*, հ. 4, էջ 292:

[121] **Ալպոյաճեան Ա.**, *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը*, էջ 3:

ման և կուլտուր-կրթական խոշոր նվաճում էր համարում Ազգային սահմանադրությունը, որի մասին «չէին կարող երազել ռուսահայերը»[122]:

Ինչ վերաբերում է Թուքիայում Կ. Պոլսի հայոց պատրիարքի ունեցած կարգավիճակի հարցին, ապա հայ համայնքին ավելի կենտրոնացված վերահսկելու և կառավարելու համար սուլթանական կառավարությունը, Կիլիկիայի ու Աղթամարի կաթողիկոսական և Երուսաղեմի պատրիարքական աթոռների համեմատ, նրան տրվել էր ավելի բարձրադիր (գերադաս) կարգավիճակ[123]: Միաժամանակ, սուլթանական կառավարությունը ձգտել է արևմտահայությանը հեռու պահել արտաքին, հիմնականում Հայոց հոգևոր առաջնորդի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ազդեցությունից, քանզի դրանում տեսնում էր ժողովրդի քաղաքական կողմնորոշումների խնդիր:

Արևմտահայ Ազգային սահմանադրության անվանակոչման հարցում տարակարծություն կա հայ պատմագիտական մտքում: Մասնավորապես, խորհրդահայ պատմաբանները, նկատի առնելով նրա բովանդակային ու գործառնական մի շարք թերությունները, հակված են այն որակել ընդամենը «կանոնադրություն»[124]: Դրան հակառակ, արևմտահայ հեղինակներն այդ փաստաթղթում հայ ազգի համար սահմանադրական, նույնիսկ քաղաքական իմաստ են տեսնում[125]:

Ա. Սարուխանի դիտարկմամբ, Ազգային սահմանադրության գործադրմամբ թուրքահայերը կես դարից ավելի վարել են իրենց բոլոր ներքին ազգային, կրոնական, կրթական գործերը: Հետազոտողը համարձակություն է ունեցել օսմանյան կառավարության կողմից հաստատված պետական այդ օրենքը համարել «հայկական ազգային ինք-

---

[122] «Մշակ», Թիֆլիս, 18 հոկտեմբերի 1914 թ., թիվ 235:

[123] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը*, էջ 4:

[124] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.Գ.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 1, էջ 363 և 384, **Պարսամյան Վ.Ա.**, *Հայ ազատագրական շարժումների պատմությունից*, Եր., 1958, էջ 37, **Ղազարյան Հ.**, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ.* և այլք:

[125] Տե՛ս **Օտեան Գ.**, *Սահմանադրական խօսքեր ու ճառեր*, Կ. Պոլիս, 1910, էջ ԼԲ, **Սարուխան**, *Հայկական խնդիրը եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860–1910)*, հ. Ա, էջ Բ, **Ատոմ**, *նշվ. աշխ.*, էջ 11, **Չորմիսյան Լ.**, *Համապատկեր արեւմտահայոց մեկ դարու պատմութեան*, հ. Ա, Պէյրութ, 1972, էջ 215:

նավարութեան օրենք»[126] և փորձել է Ազգային սահմանադրությունը գաղափարի ու նպատակի առումով շաղկապել 1870-ական թվականների կեսերից մեծամասամբ հայ գործիչների ջանքերով արծարծած ու միջազգային ասպարեզ իջած Հայկական հարցի հետ: Դրանով նա աշխատել է ազգային, բայց ոչ տարածքային պահանջի գաղափարը քաղաքականապես հասունացնելով դրան տալ «**հողային**» կամ **տարածքային (territorial) ինքնավարության** բնույթ[127]: Սարուխանն այդ երկու խնդիրները դիտարկում էր միասնության մեջ, որ «մէկը ծնունդ է տուած միւսին»[128]: Ուստի, պատահական չէ, որ նրա արժեքավոր մենագրությունում քննության առնված այդ երկու խնդիրները՝ Հայկական հարցը և Ազգային սահմանադրությունը, իբրև ուսումնասիրության նյութ, կապակցված են մեկ ամբողջության մեջ և դարձել են մեկ ընդհանուր վերնագիր: Ինչևէ, անժխտելի է Ազգային սահմանադրության ունեցած դերը հայ ազգային **ինքնագիտակցության** վերածնման ու **պետական գաղափարի կաղապարման** գործում: Այդ առնչությամբ օտարերկրյա որոշ հեղինակներ արձանագրում էին հայերի քաղաքական գիտակցության ուժեղացումը, հատկապես այն, որ սահմանադրությունն արևմտահայ համայնքը **կրոնականից** սկսեց վերածել **քաղաքականի**[129]:

## *7. Դիտարկումներ և գնահատականներ հիմնահարցի շուրջ*

Այդպիսով, արևմտահայերի Ազգային սահմանադրությունը պետք է դիտել որպես հայ քաղաքական մտքի ուշագրավ թռիչք, ազգային-մշակութային ներքին **ինքնավարության** մի դրսևորում, որը հեռանկարում պիտի ունենար քաղաքական ինքնավարության, իսկ վերջին հաշվով՝ ինքնիշխանության ու անկախության նպատակը: Բայց, դժբախտաբար, հետագա գործընթացները այլ ընթացք ու վախճան ունեցան: Միք. Վարանդյանի դիտարկմամբ, Ազգային սահմանադրության ընձեռած կրթամշակութային կյանքի հնարավորությունները, ինչ խոսք,

---

[126] **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860–1910)*, հ. Ա, էջ Բ:

[127] Տե՛ս նույն տեղում, էջ Բ:

[128] Նույն տեղում:

[129] Տե՛ս *«Германские источники о геноциде армян»*, т. 1, Ер., 1991, с. 171.

խթանեցին «հայ ազգային ինքնագիտակցությունը, որ նախերգանք էր ազատագրական շարժումի»[130]: Անժխտելի է, որ Ազգային սահմանադրությունը հետագա տասնամյակների ընթացքում արթնացրեց միասնական ազգի ու **պետության գաղափարը** և նոր մակարդակի հասցրեց հայ իրավաքաղաքական միտքը:

Արևմտահայ Ազգային սահմանադրության հանդեպ ժողովուրդն այնպիսի հույսեր ու ակնկալիքներ է փայփայել, որ այն արտացոլվել է նաև գեղարվեստական գրականության մեջ: Ահա, մի քառյակ սահմանադրությանը նվիրված Հարություն Սվաճյանի «Արիք Հայկազունք» հիմնից:

«Արի՛ք Հայկազունք, առաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ'ալ տանք:
Որ ազգ երբ զԱնի փրկարար կոչեց,
Նո՛ր հոգի, նո՛ր կեանք Անոր պարգևեց»[131]:

Իսկ պրոֆ. Լեոն, հավելելով դրան, նշում է, որ «Կ. Պոլսի ժողովուրդը ամեն տարի **մայիսին** (նկատի էր առնված մայիսի 24-ը – Ա.Հ.) տոնում էր այդ ինքնավարության տարեդարձը, երգվում էր «Արիք Հայկազունք»-ը»[132]:

Բայց մյուս կողմից էլ, գնահատական տալու առումով, չպետք է ընկնել ծայրահեղության մեջ, քանզի XIX դարի երկրորդ կեսին արևմտահայ բուն զանգվածը շարունակում էր կրել օսմանյան բռնապետության սոցիալ-տնտեսական, ազգային-քաղաքական ու կրոնական հարստահարումների ու նվաստացումների ծանր բեռը:

Արևմտահայ սահմանադրական շարժման կապակցությամբ ուշադրության է արժանի հետևյալ հանգամանքը. թեև Հայոց Ազգային ժողովի երեսփոխանները սոցիալական կազմի տեսակետից բազմաշերտ էին, սակայն նրանում հիմնականում ընդգրկված էին Կ. Պոլսի հայ պահպանողական, էֆենդիական և հոգևորական շերտերը: Բուն

---

[130] **Վարանդեան Մ.**, *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն.* հ. 1, Փարիզ, 1932, էջ 18:

[131] **Մխիթարյան Մ.**, *Մի անտիպ փաստաթուղթ ցարական գրաքննության արխիվից* (տե՛ս ՊԲՀ, Եր., 1966, թիվ 2 (33), էջ 144:

[132] **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 6, էջ 513:

արևմտահայ նահանգների հայությունը գործնականում շարունակում էր մնալ իրավազուրկ և բոլոր առումներով անպաշտպան: Հայոց Մեծն պատմավիպասան Ռաֆֆին 1873 թ. «Նամակ Կ. Պոլսից» վերտառությամբ նամակում գրում էր, որ Ազգային սահմանադրությունը «զբաղված է միշտ Պոլսով և Բյուզանդիոնի պարիսպներից դուրս չէ գնում: Կարծես, թե մեր մյուս տաճկաբնակ հայերը զուրկ լինեն այդ արտոնությունից»[133]: Ի լրումն դրա, հնարավոր չէ մոռացության մատնել մեծ վանեցի, Կ. Պոլսի պատրիարք **Մկրտիչ եպս. Խրիմյանի** պատկերած «Հայ-գոյժ»-ի ու «Վանգոյժ»-ի հրապարակումները, Վանի մեծ հրդեհը, արևմտահայության աղետալի վիճակը պատկերող գավառական հարստահարությունների վերաբերյալ փաստավավերագիր տեղեկագրերն ու ժողովածուները, Ազգային ժողովի պաշտոնական արձանագրությունները՝ «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», «Դիւան Հայոց պատմութեան» բազմահատոր տեղեկագրերը, որոնք, ըստ Սահմանադրության ու հայրենասեր պատրիարքի թափած ջանքերի, ներկայացվում էին օսմանյան կառավարությանը: Կարելի է նկատել, որ Մ. Խրիմյանի պատրիարքության (1869–1873 թթ.) օրոք Ազգային ժողովը ավելի գործուն կերպով է զբաղվել ազգային քաղաքականության խնդիրներով:

Ավելին, ժամանակ առ ժամանակ Ազգային ժողովի ամբիոնից լսվում էր գավառահայ ժողովրդի աղեկտուր ձայնը թուրք-քրդական հարստահարությունների ու կամայականությունների մասին: Այդ կապակցությամբ հայտնի են հայկական գավառներով շրջագայած բելգիացի իրավաբան Գ. Ռոլեն-Ժեքմենի հանրահայտ խոսքերը. թեև կար եվրոպական ժողովրդավարական սկզբունքով կառուցված սահմանադրությունը, սակայն «չկար երաշխիք, որի վրա հայը կարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոչխարները, բեյը չբռնաբարեր նրա աղջիկներին ու չկողոպտեր նրա ունեցվածքը, կամ հարկահանը մի քանի անգամ չպահանջեր միևնույն հարկը»[134] և այլն: Այլ խոսքով, չկար որևէ երաշխիք, թե թուրքական կառավարությունը պարտավորություն կստանձնի ապահովելու իր հպատակների անվտանգությունն

---

[133] **Ռաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 9, Եր., 1958, էջ 44:

[134] **Густав Ролен-Жекмэн М.**, *Армения, армяне и трактаты*, (տե՛ս Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 19).

ու առօրյա կյանքը՝ կանխելու կամ օրենքով պատժելու ամեն տեսակ անօրինականություն, բռնություն ու կամայականություն: Հայտնի էր, որ դատարանում տաճկահայ գեղջուկի վկայությունը իրավական ուժ չուներ, հպատակ հայը, իբրև գյավուր (անհավատ) և ռայա (իրավազուրկ հպատակ), զենք կրելու իրավունք չուներ, հայերի համար չկային կյանքի, գույքի, պատվի, իրավունքների ապահովության երաշխիքներ և այլն: Եվ այդ տեսակետից տեղին է պրոֆ. Ա. խառատյանի դիտողությունը, որ դա «անտարակույս, Ազգային սահմանադրության ամենամեծ թերությունն էր»[135]:

Արդեն թանզիմաթյան դարաշրջանի վերջնափուլում՝ 1870-ական թվականների կեսերին, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի ու տարածաշրջանում լարված միջազգային հարաբերությունների պայմաններում, ակտիվացավ 1865 թ. հիմնված, այսպես կոչված, «Նոր օսմաններ»-ի թուրքական գաղտնի կազմակերպությունը: Նրանց գաղափարախոս Միդհատ Ահմեդ փաշան կազմում է օսմանյան Թուրքիայի պատմության մեջ համապետական առաջին սահմանադրությունը, որում իր գործուն մասնակցությունն է ունեցել ճանաչված սահմանադրագետ, Միդհատ փաշայի օգնական Գր. Օտյանը[136]: 1876 թ. գարնանը՝ մայիսին «Նոր օսմանների» կազմակերպած պալատական հեղաշրջմամբ սուլթան Աբդուլ Ազիզը գահընկեց է արվում ու ինքնասպան լինում: Սկզբում օսմանյան գահը ստանձնում է Մեհմեդ Մուրադ 5-րդը, որը, սակայն, հոգեկան հիվանդ լինելու պատճառաբանությամբ մի քանի ամիս անց գահընկեց է արվում, և սուլթանական աթոռը գրավում է նրա եղբայր Աբդուլ Համիդ 2-րդը: Նրա ավելի քան երեք տասնամյակների (1876–1909 թթ.) գահակալման տարիները իրականացրած ջարդարարական քաղաքականության համար պիտի ստանար «**Զուլումի**» (դաժանությունների) դարաշրջան, իսկ ինքն էլ՝ «**Կարմիր**» (արյունարբու) սուլթան մականունը:

Իբրև թանզիմաթյան շարժման շարունակություն, **1876 թ. դեկտեմբերի 23-ին** հռչակված սահմանադրությամբ Թուրքիան հայտա-

---

[135] **Խառատյան Ա.**, *Դարձյալ արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին* (ՊԲՀ, Եր., 2008, թիվ 2, էջ 84):

[136] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 3, էջ 504:

բարվեց սահմանադրական միապետություն: «Նոր օսմանների» ղեկավար Ահմեդ Միդհատ փաշան ստանձնեց մեծ վեզիրի (վարչապետի) պաշտոնը և երկրում կարծես ռեֆորմների փորձեր արվեցին: Պետք է ասել, որ արդեն փորձառության որոշ ճանապարհ անցած հայոց Ազգային սահմանադրությունը իբրև ազդակ, ինչ-որ չափով իր նպաստն էր բերում կայսրության հպատակ այլացեղ ու այլադավան ժողովուրդների շրջանում ազգային ու ժողովրդավարական գաղափարների տարածման ու հասունացման իմաստով: Ի դեպ, ընդունված սահմանադրությամբ Օսմանյան խորհրդարանում հայերը զբաղեցրել են մեկ տասնյակից ավելի պատգամավորական տեղեր[137]:

Արդեն 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում արևմտահայերը, այդ թվում Ազգային ժողովի երեսփոխանները, ոգևորված ռուսական զենքի հաջողություններով, երեսփոխանների մի մեծ խումբ Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանի շենքում գումարեց ոչ պաշտոնական մի խորհրդակցություն և որոշեցին հայկական դատը ներկայացնել «յաղթական Ռուսաստանի բարեհայեցողութեանը»[138]: Այդ նպատակով, դեռ Սան-Ստեֆանոյի (նախնական) պայմանագրից առաջ, նրանք իրենց հերթին մշակել էին Հայաստանին (Արևմտյան Հայաստանին) ինքնավարություն տալու մասին ծրագրային պահանջների մի չափավոր նախագիծ, որը պիտի հասցվեր Սբ. Էջմիածին՝ կաթողիկոսին, բայց այն հետագա ռուս-թուրքական բանակցություններում ընթացք չստացավ[139]:

Թռուցիկ ակնարկ ձգելով Ազգային ժողովի արձագանքին Հայկական հարցում՝ չի կարելի ասել, թե Ազգային ժողովը, պատրիարք ու նույն ժողովի նախագահ Ներսես արք. Վարժապետյանը (1874–1884), իսկ նրա հրաժարականից հետո պատրիարքի փոխանորդ, Ազգային ժողովը նախագահող Մատթեոս եպիսկ. Իզմիրլյանը բավարար ուշադրություն չեն դարձրել համայն հայությանը հուզող խնդրին: Սակայն, դժբախտաբար, այլ բան է, թե վերջին հաշվով թափված այդ ջանքերից ինչ արդյունք ստացվեց:

---

[137] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 338:
[138] Նույն տեղում, էջ 259:
[139] Տե՛ս **Սարուխան Ա.**, *նշվ. աշխ.*, էջ 259, 349–350:

Ազգային ժողովը դեռ 1876 թ. դեկտեմբերի 10-ի իր նիստում, «մեր ազգին իրավանց պաշտպանութեան յանձնառութեամբ», միաձայնությամբ արտոնել էր Տեր Ներսես Պատրիարքին, որպեսզի նա իր ջանքն անխափան «յառաջ մղէ ամեն ուր որ հարկ լինի»[140]: Արդեն ռուս-թուրքական պատերազմի շրջանում ու դրա ավարտից հետո Ազգային ժողովը օրակարգային «Հայոց խնդրով» քանիցս կազմակերպվել են քննարկում-լսումներ, հարցի լուսաբանման նպատակով կազմվել են տեղեկագրեր, հղվել են դիմումներ պատկան մարմիններին՝ թե՛ Բարձր դռանը և թե՛ եվրոպական տերություններին՝ Հայկական խնդրի արդարացի լուծման ակնկալիքով: Հայկական խնդրի առնչությամբ Ազգային ժողովը ստեղծել էր նախաքննիչ հանձնաժողով, երեսփոխանների կողմից արվել են անհատական և խմբային հարցապնդումներ, անցկացվել են լսումներ տաճկահայ նահանգների գաղթականության խնդրով և այլն: Ազգային ժողովն իր 1878 թ. Բ նիստում լսել է պատրիարքի պատասխանը արդեն Բեռլինի դաշնագրի արդյունքների մասին: Հատկանշական է, որ այդ կապակցությամբ 20 երեսփոխանների խմբային հարցին պատրիարք Ն. Վարժապետյանը պատասխանել է անորոշ ու խոսափողական ժողովրդական իմաստնություն դարձած հետևյալ խոսքով՝ «երբ չես կրնար ընել ինչ որ կ՚ուզես, պէտք է ընես ինչ որ կրնաս»[141]:

Ինչ վերաբերում է միդիատյան սահմանադրությանը, ապա շատ չանցած, երբ Բեռլինի վեհաժողովում, Մեծ տերությունների քաղաքական աճպարարությունների հետևանքով, Հայկական հարցը գործնականում մնաց «օդից» կախված, 1878 թ. պաշտոնապես չեղյալ համարվեց Թուրքիայի առաջին սահմանադրությունը, որն, ինչպես հայտնի է, հետագայում պիտի վերակենդանանար 1908 թ. երիտթուրքերի հուպիսյան պետական հեղաշրջմամբ և հայ ժողովրդի համար թողած իր շատ

---

[140] «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», բացում 1878 ամին, նիստ Ա., 2 հունիս 1878, Կ. Պոլիս, «Ս. Միքայէլեան» տպագրատուն, 1878, էջ 10:

[141] «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», բացում 1878 ամին, նիստ Ե, 21 հուլիս (ն. տ. օգոստոսի 2) 1878, Կ. Պոլիս, «Ս. Միքայէլեան» տպագրատուն, 1878, էջ 63:

ավելի ծանր հետևանքներով[142]: Այնուամենայնիվ, Հայոց Ազգային ժողովը ներքաղաքական բարդացող պայմաններում ընդհատումներով շարունակել է իր աշխատանքները: Արձանագրենք, որ հայ ազգային քաղաքական կուսակցությունների ասպարեզ գալով՝ նրանում սկսեցին երեսփոխանական տեղեր զբաղեցնել տարբեր կուսակցական խմբեր ու խմբակցություններ, որոնց միջկուսակցական բանակռվի դաշտ էր դառնում նաև Ազգային ժողովը:

1908 թ., ըստ էության նույն բովանդակությամբ միդհատյան (օսմանյան) սահմանադրության վերակենդանացումից հետո, Կ. Պոլսի հայոց նորընտիր պատրիարք Եղիշե արք. Դուրյանը (1909–1910 թթ.) փորձ արեց Ազգային սահմանադրության ոգով բարենորոգել հայոց եկեղեցին: Այդ նպատակով 1910 թ. հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվեց Պոլսի Կեդրոնական եկեղեցական ժողովը՝ օսմանյան սահմանադրության «ոգով» նախապատրաստելու ապագա ազգային-եկեղեցական բարենորոգումների նոր նախագիծ: Դժբախտաբար, Ե. Դուրյանի պատրիարքական գահակալումը շատ կարճ տևեց: 1910 թ. նոյեմբերի 26-ին գումարված Ազգային երեսփոխանական ժողովը, պահպանողական ուժերի միջամտությամբ՝ 38 կողմ և 8 դեմ ձայներով, ընդունեց Դուրյան պատրիարքի հրաժարականը: Նրա սկսած ձեռնարկը, ներքաղաքական ու նաև միջազգային հարաբերությունների հետագա բարդացման հետևանքով, մնաց անկատար[143]: Այդուհանդերձ, արևմտահայերի Ազգային սահմանադրությունը և դրա իրավաօրենսդրական գլխավոր մարմին հանդիսացող Ազգային ժողովը գործեց ընդհուպ մինչև 1915 թ., երբ նրա պատգամավորների ու ազգային կառույցների անդամների մեծագույն մասը Մեծ եղեռնի զոհ դարձավ:

Այսպիսով, արևմտահայ հասարակական կյանքում, այն էլ սուլթանիզմի հայահալած բռնաճնշիչ մթնոլորտում, նշանակալի առաջընթաց

---

[142] Իսկ ինչ վերաբերում է վարչապետ Ահմեդ Միդհատ փաշայի հետագա ճակատագրին, ապա նա պաշտոնանկ արվեց, աքսորվեց երկրից, իսկ հետագայում վարձու մարդասպանի ձեռքով գլխատվեց:

[143] Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, *Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան հարցը*, էջ 64–65, նաև՝ **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 4, էջ 884–885:

քայլ պիտի համարել սահմանադրական շարժումը և դրա արդյունքում ընդունված ազգային Սահմանադրություն-Կանոնադրությունը: Այդ երևույթը ինքնին քաղաքական ու հոգևոր առումներով իր նպաստը պիտի բերեր հայ իրավաքաղաքական մտքի, պետականության գաղափարի հետագա հասունացման ու բյուրեղացման գործում: Նկատել տանք, որ Ազգային սահմանադրության մի շարք գաղափարներ, սկզբունքներ ու դրույթներ իրենց ձևակերպումն են գտել մերօրյա հայկական սփյուռքի համայնքների հոգևոր ու աշխարհիկ կառույցների կանոնադրություններում: Ավելին, դրա շատ մտքեր, թեզեր ու ձևակերպումներ իրավահաջորդության ու պատմական ժառանգորդության հիմքով տեղ են գտել մեր օրերի (ժամանակների) ՀՀ սահմանադրության մեջ:

Իբրև հարցի վերջաբան՝ կատարենք ևս մեկ արձանագրում. պետահիրավական առումով 1863 թ. արևմտահայերի սահմանադրությունը, չնայած իր խմբագրված, գրականության մեջ երբեմն հանդիպող՝ **«թլպատված»** բնորոշմանը[144], այդուհանդերձ, սուլթանական կառավարության կողմից իրավաբանորեն հաստատված ու շուրջ վեց տասնամյակ պաշտոնապես գործողության մեջ եղած, օրենքի ուժ ունեցող իրավաբանական փաստաթուղթ էր: Արևմտահայերենով ասած՝ «անիկա հավաստում էր» արևմտահայ աշխարհիկ և հոգևոր հատվածների՝ Բարձր Դռան կողմից ճանաչման և նրա կյանքի տարբեր ոլորտների բարենորոգմանն ուղղված քայլերի ձեռնարկման փաստը, ինչը ներկայիս դիտանկյունից ու չափումներով վկայում է արևմտահայության ազգային իրավունքների ճանաչման անհրաժեշտության մասին: Ներկայումս այդ իրավունքների հոգևոր պահանջատերն առաջին հերթին Մեծին Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությունն է և Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը:

Այդ նույն համատեքստում, նկատի ունենալով XX դարասկզբին երիտթուրք կառավարության (իշխանավորների) կողմից արևմտահայության հանդեպ իրականացրած համազգային մեծ ոճիրը՝ Մեծ եղեռնը, զանգվածային տեղահանություններն ու կոտորածները, արևմտա-

---

[144] **Նալբանդյան Մ.**, *ԵԼԺ*, հ. 4, էջ 292, նաև՝ *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 370:

հայության հայրենազրկումը, նրա ունեցվածքի, սեփականության, կապիտալի, մշակութային արժեքների կողոպուտը, յուրացումը կամ ոչնչացումը, ուստի, հայության այդ հատվածի հետնորդ-ժառանգները իրենց հոգևոր և աշխարհիկ կառույցներով՝ կազմակերպություններով, հիմնարկություններով, միություններով և այլն, ունեն բոլոր հիմքերը միջազգային իրավունքի նորմերով հարց բաձրացնելու և պահանջատեր լինելու իրենց պատմական, նյութական, հոգևոր ու բարոյական իրավունքների վերականգնմանը և կորուստների փոխհատուցմանը: Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը ևս պատմաիրավական վկայություն է մեր պատմական Հայրենիքի մեծագույն մասի՝ Արևմտյան Հայաստանի գոյության փաստի, սակայն, դժբախտաբար, մեր ժողովրդի կամքից անկախ, բռնազավթման ու կորստի մասին:

* * *

XIX դարի 30–50-ական թթ. օսմանյան Թուրքիայի պատմության մեջ հայտնի են «**Թանզիմաթի**»՝ բարեփոխումների ժամանակաշրջան անունով: Պատմական այդ շրջափուլում եվրոպական առաջադիմական հեղափոխություններից ազդված և այնտեղ բարձր կրթություն ստացած ու ազատագրական գաղափարներով ոգևորված մի խումբ լուսավորյալ արևմտահայ մտավորականներ, հիմքում ունենալով արևմտահայության ծանր ու աղետալի կացությունը, ինչպես նաև օգտվելով դարակեսերին Թուրքիայի համար ստեղծված արտաքին բնույթի ռազմա-քաղաքական բարդ իրավիճակից, սկիզբ են դնում սահմանադրական շարժմանը: Դրա հետևանքով, տարիների ընթացքում մշակվում և **1860 թ. մայիսի 24-ին** Ազգային ընդհանուր ժողովի կողմից ընդունվում, իսկ ավելի ուշ դարձյալ տևական քննարկումներից, խմբագրումներից հետո սուլթանական կառավարության (Բ. Դռան) վավերացմանն է ներկայացվում արևմտահայության ազգային-հոգևոր կյանքի բարելավմանը ուղղված Ազգային սահմանադրություն կոչվող մի փաստաթուղթ, որն, ի վերջո, **1863 թ. մարտի 17-ին** հաստատվում է կառավարության կողմից և ստանում պետական օրենքի ուժ:

Արևմտահայ առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանակները ակնկալում էին ազգային-հոգևոր ինքնավարության պահանջից,

ազգային-քաղաքական գաղափարների հետագա հասունացման ճանապարհով, հետագայում անցում կատարել դեպի **տարածքային** (հողային) **ինքնավարության**, իսկ հեռանկարում ունենալով Արևմտյան Հայաստանի անկախության տեսլականը, ինչը, անշուշտ, **արևմտահայության ազգային ինքնագիտակցության աճի** մասին էր վկայում: Եվ դա, ինքնին, մի ուշագրավ էջ է արևմտահայ հասարակական մտքի ու քաղաքական շարժման ու պայքարի պատմության մեջ:

Չնայած գործող Ազգային սահմանադրության և դրա հիման վրա աշխատող բարձրագույն օրենսդիր մարմինը հանդիսացող Ազգային ընդհանուր ժողովի որոշ ընդհատումներով ավելի քան կեսդարյա գոյության ու գործունեության ընթացքում նկատելի դրական փոփոխություններ կատարվեցին արևմտահայության հասարակական, կրթամշակութային կյանքի շատ ոլորտներում: Բայց, դժբախտաբար, սուլթանական բռնավարչակարգի պայմաններում հնարավոր չեղավ «Թանզիմաթի» և Ազգային սահմանադրության շատ դրույթներ կյանքի կոչել, վասնզի դրանցում պաշտոնապես հրատարակված ժողովրդավարական բնույթ կրող շատ օենքներ ու իրավական ակտեր խորը հակասության մեջ էին գտնվում բուն թուրքական իրականության հետ: Իսկ արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին գործնականում ամեն ինչ տակնուվրա եղավ ու արևմտահայության համար, հանձին՝ հայոց Մեծ եղեռնի, ողբերգական ավարտ ունեցավ:

# ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

# ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ (XIX դարի 70–80-ական թթ.)

## *1. «Թուրքահայ հեղափոխության» հարցը*

XIX դարի երկրորդ կեսին, արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում սահմանադրական շարժման ու Ազգային սահմանադրության պայմաններում, արտաքին ու ներքին գործոններով (ազդակներով) պայմանավորված, հայ մտավոր-քաղաքական շրջանակներում զուգահեռաբար ընթանում էր նաև հեղափոխական պայքարի գործելակերպին տուրք տալը: Հայ գաղափարաքաղաքական մտքի ամենավառ վերլուծաբաններից պրոֆ. Լեոն «**թուրքահայ հեղափոխության**» սկիզբը համարում է 1862 թ. հուլիս-օգոստոսին Զեյթունի հուժկու ապստամբությունը, որի ժամանակ երևան է գալիս «քաղաքական ծրագիր ու կազմակերպած զինական շարժում»[1]: Այդ նույն առնչությամբ, Մ. Նալբանդյանի գործունեության հետ կապված, Լեոն գտնում է, որ Զեյթունի ապստամբությունը կապված է ռուս հեղափոխական **նարոդնիկության** հետ: Նա հիմնականում շրջանցում կամ առնվազն մեղմում է արևմտահայ ազատագրական-հեղափոխական պայքարի ներքին՝ օսմանյան բռնապետական սոցիալ-տնտեսական, ազգային-քաղաքական ու կրոնական ճնշում-հարստահարումների բուն, ներքին պատճառները և կարծում է, որ, հանձիս Մ. Նալբանդյանի և մյուսների, այդ երևույթը **դրսից**, ռուսական հեղափոխության օրինակով, հայ ինտելիգենցիան է **ներմուծել** ու ղեկավարել[2]: Լեոն Նալբանդյանից հետո թուրքահայ հեղափոխության գաղափարախոսութ-

---

[1] Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, հ. 1, Եր., 1994, էջ 5:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 6:

յան երկրորդ հիմնադիրներից էր համարում Գր. Արծրունուն[3]: «Թիւրքահայ յեղափոխութեան,- գրում է նա,- ամենագլխաւոր առանձնայատկութիւնը հէնց այս է եղել առաջին իսկ օրից: Նա եղել է գրեթէ բացառապէս ռուսահայ ինտելիգենցիայի գործը»[4]: Նույն աշխատության մեկ այլ հատվածում դարձյալ կարդում ենք. «Այսպէս ուրեմն ռուսական նարոդնիկեան յեղափոխութիւնն էր, որ հայ ինտելիգենցիայի միջոցով սկիզբ դրեց **թիւրքահայ յեղափոխութեան**»[5]: Սակայն մենք չենք կարծում, որ թուրքահայ հեղափոխությունը Հ. Էմինի կամ Շ. Շահամիրյանի տիպի մի շարք առումներով հայաստանյան բուն միջավայրից կտրված զուտ գաղութահայ երևույթ էր: Այստեղ պետք է նկատել ռուսական և հայկական հեղափոխությունների միջև այն տարբերությունը, որ եթե ռուսական նարոդնիկական հեղափոխության նպատակը, տարբեր մարտավարությամբ հանդերձ, ռուս ժողովրդին (մուժիկին) կապիտալիզմի շրջանցման միջոցով ճորտությունից ու սոցիալ-տնտեսական ու իրավական առումներով ազատագրումն ու իրենց (Ալ. Գերցենի, Մ. Բակունինի, Պ. Լավրովի, Ն.Չերնիշևսկու, Ն. Օգարևի, Վ. Տկաչևի և մյուսների) պատկերացրած **«ռուսական սոցիալիզմի»** հաստատումն էր, ապա թուրքահայ հեղափոխության վարդապետության առաջնային նպատակը օտարի բռնատիրության տակ կեղեքվող հայ ժողովրդի **ազգային-ազատագրության** խնդիրն էր: Եվ այնպես չէ, որ «թիւրքահայ յեղափոխությունը բխում էր ռուսական սոցիալիզմից»[6]: Կնշանակի, «Թուրքահայ հեղափոխության» դրսից ներմուծված լինելու Լեոյի վարկածն ու տրված մեկնաբանությունը միակողմանի են և ոչ ամբողջական:

Ի տարբերություն Լեոյի, հայ սոց.-դեմ. (սպեցիֆիկ) տեսաբան Դ. Անանունը ռուսահայերի հասարակական զարգացմանը նվիրված իր եռահատորյակում պատմական մատերիալիզմի մեթոդով փորձել է հայ հասարակական կյանքի զարգացման պատճառները փնտրել ոչ թե

---

[3] Տե՛ս Լէօ, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը*, հ. 1, էջ 68–69:
[4] Նույն տեղում, էջ 17:
[5] Նույն տեղում, էջ 23:
[6] Նույն տեղում, էջ 7:

**արտաքին** գործոնների, այլ **բուն հայ կյանքի** մեջ[7]: Նույն կերպ, ամենայն Հայոց բանաստեղծ Հ. Թումանյանը ևս մերժում էր արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը դրսից ներմուծված լինելու մասին կարծիքը, գրելով. «Սխալ են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե արևմտահայ հեղափոխությունը դրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»[8]: Խորհրդահայ պատմաբաններից պրոֆեսոր Կ. Քարամյանը հակագիտական և իրականությունից կտրված է համարում այն հեղինակների առաջ քաշած կոնցեպցիան (հայեցակարգը), համաձայն որի, իբրև, «հայ ազգային ազգային-ազատագրական շարժումը բռնկվել է արտաքին ազդեցությամբ, առանց տեղում հող ու արմատ ունենալու»[9]: Ավելին, պատմաբանը 1860-ական թվականներին Հայաստանի երկու հատվածներում սկսված ազգային-ազատագրական շարժումներում տեսնում է օրինաչափություն[10]:

«Թուրքահայ հեղափոխության» կապակցությամբ Լեոյի գաղափարաբանական դատողությունները հանրագումարի բերելով՝ կարելի է ընդհանրացնող եզրահանգում անել այն մասին, որ քաղաքական առումով մերժելի է նրա պես մտածողների կողմից առաջ քաշած այն վարկածը, թե թուրքահայ հեղափոխությունը իբրև չի ունեցել **ներքին** նախադրյալներ, այլ ներմուծվել կամ ընդօրինակվել է **դրսից**, ինչը, ցավոք, կարող է լրացուցիչ ջուր լցնել մեր ժամանակներում թափ առած թուրք-ադրբեջանական հակահայկական կեղծարարության ջրաղացին: Վերջին ավելի քան մեկ դարում հայ պատմագրության մեջ արևմտահայության սոցիալ-տնտեսական ու ազգային-քաղաքական վիճակի բազմաշերտ հարցերի շուրջ ստեղծված հսկայածավալ գրականության մեջ համակողմանի ու հիմնավորապես ցույց է տրված, որ Օսմանյան բռնապետական վարչակարգի պայմաններում Արևմտյան Հայաստանում ծայր առած ազգային-ազատագրական շարժումներն ու պայքարը առաջին հերթին ունեցել են ինքնաբուխ **ներքին սոցիալ-տնտեսա-**

---

[7] Տե՛ս **Անանուն Դ.**, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)*, հ. 1, Բաքու, 1916:

[8] **Թումանյան Հ.**, *Երկերի ժողովածու*, վեց հատորով, հ. 4, Եր., 1958, էջ 318:

[9] **Քարամյան Կ.Ն.**, *նշվ. աշխ.*, էջ 7:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

**կան, իրավաքաղաքական, ազգային-կրոնական նախադրյալներ ու պատճառներ** ու գերազանցապես ազգային-քաղաքական և հոգեմտավոր բովանդակություն: Դրան պետք է հավելել XIX դարի երկրորդ կեսին արևմտահայ շրջանակներում ազգային ինքնագիտակցության աճը, որի դրսևորումը հանդիսացավ, իր բացերով ու թերություններով հանդերձ, Ազգային սահմանադրության կյանքի կոչելը: Թուրքահայաստանը համարվում էր հայության ամենահարստահարված հատվածի հայրենիքը: Բայց, միաժամանակ, անշուշտ, պետք է նշել, որ ժամանակաշրջանի համաշխարհային գործընթացներին համահունչ, թուրքահայ ժողովրդի ազատագրական շարժումներն ու պայքարն ունեցել են նաև **արտաքին ազդակներ**, օրինակ, բուլղարների, մակեդոնացիների, բոսնիացիների և բալկանյան մյուս ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարը, օտար տերությունների միջամտությունները օսմանյան Թուրքիայի ներքին գործերին և այլն: Եվ, ահա, այդ երկու՝ ներքին ու արտաքին ազդակների ամբողջությունն է պայմանավորել Արևմտահայ կամ «**Թուրքահայ հեղափոխությունը**»: Այս համատեքստում սխալվում են բոլոր նրանք, ովքեր XIX դարավերջից թափ առած սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականությունը և դրան ոտեկից արևմտահայության պատուհասած մեծ աղետները վերագրվում են հայերի ազգային-ազատագրական շարժումներին և հայ քաղաքական կուսակցությունների թույլ տված մարտավարական սխալներին:

Ուշագրավ է, որ Հայաստանի հետագա ճակատագրի մասին տարբեր առիթներով կարծիք են հայտնել սոցիալիզմի գաղափարախոսներ (մարքսիզմի հիմնադիրներ) Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը: Օրինակ, Կ. Մարքսը ռուս-թուրքական պատերազմների առիթով տեսակետ է հայտնել այն մասին, որ հայ ժողովուրդը դժբախտություն ունի գտնվելու «թուրքական Սցիլլայի և ռուսական Խարիբդայի միջև, ընդ որում, ցարիզմը շահարկում է ազատարարի դերը»: Նրա կարծիքով, «Հայաստանի ազատագրումը թուրքերից և ռուսներից հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կտապալվի ռուսական ցարիզմը»[11]: Կարելի է

[11] Տե՛ս Маркс К. и Энгельс Ф., *Сочинения*, т. 39, 2-ое изд., М., 1966, с. 271.

ասել, որ սոցիալիզմի մեծագույն գաղափարախոսի կանխատեսումը, իր ոչ լիարժեքությամբ հանդերձ, մասամբ իրականացավ, երբ փլուզվեց Ռուսական կայսրությունը, և 1918 թ. հռչակվեց Հայաստանի անկախությունը:

## *2. Հայկական հարցը՝ իբրև Հայաստանի ազատագրման քաղաքական-դիվանագիտական ճանապարհով լուծման միջոց*

Հայրենիքի ազատագրման վեհ նպատակին էին միտված 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակների թափած ջանքերը: 1870-ական թթ կեսերին Ռուսաստանի ակտիվ արտաքին քաղաքականության, Բալկանյան ճնշված ազգերի ապստամբական ելույթների և նախապատրաստվող հերթական ռուս-թուրքական պատերազմի պայմաններում հայության շրջանում ուժեղացավ ազատագրության և անկախության, համենայն դեպս, ինքնավարության մտայնությունը: Արդեն ռուս-թուրքական պատերազմի վերջնափուլում Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը, չնայած Բարձր Դռան հանդեպ արտահայտած հավատարմությանը, հայտնի է՝ դրա դիմաց սուլթան Աբդուլ Համիդը պատրիարքին պարգևատրել էր «Օսմանիե» առաջին աստիճանի շքանշանով[12], սակայն ռուսական զորքերի հաղթանակի պայմաններում, արևմտահայ ու արևելահայ հանրային կարծիքի ճնշման տակ, պատրիարքն, իր «ազգավնաս» դիրքորոշումը փոխեց, և 1878 թ. հունվարին Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրեց Հայկական հարցին առնչվող մի ընդարձակ փաստաթուղթ՝ «Պատմական տեղեկագիր», որում բարձրացվում էր Լիբանանի օրինակով Հայաստանին ինքնավարություն տալու խնդիրը[13]:

---

[12] Տե՛ս **Կոստանդյան Է.**, *Մկրտիչ Խրիմյանի հասարակական-քաղաքական գործունեությունը*, Եր., 2000, էջ 232:

[13] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 431:

Պատերազմական փուլում հայ հասարակական-քաղաքական շրջաններում արտաքին քաղաքական կողմնորոշման ուղղությամբ հանդես եկավ երեք հոսանք՝ ռուսական, անգլիական և պահպանողական, ասել է, թե՝ թուրքական կողմնորոշում[14]: 1878 թ. հունվարին Ադրիանապոլսի զինադադարի նախօրեին հայերը, հանձին Ադրիանապոլսի առաջնորդական փոխանորդ Գևորգ Ռուսճուգյանի, հանդիպում ունեցան ռուս-թուրքական բանակցությունների ռուսական կողմի ղեկավար կոմս Ն. Իգնատևի հետ՝ տաճկահայոց հետագա ճակատագրի հարցով, ակնկալելով բուլղարների նման ազատագրվել օսմանյան լծից: Սակայն զրույցի ընթացքում ռուսական դեսպանը անթաքույց պատասխանում է, որ «արևմտահայությունը չի կարող ստանալ այն ազատությունը, ինչ ստացել են բուլղարները, որովհետև «հայերը անպատրաստ գտնուեցան»»[15]: Եվ սա ասվում էր այն պարագայում, երբ հանուն ռուսական զենքի հաղթանակի, հատկապես ռուսահայությունը մարդկային, նյութական, գործնական ու բարոյական համակողմանի աջակցություն էր ցույց տվել, մեծ թվով զոհեր ու զրկանքներ կրել՝ հուսալով, ի վերջո, ձեռք բերել ազատություն:

Այդուհանդերձ, առաջիկայում ընթանալիք ռուս-թուրքական պայմանագրի առիթով հայկական կողմը նախապատրաստեց երկու փաստաթուղթ՝ դրանցից մեկի հեղինակը եգիպտահայ պետական գործիչ, մեծահարուստ Նուբար փաշան էր, որը սթափ հաշվի առնելով ու գնահատելով իրերի վիճակը, այն է, որ եվրոպական որևէ տերություն, այդ թվում Անգլիան և Ռուսաստանը, էլ չենք խոսում խնդրի բուն սուբյեկտը համարվող Թուրքիայի մասին, իրենց շահերի թելադրանքով, չեն ցանկանա հայությանը ինքնավարություն տալ, ուստի, նա իրատեսորեն նպատակահարմար էր գտնում բավարարվել չափավոր պահանջով, այն է՝ Թուրքահայաստանին տալ ընդամենը վարչական, դատական և ոստիկանական բնույթի **բարենորոգումներ**: Պահանջների մյուս փաթեթը, որի պահանջատերը պատրիարքարանն էր, հանձինս Ն. Վար-

---

[14] Տե՛ս նույն տեղում:

[15] **Կիրակոսյան Ջ.**, *Բուրժուական դիվանագիտություն և Հայաստան (XIX դարի 70-ական թթ.)*, Եր., 1978, էջ 128:

ժապետյանի և Բեռլին մեկնող պատվիրակ Մ. Խրիմյանի, առաջ էր քաշվում Հայաստանին Լիբանանի օրինակով ինքնավարություն տալ[16]:

Արդեն XIX դարի վերջին քառորդում, հանձինս 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտի ու դրա արդյունքում հանրահայտ Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի համապատասխանաբար 16-րդ և 61-րդ հոդվածների, միջազգային դիվանագիտության մեջ հրապարակ է գալիս Տաճկահայաստանի (Արևմտյան Հայաստանի) նահանգներում բարեփոխումներ անելու մի պահանջ-ծրագիր, որը միջազգային դիվանագիտության մեջ ստանում է «**Հայկական հարց**» անվանումը:

Արդի չափումներով Հայկական հարցի բովանդակությունը կարելի է հասկանալ ոչ թե զուտ 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի համաձայն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու, այլ լայն առումով Հայոց պատմական հայրենիքի ամբողջական տարածքում **անկախ պետականության վերականգնման** և պահպանման խնդրի հետ:

Հայ ժողովրդի ներքին մղումով ու նաև Մեծ տերությունների միջամտությամբ ասպարեզ նետված Հայկական հարցը, չնայած վերջինիս իրագործման ուղղությամբ թուրք իշխանությունների հարուցած խոչընդոտներին, այդուհանդերձ, միջազգային ատյաններում և ի լուր աշխարհի արձանագրեց անառարկելի մի փաստ, որ հայ ազգը ցանկանում է իր հայրենիքում, տվյալ դեպքում՝ Արևմտյան Հայաստանում ինքնակազմակերպվել, ապրել մարդավայել կյանքով, ամենից առաջ պաշտպանված տեսնել հայ մարդու անձն ու գույքը, ազգային-մշակութային իրավունքներն ու ազատությունները: Եվ դա, որպես մի հզոր ազդակ, հայ ժողովրդին պետք է մղեր դեպի ազատագրական պայքարի մեծ ու դժվարին ճանապարհ:

Ինչպես նախորդ, այնպես էլ 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ռուսահայերը և ոչ միայն նրանք, ինչպես արդեն քանիցս ասվել է, ավանդաբար համակողմանի մասնակցություն ցուցա-

---

[16] Տե՛ս **Սարուխան Ա.**, *Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860–1910)*, հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 384–385:

բերեցին ռուսական կողմին՝ ակնկալելով նրա օգնությամբ Արևմտյան Հայաստանի (Տաճկահայաստանի) ազատագրում և հնարավորինս հայկական պետականության վերականգնում: Փաստենք, որ պատերազմի ընթացքում Կովկասյան ռազմաբեմում գործում էին շուրջ մեկ տասնյակի հասնող հայազգի գեներալներ, էլ չենք խոսում հայ սպաների ու հազարավոր հայ կամավորների ակտիվ մասնակցության մասին: Սակայն, ելնելով արևմտահայության անվտանգության հանգամանքից, պետք է նշել, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես արք. Վարժապետյանը, կարծում ենք, իրավացիորեն համամիտ չի եղել կովկասահայության ակտիվ մասնակցությանը պատերազմին, ինչը հասկանալիորեն պոտենցիալ վտանգ կարող էր առաջացնել իր արևմտահայ եղբայրների համար, և այդ մասին նա հանդես էր եկել հատուկ կոնդակով[17]: Ի դեպ, պատրիարքի այդ քայլը առաջ է բերել ռուսահայ հասարակական- քաղաքական շրջանակների դժգոհությունը:

Հասարակական կարծիքի ճնշման տակ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը 1878 թ. փետրվարի 1-ին դիմում է ռուսական պատվիրակությանը (ղեկ. կոմս Ն. Իգնատև) և խնդրում հայերին ևս տալ այն իրավունքներն ու երաշխիքները, ինչը որ տրվելու էր բալկանյան ժողովուրդներին[18]: Հայոց պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանը և նրա քարտուղար Մ. Չերազը 1878 թ. մարտին իրենց հետ Եվրոպա են տանում պատրիարքի հուշագիրը՝ Հայաստանին ինքնավարության տալու մասին, հայերի թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներով, Հայաստանի քարտեզով և այլ օժանդակ նյութերով[19]: Բալկաններ, թե՞ Արևմտյան Հայաստան երկընտրանքի հարցում Ռուսաստանի համար նախընտրելի ու առաջնային էր առաջինը, որովհետև Բալկանյան թերակղզին քայլ էր նրա ռազմավարական նպատակը հանդիսացող Կ. Պոլսին ու նեղուցներին հասնելու և տիրելու համար:

---

[17] Տե՛ս **Оганесян Эд.**, *Век борьбы*, Ер., 2010, с. 47:

[18] Տե՛ս **Պարսամյան Վ.Ա.**, *Հայ ժողովրդի պատմություն (1801–1917 թթ.)*, հ. 3, էջ 297:

[19] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, հ. 6, Եր., 1981, էջ 116–117:

Չնայած 1878 թ. փետրվարի 19-ին ստորագրված Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրում ձևակերպվեց Հայաստանի մասին 16-րդ հոդվածը, որն ուներ հայանպաստ բովանդակություն, բայցևայնպես հայ հասարակական-քաղաքական շրջանակները ցանկանում էին բալկանյան երկրների նման Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տրվեր: Ընդ որում, հոդվածի նախնական խմբագրությունում ռուսական դեսպան, պատվիրակության ղեկավար կոմս Ն. Իգնատևի համաձայնությամբ պայմանագրի նախագծում ձևակերպված էր հետևյալ միտքը, որ «Սուլթանը պարտավորվում էր ռուսական ցարի առջև՝ հայերով բնակեցված (Էրզրումի, Մուշի, Վանի, Սեբաստիայի, Դիարբեքիրի և այլն) մարզերում հիմնել ինքնավար վարչական կառավարում, և այդ ռեֆորմների կատարման համար սուլթանը ապահովում է իրական երաշխիքներ»[20]: Սակայն թուրք իշխանությունները (ա. գ. նախարար Սաֆեթ-փաշան) մերժեցին այդ տարբերակը, և հոդվածը խմբագրվեց: Բայց հետագայում արդեն Բեռլինի 1878 թ. (հունիսի 13 – հուլիսի 13) վեհաժողովում (կոնգրեսում) քիչ թե շատ հայանպաստ 16-րդ հոդվածը վերափոխվեց շատ ավելի աննպաստ ու անորոշ 61-րդ հոդվածի, և Հայկական հարցը, կարելի է ասել, մտավ **փակուղի**: Բայցևայնպես, այդ պայմանագրերով Հայկական հարցի միջազգային դիվանագիտության արենա իջնելը և իր հետագա ընթացքով մեծ վայրիվերումներ ունեցավ, այնուամենայնիվ, այն պատմական փորձի ու դասերի, տերությունների վարած քաղաքականությունը լավ հասկանալու, հետագա անելիքները հստակեցնելու առումով և այլն, պիտի նպաստեր **հայ քաղաքական մտքի զարգացմանը**:

Այդուհանդերձ, եթե արևմուտքի տերությունները չխոչընդոտեին ու անփոփոխ թողնեին Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, ապա միգուցե հնարավոր էր նկատելի բարենորոգումների հասնել արևմտահայության կյանքում, ինչը կարող էր հետագայում հեռանկար բացել Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցում: Սակայն, մեր կարծիքով, Ռուսաստանի՝ Հայաստանի ու հայերի հանդեպ նախընթաց և ընթացս ժամանակաշրջանում հանդես բերած քաղաքականության

[20] **Գեղամյան Ե.**, *Հայերի ազատագրական շարժումը*, Բաքու, 1915, էջ 353, 354:

տրամաբանությունը հուշում է, որ բացառվում էր Ռուսաստանի հովանու տակ Հայաստանի անգամ **ինքնավարության** կարգավիճակ: Ակադեմիկոս Գ. Գալոյանը, հղում անելով անգլիացի դիվանագետ Հ. Լեյարդի մտքերից, նշում է, որ, եթե անգամ Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրով Հայաստանի ինքնավարացման վերաբերյալ ծրագիր կազմվեր և միջազգային դիվանագիտական պայմանագրային ձևակերպում ստանար, միևնույնն է՝ «Ռուսաստանը, ի վերջո, անեքսիայի կենթարկեր Հայաստանը»[21]: Հիշեցնենք, որ այդ ժամանակ ռուսական զորքերը գտնվում էին Արևմտյան Հայաստանում:

Դրա համար էլ առաջին հերթին Անգլիայի պահանջով հրավիրվեց Մեծ տերությունների բեռլինյան վեհաժողովը և վերանայվեց անգամ Սան Ստեֆանոյի՝ Հայաստանին վերաբերող 16-րդ հոդվածը: Անգլիայի կառավարական-դիվանագիտական շրջանակները գտնում էին, որ միայն Ռուսաստանի վերահսկողությամբ Հայաստանում բարեփոխումների անցկացումը պոտենցիալ վտանգ էր պարունակում՝ Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի կողմից հնարավոր «կուլ» տալու մասին, ինչը, բնականաբար, հակասում էր Մեծ Բրիտանիայի շահերին, էլ չենք խոսում Թուրքիայի մասին: Հայտնի է, որ Բեռլինի կոնգրեսում Թուրքիայի շահերը պաշտպանելու դիմաց դրա նախօրեին 1878 թ. հունիսի 4-ի կոնվենցիայով Անգլիան ստացավ Կիպրոս կղզին, իսկ դրանից մի քանի օր առաջ՝ մայիսի 30-ի անգլո-ռուսական գաղտնի համաձայնագրով, Անգլիան չպիտի առարկեր, որպեսզի Բաթումն ու Կարսը հանձնվեն Ռուսաստանին[22]:

Այդ ամենով հանդերձ, Բեռլինի ոչ հայանպաստ պայմանագրից հետո էլ հայերը շարունակել են հույս փայփայել Հայաստանին ինքնավարություն տալու մասին: Այդ նպատակով, օրինակ, ռուսահայերը 1879 թ. նույնիսկ նամակ են հղել Կ. Պոլսում լույս տեսնող «**Մասիս**» պարբերականին, որպեսզի պատրիարք Ն. Վարժապետյանը իր հեր-

---

[21] **Գալոյան Գ.Ա.**, *Հայաստանը Մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)*, էջ 274:

[22] Տե՛ս *История дипломатии (1872–1919 гг.)*, под ред. **В.П. Потемкина**, т. 2, М.-Л., 1945, с. 47–50.

թին դիմի Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հենրի Լայարդին՝ Անգլիայի ուշադրությունը հրավիրելու Հայկական հարցի վրա[23]:

Հավանաբար ժամանակին ճիշտ էր նկատել սոց.-դեմ. (սպեցիֆիկ) Բ. Իշխանյանը, որ հայկական խնդրում ո՛չ Թուրքիան և ո՛չ էլ Ռուսաստանը չեն ցանկացել Հայաստանին ինքնավարություն տալ[24]: Թուրքիայի նեգատիվ վերաբերմունքը Հայկական հարցում ինքնըստինքյան հասկանալի է: Ինչ վերաբերում էր Ռուսաստանի դիրքորոշմանը, ապա նա, առաջնորդվելով նվաճողական-ծավալապաշտական պլաններով, առանձնապես ցանկություն չի ունեցել իր կողմից նվաճված արևմտահայ երկրամասերին ինչ-որ կարգավիճակով ինքնավարություն տալ: Մյուս կողմից, մի՞թե հասկանալի չէ, թե ինքնավար Հայաստանի գոյությունը ինչ արձագանք (ռեակցիա) կարող էր առաջացներ ռուսական կայսրության մյուս հպատակ ազգությունների մեջ: Դրա ամենավառ արտահայտությունն է դարավերջի Ռուսաստանի ա. գ. նախարար, իշխան Ա. Լոբանով-Ռոստովսկու քաղաքական բանաձև դարձած հայտնի խոսքերը, որ «Ռուսաստանը չի ցանկանում Փոքր Ասիայի արևելյան հատվածում (այսինքն՝ Արևմտյան Հայաստանում – Ա.Հ.) իր սահմանին մի **նոր Բուլղարիա ստեղծվի**»[25]:

Ալեքսանդր III «խաղաղարարի» օրոք՝ 1880-ական թվականներին, ցարական ռեակցիոն գործիչ Կ. Պոբեդոնոսցևի օժանդակությամբ սաստակացավ այլազգիների հանդեպ հալածական, ծուլողական քաղաքականությունը՝ ազգային դպրոցների և մշակութային օջախների փակում, ռուսաց լեզվի ու հավատքի պարտադրում: Կառավարությունը համառորեն Ուկրաինան և Բելոռուսը դիտում էր որպես ռուսական, արգելվում էր ուկրաիներեն գրքերի տպագրում, ներկայացումների ցուցադրում, ինչը որ առաջ էր բերում հակառուսական տրամադրություններ[26]: Անգամ բոլշևիկները, իհարկե, իրենց դասակարգային պայքարի դիրքերից շատ սուր քննադատել են ցարիզմի նվաճողական քաղաքա-

---

[23] Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 16 հոկտեմբերի 1879 թ.:

[24] Տե՛ս **Իշխանյան Բ.**, *Թուրքիայի ապագան*, Թիֆլիս, 1907, էջ 43–44:

[25] *Հայկական հարցը միջազգային հարաբերություններում 1895–1923 թթ., հոդվածների ժողովածու*, խմբ. **Ա. Մելքոնյան**, Եր., 2022, էջ 52:

[26] Տե՛ս *История России IX–XXI века. От Рюрика до Путина*, с. 387.

կանությունը ազգային հարցում: «Ռուս կառավարության քաղաքականությունը մոտիկ (հավանաբար, պիտի լիներ՝ մերձավոր – Ա.Հ.) արևելքում,- գրում է հայ բոլշևիկների առաջնորդ Ստ. Շահումյանը,- թե՛ Բալկաններում և թե՛ Կովկասում՝ միշտ քողարկվել է կեղծ մարդասիրությամբ: Ռուս բռնակալները հանդես են եկել միշտ «քրիստոնյա ազգերին» տաճկական լծից ազատողների կեղծ դիմակի տակ: Նրանց նպատակն է եղել ոչ թե ազատագրել «սլավոն եղբայրներին» կամ «քրիստոնյա» հայերին, այլ նոր նվաճումներ գործել և մոտենալ Պոլսին Սև ծովի այս կամ այն կողմից»[27]: Ինչպես ասում են, այստեղ գրեթե ամեն ինչ հստակ ասված է:

Այսպիսով, հայոց պատմության անբաժանելի մասը կազմող Հայկական հարցին ինչպիսի ոչ միանշանակ մեկնաբանություններ ու գնահատականներ էլ որ տանք, այն վերջին հաշվով աղերսվում էր հայոց բնօրրանում (տվյալ պարագայում Արևմտյան Հայաստանում) պետականության վերականգնման հիմնանպատակի հետ:

### *3. Ռ. Պատկանյանի հայրենաշունչ բանաստեղծական մղումները հայրենիքի ազատագրության հարցում*

Տակավին 1860-ական թվականներին ռուսական կայսր Ալեքսանդր 2-րդի ազատական ռեֆորմների շրջանում թիֆլիսի գիմնազիստ սովորողներից ստեղծվել էին «**Երիտասարդ Հայաստան**» և «Երիտասարդ Վրաստան» հայրենասիրական խմբակներ, որոնք, ըստ Կովկասի ուսումնարանների վարչության պետ Նևերովի, «երազում են Ռուսաստանից անջատվելու և անկախ Հայաստան ու Վրաստան ստեղծելու մասին»[28]: Նույնը հետադիմական հայացքների կրող Մ. Կատկովը «Մոսկովյան տեղեկագիր» թերթի 1865 թ. համարներից «Երիտասարդ Հայաստան» և «Երիտասարդ Վրաստան» գաղտնի խմբակների գործունեության վերաբերյալ քաղված թղթակցությունների հիման վրա

---

[27] **Շահումյան Ստ.**, *Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ)*, հինգ հատորով, հ. 3, Եր., 1975, էջ 49:

[28] **Հովհաննիսյան Ա.**, *Նպաքանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 10:

հետևեցնում էր, որ այդ խմբակներում «շրջանառվում է ինքնուրույն թագավորությունների գաղափարը»[29]: Ցարական չինովնիկների գուցե և չափազանցություններով հանդերձ, ըստ ամենայնի, Կովկասի մայրաքաղաքի ոաանող երիտասարդության շրջանում գործել են գաղտնի խմբակներ, որոնք արտահայտել են հայրենաբաղձ մտայնություններ ու տրամադրություններ: Պետք է ասել, որ նման հայացքների ձևավորմանը արտասահմանից ոգեկոչում էր Ալ. Գերցենի «Կոլոկոլը», ինչը որոշակի լիցք էր հաղորդում հայ, վրացի և մյուս ազգային շրջանակների ազատագրական ձգտումներին, մանավանդ, որ ազգային հարցում ռուսական հեղափոխական-դեմոկրատների կարգախոսներից էր՝ կայսրության ազգերին շնորհել ազատ ինքնորոշման իրավունք[30]:

XIX դարի երկրորդ կեսում ժամանակագրական առումով Մ. Նալբանդյանի ու Ստ. Նազարյանցի հասարակական-քաղաքական մտքի, ազատական ու ազատագրական գաղափարաբանության բանաստեղծական-գեղագիտական վառ շարունակողներից մեկը հանդիսացավ հայ գրական անդաստանի ամենաճանաչված դեմքերից, ազգանվեր բանաստեղծ **Ռափայել Պատկանյանը** (1830–1892 թթ.)՝ իր գրական-բանաստեղծական ինքնատիպ ոգով ու ոճով, ավելի հաճախ ազատագրական պայքարի կոչող հայրենաշունչ տաղերով՝ պոեմներով ու բանաստեղծական բոնկումներով:

Այդ շրջանում հայտնի էին Գամառ-Քաթիպայի «Գամառ Քաթիպա» և «Մանուկ Հայաստան» գրական խմբակները, իբրև Հայաստանի ազգային զարթոնքի խորհրդանիշներ: 1861 թ. լույս տեսավ «Քաջ Վարդանի մահը» պոեմը և դրա բաղադրիչ մասերից մեկը համարվող՝ «Հիմի է՞լ լռենք» երգը: Հարկ է նկատել, որ Ռ. Պատկանյանի պայքարի սլաքը օսմանյան բռնապետությունից զատ, ոչ պակաս չափով ուղղված էր նաև ցարական ազգահալած վարչակարգի դեմ: Պրոֆ. Ֆ. Մովսիսյանը իրավացիորեն Ռ. Պատկանյանին համարում է XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական տենչերի ամենավառ արտահայտիչներից

---

[29] **Հովհաննիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 13:
[30] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 12:

մեկը[31]: Պատկանյանի գրական երկերի՝ արտաքինից բանաստեղծական-գեղարվեստական պատումների խորքում թաքնված էր հայ ժողովրդի ու Հայաստանի **քաղաքական ազատագրության** նպատակը:

Հայրենասեր բանաստեղծը, ոգևորված 1862 թ. Զեյթունի հնչեղ ապստամբության թափից, 1863 թ. աշնանը Պետերբուրգում իր իսկ հիմնած ու խմբագրած «Հիւսիս» շաբաթաթերթում հանդես եկավ մի ընդարձակ հոդվածով, որում առաջ քաշեց այն գաղափարը, թե հայոց պայքարի միջնաբերդ հանդիսացող ինքնիշխան Զեյթուն երկրամասում հնարավոր լինի վերականգնել հայոց պետականությունը: Դրա համար, որպես նախաքայլ, նա դիմում էր պարսկահայերին (Խոյի, Սալմաստի և մյուս գավառների հայությանը) գաղթել և բնակություն հաստատել Զեյթուն երկրամասում և ստրկություն չհանդուրժող, քաջարի զեյթունցիների պաշտպանությամբ վերականգնել Հայոց պետականությունը[32]: Բայց հայտնի չէ, թե նրա այդ հրապարակումը ինչ արձագանք է գտել:

Ռ. Պատկանյանը հայության հայրենասիրական ոգին վերարթնացնելու համար իր ստեղծագործություններում լայնորեն գործածում էր Հին Հայաստանի առասպելական և իրական մեծերի՝ Հայկ Նահապետի, Տիգրան II Մեծի, Վարդան և Վահան Մամիկոնյանների, քերթողահայր Մ. Մաշտոցի, Լևոն II Մեծագործի և մյուսների մեծահամբավ անունները: Ըստ էության, մի տեսակ բանաստեղծական վիպասանապատում ու պայքարի կոչեր են նրա «Վարդանի երգը», «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը», «Հիմի էլ՞ լռենք», «Աղասու մոր երգը», «Հայի վիշտը», «Արաքսի արտասուքը», «Անիի առումը»: Իսկ «Վանեցի մոր երգ»-ում դարձյալ ազատագրվելու պատգամով դիմում էր իր փոքրիկ զավակին.

«Տո՛ւր, սիրեկան, քակեմ ձեռքիդ պալարները, արձակեմ,
Ու այդ թոփիկ աջիդ մեջը մի պողպատե սուր դընեմ,
Ըստրուկ գընա՛ արյան դաշտը, վերադարձի՛ր ազատված.
Արդյոք մի օր պիտի լըսե՞ս մեր խընդիրքը, ո՜վ աստված»[33]:

---

[31] Տե՛ս **Մովսիսյան Ֆ.**, *Հայ հասարակական միտքը 1830–1840-ական թվականների եվրոպական ազգային-ազատագրական շարժումների մասին*, Եր., 2022, էջ 491:

[32] Տե՛ս *«Հիւսիս»*, Ս. Պետերբուրգ, 1863, թիվ 1 (նոյեմբեր), էջ 1–5:

[33] **Պատկանյան Ռ.**, *Երկեր*, Եր., 1980, էջ 89:

Այդ նույն գաղափարով՝ «Վանեցի գեղջուկի տաղը» բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ եզրահանգմամբ.

«Եղբայրք հայեր, առե՛ք խոփը, տվե՛ք դարբնին կըռելու,
Կըռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու»[34]:

Պատկանյանը հայրենիքի ազատագրման ճանապարհին կարևորում էր նաև հայ աղջկա, կնոջ առաքելությունը. ոչ միայն իր մանուկ զավակին հայրենասիրական ոգի ներշնչելու, այլև այդ պայքարին նրա անմիջական անձնական մասնակցությունը: Այդ մասին իր ընկերոջը՝ Գևորգ Քանանյանին հասցեագրված նամակում նա ակնարկում էր, որ «Թող հայ աղջիկը սիրէ **քաջութիւն**, քան թէ **բարոյական առաքինութիւն**»[35]:

Ռ. Պատկանյանը «Գամառ-Քաթիպա» ծածկանունով հայտնի գրական միության (ընկերակցության) մեջ մտնող իր երկու համախոհներին՝ Գ. Քանանյանին և Մ. Թեմուրյանին ուղղված «Հայտարարության» մեջ համարձակորեն ազդարարում էր Հայաստանի ազգային ինքնորոշման գաղափարը և իր հատու բանաստեղծական քնարով դրվատում էր իր ազատության ու անկախության համար ոտքի ելնող հայ ժողովրդին: Խորհրդահայ ականավոր պատմաբան Ա. Հովհաննիսյանի բնորոշմամբ. «Պատկանյանը առաջ էր քաշում ու շեփորում ազգային ինքնագիտակցություն նվաճող հայ ժողովրդի ազգային-քաղաքական ազատագրման գաղափարը»[36]: Նա իր բանաստեղծական քառյակներում դիմում էր ցաքուցրիվ պանդուխտ դարձած հայերին՝ հայրենադարձվել դեպի հայրենիք, «գաղթել Արզրում ու Կարին»[37] Հայաստանի երբեմնի «փառքը» վերականգնելու, ապստամբել թուրք բռնատիրության դեմ, վերատիրել հայրենի հողին, գտնել իրենց «կորցրած թագը»[38], իսկ «կիսաքանդ մեր Կարինը լիներ քաղաք մեր ոստան»[39] և նրա «ամրին (ամրոցին – Ա.Հ.) ծածաներ Հայի դրոշակ»[40]: Բանաստեղծը հայրե-

---

[34] Նույն տեղում, էջ 90:
[35] «Մուրճ», Թիֆլիս, 1905, թիվ 2–3 (փետրվար-մարտ), էջ 90:
[36] **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 106:
[37] **Պատկանյան Ռ.**, *Երկեր*, Եր., 1959, էջ 157 և 163:
[38] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 106:
[39] **Պատկանյան Ռ.**, *Երկեր*, Եր., 1955, էջ 157:
[40] **Պատկանյան Ռ.**, *Բանաստեղծությունների ընտրանի*, Եր., 2005, էջ 76:

նիքի ու ժողովրդի ազատության խորհրդանիշը **սուրն** էր համարում, իսկ նվիրական բաղձանքը՝

«Երբ մեր հայրենին հրաշքով ազատվեր,
Մերոնք էլ ազատ կյանք-օր վարեին,
Ա՛խ, ինչպե՜ս, ինչպե՜ս լավ բան կըլիներ,
Երբ հայք ինձ իրանց իշխան ընտրեին»[41]:

Ռ. Պատկանյանը հայ ազատագրական պայքարի գլխավոր թիրախը համարում էր Թուրքահայաստանի ազատագրումը և անգամ մեկնել է Վան(1881 թ.): Նա Վանն էր համարում բուն Հայաստանը, պատգամում էր վերադառնալ հայրենիք ու հավելում.

«Կյանքի կեսը ստրուկ եղանք,
Գեթ կեսն լինինք մենք ազատ,
Ազատությունն կուտա մարդուս
Լոկ յուր հողը հարազատ»[42]:

Դժվար չէ նկատել, որ հայրենասեր բանաստեղծի երկասիրություններում կարմիր թելի պես անցնում էին հայրենիքի քաղաքական ազատագրության և անկախ պետականության վերականգնման գաղափարները:

Ի տարբերություն հեղափոխական-դեմոկրատի համարում ունեցող Մ. Նալբանդյանի, Պատկանյանը ազգային-քաղաքական պայքարի հարցում չէր կարևորում հայ հանրության սոցիալ-դասակարգային բաժանվածությունը (շերտավորվածությունը) և, մեր կարծիքով, ճիշտ էր վարվում, քանզի հայ ժողովրդի ու նրա հայրենիքի ազատագրմամբ, բնականաբար, շահագրգռված էին հասարակական բոլոր շերտերն ու սոցիալական խմբերը: Սակայն, այդ իմաստով, իր ժամանակի մեջ կարելի է հասկանալ խորհրդահայ ականավոր պատմաբան Ա. Հովհաննիսյանին, որ գաղափարաքաղաքական առումով, նա հարկադրված առավել համակրական վերաբերմունք պետք է ցուցաբերեր հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանի դիրքորոշման հանդեպ, քան թե հաճախ խորհրդային գրականության մեջ՝ ազգային-պահպանողակա-

---

[41] **Պատկանյան Ռ.**, *Երկեր*, Եր., 1959, էջ 158:
[42] Բերվում է՝ ըստ **Ա. Հովհաննիսյանի** նշված մենագրության, գ. 2, էջ 113:

նի (ազգայնականի) պիտակավորում (որակում) ստացած Ռ. Պատկանյանին[43]: Եվ պատահական չէր, որ խորհրդային ժամանակաշրջանի ստալինյան կոչված մռայլ պատմափուլում Ռ. Պատկանյանի երկերը, ինչպես որ Ռաֆֆու, Ալիշանի, Ծերենցի, հետագայում՝ Ե. Չարենցի, Ա. Բակունցի և մյուսների, համարելով «նացիոնալիստական»՝ տևականորեն արգելափակված էին ընթերցողների համար և գտնվում էին, ինչպես ասվում է՝ «յոթը փականի տակ»:

Բայց արդեն 1877–1878 թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմի ու Հայկական հարցի միջազգային քաղաքական-դիվանագիտական ատյաններում բարձացվելու և դրա տեղապտույտ տալու պայմաններում Ռ. Պատկանյանը առաջիններից մեկն էր, որ հայության անունից խոր հիասթափություն արտահայտեց եվրոպական տերություններից: Հայտնի է 1879 թ. նրա «Բողոք առ Եվրոպա» բանաստեղծությունը, որում, պատմական անցյալի շատ դրվագներ հիշեցնելով, քննադատում էր «Ապերախտ Եվրոպա»-ին[44]: Եվ այդ դարի 70–80-ական թվականներին տաճկահայոց խնդրում տերությունների հանդես բերած դիվանագիտական աճպարարությունների ու խարդավանքների մթնոլորտում ձևավորվում էր ըմբոստ Հայոց Հայրիկի ձևակերպած «**Երկաթե շերեփի**» գաղափարը:

Հասկանալի է, որ «Բեռլինյան» հիասթափությունը հայ հասարակական-քաղաքական մտքում էական կռվան ու խթան պիտի հանդիսանար սեփական ուժին ապավինելու գաղափարին ու մարտավարությանը: Դրա հետ մեկտեղ, հայրենասեր բանաստեղծը քաղաքական առումով առանձնապես մեծ պատրանք չուներ նաև Ռուսաստանի հանդեպ: Դրան պետք է հավելել 80-ական թվականներից ցարական կառավարության կողմից ուժգնացող ոչ հայանպաստ կրթամշակութային հալածական քաղաքականությունը: Ռ. Պատկանյանը, Ռուսաստանի քաղաքականությունից հուսախաբ, հետևյալ քառյակով իր դժգոհությունն էր արտահայտում «Հյուսիսից», հասկանալի է, թե ոմից: Բայց վերջում նա հույս էր հայտնում, որ ի վերջո «գարուն» պիտի գա.

---

[43] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 108–110:
[44] **Պատկանյան Ռ.**, *Երկեր*, Եր., 1980, էջ 90–91:

«Թո՛ղ փըչե քամին պաղ-պաղ, երեսիս,
Վերեն ամպերեն սաստիկ ձյուն թո՛ղ գա,
Որքան որ կուզե՛ թող փըչե Հյուսիս,
Հուսով եմ, վաղ-ուշ գարուն պիտի գա»[45]:

Այս ամենից զատ. բացի քաղաքական իմաստ ու նրբերանգներ պարունակող գրական-բանաստեղծական երկերից, Ռ. Պատկանյանը հայ պատմագիտական գրականության մեջ հայտնի է նաև որպես հայ առաջին քաղաքական՝ Արմենական կուսակցության համար գրած քաղաքական բնույթի մի ծրագրային փաստաթղթով՝ «**Վարդապետարան Հայաստանի ազատության**»[46]: Վեց էջանոց այդ ծրագրային փաստաթուղթը կազմված է հարց ու պատասխանի ձևով և անկախ նրա մատուցման ձևից, նրանում առաջ քաշված գաղափարները, մտքերն ու դատողությունները հանդիսանում են բարձր հայրենասիրության մի նմուշ, որը միտված էր Հայաստանի ազատագրման և անկախ պետականության վերականգնման տեսլականին: Հեղինակը ազգի փրկությունը տեսնում էր Հայաստանի քաղաքական անկախության մեջ, իսկ դրան հասնելու համար գտնում էր, որ ըստ հանգամանքի, պետք է դիմել երբեմն սեփական զենքով կռվի, երբեմն փողով, երբեմն օտարի օգնությամբ և այլն: Իսկ Հայաստան ասելով նա հասկանում էր ամբողջ Մեծ Հայքը[47]: Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ տվյալ պարագայում Ռ. Պատկանյանը ներկայանում է որպես հայրենիքի ազատագրության գործը ծրագրավորող քաղաքական գործիչ: Թեև հայ պատմագիտական գրականության մեջ տարակարծություն կա «Վարդապետարան»-ի Արմենական կուսակցության համար բուն ծրագիր լինելու հարցում, սակայն հարկ է նկատել, որ դրա շատ մտքեր ու դրույթներ օգտագործվել են այդ կուսակցության 1894 թ. և հետագա ծրագրերում և գործելակերպում: Այդ մասին ավելի հանգամանորեն խոսք կլինի Արմենական կուսակցությանը վերաբերող ենթաբաժնում:

Այսպիսով, Ռ. Պատկանյանի գրական-բանաստեղծական ստեղծագործություններում և հրապարակախոսական հոդվածներում կար-

---

[45] **Պատկանյան Ռ.**, *Բանաստեղծությունների ընտրանի*, Եր., 2005, էջ 64:
[46] **Պատկանյան Ռ.**, *Վարդապետարան Հայաստանի ազատության*, Եր., 1989:
[47] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ...*, գ. 2, էջ 123–124:

միր թելի պես անցնում էր երկու իրար փոխկապակցված գաղափար՝ օտարի կողմից գերեվարված հայ-հայրենիքի **ազատագրում** և հայոց **պետականության վերականգնում**: Իսկ այդ մեծ ու դժվարին խնդրի լուծման ամենահուսալի ուղին համարում էր զինված պայքարը: Կարելի է ասել, որ սկսած XIX դարի 70-ականի վերջերից հայ ազատատենչ մտավորականությանը այլևս Ազգային սահմանադրության շրջանակները չէին բավարարում: Արտաքին ու ներքին ազդակներով պայմանավորված՝ ձևավորվում է «Երկաթե շերեփի» սերունդը: Սա միաժամանակ նշանակում է, որ հայ հասարակական-քաղաքական միտքը, նրա մեծանուն գործիչները նախապատրաստում էին Հայաստանի ազատագրական պայքարի որակապես նոր փուլը՝ նոր ձևավորվող ազգային կուսակցությունների ծրագրված քաղաքական պայքարի ժամանակաշրջանը:

### *4. Գր. Արծրունին և Ռաֆֆին Հայաստանի ազատագրության ուղիների հարցում*

XIX դարի 70–80-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական մտքի շրջանակներում շարունակվում էր Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման ուղիների շուրջ փնտրտուքը: Հայ հանրային միջավայրում ընթանում էին տարակարծություններ, բանակռիվներ՝ ընդհուպ մինչևիսկ անհաշտ դիմակայություններ: Այդ երկու տասնամյակներին հայ հասարակական-քաղաքական մտքին, ազատական ու ազատագրական ձգտումներին գաղափարական ու հոգևոր հարուստ սնունդ տվեց **Գրիգոր Արծրունին** (1845–1892 թթ.)՝ իր հրապարակախոսությամբ և հիմնադրած հանրահայտ «Մշակ» թերթով, որը կարծես դարձավ անվանի հրապարակախոս Ստ. Նազարյանցի «Հիսիսափայլ»-ի հոգևոր ու գաղափարական յուրատեսակ իրավահաջորդը (ժառանգորդը): Այդ իմաստով, պրոֆ. Լեոյի բնորոշմամբ՝ արևելահայ ազգային քաղաքական մտքի հետագա զարգացման անդրադարձում իսկապես իր մեծ խորհուրդն ունեցավ Ստ. Նա-

զարյանցի ազատամտական գաղափարների շարունակող ու հարստացնող Գր. Արծրունին՝ իր հիմնադրած հռչակավոր «**Մշակ**» թերթով[48]:

Այդ նույն ժամանակ (միաժամանակ) Գր. Արծրունու կողքին՝ Հայկական հարցի նախապատրաստական արծարծումների փուլում, գրական-գեղարվեստական (վիպասանական) և հրապարակախոսական առումով հայ ազատագրական պայքարի մասսայականացման հանրային ամենաճանաչված դեմքը, հիրավի, դարձավ հայ մեծանուն պատմավիպասան **Հակոբ Մելիք-Հակոբյանը** (**Ռաֆֆին**) (1835–1888 թթ.), որը ժամանակի ու հասարակական պահանջմունքի հրամայականով շատ բեղուն կերպով աշխատակցեց Արծրունու «Մշակ»-ին: Այդ շրջանում, եթե թերթի խմբագիր-հրատարակիչ Գր. Արծրունին հանդես էր գալիս հասարակական-քաղաքական և, առհասարակ, հանրությանը հետաքրքրող ամենատարբեր՝ «Մշակ»-ի՝ հանրության միտքը հարստացնող ամենօրյա առաջաբաններով, նրա էջերը զարդարող **հրապարակախոսությամբ**, ապա Ռաֆֆին՝ գրական-գեղարվեստական ազգային նկարագիր ու բովանդակություն բովանդակող **պատմավիպասանությամբ**: Նրա ստեղծագործությունները, բացի հայոց պատմական անցյալի ակունքներից սնվող հիմքից ու հենքից, իրենց ազատագրական ոգորումներում տեղ-տեղ ստանում էին ծրագրային բնույթ:

1878 թ. ռուս-թուրքական Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրով և, ապա, Բեռլինի վեհաժողովով Հայկական հարցի միջազգային դիվանագիտության թատերաբեմ իջնելու և արծարծումների առաջին տարիներին «Մշակ»-ի խմբագիրը, ըստ քաղաքական իրադրության և հանգամանքների փոփոխության, արտահայտել է տարբեր դիրքորոշումներ Թուրքահայաստանի խնդրի լուծման ուղղությամբ: Նա սկզբում կարծում էր, թե իբր «Հայոց խնդիրը ինքն իրան կվճռվի»[49], ինչը քաղաքագիտական տեսակետից հարցի լուծման պարզամիտ և մակերեսային մոտեցում էր: Իսկ հետո քննարկումների ընթացքում նա Տաճկահայ խնդրի լուծման երկու հնարավոր տարբերակ էր մատնանշում՝ ա/ Արևելյան Հայաստանի նման Թուրքահայաստանի պարզա-

---

[48] Լեոն՝ 1872 թ.-ին «Մշակ»-ի ասպարեզ իջնելը համարում էր «դարագլուխ» հայ լրագրության ու գրականության մեջ (տե՛ս **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 6, էջ 467):

[49] «Մշակ», Թիֆլիս, 1881, թիվ 202 (հոկտեմբեր):

պես կցումը (միացումը) Ռուսաստանին և բ/ «լավ է ինքնավարություն ստանա, քան թե նորից վերադարձած լինի թուրքաց բարբարոս, ճնշող, ոչնչացնող տիրապետությանը»[50]: Արծրունին այն կարծիքին էր, որ եթե Հայաստանը միանա Ռուսաստանին, ապա տնտեսական առումով մի քանի տարուց հետո երկիրը կլինի ծաղկած դրության մեջ[51]:

Գր. Արծրունին, խոսելով Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի բարձրացման և անարդար վճռի մասին, միաժամանակ ինքնաքննադատական խոսք է ուղղում հայկական կողմին այն բանի համար, թե «Հայերը չիմացան գրավել Հայաստանի մահմեդական ազգաբնակության համակրությունը իրանց հայրենիքի վերանորոգության գործի համար, չհասկացան, որ Բեռլինի ավագաժողովում նրանք պետք է խոսեին ոչ թե միայն հայերի, այն էլ միայն հայ լուսավորչականների կողմից, այլ բոլոր հայաստանցիների անունով, ինչ ցեղին ու կրոնին և պատկանեին նրանք՝ քրիստոնյա թե մահմեդական: Նրանք պետք է խնդրեին **ինքնավարություն** Հայաստանի համար և ոչ թե հայերի համար միայն»[52]:

Հարկ է նշել, որ Գր. Արծրունին ռուսական կողմնորոշման ընդգծված ներկայացուցիչներից էր: Դեռ մինչ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը նա համոզմունք էր հայտնում, որ «միակ պետությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել-այդ Ռուսաստանն է»[53]: Նա և հայ հանրության մեծ շրջանակներ տևականորեն շարունակում էին կանգնած մնալ Հայաստանի ռուսական քաղաքական կողմնորոշման դիրքերում, անգամ նկատել չտալով ցարական կառավարության կրթամշակութային հայահալած քաղաքականությունը, ռուսական պաշտոնական մամուլի հակահայ կեցվածքը, անգամ նորածին երեխաների ազգանվան «յան»-ը «ով»-ով փոխարինելը, ռուս չինովնիկների՝ հայերի հան-

---

[50] **Գրիգոր Արծրունի**, *Հայկական հարցի պատմություն*, աշխ.՝ **Լ. Գևորգյանի**, Եր., «Մ. արք. Աշճեան» մատենաշար, 2010, էջ 83:

[51] Տե՛ս «Մշակ», 1877, թիվ 83:

[52] «Մշակ», 1881, թիվ 202:

[53] «Մշակ», 1876, թիվ 44 (նոյեմբեր):

դեպ հնչեցվող վիրավորական «արմյաշկա» արտահայտությունը և այլն[54]:

Ինչ վերաբերում է Բեռլինի վեհաժողովից հետո մեծ հնչեղություն ստացած 61-րդ հոդվածով Հայկական հարցին ինչ-որ չափով լուծում տալու եվրոպական տերությունների «թափած» ջանքերին, ապա չի կարելի ասել, թե երբ հայկական շրջանակները դիմումներ էին հղում այդ տերությունների կառավարություններին, նշանակել է, որ նրանք հանդես են բերել արևմտյան կամ ռուսական կողմնորոշում: Այս համատեքստում ճիշտ է նկատում պրոֆ. Վ. Դիլոյանը, որ Հայկական հարցում հայ շրջանների դիմումները եվրոպական խոշոր տերություններին ոչ թե «կողմնորոշում» էին, այլ «ընդամենը դիմում էին, որպեսզի նրանք կատարեն ստանձնած պարտավորությունները»[55]:

Ի տարբերություն Գ. Արծրունու մոտեցումներին ու քաղաքական դիրքորոշմանը, այդ նույն հարցերում Ռաֆֆին այնքան էլ մեծ պատրանք չի ունեցել՝ կապված խոշոր տերությունների, այդ թվում՝ Ռուսաստանի անկեղծ ու անշահախնդիր օգնության հետ: Նա ամենից առաջ շեշտը դնում էր սեփական ուժերին ապավինելուն; Այդ գաղափարով XIX դարի հայ ազատագրական պայքարի վերազարթոնքի փուլում, ինչպես Ռ. Պատկանյանը, Ղ. Ալիշանը, Ծերենցը և մյուսները, այնպես էլ Ռաֆֆին դիմեցին հայոց պատմական անցյալին՝ ազգային ինքնաճանաչողության գաղափարը բորբոքելու և, վերջին հաշվով, հասնելու հայրենիքի ազատագրության նպատակի իրագործմանը, պետականության վերականգնմանը: Եվ պետք է ասել, որ գրական ստեղծագործությունների ճանապարհով քաղաքական քարոզչությունը հսկայական բարերար ազդեցություն գործեց հայ ազատաբաղձ սերնդի վրա:

Դրա հետ մեկտեղ, հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման առումով հարկ է զատորոշել, որ ընդհանուր առմամբ արևելահայ-ռուսահայ հատվածը մեծապես կողմնորոշված էր դեպի Ռուսաստանը,

---

[54] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.Փ.**, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70–80-ական թթ.), Եր., 1965, էջ 211 և 241:

[55] **Դիլոյան Վ.**, *Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ* (տե՛ս «Պայքար», Եր., 1995, թիվ 6–7, էջ 16):

իսկ արևմտահայ-թուրքահայը՝ ավելի շատ դեպի Արևմուտք, իսկ նրա առավել հետադեմ պահպանողական հատվածը՝ մնալ օսմանյան խնամակալության տակ: Մինչդեռ, այդ շրջանում ազատագրական ու հեղափոխական գաղափարներով համակված Խրիմյանի, Պատկանյանի, Ռաֆֆու և մյուսների նման գրական-քաղաքական դեմքերը հայրենիքի ազատագրման, անցյալի կորցրած «**թագի ու գահի**» վերականգնման միակ հուսալի ուղին տեսնում էին **զինված պայքարի** մեջ: Նրանք առաջիններից էին, որ զինական պայքարի գաղափարը ծրագրային հարթության վրա տեղափոխեցին:

Հայտնի է նաև հայրենիքի ազատագրության գաղափարներով տարված և «**Երկաթի շերեփի**» կոչ անող մեծ հայրենասեր հոգևոր գործիչ Խրիմյան Հայրիկին ևս՝ Բարձր Դռան համար իբրև անցանկալի անձ, սպասում էր աքսոր: Մեծ հայրենասերը իր հանդգնության համար աքսորվեց Երուսաղեմ, մինչև որ 1893 թ. կընտրվեր Ամենայն Հայոց կաթողիկոս: Կարելի է համեմատություն անցկացնել տարբեր միջավայրում ու պայմաններում գործող XIX դարի հայ հոգևոր երկու գործիչների միջև այն նմանությամբ, որ եթե իր հայրենասիրական գաղափարների ու ձգտումների համար Ներսես Աշտարակեցին ռուսական իշխանությունների կողմից աքսորվեց **Բեսարաբիա** (Քիշինև), ապա Մ. Խրիմյանը նույն ձգտումների համար իբրև պատժամիջոց սուլթանի հրամանով աքսորվեց **Երուսաղեմ**: Երկու դեպքում էլ ենթատեքստը քաղաքական էր և կարելի է տալ պատմագիտական նույն գնահատական:

Այսպիսով, «Հայկական հարցին» վերաբերող Բեռլինի վեհաժողովի «**թղթե շերեփի**» արժեք ունեցող որոշումները կարելի է դիտել որպես էական շրջադարձ հայ քաղաքական մտքի հոլովույթում, ինչը որ ավելի սուր և ընդգծված կերպով կարելի է տեսնել հայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր դեմքերի գրական, քաղաքական ու հրապարակախոսական գործերում, և այդ քննարկումների ամենաթեժ խոհանոցը համարվում էր «Մշակ» թերթն իր պատկառազդու թղթակիցներով: «Մշակ»-ին աշխատակցել են նաև Ծերենցը (Հովսեփ Շիշմանյանը), Եղիա Տեմիրճիպաշյանը, Արփիար Արփիարյանը (Հայկակ) և ուրիշներ: «Բեռլինյան» հիասթափությունը էական կռվան ու խթան պիտի լիներ (հանդիսանար) սեփական ուժին ապավինելու գա-

ղափարին ու մարտավարությանը: Լեոյի տված գնահատականով՝ Գր. Արծրունին իր հռչակավոր «Մշակ»-ով հանդիսացել է 1880-ական թվականների **հայ քաղաքական շարժման** գլխավոր ղեկավարը, որ առաջին անգամ նա էր հրապարակ բերել **Թուրքահայոց հարցը** և պահանջել, որ այն լուծվի **ապստամբության** ճանապարհով: Բայց և «նա լոկ հրապարակախոս էր, գրչի մարդ»[56]:

Այդ ամենով հանդերձ, XIX դարի վերջին քառորդում հայ հասարակական-քաղաքական մտքի շրջանակներում շարունակվում էր Հայաստանի ազատագրության և անկախ պետականության վերականգնման ուղիների ու միջոցների շուրջ փնտրտուքը, միմյանց միջև ընթանում էին տարակարծություններ, բանակռիվներ՝ ընդհուպ մինչև անհաշտ դիմակայություններ:

XIX դարի 70–80-ական թվականների հայ հասարակական-քաղաքական մտքի երկու վառ դեմքերի՝ Գր. Արծրունու և Ռաֆֆու սոցիալ-դասակարգային դիրքորոշումների ու մոտեցումների քննության տեսակետից հայացքների որոշակի տարանջատում է եղել «**բուրժուա**» որակվող Արծրունու և «**դեմոկրատ**» Ռաֆֆու միջև: Համենայն դեպս, խնդիրը այդպես է ներկայացվել խորհրդահայ պատմագրության մեջ: Անշուշտ, նրանց միջև առկա է եղել հարաբերությունների որոշ լարվածություն, որի հիման վրա էլ 1884 թ. սկզբներին Ռաֆֆին անգամ մտադրություն է ունեցել հեռանալ «Մշակ»-ից և իր խմբագրությամբ մի նոր ամսագիր հրատարակել[57]: Խորհրդահայ հայրենասեր պատմաբան Ռաֆիկ Հովհաննիսյանի դիտարկմամբ՝ Ռաֆֆու և Արծրունու հարաբերությունների սառեցման պատճառներից մեկն էլ վերջինիս ընդգծված ռուսամետ քաղաքական դիրքորոշումն էր, որով Արծրունին փորձում էր արևմտահայ ժողովրդի ազատագրումը կապել ամենից առաջ ցարիզմի նվաճողական քաղաքականության հետ[58]: Ինչևէ, խորհրդահայ պատմագրության մեջ ավելի շատ դա արվել է «բուրժուա» Գր. Արծրունուն նսեմացնելու և «դեմոկրատ» Ռաֆֆուն կողմնա-

---

[56] **Լեո**, *Անցյալից*, էջ 46:
[57] **Ռաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 10, էջ 603 և 608:
[58] **Հովհաննիսյան Ռ.Փ.**, *հշվ. աշխ.*, Եր., 1965, էջ 273:

կալ կերպով հակադրելով առաջինին»[59]: Սակայն, իբրև անկողմնակալ ու հավասարակշիռ գնահատական, արձանագրենք, որ արդի հայ պատմագրությունը հաղթահարել է խորհրդային պատմագրության կուսակցական-դասակարգային դիրքերից նման միակողմանի մեկնաբանությունը ու գնահատականը:

Այնուամենայնիվ, պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելով, կարելի է ասել, որ այնպես, ինչպես գաղափարական որոշ տարակարծությունների հիման վրա տեղի ունեցավ Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանցի իրարից որոշ հեռացումը, գրեթե նույն հողի վրա էլ նման փոքր-ինչ հեռացում տեղի ունեցավ ազատական մտքի գաղափարակիր Գր. Արծրունու և «Մշակ» թերթին «Մելիքզադե» մականվամբ աշխատակցած, հայ մեծանուն վիպասան Ռաֆֆու միջև:

Գր. Արծրունու «Մշակը» շուրջ երկու տասնամյակ դարձավ հայ ազգային-ազատական ու քաղաքական մտքի ու ազատական գաղափարաբանության հարուստ շտեմարաններից մեկը: Նրա էջերում արծարծվում էին մեզ առավել հետաքրքրող ազգի, լեզվի, հայրենիքի և կորուսյալ պետականության վերականգման գաղափարները: Գր. Արծրունին ևս, շարունակելով աբովյանական ավանդները, մեծապես կարևորում էր ազգային ամենահզոր զենքի՝ հայոց լեզվի ուսուցման նշանակությունը, և այդ հողի վրա սուր քննադատում էր ապազգային այն շրջանակներին, որոնք «մայրենի լեզվի ուսուցումը համարում էին **աննպատակ ազգասիրություն** (ընդգծ. մերն է – Ա.Հ.)[60]: Այդ իմաստով հարկ է նշել, որ անգամ մեր ժամանակներում մեզանում տակավին լիովին չի հաղթահարվել մայրենիի, հայոց պատմության, ազգային մշակույթի և այլ համազգային նշանակության արժեքների հանդեպ տեղ-տեղ հանդիպող ոչ պետական մոտեցումը: «Մշակ»-ն ընդգծում էր, որ ազգի պետական ինքնակազմակերպման հիմքը ամենից առաջ հայրենիքն է: «Թող հայերը իմանան,- գրում էր «Մշակ»-ին թղթակցած հոդվածագիր, հետագայում (1884 թ.) «Նոր Դար»-ի խմբագիր Սպ. Սպանդարյանը,- որ ամենից առաջ ազգն իր ոտքի տակ հող պիտի ունե-

---

[59] *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 1, էջ 381:
[60] ՊԲՀ, Հրապարակումներ, Եր., 1966, թիվ 2 (33), էջ 131:

նա»[61]: Այլ կերպ ասած, առավել կարևորվում էր իրական, նյութական **Հայրենիքի** գաղափարը, որին հնարավոր էր հասնել առաջին հերթին սեփական ազատագրական պայքարի ու զոհողությունների գնով:

Հայտնի է նաև, որ 1880-ական թթ ազգային ինքնագիտակցության աճին մեծ խթան հաղորդեցին Մ. Խրիմյանի «Արծուի Վասպուրականի», Գ. Սրվանձտյանի «Արծուիկ Տարոնոյ» և արևմտահայ մյուս պարբերականները: ՀՅԴ ականավոր գաղափարախոս ու գործիչ, երբեմնի հայդուկապետ Ռուբենը (Ռ. Տեր-Մինասյան) Մ. Խրիմյանին իրավամբ դասում է հայ ազգային-ազատագրական գաղափարների տարածման նախահայրերի թվին[62]:

Հարկ է ընդգծել, որ նշված շրջափուլում «Մշակը», իր հասարակական-քաղաքական հնչեղությամբ ու լայն ժողովրդայնությամբ, ամենից առաջ պարտական էր փայաջուկցի մեծ վարպետի՝ Ռաֆֆու անզուգական գրչին, նրա հայրենանվեր պատմահայրենասիրական վեպերին ու հրապարակումներին: Նա իր պատմավիպասանական հայրենաբաղձ գործերով գրական-գեղարվեստականի կողքին միաժամանակ ներկայանում է որպես հայ քաղաքական ազատագրության և անկախության գաղափարաբան: Գր. Արծրունուց ավելի ազգային ուղղվածություն (նկարագիր) ունեցող, հայ ազատագրական գաղափարի «անզուգական կախարդը»՝ Ռաֆֆին, երազում էր «հայոց գոյության խորհուրդ» **Մասիսի** գլխին տեսնել Հայոց պետական դրոշը: Հիշեցնենք, որ նույն կերպ Ռ. Պատկանյանն էլ հայրենի քաղաք **Կարինի** ամրոցին էր ցանկանում տեսնել հայոց պետականությունը խորհրդանշող դրոշը: Ինչպես Պատկանյանը, նույնպես և Ռաֆֆին, մինչև իրենց կյանքի վերջը հավատարիմ մնացին ազատագրական պայքարի ու պետականության վերականգնման իդեալի իրագործմանը: ՀՅԴ գործիչ Մ. Շաթիրյանը (ծածկանունը՝ «Տարագիր»), ընդհանրական դատողություններ անելով հայրենիքի ազատության և անկախության մասին, նշում էր, որ հայրենիքի **ազատագրությունն** ու **անկախությունը** մեկ միասնական ամ-

---

[61] «Մշակ», 1876, թիվ 25:

[62] Տե՛ս **Ռուբէն,** *Հայ յեղափոխականի մը յիշատակներ,* հ. Բ, Լոս Անճելըս, 1952, էջ 267:

բողջություն են, այն է՝ «Ազատագրուելու գաղափարը մարմնաւորումն է անկախութեան գաղափարի մէջ»[63]:

Ազգային-ազատագրական գաղափարներով տոգորված Րաֆֆու, նաև Պատկանյանի և մյուսների նման գրական-քաղաքական դեմքերը հայրենիքի ազատագրման ամենահուսալի ոտին տեսնում էին զինված պայքարի մեջ: Րաֆֆին առաջիններից էր, որ զինական պայքարի գաղափարը ծրագրային հարթության վրա տեղափոխեց: Նա, առանձնապես մեծ պատրանքներ չունենալով խոշոր տերությունների անկեղծ օգնության հետ, Հայաստանի ազատագրության միակ հուսալի ու զորավոր ոտին, նախորդ հայ այլ մտածողների պես, տեսնում էր ամենից առաջ սեփական ուժերին ու կարողություններին ապավինելու մեջ: Ահավասիկ այդ գաղափարներն էր նա արծարծում Մելիքզադե գրական ծածկանունով իր «Ջալալէդդին» վիպակում, «Խենթը» և «Կայծեր» վեպերում, ճանապարհորդական բնույթի ոտեգրություններում, «Մշակ»-ի իր թղթակցություններում: «Ազատություն տրվում է այն ազգերին,- գրում էր նա,– որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց **արյունի**, առանց **զոհերի** փրկություն չի լինում»[64]: Զինված պայքարի կողմնակից Րաֆֆին իր հերոսներից մեկի բերանով ասում էր. «ո՛վ հայրեր, ո՛վ պապեր ... Եթե դուք այս վանքերի տեղը բերդեր շինեիք, եթե դուք սուրբ խաչերի և անոթների փոխարեն զենքեր գնեիք, եթե դուք այս անուշահոտության տեղ, որ խնկարկում են մեր տաճարներում, վառոդ ծխեիք, այն ժամ մեր երկիրը բախտավոր կլիներ»[65]: Պրոֆ. Լեոն նույնպես ընդգծում և վերահաստատում է «Խենթ»-ի և «Կայծերի»-ի հեղինակի միտքը, «թէ առանց զէնքի եւ արիւնահեղութեան ազատութիւն չի լինում»[66]: Եվ այդ մասին նա բարձրաձայնում էր դեռ Բեռլինի վեհաժողովից առաջ լույս տեսած «Ջալալէդդին» ծրագրային վեպում: Այդ գաղափարները նա զարգացրեց «Խենթը» և «Կայծեր» վեպերում, որոնց հերոսները՝ Վարդանը, Ասլանը, Կարոն և ուրիշներ,

---

[63] **Տարագիր (Մարտին Շաթիրյան)**, *Անկախութեան գաղափարը Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ* («Հայրենիք», Բոստոն, 1932, թիվ 11, էջ 90):

[64] «Մշակ», Թիֆլիս, 1872, թիվ 22, նաև՝ **Րաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 9, էջ 311:

[65] **Րաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 3, Եր., 1962, էջ 56–57:

[66] **Լէօ**, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը*, հ. 1, էջ 124:

հայդուկային պայքարի դրոշակակիրներն էին, որոնց հեռապատկերը, երազանքը «Ավետյաց երկրի» ազատագրումն էր: Նա առաջ էր քաշում Արևմտյան Հայաստանի ազատագրությունը արյան գնով՝ սրով ու զենքի ուժով ձեռք բերելու համարձակ ծրագիր: Ռաֆֆու ստեղծագործությունների գաղափարական առաջնային հիմքերից էր ազատագրության ու անկախության հասնելու ճանապարհին ամենից առաջ **Հայրենիքը** ճանաչելու, սիրելու ու նվիրվելու գիտակցության արմատավորումը: Մեզանում նա նաև առաջին վիպասանն էր, որ վեր հանեց հայրենիքի ազատության համար պայքարող հայ կնոջ կերպարը[67]: Լեոյի պատկերմամբ, եթե Աբովյանի «Վերք Հայաստանի» գործը ծրագիր չէր, այլ իրական հերոս Աղասու պատմությունը, մինչդեռ Ռաֆֆու արարածը ազատագրական պայքարի ծրագիր էր՝ «Ջալալէդդին», «Խենթը» և «Կայծեր» վեպերը ծրագրային երկեր էին[68]:

Հայրենիքի ազատագրման ու պետականության վերականգնման գաղափարների արծարծման տեսակետից արևմտահայ իրականության մեջ իր քննական ու քննադատական ինքնատիպ մոտեցումներով առանձնանում է ականավոր գաղափարաբան ու դարձյալ պատմավիպասան **Ծերենցը** (**Հովսեփ Շիշմանյան**) (1822–1888 թթ.): Նրա «Թորոս Լևոն», «Երկունք Թ դարու», «Թեոդորոս Ռշտունին» և մյուս պատմավեպերի ստեղծման շարժառիթը եղել է հայ միջնադարյան թագավորությունների (Բագրատունի, Կիլիկյան) օրինակով հայ հանրության մեջ զարգացնել ազգային ինքնագիտակցությունը և արմատավորել պետականության վերականգնման գաղափարը: Մասնավորապես, VII դարի հայ նշանավոր քաղաքական գործիչ Թ. Ռշտունու գեղարվեստական մարմնավորմանն է նվիրված Ծերենցի համանուն «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպը: Ինչպես արդեն ակնարկվել է, մեր անհաջողությունների պատճառը նա համարում էր հայ նախարարների անմիաբանությունը: Իբրև պատմության դառը դաս, նա առաջ է տանում այն միտքը, որ հայկական պետականությունների վերացման գործում մեղքի բաժին ունենք նաև մենք՝ հայերս: Ծերենցը հայ ժողովրդի անկախության

---

[67] Տե՛ս **Ռաֆֆի**, *Երկերի ժողովածու*, «Հայ կինը» և «Հայ երիտասարդությունը», հ. 9, Եր., 1958, էջ 325–449:

[68] **Լեո**, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւն*, հ. 1, էջ 125:

իրագործման համար, իբրև եզրահանգում, ներկայացնում էր երկու նախապայման՝ «ժողովրդյան միաբանական ոգի և ուսումնարան»[69]:

Ռաֆֆու, Ծերենցի, հետագայում նաև Դ. Վարուժանի ստեղծագործություններում մատնանշվում էր նաև քրիստոնեության հանդուրժող կրոնի ու նրա բարոյականության խաղացած ոչ այնքան նպաստաբեր դերը հայ ազատագրական պայքարին ու պետականության գաղափարներին զորավիգ լինելու շուրջ: Դրա համար էլ մեր գրական անդաստանում տեղ է գտել ու ժամանակ առ ժամանակ տուրք է տրվել նաև պայքարի ոգեկոչող հայ հին աստվածներին, հեթանոսական շարժմանն ու երգերին:

. Այս և այլ առումներով, կարծում ենք, որ մեզանում տակավին ոչ բավարար ուսումնասիրված ու գնահատված Ռ. Պատկանյանի ստեղծագործությունների ազատաբաղձ ու պետականամետ գաղափարները, Ռաֆֆու, Ծերենցի և մյուսների պատմավեպերի քաղաքական-գործնական ու հոգևոր նպատակը հայ իրականության մեջ ազգային **ինքնագիտակցության** ու **ազգային-պետական** տեսլականի ձևավորման և ինքնիշխան **պետականության վերականգնման** իդեալի իրագործմանը հասնելն էր:

Տեղ տալով հայացքներով սոցիալ-դեմոկրատ «սպեցիֆիկ» Դավիթ Անանունը նույնաբնույթ մտքերին, հարկ է արձանագրել, որ ռուսահայ հասարակական մտքի զարգացմանը նվիրված նրա եռահատոր աշխատության 1-ին հատորում մի ամբողջ (6-րդ) գլուխ է նվիրել արևելահայ հասարակական մտքի զարգացման ելևէջներին: Սոցիալիստ Դ. Անանունը խոսում է ոչ այնքան պետականության վերականգնման գաղափարի, որքան, իբրև դրա նախահիմք, **«Հայության հավաքման»** և ազգակազմավորման խնդիրների մասին: Եվ այդ գործում նա առավել ընդգծում է XIX դարի գրական ու հրապարակախոսական ականավոր դեմքեր Խ. Աբովյանի, Ռ. Պատկանյանի, Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Գր. Արծրունու ունեցած մեծ դերակատարությունը[70]:

---

[69] **Ծերենց,** *Երկեր,* Եր., 1957, էջ 638:

[70] Տե՛ս **Անանուն Դ.,** *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870),* հ. 1, էջ 335–412:

Այսպիսով, XIX դարի 70–80-ական թվականներին մի կողմից՝ հայ գրական և հասարակական-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչներ Ռ. Պատկանյանի, Գր. Արծրունու, Ռաֆֆու, Ղ. Ալիշանի, Մ. Խրիմյանի, Ծերենցի և մյուսների ստեղծագործություններում ու հրապարակախոսական երկերում առաջ քաշված քաղաքական-ազատագրական գաղափարները, իսկ մյուս կողմից՝ Հայկական հարցի միջազգային ատյաններում արծարծումները գաղափարական-քաղաքական պարարտ հող պիտի ստեղծեին հայ ազգային քաղաքական կուսակցությունների ձևավորման համար:

Մեր ժամանակների ճանաչված պատմաբան ու խմբագիր Գ. Խուդինյանի պատկերմամբ, հայ քաղաքական կուսակցությունների առաջացման նախաշեմին, ի մասնավորի Ռաֆֆին, դարձավ այն ներկայացուցիչը, ով ի մի բերեց նախընթաց հինգ-վեց տասնամյակների հայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչներ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ստ. Նազարյանցի, Գր. Արծրունու, նաև արևմտահայ հեղինակներ Ղ. Ալիշանի, Մ. Խրիմյանի, Ծերենցի և մյուսների համահավաք գաղափարներն ու հանճարեղ մտքերը, բանաձևելով **«ազգի, հայրենիքի և պետության միասնականության և անբաժանելիության գաղափարը»**[71]: Իսկ դարավերջին նոր իրողությունների պայմաններում հրապարակ իջած հայ ազգային քաղաքական կուսակցությունները կոչված էին գաղափարապես սնվել իրենց նախորդ հայ հասարակական-քաղաքական մտքի շտեմարանից (գանձարանից) և նոր որակ ու բովանդակություն հաղորդելու ազգային-ազատագրական շարժումներին ու պայքարին՝ վերջնանպատակ դնելով հասնելու ազգային ինքնորոշմանը, այն է՝ դարերով կորսված պետականության վերականգնմանը:

---

[71] **Խուդինյան Գ.**, *Հ.Յ. Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թ. վերջերը)*, Եր., 2006, էջ 71 և 114:

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

# ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻԲՐԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐ

## (XIX դարի վերջին քառորդ – XX դարի սկզբներ)

### *1. Նախադրյալները*

Հայրենիքի ազատագրության և պետականության վերականգնման գաղափարաբանությունը **նոր որակ** է ստանում XIX դարի 80-ական թվականների կեսերից, երբ քաղաքական հրապարակ են իջնում հայ ազգային կուսակցությունները: Նկատել տանք, որ նախորդ տասնամյակներում հայ հասարակական հոսանքների հրապարակային արծարծումները ազատության, ազգային ինքնորոշման, պետականության և այլ գաղափարների շուրջ 1880-ականների կեսերից պիտի ուղենիշ դառնային քաղաքական ասպարեզ մտնող հայ ազգային ավանդական երեք կուսակցությունների համար: Այդ շրջափուլում նրանց համար ամենից առաջ սևեռուն խնդիր դարձավ Արևմտյան Հայաստանի՝ «**Ավետյաց երկրի**» ազատագրությունը, քանզի արևմտահայության կացությունը թուրքական բիրտ վարչակարգի, քրդական բռնություններ-ի ու անիրավությունների պայմաններում շատ ավելի ծանր էր ու հոլի կործանարար հետևանքներով: Հենց արևմտահայության ազատագրության զորավոր հիմքի վրա էլ մեկ հնգամյակում ձևավորվեցին հայ ազգային ավանդական երեք՝ Արմենական, Հնչակյան և ՀՅ. Դաշնակցություն կուսակցությունները: Անշուշտ, նկատենք, որ հայ ազգային քաղաքական կուսակցությունների առաջացման համար, ազատագրական շարժման ու պայքարի գերխնդրի կողքին, եղել են նաև սոցիալ-տնտեսական նախադրյալներ: Քաղաքական կուսակցությունների ասպարեզ իջնելն ինքնին ենթադրում էր նախորդ՝ **խոսքի**, մտքի ու գաղա-

փարների տարածման շրջանից անխոսաափելիորեն անցում կատարել դեպի **գործի** շրջան: «Ամեն հանրային շարժում,- գրում է անվանի գրող և քաղաքական գործիչ Լ. Շանթը,- կը սկսի գաղափարով ու քարոզչութեամբ, բայց խօսքի շրջանին անխոսաափելի կերպով կը յաջորդէ գործի շրջան»[1]:

Հայտնի է, որ մինչ հայ ազգային կուսակցությունների հանդես գալը, դրանց նախորդել էին 1870–80-ական թթ. ազատագրական-հայրենասիրական խմբակներն ու կազմակերպությունները: Դրանցից, թերևս, ամենակշռելիներն էին 1872 թ. Վանում հիմնված «Միություն ի փրկություն», 1881 թ. Կարինում՝ «**Պաշտպան Հայրենյաց**» գաղտնի հեղափոխական կազմակերպությունները, 1881 թ. «Հայրենասերների միությունը»՝ Մոսկվայում, «Հայասեր-ազգասերը»՝ Երևանում և այլն: Ուշագրավն ու գնահատելին այն էր, որ «Պաշտպան Հայրենյաց»-ը քաղաքական նպատակ էր դրել հասնելու հայոց թագավորության վերականգնմանը: Այդ մասին խոսվում է այն բանից հետո, երբ 1882 թ. թուրքական իշխանությունները բացահայտում են կազմակերպության գոյության փաստը, և նրա 56 անդամներ կանգնում են Էրզրումի դատարանի առաջ, որոնցից 40-ը՝ դատապարտվում տարբեր ժամկետներով (3-15 տարվա) բանտարկության: Դա արևմտահայերի **առաջին քաղաքական դատն** էր Թուրքիայում[2]: Հատկանշական է, որ մի քանի հազարի (2400-ի) հասնող այդ կազմակերպության անդամատոմսերի վրա վիմագրական գաղտնի մեքենայի միջոցով պատկերված (դրոշմված) էին հին և միջնադարյան Հայաստանի թագավորական (Հայկազունի, Արշակունի, Բագրատունի և Ռուբինյան) հարստությունների զինանշանները, իսկ երդման տեքստում խոսվել է **հայկական թագավորության** վերականգնման մասին[3]: Այս ամենը դարձյալ վկայում է հայոց պետականության վերականգնման գաղափարի ժառանգորդական կապի մասին:

---

[1] **Շանթ Լ.**, *Մեր անկախութիւնը*, Եր., 2011, էջ 89:

[2] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 6, Եր., 1981, էջ 144, նաև՝ **Հովհաննիսյան Ռ.Փ.**, *Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը*, (XIX դարի 70–80-ական թթ.), Եր., 1965, էջ 326:

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.Փ.**, *նշվ. աշխ.*, էջ 293–295:

1870–80-ական թվականների հայ հայրենասիրական խմբակների ու կազմակերպությունների մեջ խմորվող քաղաքական գլխավոր միտքը դարձյալ եղել է պետականության վերականգնման գաղափարը: Օրինակ, Երևանի «Հայասեր-ազգասեր» կազմակերպության անդամ, քաղաքային գիմնազիայի հայոց լեզվի ուսուցիչ Բեկնազարյանը, իր մտքերը մի տեսակ երգի վերածելով, աշակերտներին ուսուցանում էր. «Երգեցեք, ուրախացեք և ամրապնդվեցեք ձեր հույսերում՝ շուտով կլինի **հայկական թագավորություն**»[4]: Հայ ազատագրական խմբակների ու խմբերի հանդես գալը ցույց է տալիս, որ մինչ կուսակցությունների հրապարակ իջնելը հայ ազատամարտն աստիճանաբար սկսում է ստանալ կազմակերպական ձև:

Դարեր շարունակ պետականությունը և քաղաքական անկախությունը կորցրած ժողովրդի համար կենսական հիմնահարցը եղել է ինքնապաշտպանությունն ու ազգային ինքնության պահպանումը: Հայ ազգային-քաղաքական գաղափարախոսության մեջ, ինքնապաշտպանությանը զուգահեռ, բնականաբար, նաև պատմական անցյալի ավանդույթի ուժով, գերակա խնդիր է դառնում հայրենի հողի վրա ազգային պետականության ու քաղաքական անկախության վերականգնումը, քանզի ինքնապաշտպանության ամենաապահով ձևը սեփական պետականության գոյությունն է:

Պետք է ընդունել, որ այդ նպատակին հասնելու ազգային-ազատագրական շարժումների կողքին առկա են եղել նաև **սոցիալ-դասակարգային բնույթի** խնդիրներ: Հենց այդ մասին են վկայում դարավերջին ասպարեզ իջած ՍԴ Հնչակյան և ՀՅԴ կուսակցությունները, որոնցում ազգային-քաղաքական ծրագրային հիմնադրույթների կողքին առանձին բաժիններ ու հոդվածներ են հատկացված տնտեսական, սոցիալական և դասակարգային բնույթի խնդիրների հաղթահարման հարցերին: Այսպես, Հնչակյան կուսակցությունը հեռահար նպատակ էր դնում ազատագրված Հայաստանում հասնել սոցիալիստական կարգերի հաղթանակի: Սակայն, պետք է նկատել, որ նրանց պատկերացրած սոցիալիզմը ընդհանուր ոչինչ չուներ բոլշևիկ-լենինյանների սոցիալիզ-

---

[4] **Հովհաննիսյան Ռ.Փ.**, *նշվ. աշխ.*, էջ 241:

մից ու կոմունիզմից, այլ նրանց դավանած սոցիալիզմը պիտի ունենար արևմտաեվրոպական ժողովրդավարական արժեքային համակարգին բնորոշ չափանիշներ:

Նկատի ունենալով արևմտահայության ուսերին ծանրացած Օսմանյան Թուրքիայի բռնավարչակարգի դժնդակ լուծը, հայության հանդեպ վարվող հալածական-ջարդարարական քաղաքականությունը՝ հայ ավանդական երեք կուսակցությունների ծրագրային պահանջներում առաջնայինը (հիմնական շեշտը) դրվում էր Արևմտահայ նահանգներում բարեփոխումների իրագործման վրա, որն, ինչպես արդեն ասվել է, իր միջազգային դիվանագիտական ձևակերպումն էր ստացել 1878 թ. Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրի՝ 16-րդ և ապա Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածներում՝ ստանալով Հայկական հարց անվանումը: Հայ քաղաքական միտքը և նրա կազմակերպական-քաղաքական կառույցը հանդիսացող հայ ազգային կուսակցությունների XIX դարավերջի և XX դարասկզբին կազմակերպած ազատագրական շարժումների ու պայքարի վերջնանպատակը, անշուշտ, պիտի հանդիսանար, վերջին հաշվով, Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրությունն ու անկախ պետականության հասնելը: «Չէինք ուզում,- տեղին նկատում է Լեոն,- որ ռուսական ցարիզմը մեզ կլանե, ուզում էինք ինքնավար լինել, գուցե և անկախ, և դրա համար հարկավոր էր, որ մեր հարցը լիներ միջազգային և նրա լուծողը լիներ Եվրոպան»[5]: Այս խոսքերից անցել է մեկ դար, բայց կրկին արդիական ու մտահոգիչ է հնչում այդ միտքը:

Երկու բռնապետություններում էլ սոցիալ-տնտեսական և ազգային-քաղաքական ճնշում, հալածանք, հետապնդումներն այն աստիճանի էին, զորօրինակ, ժամանակաշրջանի մամուլում, գրականության մեջ, էլ չենք խոսում պաշտոնական և կիսապաշտոնական որոշումներում, գրագրություններում կամ պարզապես պարզ խոսակցությունների ժամանակ արգելված էին «հայ ազգ» (պետք էր ասել՝ հայ ժողովուրդ), «Հայաստան» (պետք էր ասել՝ այսինչ նահանգ կամ վիլայեթ), «ազատություն» և այլ համանման բառերի ու բառակապակցությունների գոր-

---

[5] Լեոն, *Անցյալից*, էջ 251:

ծածությունը, որովհետև դրանց տակ իշխանությունները, դնելով քաղաքական իմաստ, հասկանում էին անջատողականություն (սեպարատիզմ)[6]:

Մի կողմից՝ Հայաստանի ու հայ ժողովրդի իրական կյանքի անմարդկային ծանր պայմանները, իսկ մյուս կողմից՝ այդ հենքի վրա հայ հասարակական միջավայրում խմորված ազատագրական նկրտումները գրական, վիպական, բանաստեղծական, հրապարակախոսական և այլ ժանրերի ձևով, և այդ ամենը, միախառնվելով հայ հասարակական-քաղաքական հավաքական մտքին ու կազմակերպական գործունեությանը, նոր որակ պիտի ստանային, ինչն էլ դարձավ 19-րդ դարավերջին հայ ազգային ավանդական քաղաքական կուսակցությունների ասպարեզ իջնելու օրինաչափ հիմքը: Դրանով, կարելի է ասել իր հաջողություններով, սխալներով ու երբեմն էլ ձախողումներով հանդերձ՝ հայ իրականության մեջ սկսեց մի նոր դարաշրջան՝ քաղաքական կուսակցությունների գործունեության շրջան, որով հայ ազատագրական շարժման ու պայքարին, իսկ վերջնանպատակը հանդիսացող անկախության վերականգնման բաղձանքին նոր որակ ու բովանդակություն պիտի հաղորդվեր:

XIX դարի երկրորդ կեսին Հայաստանի ազատագրության և անկախության հիմնահարցը տեսական-գաղափարական մակարդակից վերաճեց և աստիճանաբար դրվեց իրական, գործնական, քաղաքական, ծրագրավորված հիմքերի վրա, հանձինս արդեն դարավերջերին ասպարեզ իջած հայ ազգային ավանդական քաղաքական երեք կուսակցությունների՝ **Արմենական, Ս Դ Հնչակյան** և **Հ Յ Դաշնակցության**: Դրանց գործունեության սկզբնական փուլում, դեռևս քաղաքական ու անվտանգային զգուշավորության նկատառումներով, կոնկրետ խոսք չէր գնում անկախության հիմնախնդրի ծրագրային ամրագրման մասին: Սակայն դրանց ռազմավարական և մարտավարական նպատակադրումներն ու գործունեությունը նպատակաուղղված էին, ի վերջո, **Հայրենիքի ազատագրման ու անկախության գաղափարի նյութականացմանը:**

---

[6] Տե՛ս «Հովիվ», Թիֆլիս, 1909, թիվ 45:

## *2. Արմենական կուսակցություն*

Հայ իրականության մեջ առաջին անգամ 1885 թ. աշնանը Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում հիմնվեց Արմենական կուսակցությունը (կազմակերպությունը)՝ **Մկրտիչ Ավետիսյանի**[7] (**Թերլեմեզյանի**) նախաձեռնությամբ: Հայտնի է, որ Արմենականների հիմնադիրները գաղափարապես ներազդվել (ներշնչվել) էին Վանի իրենց նախկին սիրելի ուսուցիչ, արևմտահայ նշանավոր հրապարակախոս, սուլթանական իշխանությունների հալածանք-հետապնդումների հետևանքով Ֆրանսիայի Մարսել քաղաքում հայտնված **Մկրտիչ Փորթուգալյանի** և նրա կողմից հրատարակված «**Արմենիա**» թերթում առաջ քաշած գաղափարներից: Գաղափարապես իրենց հոգեհարազատ հենց Մ. Փորթուգալյանի «Արմենիա» թերթի պատվանունով էլ նորահիմն անդրանիկ կուսակցությունը կոչվեց «Արմենական»: Եվ կարելի է ասել, որ Մ. Փորթուգալյանը դարձավ այս կուսակցության գաղափարական կնքահայրը, իսկ «Արմենիա»-ն էլ՝ Արմենական կամ Արմենականների կուսակցության պաշտոնաթերթը: «Արմենիա» լրագրի առաջ քաշած գլխավոր ծրագրային պահանջն էր՝ **ընդհանուր ապստամբության** միջոցով թոթափել օսմանյան լուծը և հռչակել Հայաստանի անկախություն[8]: Հարկ է ընդգծել, որ Արմենական կուսակցության վրա նշանակալի է եղել Մեծն վանեցի Մկրտիչ Խրիմյանի (Հայրիկի) ազդեցությունը: Նա համարվում էր Վանում ազատագրական շարժման ոգին[9]:

Աշխատության նախընթաց գլուխներից մեկում, ինչպես արդեն ակնարկվել է, հայ պատմագրության մեջ վարկած կա, որ իբրև «Արմենիա» թերթի խմբագիր Մ. Փորթուգալյանը խնդրանքով դիմել էր գրող, ազգային գործիչ Ռ. Պատկանյանին, ով հարց ու պատասխանի ձևով պատրաստել էր նորաստեղծ կուսակցության համար մի ծրագրային փաստաթուղթ, որում մատնանշվում էին Հայաստանի ազատագրութ-

---

[7] «Ավետիս»-յանը իբրև հեղափոխական կեղծանուն՝ նա փոխառել էր իր հոր անունը (տե՛ս **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890-էն 1940)*, Եր., 2003, էջ 39):

[8] Տե՛ս «Արմենիա», Մարսէյլ, 1886, 16 հունիսի:

[9] Տե՛ս՝ **Հովհաննիսյան Ռ.Փ.**, *նշվ. աշխ.*, էջ 217:

յան հասնելու միջոցները և ուղիները[10]: Եվ Ռ. Պատկանյանը կատարում է այդ խնդրանքը և, 1889 թ. գարնանը Մ. Փորթուգալյանի կողմից մի շարք խմբագրական փոփոխություններից հետո, առանց հեղինակի անունը հիշատակելու, «Արմենիա» թերթի օգոստոսի 9-ի համարում ծանուցում է տրվում, որ առանձին տետրով լույս է տեսնելու «Հայոց հայրենասերների միության» անդրանիկ հրատարակությունը հանդիսացող «**Վարդապետարան Հայաստանի ազատութեան**» վերտառությամբ մի ծրագրային փաստաթուղթ՝ կազմված հարց ու պատասխանի ձևով[11]: «Ծրագրում» Հայաստանի համար առաջ էր քաշվում ոչ թե ինքնավարության, այլ անկախության պահանջ: Եվ այն առաջնային հարցին, թե «Ո՞վ պիտի ազատէ Հայաստանը օտարների ձեռքէն», պատասխանը՝ «Ինքը՝ հայ ազգը պիտի ազատէ Հայաստանը օտարների ձեռքէն»: Հարց՝ «Ի՞նչ հնարքներով»: Պատասխան՝ «Հնարքները զանազան են, նայելով հանգամանքներին՝ երբեմն սեփական զէնքով, երբեմն փողով ու երբեմն օտարի օգնութեամբ» և այլն[12]: Եվ այսպես, 6 էջանոց «Վարդապետարանը» ամբողջությամբ ներծծված է հայրենիքի ազատագրության և անկախ պետականության հասնելու տեսլականով:

Ռ. Պատկանյանի «Վարդապետարանի» առնչությամբ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը նույնպես Մ. Նալբանդյանին նվիրված իր երկհատորանոց կապիտալ մենագրության 2-րդ գրքում, ձեռքի տակ ունենալով Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Ռ. Պատկանյանի դիվանի նյութերը, վկայակոչում է ձեռագիր վիճակում պահված Պատկանյանի 1883 թ. կազմած «Վարդապետարան

---

[10] Տե՛ս **Ներսիսյան Մ.Գ.**, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.*, էջ 233, **Համբարյան Ա.Ս.**, *Հայ հասարակական-քաղաքական միտքը Հայաստանի ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)*, էջ 72–74 և ուրիշներ:

[11] Տե՛ս «Վարդապետարան Հայաստանի Ազատութեան», Մարսէյլ, 1891: Հարկ է փաստել, որ Ե. Չարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարանի «Ռ. Պատկանյանի դիվան» ֆոնդի թիվ 198բ-ում այսհվող «Վարդապետարան»-ի 6 էջանոց ձեռագրը առաջին անգամ հրատարակվել է «Անկախություն» թերթի 1988 թ. նոյեմբերի 2-ի թիվ 43/53 համարում, թերթի խմբագիր Ռ. Համբարձումյանի կողմից (տե՛ս **Պատկանեան Ռափայել**, *Վարդապետարան Հայաստանի ազատութեան*, Եր., 1989:

[12] Տե՛ս «Վարդապետարան», էջ 5:

Հայաստանի ազատության» վերնագրով գրվածքի մասին և տողատակի ծանոթագրությունում շարունակում, որ ավելի ուշ՝ 1889 թ., Արմենական քաղաքական կազմակերպության հիմնադիր Մ. Փորթուգալյանը, առանց հեղինակի անունը հիշատակելու, խմբագրական որոշ փոփոխություններով, առանձին տետրակով լույս է ընծայել Պատկանյանի այդ «Վարդապետարանը»[13]: Ըստ Պատկանյանի «Վարդապետարան»-ի, «Ազատ Հայաստանը լինելու է բոլոր հայերի սեփականությունը, եթե բոլոր հայերը՝ այր ու կին, հարուստ ու աղքատ, ծեր ու պատանի այնպես բաղձան և ձգտեն Հայաստանի ազատության, ինչպես քաղցածը ձգտում է հացին ու ծարավածը՝ ջրին»[14]: Նրանք կարևորություն չէին տալիս այն բանին, թե ազատագրված Հայաստանում հասարակական-քաղաքական ինչպիսի կարգեր կհաստատվեն, ինչը համարում էին ապագայի խնդիր և այլն: Գաղտնապահության նպատակով Արմենական կուսակցության ծրագիրը չի տպագրվել, ունեցել է ընդամենը 7–8 ձեռագիր օրինակ և այլն:

Արմենական կուսակցությունը, առաջինը գործածելով «ազատութիւն կամ մահ» կարգախոսը, իր առջև նպատակ էր դնում ժողովրդին կրթել, լուսավորել, կազմակերպել, համախմբել, զինակրթել, զենք ու դրամ հայթայթել, զինյալ խմբեր հիմնել և ինքնապաշտպանության միջոցով ընդհանուր շարժման պատրաստվել և արտաքին ու ներքին նպաստավոր հանգամանքները օգտագործելով՝ **ապստամբել ու ազատագրել Հայաստանը** (ընդգծ. մերն է՝ Ա.Հ.), իրենց ձևակերպմամբ՝ «յեղափոխութեամբ հայ ժողովրդին համար իրատւնք ձեռք բերել ինքզինք ազատօրէն կառավարելու»[15]:

Այս ամենով հանդերձ, պատմագիտական գրականության մեջ հիմնավորապես չի հաստատվում, թե Ռ. Պատկանյանի «Վարդապետարան» գրքույկը իրապես հանդիսացել է Արմենական կուսակցության

---

[13] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, *Նպաքանյանը և նրա ժամանակը*, գ. 2, էջ 123–124:

[14] Նույն տեղում, էջ 124:

[15] Տե՛ս **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն*, (Յուշեր 1890–1940), Փարիզ, 1947, էջ 125–126:

ծրագիրը[16]: Ինչ վերաբերում է Ռ. Պատկանյանի «Վարդապետարան»-ի պատրաստման ու հրապարակման շարժառիթին, ապա, ինչպես նշում է Արմենական-Ռամկավար կուսակցության պատմության խորագիտակ հուշագիր հեղինակներից Արտակ Դարբինյանը, Մ. Փորթուգալյանը, «Արմենիա» թերթին համընթաց, ձեռնարկել էր հիմնելու նաև «**Հայոց հայրենասերների միություն**» անունով մի մարմին, որը պիտի օգներ (նպաստեր) «թերթին գաղափարներուն տարածումին»[17]: Սակայն «Վարդապետարան»-ի և Արմենական կուսակցության 1894 թ. ծրագրային հիմնադրույթների համեմատությունից դժվար չէ նկատել, որ վերջինիս «Միջոցներ» բաժնում առաջ քաշված շատ դրույթներ, իրենց բովանդակությամբ վերցված, նույնիսկ ընդօրինակված են «Վարդապետարան»-ից[18]:

Ամփոփելով վերը շարադրյալը կարելի է հետևեցնել, որ անկախ այն բանից, թե մեծ հայրենասեր բանաստեղծ ու նաև քաղաքագետ Ռ. Պատկանյանի «Վարդապետարան»-ը Արմենական կուսակցության համար կոնկրետ եղել է քաղաքական ծրագիր, թե ոչ, միևնույն է, նրանում առաջ քաշված գաղափարները, մտքերը, դատողություններն ու առաջարկությունները, անկախ նրա մատուցման ձևից, տեղ են գտել կուսակցության 1894 թ. ծրագրում և հանդիսանում են բարձր հայրենասիրությամբ տոգորված ծրագրային մի փաստաթուղթ, որը միտված էր Հայաստանի ազատագրման և հայոց պետականության վերականգնման տեսլականին:

Հետահայացք ձգելով պատմական անցյալին, կարելի է ուղղակի գաղափարական-ծրագրային ընդհանրության կապ տեսնել XVIII դարում Հովսեփ Էմինի, Շ. Շահամիրյանի առաջ քաշած՝ ազատագրման համար որպես նախադուռ ժողովրդին **կրթելու**, **լուսավորելու**, համախմբելու և այլն, այնուհետև XIX դարում նույնը՝ Խ. Աբովյանի, Մ.

---

[16] Տե՛ս **Ղազարեան Վ.**, *Արմենական կուսակցութիւնը*, Պէյրութ, 1985, էջ 19, **Պողոսյան Հ.**, *Վասպուրականի պատմությունից*, Եր., 1990, էջ 221, «Պայքար», Եր., 1995, թիվ 6–7, էջ 3, **Ավետյան Մ.**, *Հայ ազատագրական ազգային հիսունամյա Հուշամատյան (1870–1920)*, Փարիզ, 1954, էջ 60 և ուրիշներ:

[17] **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն*, էջ 81:

[18] Տե՛ս *Վարդապետարան Հայաստանի ազատութեան*, Մարսէյլ, 1889, էջ 5–6, **Դարբինեան Ա.**, *նշվ. աշխ.*, Եր., 2003, էջ 83–85:

Նալբանդյանի, Ծերենցի, Ռաֆֆու և, վերջապես, Արմենականների կուսակցության կողմից դարձյալ որդեգրած նույնաբնույթ այդ ծրագրային պահանջների միջև: Այս ամենն ինքնին վկայում է Հայաստանի ազատագրության գերխնդրի հարցում հայ հասարակական-քաղաքական մտքի պատմական **իրավահաջորդային** ու **ժառանգորդական** կապի մասին, ինչը **կարմիր թելի պես անցնում է դարերի պատմության հոլովույթով**:

Թող զարմանալի չինչի, որ կրթության դերն ու նշանակությունը մեծապես գիտակցել են թուրք բարձր իշխանությունները: Մասնավորապես, հղում անելով եվրոպացի հումանիստ լրագրող Մալկոլմ Մակքոլի մի ակնարկից, որ «Ոչինչ այնպես չի սարսափեցրել սուլթաններին, ինչպես **կրթության** տարածումը իրենց հպատակ քրիստոնյաների շրջանում, քանզի նրանց հայտնի էր **գիտելիքի** ուժը, որ անխոսափելիորեն պիտի առաջ բերեր դժգոհություն ու թշնամանք իմ նկարագրած այդ դժոխային համակարգից և կառաջացներ անհաղթահարելի ձգտում դեպի ազատություն»[19]:

Հատկանշական է, որ Հայաստանի ազատագրման գործում, քաղաքական կողմնորոշման առումով, Արմենական կուսակցությունը հայրենիքի ազատագրման հույսը մեծապես կապում էր սեփական ուժերին ապավինելու, ժողովրդի պայքարի հետ[20]: Հարկ է նշել, որ «Վարդապետարան»-ի հեղինակը կշտամբանքով է խոսում հայ մեծահարուստների ոչ բավարար մասնակցության մասին հայրենիքի ազատագրության սուրբ գործին, ինչը արդիական է հնչում նույնիսկ մեր ժամանակներում: Ընթերցե՛նք Ռ. Պատկանյանի բանաստեղծական քառյակը.

«Ա՜խ, հայե՛ր, հայե՛ր, թե որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհվեր հոգուտ հայ ազգին,
Առմիշտ կըդադրեր ձեր լացն ու կական
Ու դրախտ երկրավոր կըլլար Հայաստան»[21]:

---

[19] **Макколь Мелькольм,** *Ответственность Англии перед Арменией* (տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году»), М., 1896, с. 175.

[20] Տե՛ս **Հակոբյան Ա.,** *Հայոց պատմություն,* էջ 208:

[21] **Պատկանյան Ռ.,** *Երկեր,* Եր., 1980, էջ 100:

Բայց պետք է փաստել, որ արևմտահայ արմենականների այս կուսակցությունն իր գործունեությամբ, հանդես բերած մարտավարությամբ համազգային լայն մասշտաբներ չընդունեց, նա հիմնականում գործում էր գաղտնի (կոնսպիրատիվ) և չդարձավ ամբակուռ կազմակերպություն, իսկ 1896 թ. հունիսին Վանի հերոսամարտի ողբերգական դեպքերից հետո մարդկային մեծ, հազարի չափ կորուստներ կրեց, որի ժամանակ զոհվեց նաև կուսակցության առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանը, ու խիստ թուլացավ:

Ավելի ուշ երիտթուրքերի 1908 թ. հուլիսյան (10/23) պետական հեղաշրջման «սահմանադրական» պատրանքի ու Միդհատյան սահմանադրության վերակենդանացման շրջանում Ն. Պոզիկյանի, Վ. Մալեզյանի, Վ. Թեքեյանի, Մ. Տամատյանի և մյուսների կողմից 1908 թ. հոկտեմբերին Ալեքսանդրիայում Արմենական, Վերակազմյալ Հնչակյան (իր «Ազգ» թերթով) կուսակցությունների և այլ գաղափարակից կազմակերպությունների միավորումից (միաձուլումից) ձևավորվեց **Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը (ՀՍՌԿ)**[22]: Ս. Ռամկավարների նախընտրած պետականության տեսակը հանրապետությունն էր, իսկ կառավարման ձևը՝ ժողովրդի ձայնատվությամբ ձևավորված պառլամենտական (խորհրդարանական) կառավարումը: Արմենականության գաղափարների շարունակող ռամկավարների համար իրապես գլխավորը ոչ թե **դասակարգային**, այլ **ազգային** շահն էր:

Սակայն երիտթուրքերի սահմանադրական շարժման փուլում Հայ ս. ռամկավարները ևս հավատացին դրան և գաղափարաքաղաքական նահանջ կատարելով Արմենականությունից՝ որդեգրեցին ավելի չափավոր պահանջներ ու զուսպ գործելակերպ Օսմանյան պետության (հայրենիքի) **միասնության**, **անբաժանելության** և ազգերի **համերաշխության** գաղափարներով: Դրա հետ միասին, Ս. ռամկավար կուսակցության ծրագրում խոսվում (շեշտվում) էր օսմանյան բազմազգ ժողովրդավարական հայրենիքում յուրաքանչյուր ազգին տալու ներքին լայն ինքնավարություն (կրոնական, կրթական, լեզվի, մշակույթի, առա-

---

[22] Տե՛ս *Պատմություն ՍԴ Հնչակեան կուսակցության*, հ. Ա, էջ 321, նաև՝ «Ժողովուրդ», Եր., 1919 թ. 11 ապրիլի, **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն*, էջ 120–121:

ջադիմության), ազգերի ազատության և հավասարության, անձի անձեռնմխելիության, օրենքի առաջ բոլորի հավասարության և այլն[23]: Սակայն երկրի ու պետության ղեկը ստանձնած երիտթուրքերի հետագա մի քանի տարիների կառավարման տխուր փորձը ցույց տվեց, որ արևմտաեվրոպական ժողովրդավարական արժեհամակարգի այդ հիմնադրույթները կոչված չէին Թուրքիայում իրականանալու:

Այդուհանդերձ, հաշվի առնելով թուրքահայ ժողովրդի սոցիալ-քաղաքական առումով անորոշ կացությունը, երիտթուրքերի սահմանադրական շարժման վայրիվերումները, իրենց զգուշավոր մարտավարությանը հավատարիմ՝ նրանք առժամանակ ձեռնպահ մնացին անկախ պետականության գաղափարի նյութականացմանը ուղղված գործնական քայլերի դիմելուն:

## *3. ՍԴ Հնչակյան կուսակցություն*

Ի տարբերություն արմենականների, 1887 թ. Շվեյցարիայի Ժնև քաղաքում մի խումբ ձախակողմյան հայացքներ ունեցող ռուսահայ ուսանողներ՝ հիմնադիր-ղեկավար **Ավետիս Նազարբեկյան,** անդամներ՝ Մ. Վարդանյան, Ռ. Խանազատ, Գ. Կաֆյան Գ. Ղարաջյան և այլք, նախաձեռնությամբ ու մասնակցությամբ հիմնված հայ ազգային բնույթի երկրորդ՝ Հնչակ կամ Հնչակյան քաղաքական կուսակցությունը (ծրագիրը կազմվել է 1887 թ., իսկ հրատարակվել՝ 1888 թ. «Հնչակ» պաշտոնաթերթում) գալիս էր շարունակելու Մ. Նալբանդյանի ակոսած ազատագրական-հեղափոխական, նաև այդ ժամանակներում եվրոպայում մոդայիկ դարձած **սոցիալիզմի** (ընկերվարության) գաղափարները: Այս կուսակցության առանձնահատկությունն այն էր, որ իր նոր գաղափարախոսությամբ ու ծրագրային հիմնադրույթներով փորձ էր արվում Թուրքահայաստանի **քաղաքական ազատագրությունը (անկախությունը)** զուգորդել (լծորդել) սոցիալիզմի ու տաճկահայ աշխա-

---

[23] Տե՛ս *Սահմանադրական-Դամկատիար կուսակցության Ծրագիր և կանոնագիր*, Կ. Պոլիս, 1910, էջ 9–13, նաև՝ **Դարբինյան Ա.,** *Հայ ազատագրական շարժման օրերէն*, Եր., 2003, էջ 124–125:

տավորության **սոցիալական ազատագրության** վարդապետության հետ՝ դրան տալով նոր բովանդակություն[24]:

Նրանք, անշուշտ, կրում էին նաև ռուսական նարոդնիկական «սոցիալիզմի» գաղափարական հոսանքների դրոշմը (Ալ. Գերցենի, Մ. Բակունինի, Պ. Լավրովի, Պ. Կրոպատկինի և ուրիշների) և պատահական չէր, որ իրենց նորահիմն թերթն ու ապա կուսակցությունը որդեգրեցին Ալ. Գերցենի «Կոլոկոլ»-ի հայերեն ինչերանգով՝ «Հնչակ» անվանումը: Հնչակյան կուսակցությունը, ընդունելով ռուսական նարոդնիկության գաղափարական ու հատկապես գործելակերպի (մարտավարության) ապստամբական ու ահաբեկչական մեթոդները, նրա համար հոգեհարազատ դարձավ նաև նախկին նարոդնիկ Գ.Վ. Պլեխանովի մինչ այդ նույն Ժնևում 1883 թ. հիմնած ռուսական մարքսիստների առաջին «Աշխատանքի ազատագրություն» խմբակը և անձամբ Պլեխանովի որդեգրած մարքսիզմի ուսմունքն ու գաղափարները[25]: Լեոյի բնորոշմամբ՝ «Հնչակ»-ի ղեկավարները մկրտուած էին նաև պլեխանովյան գաղափարաքաղաքական ավազանի մեջ[26]: Եվ պատահական չէր, որ հայ իրականության մեջ «Հնչակը» հանդիսացավ առաջին մարքսիստական կուսակցությունը և հետագայում՝ XX դարասկզբին, կուսակցությունը սկսեց կոչվել «Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան»: «Հնչակ»-ի պատմագիր Ա. Կիտուրի բնորոշմամբ՝ «Հնչակն է եղել սոցիալիզմի առաջին մունետիկը հայ իրականության մեջ»[27]:

Ս.-Դ. Հնչակի ծրագիրը բաղկացած էր երկու մասից՝ **մոտակա** և **հեռավոր** նպատակներից: Կոաակցության 1891 թ. Լոնդոնում լույս տեսած երկրորդ, մասնակի փոփոխություններով, ծրագրի մոտակա գլխավոր նպատակով խնդիր էր դրվում հեղափոխության (ընդհանուր ապստամբության) ճանապարհով հասնել նախ «Թուրքաց Հայաստանի ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատութեան և **ազգային անկախութեան**»[28]: Այնուհետև դրան պիտի հաջորդեր Պարս-

---

[24] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456 (նախկին՝ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4045), ց. 1, գ. 2, թ. 4–5, գ. 3, թ. 1:
[25] Տե՛ս *История КПСС*, М., 2014, с. 127.
[26] Տե՛ս **Լէօ,** *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը*, հ. 1, էջ 152:
[27] *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887–1962*, հ. Ա, էջ 31:
[28] ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 5, թ. 2:

կահայաստանի և Ռոսահայաստանի ազատագրումը, և այդ երեք հայաստանների միավորումից համայն հայության համար կազմվեր «**Մեծ Հայաստան** դաշնակցային ռամկապետական հանրապետութիւն»[29]: «Հնչակ»-ը հայ ազգային ավանդական կուսակցություններից առաջինը առաջ քաշեց անկախ և միացյալ Հայաստանի ծրագրային պահանջ: Իսկ կուսակցության ծրագրի հեռավոր (հեռահար) նպատակով խնդիր էր դրվում «ազատագրված Միացյալ Հայաստանում հաստատել ընկերվարական-սոցիալիստական կարգեր»[30]: Ընդ որում, այդ միացյալ «դաշնային» պետությունը պետք է լիներ ժողովրդավարական «հանրապետութիւն»[31]: Ի դեպ, նորահիմն ընկերվարական «Հնչակ» կուսակցությունը 1889 թ. անդամակցում է նորաբաց II Սոցիալիստական ինտերնացիոնալին:

Հնչակյանների ծրագրում կարելի է տեսնել հակասություն. մի կողմից՝ նրանց առաջ քաշած հեղափոխական-ապստամբական ճանապարհով համազգային մասշտաբի խնդրի՝ Մեծ Հայաստանի ստեղծման, իսկ մյուս կողմից՝ այդ ազատագրված երկրում սոցիալիզմի, այսինքն, սոցիալ-դասակարգային պայքարի հայեցակարգի առկայության մասին: Բանն այն է, որ սոցիալիզմը չի երաշխավորում դասակարգային համերաշխություն, մշտապես առկա է լինելու ստորին շերտերի պայքարը վերիների դեմ: Հասկանալի է, որ եթե ծրագրվում է ընկերվարական կարգերի հաստատման հեռանկար, ապա վերին, ունևոր խավերն անգամ չէին ցանկանա համատեղ մասնակցություն ցուցաբերել հայրենիքի ազատագրմանը: Բացի այդ, Հայկական հարցի լուծման ճանապարհին ակնկալվում էր եվրոպական **կապիտալիստական** երկրների օգնությունը, սակայն «Հնչակ»-ի ծրագրում սոցիալիստական գաղափարների առկայությունը ենթադրում էր, որ կարող էր բուրժուա-

---

[29] *«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887–1962»*, հ. Ա, էջ 37:

[30] Տե՛ս «Հնչակ», Ժնև, 1888, թիվ 1 (հոկտեմբեր-նոյեմբեր), Ծրագիր Հնչակեան կուսակցութեան, Լոնդոն, 1897, էջ 5–8, Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1456 (նախկին՝ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4045), ց. 1, գ. 5, թ. 69, նաև՝ *«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887–1962»*, էջ 36–37:

[31] **Մելքոնյան Ա.**, *Հայաստանի անկախության գաղափարը հնչակյանների ծրագրային փաստաթղթերում (1888–1915 թթ)* (տե՛ս «ՎԷՄ», Եր., 2022, հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (79), էջ 66):

կան համարվող այդ երկրների կառավարություններին խրտնեցնել ու հետ պահել Հայաստանին անհրաժեշտ աջակցությունից և այլն:

Այդ ամենով հանդերձ, անկախ վերջնարդյունքից ու թողած հետևանքներից, անուրանալի են 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում հնչակյանների կազմակերպած բազմաթիվ ցույցերն ու ապստամբական ելույթները՝ 1890 թ. Գում-Գափուի ցույցը Կ. Պոլսում, 1894 թ. Սասունի ապստամբությունը, 1895 թ. Բաբ-Ալիի ցույցն ու Զեյթունի ապստամբությունը և այլն: Այդ ցույցերի ու անձնազոհ կռիվների վերջնանպատակը, անշուշտ, եղել է ազգի ազատագրությունն ու պետականության վերականգնումը:

Վերստին դառնալով Ս.Դ. Հնչակի ծրագրի քաղաքական-պատմագիտական գնահատականին, փաստենք, որ մեր ժամանակներում, օրինակ, ազատականության գաղափարախոսներից Ժ. Լիպարիտյանը Հնչակյանների որդեգրած ծրագիրը համարում է հայ քաղաքական մտքի երկու ծայրահեղություններ, որպես **ազգայնականության** և **համայնավարության** ծայրեր, որոնք հնարավոր չէ գաղափարական, ծրագրային մեկ ամբողջության մեջ զետեղել[32]: Այդ պատճառով էլ հետագայում հնչակյանների ներսում առաջացած գաղափարական, սոցիալ-քաղաքական (ազգային և դասակարգային) այդ **երկվության** հիման վրա 1896 թ. Լոնդոնում կայացած ընդհանուր ժողովում Հնչակյան կուսակցությունը առաջին անգամ պառակտվեց: 1898 թ. առաջացան փաստորեն երկու հակադիր կուսակցություններ՝ **Վերակազմյալ Հնչակյան** (ղեկ. Արփիար Արփիարյան, Միհրան Տամատյան և ուրիշներ) և **Հին Հնչակյան** (ղեկ. Ավ. Նազարբեկյան, Մ. Նազարբեկ, Ռ. Խան-Ազատ և ուրիշներ): Թուրքահայ իրականությանն ավելի կապված վերակազմյալները, հրաժարվելով «սոցիալիզմ» եզրույթից, ապավինեցին զուտ ազգային-ազատագրական պայքարի գաղափարին: Նրանք եղան Միացյալ Հայրենիքի տեսլականի հետևողական շարունակողները: Վերակազմյալ Հնչակյան կուսակցության քաղաքական վերջնանպատակն էր՝ իրականացնել հայության և ամբողջական Հայրենիքի քաղաքական

---

[32] **Լիպարիտեան Ժ.**, *Յեղափոխութիւն եւ ազատագրում* (տե՛ս «Դրօշակ», ԺԸ տարի, թիւ 6, 8 (յուլիս) 1987, էջ 26):

ազատագրությունը «**Անկախ ու անբաժան**» կարգավիճակով ու հանրապետական-ժողովրդավար կառավարման սկզբունքով[33]:

Իսկ Հին Հնչակյան կուսակցությունը շարունակում էր զուգակցել ազգային և դասակարգային պայքարները: 1890-ական թվականներին արևմտահայ ապստամբական-ինքնապաշտպանական անհաջող ելույթներից հետո նազարբեկյաններն իրենց գործունեության ծանրության կենտրոնը ավելի ու ավելի փոխադրեցին դեպի Անդրկովկաս ու Ռուսաստան՝ փորձելով այնտեղ խմորվող սոցիալ-դասակարգային պայքարի պայմաններում, ինքնակալության տապալմամբ նյութականացնել իրենց ծրագրի սոցիալիզմի հատվածը: Իսկ այդ նույն ժամանակ արփիարիականները՝ վերակազմյալները, փորձեցին Արևմտահայաստանի ազատագրության հույսը մեծապես կապել Մեծ տերությունների միջամտության, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի գործադրման և դրա մի տեսակ շարունակությունը հանդիսացող 1895 թ. Մայիսյան բարենորոգումների՝ Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան նախագիծ-ծրագրի կենսագործման հետ, թեև այդ ծրագրում խոսք չկար Հայաստանի ոչ ինքնավարության և առավել ևս՝ անկախության մասին: Սակայն այն մեծ տերությունների, այդ թվում՝ Ռուսաստանի վարած մեծապետական, շահամոլ ու **երկդիմի** քաղաքականության հետևանքով դարձյալ մտավ քաղաքական փակուղի:

Գաղափարաքաղաքական երկվության, նաև միջանձնային հավակնոտ մրցակցային ներհակությունների հետևանքով XX դարի երկու տասնամյակներին Ս. Դ. Հնչակը մի քանի անգամ ևս ինքնապառակտվեց, մերձեցավ ՌՍԴԲԿ-ին, շատերը մտան նրա շարքերը, բայց հանուն «Տաճկահայ դատի չձուլվեց ՌՍԴԲԿ-ին: Դրանով նա շարունակեց մնալ որպես հայ ավանդական ազգային ճանաչված կուսակցություններից մեկը:

Ինչ վերաբերում է Վերակազմյալ Հնչակյան կուսակցությանը, ապա նրա որդեգրած ազատական-ժողովրդավարական գաղափարները, ինչպես նաև ամբողջական հայրենիքի ազատագրմանը հասնելու

---

[33] Տե՛ս *«Ծրագիր Վերակազմեալ Հնչակեան (ազգայնական ազատական կուսակցութեան)»*, Պոսթրն, 1919, էջ 10:

նպատակը դարձան այն կովանները (հիմքը), որ 1921 թ. հոկտեմբերին Կ. Պոլսում Վերակազմյալ Հնչակյան-Ազատական, իրեն գաղափարակից Հայ Ռամկավար կուսակցությունները և Հայաստանի խորհրդայնացումից հետո դրսաշխարհում հայտնված արևելահայ ազատամիտ ազգային գաղափարներ կրող Հայ Ժողովրդական կուսակցության (ՀԺԿ-ը՝ հիմնված Թիֆլիսում 1917 թ. գարնանը) ղեկավարների հիմնական մասը, ինչպես նաև ազատական ուղղության մի քանի միություններ, այդ թվում՝ Փարիզում հիմնված «Ազատական միություն»-ը, Եգիպտոսի և Կ. Պոլսի ռամկավար մարմինները միավորվեցին ու ձևավորվեց մեկ միասնական, հայ ազգային-ազատական արժեքներ կրող **Ռամկավար Ազատական կուսակցությունը** (ՌԱԿ-ը): ՌԱԿ-ի հիմնադիր անդամները եղան Վ. Թեքեյանը, Ա. Թերզիպաշյանը, Ա. Դարբինյանը, Հ. Երվանդը, Գ. Պոզիկյանը և այլք[34]:

## *4. Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցություն*

XIX դարավերջին հայ, ռուս և համաշխարհային ասպարեզում ընթացող սոցիալ-քաղաքական գործընթացները կյանքի հրամայականով լույս աշխարհ բերեցին ազգային կուռ գաղափարախոսությամբ ու նկարագրով մի նոր ինքնատիպ կուսակցություն՝ **Հայ Հեղափոխական Դաշնակցություն** (**ՀՅԴ**) կուսակցությունը: Չնայած ի սկզբանե օտար այլ ուժերի կողմից սոցիալ-դասակարգային հիմքով ու գաղափարախոսությամբ նրան վերագրվող բազմաթիվ պիտակավորումների՝ բուրժուական, մանրբուրժուական, մարքսիստական, հակահեղափոխական, ազգայնական, անգամ ֆաշիստական և այլն, Դաշնակցությունը միանգամայն նոր տիպի կուսակցություն էր, գրականագետ Ս. Սարինյանի բնորոշմամբ՝ «Դա մեր ազգային ոգու հայտնությունն էր, մեր պատմության փիլիսոփայական գիտակցումը»[35]: Հայ պատմագրության ու

---

[34] Տե՛ս **Յափուճեան Ա.**, *Համառոտ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան*, Գահիրէ, 1977, էջ 48, **Դալլաքյան Կ.**, *ՌԱԿ պատմություն (1921–1940)*, գ. 1, Եր., 1999, էջ 21, **Հակոբյան Ա.**, *Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918–1920 թթ.*, Եր., 2005, էջ 350–351:

[35] **Սարինյան Ս.**, *նշվ. աշխ.*, էջ 65:

հայագիտության անառարկելի հեղինակություն համարվող Նիկ. Ադոնցի բնութագրմամբ՝ «Դաշնակցութեան վարկը եւ հմայքը բացատրվում է իր քաղաքական դրոշակով: Կենդանի պահել **հայ քաղաքական դատը** եւ ամեն ջանք թափել իրագործելու միացեալ Հայաստանի գաղափարը»[36]: Մեր ժամանակների ճանաչված պատմաբան-խմբագրապետ Գ. Խուդինյանը, գնահատելով հայ ազատագրական պայքարի երկնակամարում ասպարեզ իջած ՀՅԴ կուսակցության տեղն ու դերը, արձանագրում է. «ՀՅ. Դաշնակցությունը ձևավորվեց ոչ թե հայ ժողովրդի ազատագրական շարժումը ղեկավարելու հավակնություն ունեցող հերթական կազմակերպություն, այլ հենց այդ պայքարի նպատակների, ձգտումների ու ներուժի ամբողջացմանն ու համախմբմանը ձգտող ուժ»[37]: Մեկ այլ տեղ նրա դիտարկումներից կարդում ենք. «ՀՅԴ-ն ոչ թե հայոց նոր պատմության կողմնակի արդյունք էր կամ պարզ ոտեկիցը, այլ XIX դարի ողջ հայ ազատամարտի և հասարակական-քաղաքական մտքի բարդ հոլովույթի ծնունդը»[38]:

Հայ ազգային քաղաքական կուսակցություններից, թերևս, ամենից ավելի գաղափարական ու հետևողականը ՀՅԴ-ն դարձավ: Նա հայ ազգային-ազատագրական գաղափարախոսությունից որդեգրեց առաջին հերթին զինված պայքարի մարտավարությունը: Սուլթանական բռնապետության դեմ զինված պայքարը ազգային-ազատագրության ոչ միայն հուսալի ուղի էր, այլև ինքնապաշտպանության ազդու միջոց[39]: Ընդ որում, այդ պայքարի մասին արձանագրումն արվեց հենց իր առաջին՝ 1890 թ. սեպտեմբերին հրապարակված «Մանիֆեստ»-կոչից: «Հայը,- կարդում ենք կոչում,- որ դեռ երէկ շլինքը ծռած Եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզվելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրավունքը, իր կայքը, իր պատիւը, ընտանիքը...»[40]: Կասկած չկա, որ «Մանիֆեստ»-ի՝ սեփական

---

[36] **Ադոնց Ն.**, *Հայկական հարց*, հ. Ա, 1996, էջ 175:

[37] **Խուդինյան Գ.**, *Հ.Յ. Դաշնակցության ծնունդը*, էջ 4:

[38] **Խուդինյան Գ., Հակոբյան Ա.**, *Հ.Յ. Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը*, Եր., 2005, էջ 11:

[39] **Խուդինյան Գ.**, *Հ.Հ. Դաշնակցության գաղափարական սկզբունքները* (տ՛ս «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1990, թիվ 6, էջ 5:

[40] **Լազեան Գ.**, *նշվ. աշխ.*, էջ 66:

ուժերին ապավինելու այդ հիմնադրույթով է առաջնորդվել նաև հետագա հայ ազատամարտի նշանավոր դեմքերից Գարեգին Նժդեհը:

ՀՅԴ քաղաքական ասպարեզ իջնելու առումով կարելի է հոգևոր կապ տեսնել XIX դարակեսերի «Մանուկ կամ Երիտասարդ Հայաստան» կազմակերպության և ավելի ուշ՝ 1889 թ. ծմռանը Թիֆլիսում հիմնված նույնանուն «Երիտասարդ Հայաստան» գաղտնի կազմակերպության, պատմությանը նաև հայտնի իր հյուրանոցային երկու՝ «Յուժնիե» և «Սևերնիե» նոմերաներով, իսկ 1890 թ. հուլիս-օգոստոսին նոր ձևավորվող ՀՅԴ և նորաստեղծ կուսակցության առաջին մկրտությունը հանդիսացող «Դեպի երկիր» կարգախոսով՝ հայդուկապետ Ս. Կովունյանի 1890 թ. սեպտեմբերի արշավանքի միջև: Իսկ մինչ այդ Քր. Միքայելյանի ջանքերով Թիֆլիսում գործող նույնանուն «Երիտասարդ Հայաստան» գաղտնի կազմակերպությունը, երբ նրա մասնակից գործիչները և ,առաջին հերթին, ՀՅԴ հիմնադիրներից Քր. Միքայելյանը, Ս. Զավարյանը, Հովհ. Լոռիս-Մելիքյանը, Հովհ. Յուսուֆյանը ռուսական **նարոդնիկությունից** անցում են կատարում դեպի **հայ հեղափոխական-ազատագրական** շարժում[41]: Իսկապես, Կովկասի փոխարքայության մայրաքաղաք հայաշատ Թիֆլիսում բազմաշերտ ու բազմատարր ազգային, մշակութային, նարոդնիկական, հեղափոխական, նույնիսկ մարքսիստական և այլ բնույթի բազում խմբակների միավորումից **1890 թ. ամռան վերջին** ծնունդ առավ **Հայ Հեղափոխական Դաշնակցություն** (**ՀՅԴ**) կուսակցությունը: Նրա գաղափարական ու կազմակերպական հիմնադիր **երրորդությունը** դարձան **Քր. Միքայելյանը, Ս. Զավարյանը**, փոքր ուշ՝ **Ստ. Զորյանը (Ռոստոմ)**[42]:

---

[41] Տե՛ս **Խուդինյան Գ.,** *Հ.Յ. Դաշնակցության ծնունդը,* էջ 53–54: Ի դեպ, ընթացս հիշեցնենք, որ «Մանուկ» կամ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության վերաբերյալ իրեն բնորոշ ոճով, մահվանից առաջ 1932 թ. պատմաբանական աշխատություն է գրել վաստակաշատ պատմաբան Լեոն: Բայց և նկատենք, որ այն հեղինակի «Խոջայական կապիտալ»-ի նման տեղ չի գտել իր երկերի ժողովածուի տասնհատորյակում: Կրկին հիշեցնենք, որ «Մանուկ Հայաստան» աշխատության ձեռագիրը, դոցենտ Հր. Ասմարյանի նախաձեռնությամբ, պատրաստվել, ծանոթագրվել և լույս է տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրի երկու համարներում: (**Լեո,** *«Մանուկ Հայաստան», 1932 թ.,* (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների» (ԲՀԱ), Եր., 1990, թիվ 3(88), էջ 7–67, Եր., 1991, թիվ 3 (91), էջ 4–41):

[42] **Լարանդեան Մ.,** *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն,* հ. 1, էջ 81–82:

Խնդրին իրատեսորեն մոտենալով պետք է նկատել, որ XIX դարավերջին Հայաստանի ու հայ ժողովրդի համար ստեղծված աշխարհաքաղաքական բարդ պայմաններում գործնականում դժվարին, եթե չասենք, գրեթե անհնարին խնդիր էր դառնում դիվանագիտական ճանապարհով ոչ միայն Հայաստանի անկախության ձեռքբերումը, այլև, ինչպես ցույց տվեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի գործադրման պատմությունը, քիչ թե շատ բարենորոգումներ կատարելը: Մնում էր հիմնականում ապավինել սեփական ուժերին և միաժամանակ դրան զուգակցել միջազգային ջանքերը: Կարծում ենք, այդ իրողությունները հաշվի առնելով էր, որ հիմնադիր անդամները, տվյալ պատմափուլում կշռադատելով իրականությունը, իրենց առջև Թուրքահայաստանի անկախության պահանջ չդրեցին, ավելի ստույգ խուսափեցին **անկախություն** բառի գործածությունից, այլ, ինչպես արձանագրված է նրա առաջին ծրագրային փաստաթուղթը հանդիսացող «Մանիֆեստ»-ում, իր հեղափոխական խմբերին կոչ էր անում պայքարի բոլոր ձևերի զուգակցման միջոցով, իբրև հիմնադրույթ, հասնել «**Թիւրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութեան**»[43]:

Տեղեկացնենք նաև, որ Թուրքահայաստանի ազատագրության նպատակի շուրջ 1890–1891 թթ. քննարկումների և ծրագրային ու մարտավարական բնույթի տարաձայնությունների պատճառով ՀՅԴ-ին և «Հնչակ»-ին չհաջողվեց 1890–91 թթ. միավորման շուրջ վերջնական համաձայնության գալ և միացյալ կայուն հեղափոխականների կուսակցություն ստեղծել: 1891 թ. մայիսին հնչակյանները հեռացան ՀՅ Դաշնակցությունից:

1892 թ. ՀՅԴ կուսակցության առաջին Ընդհանուր ժողովում ընդունված և 1894 թ. «Դրօշակ» պաշտոնաթերթում լույս տեսած առաջին ծրագիր-կանոնակարգում, իբրև առաջնային նպատակ, դարձյալ ամրագրված էր հեղափոխության (ապստամբության) միջոցով Տաճկահայաստանի՝ «**Թիւրքաց Հայաստանի մէջ ձեռք բերել քաղաքական եւ**

---

[43] *Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան,* հ. 1, Պոսթըն, 1934, էջ 89, նաև՝ **Լազեան Գ.**, *նշվ. աշխ.*, էջ 67:

**տնտեսական ազատութիւն»**[44]: Հայաստանի ազատագրման համար կուսակցությունը դարձյալ կարևոր տեղ էր տալիս ժողովրդին զինելուն, մարտական խմբերի ստեղծմանը, ինքնապաշտպանությանը և այլն:

Կուսակցության գլխավոր հիմնադրույթը հանդիսացող «Թուրքահայաստանի ...» ձևակերպման մեջ խոսքը վերաբերում էր ոչ միայն արևմտահայերի, այլև այնտեղ ապրող քրդերի, թուրքերի, եզդիների, ասորիների և այլոց ազատագրությանը: Այս առնչությամբ, նկատել տանք, որ ՀՅԴ հիմնադիրները, ըստ ամենայնի, հաշվի էին առել Գր. Արծրունու՝ ժամանակին արած դիտողությունը, որ պետք էր խոսել ոչ թե միայն տաճկահայերի, այլև այնտեղ ապրող մյուս էթնիկ տարրերի ազատագրության մասին:

Դժվար չէ նկատել, որ Դաշնակցության հիմնադիր անդամները հստակ ձևակերպմամբ չէին դնում Հայաստանի **անկախության** պահանջ, այլ հարցի խորագիտակ մասնագետ Գ. Խուդինյանի ձևակերպմամբ՝ «խոհական չափավորությամբ» սոսկ լայն **ինքնավարություն**[45]: Նրանք հաշվի էին առնում Թուրքահայաստանի աշխարհագրական և ցեղագրական պայմանները, հայության ցիրուցան վիճակը, ինչը համեմատության մեջ բացակայում էր բալկանյան երկրների պարագայում: ՀՅԴ պատմության առաջին տարեգրող հեղինակ Միք. Վարանդյանը փաստում է, որ Դաշնակցության ռահվիրաները, իբրև զգաստ իրապաշտներ, հանդես եկան ավելի համեստ, սահմանափակ ծրագրով, քանզի Քրիստափորի ու Զավարյանի նման հեռատես գործիչները լավ կըմբռնեին, «թէ որքան յանդուգն ու ցնորական պիտի երևէր անկախ Հայաստանի պահանջը նման զարհուրելի (նկատի էր առնվում թուրք-քրդական հարևանությամբ միջավայրը՝ Ա.Հ.) պայմաններու մէջ»[46]:

---

[44] Տե՛ս «Դրօշակ», 1894, թիվ 11, ՀԱԱ, ֆ. 1457, (նախկին՝ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4047), ց. 1, գ. 1, թ. 7, նաև՝ **Նավասարդեան Վ.**, *Հայ անկախութեան գաղափարը մերձաստ անցեալի մէջ*, «Հայրենիք», 1924 (փետրվար), թիվ 4, էջ 80, *Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան*, հ. 1, Պոսթըն, 1934, էջ 100, **Գիւլխանդանեան Ա.**, *Հ.Յ. Դաշնակցութեան առաջին ծրագիրը եւ նրա հեղինակները*, Աթէնք, 1987, էջ 16, 55–56: **Տասնապետեան Հ.**, *Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890–1924)*, Աթէնք, «Դրօշակ» տպարան, 1988, էջ 22:

[45] **Խուդինյան Գ.**, *Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Առաջին Ընդհանուր ժողովը*, Եր., 1992, էջ 23:

[46] **Վարանդեան Մ.**, *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն*, հ. 1, էջ 105:

Բայց և դրա հետ միասին՝ ՀՅԴ գործիչ, պատմագիր ու տեսաբան Մ. Վարանդյանը կռահում էր, որ «մեր հին ընկերներու մտքին մէջ (նկատի ուներ առաջին հերթին կուսակցության հիմնադիր Երրորդությանը՝ Ա.Հ.) Տաճկահայաստանի գալիք ազատ, ռամկավարական կարգերը պիտի դառնային **հանգրուան** մը դէպի լիակատար **հայկական անկախութիւն** (ընդգծումը՝ Ա.Հ.)»[47]: Իսկ ՀՅԴ ճանաչված տեսաբան Վ. Նավասարդյանը, մեկնաբանելով ՀՅԴ I ծրագիրը, գտնում էր, որ դրա «քաղաքական ազատություն» հասկացության տակ, առանց վարանելու, կարելի է հասկանալ՝ **ազատ** և **անկախ** Հայաստանի **հասնելու** իմաստ (բովանդակություն)[48]: Ինչ վերաբերում է ՀՅԴ ծրագրի մաս կազմող, արդարության վրա հիմնված ընկերվարական (ընկերային-տնտեսական) պահանջներին, ապա նա, առաջին պլանում ունենալով ազգային-քաղաքական խնդիրները, Հնչակի, առավել ևս հետագայում՝ XX դարասեմին ասպարեզ իջած համառուսաստանյան երևույթ հանդիսացող ՌՍԴԲԿ չափավոր թևի՝ մենշևիկների պես, երբեք չի չարաշահել սոցիալիզմի (ընկերվարության) կանխադրույթը: Ռամկավար գործիչ Ա. Դարբինյանի բնորոշմամբ՝ դաշնակցականների սոցիալիզմը «թղթեղեն, օդային էր»[49]: Իսկ Լեոն նշում էր, որ «Դաշնակցությունը հիմնվել էր ոչ թե սոցիալիզմի համար, այլ թուրքահայերի դատը պաշտպանելու համար»[50]:

XIX դարի 90-ական թվականները, իրավամբ, համարվում է արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ու պայքարի բարձրակետը հանդիսացող տասնամյակ, քանզի դրանց գլխավոր կազմակերպիչն և ուղղորդողն արդեն հրապարակ իջած հայ քաղաքական կուսակցությունների **եռյակն** էր՝ իրենց ռազմավարությամբ և մարտավարությամբ: Նրանք, հայ ազատագրական շարժման ու պայքարի տարբեր ձևերը իրար զուգակցելով հանդերձ, միաժամանակ չէին մոռանում

---

[47] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 105:

[48] **Նավասարդյան Վ.**, *Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ* (տե՛ս «Հայրենիք», 1924 (փետրվար), թիվ 4, էջ 80):

[49] **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն*, 1947, էջ 171:

[50] **Լեո**, *Անցյալից*, էջ 197:

վառ պահել 61-րդ հոդվածի շրջանակներում միջազգային ասպարեզ նետված Հայկական հարցի լուծումը:

Հայտնի է, որ 1894 թ. ամռանը հայ ազատամարտի միջնաբերդը համարվող Սասունի ապստամբությունը և դրան հետևած հայ ազգաբնակչության աղետալի կոտորածները մեծ արձագանք գտան Եվրոպայում ու հիմք հանդիսացան եվրոպական երեք մեծ տերությունների կողմից, Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ, երկրորդ անգամ Հայկական հարցը բարձրացնելու համար: 1894 թ. աշնանը կազմվեց Սասունի դեպքերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով և հանգեց եզրակացության, որ տեղի անմեղ բնակչության հանդեպ կատարվել է եղեռնագործություն: Այդ նյութերի հիման վրա Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ Կ. Պոլսի դեսպանները մշակեցին և **1895 թ. մայիսի 11-ին** Բարձր Դռանը («Եըլդըզ Քյոշք») ներկայացրին Արևմտյան Հայաստանում ռեֆորմների (բարենորոգումների) մի հուշագիր-ծրագիր[51]: Դրա համար էլ այն հայտնի է **Մայիսյան** անունով: Ծրագիրը բաղկացած էր 13 (ԺԳ) գլխից և 39 (ԼԹ) հոդվածներից: Մայիսյան բարենորոգումների ծրագիր-նախագծով Թուրքիան պարտավորվում էր արևմտահայ վեց վիլայեթներում (նահանգներում) Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ոգով անցկացնել վարչական, դատական, ֆինանսական բարեփոխումներ, կանխել ամեն տեսակի կամայականությունները և արևմտահայ ժողովրդին երաշխավորել կյանքի ու գույքի ապահովություն, նահանգներում ռեֆորմների գործադրման վրա հսկող բարձր հանձնաժողովի նշանակում, քաղաքական ամնիստիա, տուժած շրջանների վնասների հատուցում է այլն[52]: Կ. Պոլսի խնդրով շահագրգիռ երեք դեսպաններն իրենց մշակած ծրագրի ու հիշագրի մասին իրազեկ պահեցին Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մատթեոս արք. Իզմիրլյանին:

Թեև մի շարք փոփոխությունների ենթարկելուց հետո, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ռազմաքաղաքական ճնշմամբ, 1895 թ. հոկտեմբերի 8 (20)-ին սուլթան Աբդուլ Համիդ II-ը հաստատեց Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, բայց այն չիրագործեց: Սուլթանական

---

[51] Տե՛ս Լէօ, *Հայոց հարցի վաւերագրեր*, էջ 237:

[52] Տե՛ս նույն տեղում, էջ 201–202, նաև՝ **Հակոբյան Ա.**, *Հայոց պատմություն*, էջ 222–223:

կառավարությունը, օգտվելով եվրոպական տերությունների հակասություններից, նաև տարբեր պատճառաբանություններ բերելով, ոչ միայն պահանջված բարենորոգումները չանցկացրեց, այլ դրան պատասխանեց Կ. Պոլսում և այլուր հայերի զանգվածային նոր կոտորածներով: Որպես պատմական անժխտելի իրողություն՝ հարկ է արձանագրել, որ այս անգամ Թուրքիային իր պաշտպանության տակ առավ Ռուսաստանը: Ի հիմնավորումն ասվածի, հարկ ենք համարում ՀՅԴ պատմագիր Մ. Վարանդյանի ամենահայտնի աշխատությունից կատարել վավերագրերով փաստարկված հետևյալ արձանագրումները: Այսպես, 1895 թ. Մայիսյան բարենորոգումների առնչությամբ Մ. Վարանդյանը, քաղվածքներ անելով բրիտանական **Կապույտ գրքից,** նշում է, որ անգլիական կողմը Պետերբուրգում, դեսպանի մակարդակով ուղղակի և երկար բանակցելով ռուսականի հետ, որպեսզի Բարենորոգումների նախագծով համաձայնության գան տաճկահայ վեց նահանգների վալիները (նահանգապետները) և ռեֆորմների անցկացման գերագույն բարձր Կոմիսարը, Լիբանանի օրինակով, ընտրովի պետությունների գիտությամբ ու հավանությամբ (երաշխավորությամբ), սակայն ռուսները նախնական համաձայնություն տալուց հետո արդեն դրա գործադրման ժամանակ իրենք հանդիպել են ռուսական կողմի, այդ թվում՝ ա. գ. նախարար, իշխան Լոբանով Ռոստովսկու խոչընդոտներին: «Ցարական Ռոսաստանը,- գրում է Մ. Վարանդյանը,- առերևոյթս տուեր էր իր համաձայնութիւնը, բայց տակէն կը դաւէր, կը յորդորէր սուլթանին՝ **չընդունել, ձգձգել, դիմադրել** (ընդգծված է՝ Ա.Հ.)»[53]: Մ. Վարանդյանը նույն ժողովածուից 1895 թ. հունիսի 4-ի ամսաթվով քաղվածք է բերել Անգլիայի դեսպանի և իշխան Լոբանով Ռոստովսկու միջև կայացած զրույցից, որի ժամանակ վերջինս «**շատ բացսիրտ ինձ ըսաւ Ռուսաստանը ոչ մի պարագայի չընդունիր, որ Փոքր Ասիոյ մէջ ստեղծուի շրջան մը, ուր հայերը պիտի ունենան բացառիկ առանձնաշնորհումներ և որը կարող է դառնալ կորիզ հայկական անկախ թագաւորութեան մը (a nucleus of an independent Armenian Kingdom)** (ընդգծու-

[53] Վարանդեան Մ., *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն*, էջ 125:

մը՝ Ա.Հ.)»[54]: Նույն հունիս ամսի 13-ին Ռուսաստանում անգլիական դեսպանը Պետերբուրգից հեռագրում էր Լոնդոն՝ Լոբանովի մի նոր հայտարարության մասին, այն է, որ «Ռուսաստանը սիրով կ'ուզե, որ ռէֆորմները իրագործին սուլթանի բոլոր հպատակներուն տարածքին վրա, բայց չի կարող ընդունիլ, որ **ստեղծի իր սահմաններուն մօտ երկրորդ Բուլղարիա**»[55]: Այստեղ նորույթն այն է, որ Ռուսաստանը պաշտպանել է Բարձր Դռան կողմից ռեֆորմների անվերջ ձգձգման ու խոսանավման այն պահանջը, թե այն պիտի կատարվի ամբողջ կայսրությունում, իսկ դրա համար իբր դեռ ոչ հարմար ժամանակ և ոչ էլ բավարար միջոցներ կան: Այդ համատեքստում հանրահայտ է 1895-1896 թթ. Ռուսաստանի ա. գ. նախարար Ա. Լոբանով Ռոստովսկու՝ «Հայաստանը առանց հայերի» քաղաքական իմաստ ստացած կարգախոսը: Հիշեցնենք, որ այդ նույն ժամանակ Կովկասում գործում էր Լոբանովի տիպի մեկ ուրիշ հայակեր, կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինը, որը կատաղի կերպով հալածում էր արևմտահայ փախստական զանգվածներին, որոնք 1890-ական թվականների համիդյան ջարդերից խույս տալով՝ տասնյակ հազարներով ապաստանում էին Կովկասում:

Այսպիսով, բերված այս և այլ բազում վավերագիր քաղվածները ցույց են տալիս, որ թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանում հայոց պետականության վերականգնմանը, օսմանյան Թուրքիայից ոչ պակաս հակառակորդներից էր նաև Ռուսաստանը: Ահա, թե ինչպիսի ծանր քաղաքական պայմաններում էին գործում հայ քաղաքական կուսակցությունները, այդ թվում՝ դրանց առաջատար ՀՅԴ-ը: Ընդհանուր գնահատականի առումով, եվրոպական տերությունների կողմից առաջադրած 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի գործադրման պարագայում, կարելի է քայլ համարել արևմտահայության անվտանգության և կյանքի պայմանների բարելավման ուղղությամբ: Մայիսյան ծրագիրը փաստում էր արևմտահայ վեց վիլայեթների վարչատարածքային առումով գոյության փաստը, որը հետագայում քաղաքական հիմք պիտի հանդիսանար Հայկական հարցի լուծման ճանապարհին:

---

[54] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ.*, էջ 126:
[55] Նույն տեղում:

* * *

Արդեն XX դարասկզբին, նոր իրադրության ու իրողությունների պայմաններում, պատմաքաղաքական դեպքերն ու իրադարձություններն այնպես դասավորվեցին, որ հայ ազատամարտը հիմնականում ղեկավարող, համազգային տարածք ընդգրկող Դաշնակցություն կուսակցությունը հարկադրված էր փաստորեն պայքարել (կռվել) **երկու ճակատով**. մի կողմից՝ ավանդական ու անխոսափելի դարձած օսմանյան բռնապետության, իսկ մյուս կողմից՝ ռուսական կառավարության վարած փաստորեն հակահայ քաղաքականության պարտադրանքով, ցարական ինքնակալության դեմ: Բավական է հիշեցնել ցարական կառավարության **1903 թ. հունիսի 12-ի** հայ եկեղեցու կալվածքների ու գույքի պետականացման (բռնագրավման) մասին հակահայ օրենքը, դրա հետևանքով ավելի քան 300 արևելահայ դպրոցների փակումը, 1905–1906 թթ. հայ-թաթարական կռիվները և այլն: Սակայն Կովկասյան գործունեության երկրորդ ճակատն ավելի շատ ուներ ոչ այնքան **ազգային-քաղաքական**, որքան **սոցիալ-դասակարգային** (ընկերվարական) բովանդակություն: Եվ այս հենքի և փոփոխված մի շարք հանգամանքների՝ ռուսական առաջին (1905–1907 թթ.), իրանական (1906–1912 թթ.) հեղափոխությունների, Թուրքիայի ընդդիմադիր ուժերի 1907 թ. դեկտեմբերին Փարիզի կոնգրեսում նախապատրաստվող պետական հեղաշրջման, սուլթանական բռնավարչակարգի դեմ զինված պայքարի ոչ բավարար ռեսուրսների և նախկինում ինքնապաշտպանական առանձին կռիվներում ունեցած անհաջողություններով, կուսակցության ներսում ծագած ներքին տարաձայնություններով և այլ հանգամանքներով պայմանավորված, 1907 թ. փետրվար-մայիս ՀՅԴ Վիեննայի 4-րդ Ընդհ. ժողովում բուռն քննարկումների արդյունքում ընդունված կուսակցության 2-րդ ծրագիրն ավելի չափավոր բնույթ ստացավ: Նրանում քաղաքական առումով Հայաստանի երկու՝ թրքահայ և կովկասյան հատվածների համար խոհական չափավորությամբ ամրագրվեց ներքին լայն **ինքնավարության** պլատֆորմ: Մեկը՝ ցարական 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստով Սահմանադրական միապետություն դառնալու փորձ անող Ռուսաստանի կազմում **ինքնավարություն Արևելյան**

**Հայաստանի** համար, իսկ մյուսը՝ երիտթուրքերի հուրիեթի (ազատության) կարգախոսներով 1908 թ. հուլիսի 10 (23)-ի աշխարհախաբ պետական հեղաշրջմամբ վերակենդանացված 1876 թ. Միդհատյան (օսմանյան) սահմանադրությամբ պայմանավորված՝ **ինքնավարություն Թուրքահայաստանի** համար Օսմանյան պետության շրջանակներում: Նշելի է, որ երիտթուրքերի հետ ՀՅԴ-ն համագործակցության գործելակերպի մասին դրականապես է արտահայտվել սպեցիֆիկյան ճանաչված տեսաբան, ազգային նկարագրով սոցիալիստ Դ. Անանունը[56]:

ՀՅ Դաշնակցություն կուսակցության խորագիտակ հետազոտող Հր. Տասնապետյանի դիտարկմամբ՝ երկփեղկված պատմական Հայաստանի տարածքում դաշնային ապակենտրոն ինքնավարության ստեղծման պահանջը տվյալ ժամանակաշրջանի պայմաններում միակ տրամաբանական ու հնարավոր միջոցն էր[57]: 1908 թ. սեպտեմբերի 1-ի շրջաբերականով ՀՅԴ-ն հանդես եկավ Օսմանյան կայսրությունում խորհրդարանական ընտրություններին մասնակցության իր պլատֆորմով, որ ՀՅԴ-ի կողմից կայսրության ամբողջականության ճանաչումը պայմանական բնույթ ունի, այսինքն, քանի դեռ այդ երկիրը կլինի **սահմանադրական-ժողովրդավարական**, ՀՅԴ-ն կգործի տվյալ ամբողջականության շրջանակներում՝ ֆեդերատիվ (դաշնային) հիմունքներով: Այլ խոսքով, ՀՅԴ-ն փոխում է իր պայքարի մարտավարությունը, բայց ոչ նպատակը:

Ի դեպ, նույն կերպ՝ ժամանակի և հանգամանքների հրամայականով, իրենց քաղաքական պահանջները և մարտավարությունը (գործելակերպը) չափավորեցին նաև **ՀՍՌԿ**-ը, ինչպես նաև **Ս.Դ. Հնչակյան** կուսակցությունը: Սակայն դա ամենևին չէր նշանակում, թե նրանք հրաժարվել են արևմտահայության ազատագրման և անկախ պետականության հասնելու իդեալից, այլ նման մոտեցումը պարզապես մարտավարական քայլ էր՝ փորձելով իրենց առջև դրված հիմնանպատակները լուծել քաղաքական պայքարի ավելի օրինական, խաղաղ, պառլամենտական, բարեշրջական գործելակերպով: Բայց և պետք է արձա-

---

[56] Տե՛ս **Հակոբյան Վ.**, *Դավիթ Անանուն*, Եր., 2020, էջ 86:
[57] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 33:

նագրել, որ այն իրեն չարդարացրեց: Կյանքը ցույց տվեց, որ Թուրքիան այն երկիրը չէր, որտեղ հնարավոր կլիներ տաճկահայոց խնդիրը լուծել քաղաքական ու քաղաքակիրթ միջոցներով: Ավելին, հետագայում իշխանության ղեկը ստանձնած իթթիհատականները այն ի չարս օգտագործեցին ընդդեմ հայ ժողովրդի:

Գործնականում, 1890-ական թվականներից տարեցտարի սաստկացող սուլթանական կառավարության հալածական-ջարդարարական քաղաքականության իմաստն ու բովանդակությունն այն էր, որ ոչ միայն խեղդել հայերի մարդավայել ապրելու իրավունքները, այլև կոտորելով, կրոնափոխ անելով, հայրենի հողից արտագաղթեցնելով ու հայաթափ անելով հասնել թուրք պատմաբան Ռ. Սալահի մեկնաբանությամբ՝ հայերի մեջ մեռցնել «**Մեծ Հայաստան**» ստեղծելու գաղափարը[58]:

Այնուամենայնիվ, կարելի է արձանագրել, որ XIX դարի վերջին և XX դարասկզբին հայ ազգային կուսակցությունների ավել կամ պակաս չափով կազմակերպած ու գլխավորած առավելապես արևմտահայ ապստամբական-ազատագրական ելույթները (Կ. Պոլիս, Սասուն-Տարոն, Վան, Էրզրում, Զեյթուն և այլն)՝ ցույցերը, հանարահավաքները, ապստամբական ելույթներ, ինքնապաշտպանական մարտերն ու հայդուկային-ֆիդայական խմբերի գործողությունները, նաև դրսից օգնություն ու աջակցություն ակնկալելու նպատակով՝ տերություններին դիմելու փորձերը և այլն, սոցիալական, տնտեսական, անձի ու գույքի, հավատքի, ազգի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելուց զատ, դրանք իրենց հետնախորքում վերջին հաշվով հետապնդում էին քաղաքական՝ **ազգ-հայրենիքի ազատագրման ու անկախ պետականության վերականգնման գերնպատակը**:

Այսպիսով, XX դարասկզբներին պատմաքաղաքական գործընթացների զարգացումները բավարար նախադրյալներ էին ստեղծել հայոց պետականության գաղափարի աստիճանական հասունացման ու նյութականացման համար, սակայն պայմանավորված այդ ժամանակաշրջանի արտաքին ու ներքին իրադրությամբ ու հանգամանքներով,

---

[58] **Salahi R.S.**, *The Ottoman Armenians*, London, 1987, p. 282.

առաջ քաշվեց ավելի չափավոր ու համեստ ինքնավարության պահանջ և դրա գլխավոր դերակատար քաղաքական ուժը պիտի դառնար ՀՅ. Դաշնակցությունը՝ իր համազգային ապակենտրոն կառույցներով, կուսակցության շարքերի զանգվածայնությամբ, գաղափարական-քաղաքական միասնությամբ, մարտական և մտավոր զորեղ ներուժով:

* * *

Հանրագրամարի բերելով վերը շարադրյալը, կարելի է արձանագրել, որ կուսակցությունների երևան գալով հայ քաղաքական մտքի և ազատագրական շարժման որակապես **նոր փուլի** սկիզբ դրվեց: Նրանք տարբեր մարտավարությամբ սկսեցին կազմակերպել ու ղեկավարել հայ ժողովրդի ազատագրական պայքարը՝ հանուն ազատության, հայրենիքի քաղաքական անկախության վերականգնման ու ժողովրդավարական արժեքային համակարգի հաստատման: Ազգային կուսակցությունների գործունեության ամենաբնորոշ կողմը դարձավ ազգային-քաղաքական ուղղվածությունը, իսկ սոցիալ-տնտեսական (ընկերային) կողմին տրվեց ածանցյալ նշանակություն:

Հատկանշական է, որ Հայաստանի ազատագրման ու անկախության վերականգնման ճանապարհին հայոց դարավոր (սկսած միջնադարում անկախ պետականության կորստից ի վեր) գաղափարաքաղաքական ակունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ քաղաքական միտքը ընթացել է այն նույն հասարակական-քաղաքական ու հոգևոր-մշակութային զարգացումների օրինաչափություններով, ինչպիսին որ իր անկախ պետականությունը կորցրած մյուս այլ երկրներն ու ժողովուրդները: Իսկ այդ ամենը ցույց է տալիս, որ Հայոց պատմությունը հանդիսանում է համաշխարհային պատմության անօտարելի օրգանական մասը: Արդեն XX դարում առաջին երկու տասնամյակների պատմա-քաղաքական զարգացումները, դրան հավելած Առաջին աշխարհամարտը՝ իբրև դեպքերի արագացուցիչ, գործնականում դրվեց Հայաստանի անկախության հիմքը, և սկսվեց Հայոց պետականությունների կերտման գործընթացը:

Ընդհանրական գնահատական տալով XIX դարի վերջերին հրապարակ իջած հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ և իբրև

նորույթ հայ քաղաքական մշակույթում՝ կարելի է արձանագրել, որ նրանք նոր որակ հաղորդեցին երկատված Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության ու պետականության վերականգնման հիմնախնդրին: Հայ ազգային ավանդական կուսակցությունները ծնունդ առան դարավոր ազգային-ազատագրական շարժման ու պայքարի գաղափարախոսության հետնախորքի վրա, և նրանցից յուրաքանչյուրը, իրեն բնորոշ մարտավարությամբ՝ մեկն ինքնապաշտպանության, մյուսն՝ ընդհանուր ապստամբության, իսկ երրորդն էլ մասնակի ապստամբության գործելակերպերով սկսեցին ղեկավարել և ուղղություն տալ հայ ազատամարտին հանուն վերջին հաշվով անկախության, պետականության ու ժողովրդավարության: Քաղաքական կուսակցությունների ձևավորմամբ հայ հասարակական-քաղաքական միտքը աղերսաթղթերի և խնդրագրերի մարտավարությունից ավելի ու ավելի անցում կատարեց գործնական ծրագրված ու համակարգված պայքարի:

Միջանկյալ հիշեցնենք, որ եթե մինչև կուսակցությունների ձևավորումը հայ հասարակական-քաղաքական կյանքում առանձնապես նշանակալի էին հայ առաքելական եկեղեցու ու, հատկապես, անհատ աշխարհիկ գործիչների դերը, ապա կյանքի հրամայականով, քաղաքական մտքի հասունացմամբ, կուսակցությունների հանդես գալով հայ քաղաքական կյանքի ղեկը, ազատագրական պայքարի կազմակերպչի ու առաջնորդի առաքելությունը ծրագրավորված հիմնադրույթներով գերազանցապես դրվեցին ազգային ավանդական կուսակցությունների ուսերին՝ չանտեսելով նաև այդ ճանապարհին նրանց կողմից անխուսափելիորեն թույլ տրված սխալներն ու ձախողումները: Ինչ վերաբերում է հայ իրականության մեջ XX դարասկզբին հանդես եկած զուտ սոցիալ-դասակարգային բնույթի ու բովանդակության ծրագրային խնդիրներին նախապատվություն տրվող կուսակցություններին, ապա այդպիսիք էին հիմնականում ռուսական նույնաբնույթ կուսակցությունների կարգախոսով հանդես եկող հայ սոցիալ-դեմոկրատ՝ մենշևիկ ու բոլշևիկ, սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ), վերջինիս նմանակ՝ ՍԴԲՀԿ (սպեցիֆիկ) և այլն, որոնց համար առաջնայինը սոցիալ-տնտեսական ու դասակարգային բնույթի պահանջներն էին, իսկ ազգային-քաղաքականին տրվում էր ածանցյալ ու երկրորդական նշանակություն:

Քաղաքական-ծրագրային պահանջների տեսակետից՝ XIX դարի վերջին քառորդին սկիզբ առած հայ ազգային ավանդական երեք կուսակցությունների գաղափարաքաղաքական ու ծրագրային բաղադրիչների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ երեք կուսակցություններից **քաղաքական ռոմանտիզմն** առավել ուժեղ է եղել «Հնչակ»-ի մոտ, քանզի նախ որ դժվար է պատկերացնել, թեկուզ հեղափոխություններով, երեք Հայաստանների ազատագրումը և ծովից ծով Մեծ Հայաստանի ստեղծումը և բացի այդ, նրա ծրագրի երկրորդ մասով՝ ոչ պակաս անիրական մի բան էր խոսել կիսաավատատիրական, բռնապետական օսմանյան Թուրքիայում **սոցիալիզմի** հաղթանակի մասին և այլն:

XIX դարավերջին և XX դարասկզբին թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հասարակական-քաղաքական շրջանակներում, առաջինում՝ ավելի շատ դասակարգային՝ սոցիալ-հեղափոխական, մյուսում՝ ազգային-ազատագրական շարժման ու պայքարի քուրայում, հայ ազգային ավանդական կուսակցությունների ծրագրային ռազմավարական ու մարտավարական գործելակերպով փորձարկվում, բորբոքվում ու թրծվում էր հայրենիքի սոցիալ-քաղաքական ու ազգային ազատագրման, իսկ վերջին հաշվով՝ անկախացման տեսլականը:

Ինչ վերաբերում է հայ ազգային ավանդական կուսակցությունների հանդես բերած արտաքին քաղաքական կողմնորոշումների հարցին, ապա, ի տարբերություն Արմենական կուսակցության, Հնչակն ու ՀՅԴ-ն արտաքին քաղաքական հարաբերությունների հրամայականով ավելի կամ պակաս չափերով փորձում էին ապավինել մեծ տերությունների, այդ թվում՝ Ռուսաստանի միջամտությանն ու աջակցությանը, իսկ դրան դիմելու գլխավոր խթանիչ հանգամանքը 61-րդ հոդվածն էր, որը ձևակերպել էին հենց նրանք և պիտի պարտավորվածություն ստանձնեին իբրև դրանք կյանքի կոչելու: Ազատագրական անհավասար պայքարի դիմած հայ ազգային քաղաքական կուսակցությունները աստիճանաբար համոզվեցին, որ ներքին սահմանափակ ռեսուրսներով և տերությունների կողմնակալ վերաբերմունքը պիտի բերեր այն

համոզման, որ պիտի սահմանափակվել ընդամենը արևմտահայության համար «Ինքնավար Հայաստան՝ եվրոպական հսկողության տակ»[59]:

* * *

Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 1912–1914 թթ, եվրոպական տերությունների կողմից հերթական անգամ ասպարեզ նետվեց Հայկական հարցը: Այս անգամ դրական ազդակներ ուղարկելով՝ այն իր ձեռքն առավ Ռուսաստանը՝ Ֆրանսիայի և Անգլիայի համաձայնությամբ: Հայոց քաղաքական խնդրով զբաղվող մեծ հայագետ Ն. Ադոնցը, արտահայտելով այն ժամանակվա հայության մեծամասնության մտայնությունը, գրում էր. «Մեր գլխավոր հենարանը Հայկական հարցում Ռուսաստանն է, դրացիության իրավունքով եւ շահագրգռվածության աստիճանով»[60]: Իրականում, բանն այն է, որ մոտենում էր աշխարհամարտը, և Ռուսաստանը կարիք ուներ հայերի բարոյական, նյութական և զինական աջակցությանը: Իբրև առիթ, այս անգամ հայ ազգի իղձերի թարգման Ամենայն հայոց Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը 1912 թ. հոկտեմբերի 15-ին, Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովի միջնորդությամբ, դիմում է Ռուսաց Նիկոլայ II կայսրին՝ հայերի պաշտպանության խնդրանքով[61]: Կաթողիկոսը նույն խնդրով երկրորդ անգամ՝ դեկտեմբերի 24-ին է դիմում Ռուսաց կայսրին[62]:

1912–1913 թթ. Բալկանյան առաջին պատերազմի անհաջող ընթացքը ստիպեց թուրքական կառավարությանը ընդառաջ գնալ 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրից էապես չտարբերվող նոր ծրագրի: 1912 թ. նոյեմբերի 10-ին, Գևորգ Ե կաթողիկոսի հանձնարարականով, եգիպտահայ մեծահարուստ և ճանաչված հեղինակություն հանդիսացող Պողոս Նուբար փաշան, իբրև կաթողիկոսի նվիրակ, Ազգային պատվիրակության ղեկավար, պիտի պաշտպաներ Հայոց դատը եվրոպական պետությունների շրջանում: Պողոս Նուբարին զուգահեռ

---

[59] «Դրօշակ», Ժնեւ, 1902 թ., թիւ 7, էջ 97:

[60] **Ադոնց Ն.**, *Երկեր*, հ. Ա, էջ 43:

[61] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 6, Եր., 1981, էջ 520:

[62] Տե՛ս *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբ.՝ **Մ. Ներսիսյան**, Եր., 1991, էջ 299–303:

նման գործունեություն էր իրականացնում նաև ՀՅԴ ներկայացուցիչ, մասնագիտությամբ բժիշկ Հակոբ Զավրիյանը (Զավրիև): 1912 թ. նոյեմբերին, այդ նույն նպատակին ծառայելու համար, ռուսահայ շրջանակների կողմից հիմնվել էր **Ազգային բյուրո**: Դեկտեմբերի 21-ին հարցը լսվեց Կ. Պոլսի Ազգային ժողովի Խառը ժողովում և, կուսակցությունների միակամ համաձայնությամբ, որոշում կայացվեց ռեֆորմների անցկացման իրական երաշխիքների մասին[63]: Կազմվեցին բարենորոգումների նախնական մի քանի նախագծեր, այդ թվում՝ պատրիարքարանի, Պողոս փաշայի, անգամ Թուրքիայի կառավարության և այլն:

Կ. Պոլսի երեք տերությունների դեսպանները՝ Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսի նախաձեռնությամբ, ձեռնարկեցին ռեֆորմների կոլեկտիվ մի ծրագիր՝ ռուսական դեսպանատան առաջին թարգման Ա. Մանդելշտամի խմբագրությամբ: 1913 թ. ամռանը հրապարակ բերված թուրքահայ տարածքներում անցկացվելիք բարեփոխումների ծրագիրը շատ կողմերով նման էր 1895 թ. հոկտեմբերին սուլթան Համիդ II-ի կողմից հաստատված տարբերակին: Այն է՝ արևմտահայ **վեց** վիլայեթներից հիմնվելու էր **մեկ միասնական** նահանգ (**province**)՝ Ընդհանուր նահանգապետի գլխավորությամբ: Կազմվելիք Նահանգային ժողովը պիտի կազմված լիներ մահմեդականներից և քրիստոնյաներից հավասար թվով՝ հինգ տարի ժամկետով: Նույն կերպ Նահանգի վարչական պաշտոններն ու դատավորները ևս նշանակվում են հավասար թվով՝ կրոնական համամասնության հաշվառմամբ[64]:

Սակայն այդ ծրագիր-նախագիծը հանդիպեց թուրք և Անտանտին հակառակորդ ուժերի դիմադրությանը և կրկին ենթարկվեց վերանայման ու վերախմբագրման: Եվ, ի վերջո, **1914 թ. հունվարի 26-ին** (փետրվարի 8-ին), մինչ այդ արձակուրդի մեկնած Մ. Գիրսին փոխարինած Ռուսաստանի դեսպանության հավատարմատար Կ. Գուլկևիչի և մեծ վեզիր (սադրազամ) ու արտ. գործ. նախարար Սայիդ Հալիմ փաշայի միջև ստորագրվեց էապես խուզված ռուս-թուրքական համաձայնագիրը, որը հետո հաստատվեց սուլթանի իրադեով (հրամանագրով):

---

[63] Լէօ, *Հայոց հարցի վաւերագրեր*, էջ 312:
[64] Տե՛ս նույն տեղում, էջ 316–317 և 326:

Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանի բարենորոգումներին վերաբերող այդ համաձայնագրով Արևմտյան Անատոլիան նախկին մեկի փոխարեն բաժանվում էր երկու նահանգապետությունների (սեկտորների)՝ Տրապիզոնից ծովային ելքով: Դրանց գլուխ կարգվելու էին տերությունների կողմից առաջադրվող, եվրոպացի երկու օտարահպատակ քրիստոնյա Ընդհանուր վերատեսուչներ (կոմիսարներ)՝ հաստատված Բարձր Դռան կողմից: Ընդհանուր վերատեսուչներին էր հանձնվելու իրենց սեկտորների ամբողջ վարչական, դատական, ոստիկանական և ժանդարմական կառավարումը: Վիլայեթների ընդհանուր ժողովները (խորհուրդները) ընտրվում էին մահմեդական և ոչ մահմեդական բնակչության համամասնության սկզբունքով: Արևմտահայության համար մեծագույն չարիք հանդիսացող Համիդե գնդերը լուծարվելու էին՝ վերածվելով պահեստի հեծելազորի և այլն[65]: Երկար որոնումներից հետո երկու սեկտորների Ընդհանուր վերատեսուչներ նշանակվեցին նորվեգացի գնդ. Ն. Հոֆֆը և հոլանդացի դիվ. Լ. Վեսթենենկը: Բայց նրանք մինչ գործի կանցնեին սկսվեց Առաջին աշխարհամարտը, և տակնուվրա եղավ ամեն ինչ:

Պատմագիտական գնահատականի տեսակետից, մեր պատմագրության ակադեմիական գնահատականով, այդ փաստաթղթի գործադրման պարագայում Հայաստանն ու հայ ժողովուրդը պիտի ստանային ոչ թե **ինքնավարություն**, այլ ընդամենը **բարենորոգումներ**՝ առանց միջազգային երաշխիքների[66]: Պրոֆ. Ա. Համբարյանի բնորոշմամբ, դա ոչ թե ինքնավարություն էր, այլ ընդամենը չափավոր ռեֆորմների ծրագիր[67]: ՀՅԴ պատմագիր Հ. Տասնապետյանի լավատեսական կարծիքով՝ բարեփոխումների այդ համաձայնագիրը Արևմտյան Հայաստանի համար ինքնավարության դուռ էր բացում[68]: Մեր կարծիքով ևս, այդ համաձայնագիրը պարունակում էր պետականության գաղափարի որոշ տարրեր և վարչատարածքային առումով ավելի նա-

---

[65] Տե՛ս **Լեո**, *Հայոց հարցի վաւերագրեր*, էջ 333–338:

[66] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 2, Եր., 2015, էջ 114:

[67] Տե՛ս **Համբարյան Ա.**, *Հ.Հ. Դաշնակցություն կուսակցության քաղաքական կողմնորոշման շուրջ (1890–1917)*, «Լրաբեր» հաս. գիտ., թիվ 2, Եր., 1991, էջ 12:

[68] Տե՛ս **Տասնապետյան Հ.**, *նշվ. աշխ.*, Աթենք, 1988, էջ 34:

խընտրելի կլիներ, եթե Արևմտյան Հայաստանը ներկայացվեր որպես մեկ միասնական ամբողջություն:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, Առաջին աշխարհամարտի բռնկումով ինքնավարությանը միտված տերությունների այդ ծրագիրը գործնականում կասեցվեց, կարելի է ասել՝ ձախողվեց: Եվ նման անորոշ և վտանգավոր պայմաններում հայ ժողովուրդն ու նրա քաղաքական ընտրանին, իրենց կամքից անկախ, հայտնվեցին Առաջին աշխարհամարտի հորձանուտի մեջ:

### *5. Ինքնավարություն, դաշնություն, թե՞ անկախություն*

Արդեն XX դարասեմին փոփոխված ժամանակաշրջանի, իրադրության ու հանգամանքների հրամայականով, հայ ազգային ավանդական կուսակցությունների ռազմավարության ու մարտավարության մեջ, ինչպես ասվեց, կատարվեցին համապատասխան վերանայումներ ու խմբագրումներ: Հարկ է նշել, որ ապագա Հայաստանի կարգավիճակի հարցում, ըստ ժամանակաշրջանի ու հանգամանքի, օրինակ, ՀՅԴ-ը շարունակում էր հանդես բերել չափավորություն: Այսպես, XX դարասկզբներին նրա հրապարակ իջած ծրագրային բնույթի փաստաթղթերից՝ «Կովկասյան գործունեության նախագծում» (1905 թ.), ասվում էր, որ «ՀՅԴ, որ ստանձնել է հայկական շարժման գլխավոր պատասխանատվությունը, յեղափոխական կռուի միջոցով նա ձգտում է դաշնակցային (ֆեդերատիվ) ռամկավարական մի կազմակերպության՝ ամբողջ Անդրկովկասի համար՝ ամենալայն տեղական ինքնավարությամբ»[69]: Իսկ 1907 թ. մայիսին ՀՅԴ IV Ընդհանուր ժողովում հաստատված կուսակցության 2-րդ ծրագրում, ընկերվարության (սոցիալիզմի) մասին ավելի ընդգծուն բնորոշումներից զատ, Արևմտյան Հայաստանի (Թուրքահայաստանի) հարցում առաջ էր քաշվում **ինքնավարություն սահմանադրական Թուրքիայի** կազմում: Համանման նվազագույն ծրագրային պահանջ էր դրվում նաև Արևելյան Հայաստանի

---

[69] *Նիյթեր ՀՅԴ պատմության համար*, հ. Բ, Բեյրութ, 1985, էջ 232:

(Ռուսահայաստանի) համար արդեն **ժողովրդավար դաշնային (ֆեդերատիվ) Ռուսաստանի** կազմում: Եվ ոչինչ չէր ասվում արտաքին միջամտության մասին[70]:

Իմիջիայլոց, Համառուսաստանյան առաջին՝ 1905–1907 թթ. հեղափոխության շրջանում, այլ առաջարկների շարքում Այսրկովկասի հայաշատ գավառների միավորումով հայկական ինքնավարություն ստեղծելու անհրաժեշտության մասին է խոսվել 1906 թ. օգոստոսին Էջմիածնում Ս. Զավարյանի նախագահությամբ հրավիրված Ռուսաստանի հայության (արևելահայության) պատգամավորական առաջին հիմնադիր ժողովում՝ նախապառլամենտում: Սակայն հայության այդ պահանջը քաղաքական առումով ցարական իշխանություններին բնավ ընդունելի չէր, և այդ համաժողովը, որակվելով որպես **անջատողականության** մի դրսևորում, շուտով **փակվեց**[71]:

Այդ շրջանում, ազգային-պետական պահանջների առումով, հայ քաղաքական միտքն ու հանրային շրջանակները այն ժամանակ Արևելյան Հայաստանը Ռուսաստանից անջատելու կտրուկ պահանջ չէին դնում: Այս հարցում հատկապես հաշվի էր առնվում նրա հարևանների մտադրություններն ու սպառնալիքները: Սակայն, խոսելով ՀՅԴ Կովկասյան նախագծում ֆեդերացիայի պահանջի որդեգրման մասին, տեղին է նկատել ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, որ գործնականում Դաշնակցությունը «դեմ չէր արտահայտվում անկախության գաղափարին»[72]: Իրականում ՀՅԴ ներքուստ նման տեսլական է ունեցել նաև թուրքահայ հատվածի համար, իհարկե, ապագա սահմանադրական-դեմոկրատական (ժողովրդավար) Թուրքիայի պայմաններում, այլ խոսքով՝ ՀՅԴ, վերջին հաշվով, հեռագնա նպատակ ուներ՝ հայկական երկու հատվածները միավորել ու **ամբողջացնել** «միայն հայկական իշխանության տակ»[73]:

---

[70] Տե՛ս *ՀՅԴ ծրագիր*, Կ. Պոլիս 1908, էջ 21–22 և 26:

[71] Տե՛ս **Լեո**, *Անցեալից*, էջ 104–201, նաև՝ **Մելքոնյան Ա.**, *Պատմագիտական հետազոտություններ*, էջ 159:

[72] **Սիմոնյան Հր.**, *Ազատագրական պայքարի ուղիներում*, գ. 2, էջ 183:

[73] Նույն տեղում:

Բայց առայժմ, ինչպես ասվեց, ՀՅԴ Վիեննայի 1907 թ. փետրվար-մայիսին տեղի ունեցած IV Ընդհ. ժողովում ընդունված նոր՝ 2-րդ ծրագրում, պայմանավորված XX դարասեմի նոր իրողություններով, փաստորեն երկու՝ թուրքահայ և ռուսահայ ճակատով գործող ՀՅԴ-ն դարձյալ սահմանափակվում էր Թուրքահայաստանի և Անդրկովկասի համար ինքնավարության (վարչական ապակենտրոնացում, ֆեդերացիա) պահանջներով՝ համապատասխանաբար օսմանյան և ռուսական դաշնային (ֆեդերատիվ) պետությունների շրջանակներում[74]: Ինքնին հասկանալի է, որ երկատված հայ հայրենիքի անկախության հարցում հավասարապես ու կտրականապես դեմ էին թե՛ ցարական Ռուսաստանը և թե՛ օսմանյան Թուրքիան: Նրանք բնավ ցանկություն չեն ունեցել որևէ կարգավիճակով անգամ ինքնավարություն (ավտոնոմիա) տալու:

Հարկ է փաստել, որ սուլթանական կառավարությունից ոչ պակաս ցարական բարձր իշխանությունները ևս մերժում էին հայ քաղաքական շրջանակների կողմից արևելահայության համար այս կամ այն կարգավիճակով ինքնավարություն տալու գաղափարը: Նրանք անգամ դեմ են եղել Կովկասում տեղական (նահանգային և գավառային) ինքնավարություն (**զեմստվո**) մտցնելուն: Այս կապակցությամբ ուշագրավ է ժամանակին Թիֆլիսի քաղաքապետ Ալ. Խատիսյանի հուշապատման մեջ տեղ գտած հետևյալ դրվագը: Այսպես, Կովկասի կենտրոնի քաղաքապետը երկրամասի համար տեղական ինքնակառավարման մարմիններ (զեմստվոներ) հիմնելու հարցով անձամբ մեկնել է Ս. Պետերբուրգ և զեկուցել է կառավարության նախագահ (վարչապետ) Պ. Ստոլիպինին, որը, սակայն, իրեն պատասխանել է՝ «Ես դեմ եմ: Եվ դեմ եմ լինելու, քանզի զեմստվոների հաստատությունների միջոցով դուք ձեր համար կստեղծեք **ազգային ինքնավարություն**»[75]: Ալ. Խատիսյանը նույն հարցով դիմել է նաև Պետական դումայի նախագահ Ալ. Գուչկովին և դարձյալ ստացել նույն մերժողական պատասխանը[76]: Այդ նշանակում էր, որ հայ-հայրենիքի երկու հատվածներում էլ ինքնավարության,

---

[74] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցութեան ծրագիր*, Կ. Պոլիս, 1908, էջ 17–18:

[75] **Խատիսյան Ալ.**, *Անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր*, աշխատ.՝ **Վլ. Հարությունյանի**, Եր., 2023, էջ 242:

[76] Տե՛ս նույն տեղում:

ազատության ու **անկախության** հնարավոր կլիներ հասնել՝ միավորված Գերմանիայի առաջին կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկի արտահայտությամբ՝ միայն «**արյան**» և «**երկաթի**» միջոցով:

Այսպիսով, Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ հանդես բերած քաղաքականությունում, **Ռուսաստանի և Թուրքիայի համար,** առանց էական տարբերության, **ընդունելի (ցանկալի) չի եղել Հայաստանի ինքնավարության ցանկացած դրսևորում, էլ չենք խոսում նրա ազատ և անկախ կարգավիճակի մասին: Կնշանակի, դրան հասնելու իրական ուղին պիտի լիներ պայքարը:**

Նման պայմաններում գրեթե անհաղթահարելի ազգային-քաղաքական խնդրի լուծման դժվարությունների առաջ էին կանգնած հայ ազգային քաղաքական կուսակցությունները և առաջին հերթին դրանց առաջատարը՝ ՀՅԴ-ը: Հարկ է փաստել, որ դարասկզբի երկու տասնամյակներին ՀՅԴ-ն և՛ ռուսական, և՛ թուրքական իրականության խոշորագույն կուսակցություններից մեկն էր, իսկ Անդրկովկասում, թերևս, ուժեղագույն քաղաքական կազմակերպությունը: Կարելի է ասել, որ հայ իրականության մեջ նա մի տեսակ պետություն էր պետության մեջ՝ իր ոստիկանությամբ, ժող. դատարաններով, ինքնակառավարման մարմիններով և հաճախ հայ, և ոչ միայն, հանրույթները քաղաքացիական, արդարադատության, վարչաիրավական բնույթի հարցերում ավելի շուտ ու շատ դիմում էին հենց Դաշնակցության կառույցներին, քան ռուսական կամ թուրքական կոռումպացված իրավապահ-վարչական մարմիններին: ՀՅԴ պատգամավորական առանձին խմբակցություններ է ունեցել և՛ ռուսական Պետական դումաներում և թե՛ Օսմանյան մեջլիսներում (խորհրդարաններում): Մինչև ՀՅԴ դեմ ցարական հիմնականում կեղծ ու շինծու մեղադրանքների վրա կառուցված հայտնի (1908–1912 թթ.) հրապարակային դատը՝ 1907 թ. սկզբներին, կուսակցությունն իր շարքերում ուներ մոտ 165 հազար անդամ, որոնք ընդգրկված են եղել 3039 մարտական խմբերում, իսկ նրա տարեկան բյուջեն կազմել է 1 մլն ֆրանկ[77]: ՀՅԴ-ն ավելի հաճախ գործակցում էր

[77] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457 (նախկին ՀՔԿՓ՝ ֆ. 4047), ց. 1, գ. 237, թ. 58–59, «Դրոշակ», Ժնիւ., 1907, թիւ 9 (186), սեպտեմբեր, էջ 137: Համեմատության կարգով նշենք,

ռուսական Սոցիալիստ Հեղափոխականների (Էսէռների) կուսակցության հետ, իսկ 1907 թ. Շտուտգարդում հրավիրված սոցինտերնի միջազգային կոնգրեսում (համաժողովում) Դաշնակությունը մասնակցեց ու անդամագրվեց Երկրորդ Սոցինտերին և այլն:

* * *

Ռուսական առաջին՝ 1905–1907 թթ. հեղափոխության, երիտթուրքական 1908 թ. հուլիսյան պետական հեղաշրջման շրջանում Թուրքիայում հրապարակ բերված 1876 թ. Միդհատյան մեռելածին սահմանադրության ու դրան հաջորդած, այսպես կոչված, Սահմանադրական միապետության մի քանի տարիներին ՀՅԴ-ն, ինչպես նաև Հայ Սահմանադրական Ռամկավար և Ս.Դ. Հնչակյան կուսակցությունները նույնպես վերանայեցին և ավելի չափավորեցին իրենց քաղաքական նպատակներն ու պահանջները, աշխատեցին հանդես գալ օսմանյան սահմանադրական պետության շրջանակներում՝ ազգերի ներքին լայն ինքնավարության, օրինականության, ազատության և ազգերի համերաշխության կարգախոսներով[78]:

Այս անգամ արդեն սոցիալ-դեմոկրատ (ՍԴ) անվանումը ստացած Հնչակյան կուսակցության նոր ծրագրում (1909 թ.) խոսվում էր ոչ թե երեք Հայաստանների ազատագրման և միացյալ Հայաստանի անկախության նպատակին հասնելու, այլ այժմ, երիտթուրքերի հեղաշրջումից ու սուլթանական վարչակարգի տապալումից հետո, իբրև մոտակա նպատակ, առաջ էր քաշվում Թուրքիայի կազմում Արևմտյան Հայաստանին տեղական գործերը տնօրինելու համար **ինքնավարություն** տալու, իսկ իբրև հեռավոր նպատակ՝ **սոցիալիզմի** հաստատում Հայաստանում և ամբողջ **Թուրքիայում**: Նոր ծրագրում հայտարարվում էր. «Սահմանադրական Թուրքիոյ հանդեպ **ժխտել ամեն տեսակ ան-**

---

որ այդ նույն ժամանակ՝ 1907 թ. գարնանը, միավորված ՌՍԴԲԿ իր շարքերում ուներ 150 հազար անդամ (տե՛ս *История КПСС*, т. 2, М. 1966, с. 215):

[78] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցութեան ծրագիր*, Կ. Պոլիս, 1908, էջ 17–18, Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան ծրագիր և կանոնագիր, Կ. Պոլիս, 1910, էջ 3–13, *Ծրագիր Ս Դ Հնչակեան կուսակցութեան (Տաճկահայաստանի համար)*, Կ. Պոլիս, 1910, էջ 15:

**ջատողականություն** (ընդգծումը՝ Ա.Հ.)»[79]: Դեռ 1908 թ. ամռան հեղաշրջման բուռն շրջանում «Հնչակ» պաշտոնաթերթը գրում էր. «Մեր պայքարի մոտատր նպատակը կլինի **ինքնավարութիւն՝** Հայաստանի, Մակեդոնիայի[80] և բոլոր բաղկացուցիչ ժողովուրդների համար, իսկ **Ռամկավարական Սահմանադրութիւն՝** ամբողջ Թիւրքիայի համար»[81]:

Ուշադրության է արժանի Հնչակյան կուսակցության ճանաչված գործիչ ու տեսաբան, «Հնչակ» և «Ազգ» թերթերի խմբագիր Ստ. Սապահ Գյուլյանի (Տեր-Դանիելյան) արտահայտած հետևյալ միտքը, որ Թուրքահայաստանի մինչև անկախության հասնելը խելամիտ կլինի, որ այդ ճանապարհին նա անցնի մի քանի միջանկյալ կարգավիճակով, այն է՝ Օսմանյան կայսրության կազմում սկզբում «**ավտոնոմիա**» (**ինքնավարություն**), այնուհետև՝ «**կոնֆեդերացիա**» (**համադաշնություն**), իսկ վերջում՝ ճանապարհ դեպի «**անկախություն**»[82]: Հրապարակման վերջում սոցիալիստ Ստ. Սապահ Գյուլյանը՝ իբրև խնդրի լուծման սկիզբ, պատմական անցյալ ունեցող հայ ժողովրդի համար քաղաքական ինքնավարությունը համարում էր նախնական մի սաղմ, որ աստիճանաբար կսկսեր զարգանալ և ընկերական, պետական նոր ձևերի՝ ֆեդերացիայի և կոնֆեդերացիայի համար հարմար հող կնախապատրաստեր[83]:

---

[79] *Ծրագիր ՍԴ Հնչակեան կուսակցութեան (Տաճկահայաստանի համար),* Կ. Պոլիս, 1910, էջ 15:

[80] Պատահական չէ, որ շեշտվում էր նաև Մակեդոնիայի անունը, որովհետև հենց այնտեղից երիտթուրք սպաները Գ և Բ զորաբանակների գլուխն անցած՝ արշավեցին Կ. Պոլսի վրա:

[81] **Սապահ-Գիւլեան Ստ.,** *Սահմանադրական Թիւրքիա եւ հայկական խնդիր,* (տե՛ս «Հնչակ», Փարիզ, 1908, յունիս-յուլիս, թիվ 6–7, էջ 50:

[82] **Սապահ-Գիւլեան Ստ.,** *Սահմանի երկու կողմում* (տե՛ս «Հնչակ», Փարիզ, 1908, ապրիլ-մայիս, թիվ 4–5, էջ 30, 32 և 35: Սակայն հեղինակը չի խոսում ինքնավարության և համադաշնության միջև ընկած միջանկյալ համարվող «**դաշնության**» (ֆեդերացիայի) պետաիրավական կարգավիճակի մասին: Ստ. Շահումյանի բնորոշմամբ՝ «Ֆեդերացիան հավասար միավորների միություն է» (տե՛ս **Շահումյան Ստ.,** *ԵԼԺ,* հ. 3, Եր., 1975, էջ 269): Իրականում ֆեդերացիան ևս անկախ պետությունների կամավոր միավորման մի ձև է, որի ստեղծումը կարող են ձեռնարկել իրենք՝ անկախ պետությունները, բայց համադաշնության համեմատ, արտաքին ու ներքին գործոններով պայմանավորված, ավելի սերտ կապերով ու պարտավորություններով:

[83] Տե՛ս «Հնչակ», էջ 37–39:

Փաստենք, որ հնչակյան տեսաբան-գաղափարախոս Ստ. Սապահ Գյուլյանը, առաջ քաշելով ու զարգացնելով Հայաստանի համար **քաղաքական ինքնավարության** պահանջը, բավականին համոզիչ կերպով փորձել է հիմնավորել այն պատմական, իրավական, քաղաքակրթական, ժողովրդագրական հիմքերով: Հնչակյան գործիչն, օրինակ, պատմական փաստարկ-հիմնավորումներ է անում այն մասին, որ Հայաստանը ոչ թե Փյունիկիայի, Բաբելոնի կամ Ասորեստանի նման ընդամենը պատմականորեն հիշատակվող ինչ-որ լոկ աշխարհագրական հասկացություն է, այլ չնայած այն բանին, որ նա միջին և նոր դարերում կորցրել էր իր քաղաքական ամբողջությունը, սակայն միշտ պահպանել է իր **հոգևոր, բարոյական, պատմական միությունը, սեփական պատմությունը** և **ազգային գիտակցությունը**: Ստ. Սապահ Գյուլյանի պատկերմամբ, Հայաստանը եղել և մնում է կազմակերպված, ապրող ու արարող հայ ազգի հայրենիքը՝ «իր որոշակի սահմաններով և մինչ օրս չկա քիչ թե շատ հեղինակություն վայելող անկողմնակալ պատմագիր կամ աշխարհագիր որևէ հեղինակ, որ **չհավաստի** ու **չհաստատի**՝ Հայաստանը Հայ ազգի հայրենիքը լինելու փաստը»[84]: Հիրավի, հայկական լեռնաշխարհի, Հայք-Նաիրի-Հայաստանի աներկբա հայ-արմենների հայրենիքը լինելու հավաստիության մասին են փաստում ոչ ամենևին հայազգի Հին աշխարհի պատմագիրներ՝ Հերոդոտը, Քսենոֆոնը, Պլուտարքոսը, նոր և նորագույն ժամանակներում՝ համաշխարհային ճանաչում ունեցող աշխարհագրագետներ, հնեաբաններ, ազգագրագետներ ու լեզվաբաններ՝ Հ. Լինչը, Գ. Աբիխը, Ե. Ֆոռերը, Հ. Հյուբշմանը, Ի. Դյակոնովը և շատ ուրիշներ: Սա ինքնին վկայում է Սապահ Գյուլյանի Հայոց պատմաաշխարհագրական բնույթի նյութերին ու պատմությանը քաջածանոթ լինելու մասին:

Արդեն մեր ժամանակներում Ստ. Սապահ Գյուլյանի փաստարկ-հիմնավորումներին պիտի հավելել նաև արդի լեզվաբանական ու հնագիտական նորագույն տվյալների, մարդաբանական ու գանգաբանական գիտական նոր ուղղություն հանդիսացող գիտական հետազոտությունների ճանապարհով հրապարակ բերված հայերի էթնոգենեզի

---

[84] **Սապահ-Գիւլեան,** *Ինքնավար Հայաստան,* էջ 33:

(ցեղասերման), Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի նախահայրենիք, այլ խոսքով՝ հայերի տեղաբնիկ լինելու, ի սկզբանե Հայաստանը հայերի հայրենիքը հանդիսանալու բազում այլ փաստեր հավաստող ու հաստատող նորահայտ պատմավավերագիր արձանագրություններ, հիշատակություններ, նյութական և մշակույթի այլ տվյալներ: «Հայ Ազգի ինքնաւարական պահանջը,- գրում էր նա,- մարդկային, ազգային արդար եւ անբռնաբարելի մի իրաւունք է՝ ապրելու, իր գոյությունը շարունակելու»[85]: Ընդ որում, Հայաստանը պիտի ինքնավար դառնար բուն Հայաստանի և Հայկական Կիլիկիայի շրջանակներում: Ստ. Սապահ Գյուլյանը նկատել է տալիս, որ անգամ «Կիլիկիայի մէջ Հայկական պետութիւն ստեղծելը՝ Նապոլեոն Գ-ի ծրագրի մէջ է եղել»[86]: Չմոռանանք, որ Հայկական Կիլիկիան քաղաքական առումով մշտապես գտնվել է հնչակյանների ուշադրության կենտրոնում: Պատահական չէր 1920 թ. օգոստոսի 4-ի «Ինքնավար Հայաստանի» (Կիլիկիայի) հռչակումը Մ. Տամատյանի գլխավորությամբ[87]:

Հասկանալի է, որ թուրքական բիրտ իրականության պայմաններում քաղաքական բնույթի նման ժողովրդավարական գործընթացը այնքան էլ հեռանկար չուներ և կոչված չէր իրականանալու: Հետագայում, հանգամանքների սրումով, հատկապես 1909 թ. Ադանայի աղետալի դեպքերից հետո հնչակյանները, պայքարելով իթթիհատականների դեմ, 1912 թ. փետրվարին համաձայնության եկան պրոգերմանական կողմնորոշում ունեցող «Միություն և առաջադիմություն» կուսակցության (կոմիտեի) քաղաքական հակառակորդ անգլիամետ կողմնորոշման, Մեհմեդ Սաբահէդդինի գլխավորած «Հյուրիեթ վե իթթիլաֆ» (Ազատություն և համաձայնություն) ընդդիմադիր կուսակցության հետ: Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) Հնչակյան կուսակցության ֆոնդում առկա է Ս.Դ. Հնչակյան և Իթթիլաֆ կուսակցությունների միջև 1912 թ. կայացված 7-կետանոց համաձայնագրի պատճենը: Նրանում պաշտպանվում էր Օսմանյան պետության ամբողջականության շրջա-

---

[85] **Սապահ-Գիւլեան**, *Ինքնավար Հայաստան*, էջ 32:

[86] Տե՛ս նույն տեղում, էջ 68:

[87] Տե՛ս *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան (1887–1962)*, հ. Ա, էջ 572–575:

նակներում ապրող բոլոր ազգությունների քաղաքական-սահմանադրական իրավունքների պաշտպանության գաղափարը: Հնչակյան կուսակցության անունից փաստաթուղթն ստորագրել էին երկու ճանաչված գործիչներ՝ Ստ. Սապահ-Գյուլյանը և Բ Վարազդատը[88]: Հասկանալի է, որ այդ համաձայնագիրը ևս թուրք իրականության պայմաններում վիճակված չէր կյանքի կոչվելու:

Աշխարհամարտի նախաշեմին էլ Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը շարունակեց մնալ Հայաստանի համար ինքնավարության պահանջի շրջանակներում: 1913 թ. սեպտեմբերին Բուլղարիայում կայացած Հնչակյան կուսակցության 7-րդ Ընդհ. ժողովն իր որոշմամբ վերահաստատեց «Պաշտպանել **Քաղաքական Ինքնավար Հայաստանի** գաղափարը որպէս միակ միջոցը Հայաստանի մէջ ապրող թէ Հայ եւ թէ միւս տարրերի հաշտ, խաղաղ, անվրդով զարգացմանը եւ յառաջադիմութեանը»[89]:

Ինչ վերաբերում է հայ քաղաքական դաշտի գլխավոր դերակատար ՀՅԴ-ը, ապա երիտթուրքերի 1908 թ. հուլիսյան պետական հեղաշրջումից հետո նրա Օսմանյան կայսրության մարմինների (կառույցների) ներկայացուցիչների խորհուրդը սեպտեմբերի 1-ին հրապարակեց շուրջ երեք տասնյակ կետերի հասնող իր պաշտոնական պահանջների ծրագիրը, որի 2-րդ կետով՝ «Օսմանեան կայսրությունը քանի կ՚ունենա Սահմանադրական ռամկավար ռեժիմ, պիտի ճանաչուի անկախ ու ամբողջական: Թիւրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեանն անբաժան մասը եւ կը վարե իր տեղական գործերը, հիմնուած ապակեդրոնացման սիսեէմի վրայ»[90]: Սակայն շատ կարճ տևեց «հյուրիեթի» ընձեռած ոգևորությունը: Դժվար չէ նկատել, որ նման զգուշավոր և անատամ դիրքորոշման որդեգրումը պայմանավորված էր երիտթուրքական հեղաշրջմամբ, սուլթան Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումից

---

[88] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 167, թ. 1:

[89] **Սապահ-Գիւլեան Ս.,** *Պատասխանատուները,* Պէյրութ, «Imprimerie G. Doniguian Fils", 1974, էջ 356:

[90] *Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար,* հ. Ա, Պէյրութ, 1984, էջ 178, **Տասնապետեան Հ.,** *ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհանուր ժողով (1890–1924),* Աթէնք, 1988, էջ 90:

հետո իշխանության ղեկին հայտնված «Իթթիհատ վե թերաքքի» (Միություն և առաջադիմություն) կուսակցության կոմիտեի հռչակած կեղծ ժողովրդավարության, սահմանադրականության, պառլամենտարիզմի, Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից ընդօրինակած՝ ժողովուրդների **ազատության**, **հավասարության**, **եղբայրության** մասին կարգախոսների առաջ բերած խաբկանքով, որը շուտով պիտի տեղի տար հիասթափության և աղետալի կոտորածների:

Այսպիսով, Հայաստանի ազատության և անկախ պետականության վերականգնման ճանապարհին հայ ավանդական կուսակցությունները, ժամանակաշրջանի իրադրության ու հանգամանքների հրամայականով, դիմել են ծրագրային նպատակների ու գործելակերպի փոփոխությունների՝ պատրաստ լինելով ըստ հայության հատվածների՝ օսմանյան և ռուսական համապետականության շրջանակներում բավարարվել ընդամենը ոչ անջատողական, **ինքնավարության** կարգավիճակով: Բայց հետագա դեպքերը պիտի բերեին այլ ընթացքի՝ հուսախաբության և փակուղու:

* * *

Ամփոփելով վերը շարադրյալը, ամենից առաջ ընթերցողին կողմնորոշենք այն բանում, որ XIX դարավերջից հրապարակ իջած հայ ազգային կուսակցությունները հայ ազգի երկու հատվածների ազատագրման և հայոց պետականության վերականգնման հիմնանպատակի իրագործումը հանդիսացել է **արտաքին ու ներքին** գործոններով պայմանավորված շատ բարդ, պայքարի վերելք-վայրէջքներով, միջազգային դիվանագիտության կողմից շահադիտական, ավելի հաճախ՝ խարդախ, հակասություններով հարուստ, ժողովրդին համախմբման, ինքնապաշտպանության կազմակերպման ու նպատակաուղղման, նրանից մեծ ռեսուրսներ ու զոհողություններ խլող բազմաբարդ գործընթաց: Ինքնին հասկանալի է, որ ժողովրդի ու Հայրենիքի ազատագրման հիմնանպատակի իրագործումը պայմանավորված է ոչ այնքան ներքին գործոններով՝ ազգի և նրա ռեսուրսների համախմբումով ու նպատակաուղղված պայքարով, որքան արտաքին ու միջազգային գործոններով: Բավական է միայն մատնանշել, որ այդ ճանապարհին հայ քաղա-

քական ուժերն ու ամբողջ հայ հանրությունը առաջին հերթին պիտի անմիջական գործ ունենային և քաղաքական-ազատագրական պայքարի ձեռնոց նետեին ասիական տիպի երկու այնպիսի զորեղ կայսրությունների, ինչպիսին **Օսմանյան Թուրքիան** և **Ռուսական Կայսրությունն էին:**

Բայց կրկին շեշտենք, հաշվի առնելով, որ սեփական համեստ նյութական, զինական ու մարդկային ռեսուրսներով (ներուժով) դժվար էր հասնել հաջողության (հաղթանակի), դրա համար էլ հայ քաղաքական շրջանակները փորձել են դիմել այլ երկրների, առաջին հերթին եվրոպական տերությունների ցանկալի աջակցությանը, շեշտը դրվել է առաջին հերթին առավել ծանր (վտանգավոր) պայմաններում հայտնված արևմտահայության ազատագրման խնդրի վրա: Դարասկզբին, առաջացած իրադրությամբ ու հագամանքներով պայմանավորված, հայ քաղաքական կուսակցությունները իրենց քաղաքական պահանջներում գիտակցաբար փորձել են գնալ զիջումների, դիմել պայքարի ոչ բռնի միջոցների, հրապարակայնորեն անգամ բավարարվել Թուրքահայաստանում կամ Ռուսահայաստանում բարենորոգումների, ներքին **լայն ինքնավարության** համեմատաբար համեստ պահանջներով: Բայց ներքուստ նրանց գաղափարական նպատակադրումների ու գործունեության հետնախորքում շարունակում էր մնալ, ի վերջո, **հայոց պետականության վերականգնումը**: Եվ այդպիսին է եղել հայ ազգային ավանդական կուսակցությունների ծրագրված ռազմավարությունը, որոնց առաջատար ուժը, անշուշտ, հանդիսանում էր ՀՅ. Դաշնակցություն կուսակցությունը:

## *6. Անկախության հիմնահարցը Առաջին աշխարհամարտի նախօրեին և ընթացքում: «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը: Դեպի անկախություն*

1914 թ. հուլիսի 19-ին (ն.տ. օգոստոսի 1-ին) սկսված Առաջին աշխարհամարտը հայ հասարակական-քաղաքական շրջանակներում հե-

ղաբեկում առաջ բերեց նրանց ծրագրերում, մոտեցումներում ու դիրքորոշումներում Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության ու անկախ պետականության վերականգնման հեռանկարում, բայց մյուս կողմից՝ տագնապ և անհանգստություն ժողովրդի անվտանգության հարցում: Ռազմաքաղաքական երկու հակադիր խմբավորումներում հայտնված հայ ժողովրդի երկու հատվածը, իր կամքից անկախ, ներքաշվեց պատերազմի մեջ և իր անցյալի փորձով, կամա թե ակամա, հիմնականում կողմնորոշվեց դեպի Ռուսաստանը: Թեև մեծ պատերազմի նախօրյակին XX դարի երկու տասնամյակների հայ իրականության մեծագույն և քաղաքական ամենաազդեցիկ ՀՅԴ կուսակցությունը Էրզրումում 1914 թ. (հուլիսի 25-օգոստոսի 17) գումարած հերթական 8-րդ Ընդհ. ժողովում, ըստ ամենայնի, ճիշտ որոշում էր կայացրել, այն է՝ նախ փորձել համոզել թուրքերին **չմտնել** պատերազմի մեջ, իսկ եթե դա հնարավոր չլինի, ապա ռուս-թուրքական պատերազմի ծագման պարագայում հնարավորինս պահպանել ակտիվ **չեզոքություն՝** ո՛չ Թուրքիա, ո՛չ Ռուսաստան[91]: Սակայն, հենց որ պատերազմը սկսվեց, նույնիսկ դեռ ավելի վաղ, հայությունը բնազդաբար կողմնորոշվեց դեպի Ռուսաստան, ինչը, անշուշտ, իր մեջ **վտանգներ** էր պարունակում: Տեղին է փաստել, որ ՀՅԴ առավել հեռատես գործիչներ՝ Ռոստոմը, Արամը, Ռուբենը, Հով. Քաջազնունին, Ա. Վռամյանը և ուրիշներ, կանխազգալով ազգին սպառնացող մեծ վտանգը, դեմ էին կամավորական շարժմանը, որը հետագայում պիտի հավելյալ առիթ տար հայկական կոտորածներին: Նկատել տանք՝ այդ ժամանակ Վանում գտնվող հայ ամենահեռատես ու հավասարակշիռ գործիչներից Հովի. Քաջազնունին գտնում էր, որ «ռուսահայերը կրակի հետ են խաղում», և ցավոք, նա չսխալվեց[92]:

Այդ համատեքստում, հավանաբար, չպետք է լուրջ ընդունել VIII Ընդհ. ժողովի ավարտական փուլում՝ 1914 թ. օգոստոսին, Էրզրում ժամանած Իթթիհատի լիազոր ներկայացուցիչներ Օմար Նաջի բեյի և Բեհաէդդին Շաքիրի առաջարկը՝ պատերազմի պարագայում հայության

---

[91] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 88, թ. 2:

[92] Տե՛ս **Մելքոնյան Ա.**, *Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր*, էջ 413:

(թուրքահայ թե ռուսահայ)՝ թուրքերի կողմն անցնելու, կովկասյան մյուս ժողովուրդների հետ միասին ապստամբություններ բարձրացնելու, ռուսական բանակի դեմ կռվելու առաջարկները: Հաղթանակի դեպքում խոստացվում էր Կովկասում (նկատի ունեցեք՝ Կովկասում և ոչ թե Արևմտյան Հայաստանում) իբրև թե ստեղծել **Հայկական պետություն (Ինքնավար Հայաստան)**՝ Թուրքիայի հովանու ներքո՝ կենտրոն ունենալով Էջմիածինը[93]: Ըստ երիտթուրք պատվիրակների, այդ Հայաստանի մեջ կմտնեին Ռուսահայաստանը, Տաճկահայաստանի Էրզրումի նահանգից որոշ մասեր՝ առանց Էրզրում քաղաքի, և Վանի ու Բիթլիսի նահանգներից որոշ հողամասեր: Եվ այդ Հայաստանը, Վրաստանի, արևելակովկասյան թուրք-թաթարների (հետագայում Ադրբեջան կոչվածի) ու Դաղստանի պետությունների հետ, պիտի բաղձալի պատվար (պատնեշ) դառնար Թուրքիայի և Ռուսաստանի միջև[94]: Ռուբենի արտահայտած այդ նույն միտքն է հաստատում իթթիհատական պատվիրակների խորհրդակցությանը մասնակից Ս. Վրացյանը[95]: Իրականում թե՛ սուլթանական և թե՛ իթթիհատական կառավարությունների վարած նախընթաց քաղաքականությունը հիմքեր էր տալիս չհավատալու հայերին ինքնավարություն տալու մասին թուրք պատվիրակների խոստմանը:

Դրան հակառակ, հայ քաղաքական ազդեցիկ շրջանակները, հանդես բերելով ռուսական քաղաքական կողմնորոշում, մեծապես օգնում ու ապավինում էին ռուսական զենքի հաղթանակին և հույս էին տածում, թե քրիստոնյա ռուսական տերության հովանու ներքո, ի վերջո, կստեղծվի ինքնավար Հայաստան, մանավանդ որ այդ շրջափուլում չհաստատված լուրեր էին պտտվում, թե իբր Նիկոլայ II ցարը, 1914 թ. նոյեմբերին Թիֆլիսում հանդիպելով Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հետ, «Հայկական հարցի» լուծման ճանապարհին իբր

---

[93] Տե՛ս **Լեո**, *Անցեալից*, էջ 285, **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890–1940)*, էջ 250, **Վրացեան Ս.**, *Կեանքի ուղիներով*, հ. Գ, Պէյրութ, 1963, էջ 10, **Ներսիսյան Ա.**, *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1908–1918 թթ.)*, Եր., 2013, էջ 142:

[94] **Ռուբեն**, *Հայ-թրքական կնճիռը*, Գահիրէ, 1924, էջ 142:

[95] Տե՛ս **Վրացեան Ս.**, *Հայաստանի հանրապետութիւն*, Պէյրութ, 1958, էջ 9:

«խոստացել» է ստեղծել **ինքնավար միացյալ Հայաստան**[96]: Սակայն այդ գաղափարների նյութականացման համար բավարար հիմքեր ու ռեսուրսներ չկային: Դա երևում է հենց Աշխարհամարտի սկզբին՝ օգոստոսի 5-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի, Կովկասի փոխարքա, կոմս Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով Նիկոլայ II կայսրին հղած նամակից և փոխարքայի միջոցով Ռուսաստանի կառավարության նախագահ Ի. Գորեմիկինի՝ սեպտեմբերի 2-ի պատասխանից և ցարի անունով հայերին ուղղված սեպտեմբերի 17-ի կոչից[97]: Այդ փաստաթղթերում ոչ մի խոսք, անգամ ակնարկ չկար գործերի հաջող ընթացքի դեպքում Հայաստանին **ինքնավարություն**, էլ չենք ասում՝ **անկախություն** տալու մասին:

Իբրև լրացուցիչ փաստարկ բերենք մեկ այլ հիմնավորում՝ քաղված այն ժամանակներում Թիֆլիսի քաղաքապետ Ալ. Խատիսյանի հուշերից, որն ի պաշտոնե և անձնապես մտերիմ կապեր է ունեցել Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովի հետ: Հանդիպումներից մեկի ժամանակ փոխարքան մասնավորապես հետևյալ միտքն է արտահայտել. «Ես կարծում եմ, որ այն ամենալավը, ինչը թուրքահայերը պետք է ստանան մեր հաղթանակից հետո, դա պիտի լինի Սիրիայում Լիբանանյան Սահմանադրության օրինակով մի Սահմանադրություն: Ես այդպես էլ գրել եմ ցարին»[98]: Ալ. Խատիսյանը իր այս անտիպ հուշերում նույնպես պատմում է դիցապատումի նմանվող այն վարկածը, թե փոխարքան ստացել է ցարի պատասխան նամակը, որն էլ ուղարկվել է Կաթողիկոսին: Սակայն այդ նամակը Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանում իբր գողացել են մի գյուղատնտես քաղաքացու ճամպրուկի հետ միասին և անհետացրել: Եվ Խատիսյանը վկայում է, որ ինքն անձամբ է լսել այդ հեքիաթի նմանվող ճամպրուկի պատմությունը[99]:

---

[96] Տե՛ս **Վրացեան Ս.**, *Կեանքի ուղիներով*, հ. Գ, Գահիրէ, 1963, էջ 26, նաև՝ **Համբարյան Ա.Ս.**, *Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)*, էջ 453:

[97] Տե՛ս *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)*, էջ 330–332, **Արզումանյան Մ.**, *Հայաստան. 1914–1917*, Եր., 1969, էջ 177 և ուրիշներ:

[98] **Խատիսյան Ալ.**, *Անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր*, էջ 259:

[99] Տե՛ս նույն տեղում, էջ 260:

Հայոց պամության ընթացքում քանիցս շրջանառվող նման երևութական թղթերից, անիրական նամակ-կոչերից այն հետևությանը կարելի է հանգել, որ դրանք իրական և իրավական որևէ հիմք չունեցող ընդամենը խոսույթներ էին, իսկ տվյալ դեպքում Ռուսական բարձր իշխանությունները՝ սկսված աշխարհամարտի պայմաններում, եթե նամակ-ուղերձներ են հղել հայերին, ապա դրանք ընդամենը կարող էին լինել ոգևորիչ խոսքեր՝ կամավորական խմբեր ստեղծելու, նվիրումով կռվելու ռուսական զենքի հաղթանակի համար:

* * *

Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության և հետագա ճակատագրի հարցերով մտահոգ են եղել ոչ միայն քաղաքական կուսակցությունները, այլև դարասկզբին հայ գրական կյանքի ամենավառ անհատականությունները, ինչպիսիք էին Ամենայն հայոց բանաստեղծ **Հ. Թումանյանը**, մեծ քնարերգու **Վ. Տերյանը** և ուրիշներ: Հետևելով Աբովյանի, Նալբանդյանի, Ռաֆֆու, Պատկանյանի և մյուսների գրական-գեղարվեստական ուղուն ու քաղաքական հետագծին, Հ. Թումանյանը հանդես է գալիս որպես ազգային ազատագրական պայքարի գաղափարախոս, Հայաստանի ազատության և անկախ պետականության վերականգնման գաղափարի ջերմ պաշտպան: Այդ գաղափարներն իրենց գրական-գեղարվեստական մարմնավորումն էին գտնում «Տարոնի գարունը», «Տարոնի առավոտը», «Հայոց լեռներում», «Հայոց վիշտը» և ուրիշ ստեղծագործություններում: Նա ոչ միայն հանճարեղ բանաստեղծ էր, այլև հայ ժողովրդի պատմական բախտով ապրող, մտահոգ ու մաքառող հասարակական-քաղաքական մտքի ամենավառ դեմքերից մեկը: Թումանյանը, պատմագետ վերլուծաբանի կարողություններով, 1913 թ. հունվարին հանդես եկավ «Հայկական հարցն ու իր լուծումը» ծավալուն հոդվածով: Իհարկե, հանդիսանալով Խ. Աբովյանի գաղափարաքաղաքական ավանդույթի շարունակող, նա մնում էր ռուսական քաղաքական կողմնորոշման ջերմ ու ընդգծված պաշտպանի դիրքերում[100]:

---

[100] Տե՛ս **Թումանյան Հ.**, *Երկեր*, հ. 4, Եր., 1951, էջ 234–235:

Ժամանակային առումով դեպքերի և իրադարձությունների հետագա զարգացումներից փոքր-ինչ առաջ անցնելով ու նայելով միայն ճշմարտության աչքերին՝ հարկ ենք համարում հղում անել Մեծն Հ. Թումանյանի Հայաստանի անկախության մասին մի գրառմանը, որն արել է նորահռչակ ՀՀ առաջին տարում (1918 թ.)՝ թուրքական օղակման, սովի, համաճարակների ու տնտեսական քայքայվածության անելանելի վիճակից մղված: «Այո՛, անկախութիւնը լավ բան է: Դրա մասին չխօսենք: Բայց եթե յինքը հայ ժողովուրդը ֆիզիկապես, ֆինանսապես, բարոյապես անկարող է իւր անկախութիւնը պաշտպանելու, ոչ մի պետութիւն էլ յանձն չի առնում նրան յովանավորելու եւ պաշտպանելու,- ինչ պէտք է անկախութիւնը, եթե այն թոկ է ու մի փոքրիկ վանդակ է դառնալու թուրք ոսոխի կողմից շրջապատուած»[101]: Սակայն, կարծում ենք, Հ. Թումանյանի այդ ինքնագիր գրառումը ոչ մի կերպ չի կարող նսեմացնել բոլոր չափումներով նրա անսահման մեծությունը հայոց անկախ պետականության հարցում: Դա պարզապես եղել է ժողովրդի աղետալի կացության ու ժամանակի սոցիալ-քաղաքական ծանր ապրումների մի արտահայտություն, ինչը կարող է պատահել ցանկացած անհատի, այդ թվում՝ Հ. Թումանյանի նման մեծության մոտ:

Արժևորելով ու գնահատելով ազատության և անկախ պետականության գաղափարի անանց նշանակությունը, միաժամանակ հարկ է արձանագրել, որ հայ հասարակական-քաղաքական և անգամ գրական շրջանակներում միանշանակ ու անվերապահ չի եղել հայոց անկախ պետականության վերականգնման պահանջ-գաղափարը: Աշխարհամարտի տարիներին հայ մեծ քնարերգու Վ. Տերյանը հանդես եկավ «Հոգևոր Հայաստան» ծավալուն հոդվածով, որում առաջ քաշված հիմնական գաղափարն այն էր, որ հայ ժողովրդի գոյության և հարատևման նեցուկը նրա հոգևոր կյանքի՝ լեզվի, գրականության, պատմության և այլ արժեքների պահպանումն ու զարգացումն է: Վ. Տերյանը, տարված լինելով բոլշևիկյան ազգ ու հայրենիք չճանաչող մարքս-լենինյան դասակարգային-կոմունիստական սին գաղափարական կա-

[101] Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Թումանյանի ֆոնդ, թիվ 347, (1918 թ.), թ. 1:

ղապարներով, մեծ տառապանքներ տեսած հայության համար առաջին պլան էր մղում «**Հոգևոր Հայաստանի**» գաղափարը, այն է՝ ո՛չ թե քաղաքական, իրական, ֆիզիկական Հայրենիք–Հայաստան ունենալը, այլ, ըստ ամենայնի, դրա տակ հասկացվում էր Ռուսաստանի հովանու տակ ամբողջ հայության համար կուլտուրական ապագայի ապահովումը, այսինքն՝ հայ ազգի «Հոգևոր Հայաստանի» գաղափարական իմաստով հավաքումը, կազմակերպումը, պահպանումը և զարգացումը: Այս կապակցությամբ տեղին է նկատել ճանաչված գրականագետ ու գրաքննադատ Ս. Սարինյանը, որ Վ. Տերյանի կողմից նյութական, ֆիզիկական, իրական Հայաստանի գաղափարի ժխտումը հանգեցրել է «պատմափիլիսոփայական իդեալիզմի ու նիհիլիզմի (ժխտողականության)»[102]:

Վ. Տերյանը, շեշտը դնելով «Հոգևոր Հայաստանի» վրա, կարևորություն չէր տալիս այն ազգությանը, որ «արտաքին սահմաններով է պահպանում իր ինքնությունը»[103]: Քաղաքագետ դարձած քնարերգու բանաստեղծը, այդպիսի հոգևոր հայրենիք ակնարկելով, ինչպես ասվեց, ըստ ամենայնի նկատի ուներ Ռուսաստանը: «Մեր հայրենիքը Ռուսիան է,- գրում է Տերյանը,- և նրա ծոցում է, որ կամենում ենք առաջ տանել ու պահպանել մեր կուլտուրան»[104]: Իսկ նման միտք արտահայտելիս Վ. Տերյանը հավանաբար իր մտադաշտում ունեցել է XIX դարի հայ ականավոր հրապարակախոս Ստ. Նազարյանցի քանիցս հիշատակված հայտնի արտահայտությունը, թե «**Հայերս քաղաքական մտքով ռուս ենք**»[105]: Այլ խոսքով, Վ. Տերյանը պաշտպանում էր ոչ թե անկախ պետականության, այլ Ռուսաստանի կազմում կուլտուր-ազգային ինքնավարության պահանջը, այն է՝ «ունենալ մեր ինքնուրույն կուլտուրան, մեր ստեղծագործական բաժինը հանուր մարդկային ստեղծագործության մեջ»[106]: Այս համատեքստում զարմանալի չէ, որ լենինյան դպրոցն անցած հայ բոլշևիկների առաջնորդ Ստ. Շահումյանը «պե-

---

[102] Տե՛ս **Սարինյան Ս.**, *նշվ. աշխ.*, էջ 82:
[103] **Տերյան Վ.**, *Երկերի ժողովածու*, հ. 2, Եր., 1961, էջ 480:
[104] Նույն տեղում, էջ 334:
[105] **Նազարեանց Ստ.**, *Երկեր*, հ. 1, էջ 334:
[106] **Տերյան Վ.**, *Երկերի ժողովածու*, հ. 2, էջ 275–276:

տություն» հասկացության պես դասակարգային բովանդակությամբ «ազգն ու ազգությունն» էլ էր դիտում ոչ «բնական», այսպես ասած՝ «անցողական» երևույթ: Նա ազգը չէր համարում որպես քաղաքական կատեգորիա[107]:

Կամա թե ակամա, անդրադառնալով ազգային հարցում բոլշևիկների կուսակցության դիրքորոշմանը, հայտնի է, որ 1903 թ. ՌՍԴԲԿ 2-րդ համագումարում կուսակցության ընդունած առաջին ծրագրի 9-րդ կետով հռչակվում էր Ռուսաստանի նման բազմազգ պետության կազմում գտնվող բոլոր ազգերի **ինքնորոշման** իրավունք[108]: Համագումարում, իսկրայական (բոլշևիկ-լենինյան) թևին հակառակ, առավել չափավոր մարտովականները, հրեական Բունդը[109] և լիկվիդատոր որակված Լև Տրոցկին (տրոցկիստները), որոնց հենց այդ համագումարում սկսեցին կոչվել մենշևիկներ (փոքրամասնականներ), ազգային հարցում պաշտպանեցին ավստրիական սոցիալիստների մշակած **ազգային-մշակութային ինքնավարության** ծրագիրը: Լենինյանները մերժեցին այդ պահանջը՝ այն որակելով ռեակցիոն, քանզի իրենց պատկերացմամբ դա կխոչընդոտեր բանվորների (պրոլետարիատի) ու աշխատավորների մերձեցմանն ու ինտերնացիոնալ միասնությանը, դրանով իսկ կվնասեր համաշխարհային մասշտաբով սոցիալիստական հեղափոխության հաղթանակի գործին:

Այդ հարցը առավել սուր բնույթ ստացավ Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 1912–1914 թթ., որի քննարկումներին, ի դեպ, ակտիվ մասնակցություն է հանդես բերել գործնականում հայ բոլշևիկների առաջնորդ **Ստ. Շահումյանը** (1878–1918 թթ.): Բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինի հավատարիմ զինակից Ստ. Շահումյանը «Այաքս» ծածկանունով իր հայտնի աշխատություններից մեկում՝ «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1914 թ. հունիս), քննադատում էր ազգային նկարագրով սոցիալիստ Դ. Անանունին (Շահումյանի բնորոշմամբ՝

---

[107] Տե՛ս **Շահումյան Ստ.**, *ԵԼԾ*, հ. 1, Եր., 1975, էջ 253–254:

[108] Տե՛ս *ԽՍՄԿ պատմություն, 5-րդ հրատ.*, դեկ. **Բ. Պոնոմարյով**, Եր., 1981, էջ 67–68, նաև՝ *Хрестоматия по истории России*, с. 346.

[109] Ռուսաստանի, Լեհաստանի և Լիտվայի հրեական սոց.-դեմ. բանվորական միություն:

«սոսկ նացիոնալիստ, որ նա ազգային հարցում պաշտպանում է ոչ թե բոլշևիկյան ազգերի ինքնորոշման, այլ «մի վնասակար ու հետադիմական ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը»[110]: Ստ. Շահումյանը ավելի խիստ տոնայնությամբ քննադատել է դարձյալ սպեցիֆիկ, իր իսկ բնորոշմամբ՝ «բախտախնդիր» և «քրեական տիպ» Բ. Իշխանյանին[111]: Դ. Անանունը 1910-ական թթ. Հայկական հարցի վերաբացման շրջանում գտնում էր, որ արևմտահայությունը, ապրելով Թուրքիայում, «պետք է դնե ազգային-մշակութային ինքնավարության պահանջ, մանավանդ որ Ազգային սահմանադրությունն արդեն հարթել է ճանապարհ»[112]: Սպեցիֆիկյան տեսաբանը ևս պաշտպանում էր Հայաստանի երկու հատվածներում էլ իր բովանդակությամբ քաղաքակիրթ ու չափավոր ազգային-մշակութային ինքնավարության ծրագիրը, քանզի երիտասարդ պատմաբան Վ. Հակոբյանի դիտարկմամբ՝ նա դեռ անիրական էր համարում հայոց պետականության վերականգնումը: Բայց, ինչպես հայ հասարակական-քաղաքական մտքի շատ ներկայացուցիչներ, նա ևս հոգու խորքում կրում էր պետականության վերականգնման նվիրական գաղափարը: Եվ պատահական չէ, որ պետականության վերականգնումից հետո, հաստատվելով ՀՀ-ում, նա դարձավ ազգային պետականության կերտման ակտիվ մասնակիցներից մեկը, և անգամ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի ջերմ պաշտպան[113]:

Այդպիսով, կարելի է արձանագրել, որ հայ ազգային նկարագիր ունեցող գրեթե բոլոր կուսակցությունները և հասարակական-քաղաքական շրջանակները, դարասկզբի շատ բարդ ժամանակաշրջանի ու հանգամանքների հրամայականով, պաշտպանում էին Հայաստանի ինքնավարության պահանջը Հայաստանի երկու հատվածների համար, ինչպես ասվեց՝ համապատասխանաբար Թուրքիայի և Ռուսաստանի կազմում, որն իր բովանդակությամբ նմանվում էր կուլտուր-ազգային

---

[110] **Շահումյան Ստ.**, *ԵԼԺ*, հ. 2, Եր., 1976, էջ 375:

[111] Տե՛ս նույն տեղում, էջ 374:

[112] **Անանուն Դ.**, *Հայութեան հավաքումը*, III (տե՛ս «Մշակ», 1914, 19 հոկտեմբերի (թիվ 236):

[113] Տե՛ս **Հակոբյան Վ.**, *Դավիթ Անանուն*, էջ 98:

ինքնավարության պահանջի: «Մեզանում չկա մի կուսակցություն,- գրում է Ստ. Շահումյանը,- կղերական թե բուրժուական, «խավարամիտ» թե «ազատամիտ», որ կողմնակից չլինի ազգային-կուլտուրական ավտոնոմիային»[114]:

Ընդհանրապես, ազգային-մշակութային ինքնավարության պահանջի հարցում հարկ է տարբերակել ինքնավարության երկու մոտեցում-տարբերակ՝ **արտատարածքային** (էքստերիտորիալ) և **տարածքային**: Առաջինի ընդունման դեպքում տվյալ ազգային փոքրամասնություն հանդիսացող միավորի համար ստեղծվում (ապահովվում) են պայմաններ նրա ազգի, լեզվի, կրթության, խղճի, ազգային-մշակութային կյանքի անխոչընդոտ զարգացման համար տվյալ **բազմազգ պետության շրջանակներում,** որտեղ էլ որ նրանք խմբված կամ ցրված ապրելիս լինեն: Տվյալ դեպքում այստեղ խոսքը վերաբերում էր **արտատարածքային** ազգային-մշակութային ինքնավարության պահանջին:

Մինչդեռ, **տարածքային** ազգային-մշակութային ինքնավարության պարագայում հատուկ ամրագրվում է տվյալ ազգային միավորի հստակ ազգային-տարածքային այն սահմանները, որտեղ նա պատմականորեն, իրավապես, ժողովրդագրական, հոգևոր-մշակութային և այլ առումներով ժամանակին ապրել ու շարունակում են ապրել ու արարել, ինչպես, օրինակ, համարվել ու համարվում է Արցախը: Այլ կերպ, այստեղ արդեն խոսքը վերաբերում է տվյալ ազգային (էթնիկ) միավորի՝ իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքի մասին: Ի տարբերություն արտատարածքային ինքնավարությանը, դժվար չէ նկատել, որ տարածքային ինքնավարությունն արդեն իր մեջ **քաղաքական** որոշակի իմաստ ու բովանդակություն (հրապարակախոս Ստ. Նազարանցի արտահայտությամբ՝ «**քաղաքական անօթ**») էր պարունակում, ինչը իրավաքաղաքական հետագա էվոլյուցիոն զարգացումների հետևանքով կարող է հանգեցնել ազգային-պետական նոր, ավելի բարձր կարգավիճակի, այսինքն՝ **դաշնության** (**ֆեդերացիայի**) և **անկախության**: Ընդ որում, տարածքային ինքնավարության պարագայում, տարբեր

---

[114] **Շահումյան Ստ.,** *ԵԼԺ,* հ. 2, Եր., 1976, էջ 373:

պատճառներով արտագաղթած հայությանը հնարավորություն էր տրվելու վերադառնալ և հաստատվել իր բուն հայրենիքում:

Այստեղ մենք հիմքեր ունենք առարկելու ազգային-մշակութային ինքնավարության հարցում հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշմանը Ստ. Շահումյանի տված բնորոշմանն ու գնահատականին: Բանն այն է, որ հայ մեծագույն բոլշևիկը շփոթել է ազգային-մշակութային ինքնավարության հարցում **արտատարածքային** և **տարածքային** ինքնավարության հանգամանքը: Ինչպես արդեն վերը նշվել է, հայ ազգային գրեթե բոլոր կուսակցությունները, բացի քաղաքականից, հանդես էին գալիս մշակութային և այլ պահանջով: Նրանք օտար հողում (էքստերիտորիալ) ազգային-մշակութային ինքնավարության առանձնապես կարիք չէին տեսնում, այլ իրենց նպատակն էր հայության հավաքումը մայր հողում, որը հետագայում քաղաքական հիմք կհանդիսանար ազգային **պետականության ու անկախության** վերականգնման համար:

Ամփոփիչ կարգով նշենք, որ հայ ազգային նկարագիր ունեցող քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, հատկապես արևմտահայության ճակատագրի հարցում, աշխարհամարտի շեմին ևս հիմնականում պաշտպանում էին տարածքային ինքնավարության պահանջը, որում բացառապես նկատի էր առնվում Արևմտյան Հայաստանը, իսկ Ս.Դ. Հնչակի պարագայում, ինչպես արդեն ասվել է, նաև Հայկական Կիլիկիան: Հիշեցնենք, որ նախընթաց՝ Հայկական հարցին վերաբերող 16-րդ և 61-րդ հոդվածների, 1895 թ. մայիսի 11-ի, 1914 թ. հունվարի 26-ի միջազգային մակարդակով ծրագրված ռեֆորմ-բարենորոգումներ-համաձայնագրերը և այլն վերաբերել են բացառապես հայոց բուն հող-հայրենիքը հանդիսացող Արևմտյան Հայաստանին:

Ինչ վերաբերում է ազգերի **ինքնորոշման** մասին բոլշևիկների հռչակած ու պաշտպանած ազգային հարցի լուծման առաջնային (գլխավոր) համարվող, արտաքուստ շատ հնչեղ ու գրավիչ այդ պահանջին, ապա կյանքը ցույց տվեց, որ այդ դրույթ-կարգախոսն ընդամենը ունեցել է **դեկլարատիվ**, զուտ քաղաքական-քարոզչական նպատակ: Ասվածի ապացույցներից են 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաս-

տանի նորահռչակ խորհրդային կառավարության (Ժողկոմխորհի) ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական (Դրո-Լեգրան) համաձայնագիրը, այնուհետև, 1922 թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ կազմավորման մասին համապետական օրենքն ու հռչակագիրը, ԽՍՀՄ երեք՝ 1924 թ., 1936 թ. և 1977 թ. սահմանադրությունները և այլն, որոնցում բարձրագոչ խոսվում (հռչակվում) էին ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, բայց իրականում ոչ միայն կյանքի չէր կոչվում լենինյան համարվող այդ պլանծրագիրը, այլ մեծագույնս հետապնդվում ու հալածվում էր ի հայտ եկած նման ամեն մի մտայնություն:

Այս համատեքստում, առավել ևս քննություն չէր կարող բռնել բանաստեղծ Վ. Տերյանի առաջ քաշած, գործնականում վերացական համարվող, կենդանի հայրենի հողից կտրված «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը: Քաղաքական դիսկուսի առումով, մեզանում որքան օտար ու անհաղորդ կարող են հնչել տերյանական «Հոգևոր Հայաստան» բովանդակող մտքերը՝ արդի տարածաշրջանային իրողությունների լույսի տակ: Ինչպես քանիցս ասվել է, յուրաքանչյուր ազգի, նրա հոգևոր ու մշակութային ստեղծագործ արարման ու զարգացման ամենաապահով և հուսալի հիմքն ու երաշխիքը կարող է լինել միայն իր իրական, նյութական հայրենիքը, ինչի շուրջ հատկապես Առաջին աշխարհամարտի պայմաններում միջազգային քննարկումների և մինչև իսկ ռազմական գործողությունների նյութ ու արենա էր դարձել: Այս կապակցությամբ տեղին է հիշեցնել հայ մեծ մտավորական, Առաջին հանրապետության կրթության նախարար Նիկ. Աղբալյանի (Հանգույցի) դիտարկումն այն մասին, որ «Ամեն ազգ պէտք է իր **քաղաքական հայրենիքն** (ընդգծումն մերն է՝ Ա.Հ.) ունենա»[115]: Իսկ տարիներ անց Մեծն Գ. Նժդեհը դարձյալ խոսում էր «Հոգևոր Հայրենիք»-ի հաստատուն մնայունության մասին, որ, թերևս, «նաճելի է նիւթական Հայրենիքը, բայց հոգեւորը՝ գրեթէ ոչ»[116]: Պետք է նկատի առնել, որ Թուրքիան հայ ազգի հայրենիք Հայաստանը նվաճել էր միայն **ֆիզիկապես**, բայց ոչ **հոգեպես**: Եվ

---

[115] **Հանգոյց Ն.**, *նշվ. աշխ.*, էջ 89:
[116] **Նժդեհ Գ.**, *Հատընտիր*, էջ 115:

գտնում ենք, որ այս գաղափարը պիտի համոզմունք դառնա մեր և հետագա սերունդների համար:

1914 թ. Առաջին աշխարհամարտը տակնուվրա արեց ամեն ինչ. երիտթուրքերի մշակած նախնական ծրագրով արևմտահայությունը վերածվեց մեծ եղեռնի փորձադաշտի, որի հետևանքով հարյուր հազարներով զոհ գնացին մահվան բոլոր ձևերով, իսկ հարյուր հազարներ բնավեր եղած՝ տեղահանվելով հայտնվեցին մահվան ճամբարներում կամ էլ մազապուրծ լինելով՝ աշխարհասփյուռ գաղթական դարձան: Այս առնչությամբ Լեոյից հետո հայ մյուս ականավոր հայագետ-պատմաբան Ն. Ադոնցը, իբրև Հայկական հարցի ամփոփիչ **վերջաբան,** 1918 թ. գարնանը գրում էր. «Ոչ մի պատմական հիմնահարց այնքան ողբերգական ճակատագիր չի ունեցել, որքան Հայկական հարցը»[117]: Սա նշանակում էր, որ Հայկական հարցի, բարենորոգումների, էլ չենք խոսում՝ անկախության խնդրի լուծումը Արևմտյան Հայաստանի համար կարծես դառնում էր առոչինչ: Ն. Ադոնցն այդ խոսքերն ասում էր այն ժամանակ, երբ մեկ-երկու ամից անց, դեպքերի ու իրադարձությունների տրամաբանական ու հաճախ էլ անսպասելի զարգացումներով, անկախության հիմնահարցը պիտի առարկայանար Արևելահայ հատվածում:

Եվ իրոք, հանգամանքները այնպես զարգացան, որ անկախության տեսլականը սկսեց նյութականացվել Արևելահայ հատվածում: Մի կողմից՝ Աշխարհամարտը, որպես քաղաքական իրադարձությունների արագացուցիչ, իսկ մյուս կողմից՝ 1917 թ. ռուսական երկու հեղափոխությունները, որոնք տակնուվրա արեցին Ռուսաստանի ռազմաքաղաքական կայունությունը: Դրա հետևանքով մյուս ռազմաճակատների պես սկսեց քայքայվել ու կազմալուծվել նաև Կովկասյան ճակատը, ռուսական բանակի հարյուր հազարավոր զինվորներ լքեցին ճակատը և շտապեցին վերադառնալ տուն՝ ստանալու համար իշխանության ղեկին հայտնված բոլշևիկների խոստացած հողը, հացը, գործարանը, ազատությունը: Օգտվելով ստեղծված նպաստավոր պայմաններից՝ 1918 թ. հունվարի վերջին թուրքական բանակը Կովկասյան ռազմաբեմում ան-

---

[117] **Ադոնց Ն.,** *Երկեր,* հ. Ա, էջ 55:

ցավ ընդհանուր հարձակման, Անդրկովկասը հայտնվեց Ռուսաստանից մեկուսացված վիճակում: Ապրիլի 9 (22)-ին իր ինքնիշխանությունը (հայ, վրացի, կովկասյան թյուրք-թաթար) հռչակած Անդրկովկասյան Դաշնային Հանրապետությունը, ներքին պառակտիչ վեճերի ու տարբեր քաղաքական կողմնորոշումների պատճառով, փլուզվեց և 1918 թ. մայիսի 26-ին այդ դաշնության փլատակների վրա արևելահայ մի փոքր հողահատվածում (10-12 հազ քառ. կմ) վերականգնվեց հայոց պետականությունը, հռչակվեց Հայաստանի անկախությունը:

* * *

Բայց մինչ այդ, աշխարհամարտի պայմաններում, 1917 թ. ռուսական երկու՝ Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխություն-հեղաշրջումները շատ մեծ փոփոխություններ ու տեղաշարժեր առաջացրին ռուսաստանյան հսկայածավալ կայսրությունում, այդ թվում՝ Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում: 1917 թ. ռուսական հեղափոխությունների միջակայքում նրա բանակը գրավել էր գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը և դրանով փաստորեն ստացվեց այնպես, որ Հայաստանի երկու՝ արևելյան և արևմտյան հատվածները հայտնվեցին մեկ տերության՝ Ռուսաստանի հսկողության տակ: Այդ ժամանակափուլում հայ իրականության ամենակշռելի և ազդեցիկ, Երկրորդ սոցինտերնի անդամ ՀՅԴ կուսակցությունը, հանդես բերելով քաղաքական չափավորություն և ընդառաջ գնալով Ռուսաստանի ամբողջատիրական շահերին, Ստոկհոլմում գումարված սոցիալիստական տիպի կուսակցությունների միջազգային համաժողովում (կոնֆերանսում), ՀՅԴ անունից հանդես եկած Ստ. Զորյանը (Ռոստոմ), Հայոց Մեծ եղեռն տեսած արևմտահայության քաղաքական ճակատագրի վերաբերյալ, ինքնորոշման իրավունքի հիման վրա պաշտոնապես հայտարարեց հետևյալը, որ «Մինչ կոտորածը մենք ցանկանում էինք միայն ինքնավարություն թուրքերի ենթակայության տակ, բայց կոտորածից հետո դա անհնարին է»: Ուստի, Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցում առաջ քաշվեց «Ազատ Հայաստանի» գաղափարը, այսինքն, թուրքական

տիրապետությունից ազատ Թուրքահայաստանի անկախություն[118]: Իսկ Արևելահայաստանի հարցում առաջ քաշվեց ավելի չափավոր պահանջ՝ Ռուսահայաստանին, Վրաստանի և Անդրկովկասյան Թաթարստանի հետ տրվի ինքնավարություն՝ դաշնակցային ու հանրապետական Ռուսաստանի հովանու տակ[119]:

1917 թ. հասարակական-քաղաքական ասպարեզ իջավ հայ ազգային մի նոր կուսակցություն, այն է, մարտ ամսին «Մշակ»-ի շուրջ համախմբված արևելահայ ազատական գաղափարակիր շրջանակները կազմակերպչորեն միավորվերով հիմնեցին Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ): Նրա հիմնադիր անդամները դարձան Մ. Պապաճանյանը, Ս. Հարությունյանը, Ստ. Մալխասյանը, Տ. Հախումյանը և ուրիշներ: Իրականում ՀԺԿ-ը պատմագրության մեջ որակվում է որպես Փետրվարյան հեղափոխության ծնունդ: Պետականության գաղափարի հարցում կուսակցությունը իր գլխավոր նպատակն էր համարում «պաշտպանել բովանդակ հայ ժողովրդի իրավունքները և ծառայել նրա ազգային մշակույթի ու **պետականության զարգացմանը**»[120]: Ավելին, հետագայում, երբ նպաստավոր գործընթացների բերումով, օրակարգ բարձրացավ Միացյալ Հայաստանի գաղափարը, ՀԺԿ ծրագրի Բ մասում հավելվեց՝ «Հայաստանի անջատված մասերից (նկատի էր առնվում Արևելյան և Արևմտյան Հայաստանները – Ա.Հ.) ստեղծել **Միացյալ** և **Անկախ Հայաստան**՝ իր սեփական ծովային ելքով»[121]: Փաստենք, որ կարճ ժամանակամիջոցում ՀԺԿ-ը՝ ՀՅԴ-ից հետո երկրորդ ազդեցիկ կուսակցությունն էր, որը հետևողականորեն պաշտպանեց ոչ միայն հայոց անկախ ազգային պետականության գաղափարը: Եվ պատահական չէր, որ իբրև երկրորդ ազդեցիկ քաղաքական ուժ, նա հետագայում տեղեր զբաղեցրեց ՀՀ խորհրդարանում և մի պատմափուլում մաս կազմեց Հայաստանի կառավարության:

---

[118] **Հովհաննիսյան Մ.**, *Հայոց անկախ պետականության վերականգնման խնդիրը 1917–1918 թթ. ՀՅԴ-ՌՍԴԲ(բ)Կ հարաբերությունների համատեքստում* (տե՛ս Հայագիտության հարցեր» (ԵՊՀ), Եր., 2018, թիվ 2, էջ 5–6:

[119] **Խուրշուդյան Լ.**, *Հայ ժողովրդավարության քաղաքական ուղեգիծը 1917–1918 թթ.*, (տե՛ս «Լրաբեր», Եր., 1993, թիվ 3, էջ 4):

[120] *Հայ Ժողովրդական Կուսակցության ծրագիր*, Եր., 1919, էջ 1:

[121] Նույն տեղում, էջ 3:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ ժողովրդավարական ուղի բռնած Ռուսաստանում հայ ազգային քաղաքական շրջանակները՝ ՀՅԴ առաջնորդությամբ, ռազմաքաղաքական իրադրության փոփոխությամբ պայմանավորված, քայլ կատարեցին իրացնելու «ազգերի ինքնորոշման» պահանջ-իրավունքը: Արևելահայ հասարակական-քաղաքական կյանքի կենտրոն հանդիսացող Թիֆլիսում 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին բազմակուսակցական սկզբունքով, Ա. Ահարոնյանի նախագահությամբ գումարված Արևելահայոց համագումարում (համախորհրդակցությունում) առաջնային հարցերից մեկը հանդիսացավ ապագա Հայաստանի պետականության ինքնակազմակերպման հարցը: Կարելի է ասել, որ Արևելահայոց համագումարը դրեց ազգային պետականության գաղափարի նյութականացման առաջին հիմնաքարը: Համահայկական խորհրդակցությունն ընդունեց հետևյալ առանցքային բանաձը. «Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը **պետականության հիմունքներով և սկզբունքներով** (ընդգծումը՝ Ա.Հ.), անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»[122]: Բերված քաղվածքը ցույց է տալիս, որ արևելահայ հասարակական-քաղաքական կյանքի ներկապնակը ներկայացնող Արևելահայոց համաժողովը բնաշրջում (էվոլյուցիա) ապրելով՝ հայ ժողովրդին արդեն կողմնորոշում էր դեպի սեփական ազգային պետականության գաղափարի ազատ իրացում:

Պետք է արձանագրել, որ այդ գաղափարի իրավաքաղաքական ամրակայմանը, կամա թե ակամա, իր նպաստը բերեց նաև բոլշևիկների 1917 թ. Հոկտեմբերյան պետական հեղաշրջմամբ նոյեմբերի 2-ի՝ «Աշխատավոր և շահագործվող ժողովուրդների իրավունքների դեկլարացիան»[123]: Հենց այդ իրավաքաղաքական մթնոլորտի ու մտայնությունների պայմաններում, իբրև վերը ասվածների տրամաբանական շարունակություն, և թող զարմանալի չթվա՝ դաշնակցական, բոլշևիկ և էսէռ գործիչների՝ Ռոստոմի (Ստ. Զորյան), Հ. Զավրիյանի, Ստ. Շահում-

---

[122] *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)*, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբ.՝ **Ա. Վիրաբյան**, Եր., 2004, էջ 211:

[123] Տե՛ս *Декреты Советской власты*. Т. I, М., 1957, с. 140–141.

յանի, Վ. Տերյանի, Պ. Պոռշյանի ջանքերով կազմվեց «Թուքահայաստանի ինքնորոշման մասին» հայտնի դեկրետի (հրովարտակի) նախագիծը[124], որը 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունվեց և դեկտեմբերի 31-ին հրապարակվեց Ռուսաստանի նորահռչակ խորհրդային կառավարության (ԺԿԽ) կողմից, իսկ 1918 թ. հունվարի 15-ին այն հաստատվեց Խորհուրդների համառուսաստանյան 3-րդ համագումարում: Խորհուրդների համագումարը բուն Ռուսաստանի համար երաշխավորում էր նրանում ապրող բոլոր ազգերի միավորում ֆեդերացիայի (դաշնության) մեջ, որը պիտի մարմնավորում ստանար 1922 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ կազմավորմամբ[125]:

Միջազգային քաղաքական հող ստեղծելու առումով չի կարելի աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ այն ժամանակվա աշխարհի հիմնական դերակատարներ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը հանդես եկան սպասվելիք պատերազմի ավարտին նոր աշխարհակարգի և ճնշված ու հարստահարված ժողովուրդների ազատագրության ու նրանց ինքնիշխանության երաշխավորման կարգախոսներով: Այստեղ խոսքը վերաբերում էր առաջին հերթին արևմտյան քաղաքակրթությանը խորթ Օսմանյան կայսրության մասնատմանը (պատժելուն): 1918 թ. հունվարի 5-ին Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջը (1916–1922 թթ.), իր կառավարության անունից հանդես գալով հայտարարությամբ, Թուրքիայի հետագա ճակատագրի հարցում նշում է, որ Թուրքիայի պարտության պարագայում, նեղուցների միջազգայնացումից զատ, «նախատեսվում է ճանաչել հատուկ ազգային պայմաններ Արաբիայի, **Հայաստանի,** Միջագետքի, Սիրիայի և Պաղեստինի[126]: Վարչապետ Լլոյդ Ջորջի հայտարարությունից երեք օր անց ԱՄՆ-ի նախագահ

---

[124] Հանձնաժողովի կազմած զեկուցագրով՝ Արևմտյան Հայաստանը պետք է դառնար անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանը մնար Ռուսաստանի կազմում՝ ներքին ինքնավարության կարգավիճակով:

[125] Տե՛ս *Декреты Советской власты.* Т. I, М., 1957, с. 298–299, Съезды Советов в постановлениях и резолюциях (сборник документов), М., 1939, с. 45.

[126] **Ллойд Джордж Дэвид.**, *Правда о мирных договорах,* т. 2, М., 1957, с. 10–11. Ի դեպ, դրանից մի երկու ամիս առաջ՝ 1917 թ. նոյեմբերի 2-ին, Անգլիայի ա. գ. նախարար Ա. Բալֆուրը հրապարակել էր հռչակագիր՝ Պաղեստինում հրեական «Ազգային օջախ» ստեղծելու վերաբերյալ:

Վուդրո Վիլսոնը հանդես է գալիս դարձյալ հետպատերազմյան կարգավորումներին վերաբերող իր հանրահայտ ծրագրային 14 կետերով, որի 12-րդ կետով արձանագրվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների լիակատար ինքնիշխանության և ինքնավար զարգացման ամենալայն հնարավորություն[127]:

Բերված փաստաթղթերը բավարար իրավական հիմք էին ստեղծում ազգերի ազատ ինքնորոշման հիմունքներով գնալու անկախ պետականության գաղափարի իրացմանը, եթե ոչ հայաթափված Արևմտյան Հայաստանում, ապա գոնե հայակուտակ Արևելյան Հայաստանում: Եվ այդ տեսլականի իրացումը պիտի նյութականացվեր և իրականություն դառնար, հատկապես 1915 թ. ցեղասպանություն տեսած ժողովրդի, դրանից հետո դեռևս ամիսներ տևող դժվարին ոգորումների ու պայքարի և, առաջին հերթին, սպասվելիք 1918 թ. հունվարից դեպի Անդրկովկաս ու Արևելյան Հայաստան թուրքական զորքերի ներխուժման (ինտերվենցիայի) պայմաններում: Ի վերջո, անկախության գաղափարից դեպի մարտադաշտը տանող Մայիսյան՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, նաև Ղարաքիլիսայի հաղթական ճակատամարտերը գործնականում ուղի հարթեցին «Մայիսի 28-ի» առարկայական հանգրվանին՝ դարերով սպասված հայոց անկախ պետականության գաղափարի իրական նյութականացմանը՝ **Հայաստանի Առաջին Հանրապետության** հռչակմանը: Տեղին է արձանագրել, որ Հայաստանի անկախությունը ձեռք բերվեց հայ քաղաքական շրջանակների մեծագույն ճիգուջանքերով ու վիթխարի մարդկային կորուստներով ու զոհողություններով, ըստ էության, առանց արտաքին ուժերի, այդ թվում՝ հայ ժողովրդի դարերով ակնկալած Ռուսաստանի որևէ օգնության ու աջակցության:

Հայոց (կենտրոնական) Ազգային խորհրդի 1918 թ. «**Մայիս 28**»-ի պատմական վճիռը ազդարարեց. ա) դարերով պետականազուրկ Հայաստանի, թեկուզ և փոքր հողատարածքի վրա (Մեծ Հայքի 1/10-րդ մասում), քաղաքական անկախության՝ Հայաստանի Հանրապետութ-

---

[127] *История дипломатии*, т. 2 (1872–1919 гг.), под ред. **В.П. Потемкина**, М.-Л., 1945, с. 366–367.

յան ծնունդը, իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ հանդես գալը, բ) «Մայիսի 28»-ի պատմական խորհրդով սկսվում է Հայոց պատմության նորագույն դարաշրջանը՝ նոր բովանդակությամբ ու արժեհամակարգով Հայոց պետականությունների կերտման նոր շրջափուլ: Մեծին Տանն Կիլիկիոյ կաթողիկոս, մեծապատիվ Տեր Արամ Ա-ի խոսքով՝ Մայիսի 28-ի խորհուրդը ամբողջական «**Հայաստանի տեսիլքին վերականգնումն**» էր, որով սկսվում էր «**հայակերտումի** ու **հայրենակերտումի** դարաշրջանը»[128]:

[128] **Արամ Ա. Կաթողիկոս,** *Ազգ, Եկեղեցի, Հայրենիք,* Անթիլիաս, 1999, էջ 54, 56:

# ՎԵՐՋԱԲԱՆ

**Այսպիսով,** հին և միջնադարյան Հայոց պետականությունների անկումից հետո որոշ ընդհատումներով ընթացել է հայ ժողովրդի գաղափարական պրպտումների, ազատագրական շարժումների ու պայքարի մի **ամբողջական շղթա**, որը սկիզբ առնելով XVI դարի կեսերից և ձգվելով դարերի միջով, ընթանալով վայրիվերումներով, հայ հասարակական-քաղաքական մտքի, հոգևոր և աշխարհիկ գործիչների քաղաքական ծրագրերով ու տարակողմնորոշումներով, ժողովրդի մեծ տառապանքներով ու զոհողություններով, հասավ XX դարասկիզբ և, ի վերջո, գերմարդկային ճիգերով նշանավորվեց թեկուզև մի փոքր հողատարածքի վրա Հայոց անկախ պետականության վերականգնումով:

Դարերի պատմության «историзм»-ի (պատմականության) հաշվառման սկզբունքով, ամփոփելով վերոշարադրյալ տարողունակ նյութը՝ կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների.

– Տակավին ուշ միջնադարում՝ Հայոց պետականությունների կորստից հետո, հայ հոգևոր և աշխարհիկ գործիչները, հայ հասարակական-քաղաքական միտքը իրենց «Դաշանց թղթերով», «Տեսիլք»-ներով ու քաղաքական դեգերումներով, իսկ XIX դարի վերջերից արդեն հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ հրապարակ բերած ազատագրական ծրագրերով, ռազմավարությամբ ու մարտավարությամբ, ուղիներ են որոնել, դիմել հաճախ անհավասար պայքարի ու զոհողությունների՝ հայ ժողովրդի ու Հայրենիքի ազատության և անկախ պետականության վերականգնման համար: Պատմափիլիսոփայական ու քաղաքագիտական պարզ ու մնայուն թեորեմ է այն հասկացությունը, որ **ազատությունն** ու **անկախությունը** համարվում են յուրաքանչյուր արժանապատիվ ազգ-ժողովրդի գերնպատակը, նրա կենսունակության, հոգևոր ու բարոյական ամենաբարձր ցուցիչը:

– Հիրավի, ազատությունն ու անկախությունը քաղաքակրթության ձգտող յուրաքանչյուր ազգ-ժողովրդի համար գերագույն արժեքներ են: Հին և միջին դարերում պետականությունների հարուստ (5–6) ընտրանի ստեղծած հայ ժողովրդի համար մեծագույն աղետ էր հետագա դա-

ռաշրջանում, արտաքին ու նաև ներքին աննպաստ գործոններով պայմանավորված, Հայոց անկախ պետականությունների կորուստը: Դարձյալ մտաբերենք մեր ժամանակներում հայ քաղաքական մտքի դասական դարձած Մեծն Գ. Նժդեհին՝ «կորցնել պետական անկախությունը», կնշանակի՝ «կորցնել բնականոն գոյության կարելիությունը»[1]: Սակայն, դրա հետ մեկտեղ, դարերի ընթացքում մեզանում գործել են պետական իշխանության կառավարման տարբեր ձևեր՝ նախարարական իշխանություններ, իշխանապետություններ, տեղական ինքնավար թագավորություններ, մելիքություններ և այլն: Այս իմաստով կարելի է ասել, որ Հայոց գրեթե հինգհազարամյա պատմության ընթացքում առկա է եղել, մի տեսակ, հայկական պետականությունների շարունակականություն, ըստ պատմափուլերի դրանց ձևավորման ու զարգացման միտումով, համաշխարհային պատմության գործընթացներից հետ չընկնող պետահիրավական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր- մշակութային զարգացումներով:

– Հայաստանի ազատագրության ու անկախ պետականության վերականգնման ճանապարհին մշտապես առաջնային պլանում է եղել նրա **քաղաքական կողմնորոշման (օրիենտացիայի) հարցը**: Պատմական էքսկուրս կատարելով՝ կարելի է արձանագրել այն իրողությունը, որ դարեր առաջ հայ քաղաքական միտքը, հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների հայացքը սկզբում ուղղված է եղել դեպի **Արևմուտք**, իսկ ավելի ուշ՝ արդեն XVIII դարում, ավելի հաճախ՝ դեպի **Ռուսաստան**: Սակայն նրանց քաղաքական-ազատագրական առաքելությունների նպատակը, ծրագրերը եղել են ոչ թե պարսկաթուրքական բռնապետական, ազգային ու կրոնական հալածանքներից ազատագրվելով միանալ, տվյալ դեպքում, օրինակ, Ռուսաստանին, այլ արևմտաեվրոպական կամ ռուսական քրիստոնյա պետությունների օգնությամբ ազատագրել հող-հայրենին ու հայ ժողովրդին, և հիմնել սեփական ազգային պետականություն՝ թագավոր կարգելով, ըստ Ի. Օրիի ծրագրի, թեկուզ Պֆայլցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին, իսկ ըստ Հ. Էմինի՝ վրաց թագավոր Հերակլ II-ին, կամ թե՝ ռուսահայ թեմի առաջնորդ Հ.

[1] **Նժդեհ Գ.**, *Երկեր*, հ. 1, էջ 467:

արք. Արղությանի կազմած նախագծով՝ իշխան Գր. Պոտյոմկինին և այլն:

– Հայ աշխարհիկ և հոգևորական շրջանակների ձեռնարկած դարավոր շարժումն ու պայքարը եղել է բազմաշերտ, անցել է երկար ճանապարհ, ինչպես ասվեց, ունեցել է տարբեր դրսևորումներ ու քաղաքական կողմնորոշումներ՝ մի քանի դար այն կողմնորոշված էր դեպի Արևմուտք, և հիմնականում դրա կրողները հայոց եկեղեցին էր՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ, իսկ ավելի ուշ ասպաեզ եկան աշխարհիկ գործիչներ, որոնք դարձյալ սկզբում կողմնորոշված էին դեպի Արևմուտք, և Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության ու անկախության հույսը մեծապես կապվեց Արևմուտքի պետությունների, անգամ հավատափոխության պայմանով, ընդհուպ Հռոմի պապի օգնության հետ, կազմվեցին ազատագրության ծրագրեր, սակայն հետագայում, աշխարհաքաղաքական գործոնների հրամայականով, հայ քաղաքական միտքը՝ հանձին Ի. Օրու, կողմնորոշվեց դեպի հյուսիս՝ արդեն հզորացող Ռուսաստանը: Վերջինս էլ, իր ռազմավարական շահերի թելադրանքով, սկսեց միջամտել տարածաշրջանային գործերին:

– Առանձնահատուկ դրվատանքի ու գնահատանքի են արժանի հայ ազատագրական շարժման ու պայքարի նշանավոր գործիչների՝ Ի. Օրու, Դավիթ Բեկի, Հ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Սարաֆյանի, Հ. Լազարյանի, Հ. արք. Արղությանի և մյուսների բեղմնավոր և ազգանվեր գործունեությունը: Ի մասնավորի, իր արկածալի ու հակասական գործունեությամբ հանդերձ՝ Ի. Օրին առաջին գործիչն էր, որ իր հետագա՝ մոսկովյան ծրագրով դուրս բերեց հայ ազատագրական շարժումն ու հայ դիվանագիտական բանակցությունները կրոնադավանաբանական մակարդակից և դրեց գործնական, զինական ռազմաքաղաքական հիմքերի վրա:

– Դարավոր մաքառումներից և վիթխարի կորուստներից հետո՝ XX դարասկզբին, հայ ժողովրդին, ի վերջո, գերմարդկային ճիգերով ու կորուստներով հաջողվեց ձեռք բերել անկախություն և արևելահայ մի փոքր հողակտորի վրա վերականգնել ու կերտել Հայոց անկախ պետականությունը: Այդ ամենի համար մենք ամենից առաջ մեծապես

պարտական ենք 1918 թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերին: 1918 թ. Հայաստանի անկախությունը, գործընթացների առումով, կարծես անսպասելի էր, սակայն դրա համար ստեղծվել էին գաղափարաքաղաքական նախադրյալներ, քաղաքական մտքի ոգորումներ և, բնականաբար, ունեցավ իր ներքին բնականոն օբյեկտիվ ու օրինաչափ ընթացքը:

– Ի վերջո, 1918 թ. մեծագույն ճիգուջանքերով **նյութականացավ** XVI դարի կեսերից, Հայոց ավելի վաղ անցյալի՝ հին և միջնադարյան պետականությունների (թագավորությունների) հարուստ ընտրանու փորձի ու ավանդույթի հենքի վրա սկիզբ առած գաղափարաքաղաքական և հոգևոր այն ակունքները, գործադրած քայլերն ու գործողությունները՝ Հայրենիքի ազատագրության ու անկախության համար, որոնք հետագա դարերում հատիկ առ հատիկ արծարծվելով, կուտակվելով, գոմարվելով ու առաջ մղվելով, զարգացում ստացան, դարձան այն հանգրվանը (հիմնաքարը), որով, դեպքերի և իրադարձությունների օրինաչափ ու տրամաբանական զարգացմամբ, երբեմն էլ տրամաբանությունից դուրս դրսևորումներով, **1918 թ. մայիսին** սկիզբ դրվեց Հայաստանի **առաջին** Հանրապետությանը, իսկ հետագայում էլ դրա հիմքի վրա՝ իբրև իրավահաջորդ, բարձրացավ **երկրորդ** և վերջապես մեր ժամանակների՝ **երրորդ** Հանրապետությունները:

– Բազմադարյա քաղաքական դեգերումներից հետո հայ ժողովուրդը վերագտավ իր կորցրած անկախ պետականությունը: Անկախությունը ոչ միայն քաղաքական, այլև գերագույն հոգևոր արժեք է: Այս կամ այն ազգի որակը, նրա քաղաքական հասունության աստիճանը չափվում է նրա պետության կենսունակության մակարդակով, պետահիրավական դաշտով, իշխանության թևերի բաժանմամբ, օրենքի գերակայությամբ, արդարադատությամբ, ժողովրդավարությամբ, երկրի ու ժողովրդի պաշտպանվածությամբ ու անվտանգության աստիճանով, տնտեսության, կրթության ու հոգևոր զարգացվածությամբ և այլն: Ներկայիս Հայաստանը հայաստանցիների ու համայն հայության Հայրենիքն է: Փոքր է այդ հայրենիքը: Հասկանալի է, որ մեր պատմական հայրենիքի մեծ մասը օտարի ձեռքում է: Օտարը նվաճել է հայոց հայրենի հողերը **ֆիզիկապես**, բայց ոչ **հոգևոր** առումով:

– Վերստին դառնալով «Մայիս-28»-ի պատմական խորհրդին, կարելի է համոզված ընդգծել, որ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերից գործնականում ծնվեց «Մայիս 28»-ի անկախությունը և ստացվեց այնպես, որ մենք առանձնապես հովանավոր ու աջակից որևէ պետության կարիքը չունեցանք: Մայիսյան հաղթանակը դրեց դարերով ընդհատված Հայոց անկախ պետականության հիմքը: Մայիսյան հաղթական հերոսամարտերը և «Մայիսի 28»-ի քաղաքական ակտը իրար փոխկապակցված ու մեկ միասնական ամբողջություն են, որով կարելի է վստահաբար ամրագրել, որ **հանգուցալուծվեց հայ ժողովրդի կեսհազարամյա երազանքը**: Տեղին ու դիպուկ է «Հայոց պատմության» ակադեմիական բազմահատորյակի առաջաբանում տրված այն գնահատականը, որ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդի համար, հիրավի, «**հայրենական պատերազմ էր**», որի հետևանքով ոչ միայն ջախջախվեց և դուրս շպրտվեց հայության դարավոր թշնամին, այլև այդ կռիվներում վերածնվեց հայկական պետականությունը՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը, ինչն էլ ազդարարեց Հայոց պատմության նորագույն շրջանը[2]:

– Սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե Հայաստանի անկախությունը պատահական երևույթ էր, կամ էլ Ռուսաստանի և Թուրքիայի գթասրտությունն ու նվերն էր հայ ժողովրդին: Անընդունելի է բոլշևիկ հեղինակներին ծայնակցած ռամկավար գործիչ Ա. Դարբինյանի այն պնդումը, թե «Անկախ Հայաստանը թուրքերն ստեղծեցին»[3]: Իրականում, եթե գործը թողնվեր այն ժամանակվա երիտթուրք կառավարողներին, ապա Հայաստանը ոչ միայն չէր անկախացվի, այլև շարունակելով ցեղասպան քաղաքականությունը այս անգամ արդեն արևելահայ հատվածում, ինչպես որ նրանց իրավահաջորդ Մուստաֆա Քեմալն է արտահայտել՝ ոչնչացնել Հայաստանի **զինված ուժերը** և, առհասարակ, վերացնել **հայկական պետականությունը**[4]:

---

[2] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 3, գ. 2, էջ 9:

[3] **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890–1840)*, էջ 435:

[4] **Սաֆրաստյան Ռ.**, *Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919–1921 թթ.)*, Եր., 2019, էջ 55–56:

Այսպիսով, մենք վերարժեքավորում ենք անկախության գաղափարի ակունքները և պատմական գործընթացը, որպեսզի լավ հասկանանք ու գնահատենք Հայրենի եզերքի անկախության անանց արժեքն ու նշանակությունը: Ամփոփելով ու հանրագումարի բերելով XIX դարի և XX դարասկզբի հասարակական-քաղաքական, ազատամտական գաղափարաբանության, ազատագրական շարժման ու պայքարի, հայ գրական-գեղարվեստական ու հասարակական-քաղաքական գործիչների, քաղաքական կուսակցությունների և ազգային մյուս կառույցների գործունեության բուռն զարգացումը՝ դարձյալ կարելի է հանգել հետևյալ հավելյալ ամփոփիչ եզրահանգումների.

– Եթե պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելու առումով համեմատում ենք միմյանց իրավահաջորդ ու ժառանգորդ Հայաստանի երեք հանրապետությունները, ապա տեսնում ենք, որ եթե նորագույն դարաշրջանի սեմին հայոց պետականությունների հիմնադիր **Առաջին հանրապետությունը** ծնվեց Առաջին աշխարհամարտի և ռուսական հեղափոխությունների բովում, հայ ժողովրդի կրած ծով զոհողությունների՝ Հայոց Մեծ եղեռնի, 1918 թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերի կրակներում, մի խոսքով՝ «Արեան ճանապարհով[5]» **երկրորդ,** իրականում ոչ անկախ **հանրապետությունը**՝ Խորհրդային Հայաստանը, ռուս-թուրքական (բոլշևիկ-քեմալ) դաշինք կազմած ուժերի հարվածներից հարկադրված ՀՀ խաղաղ խորհրդայնացման, հսկայական մարդկային ու տարածքների կորուստների գնով, ապա մեր ժամանակների **երրորդ հանրապետությունը** ծնվեց ԽՍՀՄ խորհրդայինամբողջատիրական համակարգի փլուզման, հայ ազգային ինքնագիտակցության նոր զարթոնքի ու Արցախյան ազատամարտի բովից (քուրայից):

– Պատմագիտական ասպեկտով, արդի իրողությունների և ծավալվող ռազմաքաղաքական ու դիվանագիտական իրադարձությունների համայնապատկերի վրա, միակողմանի և չափազանցված է խորհրդահայ պատմագրության մեջ տևականորեն անբեկանելի ամրագրում

---

[5] **Մելիքեան Յովակիմ** (բժ)., *Արեան ճանապարհով* (տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1925, հուլիս, Գ տարի, թիվ 9, էջ 100–101:

ստացած այն կոնցեպտը, թե Ի. Օրու ժամանակներից իբրև «Ռուսաստանն է և այն միակ իրական ուժը, որը կարող էր ընդառաջել և նպաստել օտարերկրյա զույգ արևելյան բռնապետությունների լծի տակից հայ ժողովրդի ազատագրմանը»[6]: XIX դարի առաջին երեսնամյակին Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին, իր ոչ միանշանակ գնահատականներով հանդերձ, այնուամենայնիվ, դրական նշանակություն ունեցավ արևելահայության հասարակական-քաղաքական կյանքի վրա: Դրանով, անշուշտ, նախադրյալներ ստեղծեց արևելահայության ազգային-քաղաքական ազատագրման համար: Իսկ այդ ազատագրման ու անկախացման իրական նյութականացման հիմքը դրվեց դրանից մոտ մեկ դար հետո՝ 1918 թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերով:

– Եթե Ի. Օրին XVIII դարի սկզբին Հայաստանի ազատագրման բախտը կապեց ռուսական քաղաքական կողմնորոշման հետ, որի արդյունքում էլ հետագա մեկ դարի ընթացքում դրան լծորդված հայ-հասարակական-քաղաքական, գաղափարական մտքի հետագա զարգացումները XX դարի սկզբներին Հայաստանին ու հայ ժողովրդի մի հատվածին հասցրեց քաղաքական ազատագրման ու անկախության՝ Հայաստանի առաջին հանրապետության, որի կարճատև գոյությանը պիտի հաջորդեր Խորհրդային Հայաստանը (1920 թ.), իսկ 1991 թ. Հայաստանի մերօրյա երրորդ հանրապետությունը: Հենց այդ երեք հանրապետությունների, ըստ թեմատիկ ոլորտների, պատմահամեմատական վերլուծությանը կնվիրվի հետագայում ծրագրվելիք մեր հաջորդ աշխատությունը:

– Հայ ազատագրական մտքի ու գաղափարաբանության տեսակետից, անշուշտ, ամենահագեցածը համարվում է XIX դարը: Այդ դարի «հայ ազգի **գաղափարական հայրեր**»[7] Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ստ. Նազարյանի, Ստ. Շահազիզյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Արծրունու, Ռաֆֆու, Մ. Խրիմյանի, Ծերենցի և մյուսների գրական-գեղար-

---

[6] **Դիլոյան Վ.**, *Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից*, էջ 5:

[7] **Խուդինյան Գ.**, *Հ.Յ. Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թ. վերջերը)*, Եր., 2006, էջ 51:

վեստական երկերում, աշխատություններում, հոդվածներում և այլ հրապարակումներում արտահայտած հայրենաբաղձ գաղափարաքաղաքական, ազգային-ազատագրական պետականամետ մտքերն ու պատգամները պիտի դառնային այն ատաղձն ու բաղադրատարրերը, որոնց հենքի վրա դարավերջերին պիտի ձևավորվեին հայ ազգային քաղաքական կուսակցությունները: Վերջիններս էլ, ի մի բերելով նախընթացը, պիտի ծրագրավորեին ազգի ու հայրենիքի միասնության և անբաժանելիության գաղափարները, կազմակերպեին և ուղղորդեին հայ ազատատենչ ժողովրդին, յուրաքանչյուր արժանապատիվ ազգին բնորոշ նախանձախնդրությամբ, ռազմավարական ու մարտավարական զինանոցի բոլոր ձևերի համադրմամբ, առաջին հերթին միակ հուսալի՝ զինված պայքարի, անգամ մեծ զոհողությունների գնով հասնելու բաղձալի հայրենի **հող-հայրենիքի ազատագրմանը** և դարեր առաջ կորսված «**քաղաքական անոթի**»՝ **պետականության վերականգնմանը**:

– Այս ամենով հանդերձ, հիշատակի, հարգանքի ու մեծարման տուրք պետք է մատուցվի հայ ժողովրդին, մասնավորապես, նրա այն լավագույն հայրենաբաղձ զավակներին, հոգևոր հայրերին և աշխարհիկ գրական-գեղարվեստական ու քաղաքական գործիչներին, որոնք նույնիսկ իրենց կյանքի գնով դրեցին Հայաստանի ազատագրման ու անկախ պետականության կերտման հիմքերը: Այդ նպատակին հասնելու համար, իբրև հաջողության հասնելու գրավականներից, իր հավաքականության մեջ շատ է կարևորվում **ազգային միասնական քաղաքական գիտակցության** ձևավորումը:

– XIX դարի երկրորդ կեսից հայ հասարակական-քաղաքական մտքում ու գաղափարաբանության մեջ կարելի է առանձնացնել զուգահեռաբար ընթացող երկու գործընթաց. ա/ արևելահայ կամ ռուսահայ հատված, որում ավելի գերիշխող ու օրախնդիր էին սոցիալ-տնտեսական բնույթի հիմնահարցերը, բ/ արևմտահայ կամ թուրքահայ հատվածում՝ քաղաքական, ազգային-ազատագրականը: Այդ շարժում-պայքարները, թե ինչի հանգեցրին, դա ի հայտ եկավ արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին: Պատմագիտության մեջ ընդունված է այն հասկացությունը, որ պատերազմները, այն էլ համաշխարհային բնույ-

թի, սովորաբար, առհասարակ հանդիսանում են պատմական գործընթացների արագացուցիչ (կատալիզատոր):

– Եթե, կամա թե ակամա, այդ պատերազմի մեջ ներքաշված արևմտահայությունը փաստորեն ենթարկվեց աղետի՝ հանձին հայոց Մեծ եղեռնի, Արևմտյան Հայաստանը հայաթափվեց՝ լրացնելով գաղթաշխարհը, վերածվելով աշխարհացրիվ Սփյուռքի, ապա արևելահայությունը կամ ռուսահայությունը, դարձյալ ներքաշված լինելով պատերազմի մեջ, ընդ որում երկու հակադիր ռազմախմբավորումների շարքում, այնուամենայնիվ, մեծ տառապանքների, զոհողությունների ու զրկանքների գնով, ի վերջո, մի փոքր հողակտորի վրա կարողացավ հասնել անկախ պետականության վերականգնման նպատակի իրագործմանը: Դրա մարմնավորողը եղավ Հայաստանի առաջին հանրապետությունը, որի կարճատև գոյությանը՝ իբրև իրավահաջորդի պիտի փոխարինեին երկրորդ՝ Խորհրդային Հայաստանը և երրորդ՝ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը:

– Հայաստանի ու հայ ժողովրդի աշխարհաքաղաքական կարգավիճակով պայմանավորված, անցած մեկ դարում և անցյալի ավելի մեծ ժամանակահատվածում, կարծես, մեզանում ձևավորվել է անփոփոխ արժեքային մի համակարգ՝ **ռուսական քաղաքական կողմնորոշում**, չնայած մեր մտածելակերպում ու գործելակերպում, կարծես, հաստատուն տեղ գտած այդ կողմնորոշումից ժամանակ առ ժամանակ ազգովի տուժում ու հիասթափություններ ենք ապրում: Այս կապակցությամբ, մեր կարծիքով, պետական ու հանրային մակարդակներում խորհելու, խորհրդակցելու և դրանք իմաստավորելու ու կյանքի կոչելու դեռ շատ բան կա: Հայաստանի ու հայ ժողովրդի արդի քաղաքական կողմնորոշումների հարցի շուրջ կարելի է արձանագրել, որ վերջին 2–3 դարերում մեզանում ձևավորված ու արմատացած միակողմանի ռուսական կողմնորոշման այդ բարդույթից, առնվազն վերջին մի քանի դարի պատմական տխուր փորձը հիմքում ունենալով, ժամանակակից մեր նոր սերունդը աստիճանաբար կարողանում է հաղթահարել այն և հանդես բերել ավելի սթափ, հավասարակշռված ու կշռադատված դիրքորոշում և քաղաքականություն: Այս համատեքստում չի կարելի չհամաձայնել պրոֆ. Վ. Դիլոյանի արտահայտած այն մտքին (ձևակերպ-

մանը), որ հայոց պատմության վերջին ավելի քան երեք հարյուր տարիների զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ **Հայաստանը քաղաքական հուսալի դաշնակից չի ունեցել**[8]: Ըստ ամենայնի, եթե ունենայինք **հուսալի դաշնակից** և **լինելով միասնական**՝ ավելի շատ սեփական ուժերին ապավինեինք, ապա Արևմտյան Հայաստանի հիմնահարցը դեռ մի կողմ թողած, չէինք կորցնի Կարսի մարզը՝ իր անառիկ քաղաքամրոցով, Սուրմալուի գավառը՝ հայոց խորհրդանիշ Արարատ լեռով, որը երբեք Օսմանյան Թուրքիայի կազմում չի եղել, օտարի ձեռքը չէր անցնի Արարատյան դաշտի օրգանական շարունակությունը կազմող Շարուր-Նախիջևանի երկրամասը, էլ չենք ասում՝ Արցախ աշխարհի մասին, որը կանգնել է հայազրկման ու սեփական պետականության կորստի փաստի առջև:

– Ինչպես ասվեց, քաղաքական կողմնորոշումների միակ այլընտրանքն ու հակակշիռ թեզը առաջին հերթին սեփական ուժերին հավատալն ու ապավինելն է: Հայոց բազմադարյան պատմության փորձը հուշում է, որ օտարի վրա հույս դնելը հղի է մեծ անհաջողություններով ու աղետներով: Սոցիալ-հոգեբանական առումով, օտարի հետ հույսեր կապելը գցում է սեփական զինուժի մարտունակությունը, վստահությունն իր նկատմամբ, ինչը կարող է առաջ բերել նաև դասալքություն և այլն:

– Հայաստանի և հայ ժողովրդի ազատության ու անվտանգության խնդիրը տարածության և ժամանակի մեջ դիտարկելիս հարկ է ընդգծել, որ Հայոց 2–3-հազարամյա պատմության ընթացքում հաճախ «**հովանավոր փնտրելու**» դառը փորձը, իբրև ոսանելի դաս, հանգեցնում է այն համոզման, որ հայրենի հողի, երկրի ու ժողովրդի պաշտպանության ու անվտանգության ապահովման հույսը երբեք չի կարելի միօրինակ ու անվերապահ կապել հեռու և մոտիկ օտար պետություններից ակնկալվող օգնության հետ՝ լինի հյուսիսից, թե՛ հարավից, արևելքից, թե՛ արևմուտքից: Պետականազուրկ դարերի ընթացքում ներքին ոչ բավարար միասնության ու երբեմն հավաքական կամքի պակասի հետևանքով, երբ փորձել ենք օտար տերությունների օգնությամբ մեր

---

[8] Տե՛ս **Դիլոյան Վ.**, *Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ* («Պայքար», Եր., 1995, թիվ 6–7, էջ 18:

հայրենիքը ազատագրված տեսնել, ապա որպես կանոն, այն մշտապես վերածվել է քաղաքական առևտրի մանրադրամի: Ժամանակ առ ժամանակ Հայաստանը վերածվել է պատերազմական թատերաբեմի, անկախ մեր կամքից այն բաժանվել է ու ծվատվել, իսկ հայությունն էլ զանգվածաբար դիմել է արտագաղթի ու պանդխտության: Եվ այդ ընթացքում, ըստ էության, արմատական ոչ մի խնդիր դրականապես չի լուծվել, ընդհակառակը, այն երբեմն ուղեկցվել է հայ ազգաբնակչության զանգվածային արտագաղթերով և մեծ ու փոքր կոտորածներով: Դրա ամենացայտուն օրինակը սրանից դարուկես առաջ միջազգային ասպարեզ նետված **Հայկական հարցն** էր, որը շահարկվեց մեծ տերությունների կողմից, իսկ դրա աղետալի հետևանքներից մեկը եղավ երիտթուրքերի իրականացրած Հայոց մեծ եղեռնը, որին Արևմուտքն ու համաշխարհային հանրությունն արձագանքեցին, լավագույն դեպքում, ընդամենը ցավակցական խոսքերով:

Այսօր ևս արդիական է հնչում Հայոց Հայրիկի հնչեցրած «երկաթե՞», թե՞ «թղթե» շերեփի տեսլականը: Եթե XIX դարավերջի հայ ազատագրական պայքարի «Երկաթե շերեփի» գաղափարը կրողները ֆիդայական-հայդուկային խմբերն էին, նրանց օրնիբուն ազատագրական կռիվները, ապա մեր ժամանակներում «**Երկաթե շերեփը**» մարմնավորողը **ՀՀ բանակն է**, որը պիտի հանդիսանա Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգության ու ապահով կյանքի միակ հուսալի երաշխիքը: «Ինքն իրեն հարգող ժողովուրդը,- խորհում է իմաստասեր և հայրենի հողի համար կռիվներում թրծված Մեծն Նժդեհը,- իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ իր բազուկի, իր զենքի վրա: Իր ուժերից զատ՝ ամեն ինչի ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու»[9]: Իսկ «Հին Աստվածների» հեղինակ Լ. Շանթը պատգամում էր՝ «մենք ինքնե՛րս պէտք է ձեռք բերենք ե՛ւ մեր հայրենիքը, ե՛ւ մեր անկախութիւնը հարատեւ մաքառումով, յամառ կամքով ու վճռականութեամբ, իյնալով ու ելնելով, ճանկռտելով կտոր-

[9] **Նժդեհ Գ.**, *Երկեր*, հ. 1, էջ 33:

կտոր, փրցնելով ծուէն-ծուէն: Իսկ եթէ ձեռք բերել չենք կրնար, իրաւունք չունինք ապրելու իբրեւ ուրոյն ժողովուրդ»[10]:

Պատմական անցյալի ու ներկայի ուսանելի փորձն ու դասը դասերը հաշվի առնելով, մեր և շատերի պատկերացմամբ՝ Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգության երաշխավոր չեն կարող լինել ո՛չ Ռուսաստանը, ո՛չ ԱՊՀ-ն և ո՛չ էլ նրա ռազմական կառույց հանդիսացող ՀԱՊԿ-ը: Նույն կերպ, Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգության երաշխավոր չի կարող լինել Արևմուտքը՝ Եվրոմիությունը, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, կամ նրանց ռազմական կառույց ՆԱՏՕ-ն: Արցախյան վերջին պատերազմում Հայաստան-Արցախի անօգնական վիճակում հայտնվելը այդ երկրների ու կառույցների կողմից, ասվածի վառ ապացույցն է: Հայոց բազմադարյան պատմության փորձը ուսուցանում է, որ նման մտայնությունը ընդամենը պատրանք է ու մոլորություն:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է կրկին արձանագրել հետևյալը.

Հայ ժողովուրդը, որդեգրելով ազատության ու անկախության գաղափարը և այդ ընթացքում անցնելով մեծ աղետների միջով, կրելով մարդկային ու տարածքային հսկայական կորուստներ, ի վերջո, մեծ պայքարի ու մաքառումների գնով **1918 թ. մայիսի 28-ին** հասավ այն հանգրվանին, որով, հանձին Հայաստանի առաջին հանրապետության, նյութականացվեց 4-5 դար երազած անկախ պետականության գաղափարը: **Անկախ պետականությունը գերագույն արժեք է**, որը պետք է ամենօրյա աշխատանքով պահպանել, պաշտպանել, փայփայել ու զարգացնել բոլոր պարամետրերով՝ հասցնելով նրա լիարժեք ինստիտուցիոնալ կայացմանն ու հարատևմանը:

Սույն հետազոտության հիմնական արդյունքն այն պետք է համարել, որ պատմագիտական հարուստ նյութերի շրջանառմամբ ցույց է տրված 4–5 դարերի հայ հասարակական-քաղաքական մտքի դեգերումները, շարժումներն ու պայքարը, որի արդյունքում, ի վերջո, 1918 թ. ձեռք բերվեց Հայաստանի անկախությունը, ինչը պատգամ է ներկայիս հայ ժողովրդին և ուղերձ ՀՀ կառավարությանը, պատմական

---

[10] **Շանթ Լ.**, *Մեր անկախությունը*, Եր., 2011, էջ 15:

անցյալի փորձով, հարուստ ու դառը դասերով, որ պիտի հույժ նախանձախնդիր լինի պաշտպանելու և ամրակայելու հայոց մերօրյա պետականությունն ու անկախությունը:

Մեր հետազոտության արդյունքներից մեկն էլ այն պետք է համարել, որ անցյալի հարուստ փորձի ու դասերի հիման վրա հանգել ենք այն եզրահանգման, որ Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումների խնդրում անընդունելի, նույնիսկ կորստաբեր պիտի համարել **միակողմանի**, կարծրացած քաղ. կողմնորոշումը: Դրա փոխարեն նախընտրելի է **հավասարակշռված**, բազմակողմ արտաքին քաղաքական դիրքորոշման կուրսը: Սակայն, այդ ամենով հանդերձ, ժողովրդի, հայրենիքի ու պետականության պաշտպանության, անվտանգության և բարեկեցության ապահովման ամենահուսալի երաշխիքը եղել ու մնում է **նժդեհյան** պատգամ-բանաձևումները:

Դարձյալ փաստենք, որ Առաջին Հանրապետությունը դարձավ այն հենքն ու հիմքը, որի վրա բարձրացավ, թեկուզև իր ոչ լիարժեք անկախությամբ, երկրորդ՝ Խորհրդային Հայաստանի հանրապետությունը, իսկ վերջինիս հիմքի վրա էլ՝ մեր ժամանակների Հայաստանի երրորդ հանրապետությունը: Այդպիսով, ավելի քան մեկդարյա պատմաշրջանում հայ ժողովրդի կերտած երեք հանրապետությունների միջև, անշուշտ, իր առանձնահատկություններով հանդերձ, պետք է տեսնել պատմաքաղաքական իրավահաջորդության ու ժառանգորդության ներքին հոգևոր կապ:

Մեր ժամանակներում, արդի աշխարհաքաղաքական բարդ ու տագնապալի մարտահրավերների պայմաններում, Հայաստանի ու հայ ժողովրդի համար իմպերատիվ **գերխնդիրն է** վերջնականորեն կայացնել, զարգացնել, անվտանգ ու **անշրջելի** դարձնել մերօրյա **Հայոց երրորդ հանրապետությունը**: Հայոց ազգի հավաքական կամքի ազատությունն այն զորեղ միջոցն ու կռվանն է, որ բարի և հաստատուն ստեղծագործ աշխատանքով նրան կտանի **առ Աստված**:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

**ԳԼՈՒԽ I.**

**ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ (XVI–XVIII դարեր) (պատմական ակնարկ)** ..... 19

*1. Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցը* ..... 19

*2. Պատմական լեգենդ-գուշակությունները Հայաստանի ազատագրության հարցում* ..... 22

*3. Հայ հանրության մտահոգևոր ընկալումները հայրենիքի ազատագրման հարցում* ..... 28

**ԳԼՈՒԽ II.**

**ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ (XVI–XVII ԴԱՐԵՐ)** ..... 35

*1. Հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների քաղաքական դեգերումները* ..... 35

*2. Հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների հարցը (հակաթոռության երևույթը)* ..... 59

*3. Հայ ազատագրական շարժման նոր փուլը: 1677 թ. Էջմիածնի գաղտնի ժողովը: Հակոբ Դ Ջուղայեցի: Իսրայել Օրու գործունեության սկզբնավորումը* ..... 68

*4. Անգեղակոթի ժողովը և «ճերմակ թղթերի» հարցը* ..... 77

*5. Իսրայել Օրու «Պֆալցյան ծրագիրը»* ..... 87

*6. Հարցի պատմագիտական գնահատականը* ..... 91

**ԳԼՈՒԽ III.**

**ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԸ** ..... 96

1. *Ի. Օրու դեպի Ռուսաստան ուղևորման հարցի շուրջ (պատ-*

*մագրություն)* ..... 96
*2. Ի. Օրու պատվիրակության ժամանումը Ռուսաստան, բանակցությունները և «Մոսկովյան ծրագիրը»* ..... 100
*3. Հայաստանյան շրջանակների՝ Եսայի կաթողիկոսի և հայ մելիքների ռուսական կողմնորոշման հարցի շուրջ* ..... 107
*4. Գնդ. Ի. Օրու վերադարձը Արևմտյան Եվրոպա* ..... 109
*5. Ի. Օրու առաքելությունը Պարսկաստան: Նրա վերադարձը և մահը* ..... 112
*6. Հարցի պատմագրությունը: Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի գնահատականը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում* ..... 121
**ԳԼՈՒԽ IV.**
**ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ XVIII ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹԹ: ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ: ՀՆԴԿԱՀԱՅ ԵՎ ՌՈՒՍԱՀԱՅ ԾՐԱԳՐԵՐԸ** ..... 135
*1. Ազատագրական պայքարը Արցախում: Եսայի Հասան-Ջալալյան* ..... 135
*2.Պետրոս Մեծի Կասպիական (Պարսկական) արշավանքը 1722–1723 թթ. և արցախահայության ակնկալիքները* ..... 139
*3. Ազատագրական պայքարը Սյունիք-Կապանում: Դավիթ Բեկ-Մխիթար Սպարապետ (1722-1730 թթ.)* ..... 151
*4. «Խամսայի» մելիքությունների դաշնությունը՝ իբրև հայոց պետականության դրսևորում* ..... 159
*5. Հայ ազատագրական շարժման նոր վերելքի նախադրյալները XVIII դարի երկրորդ կեսին* ..... 165
*6. Հայ ազատագրական միտքը: Հնդկահայ գաղթօջախը: Հովսեփ Էմին (1726–1809 թթ.)* ..... 169
*7. Շ. Շահամիրյանը և նրա «Որոգայթ փառացը»* ..... 174
*8. Մովսես Բաղրամյանը և նրա «Նոր տետրակը»* ..... 181
*9. Հայ ազատագրական շարժումը XVIII դարի վերջին քառորդին: Հովհաննես Լազարյան: Հովսեփ արք. Արղության* ..... 184

**ԱՐԱՐԱՏ ՄԽԻԹԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

(XVI դ. կեսեր – XX դ. սկիզբ)

**АРАРАТ МХИТАРОВИЧ АКОПЯН**

# ИДЕЯ ВОССТАНОВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ В ЭВОЛЮЦИИ АРМЯНСКОЙ ИСТОРИИ

(середина XVI в. – начало XX в.)

**ARARAT MKHITAR HAKOBYAN**

# THE IDEA OF RESTORING STATEHOOD IN THE EVOLUTION OF ARMENIAN HISTORY

(mid-XVI century – early XX century)

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Սրբագրիչ՝ Դ. Սարգսյան

Հրատ. պատվեր N 1299
Ստորագրված է տպագրության 02.04.2024 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: 26.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24.

[3000 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0682287

II
11996



## ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Արարատ Հակոբյանը ծնվել է 1947 թ. փետրվարի 26-ին ՀԽՍՀ Էջմիածնի շրջանի Ապագա գյուղում: 1966–1971թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1971թ. աշխատանքի է անցել ԳԱ պատմության ինստիտուտում: Ավարտելով ինստիտուտի ասպիրանտուրան՝ 1980թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված Կարսի մարզի պատմությանը:

1982թ. հունվարից դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, սկզբում՝ ավագ դասախոսի, այնուհետև դոցենտի պաշտոնում:

1998թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920թթ.)» թեմայով, իսկ 2000 թվականից ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: Ա. Հակոբյանն իր մասնակցությունն է բերել նաև «Հայոց պատմություն» բազմահատորյակի հեղինակային աշխատանքներին:

2005-2013թթ. Ա. Հակոբյանը աշխատել է որպես Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ: Նա համատեղությամբ զբաղեցրել է նաև ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ, ապա առաջատար գիտաշխատողի պաշտոնները:

Ներկայումս պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող Ա. Հակոբյանը շարունակում է գիտահետազոտական աշխատանքները Հայոց պատմության նոր և նորագույն շրջանների ամենատարբեր հիմնահարցերի շուրջ՝ հայ հասարակական-քաղաքական մտքի պատմություն, հայ քաղաքական կուսակցություններ, Հայաստանի Առաջին հանրապետություն, 1921թ. Մոսկվայի և Կարսի հայափնաս պայմանագրեր, խորհրդային քաղաքական բռնաճնշումներ, հայ պարբերական մամուլի պատմություն և այլն: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական և կոլեկտիվ ձեռնարկի, ավելի քան 150 գիտական հոդվածի և այլն: Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ մեդալով:

ISBN 978-9-8080-1537-1
9 785808 015371